Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

337

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

А. Г. АБРАМЯН

Армянская криптография

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН — 1978

909.9
Ա-16

Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

751

ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ Ին-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1978

902.9
Ա 16

Ա $\frac{10602-010}{704(02)-78}$ 13—77

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1978

ԱՌԱՋԱԲԱՆ

Ծածկագրությունը հին պատմություն ունի։ Այն, կարելի է ասել, այնքան հին է, որքան մարդկային ստեղծագործությունների մեծագույն հրաշալիքներից մեկը՝ գիրն ու գրչությունը։ Շրջահայաց և գաղտնապահ մարդը ինչ-որ նկատառումներով չի ցանկացել իր մտահղացումները հայտնի դարձնել շրջապատին, դիմել է ծածկագրությանը։

Ծածկագրությունը գիտության մեջ հայտնի է կրիպտոգրաֆիա անունով։ Այն համարվում է պատմական գիտության կարևոր սկզբնաղբյուրներից մեկը։ Այդ նկատի ունենալով է, որ հնագրության դասընթացներում սովորաբար հատուկ բաժիններ են հատկացնում նրան՝ հնարավորություն ստեղծելով ուսումնասիրողներին լուծելու գաղտնածածուկ շատ ու շատ առեղծվածներ։

Հին պետականություն և մատենագրություն ունեցող բոլոր ժողովուրդները, գրեթե առանց բացառության, ունեցել են իրենց գաղտնագրությունը։ Բացառություն չի կազմել նաև հայ ժողովուրդը. բազում դարերի ընթացքում նա ստեղծել է բազմատեսակ և բազմաբովանդակ ծածկագրության հարուստ մատենագրություն։ Այն գրականության մեջ հայտնի է տարբեր անուններով՝ «փակագրություն», «գրափակություն», «գաղտնագրություն», «ծածկագրություն» և այլն։

Բազմաթիվ գրքեր ու հոդվածներ են հրապարակվել տարբեր լեզուներով՝ նվիրված հունական, լատինական, սլավոնական, արաբական, վրացական և մյուս ժողովուրդների գաղտնագրությանը։ Հայ գաղտնագրության շուրջ ևս բավականին հարուստ գիտական գրականություն է ստեղծվել։ Հայ ծածկագրության ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք անվանի հայագետներ։ Առաջին անգամ հայ գաղտնագրության վրա ուշադրություն է դարձրել ակադ. Մ. Բրոսսեն։ Նա Պետերբուրգում հրատարակվող «Mélanges Asiatiques» պարբերականում հրատարակել է հայ ծածկագրությանը նվիրված ուշագրավ մի ուսումնասիրություն և վերծանել XVII դարի աչքի ընկնող հայ գործիչներից մեկի՝ Զաքարիա Վանեցու, գումարգիր, օղակետագիր, սյունակետագիր, արաբաթիվ, փոխարինագիր և եղբայրագիր ծածկագրերը[1]։ Այնուհետև ծածկագրության ուսումնասիրությամբ և վերծանությամբ զբաղվել է

[1] Տե՛ս „Mélanges Asiatiques", հ. V, 1868, էջ 65—77։

անվանի բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը։ Նա «Արարատ» ամսագրում հրատարակել է «ներսիսյան» կոչվող ծածկագրությունը[2], իսկ «Շողակաթ» գիտական ժողովածուում՝ Սևանա կղզում հայտնաբերված շրջագիր ծածկագրությունը[3]։

Առաջին հեղինակը, որը փորձել է խմբավորել հայ ծածկագրությունը և համակողմանի ներկայացնել դրանք տարատեսակ բանալիներով, եղել է մեծանուն Հ. Աճառյանը։ Հայ ծածկագրությանը նվիրված իր ուսումնասիրությունը նա հրատարակել է 1928 թ. Վիեննայում լույս տեսած «Հայոց գրերը» աշխատության հավելվածում՝ «Հայերեն ծածկագրերը» վերնագրով[4]։

Ծածկագրության բազմաթիվ բնագրեր են հրատարակված գրեթե բոլոր «Ձեռագրաց ցուցակներում»՝ Հ. Տաշյանի, Բ. Սարգիսյանի, Ն. Պողարյանի, Բ. Կյուլեսերյանի, Ս. Վ. Տեր-Ավետիսյանի, Ե. Լալայանի, Արտ. Սյուրմեյանի, Հ. Ոսկյանի և տասնյակ այլ հեղինակների։ Արժեքավոր մի շարք ծածկագրեր են հրատարակել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը՝ 14—15-րդ դարերի հայկական հիշատակարանների ժողովածուներում և պատմական գիտությունների դոկտոր Վ. Հակոբյանը՝ 17-րդ դարի հիշատակարանների առաջին հատորում։ Ծածկագրության մասին առանձին հոդվածներ է հրատարակել նաև պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանը[5]։

Մենք ևս փոքր-ինչ զբաղվել ենք հայ ծածկագրերի ուսումնասիրությամբ և նրանց հրատարակությամբ։ Առաջին անգամ մի քանի ծածկագիր հրատարակել ենք 1940 թ. «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի» աշխատության մեջ։ 1946 թվականին Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատությունների» 23-րդ հատորում լույս ենք ընծայել Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի մի ծածկագիրը՝ «Երուսաղեմի հունատառ-հայերեն ծածկագրի վերծանությունը» վերնագրի տակ։ Հայկական ծածկագրությանն ընդարձակ բաժին ենք հատկացրել հայ հնագրության մասին գրած մեր երեք գրքերում՝ «Հայկական պալեոգրաֆիա» (1949 թ.), «Հայ գրի և գրչության պատմություն» (1959 թ.) և «Հայոց գիր և գրչություն» (1973 թ.)։ Հայ ծածկագրության առանձին խմբեր, իրենց վերծանություններով, հրատարակել ենք հետևյալ հոդվածներում՝ «Հայկական մի քանի ծածկագրությունների վերծանությունը» (ՊԲՀ, 1958 թ., № 1, էջ 173—189), «Մի քանի ծածկագրերի վերծանությունը» (ՊԲՀ, № 4, էջ 231—240), «Ծածկագիր թվականների վերծանությունը» (ԲԵՀ, 1967, № 1, էջ 204—215), «Տոմարաթիվ չափածո ծածկագրերի վերծանությունը» (ԲԵՀ, 1972, № 1, էջ 99—116), «Տառանիշ ծածկագրեր և նրանց վերծանությունը» (ՊԲՀ, 1974, № 1, էջ 175—188), «Արծվանիկի հայերեն նորահայտ ծածկագրերը և նրանց վերծանությունը» (ՊԲՀ, 1975, № 3, էջ 113—125)։ Վերջինս պատմական գիտությունների թեկնածու Ա. Շահինյանի հետ համատեղ։

Հայկական ծածկագրությունը, ըստ բովանդակության, դասակարգվում

---

2 Գ. Տեր-Մկրտչյան, *Ներսիսյան ծածկագիր* (տե՛ս «Արարատ» ամսագիր, 1888 թ., էջ 35—49)։

3 Գ. Տեր-Մկրտչյան, *Աջից ձախ գրություն* (տե՛ս «Շողակաթ», Էջմիածին, 1913 թ., էջ 137—141)։

4 Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, Վիեննա, 1928, էջ 460—488։

5 Կ. Ղաֆադարյան, *Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը*, Երևան, 1945։

է չորս խմբի. **քաղաքական**, ուր գաղտնագրված են քաղաքական բնույթի տեղեկություններ պատմական այս կամ այն իրադարձության մասին, **գրչածածուկ**, ուր գրիչները ծածկագրել են իրենց անունները և մատենագրական այլ տեղեկություններ, **արհեստագործական**, ուր արհեստավոր մարդիկ, իրենց արհեստի գաղտնիքները ուրիշներից թաքուն պահելու նպատակով, դիմել են ծածկագրության։ Վերջապես, չորրորդ խումբն են կազմում **առեղծվածագիր** ծածկագրերը, որոնցում գործ են ածված տոմարական և այլ թվարժեք բառեր։

Նշված խմբերից պատմական մեծ արժեք ունեն հատկապես քաղաքական բովանդակություն ունեցող ծածկագրերը, որոնց թիվը, դժբախտաբար, այնքան էլ մեծ չէ։ Հայ պետականության շրջանից ռազմական կամ դիվանագիտական բովանդակությամբ ծածկագրեր չեն հասել։ Եղածները մեծ մասամբ 17—18-րդ դարերից են և, հիմնականում, վերաբերում են հայ-ռուսական հարաբերություններին։ Ներկա հատորում զետեղված քաղաքական բնույթի արժեքավոր ծածկագրերից են Պյոտր Առաջինի պատվիրակ Իվան Կարապետի զեկուցագրերը՝ Անդրկովկասի քաղաքական իրադրության և Դավիթ Բեկի գլխավորությամբ սյունեցիների վարած հերոսական կռիվների մասին, Օստերմանի զեկուցագրերը՝ հայ-ադրբեջանական ժողովուրդների զինական համագործակցության և թուրք նվաճողների դեմ նրանց վարած հերոսական կռիվների մասին, Աբրահամ յուզբաշու նամակը Բաքվում գտնվող ռուսական զորաբանակի թարգմանիչ Պողոս յուզբաշուն՝ սղնախների հայերի՝ ռուսական զինական օգնություն ակնկալելու մասին, Ներսես Աշտարակեցու քաղաքական բնույթ ունեցող մի քանի վավերագրերը, Նահապետ Արշակյանի նամակը Նապոլեոնի՝ Ռուսաստան կատարած արշավանքի մասին և այլն։

Ծածկագրերի ամենից մեծ խումբը գրչածածուկ գաղտնագրերն են, այսինքն՝ այն ծածկագրերը, որոնք գործ են ածել գրիչներն իրենց հիշատակարանների և հիշատակագրությունների մեջ։ Այդ ծածկագրերն իրենց կառուցվածքով և օգտագործած ատաղձով խիստ բազմազան են։ Գաղտնագրության համար գրիչները դիմում են աներևակայելի հնարանքների. հորինում են ծածկագրության այնպիսի բարդ տեսակներ, որոնք վերծանելու համար հաճախ մեծ ջանքեր են հարկավոր լինում։ Մեր կատարած մոտավոր հաշիվներով հայ մատենագրության մեջ շուրջ հիսուն տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագիր բնագրեր կան։

Գրչածածուկ ծածկագրերում ամենից շատ օգտագործել են հայկական տառանիշերը. նրանց միջոցով են կազմված եղբայրագիր, փոխարինագիր, գումարգիր, կետագիր, շրջագիր, երկտառ, երկբանալի, վանկագիր և ակրոստիկոսագիր ծածկագրերը։ Բավականին մեծ թիվ են կազմում առանձնապես սյունագծիկներից, կետերից, օղերից և այլ զարդագծերից կազմված ծածկագրերը։ Այս խմբին են պատկանում սյունակետագիր, օղակետագիր, ճյուղակետագիր, ճիրանավոր, կոտորակագիր և մի քանի այլ տեսակի ծածկագրեր։ Կան նաև փոքր թվով ծածկագրեր, որոնք կազմված են արաբական թվանշանների և հունական տառանիշերի միջոցով։ Վերջինիս հետ սովորաբար խառնում են նաև հայկական տառանիշեր։

Գրչածածուկ ծածկագրերում ամենից շատ գաղտնագրվում են գրչի անունը և գրչության թվականը։ Անունների ծածկագրումն ունի իր պատճառը։

Ցավալի փաստ է, որ միջին դարերում գտնվել են անազնիվ մարդիկ, որոնք դիմել են խարդախության. ջնջել են իրենց ձեռքն ընկած ձեռագրերի գրիչների և կամ բարերար պատվիրատուների անուններն ու իրենց անունները գրել՝ ցանկանալով հափշտակել վաստակարժան մարդկանց «ողորմիսը»։ Այդ երևույթը հայտնի է եղել գրիչներին, ուստի նրանք իրենց կտակ-հանձնարարականներում անհրաժեշտ են համարել զգուշացնել՝ հեռու մնալու նման խարդախություններից։ Այսպես, օրինակ, Հովհաննես գրիչը, 1310 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում, խոսելով գրագողության այս տգեղ սովորության մասին, գրել է. «Գիտե՛ք, եղբարք... որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջնոցն զանուն կու ջնջեն և զիւրեանցն կու գրեն. եւ չար է սովորութիւնս այս։ Աղաչեմ, մի գործել զչարդ զայս մեծ։ Ապա թէ արժան է գրելոյ, գրեսցէ զիւր անունն յայլում տեղւոջ, և զառաջնոյն մի ջնջեսցէ անուն և կամ գրի։ Եւ որ ոք յայս յանդգնի և ջնջէ, ինքն ջնջի ի կենաց գրոյն՝ ո ոք և իցէս»[6]։

Լոնդոնի Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերից մեկում այսպիսի անեծք է արձանագրված. «Ինչ մարդ որ յիշատակս կտրել և ճնճել կամի, անուն նորա ի գրոյն կենաց ճնճեալ լիցի»[7]։

Պատահում է, որ անբարեխիղճ մարդիկ ո՛չ միայն գրչի անունն են ջնջում, այլև ձեռագրից կտրում, հանում են գրչի հիշատակարանը բովանդակող թերթերը։ Այդ նկատի ունենալով է, որ Ղազար գրիչն անեծք է գրել. «...որ այս թղթերոյս կտրէ՝ նայ ատտուած զնա ի կենաց կտրէ»[8]։

Գրիչներն իրենց անունները և գրչության ժամանակը ծածկագրելով, նպատակ են ունեցել գաղտնի պահել իրենց հիշատակը խարդախներից, ցանկացել են, որ իրենց անունները հայտնի լինեն միայն գիտուն մարդկանց, որոնց վստահում են և հավատացած են, որ նրանք չեն ջնջի իրենց բարի հիշատակը։

Ծածկագրերի մեջ կան նաև այնպիսինները, որոնք սովորական գրչախաղեր են. օրեր, ամիսներ ձեռագրի արտագրության վրա տքնող գրիչը, երբեմն դուրս է գալիս տաղտուկ վիճակից և ցանկանալով հետագա ընթերցողի ուշադրությունը հրավիրել, փորձում է ցույց տալ իր հնարամտությունը, դիմում է ծածկագրության։ Ըստ որում, այդպիսի դեպքում նա, ընթերցողի ուշադրությունն ավելի գրավելու համար, ծածկագրության մոտ դնում է տարբեր տեսակի հղումներ. «Այս է փակագիր, իմաստունն իմանայ, անիմաստն զարմանայ», «Ո՞վ եղբայր, զայս փակագիրս դու կարդա, թէ ոչ՝ փքիտ տուր (այսինքն՝ փուքսդ փչիր—Ա. Ա.) և հազայ», «Թէ դպիր ես ընթերցիր, թէ տգէտ՝ յիմարացիր», «Ով որ գիտնայ նա կկարդայ, ով չգիտնայ՝ նա լակոտայ» (այսինքն կլակվի) և այլն։

Գրչակապ խմբի ծածկագրերի վերծանությունը կարևոր է ոչ միայն տվյալ ծածկագրող հեղինակի անձնավորության ճանաչման, այլև ուսումնասիրվող ձեռագրերի բնագրերի արժեքավորման համար։ Այդ հնարավորություն է

6 Ա. եպ. Սյուրմեյան, *Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի*, էջ 334։

7 F. C. Conybare, Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, էջ 193։

8 *ՄՄՄ, ձեռ. № 8188, թ. 387*։

տալիս պարզելու, թե ո՞վ է եղել տվյալ ձեռագիրը գրող հեղինակը, ե՞րբ է գրել այն և այլն։ Վերծանությունը հնարավորություն է տալիս լուծելու աղբյուրագիտական բազմաթիվ հարցեր։

Մեծ թիվ են կազմում արհեստագիտական բովանդակությամբ ծածկագրերը, որոնք գլխավորապես հանդիպում են արհեստագործական, քիմիական և ալքիմիական բովանդակությամբ ժողովածուներում։ Արհեստագիտական ծածկագիր բնագրեր կազմողները արհեստավոր վարպետներ են, որոնք սրի են առել իրենց արհեստի գաղտնիքները իբրև ձեռնարկ-ուղեցույց արհեստը շարունակող աշակերտների համար։ Այդ կարգի ծածկագիր բնագրերը կոչվել են «ծածուկ արուեստք»։

Վարպետության գաղտնիքները համարվել են ընտանեկան մենաշնորհ և փոխանցվել սերնդից սերունդ։ Վարպետներն ամեն ջանք գործադրել են գաղտնի պահելու իրենց արհեստի գաղտնիքները։ Նրանցից մեկը, օրինակ, ծանոթացրել է իր աշակերտին ոսկեգույն մետաղ ստանալու եղանակի հետ և զգուշացրել նրան. «Ստույգ փորձած է, բայց ամեն մարդու մի ասիլ»[9]։

Արհեստագիտական ծածկագրությունը լինում է երկու տեսակ. մի դեպքում բնագրերում ծածկագրվում են առանձին բառեր, մեծ մասամբ արհեստագործության մեջ գործածվող հիմնական նյութերի անունները. օրինակ՝ ոսկու փոխարեն գործ են ածել արև, արծաթի փոխարեն՝ լուսին, անագի փոխարեն՝ թուլ-աստղ, նաշատրի համար՝ արծիվ, ծծմբի համար՝ գայլ և այլն։ Մյուս դեպքում ծածկագրում են բնագրի կարևոր հատվածները։ Մեզ են հասել արաբաթիվ և աղվանական ծածկագրերով գաղտնագրված առանձին ընդարձակ բնագրեր։ Պարզվում է, որ ալքիմիայի մեջ գործածվող նյութերի մեծ մասն ունեն իրենց ծածկագիր անունները։ Արհեստագործական բնույթի այդ բնագրերի որոշ մասի հեղինակները հայ մասնագետներ են։ Բայց կան նաև թարգմանություններ արաբերենից, պարսկերենից և եվրոպական լեզուներից։

Հրատարակվող գաղտնագրերի երկրորդ մեծ խումբը առեղծվածագիր կոչվող ծածկագրերն են, որոնց մեջ, սովորաբար, գաղտնագրված են լինում թվականները։ Այդ կարգի ծածկագրեր հանդիպում են մեծ մասամբ ձեռագրերի չափածո հիշատակարաններում, որոնց վերծանությունները կարևոր են ինչպես ձեռագրերի գրչության ժամանակը թվագրելու, այնպես էլ նրանց պարունակած նյութը արժեքավորելու համար։

Առեղծվածագիր ծածկագրերը գաղտնագրվում են գլխավորապես տոմարական գիտության մեջ գործածական թվարժեք անուններով՝ հոբելյան, ոլիմպիադ, նոնոս, ընդիքտիոն, բեսեքիստոն, ադոն, ինդոս, կիվոս, թրթակ, արեգակի ու լուսնի պարբերաշրջաններ և այլն։ Այս խմբի ծածկագրեր կազմողները տոմարական գիտության լավատեղյակ անձնավորություններ են։ Առեղծվածագիր ծածկագրության մեջ, առանձին դեպքերում, գործ են ածվում նաև գիտության մեջ ճանաչված հեղինակների աշխատությունների գլխաթվերը։ Այսպես, Արիստոտել անվան տակ գաղտնագրում են նրա աշխատությունների թիվը՝ 10-ը, Պորփյուրի անվան տակ՝ 5-ը և այլն։ Որոշ դեպքերում օգտագործում են նաև իր ժամանակ քաղաքացիություն ունեցող թվարժեք անուն-

9 Կ. Գ. Ղափադարյան, *Ալքիմիան պատմական Հայաստանում*, Երևան, 1940, էջ 15։

ներ՝ «զվարթնոց», «զգայություն», «հոփսիմյանք», «պենտակոստե» և այլն։

Հայկական մատենագրության մեջ հայտնի և հրատարակված բոլոր ծածկագրերը չեն, որ տեղ են գտել ներկա հատորի մեջ, որովհետև մեր նպատակը չի եղել կազմել հայ ծածկագրության ամբողջական դիվանը (կորպուսը)։ Մենք այդ հնարավոր չենք համարել, որովհետև մեզ դեռ հայտնի չէ հայկական ձեռագրերի մեծ մասի բովանդակությունը և չգիտենք, թե նրանցում ուրիշ ինչպիսի ծածկագիր բնագրեր դեռ կարող են լինել։ Մեր նպատակն է եղել ներկայացնել ծածկագրերի մեր վերծանությունները։ Մյուս կողմից, սակայն, հաշվի առնելով, որ ներկա հատորը պիտի օժանդակ ձեռնարկ հանդիսանա հնագրության դասընթացի համար, օգտագործել ենք նաև այլ գիտնականների հրատարակած և վերծանած ծածկագրության այնպիսի օրինակներ, որոնք ունեն ուսուցողական արժեք։

Մեր փորձերը՝ ծածկագրերը բաժանելու ենթախմբերի, նկատի ունենալով նաև դրանց բնագրի բանալիները, հնարավոր չեղավ իրագործել, քանի որ մեծ թիվ են կազմում այն ծածկագրերը, որոնք գաղտնագրված են մի քանի բանալիներով։

Հրատարակվող ծածկագրերի մեծ մասը վերցված է Մաշտոցի անվան Մատենադարանի և այլ մատենադարանների ձեռագրերից, իսկ մյուս մասը՝ «Ձեռագրաց ցուցակներից»։ Այստեղ ևս մեր նպատակն է եղել ոչ թե ի մի բերել հայ մատենագրության մեջ հայտնի բոլոր ծածկագրերը, այլ՝ կանգ առնել միայն նրանց վրա, որոնք չեն հրապարակվել կամ հրապարակվել են առանց վերծանության, կամ վերծանվել են սխալներով։

Ներկա հատորում զետեղված է շուրջ 400 ծածկագիր, որից ավելի քան 300-ը՝ մեր վերծանությամբ։ Նրանց մի մասը, ինչպես ասել ենք, նախապես հրատարակել ենք պարբերական մամուլում, իսկ մյուսները հրատարակվում են առաջին անգամ։

Աշխատությունը մեր երկար տարիների պրպտումների և տքնաջան աշխատանքի արդյունք է. հազարավոր ձեռագրեր և վավերագրեր ենք թերթել, համբերությամբ հավաքել մեր վաստակաշատ գրիչների գաղտնագրերը, վերծանել և դրանց միջոցով փորձել լուծելու ոչ քիչ թվով աղբյուրագիտական առեղծվածներ։ Համոզված չենք, որ մեր հարյուրավոր վերծանությունների և ժամանակագրական ճշտումների մեջ չկան վրիպումներ։ Սակայն հանդիտ խղճով կարող ենք ասել, որ մենք արել ենք այն, ինչ կարելի է եղել։ Մեզ մնում է ընթերցողների ներողամտությունը խնդրել մեր հիշատակագրիչների սովորական խնդրանքով. «Անմեղադիր լերուք, զի կարն մեր այս էր»։

1. ՓՈԽԱՐԻՆԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փոխարինագիրը մեր մատենագրության մեջ ամենից հին և ամենից շատ գործածվող գաղտնագրությունն է։ Այն փոխարինագիր է կոչվում, որովհետև հայկական սովորական տառանիշի փոխարեն վերցվում է մեկ ուրիշը։ Հայկական այբուբենի 36 տառանիշերը բաժանում են չորս տառաշարքի՝ միավորների (ա-ից՝ թ), տասնավորների (ժ-ից՝ ղ), հարյուրավորների (ճ-ից՝ ջ) ու հազարավորների (ռ-ից՝ ք), և այդ տառաշարքերը, ըստ այբուբենի հերթականության, փոխարինում են մեկը մյուսին։

Փոխարինագիր ծածկագրությունը գործածվել է ոչ միայն հայ, այլ նաև օտարազգի հին մատենագրության մեջ։ Այն օգտագործվել է նաև սլավոնական մատենագրության մեջ և կոչվել է «табарская грамота» կամ «литорея»[1]։

Փոխարինագիր ծածկագրությունը երեք տարբերակ ունի։ Առաջին տարբերակում միավորներին փոխարինում է հազարավորների տառաշարքը, իսկ տասնավորների տառաշարքին՝ հարյուրավորների տառաշարքը։

Առաջին տարբերակի բանալին հետևյալն է.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ

Երկրորդ տարբերակում միավորների տառաշարքին փոխարինում է հարյուրավորների տառաշարքը, իսկ տասնավորների տառաշարքին՝ հազարավորների տառաշարքը։

Երկրորդ տարբերակի բանալին հետևյալն է.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք

[1] Տե՛ս Е. Ф. Карский, Славянская кирилловская палеография, Ленинград, 1928, էջ 253։

Երրորդ տարբերակում միավորներին փոխարինում են տասնավորները, իսկ հարյուրավորներին՝ հազարավորները։

Երրորդ տարբերակի բանալին հետևյալն է.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք

* * *

Փոխարինագիր ծածկագրության հնագույն նմուշը Ավանում գտնված Եզր կաթողիկոսի (630—641) երկլեզվյան՝ հունարեն-հայերեն ծածկագիր արձանագրությունն է, որը հմտորեն վերծանել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը[2]։ Արձանագրությունը, ըստ Ղաֆադարյանի տեղեկության, փորագրված է տուֆի երեք սրբատաշ քարերի վրա, որոնք տեղադրված են եղել եկեղեցու արևելյան պատի արտաքին երեսին։ Արձանագրությունն սկսվում է ձախակողմյան քարի աջակողմի կեսում և վերջանում երրորդ քարի աջ ծայրով։ Գրությունը երկու լրիվ տող է և վերջանում է աջակողմյան քարի ծայրին փորագրված երեք գրերով։ Տառերն ունեն 7 սմ բարձրություն։ Գրչությունը 7-րդ դարին հատուկ բոլորաձև երկաթագիր է։

Արձանագրության բնագիրը հետևյալն է.



Արձանագրության երկրորդ տողում կա հունարեն երկու բառ՝ ΔΩΛΟC ΤΩ ΘΕΩ, որ թարգմանվում է «ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ»։

Սովորական նշանակությամբ արձանագրության մեջ գործ են ածված Տ[Է]Ր, ԵԶՐ, ԿԱԹՈՂԻԿՈՍ և ՃՇՄԱՐԻՏ բառերը։

Ծածկագրված է երկու բառ. ՉՌԼԿՉ և ՇՌԱՌԼ, որոնք փոխարինագրի առաջին բանալիով վերծանվում են.

Չ Ռ Լ Կ Չ Շ Ռ Ա Ռ Լ
Հ Ա Յ Ո Ց Ծ Ա Ռ Ա Յ

Արձանագրության վերջի ՍԱՄԷՂ անունը, Ղաֆադարյանի կարծիքով, արձանագրությունը փորագրող վարպետի անունն է։

Արձանագրության վերջին՝ Ք տառը, ամենայն հավանականությամբ, ինչպես կարծում է նաև Ղաֆադարյանը, պատվագրված ՔԻ (Քրիստոսի) առաջին տառն է։

[2] Կ. Գ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը։

Այսպիսով, արձանագրությունը վերծանված վիճակում կկարդացվի. «Տ[Է]Ր ԵԶՐ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՃՇՄԱՐԻՏ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ. ՍԱՄԷՂ ԾԱՌԱՅ Ք[ՐԻՍՏՈՍԻ]»։ (Հրատ. ՀԳՊ, 204, ՀԳԳ, 254)։

* * *

Փոխարինագիր ծածկագրության հնագույն նմուշ է Հովհաննես Սանդղկավանեցու գաղտնագրությունը 1053 թվականից։ Այն տեղավորված է գրչի հիշատակարանի հետևյալ մասում. «Աստուած ողորմեա Յովհաննէսի մեղաւորի գրողի գրոցս ծնաւղաց նորա Տ Ռ Է Ք Մ ԵՒ Ի Ռ Ե Ր Ի Ռ Ա Ճ։։ Ա։։։ Ճ։։ Դաւթի եւ Մարեմա, ամէն» (ՄԱՄ, № 3793, էջ 239)։ Մի այլ հիշատակարանում տրված է գրչության թվականը. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեան Հայոց ՇԲ(=1053) ամի ի դուռն սուրբ Աստուածածնին ի վանս Սանդղկայ մերձ գոլով խաչակրաւն հաւր Ստեփաննոսի, ձեռամբ Յովաննէսի նուաստ եւ անարժան երէցու եւ յետին գրչի»։

Հիշատակարանները հրատարակել է բանասեր Գ. Հովսեփյանը «Յիշատակարանք ձեռագրաց»-ի մեջ (էջ 233), բայց ծածկագրին ուշադրություն չի դարձրել։ Հետագայում այդ ծածկագրին անդրադարձել է պատմական գիտությունների թեկնածու Ա. Մաթևոսյանը և վերծանել (տե՛ս «Բանբեր մատենադարանի», № 10, էջ 389—390)։

Ծածկագրի առաջին երկու բառերը գաղտնագրված են փոխարինագրով և վերծանվում են.

Տ Ռ Է Ք Մ ԵՒ Ի Ռ Ե Ր Ի Ռ
Դ ա ւ թ ի եւ Մ ա ր ե մ ա

Հաջորդ բառը ծածկագրված է կետագրով և վերծանվում է.

Ա Ճ. Ա։։։ Ճ։։
Ա մ է ն

Վերծանված ծածկագիրը հիշատակարանի ամբողջության մեջ կարդացվում է. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՅՈՎԱՆՆԷՍԻ ՄԵՂԱՒՈՐԻ ԳՐՈՂԻ ԳՐՈՑՍ ԵՒ ԾՆԱՒՂԱՑ ՆՈՐԱ ԴԱՒԹԻ ԵՒ ՄԱՐԵ[Ա]ՄԱ, ԱՄԷՆ»։

* * *

Բանասեր Գ. Հովսեփյանը իր «Յիշատակարանք ձեռագրաց»-ի մեջ (էջ 1010) հրատարակել է Կիլիկիայի հայոց կաթողիկոսարանի ձեռագրատան «Մեկնութիւն կաթողիկեայց» բնագիրը պարունակող արժեքավոր ձեռագրի հիշատակարանը, որի գրիչն է Ստեփանոս քահանան, գրչության վայրը՝ Զորոքերդը, իսկ գրչության տարին՝ 1250 (?) թվականը։ Հիշատակարանը, ըստ տպագրված բնագրի, վերջանում է արտաքինից իմաստ չտվող «Ռ, Ռ-ի ւ Խ» տառերով, որի վրայից լռությամբ է անցել հրատարակիչը։

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ չկարդացվող այդ տառախումբը ծածկագրություն է, որի մեջ սպրդել է մի տառի սխալ. երկրորդ

«Ռ»-ն պետք է ուղղել «Ս», որով կունենանք «Ռ. Ս. Ի. Ի. Խ» տառախումբը և կվերծանվի.

Ռ Ս Ի Ի Խ

Ա մ մ է ն

Այս ծածկագրության մեջ օգտագործված են երեք բանալիներ միաժամանակ։ Ծածկագրված բառը ըստ իմաստի, ճիշտ է, պատմական արժեք չունի, այն բանասիրական որևէ հարց չի լուծում, սակայն արժեքավոր է որպես փոխարինագիր ծածկագրության հնագույն նմուշներից մեկը։

* * *

Փոխարինագիր ծածկագրության ընտիր մի բնագիր հանդիպում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 34 ձեռագրում, որի գլխավոր հիշատակարանից երևում է, որ նրա առաջին մասը գրված է 1284 թ. Վայոց Ձորի Գնդևազի գրչության օջախում, իսկ շարունակությունը՝ Թանահատի վանքում (Գլաձորի համալսարանում)։ Գրիչը Հովհաննես է, ստացողը՝ Վարդան Վարդապետը, իսկ Վայոց Ձորի իշխանը՝ Պապաքը։

Ըստ Նոր Ջուղայի ձեռագրերի ցուցակ կազմող Ս. Տեր-Ավետիսյանի հավաստիացման, ծածկագրի հեղինակը ինքը՝ ձեռագրի գրիչն է, հետևապես այս ծածկագիրը հայկական հնագույն գաղտնագրություններից մեկը պետք է համարել։

Ծածկագիրը հետևյալն է.

Բ = Ճ = Հ = Գ = Կ =

= Վ = Մ = Է = Ջ = Լ = Յ =

= Կ = Ս = Ծ = Շ = Ո = Է = (թ. 262ա)։

Ծածկագրի տակ գրիչը թողել է հետևյալ գրառումը. «Թէ դպիր՝ կարդայ, թէ չէ՝ լռեայ»։

Ծածկագրության գծագրական ձևը ուշագրավ է նրանով, որ տառանիշերն իրարից բաժանվում են հավասարման նշանի ձև ունեցող գծիկներով։

Այս ծածկագիր բնագիրը, ձեռագրի հիշատակարանի հետ միասին, առա-
ջին անգամ հրատարակել է բանասեր Հ. Քյուրտյանը իր «Հովհաննես Թանա-
տի վանաց» վերնագրով հոդվածում։ Նա փորձել է վերծանել ծածկագիրը,
բայց հաջողություն չի ունեցել. «Ձեռագիրն ունի գաղտնագիր տող մը
գրչեն,—գրել է նա,—որուն իմաստը չկրցա լուծել ինծի ծանոթ գաղտնա-
գրություններով»[3]։ Չի կարողացել ծածկագիրը վերծանել նաև Մ. Տեր-Մով-
սիսյանը, որն ընդօրինակել է այն իր ձեռագրաց ցուցակում։ Ծածկագիրը
երկրորդ անգամ հրատարակվել է Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում՝ առանց
վերծանության (ՆՁ, I, էջ 51)։

Այս ծածկագիրը գաղտնագրված է փոխարինագրի երեք բանալիներով։
Անփոփոխ՝ իր սովորական հնչական արժեքով է թողնված ծածկագրի նախա-
վերջին՝ «Ո» տառը։ Բնագրում սպրդել է գրչական մի սխալ. վերջին «է»
տառը պետք է լինի «Կ»։ Այդ ուղղումից հետո ծածկագիրը կվերծանվի.

[3] Հ. Քյուրտյան, Հովհաննես Թանատի վանաց (տե՛ս «Հասկ հայագիտական տարեգիրք»), Հ. Ա, Անթիլիաս, 1949, էջ 101։

Բ = Ճ = Հ = Գ = Կ = Վ = Մ

Ս ա է յ ո յ ս

Է = Ջ = Լ = Յ = Կ

հ ո գ ո ց

Ս = Ծ = Շ = Ո = Կ

մ ե ր ո ց

Նոր Ջուղայի № 34 ձեռագրում, ինչպես տեսնում ենք, գաղտնագրված է գրչի հուսադրությունը. «ՍԱ Է ՅՈՅՍ ՀՈԳՈՑ ՄԵՐՈՑ»։

* * *

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 320 ձեռագրում (թ. 6ա) գրի է առնված հետևյալ ծածկագիրը. «Ո՜վ կաճառս քահանայից, որ հանդիպի[ք] սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի բարին ըզ Դե. Ա. Բ. Ե. Ժժ. Ա. Բ. Ջե. Չ. Ս. Բ. Ս. Ա. Տ. Ա. Ե. Լ. Ժ. Ռ. Ռ.»։

Ծածկագրի վերջում գրիչը թողել է հետևյալ կծու հիշեցումը. «Թէ գիտես՝ վարժապետ ես, կարդա՛, զերեսդ 'վ պարզ կենա, թէ չէ՝ մի առնուլ ի ձեռին... ոչ է աշակերտ լաւ, (քան) զվարդապետ իւր...»։

Ծածկագրի այս բնագիրը հրատարակված է «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում և չի վերծանված (ՆՁ, I, էջ 518—519)։ Պատճառը, անշուշտ, ծածկագրության մեջ նկատվող բարդություններն են. այն գաղտնագրված է գումարգիր և փոխարինագիր խառը բանալիներով, իսկ որոշ տառեր թողնված են անփոփոխ։ Բնագրում նկատվում է երեք տառանիշի բացթողում, որոնք մեր վերծանած բնագրում վերցված են քառակուսի փակագծի մեջ։ Այդ բարդությունները հաշվի առնելով, ծածկագիրը կվերծանվի.

Ըզ . Դ . Ե . ԱԲ . Ե . Ժժ . ԱԲ . Ջ . [Ե . Գ] . Ր . Չ . Ս . Բ . Ս . Ա .

Ըզ տ ր Գ ր ի գ ո ր գ ր չ ի ս ս ա

Տ . Ա . Ե . Լ . Ժ[Ժ] . Ռ։

տ ա ե լ ի ս

Վերծանությունը հիշատակարանի ամբողջության մեջ կկարդացվի. «Ո՜վ կաճառս քահանայից, որ հանդիպի[ք] սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի բարին ըզտ[է]ր Գրիգոր գրչիս՝ սատաելիս»։

Ձեռագիրը, ինչպես երևում է գլխավոր հիշատակարանից, գրված է Ս. Կարապետի վանքում, 1290 թ., Տիրացու գրչի կողմից, ուստի, պետք է ենթադրել, որ տվյալ ծածկագիրը ուշ ժամանակի հիշատակագրություն է։ Այդ կարելի կլինի վերջնականապես պարզել ձեռագրի գրչության ուսումնասիրությունից հետո։

* * *

Նոր Ջուղայի մատենադարանի նույն № 320 ձեռագրում փոխարինագիր ծածկագրության առաջին և երկրորդ բանալիներով գաղտնագրված է հետև-

յալը. «Ե : Ի : Ը : Թ : Ի : Ժ : Ջ : Ը : Ի : Ջ : Ե : Ի : Ը : Ա : Թ : »: Ծածկագրողը, ինչպես երևում է, այնքան էլ գրագետ մեկը չէ և թույլ է տվել գրչական մի քանի սխալներ: Ծածկագիրը հրատարակված է «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում» և չի վերծանված (ՆՋ, I, էջ 519):

Ծածկագիրը, ինչպես ասվեց, գաղտնագրված է փոխարինագիր ծածկագրության խառը բանալիներով, իսկ առաջին երեք տառերը մնացել են անփոփոխ: Տվյալ ծածկագրում Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյանի ձեռագրերի ցուցակի օգնությամբ կարելի եղավ ուղղել երկու գրչական սխալ. առաջին տառը ոչ թե «Ե» է, այլ՝ «Է», տասներորդ տառը ոչ թե «Ջ» է, այլ՝ «Վ»: Այս ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը վերծանվում է.

Է . Ի . Ը . Թ . Ի . Ժ . Ջ . Ը . Ի . Վ . Ե . Ի . Ը . Ա . Թ
է ի պ ք է ո ո պ է դ ր է ձ ա ք

Կարդացվում է. «ԷԻՊ ՔԷՈՈՊԷ ԴՐԷՁԱՔ»: Առաջին երեք տառի վերծանության ճշտությունը կասկածելի ենք համարում, եթե միայն այն ընդունելու չլինենք թուրքերեն ayip (այիպ=հանցավոր) բառը:

* * *

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 478 ձեռագիրը՝ «Մեկնութիւն ժամագրոց և պատարագի», պարունակում է փոխարինագիր բանալիով գաղտնագրված հետևյալ ծածկագիրը. «Զներսէս և զՄովսէս յիշեսջիք ի Տէր, ի նոյն լիջիք բարի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն. Ի . Ջ . Չ . Շ . Ի . Լ . Շ . Բ . Լ . Շ . Ց . Վ . Հ . Լ . Ք . Շ . Ջ . Մ . Ժ . Վ . Մ . Բ . Ջ . Լ . Ս . Չ . Ի» (թ. 415բ):

Ծածկագիրը հրատարակված է «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում, բայց չի վերծանված (ՆՋ, I, էջ 745): Այն գաղտնագրված է փոխարինագիր երկրորդ բանալիով, և զարմանալ կարելի է, թե ինչպես է, որ ձեռագրի ցուցակ կազմողին, ինչպես և այն հրատարակության նախապատրաստող փորձառու աղբյուրագետներին չի հաջողվել վերծանել:

Ծածկագրի բնագրում նկատվում է միայն մի տառանիշի գրչական սխալ. 15-րդ՝ «Ք» տառը պետք է լինի «Բ»: Այդ շեղումը հաշվի առնելով, փոխարինագրի առաջին բանալիով կվերծանվի.

Ի. Ջ. Չ. Շ. Ի.   Լ. Շ. Բ. Լ. Ց. Շ. Ց. Վ. Հ. Լ. Բ. Շ. Ջ. Մ
Ս ո ւ ր բ   Գ ր ի գ ո ր ո յ է գ ի ր ք ս
Ժ. Վ. Մ   Բ. Ջ. Լ. Ս. Չ. Ի
ա յ ս   Մ ո վ ս է ս

Վերծանությունը կարդացվում է. «Սուրբ Գրիգորոյ է գիրքս այս. Մովսէս»: Հիշատակարանը ամբողջության մեջ կկարդացվի. «Զներսէս և զՄովսէս յիշեսջիք ի տէր, ի նոյն լիջիք բարի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն: **Սուրբ Գրիգորոյ է գիրքս այս. Մովսէս**»[4]:

4. Ձեռագիրը գրվել է 1295 թ. Ս. Գրիգորի մենաստանում և նրա սեփականությունն է հանդիսացել: Ձեռագրի պատվիրատուներն են եղել Ներսեսը և Մովսեսը:

Եթե հնագրական տվյալներով ապացուցվի, որ ծածկագրության գրչությունը նույնական է ձեռագրի գրչության հետ, ապա անվերապահորեն կարելի է ասել, որ հիշյալ Ներսեսը ձեռագրի պատվիրատուներից մեկն է եղել:

* * *

Վիեննայի Մխիթարյանների № 7 ձեռագրում, որն ընդօրինակված է 1439 թ., կա գրչի հետևյալ ծածկագիրը. «Կրկին աղաչեմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Ց. Բ. Մ. Ի. Խ. Կ. Ի. Ո. Ե. Ռ. Է. Ի. Ռ. Է. Կ. Ե. Բ., որ շատ աշխատեցա եւ գրեցի զայս անուանս»: Վերջում ունի հղում. «Թէ դպիր ես, դու կարդա, թէ չէ՝ վզիտ տուր եւ հազայ» (Տաշ., էջ 50):

Հ. Տաշյանը դժվարացել է այս ծածկագիրը վերծանել: Լ. Խաչիկյանը ԺԴ դարի հիշատակարանների մեջ հրատարակել է Վիեննայի մատենադարանի այս ձեռագրի հիշատակարանը և վերծանել ծածկագիրը «ԶՍիմեոն կրաւմաւորս» (Հիշ. ԺԵ, I, էջ 496):

Ծածկագրի բնագրում նկատելի է չորս բառի գրչական սխալ. հինգերորդ տառը պետք է լինի ոչ թե «Խ», այլ՝ «Ի», յոթերորդ տառը պետք է լինի ոչ թե «Ի», այլ՝ «Խ», տասնմեկերորդ տառը պետք է լինի ոչ թե «Է», այլ՝ «Ի», տասներկուերորդ տառը պետք է լինի ոչ թե «Ի», այլ՝ «Խ»: Գրչական այս ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը կվերծանվի.

Ց. Բ. Մ. Ի. Ի. Կ. Խ. Ո. Ե. Ռ. Ի. Խ. Ռ. Է. Կ. Ե. Բ
զ Ս ի մ է ո ն կ ր ա ւ մ ա ւ ո ր ս

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «Կրկին աղաչեմ յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր **զՍիմէոն կրաւմաւորս**, որ շատ աշխատեցա եւ գրեցի զայս անուանս»:

(Հրատ. ՀԳՊ, 204, ՀԳԳ, 355)

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1912 ձեռագրի Մարկոս գրիչը 1369 թ. հիշատակարանում դիմել է ընթերցողին հետևյալ խնդրանքով. «Արդ աղաչեմ, որք համդիպիք յիշման արժանի արարէք զանարժան գծօղս և զծնաւղս իմ զՅովհաննէս և զնօքարն նորա ըղուստ և ըղդստ, և որ յիշէ յայսմ վայրի, յահեղ ատեան յիշեալ լինի Ճ Բ Տ Հ Ջ Վ Ց Ն Լ Ո Ջ Ի Ը Փ ի Տէր (Եղմ., VI, էջ 345):

Ծածկագիրը եղբայրագրով վերծանվում է.

Ճ Բ Տ Հ Շ Վ Ց Ն Լ Ո Ջ Ի Ը Փ ի Տէր
Մ ա ր կ ո ս ն յ ի շ ե ց է ք ի Տէր

Այսպիսով, ծածկագրողը ձեռագրի գրիչ Մարկոսն է, որը և խնդրում է հիշել իրեն. **«Մարկոսն յիշեցէք ի Տէր»:**

ՀԱՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1268 ձեռագիրը, որը գրված է 1603 թ., պարունակում է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւնք առակացն Սողոմոնի», Վարդան Արևելցու «Մեկնութիւնք Երգոց Երգոյն»-ը և այլ նյութեր։ Թերթ 2ա-ում, Լամբրոնացու աշխատության առջևում, կիսախորանի մեջ հանդիպում ենք հետևյալ ծածկագրին.

Ճ Ն Յ Ս Բ Տ Հ
Լ Բ Շ Ջ Մ։ Ճ Ժ Ճ Ժ
Ժ Ո . Տ Ծ Շ Մ Բ Ս Բ
Ն Ճ Շ Մ Ծ Տ Բ։ (թ. 2ա)։

Հեղինակը, գաղտնագրությունը բարդացնելու նպատակով, օգտագործել է փոխարինագիր ծածկագրության երեք բանալիները միաժամանակ։

Ծածկագիրը վերծանվում է.

Ճ Ն Յ Ս Բ Տ Հ
Ա տ ո մ ի ն է

Լ Բ Շ Ջ Մ. Ճ Ժ Ճ
գ ի ր ք ս ճ ա ռ

Ժ Ո. Տ Ծ Շ Մ Բ Ս Բ
ա ց Ն ե ր ս ի ս ի

Ն Ճ Շ Մ Յ Տ Բ։
Տ ա ր ս ո ն ի

Գաղտնագրված է. «Ատոմին է գիրքս ճառաց Ներսիսի Տարսոնի»: (Հրատ. ՀԳԳ. 257, ՊԲՀ, 1965, № 4, 237—238)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 3914 ձեռագիրը իմաստասիրական նյութերի ժողովածու է՝ ընդօրինակված 1634 թ.։ Գրիչը թողել է կետագիր ծածկագրության տեսք ունեցող հետևյալ գաղտնագիրը. «և զ. ր... մ̅ ո.. վ̅ բ... ճ̅ լ.... յեղկելի գծողս յիշել աղ[ա]չեմ. ՌՁԳ» (թ. 432բ)։ Տառերի մոտ եղած կետերը և պատվի նշանները խաբուսիկ են. դրված են վերծանողին մոլորեցնելու նպատակով։ Անշուշտ, այդ է պատճառը, որ ծածկագրի վերծանությամբ ոչ ոք չի զբաղվել։ Կետերից և գծիկներից բեռնաթափ անելուց հետո, ունենում ենք և զ ր մ ո վ բ ճ լ տառախումբը, որը փոխարինագիր բանալիով վերծանվում է.

ե զ ր մ ո վ բ ճ լ
ե զ Ե ս ա յ ի ա յ

Վերծանությունը հիշատակարանի ամբողջության մեջ կարդացվում է. «և զԵսայիայ յեղկելի գծողս յիշել աղ[ա]չեմ. ՌՁԳ (1634)»։

Ծածկագրի վերծանությունից երևում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 3914 ձեռագրի գրիչը ոչ թե Մկրտիչն է, ինչպես կարծվում է, այլ՝ Եսային։

* * *

Նոր Ջուղայի մատենադարանի № 73 ձեռագիրը գրված է 1488 թ. Շահապունյաց ձորի Կուքի գյուղում, Մանվել գրչի կողմից։ Հետագայի հիշատակագիրներից մեկը փոխարինագիր ծածկագրությամբ թողել է հետևյալ գաղտնագրությունը. «Ես Ի . Ժ . Շ . Մ . Ծ . Թ . Յ . Ժ . Շ . Խ . Ժ . Փ . Ծ . Ն . եկի Ջուղայ թվին ՌԾ (=1601)» (թ. 259բ)։

Ծածկագիրը հրատարակված է «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում» (ՆՋ, I, էջ 109) և փոխարինագրի երկրորդ բանալիով վերծանված.

Ի . Ժ . Շ . Մ . Ծ . Թ . Յ . Ժ . Շ . Խ . Ժ . Փ . Ծ . Ն
Բ ա ր ս ե ղ վ ա ր դ ա պ ե տ

Հիշատակարանը ամբողջության մեջ կկարդացվի. «Ես Բարսեղ վարդապետ եկի Ջուղայ թվին ՌԾ(=1601)»։

* * *

Փոխարինագիր ծածկագրության մի գաղտնագիր հանդիպում է Անգլիայի Բոդլյան կոչվող գրադարանի հայկական ձեռագրական հավաքածուի մի ձեռագրում, որը պարունակում է «Մեկնութիւն առակացն Սողոմոնի» աշխատությունը։ Ձեռագիրը նկարագրել է բանասեր Տիրայր եպիսկոպոսը իր կազմած «Բոդլյան գրադարանի հայկական ձեռագրաց ցուցակում», որը անտիպ է և ներկայումս պահվում է Մաշտոցի անվան մատենադարանի արխիվային բաժնում (Տետր VII, էջ 578)։ Խնդրո առարկա ծածկագրությունը, ըստ Տիրայր եպիսկոպոսի հավաստիացման, հետագա դարերում գրված հիշատակագրություն է։ Այն բաղկացած է հետևյալ տառախմբերից.

Ժ . Ն . Յ . Ս . Բ . Տ . Լ . Հ . Բ . Շ . Ջ . Մ . Ճ . Ժ . Ճ . Ժ .
Ո . Տ . Ծ . Շ . Մ . Բ . Ս . Բ . Ն . Ճ . Շ . Մ . Յ . Տ . Բ .

Տիրայր եպիսկոպոսը, ինչպես երևում է, դժվարացել է վերծանել ծածկագիրը։ Պարզվում է, որ ծածկագիրը գաղտնագրված է փոխարինագրի երեք բանալիների բարդացումով և վերծանվում է.

Ժ . Ն . Յ . Ս . Բ . Տ . Լ . Հ . Բ . Շ . Ջ . Մ . Ճ . Ժ . Ճ . Ժ .
Ա տ ո մ ի ն է գ ի ր ք ս ճ ա ռ ա
Ո . Տ . Ծ . Շ . Մ . Բ . Ս . Բ . Ն . Ճ . Շ . Մ . Յ . Տ . Բ .
ց Ն ե ր ս ի ս ի Տ ա ր ս ո ն ի

Տվյալ ծածկագրությունն իր ձևով և բովանդակությամբ նմանվում է Մաշտոցի անվան մատենադարանի № 1268 ձեռագրի ծածկագրությանը։ Այն վերծանվում է. «Ատոմին է գիրքս. ճառաց Ներսիսի Տարսոնի»։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1740 ձեռագիրը, որը փիլիսոփայական նյութերի ժողովածու է, գրված է Եղիազար, Սիմեոն և Եսայի գրիչների կողմից։ Վերջինս 1636 թ. իր անունը գաղտնագրել է փոխարինագիր բանալիով։ Բերում ենք ծածկագիրը, որը կցված է փիլիսոփայական մի բնագրի վերջին։



«Եւզրմովրճլ յեղկելի գծօղս յիշել աղաչեմ ՌՁԵ (=1636 թ.)»։
Վերծանվում է. «Եւ զԵսայիայ»։
(Հրատ. ՀԳԳ, 256)։

* * *

Եղվարդի բազիլիկայի փոքեձև արձանագրության ներքևի քարերի վրա փորագրված է «Լ Կ Յ Ս Հ» տառախումբը, որի մեջ չկա ձայնավոր տառանիշ։ Անկարելի է այն սովորական բառ ընդունել և կարդալ։ Անկարելի է նաև այն ընդունել անիմաստ գրչախաղ։ Մենք այն համարում ենք ծածկագրություն և փոխարինագիր գաղտնագրի բանալիով առաջարկում հետևյալ վերծանությունը.

Լ Կ Յ Ս Հ
Յ ո ւ ս է

«Լ»-ն, «Կ»-ն և «Յ»-ն գաղտնագրված են փոխարինագրի առաջին բանալիով, իսկ վերջինը՝ «Հ»-ն՝ փոխարինագրի երրորդ բանալիով։

«Յուսէ»-ն անսովոր անուն է, սակայն այդ անունով հայ վիմագրության մեջ հայտնի է մի փորագրչի անուն Հոռոմոսի վանքի արձանագրություններից մեկում. «ՋՅՈՒՍԷՍ յիշեա ի Տէր»[6]։ Այդ անվանն անդրադարձել է Հ. Աճառյանը. «Յուսէս ար. անստույգ անուն. մի անգամ հիշված է Հոռոմոսի անթվական մի արձանագրության մեջ՝ իբրև փորագրչի անուն»[7]։

Ծածկագիր տվյալ տառախումբը կարելի է վերծանել նաև փոքր-ինչ այլ ձևով՝ տառախմբի «Յ» տառը վերծանելով փոխարինագրի երրորդ բանալիով, որով կունենանք.

Լ·Կ Յ Ս Հ
Յ ո վ ս է

«Յովսէ» անունը կրճատված ձևը կարելի է համարել հանրածանոթ «Յովսէփ» անվան։

Կա՞ արդյոք կապ Եղվարդի ծածկագրված «Յուսէ» կամ «Յովսէ» անունով փորագրչի և Հոռոմոսի արձանագրության մեջ հիշվող «Յուսէ» փորագրչի միջև, այդ կարելի կլինի անվերապահ ասել այն ժամանակ, երբ կպարզվի երկու փորագրիչների ապրած ժամանակը և հնարավոր կլինի նրանց գործած գրաձևերի համեմատությունը կատարել[8]։

* * *

Հովհաննես գրիչը Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1257 ձեռագրում, որը տարբեր նյութերի ժողովածու է՝ ընդօրինակված 1322 թվականին, իր հիշատակարանում թողել է հետևյալ ծածկագիրը. «Ջերջանիկ երաժշտապետս մեր զԳրիգորիոս և զեղկելի գծողս՝ զատացեալ գրոյս, յիշել Ռ Ջ Ռ Հ Ր Ի Յ Լ Կ Ջ Ռ Խ Ի Բ։ Գրեցաւ ի թվ. ՉՀԱ յաստուածաբնակ ուխտս Անապատ» (Եղմ., IV, էջ 430)։ (Վայրի «Անապատ» անունը ծածկագրված է սյունակետագրով)։

Ծածկագիրը փոխարինագրով վերծանվում է.

Ռ Ջ Ռ Հ Ր Ի Յ Լ Կ Ջ Ռ Խ Ի Բ
Ա ղ ա չ ե մ զ Յ ո հ ա ն է ս

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «Ջերջանիկ երաժըշ-

---

[6] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 22։
[7] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 530։
[8] Այս ծածկագիրը վերծանված է մեր «Եղվարդի ծածկագրության գաղտնիքը» խորագրով հոդվածում (տե՛ս «Երևանի համալսարան», 1976, № 2, էջ 41—47)։

տապետս մեր զԳրիգորիոս և զեղկելի գծողս յիշել աղաչեմ զՅոհաննէս: Գրեցաւ ի Թվ. ՉՀԱ (1322) յաստուածաբնակ ուխտս Անապատ»:

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 89 ձեռագրում, որը գրված է 1273 թ., Ոըստակես անունով կազմարարը 1610 թ. գրի է առել չափածո հիշատակագրություն, վերջում ծածկագրելով իր անունը։

Ոըստակէս կապող յայսմ գրի,
Որ եմ անղեալըս Շամբեցի,
Հող և փոշի ամենայնի,
Յոյժ մեղաւոր և եղկելի։
Ի ցոյց մարդկան աբեղայի,
Գործով զազիր և աղտեղի,
Շըրջիմ իբրև թէ կենդանի,
Հոգիս մեռեալ ի մէջ մարմնի։
Ջձեզ աղաչեմ եղբարք բարի,
Որք հանդիպիք յայսմ տառի,
Յիշման առնէք զիս արժանի,
Յիշեալ լիջիք յայնմ աւուրն։
Վա՛յ քեզ Ճ . Ջ . Մ . Ն . Ժ . Ո . Հ . Մ . եղկելի։
(էջ 419)

Ծածկագիրը հրատարակված է Երուսաղեմի «Ձեռագրաց ցուցակում» և փոխարինագրով վերծանված «Ո ը ս տ ա կ է ս» (Եղմ., I, էջ 283), վերահրատարակված է 17-րդ դարի հիշատակարանների հատորում։ (Հրատ. ՀՁՀ. ժէ դարի, I, էջ 393, ՀԳԳ, էջ 175—176)։

* * *

Ղալաթիայի մատենադարանի № 27 ձեռագրի մեջ հետագայի մի հիշատակագիր 1634 թ. գրի է առել հետևյալ փոքրիկ ծածկագիրը. «Յորժամ կարդայք Յովհաննու հանգիստն, յետ Մանկունքին կարդա... և յիշեա ի Ռ Դ . Ք Ի Կ Բ . Ս Ռ Խ Ռ Բ»։ Ծածկագիրը հրատարակված է Բ. Կյուլեսերյանի «Ձեռագրաց ցուցակում», բայց չի վերծանված (Ղալ., սյուն. 108)։

Ծածկագրի բնագրի մեջ նկատվում են որոշ սխալներ. «ՌԴ»-ից առաջ հասարակ տառով տրվող «Ի»-ն իրականում ծածկագրի մասն է կազմում։ Ճիշտ չէ նաև «ՌԴ»-ից հետո միջակետ դնելը, որովհետև այնտեղ չի վերջանում բառը. վերջից ծածկագիրը թերի է։

Ծածկագրի առաջին մասը վերծանվում է դյուրությամբ.

Ի Ռ Դ Ք Ի Կ Բ
Մ ա տ թ է ո ս

Երկրորդ մասը վերծանվում է այսպես.

Ս Ռ Խ Ռ Բ
բ ա ն ա կ...

Թվում է, թե շարունակության մեջ պակասում են «իրիս» տառերը՝ ստանալու համար «բանաս[իրիս]»։ Անհավանական չէ սակայն, որ կարող է ծածկագրված լինել նաև «ծառաս» բառը, բայց այդ դեպքում պետք է ընդունենք, որ ծածկագրում երկու տառի սխալ կա. առաջին՝ «Ս»-ն պետք է լիներ «Շ» և երկրորդ՝ «Խ»-ն՝ «Ա», որը գրչական սխալով բացատրելը անհնար է. քանի որ այդ տառանիշերը իրար նման չեն։

(Հրատ. ՀԳՊ, էջ 111)։

2. ԳՈՒՄԱՐԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրության այս տեսակը «գումարգիր» է կոչվում այն պատճառով, որ գաղտնագրված տառի թվական արժեքը բաժանվում է երկու, երեք կամ չորս մասերի և ծածկագրվում մի տառի միջոցով։ Այսպես, «ԲԲ»-ն (2+2) համասար է «Դ»-ի (4-ի), «ԻԻ»-ն (20+20) համասար է «Խ»-ի (40-ի), «ՆՆ»-ն (400+400) համասար է «Պ»-ի (800-ի) և այլն։ Սակայն, երբ ծածկագրողները հանդիպում են այնպիսի տառերի, որոնց թվական արժեքը հնարավոր չէ երկու մասի բաժանել, այդ դեպքում գործ են ածում երեք կամ չորս տառ։ Այդ պատահում է տասնավոր, հարյուրավոր, հազարավոր թվական արժեք ունեցող որոշ տառանիշերի ծածկագրության ժամանակ՝ թվագումար ստեղծելու ժամանակ։ Այդպիսի դեպքում դիմում են երկու միջոցի. կամ գումարում են իրար մոտիկ թվական արժեք ունեցող տառանիշերը և կամ երկու տառի փոխարեն գործածում են չորսը։ Այսպես, օրինակ. «Հ» տառը տարբեր գաղտնագրողների մոտ ծածկագրվում է երկու միջոցով. վերցնում են իրար մոտիկ Լ և Խ (30 և 40) տառերը և կամ 70-ը բաժանում են երկու մասի և նշանակում երկու 35 կազմող տառանիշեր՝ ԼԵԼԵ։ «Ա» տառը տրվում է լատինական «С» տառանիշով։ Որոշ ծածկագրերում «С»-ի փոխարեն գործ են ածում 0, և մեկ թվանշանն արտահայտում են երկու գրոյով՝ «00»։ Պատահում է, որ «С»-ի կամ զրոյի փոխարեն գործ են ածում ստորակետի նման նշանագիր։

Ծածկագրության այս տեսակը օգտագործված է նաև հունական ու սլավոնական մատենագրության մեջ՝ իրենց տառանիշերի թվագումարներով։ Օրինակ՝ նախկին М. Син. Библ. № 70 ձեռագրում «амин» բառը ծածկագրված է «а кк дд лкч» կամ հունարեն «Par Suppl. Gr». № 482 ձեռագրում՝ 1105 թվականից, «Αμην» բառը ծածկագրված է cc. χχ. δδ. χεχε։ Գարդհաուզենը[9] ծածկագրի այս տեսակն անվանում է «Doppelstelligen Zahlen-kryptograpie», իսկ Կարսկին՝ «мудрая литорея»[10]։

Բերենք գումարգիր ծածկագրության բանալիներից մեկը.

C	ԱԱ	ԱԲ	ԲԲ	ԲԳ	ԳԳ	ԳԴ	ԴԴ	ԴԵ
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ԵԵ	ԺԺ	ԺԵԺԵ	ԻԻ	ԻԵԻԵ	ԼԼ	ԼԵԼԵ	ԽԽ	ԽԵԽԵ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
ԾԾ	ՃՃ	ՃԾՃԾ	ՄՄ	ՄԾՄԾ	ՅՅ	ՅԾՅԾ	ՆՆ	ՆԾՆԾ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
ՇՇ	ՌՌ	ՌՇՌՇ	ՍՍ	ՍՇՍՇ	ՎՎ	ՎՇՎՇ	ՏՏ	ՏՇՏՇ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

9 V. Gardthausen, Grechische palaeographie, Leipzig, 1913, էջ 314—315.
10 Е. Карский, Славянская кирилловская палеография, էջ 255։

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 186 ձեռագիր Մատթեոսի Ավետարանի վերջում, որն ունի 10—12-րդ դարի գրչություն, գրի է առնված տասն տառից բաղկացած հետևյալ ծածկագիրը. «Ռ ։ Ռ ։ Ռ ։ Ա ։ Ռ ։ Ռ ։ Ժ ։ Ժ ։ Ժ ։ Ժ»։

Գաղտնագիրը հրատարակել է Բ. Կյուլեսերյանը «Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում», բայց չի վերծանել (Անկ., սյուն. 904)։ Տառերի անորոշության և կողմնակի տվյալների բացակայության պատճառով դժվար է այն անվիճելի վերծանել։ Մեր կարծիքով, գաղտնագիրը գումարգիր ծածկագիր է, որի տառանիշերը խմբավորելով և վերջից մեկ Ժ ավելացնելով կարելի է առաջարկել հետևյալ վերծանությունը.

ՌՌՌ . Ա . ՌՌ . ԺԺ . ԺԺԺ .
Վ ա ս ի լ

Վերծանությունը չենք համարում անվիճելի։

* * *

Գումարգիր ծածկագրի մի փոքրիկ բնագիր հրատարակել է Բ. Սարգիսյանը Վենետիկի Մխիթարյանների «Ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում՝ վերցնելով այն Վենետիկի մատենադարանի № 196 ձեռագրից։

Գրչագրում հետագայի հիշատակագիրներից մեկը գաղտնագրել է իր անունը և նշել Հելիոպոլիս իր այցելության տարեթիվը. «Ես Մարտիրոս նուաստ ծառայ Ք[րիստոս]ի, եկի ի Հէլօպալիս թվին ՇՇ. Ձ. Խ. (Անդ առեղծվածագիր նման գրով այսպես) Ճ. Ճ. Վ. Ս. Ս. Ս. Ձ. Ձ. Վ. Ս. Յ. Յ. Ռ. Ռ.։ Ո՛վ եղբայր, զայս փակայգիրս դու կարդա, թե ոչ՝ փքիտ տուր և հազա» (Սարգ., I, սյուն. 824)։

Բ. Սարգիսյանը դժվարացել է ծածկագրի տառանիշերը ճիշտ խմբավորել և պարզել «առեղծվածագրի» պարունակությունը։ Ձեռագրի գրչության թվականի մասին խոսելիս, նա հետևյալ կարծիքն է հայտնել. «Ժամանակ՝ անհայտ, սակայն ի նկատի ունենալով մատենիս կրկին անգամ նորոգման ենթարկվելը, հավանական է, որ ԺԹ դարու վերջը և կամ ԺԴ դարու առաջին քառորդին գրված ըլլա»։ Սարգիսյանի խոսքն, անշուշտ, ծածկագրի ժամանակին չի վերաբերում, որովհետև վերև բերված հիշատակարանից երևում է, որ այն գրված է «ՇՇ . Ձ . Խ» թվականին, այսինքն 1671 թ.։

Ծածկագրության մեջ սպրդել է երկու անճշտություն. յոթ և ութերորդ տառանիշերը պետք է լինեն ոչ թե «Ձ Ձ», այլ՝ «Ժ Ժ»։ Այս ուղղումը կատարելուց հետո ծածկագրությունը կվերծանվի.

ՃՃ . » . ՎՍ . ՍՍ . ԺԺ . ՎՍ . ՅՅ . ՌՌ
Մ ա ր տ ի ր ո ս

Այսպիսով, պարզվում է, որ տվյալ ծածկագրի հեղինակը Մարտիրոս հիշատակագիրն է եղել։

* * *

Զմմառի մատենադարանի № 132 ձեռագրում (Թ. 84բ), որն ընդօրինակված է 1674 թվականին, գրիչն իր անունը գաղտնագրել է հետևյալ ծածկա-

գրի մեջ. «Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի զԱ-րարածոց գիրքս ես անարժան և նուաստ ծառայդ Ա. ՌՏ. ԺԺ. ՌՌ. ՍՍ. Ա. ԼԼ. ԳԴ. ՌՌ. ԺԺ ի թվ. ՌՃԻԳ (=1674) ամսեանն յուլիս Ե(=5)»։ Ծածկագրությունը հիշատակարանի մեջ հրատարակել է Մ. Քեշիշյանը, բայց դժվարացել է այն վերծանել և ձեռագրի նկարագրության մեջ նշել, որ գրչի անունը հայտնի չէ (Քեշ., Զմմառ, էջ 276)։

Պարզվում է, որ ծածկագիրը գումարգիր է և առանց մեծ դժվարության վերծանվում է.

Ա. ՌՏ. ԺԺ. ՌՌ. ՍՍ. Ա. ԼԼ. ԳԴ. ՌՌ. ԺԺ
Ա ր ի ս տ ա կ է ս ի

Ծածկագրությունը հիշատակարանի ամբողջության մեջ կվերծանվի. «Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցի զԱրարածոց գիրքս ես անարժան և նուաստ ծառայդ Արիստակէսի»:

Եվ այսպես, պարզվում է, որ Զմմառի վերոբերյալ ձեռագրի գրիչը Արիստակեսն է։

(Հրատ. ՀԳՊ, 276)։

* * *

Սեբաստիայի Ս. Նշան վանքի հավաքածուի № 2 ձեռագիրը 1313 թ. Սեբաստիա քաղաքում գրել է Ստեփանոս քահանան և հիշատակարանում (էջ 11) իր որդու ծնունդը արձանագրել գումարգիր ծածկագրով։ Բերում ենք այն վերծանության հետ միասին.

ԺԺ . ԴՕԴՕ . ՌՇՌՇ . ՅԾՅԾ . ԼԼ . ԲՕԲՕ . ԽԵԽԵ . ՕՕ . ՎՇՎՇ .
ի թ վ Ձ Կ Ե Ղ ա ւ

ՌՌ.. ԺԺ. ՃՃ. ՅՅ. ՄՄ. ԺԺ. ՃՍՃՍ. ՅՅ. ՎՇՎՇ. ՄՄ. ԺԺ.
Ս ի մ ո ն ի յ ո ւ ն ի

ՌՌ. ԺԺ. ԲԲ.։
ս ի Դ

Այստեղ զրոն գործ է ածված կեսի նշանակությամբ, ուստի երկու կեսը հավասար է մեկի, այսինքն՝ «Ա»-ի։

Ծածկագիրը վերծանվում է. «Ի թվ. ՉԿ (=1311) եղաւ Սիմոն ի յունիսի Դ(=4)»: Այն հրատարակել և վերծանել է Թ. Գուշակյանը (տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա», էջ 6)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4977 ձեռագրում կազմարար Վարդանը գումարգիր ծածկագրությամբ թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Զկազմող սուրբ գրոցս զպանտուխտեալ և վշտացեալ անձս՝ զՎարդան սուտանուն սարկաւագ, աղաչեմ յիշել յաղաւթս ձեր ո՛վ սուրբ ընթերցողք։ Կազմեցաւ ի թվ. ՊՀԶ(=1427)։ ՌԵՃ . ՌԵՃ . Օ . Օ . ԲՌԵՃ . ԲՌԵՃ . Բ . Բ . Ս . Օ . ԲՃ . ԲՃ . Օ . Օ . ԳՃ . ԲՃՍ . ԲՃՍ . Օ . Օ . ԳՃ . Ժ . Ժ . ԲՌ .

ԲՌ . ԽՌ»։ Ծածկագրի վերջում կազմարարը դիմել է ընթերցողին կծու հղումով. «Եթէ դպիր ես դու կարդա, թէ չէ՝ վզիտ տուր և հաղայ» (ՄԱՄ, ձեռ. № 4977, թ. 149բ)։

Ծածկագիրը վերծանել է Լ. Խաչիկյանը և տողատակում տվել հետևյալ ծանոթագրությունը. «Գումարգիր ծածկագրով կարդացվում է՝ «Վարդան այշա ի տ̅ր», հավանաբար, ցանկացել է գրել՝ «Վարդանս յիշեայ ի տէր»։ 0 նշանը կես է նշանակում, ուրեմն 0—0 հավասար է մեկի, այսինքն՝ Ա-ի» (Հիշ. ԺԵ, I, էջ 373)։

Մեր ուսումնասիրությունից երևաց, որ ծածկագրի մեջ թույլ է տրված երկու տառանիշի բացթողում. «ԲԾՄ»-ից առաջ՝ «Ի», երկրորդ «ԲԾՄ»-ից հետո՝ «Ե»։ Պարզվում է, որ ծածկագրողը, գաղտնագրության վերծանությունը բարդացնելու նպատակով, առանձին տառանիշերի թվական արժեքները ներկայացնող ծածկագիր միավորները բաժանել է իրարից։ Այս նրբությունները հաշվի առնելով և խմբավորելով ըստ պատշաճի, ծածկագիրը կվերծանվի.

ՌԽԾՌԽԾ . 00 . ԲՌԽԾԲՌԽԾ . ԲԲ . 00 . ԲԾԲԾ . 00 . ԳԾ . ԺԺ . ԲԾՄԲԾՄ .
Վ ա ր դ ա ն ա յ ի շ

ԳԲ . 00 . ԳԾ . ԺԺ . ԲՌԲՌ . ԽՌ։
ե ա յ ի տ ր

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «Կազմեցաւ ի թվ. ՊՀՋ . Վարդանայ, յ ի շ ե ա յ ի տ [է] ր»:

* * *

Հ. Աճառյանը «Թավրիզի ցուցակ ձեռագրացի» մեջ (էջ 10) հրատարակել է Ջմշկածագի Ընկուզլյաց անապատում 1434 թ. ընդօրինակված մի ձեռագրի չափածո հիշատակարանը, ուր գրչի անունը գաղտնագրված է հետևյալ ձևով. «Ողջ լեր. Գ Գ Ա Գ Ռ Գ Ռ Ա Ժ Ժ Թ յիշեա ի տ[է]ր»։ Աճառյանը կռահել է, որ ծածկագրության մեջ պետք է գաղտնագրված լինի «Դաւիթ» անունը։ «Ծածկագրություն մը,—գրում է նա,— որ կարծեմ կնշանակե գրիչը Դավիթ. Գ Ռ Գ Ռ Ա (6000+1) թերևս փոխանակ Ժ Ժ Թ անշուշտ գրվի Իրրև ԻԹ (29), Ի (=7000)»։

Մեր կարծիքով, առջևի ԳԳ-ն պետք է վերծանել Զ (Գ+Գ=Զ)։ ԳԳ-ից հետո բաց է թողնված «Դ» տառը։ Գ Ռ Գ Ռ Ա-ն՝ ուղղելի է Գ Ռ Գ Ռ Ռ ձևով, որովհետև երկու երեք հազարը «Ի» տառի գումարը տալ չի կարող. սեղի է ունեցել նմանաձև «Ա» և «Ռ» տառերի սովորական շփոթություն։ Մյուսները Աճառյանի մոտ ճիշտ են։ Մեր ուղղումով ծածկագիրը կկարդացվի.

Գ Գ Դ Ա ԳՌԳՌ ԺԺ Թ
Զ Դ ա ւ ի թ

Ամբողջության մեջ կկարդացվի. «Ողջ լեր։ Զ Դ ա ւ ի թ *յիշեա ի տէր»։*

* * *

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 40 ձեռագիրը վերանորոգել ու կազմել է վարպետ Մինասը և իր թողած հիշատակարանում գումարգիր ծածկագրությամբ գաղտնագրել իր անունը։ Հիշատակարանում ասված է. «Կրկին նորոգեցաւ սաղմոսարանս և կազմեցաւ ձեռամբ յոգնամեղ գրչի ԾԾ . ԺԺ . ՄՄ . 00 . ՌՌ . ԺԺ . դպրի ի քաղաքս Կամենից։ Թվին ՋՂԳ (=1544) մարտի Ի (=20) աւարտեցաւ»։ Վերծանվում է.

ԾԾ . ԺԺ . ՄՄ . 00 . ՌՌ . ԺԺ .
Մ ի ն ա ս ի

Հիշատակարանը հրատարակել է Բ. Սարգիսյանը և վերծանել (Սարգ., I, սյուն. 225)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1370 ձեռագրի պատվիրատուն է հանդիսացել Պետրոս կաթողիկոսը, որն իր անունը գաղտնագրել է տվյալ ձեռագրում գումարգիր ծածկագրությամբ հետևյալ հիշատակագրության մեջ. «Ստացող գրոյս ըզ ՆՆ, ԳԲ, ՍՍ, ՎՍ, ՅՅ, ՌՌ, ԼԼ, », ԽԴ, ՅՅ, Ծխ, ԺԺ, ԼԼ, ՅՅ, ՌՌ, ՌՌ, Բերիացի, ի ՌԾՀԳ (1724) թվին օգոստոս ամսուն Թ(9) օրն... Զգրիչն ՆՆ, ԳԲ, ՍՍ, ՍՎ, ՅՅ, ՌՌ, ԼԼ, », ԽԴ, ՅՅ, ԺԺ, ԼԼ, ՅՅ, ՌՌ, ՌՌ յիշեցէք ի Ք[րիստո]ս»։

Հրատարակել է Ն. Պողարյանը և վերծանել (Նշմ., V, էջ 5)։

Առաջինը.

Ըզ, ՆՆ , ԳԲ, ՍՍ, ՎՍ, ՅՅ, ՌՌ, ԼԼ, », ԽԴ, ՅՅ, Ծխ, ԺԺ, ԼԼ, ՅՅ, ՌՌ, ՌՌ
Ըզ Պ ե տ ր ո ս կ ա թ ո ղ ի կ ո ս ս

Երկրորդը՝ «Պետրոս կաթողիկոսս»:

Պետրոսը, ամենայն հավանականությամբ, եղել է Աղթամարի կաթողիկոսը, թեև Օրմանյանի «Ազգապատումում» այդ անունով կաթողիկոսի մասին հիշատակություն չկա։

* * *

Վենետիկի Մխիթարյանների № 323 ձեռագրում գրի է առնված ծածկագրության յուրատեսակ մի բնագիր, որն արտաքին տեսքով նմանվում է գումարգրի, բայց, իրականում, բազմապատկության գիր է, որովհետև ծածկագիրը վերծանել կարելի է՝ գաղտնագրված զույգ տառանիշերը մեկը մյուսով բազմապատկելով։ Այսպես՝ ԲՌ-ն հավասար է երկու հազարի, այսինքն՝ «Ս»-ի, ԴԾ-ն հավասար է չորս հարյուրի, այսինքն՝ «Ն»-ի, ԲԺ-ն հավասար է «Ի»-ի՝ այսինքն՝ քսանի և այլն։ Ծածկագրության տառանիշերը գրված են երեք գույնով և նշված է, թե նրանցից յուրաքանչյուրը ինչ իմաստով պիտի օգտագործել։ «Որ կարմրադեղովն է և թուագլուխ ունի, զգիր համարուն գիտ,—ասվում է այնտեղ,—և որ սևադեղովն է, զնոյն գիր առ և անաշխատ ընթեռնուս»։

Ծածկագրի բնագիրը հետևյալն է.

ԲՌ։ ԴՌ։ Ե։ ԸՌ։ Ա։ ԴՃ։ ՋՃ։
ԲՌ։ ԲՃ։ Է։ ԹԺ։ Ա։ ԷՌ։ ՋՃ։
ԵՌ։ ԵԺ։ Ա։ Ռ։ Ա։ ԹՌ։ ԵՌ։
ԲԺ։ ԲՌ։ ԴՌ։ ՋՃ։ ԲՌ։ (Սարգ., III, սյուն. 92)

Ծածկագրի կողքին, լուսանցքում, գաղտնագիրն ընթերցող մեկը թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Ես անարժան ԲՌ։ ԴՌ։ Ե։ ԸՌ։ Ա։ ԴՃ։ ՋՃ։ ԲՌ եպիսկոպոս կամօքն աստուծոյ և ողորմութեամբ սկսայ և գտայ զփակ գիրս զայս՝ թուխ գիրն և զկարմիրն»։

Ծածկագիրը հրատարակել է Բ. Սարգիսյանը և փոքրիկ սխալներով վերծանել։ Մենք կատարում ենք որոշ ճշտումներ և վերծանում.

ԲՌ։ ԴՌ։ Ե։ ԸՌ։ Ա։ ԴՃ։ ՋՃ։
Ս տ ե փ ա ն ո
ԲՌ։ ԲՃ։ Է։ ԹԺ։ Ա։ ԷՌ։ ՋՃ։
ս մ է ղ ա ւ ո
ԵՌ։ ԵԺ։ Ա։ Ռ։ Ա։ ԹՌ։ ԵՌ։
ր ծ ա ռ ա Ք ր
ԲԺ։ ԲՌ։ ԴՌ։ ՋՃ։ ԲՌ։ [ԲԺ]
ի ս տ ո ս [ի]

Վերծանությունը կարդացվում է. «Ստեփանոս մեղաւոր ծառա Քրիստոս[ի]»։ Հիշատակարանի լուսանցքում ծածկագրված անունը նույնպես «Ստեփանոս» է.

ԲՌ։ ԴՌ։ Ե։ ԸՌ։ Ա։ ԴՃ։ ՋՃ։ ԲՌ։
Ս տ ե փ ա ն ո ս

Եվ այսպես, պարզվում է, որ Վենետիկի Մխիթարյանների № 324 ձեռագրի ծածկագրության հեղինակը Ստեփանոսն է։

* * *

Ֆ. Կոնիբերը Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի ցուցակում բերել է № 98 ձեռագրի գումարգիր ծածկագրությունը, որը գրի է առնված Կարապետ գրչի հետևյալ հիշատակարանում. «Յակովբոսն և ընտանիք իւր յիշեսջիք ի ՔՍ ՅՍ

ՃՃ Ա [ՍՎ ՈՈ] ԺԺ ՍՎ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ

ՌՌ ՍՍ ԵԴ ՏՏ Ա ՄՄ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ

ՃՇ ՃՇ Ե և ես Կարապետ գրիչս յիշեսցի ի ՔՍ ՅՍ, ամէն» (Con., էջ 240)։

Կոնիբերը վերև բերված հիշատակարանից թարգմանել է միայն առաջին և վերջին տողերը, իսկ բուն ծածկագրությունը դժվարացել է վերծանել։

Ծածկագրում նկատվում են գրչական մի քանի սխալներ. առաջին տողի չորրորդ երկտառը՝ ՈՈ-ն ուղղվում է ՍՍ, իսկ երկրորդ տողի երրորդ երկտառից՝ ԵԴ, դուրս է թողնվում Դ-ն, երրորդ տողի ՃՇՃՇ-ից հետո եղած Ե տառը պետք է լինի Ս։ Այդ ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը վերծանվում է.

ՃՃ Ա ՍՎ ՍՍ ԺԺ ՍՎ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ
Մ ա ր տ ի ր ո ս ի Ք ս

ՌՌ ՍՍ Ե ՏՏ Ա ՄՄ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ ՃՇՃՇ Ս
Ս տ ե փ ա ն ո ս ի Ք ս Յ ս

Հիշատակարանն իր ամբողջության մեջ կկարդացվի. «Յակոբոսն և ընտանիք իւր յիշեսջիք ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս, Մարտիրոս ի Ք[րիստո]ս, Ստեփանոս ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս, և ես Կարապետ գրիչս յիշեսջիք ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս, ամէն»։
(Հրատ. ՀԳՊ—11, ՀԳԳ—262)

* * *

Բանասեր Հ. Տաշյանը իր «Ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 525 ձեռագրի ծածկագիրը։ Ձեռագիրը բովանդակությամբ «Ժամագիրք» է և «Աղոթամատույց»։ Գրիչը հայտնի չէ, սակայն ձեռագրում գրչության ժամանակի վերաբերյալ հիշատակագրություն է՝ արձանագրված 1618 թվականից։ Ծածկագիրը հետևյալն է. «Յիշեա եւ Աստուած զձեզ յիշէ։ Զ. զա. ռոս. եեժ. ժեեժ. մմճճրճ. գճյ. լիժժ. սս. ա. մճճ. ժեե. մմ. գճմճ. սսռ. բբ. ժժ. դճ. ճճճ. ժժ. մճմ. զբ. ա. եեժ. ռսռ. վս. դա. ւ. ա. լի. գգ. խժժի. բբա. զ. գճ. ժեե. ւ. սռս. ա. տռ. տր. ա. մճ. զճ. ռսվռ. դե. ե. նն.»։

Տաշյանն այդ ծածկագիրը չի վերծանել, բայց նշել է, որ «Այս հանելուկին մեջ ըլլալու է ձեռագրիս վերջին մասին գրչի անունը» (Տաշ., էջ 997)։

Ծածկագիրը գաղտնագրված է գումարգիր պարզ բանալիով, որի մեջ սպրդել է երկու աննշան սխալ. երրորդ տողի «զ»-ն «ձ»-ի աղավաղումն է և «արքայութեան» բառի մեջ հապավված է «ա» տառը։ Այս ուղղումներից հետո ծածկագիրը կկարդացվի.

Յիշեա և ԱԾ զձեզ յիշէ զ. զա. ռոս. եեժ. ժեեժ. մմճճրճ. գճյ. լիժժ. սս.
զ է տ ի լ Պ ո ղ տ

ա. մճճ. ժեե. մմ. գճմճ. սսռ. բբ. ժժ. դճ. ճճճ. ժժ. մճմ. զբ. ա. եեժ. ռսռ.
ա ն ի ն ո ր դ ի ն յ ի շ ե ա ի տ

վս. դա. ւ. ա. լի. գգ. խժժի. բբա. զ. գճ. ժեե. ւ. սռս. ա. տռ. տր. ա. մճ.
ր ե ւ ա ծ զ ձ ե զ յ ի ւ ր ա ր ք ա յ

զճ. ռսվռ. դե. ե. [ա]. նն.
ո ւ թ ե [ա] նն

Եվ այսպես, ծածկագիրը վերծանվում է. «Յիշեա և ԱԾ զձեզ յիշէ, զէտիլ՝ Պուղտանին որդին, յիշեա ի տր, եւ ԱԾ զձեզ [յիշէ] յիւր արքայութե[ա]նն»։

Պետք է ենթադրել, որ Պուղտանի որդի Էտիլը Վիեննայի մատենադարա-նի № 525 ձեռագրի երկրորդ մասի գրիչն է, ինչպես, առանց անունը տալու, կռահել է Հ. Տաշյանը։

(Հրատ. ՀԳՊ—212, ՀԳԳ—262)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 10277 ձեռագրում գրի է առնված ծածկագրություն, որը, որքան մեզ հայտնի է, դեռ չի վերծանված։ Ձեռագիրը բովանդակությամբ բժշկարան է. պարունակում է Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտ», «Ուսումն բժշկութեան», «Օգուտ բժըշկութեան», «Ախրաբատին» և բժշկական այլ բնագրեր։ Ձեռագիրն ընդօրինակված է 17—18-րդ դարերում, տարբեր գրիչների կողմից՝ Հակոբ, Մատթեոս, Եղիազար և Սաղաթել։

Ծածկագիրը գրված է 1714 թվականին։ Բերում ենք այն՝ վերծանության հետ միասին.

ԳԲ ԴԵ ԳԴ ԳԳ ԺԺ ԲՌ 33 ԵՌ ԼԵԼԵ 0—0 ԵՌ ՁՌ 0—0 ՄՄ ԲԳ ԲՌ ԲԳ
Ե թ է գ ի ս ո ր հ ա ր ց ա ն ե ս Ե
ԽԵԽԵ 0—0 ԳԳ 0—0 ԵՌ ԳՌ 0—0 ԵՌ ԲԲ 0—0 ՆՆ ԲԳ ԴՌ ՄՄ ԲԳ ՃՃ ԲՌ
ղ ա ղ ա ր վ ա ր դ ա պ ե տ ն ե մ Ս
ԲԳ ԱԱ 0—0 ԲՌ ԴՌ 0—0 ՁՌ ԺԺ ԲԳ ԷՌ 0—0 ՇՇ 0—0 ԹՃ ՄՄ 33 ԵՌ
ե բ ա ս տ ա ց ի ե ւ ա ռ ա ջ ն ո ր
ԲԲ ԲՌ 33 ԷՌ ԵՌ ԱԱ ԼԵԼԵ ԵՌ ԲԳ ԵՃ ԴՌ 0—0 ԼԼ 0—0 ՆՆ ԲԳ ԴՌ 0—0
դ ս ո ւ ր բ Հ ր ե շ տ ա կ ա պ ե տ ա
ՁՌ ԴՌ 0—0 ԾԾ 0—0 ԵՌ ԺԺ ՄՄ ԲԳ ԷՌ ԲԳ ՃՃ ՉՃ 33 ԳՃ ԵԵ ՃՃ ԲԳ ԽԵԽԵ
ց տ ա ճ ա ր ի ն ե ւ ե մ յ ո յ ժ մ ե ղ
0—0 ՆՆ 0—0 ԵՌ ԴՌ ԲԳ ԷՌ 0—0 ՄՄ 0—0 ՇՇ 0—0 ԼԼ ԳՃ ԺԺ ԵՃ ԲԳ ՁՌ
ա պ ա ր տ ե ւ ա ն ա ռ ա կ յ ի շ ե ց
ԳԴ ԹՌ ԺԺ ԹՌ ԵՌ ԺԺ ԲՌ ԴՌ 33 ԲՌ ՃՃ ԺԺ ՄՄ ԼԵԼԵ 33 ԱԲ 33 ՁՌ 0—0
է ք ի ք ր ի ս տ ո ս մ ի ն հ ո գ ո ց ա
ԲՌ ԲԳ ԺԻ 33 ԳՌ ԲԳ ԷՌ ԲԲ 33 ԷՌ ԹՌ ԳՃ ԺԺ ԵՃ ԲԳ 0—0 ԺԻ ԺԻ ԺԺ ՄՄ
ս ե լ ո վ ե ւ դ ո ւ ք յ ի շ ե ա լ լ ի ն
ԺԺ ԹՌ 0—0 ՇՇ 0—0 ԹՃ ԺԺ 0—0 ԼԵԼԵ ԲԳ ԽԵԽԵ 0—0 ԴՌ ԲԳ ՄՄ ԺԺ ՄՄ
ի ք ա ռ ա ջ ի ա հ ե ղ ա տ ե ն ի ն
ԹՌ ԵՌ ԺԺ ՌՌ ԴՌ 33 ՌՌ ԺԺ 0—0 ՃՃ ԳԴ ՄՄ » (ՄԱՄ, ձեռ. № 10277,
ք ր ի ս տ ո ս ի. ա մ է ն
թ. 231)։

Գաղտնագրված է հետևյալը. «Եթէ զիս որ հարցանես՝ Եղազար վարդապետն եմ, Սեբաստացի եւ առաջնորդ սուրբ Հրեշտակապետաց տաճարին, եւ եմ յոյժ մեղապարտ եւ անառակ։ Յիշեցէք ի Քրիստոս մին հոգոց ասելով, եւ դուք յիշեալ լինիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի ամէն»։

* * *

Անթիլիասի № 36 ձեռագրում բերվում է գումարգիր մի ծածկագրություն՝ «Գրափակ է՝ իմաստնոց արարեալ» խորագրով։ Ծածկագրության տակ տըրվում է նրա բանալին և հղում. «Իմաստունն իմանայ և անիմաստն զարմանայ, բայց դու ջանայ ուսիր զսա, զի պիտոյուք պիտոյանա»։ Բերում ենք ծածկագրությունը մեր վերծանությամբ.

ԲԳ . ԴՕԴՕ . ՁՕՕ . ԳԳ . ԺԺ . ԲՌ
Ե թ է գ ի ս
ԼԵԼԵ . 0—0 . ԵՌ . ՁՌ . 0—0 . ՄՄ . ԲՕԲՕ .
հ ա ր ց ա ն ե
ԲՌ . ԻԻ . 0—0 . ՄՄ . ԼԵԼԵ . 0—0 . ՃՃ .
ս խ ա ն հ ա մ
ԲՕԲՕ . ՃՃ . ԲՕԲՕ . ԽԵԽԵ . 0—0 . ԳՃ . ՆՆ . 0—0 . ԵՌ .
ե մ ե ղ ա յ պ ա ր
ԴՌ . ԲՌ . ԳՃ . ԺԺ . ԵՃ . ԲՕԲՕ . ՁՌ . ԳՕԳՕ .
տ ս յ ի շ ե ց է
ԹՌ . ԺԺ . ԹՌ . ԵՌ . ԺԺ . ԲՌ . ԴՌ . 33 . ԲՌ .
ք ի ք ր ի ս տ ո ս

Այն կարդացվում է. «Եթէ զիս հարցանես խանհամե մեղայպարտս յիշեցէք ի Քրիստոս»։ «Հայոց գիր և գրչություն» աշխատության մեջ մենք սխալմամբ վերծանել ենք «խանամս» (էջ 261)։

(Հրատ. ՀԳԳ, 261)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 7709 ձեռագիրը պարունակում է 17-րդ դարի հայ աչքի ընկնող ժամանակագիր Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրությունը», որի վերջին էջերից մեկի վրա հեղինակը թողել է հետևյալ գումարգիր ծածկագրությունը.

Ով եղբայր և զիս յիշեայ զրազմամեղս զ ԻԻ. Ա. ԷՃ. Ա. ՍՍ. 33. ՎԾ. ՎԾ. ՍԾ. ՍԾ. Է. ՍԾ. ՍԾ. Է. ՎՎ. ՍՍ. Է. ՆՌ. ԹՌ. ԺԺ. ԺԵԺԵ. ԺԺ. ՆՆ. 33. ՌՌ. կԹղկս. ԼԼ. ԺԺ. ԵՌ. Ա. ԼԼ. 33. ՌՌ. ՃՃ. Ա. ԵՌ. ԴՌ. ԺԺ. ԵՌ. 33. ՌՌ. ՌՇ. ՌՇ. Ա. ԵՌ. ԲԲ. Ա. ՄՄ. ՄՄ. ԺԺ. ԼԼ. 33. ԽԵԽԵ. 33. ՌՌ. ՌՌ. ԺԺ. ՃՃ. Է. 33. ՄՄ. (ՄԱՄ, ձեռ. № 7709, թ. 238բ)։

Քննասեր ընթերցողի ուշադրությունը ծածկագրության վրա հրավիրելու նպատակով, Կաֆայեցին ծածկագրի սկզբում թողել է հետևյալ հղումը. «Այս է փակագիր, իմաստունն իմանայ, անիմաստն զարմանայ»։

Ծածկագրի բնագիրը, վերծանության հետ միասին, մենք առաջին անգամ հրատարակել ենք «Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրությունը» հոդվածում 1944 թվականին։ Մեզնից յոթ տարի հետո, 1951 թ., այն վերահրատարակել է պատմական գիտությունների դոկտոր Վ. Հակոբյանը «Մանր ժա-

մանակագրությունների» առաջին հատորում (էջ 222)։ Այս ծածկագրին կրկին անդրադարձել ենք «Հայ գրի և գրչության պատմության» մեջ։

Ծածկագրում կան գրչական որոշ սխալներ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

Ա. տառանիշերի մի մասի վրա պատվի նշան է դրված, իսկ մի մասի վրա՝ ոչ։

Բ. Տառանիշերից երեքը («Ա», «Ջ» և «Է») չեն ծածկագրված, այլ թողնըված են իրենց հնչական արժեքով։

Գ. Որոշ տառանիշեր ծածկագրված են չորս տառական միավորի միջոցով։

Դ. Սպրդել են հետևյալ գրչական սխալները. երկրորդ տողում «Ր» տառը երկու անգամ գաղտնագրվել է ՍԾՍԾ ձևով, փոխանակ՝ ՍՇՍՇ և «Ի»-ն՝ ՎԾՎԾ, փոխանակ՝ ՎՇՎՇ։

Նշված սխալները ուղղելով, ծածկագիրը կվերծանվի այսպես.

Ջ ԻԻ . Ա . ԷՃ . Ա . ՍՍ . 33 . ՎՇՎՇ . ՍՇՍՇ . Է . ՍՇՍՇ . Է. ՎՎ։
ղ խ ա չ ա տ ո ւ ր է ր է ց։

ՍՍ . Է . ԵՌ . ԹՌ . ԺԺ . ԺԵԺԵ . ԺԺ . ՆՆ . 33 . ՌՌ . կ[ա]թ[ո]ղ[ի]կ[ո]ս։
Տ է ր Փ ի լ ի պ ո ս

ԼԼ . ԺԺ . ԵՌ . Ա . ԼԼ . 33 . ՌՌ ; ՃՃ . Ա . ԵՌ . ԴՌ . ԺԺ . ԵՌ . 33 .
Կ ի ր ա կ ո ս։ Մ ա ր տ ի ր ո

ՌՌ ; ՌՇՌՇ . Ա . ԵՌ . ԲԲ . Ա . ՄՄ ; ՄՄ . ԺԺ . ԼԼ . 33 . ԽԵԽԵ . 33 . ՌՌ ;
ս։ Վ ա ր դ ա ն։ Ն ի կ ո ղ ո ս։

ՌՌ . ԺԺ . ՃՃ . Է . 33 . ՄՄ ;
Ս ի մ է ո ն։

Ծածկագիրը կարդացվում է. «Ո՛վ եղբայր և զիս յիշեայ զբազմամեղս զխաչատուր էրէց, տէր Փիլիպոս կաթողիկոս, Կիրակոս, Մարտիրոս, Վարդան, Նիկողոս, Սիմէոն»։ Գաղտնագրված առաջին հեղինակը՝ խաչատուր երեցը, ձեռագրի գրիչն է, Փիլիպոս կաթողիկոսը՝ ժամանակակից Փիլիպոս Աղբաձեռագրի գրիչն է, Փիլիպոս կաթողիկոսը՝ ժամանակակից Փիլիպոս Աղբակեցի (1633—1656) կաթողիկոսն է, իսկ մյուսները՝ գրչի մոտիկ անձնավորությունները։

(Հրատ. ՀԳՊ, 210, ՀԳԳ, 262)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 429 16-րդ դարի ձեռագրում հետագայի հիշատակագիրը թողել է հետևյալ գումարգիր ծածկագիրը.

ՃՃ. ԼԺ. ԺԵ. ՋԳ. C.

ՏՌ. ԴՐ. ՃՃ. ԺԺ. ՌՌ.

ԾԺ. ԳՃ. Ճ. ՌՌ. էջմիածնեցի (թ. 2ա)։

Ծածկագրի առաջին տողի երրորդ տառախումբը պիտի լինի ոչ ԹԵ ԺԵ, այլ՝ ԺԺ, նույն տողի լատինական C տառն օգտագործված է ոչ թե կեսի, ինչպես սովորաբար արվում է, այլ՝ մեկ միավորի թվական արժեքով։ Երկրորդ տողի երրորդ տառախումբը՝ ՃՃ, ուղղված է ՐՃ։ Նախավերջին ԳՃ. Ճ-ն պետք է ուղղել ԵՃՃ։ Եվ, վերջապես, ծածկագրից բաց են թողված ՊՌ տառերը։ Այս ուղղումները կատարելուց հետո կարելի է լինում առաջարկել հետևյալ հնարավոր վերծանությունը.

ՃՃ. ԼԺ. ԺԺ. ՋԳ. C ՏՌ. ԴՐ. ՐՃ. ԺԺ. ՌՌ
Մ խ ի թ ա ր ե պ ի ս

ԾԺ. ԵՃՃ. ՌՌ. էջմիածնեցի
կ ո [պո]ս

Կարդացվում է. «Մխիթար եպիսկո[պո]ս էջմիածնեցի»։ Նույնը վերծանել են նաև «Ցուցակ ձեռագրաց»-ի հեղինակները։

* * *

Ա. Սյուրմեյանը «Հալեպի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում հրատարակել է Մաթուսաղա գրչի 1711 թ. Սեբաստիայում ընդօրինակած Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտ» աշխատությունը։ Ձեռագրում Եղիազար Սեբաստացին թողել է ՄԱՄ-ի № 1027-ին նմանվող մի ծածկագրություն, որը մեծ սխալներով հրատարակել է Սյուրմեյանը։ Անհրաժեշտ ենք համարում բերել ծածկագիրը՝ մեր կատարած ուղղումներով և ճշտված վերծանությամբ.

ԲԳ ԷԲ ԳԴ ԳԳ ԺԺ ԲՌ 33 ԵՌ ԼԵԼԵ 00 ԵՌ ՋՌ 00 ՄՄ ԲԳ ԲՌ
ե թ է զ ի ս ո ր հ ա ր ց ա ն ե ս

ԲԳ ԽԵԽԵ ԺԺ 00 ԳԳ 00 ԵՌ ԳՌ 00 ԵՌ ԲԲ 00 ՆՆ ԲԳ ԴՌ
Ե ղ ի ա զ ա ր վ ա ր դ ա պ ե տ

ՄՄ ԲԳ ՃՃ ԲՌ ԲԳ ԱԱ 00 ԲՌ ԴՌ 00 ՋՌ ԺԺ ԲԳ ԷՌ 00 ՇՇ
Ն ե մ ս ե բ ա ս տ ա ց ի ե ւ ա ռ

00 ԹՃ ՄՄ 33 ԵՌ ԲԲ ԲՌ 33 ԷՌ ԵՌ ԱԱ ԼԵԼԵ ԵՌ ԲԳ ԵՃ
ա ջ ն ո ր դ ս ո ւ ր բ Հ ր ե շ

ԴՌ 00 ԼԼ 00 ՆՆ ԲԳ ԴՌ 00 ՋՌ ԴՌ 00 ԾԾ 00 ԵՌ ԺԺ ԴՌ
տ ա կ ա պ ե տ ա ց տ ա ճ ա ր ի տ

ԲԳ ԷՌ ԲԳ ՃՃ ԳՃ 33 ԳՃ ԵԵ ՃՃ ԲԳ ԽԵԽԵ 00 ՆՆ 00 ԵՌ
ե ւ ե մ յ ո յ ժ մ ե ղ ա պ ա ր-

ԴՌ ԲԳ ԷՌ 00 ՄՄ 00 ՇՇ 00 ԼԼ ԳՃ ԺԺ ԵՃ ԲԳ ՋՌ ԳԴ ԹՌ
տ ե ւ ա ն ա ռ ա կ լ ի ? ե ց է ք

ԺԺ ԹՌ ԵՌ ԺԺ ԲՌ ԴՌ 33 ԲՌ ՃՃ ԺԺ ՄՄ ԼԷԼԷ 33 ԱԲ 33
ի ք ր ի ս տ ո ս մ ի ն հ ո գ ո

ՋՌ 00 ԲՌ ԲԳ ԺԻ 33 ԳՌ ԲԳ ԷՌ ԲԲ 33 ԷՌ ԹՌ ԳՃ ԺԺ ԵՃ
ց ա ս ե լ ո վ ե ւ դ ո ւ ք յ ի շ

ԲԳ 00 ԺԻ ԺԻ ԺԺ ԹՃ ԺԺ ԹՌ 00 ՇՇ 00 ԹՃ ԺԺ 00 ԼԵԼԵ ԲԳ
ե ա լ լ ի ջ ի ք ա ռ ա ջ ի ա հ ե

ԽԵԽԵ 00 ԴՌ ԲԳ ՄՄ ԺԺ ՄՄ ԹՌ ԵՌ ԺԺ ԲՌ ԴՌ 33 ԲՌ

ղ ա տ ե ն ի ն ք ր ի ս տ ո ս

ԺԺ 00 ՃՃ ԳԳ ՄՄ։

ի ա մ է ն (Հալեպ, II, էջ 43)

Այսպիսով, Եղիազար Սեբաստացու գումարգիր ծածկագիրը վերծանվում է. «Երէ զիս որ հարցանես Եղիազար վարդապետն եմ Սեբաստացի եւ առաջնորդ սուրբ Հրեշտակապետաց տաճարիս: Եւ եմ յոյժ մեղապարտ և անառակ: Յիշեցէք ի Քրիստոս մին հոգոց ասելով եւ դուք յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի, ամէն»:

* * *

Հալեպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցու մատենադարանի № 63 ձեռագրում, որը գրված է 1691 թվականից առաջ, Սարգիս դրչի կողմից, հետագայում երկու անձնավորություն գրել են հիշատակագրություններ՝ գաղտնագրելով իրենց անունները. «Գրեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան սուտանուն բանի միայն սիրիս. ՆՆ. ԲԳ. ՍՍ. ՎՍ. 33. ՌՌ անուն կոչեցեալ ի թվ[ի]ն ՌՃԾԴ (=1705) ի յելն դեկտեմբերիս և ի մուտն յունվարիս» (թ. 700բ)։

Նույն էջում. «Ո՛վ եղբարք իմ նազելի, արժան առնէք զիս յիշել ի Ա. ՄՄ. ՍՍ. 33. ՄՄ նուաստ ոգի և լոկ անուամբ վ[ա]րդապ[ետ]ի»։

Հրատարակել է Ա. Սյուրմեյանը և առաջին գումարգիր ծածկագիրը վերծանել «Պետրոս», իսկ երկրորդը՝ «Անտոն» (Հալեպ, I, էջ 132)։

* * *

Ղ. Ալիշանը «Կամենից» աշխատության մեջ հրատարակել է Սարգիս դրչի 1616 թ. Լվովում ընդօրինակած հետևյալ հիշատակարանը՝ գումարգիր ծածկագրով. «Ի թվին ՌԿԶ (1616) գրեցի այս ի խուցն աղայներուն ի քաղաքն Իլով, հոկտեմբերի Լ (30), սուտանուն ԲՌ . 1 . ԵՌ . ԱԲ . խս . Ղ Գ Ո Ր Ջ» (էջ 173)։ Հիշատակարանը վերահրատարակել են Վ. Թորգոմյանը և Վ. Հակոբյանը։

Ծածկագրության առաջին մասը վերծանել է Ալիշանը՝ «Ս Ա Ր Գ ԻՍ», իսկ երկրորդ մասը թողել հարցականով։ Հնարավոր ենք համարում «Ղ Գ Ո Ր Ջ»-ի, առանց գ-ի, աջից ձախ հետևյալ վերծանությունը. «ձ ր ո ղ»։ Ուրեմն, անվան հետ կկարդացվի «Սարգիս ձրող»:

* * *

1727 թ. աշնանը, երբ Ղարաբաղի հայ զինվորականությունը կենաց ու մահու կռիվ էր մղում Անդրկովկաս խուժած թուրքական խոշոր բանակի դեմ և արգելում նրա մուտքը ադնախներ, ճակատագրական այդ ծանր օրերին Գյուլիստանի Աբրահամ յուզբաշին մի նամակ է ուղարկում Բաքու, ռուսական

բանակում թարգմանի պաշտոնով աշխատող Պողոս յուզբաշուն՝ ցանկանալով իմանալ, թե Կասպից ծովի ափերում հաստատված ռուսական զորքերը Ղարաբաղի հայությանը զինական օգնություն ցույց տալո՞ւ են, թե՝ ոչ։ Նամակագիրը խնդրել է այդ մասին հավաստի տեղեկություն հաղորդել իրեն[11]։ Ահա այդ նամակում, զգուշության համար, հեղինակը հասցեն և ստորագրությունը գաղտնագրել է գումարգիր ծածկագրությամբ։ Այդ ծածկագիրը հրատարակել ենք «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության մեջ և վերծանել[12]։

Ծածկագրված հասցեն հետևյալն է.

ՋՃ ԷՌ ԳԳ ՆՆ [0—0] ԵՃ Ի Է ՐՃ ՋՃ ԽԵԽԵ ՋՃ ԲՌ-ին

Ստորագրությունը ծածկագրված է այսպես.

0—0 ԱԱ ԵՌ 0—0 ԼԵԼԵ 0—0 ՃՃ ՋՃ ԷՌ ԳԳ ՐՃ 0—0 ԵՃ ԺԺ ԲԱ ՋՃ ԷՌ ԺԵԺԵ ԲՌ ԴՌ 0—0 ԴՃ ԳԳ ՋՌ ԺԺ։

Աբրահամ յուզբաշին, ինչպես երևում է, կասկածել է, որ Պողոս յուզբաշին կարող է տեղյակ չլինել ծածկագրության վերծանության գաղտնիքին, ուստի խորհուրդ է տվել նրան. «Համարով վաղ վաղ գտանես», այսինքն՝ տառերի թվական արժեքները նկատի ունենալով, դյուրին կարող ես վերծանել։

Ծածկագիր-հասցեն վերծանվում է.

ՋՃ ԷՌ ԳԳ ՆՆ [0—0] ԵՃ Ի Է ՐՃ ՋՃ ԽԵԽԵ ՋՃ ԲՌ-ԻՆ

Ո ւ զ պ [ա] շ ի է Պ ո ղ ո ս ին

Ծածկագիր-ստորագրությունը վերծանվում է.

0—0 ԱԱ ԵՌ 0—0 ԼԵԼԵ 0—0 ՃՃ ՋՃ ԷՌ ԳԳ ՐՃ 0—0 ԵՃ ԺԺ

Ա ր ր ա հ ա մ ո ւ զ պ ա շ ի

ԲԱ ՋՃ ԷՌ ԺԵԺԵ ԲՌ ԴՌ 0—0 ԴՃ ԴԳ ՋՌ ԺԺ։

Գ ո ւ լ ս տ ա ն ե ց ի

կարդացվում է. «Աբրահամ ուզպաշի Գուլստանեցի»:

(Հրատ. ՀԳՊ—211, ՀԳԳ—263)։

3. ԵՂԲԱՅՐԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրության այս տեսակը եղբայրագիր է կոչվում այն պատճառով, որ այբուբենի մի տառանիշը փոխարինում է հարևան մյուս տառանիշին. օրինակ՝ ա-ն փոխարինում է բ-ին, բ-ն՝ գ-ին, գ-ն՝ դ-ին և այսպես՝ մյուս տառանիշերը։ Այբուբենի վերջին տառը՝ f-ն, փոխարինում է ա-ին։

Եղբայրագրի բանալին.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ

Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ

[11] ГАФКЭ, ф. СРА 1739, № 2, էջ 32։

[12] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 223։

Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ

Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ

Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք
Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք ԵՒ

Եղբայրագիր ծածկագրության հնագույն օրինակ հանդիպում է Արծվանիկի վիմագիր արձանագրության մեջ։ Այդ մասին խոսք կլինի տվյալ արձանագրության մասին խոսելիս։

* * *

Ըստ հնության հաջորդ եղբայրագիրը Նոր Ջուղայի մատենադարանի № 162 ձեռագրում XIII դարում գրի առնված գաղտնագիրն է։

Տվյալ ձեռագրի ստացողն է եղել Հակոբոսը, իսկ գրիչը՝ Հովհաննեսը։ Վերջինս իր անունը գաղտնագրել է ձեռագրի էջ 129ա-ի ներքևի մասում։ Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ.

Ն, Ո, Ս, Բ, Յ, Ը, Վ
Յ ո վ ա ն է ս

Ծածկագիրը հրատարակված է Նոր Ջուղայի «Ձեռագրաց ցուցակում» և վերծանված (ՆՋ, I, էջ 215)։

* * *

Եղբայրագիր ծածկագրության հնագույն նմուշներից է Մաշտոցի անվան մատենադարանի № 6273 ձեռագրում գրի առնված ծածկագիրը 1313 թվականից։ Ծածկագիրը ձեռագրից ընդօրինակել է բանասեր Փիրղալեմյանը և զետեղել իր «Յիշատակարանների» ժողովածուի մեջ։ Ծածկագրված է միայն մի բառ. «Ճ. Ծ. Լ. Ժ. Բ. Տ. Բ. Ն»։ Փիրղալեմյանը ծածկագիրը չի վերծանել և թողել է հետևյալ տողատակի ծանոթագրությունը. «Պատուագրեալ անունս մնայ յինէն անբացատրելի»։

Այս ձեռագրի հիշատակարանը, ծանոթագրության հետ միասին, հրատարակել է Լ. Խաչիկյանը և վերծանել։ Նա նշել է տվյալ ձեռագրի պարունակած եղբայրագրի հետևյալ առանձնահատկությունները. «Մ և Տ տառանիշերի փոխարեն օգտագործված են նախորդ Ճ և Տ տառանիշերը, իսկ, ընդհակառակը, մյուսների փոխարեն՝ հաջորդ տառանիշերը, այսպես՝ Խ-ի փոխարեն Ծ, Ի—Լ, Թ—Ժ, Ա—Բ, Յ—Ն» (Հիշ. ԺԴ, էջ 93)։ Ծածկագիրը վերծանվում է.

Ճ. Ծ. Լ. Ժ. Բ. Տ. Բ. Ն.
Մ խ ի թ ա ր ա յ
(Հրատ. ՀԳԳ, 258)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 295 ձեռագիրն ընդօրինակող Մարկոս գրիչը 1381 թ. գրած մանր հիշատակագրություններից մեկում թողել է երկու տող եղբայրագիր ծածկագրություն, որը վերծանել է Պողարյանը իր «Ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում (Եղմ., II, էջ 125)։ Ծածկագրությունը հետևյալն է.

Ձ Չ Յ Հ Բ Վ Դ Ի Ծ Շ Ն Ճ Ջ Հ Յ Լ Պ Ժ
Ջ Ն Շ Ս Բ Յ Ը Ս Բ Դ Ջ Ձ Ը Յ։

Գաղտնագրում նկատվում է գրչական մի սխալ. երկրորդ տողի ութերորդ տառանիշը՝ «Ս»-ն, պետք է լինի «Վ»։

Ծածկագրությունը վերծանվում է.

Ձ Չ Յ Հ Բ Վ Դ Ի Ծ Շ Ն Ճ Ջ Հ Յ Լ Պ Ժ
Ղ ո ւ կ ա ս գ լ խ ո յ մ ե կ ն ի չ ն
Ջ Ն Շ Ս Բ Յ Ը Վ Բ Դ Ջ Ձ Ը Յ
է Յ ո վ ա ն է ս ա բ ե ղ է ն

Կարդացվում է. «Ղուկաս գլխոյ մեկնիչն է Յովանէս աբեղէն»։

Գլխավոր հիշատակարանից երևում է, որ ձեռագրի պատվիրատուն է եղել Հովհաննես աբեղան, նա էլ, ինչպես երևում է ծածկագիր հիշատակագրությունից, հանդիսացել է Ղուկասի ավետարանի մեկնիչը։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4922 ձեռագրում, որը գրված է 1447 թ. Մոկսի Փոսավանք գյուղում Իսրայել գրչի կողմից, գրչագրի պատվիրատու երեք եղբայրներ գաղտնագրել են իրենց անունը։ Ծածկագիրն ուշագրավ է նաև նրանով, որ այնտեղ ծածկագրության հետ միասին գործ է ածվել «ավետարան» բառի գաղափարագիրը՝ երկարացած քառակուսու ձևով։

Թերթ 359բ-ի վերջում զետեղված ծածկագիրը հետևյալն է.

□ Գ (=երեք) եղբարցն Դ Տ Լ Դ Շ Տ Ժ Շ Ճ Բ Ն Լ Յ Ը Ձ Բ Ե Բ Տ Լ։

Թերթ 326բ-ի ներքին լուսանցքում ծածկագրված է.

□ Ժ Շ Ճ Բ Ն Լ Յ Ը։

Ծածկագիրը հրատարակել է Լ. Խաչիկյանը և վերծանել (Հիշ. ԺԵ, I, էջ 610)։

Առաջին ծածկագիրը վերծանվում է.

□ Գ եղբարցն Դ Տ Լ Դ Շ Տ Ժ Շ Ճ Բ Ն Լ Յ Ը Ձ Բ Ե Բ Տ Լ
Աւետարանս երեք եղբարցն Գ ր ի գ ո ր, Թ ո մ ա յ ի ն է, Ղ ա զ ա ր ի։

Երկրորդ ծածկագիրը վերծանվում է.

□ Ժ Շ Ճ Բ Ն Լ Յ Ը
Աւետարանս Թ ո մ ա յ ի ն է։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 8587 ձեռագրում (թ. 223բ)՝ ընդօրինակված 1373 թ. Գեորգ գրչի կողմից, գրի է առնված եղբայրագիր մի ծածկագիր, որը հիշատակարանի հետ միասին հրատարակել է Հ. Աճառյանը Սանասարյան վարժարանի «Ձեռագրաց ցուցակում», իսկ հետագայում այն վերահրատարակել է Լ. Խաչիկյանը «ԺԴ դարի հիշատակարանների» մեջ (Հիշ. ԺԴ, էջ 512)։

Ծածկագիրը հետևյալն է. «Բ. Լ. Յ. Ֆ. Վ. Ը. Ն. Բ. Հ. Չ. Գ. Լ. Շ. Դ. Յ. Ջ. Բ. Խ. Ղ. Ջ. Ս. Բ. Յ. Գ. Վ. Բ. Ն. Դ. Ը. Չ. Յ. Դ. Լ. Շ., որք կարդայիք յիշեցէք Յ. Վ. Ե. Կ. Ջ. Բ. Կ. Ե. Մ. Խ. և դուք յիշեալ լիջիք ի Ք[րիստո]ս»։

Աճառյանին չի հաջողվել վերծանել ծածկագիրը, իսկ Խաչիկյանը վերծանել է միայն երկրորդ մասը՝ տալով հետևյալ տողատակ ծանոթագրությունը. «...«յիշեցէք»-ից հետո փոխարինագիր պարզ ծածկագրով կարդացվում է «զգրող սորին», իսկ առաջին մասը մեզ չհաջողվեց վերծանել (Հիշ. ԺԴ, էջ 512)։

Պարզվեց, որ տվյալ ծածկագիրը գաղտնագրված է ոչ թե փոխարինագրով, այլ՝ եղբայրագրով, որի մեջ գրչական որոշ ուղղումներ կատարելուց հետո, կարելի է լինում առաջարկել հետևյալ վերծանությունը.

Բ. Լ. Յ. Ֆ. Վ. Ը. Ն. Բ. Հ. Չ. Գ. Լ. Շ. Դ. Յ. Ջ. Բ. Խ. Ղ. Ջ.
Գ ի ր ք ս է Յ ա կ ո ր ի Ն գ ր ե ա լ ձ ե

Ս. Բ. Յ. Գ. Վ. Բ. Ն. Դ. Ը. Չ. Յ. Դ. Լ. Շ.
ռ ա մ բ ս ա յ Գ է ո ր գ ի Ն

Յ. Վ. Ե. Կ. Ջ. Բ. Կ. Ե. Մ. Խ.
զ գ ր ո ղ ս ո ր ի Ն

Հիշատակարանն ամբողջության մեջ կկարդացվի. «Գիրքս է Յակոբին, գրեալ ձեռամբ սայ Գէորգին, որք կարդայք, յիշեցէք զգրող սորին, և դուք յիշեալ լիջիք ի Ք[րիստո]ս»։

Ծածկագրության վերծանությունից պարզվում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 8587 ձեռագրի գրիչն է հանդիսացել Գեորգը, իսկ պատվիրատուն՝ Հակոբը, որը հիշատակվում է նաև տվյալ ձեռագրի չափածո հիշատակարանում։

(Հրատ. ՀԳՊ, 208, ՀԳԳ, 259, ՊԲՀ, № 1, էջ 188)։

* * *

Եղբայրագիր ծածկագրության հին և ընտիր մի օրինակ է հանդիպում Մաշտոցի անվան մատենադարանի № 4817 ձեռագրում, որն ընդօրինակված է 14-րդ դարի քսան-երեսնական թվականներին «Ի յաշխարհակալութեանս Բուսայիդ ղանին (1318—1325), ի հայրապետութեանն Զաքարիայի (1296—1336)»։ (Խոսքը Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Սեֆեդինյանի մասին է)։ Ձեռագրի գրիչն է Հովհաննես «Մեղապարտը», իսկ գրչության վայրը՝ Վասպուրականի Ոստնկաց անապատը։ Ձեռագիրը, ընդօրինակությունից շատ

ժամանակ չանցած, «գերի» է տարվել և վաճառքի հանվել Ոստան քաղաքում, իսկ հետո դերձակ Խունդու բեկը գնել ու վերադարձրել է տիրոջը՝ թողնելով հետևյալ հիշատակագրությունը. «Ի Ոստան քաղաք գնեցի ի քրդու... բայց յետոյ տէրն եկ և գտաւ առ յիս և իմ յաւժար սրտիւ ի տէրն տուի»։

Ձեռագրի 122ա թերթում գրիչը թողել է հետևյալ եղբայրագիր ծածկագրությունը.



Ծածկագրող գրիչը, ցանկանալով ընթերցողի մոտ հետաքրքրություն առաջացնել՝ ծածկագրի տակ թողել է հետևյալ տողը. «Իմաստուն ումն ես՝ եթէ կարդաս»։

Ծածկագրության մեջ նկատվում է մի տառի սխալ. առաջին տողի երրորդ տառը պետք է լինի Շ կամ Չ։ Այդ սխալը հաշվի առնելով, ծածկագիրը կվերծանվի այսպես.

Ե Ն Վ Ս Բ Յ Ը Վ
Ջ Յ ո վ ա ն է ս

Ա Ծ Ժ Բ Ճ Բ Տ Ի Լ
Ա խ թ ա մ ա ր ց ի

Դ Խ Շ Չ Ն Լ Ո. Ը
գ ծ ո ղ ւ ի շ է

Այսպիսով, ծածկագրված հիշատակարանի վերծանությունից պարզվում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 4817 ձեռագրի գրիչը Հովհաննես Աղթամարցին է։ (Հրատ. ՀԳԳ, 260, ՊԲՀ, 1965, № 4)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6644 ձեռագրի գրիչը՝ Եղիշե Արցախեցին[13], 1527 թ. ընդօրինակած իր ձեռագրի մեջ թողել է մի եղբայրագիր ծածկագիր։

---

[13] Եղիշե Արցախեցու այս և մյուս բոլոր ծածկագրերը գրված են Մատենադարանի № 6644 ձեռագրում։



Բերում ենք ծածկագրի բնագիրը՝ վերծանության հետ.

ՐՅ. ԲԿ. ՉՃ. ՁՅ. ՅՁ. ԲՆ. և ՉԿ. ԲՍ. ԲՆ. ԼՌ.
Տր Ած ող որ մե այ և զծ առ այ խս

ՎՁ. ՓՐ. ԲՇ. ՉՓՇ. ՀՅ. ԲՓՇ. ԲՓ. ՁՅ. Լ. ՉՃ.
սո ւտ ան ուն կր ան աւ որ ի Եղ

ԼՈ. ԲՆ. ԲԳ. ՉՃ. ԲՆ. Լ. Լ. ՉՅՀՅ. ՐՇ. ԲՅԻ
իշ այ աբ եղ այ ի ի երկր էն Արց-

ԲԾ. ՉՓ. ՁՅ. ՀՁՊԼ.
ախ ու, որ կոչի

ԾԲՊ. ՐՇ (թ. 154բ)։
խաչ էն

Վերծանությունը կարդացվում է. «Տ[է]ր ա[ստուա]ծ ողորմեայ և զծառայիս սուտանուն կրաւնաւորի Եղիշայ աբեղայի՝ ի երկրէն Արցախու, որ կոչի խաչէն»։

(Հրատ. ՀԳՊ, 208, ՀԳԳ, 258, ՊԲՀ, 1958, № 1, էջ 187)։

* * *

Ջմմառի մատենադարանի № 2-ի տակ գրանցված է Ավետիս քահանայի պատվերով Վահան քահանայի և Գրիգոր վարդապետի 1634 թ. ընդօրինակած ձեռագիրը ծածկագիր հիշատակարանով, որը հրատարակել է բանասեր Մ. Քեշիշյանը, բայց դժվարացել է վերծանել (Քեշ., 17)։

Ծածկագիր հիշատակարանը հետևյալն է. «Որ ես ՌԺՃ ՉՅՇ ՔԱՂ ՁՔ ՄԵՌ գրեցի զայս գիրս վասն իմանալոյ զորքանութիւն շրջանացն տոմարաց Հայոց եւ այնու իմանալ եւ ճանաչել զթուականս Հայկազեան սեռիցն, կըրկնակի շրջանաւ եւ միով ոբելենաւ հընգեակ նոնոսիւ» (թ. 856բ)։

Առաջին տողի ծածկագիրը գաղտնագրված է եղբայրագրով։ Նրա մեջ սպրդել է գրչական երկու սխալ. իններորդ տառը պիտի լինի ոչ թե «Ղ», այլ «Ջ» և նախավերջին «Ե» տառը պետք է լինի «Է»։ Այդ ուղղումները կատարելուց հետո այն կվերծանվի.

Ռ Ժ Ճ Ջ Շ Յ   Ք Ա Ջ Ջ Ք Մ Է Ռ
Ս ի մ է ո ն   ա ր ե ղ ա յ ը ս

Ձեռագրի գրչության տարեթիվը գաղտնագրելու համար վերցված է երկու շրջանակ, այսինքն՝ երկու ՇԼԲ (=532), որը հավասար կլինի 1064-ի։ Ստացված թվին պահանջվում է գումարել մեկ հոբելյան և հինգ նոնոս։ Հոբելյանը 50-է, իսկ նոնոսը՝ 5. հինգ նոնոսը հավասար կլինի 25-ի։ 1064-ին գումարելով 50 և 25 ու հայկական թվականի տարբերությունը՝ կունենանք 1690 թվականը (1064+50+25+551=1690)։

Ծածկագրի վերծանությունից պարզվում է, որ ծածկագրող հեղինակը Սիմեոն աբեղան է, որն իր ծածկագրությունը գրի է առել 1690 թ., այսինքն՝ ձեռագիրը գրվելուց վեց տարի անց։

(Հրատ. ՀԳՊ, էջ 229)։

* * *

Հալեպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցու մատենադարանի № 62 ձեռագրում, որը Սաղմոսարան է, գրված 1659 թ. Խաչատուր երեցի կողմից Կ. Պոլսում, պատվիրատուն թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Արդ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Յ. Բ. Ր. Ժ. Ը. Ջ. Վ. Ս. Օ. Տ. Գ. Օ. Ջ. Դ. Վ. Յ.» (էջ 51)։

Ծածկագիրը հրատարակել է Ս. Սյուրմեյանը և եղբայրագիր բանալիով վերծանել (Հալպ., էջ 130)։ Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին.

Յ Բ Ր Ժ Ը Ջ Վ   Ս Օ Տ Գ Օ Ջ Դ Վ Յ
Մ ա տ թ է ո ս   վ ա ր դ ա պ ե տ ն։

* * *

Խաչիկյանը 15-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների երրորդ հատորում հրատարակել է Մաշտոցի անվան մատենադարանի № 6333 ձեռագրի (թ. 374) պարունակած մի ծածկագրություն և թողել այն առանց վերծանության (Հիշ. ԺԵ, III, էջ 435)։

Ծածկագրությունը հետևյալն է. «Զմեղաւոր ՅՔ ՅՐ Յ ՉՎ յիշեցէք ի Քրիստոս Աստուած մեր և ձեզ լիցի մասն։ Գր[եցաւ] ՋԹ (=1460)»։

Ծածկագրությունը գաղտնագրված է եղբայրագիր բանալիով և վերծանվում է.

Յ. Ք. Յ. Ր.   Յ. Ջ. Վ։
Մ ա ր ա[ի]   ր ո ս

Հիշատակարանն ամբողջության մեջ կկարդացվի. «Զմեղաւոր Մարա[ի]-րոս յիշեցէք ի Քրիստոս, Աստուած մեր և ձեզ լիցի մասն»։

* * *

Ե. Լալայանը «Վասպուրականի ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Լիմ անապատի № 11 ձեռագրի նկարագրությունը, որն ունի հետևյալ ծածկագիր հիշատակագրությունը. «Ես անգէտ տէր Հ Բ Հ Շ Ռ Ը Ս գրեցի թիվն ՌՃԺ (=1661)»: Հրատարակիչը ՌՃԺ թվականի միավոր թվանշանի տեղում հարցական է դրել, հավանական է, այն համարել է եղծված, իսկ ծածկագրությունը թողել է չվերծանված (Լալ., էջ 929):

Պարզվում է, որ ծածկագիրը գաղտնագրված է եղբայրագիր բանալիով, իսկ բառի վերջին երկու ը և ս տառերը թողնվել են իրենց սովորական հնչական արժեքով: Կարծում ենք նաև, որ ծածկագրության առաջին տառից հետո դուրս են մնացել լ և ց տառերը, որոնք լրացնելու դեպքում կարելի է առաջարկել հետևյալ հնարավոր վերծանությունը.

Հ [Լ Յ] Բ Հ Շ Ռ Ը Ս
Կ ի ր ա կ ո " ը "

Մեր առաջարկած երկու «Լ» և «Յ» լրացնող տառերը չընդունելու դեպքում, կարելի է թողնել «Կակոսըս» ձևով, որը դարձյալ Կիրակոս անվան կըրճատ ձևն է:

* * *

Հ. Աճառյանը «Թավրիզի ձեռագրաց ցուցակում» (էջ 112) հրատարակել է Թավրիզին մոտիկ գտնվող Սեոհլյուր գյուղի հայկական եկեղեցու «Ճաշոց» ձեռագրի նկարագրությունը, որից երևում է, որ այն ընդօրինակված է Կարապետ աբեղայի կողմից 1421 թվականին: Ձեռագրի մեջ ուշ դարերում գրի են առնվել մի քանի հիշատակագրություններ: Նրանցից մեկը պարունակում է Կիրակոսի կողմից հոբելյանով ծածկագրված թվական: Հիշատակագրությունը բերում ենք կրճատումով.

Հայոց ազգիս թըվականի.
Քսան եւ երկու յոբելենի:
Ութիւք հընգիւք քառ աւելի.
Ի փառս անուն տեառն Յիսուսի,
Նորոգեցաւ գիրքս կրկին,
Ձեռամբ Գալուստ վարդապետին...
Գրեցաւ Նամսեանն մայիսի
Ի յաւուր տասներեքի:
Ձեռամբ տրուպ Հ Լ Տ Բ Հ Շ Վ Լ.
Եւ եթ անուն աբեղայի:

Աճառյանը եղբայրագրով վերծանել է գաղտնագրողի «Կիրակոս» անունը, իսկ ծածկագրության թվականը թողել անորոշ, հավանական է, կարծելով, թե այն կրկնողություն է երկու տող առջև հիշված ՌՃԾԶ (=1707) թվականի, իսկ իրականում կապ չունի նրա հետ:

Քսան և երկու հոբելյանը հավասար է 1100-ի (22×50=1100): Նրան գումարում ենք «թիւք հընգիւք քառ աւելին», այսինքն՝ 5×4=20: 1100-ին

գումարելով քսան և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1695 թվականը:

Հիշատակագրությունն, ինչպես տեսնում ենք, ոչ թե 1421 թվականից է, այլ 1671 թվականից:

(Հրատ. ՀԳՊ, 208, ՀԳԳ, 359):

* * *

Նոր Ջուղայի մատենադարանի № 56 ձեռագիր ավետարանն ընդօրինակված է Ուշտունիքի Բերդաձոր կոչվող վայրում Մարգար գրչի կողմից 1456 թ.: Այդ ձեռագրում հետագայի հիշատակագիրներից մեկը թ. 3ա-ում թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Ներ թուոջ ՌՃԿԴ.Ն (=1715) ամսեան յունվարի մուտն վասն անօրէնութեան մերոյ մահտարաժամ և սով սաստիկ տիրեաց երկրիս Պարսկաստան: Բ՛. Յ՛. Ջ՛. Ր՛. Լ՛. Վ՛. յիշեա»: Ծածկագրությունն ուշագրավ է նրանով, որ գաղտնագրված տառանիշերի վրա դրված են շեշտեր:

Ծածկագիրը հրատարակված է Նոր Ջուղայի ձեռագրերի ցուցակի առաջին հատորում և վերծանված եղբայրագիր բանալիով (ՆՋ, I, էջ 88):

Բ Յ Ջ Ր Լ Վ
Ա ւ ե տ ի ս

* * *

Նոր Ջուղայի № 249 ձեռագրի գրիչը 1658 թ. ընդօրինակել է «Յայսմաւուրքը» և իր անունը գաղտնագրել իր թողած հիշատակարանում. «Տէր Դ. Բ. Վ. Ջ. Բ. Յ գրիչս յիշեա ի Տէր» (թ. 378ա):

Հիշատակարանը հրատարակված է Նոր Ջուղայի ձեռագրերի ցուցակում և վերծանված (ՆՋ, I, էջ 403):

Դ Բ Վ Ջ Բ Յ
Գ ա ս պ ա ր

* * *

Բ. Կյուլեսերյանի կազմած Անկյուրիայի ցուցակում հրատարակված է № 265 ձեռագրի փոքրիկ մի հիշատակագրությունը, որի առջևից կցված է երեք բառից բաղկացած մի ծածկագրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «ԴՅՂԻԲՓ: ՂՋՍԲՅԳ: ԲԳՅԲՋԲՅԼՇ: Թվին ՌՃԿԷ, օգոստոս ամսոյն ԻԹ (1718 թ.) օգոստ. (29), օրն ուրբաթ, իրիկունն երեք ժամուն, խաւարեցաւ լուսին ի մէջ ձկան կենդակերպին, և էր գլուխ վիշապին ընբռնումն» (Անկ., սյուն. 1174):

Կյուլեսերյանը դժվարացել է վերծանել ծածկագիրը և նրա հեղինակի անվան առջև հարցական է դրել:

Ծածկագիրը գաղտնագրված է եղբայրագիր բանալիով և վերծանվում է: Ստորև բերում ենք ծածկագրությունը՝ վերծանությամբ.

Դ Յ Ջ Ի Բ Փ: Ղ Ջ Ս Բ Յ Գ: Բ Գ Յ Բ Կ Բ Յ Լ Շ:
Գ ր ե ց ա ւ ձ ե ռ ա մ բ Ա բ ր ա հ ա մ ի ն

Վերծանությունը կարդացվում է. «Գրեցաւ ձեռամբ Աբրահամին»։ Աբրահամը, ինչպես պարզվում է, ձեռագիր գրող գրիչներից մեկն է, որը հիշված է վերոբերյալ հիշատակարանի մեջ։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագիրը բովանդակությամբ «Յայսմաւուրք» է (Տերենցի խմբագրությամբ)։ Ընդօրինակված է 1681 թ. Գրիգոր Վարագեցի և Նազար գրիչների կողմից։ Ձեռագրի ծաղկանկարողներն են Սահակ վարպետը և Սարգիս խալիֆան։ Պատվիրատուն է եղել Սարխոշ անունով մեկը։ Գրիչներից Գրիգոր Վարագեցին ձեռագրի էջերի տողերի տակ, ըստ իր նախասիրության, գրի է առել հանելուկներ և նրանց լուծումները գրել եղբայրագիր, գավազանագիր, արաբատառ, օղակետագիր, փոխարինագիր և գումարգիր բանալիներով։ Գուցե դժվար լիներ որոշել, թե տողատակ գրառումների հեղինակը իրապես Գրիգորն է, եթե չլիներ 284ա թերթում նրա փոքրիկ գրառումը. գրիչը սխալ է թույլ տվել, և ինքն իրեն անիծելով, գրել է «Ձեռքդ կոտրի, Գրիգո՛ր»։ Բերում ենք ծածկագրերը վերծանության հետ միասին։

Թ. 202բ

Վ Ձ Տ Բ Տ Ժ Բ Ճ Տ

Եղբայրագրով վերծանվում է.

Վ Ձ Տ Բ Տ Ժ Բ Ճ Տ
Տ է ր Գ ր ի գ ո ր

* * *

Թ. 256ա

Էր գրագիր աղւոր նոտար,
Որ ապրեցաւ շատ մի երկար,
Հանց որ տեսաւ զմանուկն արդար,
Վաղեաց ւ գիրկն առեալ խաղայր։ ՎԼԾԸՃՈ։

Եղբայրագրով վերծանվում է.

Վ Լ Ծ Ը Ճ Ո
Ս ի մ է ո ն

Խոսքը Սիմեոն ծերունու մասին է։

Տվյալ ծածկագրության հաջորդ էջի վրա (թ. 257բ) հիշատակություն է արձանագրված արեգակի խավարման մասին. «Ի ՌՃԳ (=1654) թվին յօգոստոսի ամսոյ Բ (=2) յաւուր Դ.շի (=չորեքշաբթի) ի կէս աւուրն արեգակն խաւարեցաւ և աստեղք յերկնից երեւեցան որպէս ի գիշերի»։ Օպպոլցերի աստղագիտական աղյուսակներով լիովին ստուգվում է տեղեկության ճշտությունը։

Թ. 281բ

Ի զօտեմարտն ի ճակատուն,
Յաղթահարեալ եղև նըկուն,

Նըեալ երթայր կաղ կաղ ի տուն.
Ոխչար, արջառ իւր խայտպտուն։ ՆԲՀՃԱ։

Ծածկագիրը եղբայրագրով վերծանվում է.

Ն Բ Հ Ճ Ա
Յ ա կ ո բ

* * *

Թ. 279բ էջում ուշ գրչությամբ եղբայրագիր երկու անվան ծածկագիր կա, բերում ենք վերծանության հետ.

Մ Ճ Ս Բ Ծ Ժ Ճ Բ Դ Ճ Տ Բ
Յ ո վ ա կ ի մ Գ և ո ր գ

* * *

Թ. 280ա

Հանցեղ զինչ գառն էր անմեղուկ,
Կայր սպանօղին յարջև հեզուկ,
Որդիս ունէր Բ (=երկու) մանուկ,
Մինն էր յիմար, միւսն խաբուկ։ ՎԲԿԲՀ ՆՁՏԲՀԼՅ։

Եղբայրագրով վերծանվում է.

Վ Բ Կ Բ Հ Ն Ձ Տ Բ Հ Լ Յ
Ս ա հ ա կ Յ ո վ ա կ ի մ

* * *

Թ. 280բ

Կայր թագաւոր աղքատիկ,
Ի էր քահանայ խիստ սըպրկիկ (մաքուր—Ա. Ա.),
Ծընօղ չունէր ոչ մի ոքիկ,
Կայր ի լերինն մերկ և բոբիկ։ ՃՁԻՓԼՎՁԳՁՀ։

Եղբայրագրով վերծանվում է.

Ճ Ձ Ի Փ Լ Վ Ձ Գ Ձ Հ
Մ ե լ ք ի ս ե դ է կ

* * *

Թ. 283բ

Սուլթան մի կայր ի յԵգիպտոս,
Շատ չարագործ քան զԱրիոս,
Առ նա դեսպան յղեաց Քրիստոս,
Մեծ սքանչելեօք մարդկան հըրոս (ապատող—Ա.Ա.), ՔԲՏԲՅՃՅ։

Եղբայրագրով վերծանվում է.

Ք Բ Տ Բ Յ Շ Յ
Փ ա ր ա ւ ո ն

Թ. 281ա

Կարդայ և գիտ զառաքինին,
Որ կին էառ զիւր քէռ որդին,
Գոտեմարտեաւ ընդ միշտ էին,
Բայց կարճացաւ ի յոտին։ ՆԲՀՇԱ։

Ծածկագրությունը եղբայրագրով վերծանվում է.

Ն Բ Հ Շ Ա
Յ ա կ ո բ

* * *

Թ. 279բ

Հյուրասէր ծեր նազելի,
Ջեռոյր զխօսուն գառն ի սեռի,
Ունէր ամուլ կին մի բարի,
Էր ծիծաղկոտ ւ առաքինի։ ԲԱՏԲԿՃԲ։

Եղբայրագրով վերծանվում է.

Բ Ա Տ Բ Կ Ճ Բ
Ա բ ր ա հ ա մ

* * *

Թ. 284ա

Հովիւ մի կայր խիստ լաւ ճարտար,
Աստուածարանութեանն կամարար,
Գնայուն աղբիւր զվէմն արար
Ջլեղին արբին քան զշաքար։ ՃՇՍՎՐՎ։

Եղբայրագրով վերծանում ենք.

Ճ Շ Ս Վ Ր Վ
Մ ո վ ս է ս

* * *

Թ. 282ա

Արեգական նման իշխան,
Եղբայր ունէր իւր մետասան,
Թէպէտ եկաց շատ մի վնդան,
Շատոց ի սովն էած սեղան։ ՆՇՍՎՐՔ։

Եղբայրագրով վերծանվում է.

Ն Շ Ս Վ Ր Ք
Յ ո վ ս է փ

* * *

Թ. 282բ

Կուժն ու բրուտըն կռուեցան,
Կուժն զբրուտն արար կալման,
Բրուտն էած կժին սահման,
Ջինքն հեղեաց ւ արար նշան։ ՆԲՀՁԱ։

Եղբայրագրով վերծանվում է.

Ն Բ Հ Ձ Ա
Յ ա կ ո բ

* * *

Թ. 283ա

Այծն ու քօշն կռուեցան,
Այծն ետուր զքօշու կոտոշն եհան,
Ելան գնացին ի դատաստան,
Տարան դըրին զքօշն ի զընդան։ ՆՇՍՎՐՔ։

Եղբայրագրով վերծանվում է.

Ն Շ Ս Վ Ր Ք
Յ ո վ ս է փ

* * *

Թ. 384ա

Այր մի արդար երևեցաւ,
Յէնց որ Աստուած ի նմա հանգեաւ,
Յարքայութեանն մեծացաւ,
Բայց ի չարէն շատ փորձեցաւ։ ՆՇԱ։

Եղբայրագրով վերծանվում է.

Ն Շ Ա
Յ ո բ

Ի դեպ, «Յայսմաւուրքի» տողատակում արձանագրված են պատմական անչափ արժեքավոր տեղեկություններ։ Իբրև նմուշ կարելի է բերել Ղարբանդա խանի հարկադրությունը։ «Թվին ՁԾԵ (1406),— գրում է գրիչը,—գաւառն Մշոյ Ղարպանտայ խանն հրովարտակ եհան ի վերայ քրիստոնէից, որք ընդ իշխանութեամբն իւր էին, կամ դառնալ ի մոլար օրէնսն Մահմեդի և կամ տալ խարաջ ամէն մարդ իւրոյ գլխոյն Ը (8) դահեկան, և ի վերայ աջ թևին կարել սև կարկատան և առնուլ թուք ի սպիտակ յերեսն և ճողուլ զմորուսն» (Թ. 265բ)։

4. ՏԱՌԱՆԻՇ ԾԱԾԿԱԳՐԵՐ[14]

1944 թ. Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրերն ուսումնասիրելիս մեզ հետաքրքրեց հավաքածուի № 203 գրչագրի պարունակած ծածկագիրը։ Մեր փորձերը՝ արդեն ծանոթ ծածկագրության բանալիներով վերծանելու այն, արդյունք չտվեցին։ Հետագայում ևս քանիցս փորձեցինք, բայց հաջողություն չունեցանք։ Վերջերս միայն կարողացանք գտնել ծածկագրի բանալին։ Գտնված այդ բանալիով հնարավոր եղավ վերծանել նույնատիպ այլ ծածկագիր բնագրեր ևս, որոնք հայտնի էին հայագիտությանը, բայց մնում էին չվերծանված։

Ծածկագրության այս տեսակին պայմանականորեն տառանիշ ծածկագրություն անունն ենք տալիս, որովհետև գաղտնագրված բնագիրը ներկայացվում է երկուական տառանիշերով՝ իրարից բաժանված կետերով կամ գծիկներով։ Այս խմբի ծածկագրությունից հինգ բնագիր է հայտնի. առաջինը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի վերը մատնացույց արված ձեռագրի ծածկագիրն է, երկրորդը հանդիպում է Ղալաթիայի № 162 ձեռագրում, երրորդը և չորրորդը գրի են առնված Անկյուրիայում գոյություն ունեցած հայկական ձեռագրական հավաքածուի № 164 և № 180 գրչագրերում, իսկ հինգերորդը պարունակում է Նոր Ջուղայի № 593 ձեռագիրը։

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 203 ձեռագիրը բովանդակությամբ Ավետարան է. հիշատակարան չունի։ Ձեռագրի գրչության մասին տեղեկություններ չկան։ Ուշ շրջանի հիշատակագրությունից երևում է, որ գրչագիրը Նոր Ջուղայի Սանգիբարան գյուղի Մելքիսեդեկ քահանայի սեփականությունն է եղել և նրա հանձնարարությամբ վերանորոգվել և կազմվել է 1690 թ. Աղարիա անունով կազմարարի կողմից։ Ծածկագիրը գրի է առնված ձեռագրի առաջին թերթի առաջին էջի վրա։ Ահա այն.

ԵՍ. ՇՓ, ԼՈ, ԷՃ, ՃՏ, ԸՄ, ԵՁ
ԷԾ, ՁՍ, ԻՇ, ԽՋ, ԺԻ, ԼՔ, ԵՁ:

Ծածկագրի բնագիրը առանց վերծանության հրատարակված է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանի «Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում (ՆՋ, I, 251)։

Տառանիշ ծածկագրության այս խմբի երկրորդ բնագիրը մեզ հանդիպում է Ղալաթիայի մատենադարանի № 162 ձեռագրում, որն իմաստասիրական նյութերի ժողովածու է, պարունակում է Արիստոտելի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի և այլ փիլիսոփաների աշխատությունների հայերեն թարգմանությունների ընդօրինակությունները։ Ձեռագիրը գրված է երկու գրիչների կողմից. առաջին մասը՝ Վարդան քահանա Բալուեցու, իսկ երկրորդը՝ Գրիգորի։

14 «Տառանիշ ծածկագիրը» հրատարակվել է «Պատմա-բանասիրական հանդեսում» (տե՛ս 1974, № 1, էջ 175—187)։

Պատվիրատուն է Հովհաննես սարկավագը։ Ձեռագրի առաջին մասում հիշատակություն կա 1678 թ., իսկ երկրորդում՝ 1724-ից։ Գաղտնագրի բնագիրը հրատարակված է Բ. Կյուլեսերյանի կազմած Ղալաթիայի ձեռագրաց ցուցակում (Ղալ., 1019)։ Կյուլեսերյանին և նրա ցուցակի հրատարակիչներին չի հաջողվել վերծանել գաղտնագիրը։ Այն բաղկացած է ընդամենը 14 տառանիշից և զետեղված է հետևյալ հիշատակարանի մեջ.

«Ահա եղբայր զփափաքելին քո գրեցի, առընկալ անմեղադրելի խոշորութեան և անհաւանելի գրիս, զի այս չափ էր կար մեր սիրելի եղբայր իմ.

թց, լբ, զղ, խչ, ժւ, ճա, եձ:
քարով փայլելս, ամէն:

Տառանիշ երրորդ ծածկագրությունը գրի է առնված Անկյուրիայի հայկական մատենադարանի № 164 ձեռագրում (էջ 924)։ Գրչագիրը «Տարեգիրք ճաշոց» է։ Այն գրվել է 1450 թ. Թորոս և Ստեփանոս գրիչների կողմից Նիկիտենում և Պրուսեում, իսկ ծածկագիրը հետագայի գրչությամբ է. հիշատակագրություն կա այդ մասին 1678 թ.։ Ծածկագրի բնագիրը հրատարակված է Բ. Կյուլեսերյանի կողմից, Անկյուրիայի ձեռագրերի ցուցակում, առանց վերծանության (Անկ., 824)։ Այն զետեղված է հետևյալ հիշատակարանի մեջ.



«Ձեռամբ իմով կազմեցի զայս, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զուսուցիչն իմ տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեան ուսուց կազմութեամբ ա[ր]հեստիս զայս ձեր։ Աստուած ողորմի ասացէք։ Թվին ՌՃԻԷ (1678), յունվար ամսոյ ի Ի (20)» (էջ 294)։

Ծածկագրության չորրորդ օրինակը մեզ հանդիպել է Անկյուրիայի մատենադարանի № 180 ձեռագրում (էջ 750)։ Գրչագիրը բովանդակությամբ Ավետարան է՝ գրված Անկյուրիայի Ս. Խաչ վանքում, Մովսես գրչի կողմից 1547 թ.։ Այդ մասին գրիչն իր թողած հիշատակարանում ասում է. «...գրել երետ սուրբ Աւետարանն ձեռամբ մեղապարտ գրչիս Մովսէս անպիտանիս, որ յոյժ աշխատեցայ և գրեցի զսուրբ Աւետարանս ի յԱնկիւրիայ քաղաքն, ի բերդին ի Սուրբ Խաչին դուռն և ի Սուրբ Աստուածածնին, ի թվին Հայոց ՋՂՋ (1547) նոյեմբեր Բ (2)» (Անկ., 882)։ Ծածկագրությունը գրի է առնված հիշատակարանի վերջին մասում՝ չորս տարբեր բանալիներով գաղտնագրված

ծածկագրերի շարքում, որոնցից երկուսը՝ սյունակետագիր և գումարգիր ծածկագրերը Կյուլեսերյանը վերծանել է, իսկ մյուս երկուսը, այդ թվում մեզ հետաքրքրող ծածկագիրը, թողել է չվերծանված։ Ծածկագիրը հետևյալն է.

ԽՉ· ԵՁ· ԷՃ· ԼՔ· ԺՆ· ԲՊ· ԽՉ· ԲՊ· ԹՅ։
ԷՃ· ԼՔ· ԺՆ. ԸՄ: ի·մ. խ. ռ· ր· ճմ.
ՅՅ· Ռս· ՌՌ· ԳԴ: ՏՏ ⁚ Է: ԼԵ: Դ· ԼԳ:
ԻԵ: Է::: Աստուած ողորմի վարպետայ

Ծածկագրող հեղինակը հիշատակարանի վերջում հայտնում է, որ ծածկագրությունը 12 տեսակ է լինում և 36 տարատեսակ, որոնցից նա բերում է միայն հինգի նմուշը։

Հինգերորդ ծածկագրությունը հանդիպում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 593 ձեռագրում, որը պարունակում է «Վարք վկայութեանց վարդապետաց» աշխատությունը՝ ընդօրինակված Նոր Ջուղայում 1699 թ. Աստվածատուր գրչի կողմից։ Ծածկագիրը գրի է առնված տարբեր բանալիներով՝ եղբայրագիր, սյունակետագիր, փոխարինագիր, օղակետագիր, կետագիր և երկու անծանոթ այլ բանալիներով միասին։ Այդ խմբում անչափ ուշագրավ է ճյուղազարդ ծածկագիրը։ Թվարկվածներից հինգը վերծանված են ձեռագրերի ցուցակի հրատարակիչների կողմից, իսկ երեքը, այդ թվում նաև մեզ հետաքրքրող երկտառ ծածկագիրը, մնում են չվերծանված։ Այդ երկտառ ծածկագիրը հետևյալն է.

դռ. ըմ. Ծռ. իփ. Լճ. խճ. գդ. Խճ. ԹՅ:

Խնդրո առարկա երկտառանիշ այս ծածկագրի բնագիրը վերծանվում է բավականին բարդ և մեզ բոլորովին անծանոթ բանալիով։ Այն կազմված է հետևյալ սկզբունքով. հայկական այբուբենի 36 տառանիշերը տեղադրված են 12 խմբի մեջ՝ յուրաքանչյուրը երեքական տառանիշից։ Խմբավորման մեջ նկատվում է որոշակի օրինաչափություն. նույն տառախմբերի առաջին տառանիշերը ըստ հաջորդականության վերցվում են «ա»-ից մինչև «լ»-ն, երկրորդը՝ «խ»-ից մինչև «ո»-ն, երրորդը՝ «չ»-ից մինչև «ք»-ն։ Ըստ որում, գաղտնագրության ժամանակ տվյալ նույն տառանիշերից բաց է թողնվում այն, որը ծածկագրվում է։ Ծածկագրի բանալին հետևյալն է.

Ա Խ Չ Բ Ծ Պ Գ Կ Ջ Դ Հ Ռ
Ե Ձ Ս Զ Ղ Վ Է Ճ Տ Ը Մ Ր
Թ Յ Ց Ժ Ն Ւ Ի Շ Փ Լ Ո Ք

Ըստ ծածկագրության այս սկզբունքի, օրինակ՝ «Ա» ծածկագրելու համար պետք է վերցնել «ԽՉ», «Խ» ծածկագրելու համար՝ «ԱՉ», «Չ» ծածկագրելու համար՝ «ԱԽ» և այլն։

Այժմ փորձենք նորահայտ այս բանալիով վերծանել վերը բերված ծածկագիր բնագրերը։

Նոր Ջուղայի № 203 ձեռագրի (ՆՋ, II, 74) ծածկագիրը վերծանվում է.

ԵՍ. ՇՓ. ԼՈ. ԷՃ. ՃՏ. ԸՄ. ԵՁ. ԷՃ. ՁՍ. ԻՇ. ԽՉ. ԺՒ. ԼՔ. ԵՁ։
Ձ ի ք տ է ր Ս տե փ ա ն ո ս

Վերծանվում է «Ձիք տէր Ստեփանոս»։ «Ձիք» բառի ստուգաբանությունը մենք դժվարանում ենք տալ. արդյո՞ք մականուն է բարձրահասակ, ամրակազմ, հաստատակամ, թե մի այլ նշանակությամբ, բայց որ նման անունով մարդ եղել է Նոր Ջուղայում, այդ մասին վկայություն ունենք Զաքարիա Քանաքեռցու մոտ. «[էր] երէց մի այրի ի Ջուղայու, որում ասէին Ձիք տէր Ստեփանոս»,— գրում է նա[15]։

Դժվար է հաստատուն խոսք ասել նաև այն մասին, թե գաղտնագրության մեջ հիշված տեր Ստեփանոսը ձեռագրի գրի՞չն է, թե՞ հետագայի հիշատակագիրը։ Այդ կարելի կլիներ պարզել ծածկագրության գրչությունը համեմատելով բուն ձեռագրի գրչության հետ, որը, դժբախտաբար, այժմ մենք կատարել չենք կարող։

Ղալաթիայի մատենադարանի № 162 ձեռագրի ծածկագրությունը վերծանվում է.

ԹՑ. ԼՔ. ԶՂ. ԽՉ. ԺՒ. ՃՏ. ԵՁ։
Յ ո վ ա ն է ս

Վերծանված անունը հիշատակարանի ամբողջության մեջ կկարդացվի. «Ահա եղբայր զփափաքելին քո գրեցի, առընկալ անմեղադրելի խոշորութեան և անհաւանելի գրիս, զի այս չափ էր կար մեր սիրելի եղբայր իմ Յովանէս, բարով վայելես, ամէն»։

Ձեռագրում եղած այլ հիշատակարաններից մեզ հայտնի է, որ տվյալ ձեռագիրը գրված է Վարդան քահանայի և Առաքել գրչի կողմից։ Ծածկագիր բնագրի վերծանությունից պարզվում է, որ ձեռագրի պատվիրատուներից մեկըն էլ հանդիսացել է Հովհաննես վարդապետը, որի մասին գրիչն իր մի այլ հիշատակարանում խնդրում է. «...յիշեցէք ի Քրիստոս նաև զստացող սորիս գքաջարան ռաբունապետն ...զՅովհաննէս հեզահոգի վարդապետն» (Ղալ., 1020)։

Անկյուրիայի մատենադարանի № 164 ձեռագրի ծածկագրի մեջ սպրդել է գրչագրական երկու սխալ. հինգերորդ զույգի «ԺԱ»-ն պիտի լինի «ԺԻ», և վերջին «ՋՓ» զույգը պիտի լինի «ՇՓ»։ Այս ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը կվերծանվի.

ԽՉ ԵՁ ՈՔ ԽՉ ԺԻ ԳՋ ԼՔ ԺՆ ՈՔ ՇՓ։
Ա ս լ ա ն կ ո ւ լ ի

[15] «Զաքարիա Սարկաւագի պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 38։

Վերծանված անունը հիշատակարանի ամբողջության մեջ կկարդացվի. «Վերըստին նորոգեցաւ տարէգիրքս, որ կոչի ճաշոց, ձեռամբ [տխմար] և անիմաստ Ասլանկուլի, ձեռամբ իմով կազմեցի զայս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զուսուցիչն իմ տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեամբ ուսուց կատմութեամբ ա[ր]հեստս զայս: Տէր Աստուած ողորմի ասացէք: Թվին ՌՃԻԷ (1678) յունվար ամսոյ ի Ի (20)»:

Հիշատակագրությունից երևում է, որ Ասլանկուլին եղել է ձեռագրի կազմարարը: Հավանական է, նա լինի այն անձնավորությունը, որը կազմել է նաև Անկյուրիայի մատենադարանի № 301 ձեռագիրը և այդ մասին թողել գծակետագիր ծածկագրով հիշատակագրություն (Անկ., 1266):

Ի դեպ, Անկյուրիայի № 164 ձեռագրի այս ծածկագրին մենք անդրադարձել ենք «Հայկական մի քանի ծածկագրությունների վերծանությունը» խորագրով մեր հոդվածում, բայց բանալուն ծանոթ չլինելով, սխալմամբ կարծել ենք, թե այն գաղտնագրված է փոխարինագիր ծածկագրության երեք բանալիներով և մի քանի անհարկի ուղղումներ ենք առաջարկել[16]:

Անկյուրիայի № 180 ձեռագրի՝ մեզ հետաքրքրող ծածկագրության բնագրում ևս նկատվում է գրչական երկու սխալ. «ԺՆ» երկտառից հետո բաց է թողնված «ԽՋ» երկտառը և ավելորդ է ութերորդը՝ «ԲՊ» տառախումբը: Այս ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը կվերծանվի այսպես.

ԽՋ. ԵՋ. ԷՃ. ԼՔ. ԺՆ. ԽՋ. ԲՊ. ԽՋ. ԲՑ. ԷՃ. ԼՔ. ԺՆ. ԸՄ:
Ա ս տ ո ւ ա ծ ա յ տ ո ւ ր

Գլխավոր հիշատակարանից հայտնի է, որ ձեռագրի գրիչն է Վարդան եպիսկոպոսը, իսկ Աստվածատուրը նրա եղբայրն է («Իմաստասէր սարկաւագ Աստուածատուր, որ այժմ կոչի Կուլամիր»), որին և հանձնարարվել է «ծաղկել» ձեռագիրը (Անկ., 880):

Նույն ձեռագրում սյունակետագիր բանալիով ծածկագրված է ծաղկողի անունը, որը վերծանել է Կյուլեսերյանը. «Տէր Յակոբ»:

Երկտառ ծածկագրությանը հաջորդում է փոխարինագիր մի ծածկագիր, որը Կյուլեսերյանը չի վերծանել: Բերում ենք այն՝ մեր վերծանությամբ.

Ի Մ Խ Ռ Բ
Մ ի ն ա ս

Հավանական է, այս Մինասը լինի գրչի եղբոր որդին, որի մասին հիշատակարանում ասված է. «Յիշեսջիք ...եղբայրորդիքս՝ տիրացու Մինաս և տիրացու Յովսէփ» (Անկ., 880):

Փոխարինագիր ծածկագրին հետևում է գումարգիր ծածկագիրը, ուր գաղտնագրված է գրչի մյուս եղբոր որդին՝ Հովսեփը: Այս ծածկագիրը վերծանել է Կյուլեսերյանը.

ՃՄ. ՅՅ. ՌՍ. ՌՌ. ԳԴ. ՏՏ:
Յ ո վ ս է փ

16 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 175:

Հինգերորդ ծածկագիրը մեզ անծանոթ մի այլ բանալիով է գաղտնագրված, որի մասին խոսք կլինի առանձին:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 593 ձեռագրի երկտառ ծածկագրության մեջ նկատվում են գրչական հետևյալ սխալները. երրորդ զույգը պետք է լինի ո՛չ թե «ԾՍ», այլ՝ «ՁՍ», և վեցերորդ զույգը պետք է լինի ո՛չ թե «ԳՋ», այլ՝ «ԳՋ»: Այդ ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը կվերծանվի.

ԴՌ. ԸՄ. ՁՌ. ԻՓ. ԷՃ. ԽՋ. ԳՋ. ԽՋ. ԲՑ:
Հ ր ե շ տ ա կ ա ց

Այս նույն ծածկագրության հետ միասին այլ բանալիներով բոլոր բնագրերում էլ գաղտնագրված են մարդ կամ հրեշտակ բառերը: Այսպես, երրորդ ծածկագիրը, որ գումարգիր է, վերծանվում է.

ԼԵԼԵ ՍՇՍՇ Ե ՄԾՄԾ ՍՍ Ա ԼԼ Ա ՎՎ
Հ ր ե շ տ ա կ ա ց

(Վերծանված է ձեռագրի ցուցակը կազմող հեղինակների կողմից):

Հինգերորդ ծածկագիրը, որ փոխարինագիր բանալիով է գաղտնագրված, վերծանվում է (ՆՋ, II, 74).

Ջ. Ե. Ր. Ծ. Դ. Ռ. Ո: Ս. Ռ. Ե. Տ.
Հ ր ե շ տ ա կ Մ ա ր դ

Վեցերորդ ծածկագիրը օղակետագիր ծածկագրություն է, որը վերծանվում է «Մարդ, Հրեշտակ» (ՆՋ, II, 74):

Յոթերորդ ծածկագրությունը տառակետագիր է, որը վերծանվում է (ՆՋ. II, 74):

ծ... ս.... տ..... յ... վ... ա. խ... ւ... մ. ա. վ... գ. ի. լ.... փ..
հ ր ե շ տ ա կ ք մ ա ր դ ի կ ք

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 180 և Նոր Ջուղայի № 593 ձեռագրերում հանդիպում են մեզ անծանոթ բանալիով գաղտնագրված մեկական նույնատիպ ծածկագրեր, որոնք կազմված են հայկական այբուբենի մեկական և զույգ տառանիշերի խառնուրդից, որոնց կողքերին դրված են տարբեր թվով կետեր: Սրանց մենք զուգախառն ծածկագրեր անունն ենք տալիս:

Անկյուրիայի մատենադարանի № 301 ձեռագրի պարունակած ծածկագիրը հետևյալն է. «Է: ԼԵ: Դ. ԼԳ: ԻԵ: Է:.:»:

Նոր Ջուղայի № 593 ձեռագրի ծածկագիրն է.

Ս. ԼԷ. Փ. ԺԷ. ՔԼԷ. Դ. Ր. Վ. Խ. ՓԺԴ.

Առաջինը հրատարակված է Կյուլեսերյանի՝ Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում (Անկ., 882), իսկ երկրորդը՝ Մինասյանի կազմած Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում (Նոր Ջուղա, II, 74)։ Երկու ծածկագրերն էլ թողնված են չվերծանված։

Ուսումնասիրությունից պարզվեց, որ ծածկագրերը, ինչպես, բավականին բարդ գաղտնագրերից են։

Ծածկագրության կազմության գաղտնիքը պարզելու գործում որոշ չափով մեզ օգնեցին Անկյուրիայի մատենադարանի № 180 ձեռագրի տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրերը, որոնք պարունակում էին գրչի բարեկամների անունները՝ եղբայրների (Տեր Հակոբ և Աստվածատուր), եղբորորդիների (Մինաս և Հովսեփ)։ Կասկած չունեինք, որ տվյալ ծածկագրության տակ ևս գաղտնագրված պիտի լինի գրչի բարեկամներից մեկնումեկի անունը։ Քանի որ ծածկագրությունը բաղկացած էր վեց միավորից, ուստի պետք էր փնտրել գրչի հիշատակարանում հիշված նրա բարեկամներից այնպիսի մեկին, որի անունը բաղկացած լիներ վեց տառանիշից և առաջին ու վերջին տառերը նույնահնչյուն լինեին։ Հիշատակարանում այդպիսի երկու անուն կա՝ Սարգիս (գրչի փեսայի անունը) և Մարիամ (գրչի քույրը)։ Պարզվեց, որ գաղտնագրված է Մարիամի անունը, որ և հնարավորություն տվեց մեզ հասկանալու կառուցվածքը. իմացվեց, որ ծածկագրությունը գաղտնագրված է հետևյալ բարդացումներով.

Ա. տառանիշերի կողքին դրված կետերը մեկական միավորով առաջ են շարժում դրանք ըստ հայկական այբուբենի հաջորդականության։

Բ. Զույգ տառանիշերի թվական գումարը հաշված է ոչ թե ըստ նրանց սովորական թվական արժեքի, այլ՝ այբուբենի տառանիշերի հաջորդականության։ Օրինակ՝ «Ի» տառը հավասար է ոչ թե 20-ի, այլ՝ 11-ի, «Ճ»-ն հավասար է ոչ թե 100-ի, այլ՝ 19-ի և այլն։

Գ. Երկու տառանիշերի թվական գումարը 36-ից անցնելու պարագային, անհրաժեշտ է լինում մնացածը հաշվել նորից այբուբենի սկզբնավորությունից։ Օրինակ, ԼԷ-ն հավասար է «Ա»-ի (37—36=1), կամ ԼԹ-ն հավասար է «Գ»-ի (39—36=3) և այլն։

Այս նրբությունները հաշվի առնելուց հետո ծածկագրի տառանիշերի մի մասը վերծանվում է փոխարինագիր բանալիներով։

Տվյալ ծածկագրության վերծանությունը, սակայն, կապված էր որոշ դըժվարությունների հետ. երբ մեզ հայտնի էր արդեն ծածկագրության գաղտնիքը, պարզվեց, որ ներկայացված բնագրում սպրդել են մի քանի սխալներ, որոնք անհրաժեշտ էր ուղղել։ Դրանք հետևյալն են.

Ա. «Է»-ի կողքին պետք է լինի ոչ թե երկու, այլ չորս կետ։ «ԼԳ» զույգը պետք է ուղղել «ԼՁ»։ Հաջորդ «ԻԷ» զույգը պետք է ուղղել «ԼԷ»։ Եվ վերջին հինգ տառի փոխարեն պետք է հաշվել չորս (մեկն ավելորդ է)։ Այդ ուղղումները կատարելուց հետո ծածկագրությունը կստանա հետևյալ տեսքը.

Է։ ։ ԼԵ։ Դ. ԼՁ։ ԼԵ։ Է։ ։

Կետերը հաշվի առնելով, այն կդառնա՝

Ի ԼԷ Ե ԼԸ ԼԷ Ի

Զույգ թվերը բաց անելուց հետո կվերծանվի.

Ի Ա Ե Ր Ա Ի

Մ ա ր ե ա մ

Ինչպես տեսնում ենք, տվյալ ծածկագրի մեջ գաղտնագրված է եղել գրչի քրոջ՝ Մարիամի անունը։

Տվյալ վերծանությունը թեև ինքնին պատմական արժեք չի ներկայացնում, սակայն կարևոր է նրանով, որ օգնում է մեզ ծանոթանալու հայ գաղտնագրության մի նոր բանալու, որը, անշուշտ, պիտանի կարող է լինել այդ բնույթի այլ ծածկագրեր վերծանելու համար։

«Ձեռագրաց ցուցակում» բավականաչափ աղավաղված է ներկայացված նաև Նոր Ջուղայի մատենադարանի № 593 ձեռագրի զուգախառն ծածկագրի բնագիրը։ Այն, պետք է խոստովանենք, հնարավոր է լինում վերծանել մեծ ձգվածությամբ։

Ելնելով նախորդ ծածկագրության սկզբունքից, մենք հնարավոր ենք համարում կատարել որոշ ուղղումներ։

Տպագրված բնագիրը	Մ.	Լէ։	Փ.	Ժէ.	Բ.	Լէ.	Դ.	Ը.	Վ.	Խ.	Փ.	ԺԴ
Ուղղումից հետո	Մ	Լէ	Տ.	ԺԵ	Բ	Լէ.	Դ	Ր	Լ։	Խ	Փ։	ԺԴ
Կետաթափից հետո	Մ	Լէ	Ր	ԺԵ	Բ	Լէ	Ե	Ր	Տ	Խ	Ա	ԺԵ
Զույգերը հաշվելով	Մ	Ա	Ր	Կ	Բ	Հ	Ե	Ր	Տ	Խ	Ա	Կ
Վերծանությունը	Մ	Ա	Ր	[դի]Կ	Բ	Հ	Ր	Ե	Շ	Տ	Ա	Կ

Այսպիսով, Նոր Ջուղայի մատենադարանի № 593 ձեռագրի պարունակած զուգախառն ծածկագիրը վերծանվում է. «Մարդիկք։ Հրեշտակ»։

Ի դեպ, այս նույն ծածկագրի հետ միասին ութ տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրերից վեցում դարձյալ գաղտնագրված են «մարդ» և «հրեշտակ» բառերը։

* * *

Զմմառի մատենադարանի № 617 ձեռագրում, որը գիտական տարբեր նյութերի ժողովածու է, գրի է առնված հետևյալ ծածկագիր հիշատակարանը. «Գրեցաւ ձեռամբ իմով ի յերկիրըն Հնդկաց և Բանկալայ քաղաքին ի Սէտապատ կոչեցեալ քաղաքն, ի թուականիս մերոյ ՌՄԺԲ (1763) յունվարի ԺԵ (15)։ Գրեցաւ ԻԵՔԹՊԸ 'Ձ Յ Ո Յ Ձ Ո. Փ Թ Ր Է Ջ Փ Ջ Մ Ր Գ» (Զմմ., II, 223)։

Ծածկագիր այս հիշատակարանը հրատարակված է Հ. Ն. Ակինյանի և Հ. Ոսկյանի կազմած Զմմառի մատենադարանի ձեռագրաց ցուցակի երկրորդ հատորում։ Նրանք դժվարացել են վերծանել ծածկագիրը և պարզել գրչի անունը, ուստի հարկադրված են եղել ձեռագրի արտաքին նկարագրության հարցացանկում միայն նշելու, թե՝ «Գրիչ և տեղի անհայտ»։

Գրչության վայրն անհայտ համարելը, իհարկե, թյուրիմացություն է. քանի որ վերը բերված հիշատակարանում որոշակի նշվում է, որ ձեռագիրը գըր-

ված է Հնդկաստանի Սեյդաբադ քաղաքում, իսկ գրչի անունը անհրաժեշտ էր փնտրել ծածկագրի մեջ։

Ծածկագիրը, ինչպես հետո պարզվեց, գաղտնագրված է մեզ բոլորովին անծանոթ բանալիով, ուստի նախնական փորձերը՝ վերծանելու այն ծանոթ բանալիներով, արդյունք չտվեցին։ Չօգնեց նաև որոշ գրիչների անունների համադրությունը ծածկագրի հետ, որոնք այդ նույն ժամանակներում գտնվել են Հնդկաստանի Սեյդաբադ քաղաքում և ձեռագրեր են արտագրել (Եփրեմ աբեղա, Արիստակես Կիրակոսյան)։ Համոզված էինք, որ առաջին տառախումբն ըստ իմաստի առանձին բառեր են, ուստի ենթադրում էինք, որ առաջին տառախումբը պետք է պարունակի «ձեռամբ» բառը, որը, սովորաբար, գործ է ածվում ծածկագրություններում մեջ, իսկ երկրորդը՝ «գրչի»։ Այդ երկու բառերն իրենց տառերի թվով համապատասխանում էին ծածկագրի տառախմբերի տառերի թվին։ Հետագայում, սակայն, երբ գտանք ծածկագրի բանալին և վերծանեցինք այն, պարզվեց, որ առաջին բառի մասին մեր կռահումը ճիշտ էր, իսկ երկրորդի մասին՝ սխալ։

Ծածկագիրը գաղտնագրված է հետևյալ բանալիով.

Աթ	Բը	Գէ	Դզ	Եե	Զդ	Էգ	Ըբ	Թա
Ժղ	Իձ	Լհ	Խկ	Ծծ	Կխ	Հլ	Ձի	Ղժ
Ճջ	Մպ	Յչ	Նո	Շշ	Ոն	Չյ	Պմ	Ջճ
Ռք	Սփ	Վւ	Տց	Րր	Ցտ	Ւվ	Փս	Քռ

Այս բանալիով գաղտնագրված ծածկագիր բնագիր մեզ առաջին անգամ էր հանդիպում։ Այն կազմված է հետևյալ սկզբունքով. հայկական այբուբենն, ըստ հաջորդականության, դասավորվում է չորս խմբի մեջ, և այդ խմբի շարքերը ոչ թե փոխարինում են իրար, ինչպես փոխարինագիր ծածկագրության ժամանակ, այլ կրկնվում են հակառակ հերթականությամբ. շարքի առաջին տառերը գրվում են ձախից աջ, իսկ նրան փոխարինող շարքի տառերը՝ աջից ձախ։ Տառանիշերի նման դասավորության հետևանքով Ե, Ծ, Շ և Ր տառերը պահում են իրենց հնչյունական արժեքները։

Նորահայտ այդ բանալիով խնդրո առարկա ծածկագիրը վերծանվում է այսպես.

«Գրեցաւ Ի Ե Ք Թ Պ Ը 'Ձ Յ Ո Յ Ձ Ո Փ Թ Ր Է Զ Փ Զ Մ Ր Գ»։
«Գրեցաւ ձ ե ռ ա մ բ 'ի չ ն չ ի ն Ս ա ր գ ի ս դ պ ր է»։

Այսպիսով, պարզվում է, որ Զմմառի մատենադարանի № 617 ձեռագրի գրիչը եղել է Սարգիս դպիրը։

Ի դեպ, Զմմառի ձեռագրաց ցուցակի հրատարակիչները տասն տարվա սխալով են թվագրել ձեռագրի գրչության ժամանակը։ Ձեռագրում գրչության թվականը նշված է հետևյալ չափածո հիշատակարանի մեջ.

Գրեցան բանքս չափական՝
Ի յոլովման ընթացից ժամանակի Յաբեթական,
Տոհմիս տոմարի ի վեց անգամ,
Երկերիւր և մէտասան յաւելեալ թուի,
Ի սեպտեմբերի ԺԱ (11) աւուր (թ. 81ա)։

Ցուցակի հրատարակիչներն այս հիշատակարանը սխալ վերծանելով ստացել են 1772 թ.։ Իրականում այն վերծանվում է տասն տարի պակասով. վեց անգամ երկու հարյուրը («ի վեց անգամ երկերիւր») հավասար է 1200-ի, նրան գումարելով հավելյալ 11-ը և հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1762 (1200+11+551=1762)։

Որ մեր այս վերծանությունը ճիշտ է, այդ երևում է վերը բերված ծածկագիր հիշատակարանից, ուր թվականը նշված է առանց ծածկագրության. «...ի թուականիս մերոյ ՌՄԺԲ (1212), յունվարի ԺԵ»։ Հայկական մեծ թվականի 1212-ին գումարելով 551, ստանում ենք 1763 (1212+551=1763), մեր վերծանած թվականից մեկ տարով ավելի։

Ուրեմն, Զմմառի № 617 ձեռագիրը գրված է Հնդկաստանի Սեյդաբադ քաղաքում, Սարգիս դպրի կողմից, 1762—1763 թթ.։

5. ԵՐԿԲԱՆԱԼԻ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ մատենագրության մեջ պատահում են ծածկագրության այնպիսի տեսակներ, որոնք վերծանվում են ոչ թե մեկ, այլ երկու բանալիով։ Այդպիսի ծածկագիր բնագրերին մենք երկբանալի ծածկագիր անունն ենք տալիս։

Երկբանալի ծածկագրության ընտիր մի նմուշ թողել է Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին 1284 թ. գրած ձեռագրում, որն այժմ Մաշտոցի անվան մատենադարանի սեփականությունն է՝ գրանցված № 1424-ի տակ (թ. 144ա)։



Ծածկագիրը հետևյալն է.

ՅՅ . ԱԱ . ՅՄ . ՐՏ . ՇՇ . ՆՆ . ՇՇ . ՅՄ . ԲԲ .

CԱ . ՇՄ . CԱ . ՇՇ . ՃՃ . ԲԱ . ՃՃ . ԴԱ . ՅՄ .

ՍՌ . ՇՇ . ՐՏ . ՇՇ . ՅՌ . ԴԱ . ՌՌ.։

Երկրորդ տողի առաջին և երրորդ զույգի առաջին նշանագրերը նշանակված են C ձևով, որը, ինչպես վերն ասվել է, հին հայկական մատենագրության մեջ հաճախ գործածված C տառանիշն է՝ կեսի նշանակությամբ, որը հաջորդ C-ի հետ տալիս է «Ա» տառի թվարժեքը, իսկ այստեղ գործ է ածել երկուսի համար և Ա-ի հետ միասին ստացել երեքի թվական արժեքը։ Տվյալ ծածկագրի նախորդ վերծանության մեջ գործ է ածվել կեսի արժեքով, որ ճիշտ չէ։

ՅՅ. ԱԱ. ՅՄ. ՐՏ. ՇՇ. ՆՆ. ՇՇ. ՅՄ. ԲԲ.
Ո Բ Շ Ք Ռ Պ Ռ Շ Դ

CԱ. ՇՄ. CԱ. ՇՇ։ ՃՃ. ԲԱ. ՃՃ. ԴԱ. ՅՄ.
Գ Ռ Գ Ռ Մ Գ Մ Ե Շ

ՍՌ. ՇՇ. ՐՏ. ՇՇ. ՅՌ. ԴԱ. ՌՌ.
Վ Ռ Ք Ռ Ի Ե Մ

Վերծանությունը, ինչպես կարելի է տեսնել, անիմաստ է, հայերեն ոչ մի բառ չի ստեղծում, ուստի անհրաժեշտ է լինում գործի դնել երկրորդ բանալին՝ եղբայրագիրն իր երեք տարբերակներով, որով ստացվում է.

Ո. Բ. Շ. Ք. Ռ. Պ. Ռ. Շ. Դ.
Զ մ ե ղ ա պ ա ր տ

Գ. Ջ. Գ. Ռ. Մ. Գ. Մ. Ե. Շ.
ս է ս ա ի յ ի շ ե

Վ. Ռ. Ք. Ռ. Ի. Ե. Մ.
լ ա ղ ա չ ե մ

Ծածկագրի տակ ուշ գրիչներից մեկը պարզել է նրա գաղտնիքը և վերծանել. «Զմեղապարտ էսաի յիշել աղաչեմ»:

Տվյալ ծածկագիրն ուշագրավ է ոչ թե նրանով, որ ունի բավական բարդ կառուցվածք, այլ որ նրա հեղինակն է հայ մատենագրության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը՝ Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին։ Հիմք կա ենթադրելու, որ Գլաձորի համալսարանում դասախոսվող գրչության արվեստի դասընթացում որոշ տեղ է հատկացված եղել ծածկագրությանը։

Այսպիսով, Եսայի Նչեցին իր թողած ծածկագրության մեջ խնդրում է բարի ողորմիսով հիշել իրեն. «Զմեղապարտս Էսաի յիշել աղաչեմ»։

(Հրատ. ՀԳՊ, էջ 213—214, ՀԳԳ, էջ 263—264, ՊԲՀ, 1958, № 1, էջ 184—185)։

* * *

Եսայի Նչեցու ծածկագրությանը մասամբ նմանվում է Մաշտոցի անվան մատենադարանի № 1422 ձեռագրում (թ. 145ա) գրի առնված բնագիրը, որի հեղինակն է Հովհաննես գրիչը։ Այն ներկայացված է հետևյալ գումարգիր տեսքով.

ՅՅ. ԱԱ. ՅՄ. ՐՏ. ՇՇ. ՆՆ. ՇՇ. ՅՄ. ԲԲ.

ՎՍ. ՇՄ. ՕԱ. ՇՇ. ՃՃ. ԲԱ. ՃՃ. ԴԱ. ՅՄ.

ՍՌ. ՇՇ. ՐՏ. ՇՇ. ՅՌ. ԴԱ. ՌՌ.

Բնագրում նկատվում է մի վրիպակ. 11-րդ զույգը պետք է լինի ոչ թե «ՇՄ», այլ՝ «ՇՇ»։ 12-րդ զույգի «Օ» տառը գործ է ածվել ոչ ճիշտ նշանակությամբ, քանի որ այն ձևափոխությունն է հունական C տառանիշի և ունի կեսի նշանակություն, իսկ տվյալ ծածկագրության մեջ գործ է ածված «Օ»-ի, այսինքն զրոյի նշանակությամբ։

Գումարգիրը վերծանվում է.

ՅՅ. ԱԱ. ՅՄ. ՐՏ. ՇՇ. ՆՆ. ՇՇ. ՅՄ. ԲԲ.
ո բ շ ք ռ պ ռ շ դ

ՎՍ. ՇՇ. ՕԱ. ՇՇ. ՃՃ. ԲԱ. ՃՃ. ԴԱ. ՅՄ.
ր ռ ա ռ մ գ մ ե շ

ՍՌ. ՇՇ. ՐՏ. ՇՇ. ՅՌ. ԴԱ. ՌՌ.
վ ռ ք ռ ւ ե ս

Գումարգրի վերծանությունից, ինչպես տեսնում ենք, ոչինչ չի ստացվում. վերջնական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է դիմել փոխարինագիր բանալուն։ Նկատի պիտի ունենալ, որ «Պ» և «Ե» տառերը գործ են ածված իրենց հնչական արժեքով։

Ո Բ Շ Ք Ռ Պ Ռ Շ Դ
Զ մ ե ղ ա պ ա ր տ

Ր Ռ Ա Ռ Մ Գ Մ Ե Շ Վ
ծ ա ռ ա ս յ ի շ ե լ

Ռ Ք Ռ Ի Ե Մ
ա ղ ա չ ե մ

Հովհաննես գրիչը, ինչպես տեսնում ենք, Եսայի Նչեցու նման, ընթերցողից մի խնդրանք ունի. «Զմեղապարտ ծառաս յիշել աղաչեմ»։

(Հրատ. ՀԳԳ, էջ 263—264)։

* * *

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 317 (թ. 123բ) ձեռագիրը պարունակում է Անդրեաս Կապադովկացու «Մեկնութիւն յայտնու-

թեան Յովհաննու» թարգմանական աշխատությունը, որն ընդօրինակված է Սարգիս գրչի կողմից Համիթում՝ 1664 թվականին։ Ձեռագրում հանդիպում է երկբանալի հետևյալ ծածկագրությունը.

ՅՅ ԱԱ ՅՄ ՐՏ ՇՇ ՆՆ ՇՇ ՅՄ ԲԲ ԻԱ

ՇՄ ԻԱ ՇՇ ՃՃ ԲԱ ԴԱ ՅՄ ՍՌ ՇՇ ՐՏ

ՇՇ ՅՌ ԴԱ ՌՌ։

Այս ծածկագրությունը, գրչի հիշատակարանի հետ միասին, հրատարակել է բանասեր Լ. Մինասյանը «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում (ՆՋ, II, էջ 6) և վերծանել ծածկագրության առաջին ու վերջին բառերը. «Զմեղապարտ... յ[ի]շել աղաչեմ», իսկ միջին մասը, որը պարունակում է ծածկագրողի անունը, չի հաջողվել վերծանել, ուստի այն բաց է թողել կախման կետերով։ Դժվարություն հարուցողը ծածկագրող հեղինակի անվան տառանիշերի մեջ նկատվող նորամուծություններն են, որոնց ծանոթ չի եղել Մինասյանը։

Հեղինակի անունը ծածկագրության մեջ ներկայացված է հետևյալ տառախմբերով. ԻԱ ՇՄ ԻԱ ՇՇ ՃՃ։ Այստեղ արտասովոր է հազարավոր «Ի» տառանիշի զուգադրումը միավոր «Ա»-ի հետ։ Հայկական ծածկագրության մեջ հայտնի չէ, որ գումարգրի մեջ միավորը զուգադրվի հազարավորի հետ։

Մանրազնին ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ զուգադրությունը թյուրիմացություն է, որովհետև վերև բերված տառախմբի առաջին վեց տառերը՝ Ի Ա Շ Մ Ի Ա մենատառեր են, և ծածկագրողը միացրել է զույգերի մեջ, ըստ երևույթին, ծածկագրության վերծանությունը բարդացնելու միտումով։ Գումարգիր են միայն վերջին երկու զույգերը՝ «ՇՇ» և «ՃՃ»։ Պարզվեց նաև, որ երկու «Ի»-երը շփոթություն են նույնաձև «Ւ» տառանիշի, իսկ «Ա»-երը գործ են ածված իրենց սովորական հնչական արժեքով։ Նկատվում է նաև որոշ տառանիշերի բացթողում։ Նկատի ունենալով այս ամենը, ավյալ ծածկագրված անունը կարելի է լինում ներկայացնել հետևյալ տեսքով.

Ր Ա Շ Մ Ր Ա ՇՇ ՃՃ

Գումարգիրը բաց անելուց հետո ունենում ենք.

Ր Ա Շ Մ Ր Ա Ռ Մ

Եղբայրագրով վերծանելուց հետո ունենում ենք.

Ր Ա Շ Մ Ր Ա Ռ Մ
Ս ա ր ի ծ ա ա ս

Բաց թողած տառերը լրացնելուց հետո ստանում ենք գաղտնագրված անունը Ս ա ր [գ] ի [ս] ծ ա [ռ] ա ս։

Ծածկագրությունն ամբողջությամբ վերցրած կվերծանվի.

ՅՅ	ԱԱ	ՅՄ	ՐՏ	ՇՇ	ՆՆ	ՇՇ	ՅՄ	ԲԲ	Ի	Ա
ո	բ	շ	ք	ո	պ	ո	շ	դ	ր	ա
զ	մ	ե	ղ	ա	պ	ա	ր	տ	ս	ա

Շ	Մ	Ր	Ա		ՇՇ	ՃՃ	ԲԱ	Ի	ԴԱ	ՅՄ	ՇՇ	ՐՏ	ՇՇ
շ	մ	ր	ա		ո	մ	գ	ի	ե	շ	ո	ք	ո
ր[գ]	ի[ս]	ծ	ա	[ռ]	ա	ս	յ	ի	շ	ե[լ]	ա	ղ	ա

ՅՌ	ԴԱ	ՌՌ
ւ	ե	ս
չ	ե	մ

Այսպիսով, Նոր Ջուղայի ծածկագրությունը կարդացվում է. «Զմեղապարտ Սարգիս ծառաս յիշել աղաչեմ»։ Գլխավոր հիշատակարանից երևում է, որ ծածկագրողը ձեռագրի գրիչն է։

* * *

Երկբանալի ծածկագրության հետաքրքիր մի նմուշ հանդիպում է Անթիլիասի կաթողիկոսարանի մատենադարանի ձեռագիր խորհրդատետրի մեջ։

Սյունակետագիր այս ծածկագրությունը հաջողվեց վերծանել մեծ դժվարությամբ, որովհետև մեզ հայտնի երեք փոխարինագիր բանալիներից ոչ մեկի միջոցով առանձին-առանձին հնարավոր չեղավ բաց անել։ Փորձեցինք վերծանել եղբայրագիր և փոխարինագիր բանալիներով միաժամանակ, դարձյալ ոչինչ չստացվեց։ Հետո միայն պարզվեց, որ ծածկագիրը վերծանելու համար անհրաժեշտ է գործածել եղբայրագրի երեք տարբերակների բանալիները եւ և առաջ. մի դեպքում տառը թողնվում է նույնությամբ, երկրորդ դեպքում վերցվում է ծածկագրված բառի նախորդը ըստ այբուբենի շարքի հաջորդականության և երրորդ դեպքում՝ վերցվում է նախորդի առաջինը։

Ծածկագրությունը հրատարակել ենք ՊԲՀ-ի 1958 թ. առաջին համարում «Հայկական մի քանի ծածկագրությունների վերծանությունը» հոդվածում (էջ 185—187)։ Հետագայում հայտնի եղավ, որ արտասահմանում նույն տարում այն վերծանել և հրատարակել է նաև Հ. Թորոսյանը։

Այս ծածկագիրը ուշագրավ է նրանով, որ կազմված է հենց ծածկագրության նպատակով և սովորական գրչախաղերից չէ։ Ծածկագրության հեղինակն է Տրդատ եպիսկոպոս Պալյանը։ Նա ծածկագրով հայտնում է այն մասին, որ իրենք մի վանքի բակում փայտե արկղի մեջ գտել են ոչ շատ արժեքավոր իրեր։

Նորից անդրադառնալով մեր նախկին վերծանությանը (ՊԲՀ, 1958, № 1, էջ 485—486), ինչպես և ձեռքի տակ ունենալով նույն ծածկագրության Հովհաննես սարկավագ Թորոսյանի վերծանությունը, որը հրատարակվել է «Պատմություն հայ Տոմարժայի»[17] մեջ, պարզեցինք, որ ինչպես մեզ, այնպես էլ Թորոսյանի մոտ կան առանձին բառերի սխալ վերծանություններ, որոնք և հաշվի ենք առել ներկա վերծանության ժամանակ։

[17] Տե՛ս «Պատմություն հայ Տոմարժայի», հ. Ա, Պեյրութ, 1958, էջ 642—647։



Ծածկագիրը վերծանվում է այսպես.

Ց Փ Դ Դ Տ . Ջ Պ Վ . Ջ Բ Խ Ե Ա Ն .
Տ ր դ ա տ ե պ ս Պ ա լ ե ա ն։

Տ Գ Շ Բ Լ Ո . Կ Լ Ց . Ո Լ Շ
Վ ա ն ք ի ն կ ի ց շ ի ն-

Դ Հ . Վ Գ Ց Լ Գ Ր Գ Զ Լ . Ց Ջ Կ .
ա ծ վ ա ր ժ ա ր ա ն ի մ ե ծ

Վ Ր Բ Ջ Ի . Շ Ե Ց Բ Ի Շ . Ջ
ս ր ա հ ի ն ե ր ք ի ն հ-

Լ Ի Վ Լ Վ Գ Ց Լ Շ . Ե Մ Շ Է Շ .
ի ւ ս ի ս ա յ ի ն դ ռ ն է ն

Ջ Ո Փ Ց Վ . Բ Ջ Բ Ր Լ Կ .
դ ո ւ ր ս, փ ո ք ր ի կ

Բ Գ Կ Լ Շ . Մ Ը Ջ . Ջ Ղ Գ Կ .
փ ա կ ի ն մ է ջ ե ղ ա ծ

Լ Գ Ն Ե Ո Փ Կ Շ Ջ Ց Ո Բ Ո .
ս ա ն դ ո ւ խ ն ե ր ո ւ ն

Վ Ջ Լ Ց . Կ Ո Ղ Ց . Լ Ջ Ր Գ Ն .
վ ե ր ի կ ո ղ մ լ ե ր ա ն,

Բ Ց Ց Ջ Լ . Ր Բ Խ Ո Վ . Ե ՐԳ Գ
փ ո ր ե լ տ ա լ ո վ գ տ ա

Փ . Բ Բ Ր Է . Վ Ո Ց Ո Փ Կ .
ք ք ա ր է ս ն տ ո ւ կ,

Ո Ց Ո Փ Շ . Ց Ը Ջ . Կ Գ Շ .
ո ր ո ւ ն մ է ջ կ ա ն

Ջ Բ Շ Գ Ջ Գ Շ . Լ Ր Ե Ր .. Թ Ը Ե Փ .
զ ա ն ա զ ա ն ի ր ե ր, թ է ե ւ

Ո Պ . Գ Ց Ո Պ Բ Փ . Բ Ց Ը Ի
ո չ ա յ ն չ ա փ ա ր ժ է-

Բ Գ Փ Ո Ց . Ե Շ . Ծ Շ Ե Ց
ք ա ւ ո ր ե ն։ Խ ն դ ր-

Ջ Ց . Ց Է Ո Գ Ց Ը Բ . Ց Լ Ո Ց .
ե մ յ ի շ ե ց է ք մ ի շ տ

Ջ Ա Շ Գ Ր Ի Գ Շ Ի .
զ ա ն ա ր ժ ա ն ի[ս]։

Վերծանությունը կարդացվում է. «Տրդատ եպիսկոպոս Պալեան: Վանքին կից շինած վարժարանի մեծ սրահի ներքին հիւսիսային դռնէն դուրս, փոքրիկ փակին մէջ եղած սանդուխներուն վերի կողմ լերան, փորել տալով գտաք քարէ սնտուկ, որուն մէջ կան զանազան իրեր, թէեւ ոչ այնչափ արժէքաւոր են: Խնդրեմ յիշեցէք միշտ զանարժանիս»:

6. ԿԵՏԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կետագիր ծածկագրությունն իր կառուցվածքով որոշ նմանություն ունի սյունակետագիր ծածկագրությանը, տարբերությունը միայն այն է, որ այստեղ սյունագծերին փոխարինում են հայկական այբուբենի տառանիշերը և կամ կետերը։

Այս ծածկագրությունն ունի երեք տարբերակ։ Առաջին տարբերակում օգտագործում են միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր շարքերի առաջին՝ Ա, Ժ, Ճ, Ռ տառանիշերը և նրանց կողքին աջից շարում կետերը. Ա-ի համար դնում են մեկ կետ, Բ-ի համար՝ երկու, Գ-ի համար՝ երեք և այդ սկզբունքով էլ՝ մյուսները։ Կետերը դրվում են տառանիշերի մոտ հորիզոնական դիրքով, որոշ գաղտնագրերում սակայն կետերը դրված են լինում տառանիշերի վրա։ Եթե ծածկագրերում, վերև հիշված չորս տառանիշից բացի, օգտագործում են նաև այբուբենի այլ տառանիշեր, ապա նրանք չեն գաղտնագրվում, այլ թողվում են իրենց սովորական հնչական արժեքով։

Այս տարբերակի բանալին հետևյալն է.

O.	O..	O...	O....	O.....	O......	O.......	O........	O.........
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
OO.	OO..	OO...	OO....	OO.....	OO......	OO.......	OO........	OO.........
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
OOO.	OOO..	OOO...	OOO....	OOO.....	OOO......	OOO.......	OOO........	OOO.........
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
OOOO.	OOOO..	OOOO...	OOOO....	OOOO.....	OOOO......	OOOO.......	OOOO........	OOOO.........
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Կետագրի երկրորդ տարբերակում այբուբենից չեն առանձնացնում Ա, Ժ, Ճ, Ռ տառանիշերը, այլ օգտագործում են բոլոր տառերը և նրանց մոտ դրված կետերի միջոցով գաղտնագրում։ Այս տարբերակում կետերը մեկով պակաս են վերցվում։ Այսպես, «Ա»-ն կետ չի ընդունում, «Բ»-ն ընդունում է մեկ կետ, «Գ»-ն՝ երկու կետ, և այս սկզբունքներով էլ մյուսները։

Կետագրի երրորդ տարբերակում տառանիշերի և կետերի դերերը փոխվում են. կետերը ցույց են տալիս միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր տառաշարքերը, իսկ տառանիշերը՝ այդ տառաշարքերի համա-

պատասխան տառանիշն իր հնչական արժեքով։ Եվ քանի որ յուրաքանչյուր տառաշարքում միայն ինը տառանիշ կա, ուստի օգտագործում են միայն միավորների տառաշարքը՝ «Ա»-ից մինչև «Թ»։

Կետագիր ծածկագրության հնագույն գործածությանը հանդիպում ենք Արծվանիկի նշանավոր վիմագիր արձանագրության մեջ։ Այդ մասին խոսք կլինի իր տեղում։

* * *

Կետագիր ծածկագրության հնագույն բնագրերից է Գրիգոր Տուտեորդու գաղտնագիրը 1154 թվականից, որը հրատարակել է Ղ. Ալիշանը «Այրարատում» (էջ 167)։ Ծածկագիրը գրի է առնված Տուտեորդու հիշատակարանում։ Հեղինակը հետևյալ տեղեկությունն է հաղորդում ձեռագրի գրչության մասին.

«Ես Գրիգոր նուաստ ի մակս քանակութեանց ուսումնական, ււրտադրութեանց, յազատ տանէ, ստացա զմարգարիտս հաւատոյ, յաւերժ ցնծութիւն անձին եւ յիշատակ հոգոյ։ Ի ՈԳ (1154) թուոյ, կազմեցի ձեռամբ իմով յաշխարհս Այրարատեան ի վանս Յովհաննու»։

Շարունակության մեջ բերում է ծածկագիրը.

«Գ Ր Ի Ա... Ճ...... Ռ..... Վ.
Ա Ր Դ Ա Պ Ե Ռ.... Ճ...... Ռ..... Ա....
Ժ Ժ : ՍՍ: ՁՃ : ԼՌ : ՍՍ : ա յ:

Սա վարժ արտադրողաց, ներսնախորան արտադրական»։

Ծածկագրությունը վերծանվում է. «Գրիգոր վարդապետ որդի Տուտայ»:

Գ Ր Ի Ա . . . Ճ . . . . . . Ռ . . . . . Վ Ա Ր Դ Ա Պ Ե Ռ....
Գ ր ի գ ո ր վ ա ր դ ա պ ե տ

Ճ...... Ռ..... Ա.... Ժ Ժ ՍՍ ՁՃ ԼՌ ՍՍ ա յ
ո ր դ ի Տ ո ւ տ ա յ («Այրարատ», էջ 166)։

(Հրատ. ՀԳԳ, 249)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 16 ձեռագիր «Ճաշոց»-ում ուշ շրջանի մի հիշատակագիր կետագիր ծածկագրով գաղտնագրել է իր անունը։ Ծածկագրությունը հրատարակել է Ա. Սյուրմեյանը և դժվարացել այն վերծանել (Սյուրմ., Եղմ., էջ 106)։ Հետագայում այդ նույն ծածկագրությանը անդրադարձել է Ն. Պողարյանը, ուղղել Սյուրմեյանի հրատարակած ծածկագրի բնագրում նկատվող տպագրական սխալները և վերծանել (Եղմ., I, էջ 100)։ Ստորև բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին.

Գ . . Տ . Բ . . . Հ . . . . Ը . . . Ա
Ե ր ե մ ի ա
Ջ . . . Ա Վ . . Ա . . . Ա Շ . . . Բ . . . Ռ . . .
վ ա ր դ ա պ ե տ

Կարդացվում է. «Երեմիա վարդապետ»։
(Հրատ. ՀԳԳ, 249)։

* * *

Կետագիր ծածկագրության յուրատեսակ կառուցվածք ունի Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 322 ձեռագրի ծածկագիրը, որի մեջ օգտագործել են կետագիր ծածկագրության առաջին բանալին, այսինքն՝ հայկական այբուբենի չորս ինքնակների առաջին տառերը՝ Ա, Ժ, Ճ. Ռ, և նրանց վրա գրված կետերի քանակով գաղտնագրել։ Տվյալ ծածկագիր բնագրում, որպես բացառություն, իրենց հնչական արժեքով օգտագործված են Ռ, Ե տառերը, իսկ Շ-ն տրված է ԵՃ գումարգրով։ Ձեռագիրը բովանդակությամբ «Մաշտոց» է, գրված է 1216 թ. Ստեփանոս գրչի կողմից։

Ծածկագիրը հետևյալն է.

Ռ: Ռ: Ժ: Ռ: Ռ: Ճ: Ռ: Ճ: Ռ: Դ: Ժ: Ա: Ռ: Ռ:

ԵՃ: Ռ: Ժ: Ճ: Ճ: Ճ: Ժ: Ճ: Ռ: Ճ: Ե: Ա: Ճ: Ժ: Ճ:

Ե: Ժ: Ա: Ռ: Ճ: Ռ: Ժ: Ռ:

Ծածկագրի տակ գրի է առնված հետևյալ չափածո հղումը.

Թէ ես գպիր գիտուն,
Դու կարդա զինքս սիրուն,
Ապա թէ չես այր իմաստուն,
Աշխատ առնես զանձնդ ի բուն,
Իբրև ի ծով անկնիս յանհուն,
Վտանգիս յայլեաց տարաբերուն... (Սարգ., III, սյուն. 92)։

Ծածկագրի բնագիրը հրատարակել է բանասեր Բ. Սարգիսյանը Վենետիկի մատենադարանի «Ձեռագրաց ցուցակի» երրորդ հատորում և դժվարացել վերծանել այն։ Ծածկագրության կառուցվածքի մասին նա տվել է հետևյալ ծանոթությունը. «Նոյնէն կա (թ. 324ա) ուրիշ տեսակ ծածկագրութիւն մ'ալ՝ դնելով հայկական նշանագրերուն վրա կետեր որպես տասնականներ և անոնցով բազմապատկել ստորակա տառերը»։

Սարգիսյանի մատնացույց արած կետերը, իհարկե, «տասնյակներ» ըստեղծելու նպատակով չեն և ոչ էլ պետք է նրանցով բազմապատկում կատարել, սակայն այդ կետերը որոշում են հայկական այբուբենի տառանիշերի թվական արժեքները, առանց որի դժվար է վերծանել ծածկագիրը։ Դժբախտաբար, Սարգիսյանն այս նրբությունը հաշվի չի առել և ծածկագիրը հրատարակել է առանց կետերի, իսկ այդ մեծ դժվարություն է ստեղծում ծածկագրության վերծանության գործում։

5—884

Այս ծածկագրի վերծանության համար անհրաժեշտ է առաջին հերթին վերականգնել բաց թողած կետերը, որը, պետք է ասել, կարելի եղավ գլուխ բերել մեծ դժվարությամբ։ Մեր այդ լրացումներից հետո ծածկագիրն ստացավ հետևյալ տեսքը.

Ռ:::: Ռ:: ժ. Ռ. Ռ... ճ::. Ռ. ճ::. Ռ:: Դ ժ. Ա Ռ.

Ռ... Եճ. Ռ::: ժ:: ճ::. ճ.. ճ::. ժ:::: ճ::. Ռ:: ճ.

Ե Ա ճ.. ժ. ճ. Ե ժ:::: Ա Ռ::: ճ::. Ռ:: ժ. Ռ.

Կետագիր ծածկագիր բանալիով տվյալ գաղտնագրությունը վերծանվում է.

Ռ:::: Ռ:: ժ. Ռ. Ռ... ճ::. Ռ. ճ::. Ռ:: Դ ժ. Ա Ռ.
ք ր ի ս տ ո ս ո ր դ ի Ա ս

Ռ... Եճ. Ռ::: ժ:: ճ::. ճ.. ճ::. ժ:::: ճ::. Ռ:: ճ.
տ ո ւ ծ ո յ ո ղ ո ր մ

Ե Ա ճ.. ժ. ճ. Ե ժ:::: Ա Ռ::: ճ::. Ռ:: ժ. Ռ.
ե ա յ ի մ ե ղ ա ւ ո ր ի ս

Այսպիսով, պարզվում է, որ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 320 ձեռագրի ծածկագրում գաղտնագրված է. «Քրիստոս որդի Աստուծոյ ողորմեայ ի[նձ] մեղաւորիս»: *Ձեռագրի հիշատակարանից հայտնի է, որ այն գրել է Ստեփանոսը, հավանական է, նա էլ կազմել է տվյալ ծածկագիրը։ Այդ հաստատապես կարելի կլինի ասել ծածկագրության գրչությունը համեմատելով ձեռագրի գրչության բնագրի հետ։ Մեր այս վերծանությանն, անշուշտ, կանդրադառնան Վենետիկի Մխիթարյանները և կճշտեն՝ թե ո՞րքան ուղիղ են տառանիշերի մոտ մեր կողմից դրված կետերը։*

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 193 ձեռագրում հետագա հիշատակագրող հեղինակներից մեկը թողել է հետևյալ կետագիր ծածկագրությունը, որը բերում ենք ստորև՝ մեր վերծանությամբ.

Ա . . . . Ա . . . . ժ . . . . . . ԱՌ . . . . .
թ է կ ար-

Ա . . . . ԱՌ . . ժ . . ճ . . Ա Ռ . . Ռ . . . . ճ . . . . . .
դ աս ի մ ա ս տ ո

Ռ . . . . ճ . . . . Ա . . . . . . Ռ . . (թ. 174բ)։
ւ ն ե ս

Վերծանվում է. «Թէ կարդաս՝ իմաստուն ես»:

(Հրատ. ՀԳՊ, 193, ՀԳԳ, 250)։

* * *

Ուշագրավ ծածկագրության մի փոքրիկ նմուշ հրատարակել է բանասեր Ս. Հովակիմյանը Նիկոմեդիայի մատենադարանի հայկական ձեռագրերի ցուցակում։ Այն բաղկացած է ընդամենը ութ տառից և զետեղված է հիշատակագրության մեջ։ Ծածկագիրը հետևյալն է.

«Գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքն Նախչւան, ամի տեառն Պ(1351) ձեռամբ տիրացու Գ̈ Ջ̈ Գ⃛ Ա Ջ̇ Բ̇ Բ̈ Հ» *(Նկոմ., էջ 11)։*

Ծածկագիրը չի վերծանված։

Ծածկագիրը կազմված է հետևյալ սկզբունքով. կետերը ցույց են տալիս հայկական այբուբենի իննյակ տառերի շարքը, իսկ տառերը՝ տվյալ իննյակ համարաշարքի միավորները։ Այս ծածկագիրն իր կառուցվածքով շատ նման է սյունակետագիր ծածկագրությանը, այն տարբերությամբ, որ այստեղ գծերի դերը կատարում են կետերը, իսկ կետերի դերը՝ գծերը։ Խնդրո առարկա ծածկագիրը կազմված է փոքր-ինչ այլ սկզբունքով, քան մեզ հայտնի մյուս ծածկագրերը. միավոր թվերով տառանիշերը կետեր չեն ընդունում, տասնավորները ընդունում են մեկ կետ, հարյուրավորները՝ երկու, հազարավորները՝ երեք։

Ծածկագրում նկատվում է մի կետի գրչական սխալ. Ա-ի վրա մի կետ է գրված, որ չպիտի լինի։ Այդ ուղղումը կատարելուց հետո գաղտնագիրը կվերծանվի «Յովակիմէ»։

Հիշատակարանի ամբողջության մեջ այն կկարդացվի. «Գրեցաւ սուրբ *աւետարանս ի Նախչւան ամի տեառն Պ(1351) ձեռամբ տիրացու* Յովակիմէ»: *Տվյալ ծածկագրությունը կազմող հեղինակը, ինչպես տեսնում ենք, տիրացու Հովակիմն է։ Այն գրված է Նախիջևան քաղաքում, 1351 թվականին։ Քանի որ, ըստ բանասեր Հովակիմյանի տեղեկության, ծածկագրության գրչությունը տարբերվում է բուն ձեռագրի գրչությունից, ուստի հասկանալի է, որ ձեռագիրն ավելի վաղ է գրված, քան ծածկագրությունը։*

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 7770 ձեռագրում գրիչն իր անունը գաղտնագրել է կետագիր վերև նշված հաշվումով։ Ծածկագրությունը զետեղված է գրչի հիշատակարանում (ՄԱՄ ձեռ. № 7770, թ. 253ա)։ Այն հրատարակել ու վերծանել է Լ. Խաչիկյանը «Հիշատակարանների» երրորդ հատորում (Հիշ. III, էջ 27)։ Բերում ենք ծածկագրությունը վերծանության հետ միասին.

Ա . Ա . . Ռ . . . . . Ա . ժ . . . . | . |||.. Ա . . . ||||..... իչ։
Ա բ ր ա հ ա մ գ ր իչ

Այսպիսով, պարզվում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 7770 ձեռագրի գրիչն է հանդիսացել Աբրահամը։

Նույն ձեռագրում «ամէն» բառը ծածկագրված է «ա. ճ.. ա....... ճ....» (ՄԱՄ, ձեռ. № 7770, թ. 116բ)։

(Հրատ. ՀԳԳ, 249)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6644 ձեռագրում, որը տոմարական արժեքավոր նյութերի ժողովածու է, Սղիշե Արևելցին թողել է կետագիր հետևյալ ծածկագրությունը.



Վերևում գրված է. «Յիշեցէք ի մաքրայփայլ աղաւթս ձեր Արևելցիս»։ Սա, ինչպես պարզվում է, ծածկագրի վերծանությունն է։

Ծածկագիրը վերծանվում է կետագիր ծածկագրության երկրորդ բանալիով.

Ձ.. . Ր... Ճ.... Բ... Վ.. Գ....
Յ ի շ ե ց է

Ի.. Ր... Ղ.. Ա. Ի.. Վ..
ք ի մ ա ք ր

Ա Ղ... Տ.... Ա. Ղ... Թ... Ա
ա յ փ ա յ լ ա

Ծ.... Ա. Ր.. Ջ... Ջ.. Ծ...
ղ ա ւ թ ս ձ

Գ.. Վ.. Ա. Վ.. Փ.. Դ.
ե ր Ա ր ե ե

Թ... Տ.. Թ.. Ջ..
լ ց ի ս

Կարդացվում է. «Յիշեցէf ի մաfրայփայլ աղաւթս ձեr Արևելցիս»․ (Հրատ. ՀԳՊ, 193, ՀԳԳ, 250, ՊԲՀ, 1958, № 1, էջ 175)։

* * *

Կետագիր ծածկագրության մի նոր տեսակ մեզ հանդիպում է Մուշի ս. Առաքելոց վանքի ձեռագրերից մեկում, որն ընդօրինակված է 1597 թ. Թորոս երեցի կողմից։ Այն գրի է առնված հետևյալ հիշատակարանի մեջ. «Արդ՝ գրեցաւ Աւետարանս այս է գաղէքաղաքս ի Պէլակն որ Պախրալ պեկի կու կոչեն.



յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր» (Մուրադյան և Մարտիրոսյան, էջ 152)։

Վերծանությունը գրված է ծածկագրության վերևում. «Թորոս էրէց»։ Ամբողջության մեջ կկարդացվի. «Թորոս էրէց, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր»։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6862 ձեռագրում (թ. 141բ), որ ընդօրինակված է 1485 թ., գրի է առնված կետագիր և սյունակետագիր հետևյալ ծածկագիրը.



Ծածկագիրը հրատարակել է Լ. Խաչիկյանը և առաջարկել հետևյալ վերծանությունը. «Ծածկագրի առաջին երեք տառերը կարելի է կարդալ «Աբր», վերջին երեքը «համ», միջին երկու տառերը (բ, ն) չենք կարողանում վերծանել։ Թվում է, թե ծածկագիրը պետք է կարդալ՝ «Աբրահամ» (Հիշ. ԺԵ, III, էջ 77)։

Հավանականության կարգով կարելի է ասել, թե ծածկագրության միջին «բ» և «ն» տառերը փոխարինագիր «ս» և «տ»-ն են, որոնք «ստ[ացող]» բառի առաջին երկու տառերն են կազմում։ Այդ վարկածն ընդունելու դեպքում, ծածկագրված Աբրահամին պետք է ընդունել ձեռագրի տերը՝ ստացողը։

* * *

Զմմառի մատենադարանի № 535 ձեռագրի գրիչը թողել է կետագիր գաղտնագրով գրված հետևյալ ծածկագիրը.

Ռ. Ճ..... Ռ...... Ռ... ,, Ճ... Ճ..... Ռ...... Ճ...

Ճ....... Ռ.... Ռ... Ռ.... Ճ..... Ռ.

Հրատարակված բնագրում սպրդել է տպագրական փոքրիկ մի սխալ. երկրորդ տողի ձախից երկրորդ տառանիշը պետք է լինի ոչ թե «Ռ», այլ «Ա»։ Այդ ուղղումը կատարելուց հետո ծածկագիրը կվերծանվի.

Ռ. Ճ.... Ռ..... Ռ... ,, Ճ... Ճ..... Ռ...,, Ճ...
ս ո ւ տ ա ն ո ւ ն

Ճ...... Ա.... Ռ... Ռ.... Ճ..... Ռ.
գ և տ ր ո ս

Հիշատակարանը ամբողջության մեջ կկարդացվի. «Հայցեմք ի ձէնջ լուսներամք սուրբ վարդապէտք, յորժամ առնուք զայս տետրակս ի ձեռս ձեր, յիշեցէք զգծագրողս սորա սուտանուն Պետրոս բանասէր, անունս ունեմ և գործս ոչ և թափուր ամենայն բարեաց գործոց... Գրեցաւ ի թիվն ՌՃԾԴ (1705) սեպտեմբեր ամսոյն Լ (30) օրն Վարագայ սուրբ խաչի տօնին կատարեցաւ»։ Վերծանված է հրատարակչի կողմից։

Այսպիսով, պարզվում է, որ տվյալ ձեռագրի գրիչն է հանդիսացել Պետրոս բանասերը։

1705 թվականի սեպտեմբերի 30-ին, իրոք, եղել է Վարագա սուրբ խաչի տոնը։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5198 ձեռագիրը (թ. 170բ) պարունակում է տառակետ ծածկագրության խմբի հետևյալ ծածկագիր բնագիրը.

«Արդ՝ գրեցաւ սուրբ տառս, որ ասի Մաշթոց, ձեռամբ բազմամեղ և անիմաստ սուտանուն  ջահրնկալի, անուամբ

Ն ո ր տ ո ւ ն կ

ջահրնկալ և գործովս մեղսամած և մեղասէր։ Արդ՝ երես անկեալ աղաչեմ ձեզ արտասուաթոր աչաւք, որք հանդիպիք այս աստուածախաւս տառիս ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք մաքրափայլ յաղաւթս ձեր զանարժան գծող սորա և զուսուցիչն իմ ԱԱ. ՍՍ. ՇՇ. ԽԽ. ԵԵ. ՃՃ...»։

Բերված հիշատակարանում առաջինը տառակետ ծածկագրություն է, իսկ երկրորդը՝ գումարգիր։

Տառակետ ծածկագրությունը վերծանվում է. «Նորտունկ»։

(Հրատ. ՀԳԳ, 251)։

* * *

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 234 ձեռագրում ծածկագրված է հետևյալ բնագիրը.

«Գրեցաւ գիրս ձեռամբ յոգնամեղ և տրուպ Բ Բ Բ Է Ջ Դ Բ։ Ռ Ռ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. 33. ՄՄ. ԺԺ» (Սարգ., II, սյուն. 536)։

Ծածկագիր բնագիրը հրատարակել է Բ. Սարգիսյանը, բայց դժվարացել է վերծանել, նշելով. «Յուրաքանչյուրին վրա կետեր են դրված, որ անուն և մականուն կձևացնեն, բայց ինձ համար մնացին անլուծելի»։ Դժբախտաբար, Սարգիսյանը այստեղ ևս հարկ չի համարել նշելու, թե ո՛ր տառանիշի վրա քանի կետ է եղել, որպեսզի կարելի լիներ ճիշտ արժեքավորել նշանագիրը և դյուրին վերծանել ծածկագրությունը։

Մեզ դժվարությամբ հաջողվեց որոշել, թե ինչ տառի վրա քանի կետ պետք է եղած լինի և վերծանել ծածկագրությունը։

Ծածկագիրը, մեր կարծիքով, կարելի է կետադրել և վերծանել.

Ա ի մ ե ո ն ի

Շարունակությունը գումարգրով ծածկագիր է և վերծանվում է.

ՌՌ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. 33. ՄՄ. ԺԺ
Ս ի մ ե ո ն ի

(Հրատ. ՀԳՊ, էջ 195)։

7. ՕՂԱԿԵՏԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրության այս տեսակը թեև հայ մատենագրության մեջ կոչվում է «գիր տարերաց», բայց մենք հարմար համարեցինք անվանել «օղակետագիր», որովհետև այն բաղկացած է օղերից և կետերից. օղերը հիմք են ծառայում թվական չորս շարքի համար՝ միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների, իսկ կետերը՝ այս շարքերի մեջ մտնող տառերի հաջորդականության։ Մեկ օղը գործ է ածվում միավոր թվերի համար, երկուսը՝ տասնավորների, երեքը՝ հարյուրավորների, իսկ չորսը՝ հազարավորների։ Ծածկագրության այս տեսակը իր ձևով և կառուցվածքով նմանվում է սլավոնական մատենագրության մեջ գործածվող «значковый разряд» կոչվող ծածկագրությանը։

Մաշտոցի անվան մատենադարանի № 8716 ձեռագրում (թ. 53ա) բացատրված է ծածկագրի վերծանության սկզբունքը.



Ծածկագրության մեջ օղերն ու կետերը միակցվում են իրար հետ մի քանի ձևով. մի դեպքում կետերը շարվում են օղերի աջ կողմում առանձին կամ զույգերով, մի այլ դեպքում դրվում են օղերի վրա համար դասավորությամբ։ Օղերն իրարից մեծ մասամբ անջատ են ներկայացվում, բայց պատահում է, որ կպչում են իրար։

Օղակետագիր ծածկագրության բանալին.



Նոր Ջուղայի մատենադարանի № 593 ձեռագրում, որը գրված է Սպահանում 1699 թվականին Աստվածատուր գրչի կողմից, հանդիպում են մի քանի տեսակի ծածկագրեր, այդ թվում նաև՝ օղակետագիր փոքրիկ մի ծածկագրություն։

Ծածկագրությունը հրատարակել է Լ. Գ. Մինասյանը Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում և վերծանել։ Բերում ենք ծածկագիրը՝ վերծանության հետ միասին։



(ՆՋ, II, էջ 74)

Կարդացվում է. «Մարդ, հրեշտակ»։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4676 ձեռագրում (թ. 379ա), որը «Ճառընտիր» է՝ գրված 15-րդ դարում Հովհաննես և Ստեփանոս գրիչների կողմից, գրի է առնված հետևյալ ծածկագրությունը։ Բերում ենք վերծանության հետ միասին։



Վերծանվում է «Տ[է]ր Գրիգոր»:

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 249 ձեռագրում, որը «Տոնացույց» է՝ գրված Աստվածատուր գրչի կողմից Սպահանում 1501 թ., հանդիպում ենք փոքրիկ օղակետագիր ծածկագրության, որը հրատարակել է Կյուլեսերյանը Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում և տողատակ տվել հետևյալ ծանոթագրությունը. «Բնագրի մեջ նշաններու քովը նույն շարքի վրա կետեր դրված են վերևը, վարեն վեր բարձրացող դիրքին մեջ» (Անկ., սյուն. 1133)։ Նա ծածկագիրը վերծանել է այսպես. «Կտակիկ այս է», որը բացահայտ մտացածին է. հինգերորդ նշանագիրը երբեք «կ» տալ չի կարող, իսկ «ի»-ի նշանագիրը բացակայում է։ Փոքրիկ ուղղումով հնարավոր ենք համարում առաջարկել հետևյալ վերծանությունը.



Եթե ճիշտ է մեր վերծանությունը, այդ դեպքում տվյալ ծածկագրությունը պետք է կարդալ. «Կտակս այս է»:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 193 ձեռագրում, որի մասին այլ ծածկագրերի կապակցությամբ խոսք է եղել, օղակետագիր ծածկագրված է. «Յակոբ» անունը։ Բերում ենք այն վերծանության հետ.



* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագրում, որը 1681 թվականի գրչություն ունի և որի գրիչն է Գրիգոր Վարագեցին, ինչպես ասել ենք եղբայրագիր ծածկագրերի մասին խոսելիս, բերում է մի հանելուկ և նրա լուծումը օղակետագիր ծածկագրով։ Օղակետագիր գաղտնագրված է հետևյալ հանելուկի տակ.

Սուլտան մի կայր ի յԵգիպտոս,
Շատ չարագործ քան զԱրիոս,
Առ նա գեսպան յղեաց Քրիստոս,
Մեծ սքանչելօք մարդկան հըրոս։

Եղբայրագիրը վերծանվում է.
Ք Բ Տ Բ Յ Շ Յ
փ ա ր ա ւ ո ն

Օղակետագիրը նույնպես վերծանվում
է «փ ա ր ա ւ ո ն»։

Նույն ձեռագրում ծածկագիրը գաղտնագրված է օղակետագիր, գումարագիր, գավազանագիր և եղբայրագիր բանալիներով.

Թ. 385բ

Ի խընկաբեր բլրին վերայ,
Ջոր կիպարի ծառ մի տեսայ,
Ոսկի խնձոր մի կայ ի նա,
Ով չհաւատայ՝ ինքն է Յուդայ։ ԾԲՊ։

Ծածկագրված է «խաչ» բառը չորս բանալիներով՝

Փոխարինագիր՝ ԾԲՊ

Օղակետագիր՝ 

Գավազանագիր՝ 

Գումարգիր՝ ԴԺ Ա ԷՆ

8. ԱՋԻՑ ՁԱԽ ԵՎ ՇՐՋԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աջից ձախ ծածկագրություն առաջին անգամ օգտագործված ենք գտնում Արծվանիկի վիմագիր արձանագրության մեջ։ Այդ մասին խոսք կլինի առանձին՝ այլ ծածկագրերի կապակցությամբ։

Աջից ձախ ծածկագրի ուշագրավ մի նմուշ հանդիպում է Մաշտոցի անվան մատենադարանի № 7736 ձեռագրում, որը հայտնի է Մողնու ավետարան անունով։ Այն գրված է Հովհաննես գրչի կողմից 1053—1060 թվականներին

Արշարունիքի Սանդղկա վանքում։ Ձեռագիրը հին հայկական գրչության եզակի նմուշներից մեկն է՝ թե՛ իր կատարողական արվեստով, թե՛ իր հնությամբ, անաղարտությամբ ու գեղեցկությամբ։ Ծածկագրությունը գրի է առնված գրչի հետևյալ հիշատակարանում. «Յովհաննիսի մեղաւորի գրողի գրոցս ողորմես Աստուած, ամէն։ Տէր տուր Դաւթի յարութիւն կենաց, ամէն Ն Ի Ղ Ո Ր Գ Ա Ե Մ Ր Ղ Ո Ծ Ա Ր Տ Յովհաննէս» (թ. 189ա)։ Ծածկագիրը ընդգծված տառաշարքն է։

Ծածկագրին ժամանակին ծանոթ է եղել Մ. Տեր-Մովսիսյանը և իր «Համահավաք ձեռագրաց ցուցակում» այդ տողաշարքը համարել լուծման կարոտ հանելուկ, թեև ինքը չի փորձել այն վերծանել։

Վերջերս ձեռագրի ուսումնասիրությամբ հանգամանորեն զբաղվեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Մաթևոսյանը, որը վերծանեց ծածկագիրը և հրատարակեց այն «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականում (№ 10, էջ 383)։ Ծածկագիրը աջից ձախ վերծանվում է. «Տ[է]ր Ա[ստուա]ծ ողորմեա գրողին»։

* * *

Աջից ձախ ծածկագրություն է գրի առնված Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 283 ձեռագրում, որը Ներսես Շնորհալու «Մատթեոսի ավետարանի մեկնությունն» է։ Ծածկագրության հեղինակը գրչագրի պատվիրատուն է։ Վերջինս 1486 թ. թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Յիշեսջիք... Երջանիկ րաբունապետին իմոյ, եւ սրբազան հաւրս բարերարի, որ Ամլորդուն անուամբն վերակոչի Գ, Ջ, Յ, Ճ, Դ, Չ, Մ, եւ նորին տրուպ աշակերտիս Ս, Ի, Ս, Ո, Ն, Ա, Փ, Ե, Տ, Ս։ Այլ եւ՝ հոգեւոր եւ մարմնաւոր ծնողաց մերոց, եւ ամենայն արեան մերձաւորաց մերոց եւ ամենայն երախտաւորացն մերոց, որ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ...» (թ. 566բ)։

Ծածկագիրը վերծանել և հրատարակել է Ն. Պողարյանը (ԵՂՄ., II, էջ 105)։

Ծածկագրի առաջին մասը գաղտնագրված է փոխարինագրի երկրորդ և երրորդ բանալիներով և վերծանվում է. «Յ ո վ ա ն է ս»։ Երկրորդ մասը ծածկագրված է աջից ձախ բանալիով և վերծանվում է. «Ս տ ե փ ա ն ո ս ի ս»։

* * *

Կիրակոս անունով մեկը աջից ձախ գաղտնագրով ծածկագրություն է թողել Մաշտոցի անվան մատենադարանի № 112 ձեռագրում, որը Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք գանձուց» աշխատությունն է՝ արտագրված 1498 թ. Եկեղյաց գավառի Կապոսի գրչության օջախում։ Հետագայում, գրչի հիշատակարանի շարունակության մեջ, Կիրակոսը գրել է մի ծածկագիր. «Մ, Ա, Ն, Ի, Լ, Ի, Տ, Զ, Ն, Ի, Է, Թ, Ն, Ա, Ր, Ե, Բ, Ր, Ա, Ջ, Ա, Հ, Յ, Ա, Վ, Ս, Ի, Զ, Ր, Գ, Ս, Ո, Կ, Ա, Ր, Ի, Կ»։

Ծածկագիրը վերծանել և հրատարակել է Լ. Խաչիկյանը։ Աջից ձախ կարդացվում է՝ «Կիրակոս գրչիս վայ հազար բերան՝ թէ ինչ տի լինամ» (Հիշ. ԺԵ, էջ 273)։

* * *

Շրջագիր ծածկագրության մեջ սովորական հայկական տառանիշերը գրվում են շուռ տված ձևով։ Շրջագիր ծածկագրությունը, ինչպես երևում է, լայն գործածության մեջ դրված գաղտնագրերից է եղել, դասավանդվել է գրչության դպրոցներում։ Անդրեաս Եվդոկացու 1585 թ. կազմած հայոց լեզվի գրքի մեջ բերվում է այդ ծածկագրության բանալին։



Շրջագիր ծածկագրության նմուշներ մեզ պատահում են նաև վիմագիր արձանագրությունների մեջ։ Ծածկագրության այս խմբին է պատկանում բանասեր Գ. Տեր-Մկրտչյանի Սևանի կղզում հայտնաբերած մի արձանագրությունը (1443 թ.), որի տեքստը և վերծանությունը նա տպագրել է «Շողակաթ»-ի մեջ։

Վիմագիր այդ արձանագրությունը շուռ տված կողմով կարդացվում է. **«Սա է Փրկիչ աշխարհի և յոյս հաւատացելոց, որf երկրպագէf զ Կ ւրապետ fահ անայ աղաւրս յիշեցէf Զաfար կազմող ՊՂԲ»** (Գ. Տեր-Մկրտչյան, Աջից ձախ հայ գրություն, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 139)։

* * *

Պատմական գիտությունների դոկտոր Կ. Գ. Ղաֆադարյանը իր «Հաղբատ» խորագրով աշխատության մեջ հրատարակել է վանքի մեծ գավթի հյուսիս-արևելյան անկյունի մոտ գտնվող տապանաքարի հետևյալ շրջագիր արձանագրությունը[18].



Ղաֆադարյանը այն վերծանել է. **«Այս հա(ն)գի(ս)տ Մկ(րտիչ) վ(ար)դ(ա)պ(ետ)ին»**: Նա անդրադարձել է նաև շրջագիր գրության գործածության

[18] Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 127։

պատճառին և հետևյալ բացատրությունը տվել. «Խիստ ուշագրավ է այս արձանագրության ծածկագիր լինելը, որը թեև հազվադեպ է, բայց մի քանի տեղերում հանդիպում է։ Ինչու են տապանագրերը շրջագրով փորագրել, չգիտենք։ Հավանական է, որ լոկ հետաքրքրություն շարժելու համար, այլապես, եթե Մկրտիչ վարդապետի անունը հրապարակով տալու իրավունք չլիներ, այդ դեպքում նրան գավթի ներսում չէին թաղի»[19]։ Ղաֆադարյանը միաժամանակ առարկում է Գ. Տեր-Մկրտչյանի առաջ քաշած այս տեսակետը, որ իբրև թե շրջագիր գրելու երևույթը կապված է հնագույն շրջանի սեմական գրության (աջից ձախ) ավանդույթի հետ։

Կարելի է նշված շրջագիր ծածկագիրը փոքր-ինչ այլ ձևով վերծանել. «Այս (է) հա(ն)գի(ս)տ Ղ(ու)կ(աս) վ(ա)ր(դա)պ(ետ)ին»։

9. ԲԱՑԱԿԱ ԱՆԴԱՄՈՎ ԾԱԾԿԱԳՐԵՐ

Ծածկագրերի այս խումբը, որը հայտնի է նաև եռագիր ծածկագրեր անունով, հայկական ամենաբարդ և, միաժամանակ, ամենահետաքրքիր ծածկագրերից է։ Մեզ հայտնի է այս ծածկագրության միայն երեք բնագիր, որոնցից մեկը գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանի № 193 ձեռագրում, մյուսը՝ Բոդլյան գրադարանի հայկական հավաքածուի № 2 ձեռագրում, երրորդը՝ միայն մի տող, առանց աղբյուրը ցույց տալու հրատարակել է Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ։

Բացակա անդամով ծածկագրերից Մաշտոցի անվան մատենադարանի № 193 ձեռագիրը բովանդակությամբ Աստվածաշնչի մաս է՝ ընդօրինակված 1299 թ., Արճեշում, Հովսեփ գրչի կողմից։ Ձեռագիրը ծանր անցյալ է ունեցել. ժամանակին այն գտնվել է գերության մեջ։ Ետ գնվելուց հետո նրանում արվել է հետևյալ հիշատակագրությունը. «Կամաւն Աստուծոյ ազատեցաւ գիրքս ի Թուրքաց և ի տէրն դարձաւ յամի Պ և ԽԱ (1392) թուին...» (թ. 95բ)։

Ծածկագիրը հետևյալն է.

ՂՋՔ. ՀՁԻ. ՁՈՑ. ԺՃՌ. ԵՄՇ. ԽՆՏ. ԺՃՌ. ԲԻՄ. ԲՄՍ. ԲԻՍ.

ԺՃՌ. ԲԻՄ. ԴԽՆ. ՁԿՑ. ԷՀՁ. ԴԽՏ. ՁԿՑ. ԲԻՍ. ԴԽՏ. ԾՇՐ.

ԲԻՄ (թ. 174բ)

Ծածկագրի բնագիրը, ինչպես կարելի է նկատել, կազմված է երեք տառախմբերից՝ կազմված որոշ համակարգով. զուգակցված են միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր համարական շարքերի նույն համարակարգի տառերը. այսպես, վերը բերված շարքի առաջին տառանիշերն են Ղ (90), Ջ (900), Ք (9000), երկրորդը՝ Հ (70), Ձ (700), Ի (7000), երրորդը՝ Զ (6), Ո (600), Ց (6000) և այլն։ Դժվար չէ նկատել, որ առաջինի մեջ կան Ղ, Ջ, Ք տառերը, բացակայում է Թ տառը, երկրորդի մեջ կան Հ, Ձ, Ի տառերը, բա-

[91] Նույն տեղում, էջ 181։

ցակայում է է-ն, երրորդում կան Զ, Ո, Ց տառերը, բացակայում է Կ-ն և այլն։ Եվ ահա հենց այդ բացակա տառանիշերն են գաղտնագրվածները։ Այս կարգի ծածկագրության մեջ, ինչպես տեսնում ենք, գաղտնագրված տառանիշը պետք է փնտրել ոչ թե ներկայացված տառանիշերի, այլ նրանցից դուրս՝ համաշարքից բացակաների մեջ։

Հ. Աճառյանը հրատարակել է այս ծածկագրության հետևյալ բանալին.

ժճռ	իմս	լյվ	խնտ	ծշր	կոց	հչւ	ձպփ	ղջք
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
աճռ	բմս	գյվ	դնտ	եշր	զոց	էչւ	ըպփ	թջք
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
աժռ	բիս	գլվ	դխտ	եծր	զկց	էհւ	ըձփ	թղք
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
աժճ	բիմ	գլյ	դխն	եծշ	զկո	էհչ	ըձպ	թղջ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Վերծանության սկզբունքը հայտնի դառնալուց հետո, առանց առանձին դժվարության հնարավոր եղավ վերծանել № 193 ձեռագրի ծածկագիրը.

ղջք.	հչւ.	զոց.	ժճռ.	եծշ.	խնտ.	ժճռ.	բիմ.
թ	է	կ	ա	ր	դ	ա	ս
բմս.	բիս.	ժճռ.	բիմ.	դխն.	զկց.	էհչ.	դխտ.
ի	մ	ա	ս	տ	ո	ւ	ն
զկց.	բիս.	դխտ.	ծշր.	բիմ.			
ո	մ	ն	ե	ս			

Կարդացվում է. «Թէ կարդաս իմաստուն ոմն ես»: Այդ նույն վերծանությունը գրված է ծածկագրի կողքին։

(Հրատ. ՀԳՊ, 216—217, ՀԳԳ, 266, ՊԲՀ, 1958, 1, էջ 178—179)։

* * *

Հ. Աճառյանի բերած մեկ տողից բաղկացած բացակա անդամով ծածկագիրը հետևյալն է[20] (բերում ենք այն վերծանության հետ միասին).

ԲԻՄ	ԶԿՑ	ԷՀՉ	ԵԾՇ	ԻՄՍ	ԴԽՏ
Ս	ո	ւ	ր	բ	ն
ԲԻՍ	ԾՇՐ	ԲԻՄ	ԵԾՇ	ԶԿՑ	ԸՁՓ
Մ	ե	ս	ր	ո	պ

(Հրատ. ՀԳԳ, 265, ՀԳՊ, 217)։

* * *

Օքսֆորդի Բոդլյան գրադարանի հայկական բաժնի № 2 ձեռագրում, որը բովանդակությամբ «Գանձարան» է՝ ընդօրինակված 1610 թ. Սիմեոն գրչի կողմից, գրի է առնված ծածկագիր հիշատակարանի հետևյալ մասում. «Արդ՝

20 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 467—468։

եղև գրաւ սուրբ գանձարանիս յամի շրջագայութեան Արամազեան տոհմի, Հայկազեան սեռի, աբեթական տոմարի ի ԻԱ (21) յոբելենի և իններորդ յարաբարդի, Օՙոստոս ամսոյ Ի և Ե.երորդի (25-րդ) օրն շաբաթի, ի յաշխարհս Իլախաց ի քաղաքս Լվով, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, Ֆրանգաց ազգի գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անարժան, անծան և անծող գրչի ԲԻՄ, ԲՄՍ, ԲԻՍ, ՀՉՒ, ԶԿՑ, ԴԽՏ. լոկ անուն երիցուիս, որդի Լուցքացի պարոն Նիկոլայոսին» (Տիրայր, I տետրակ, էջ 23—24)։

Ձեռագիրը նկարագրել է Տիրայր եպիսկոպոսը Բոդլյան գրադարանի հայկական ձեռագրերի ցուցակում (որը, դժբախտաբար, չի հրատարակված) և դժվարանալով վերծանել ծածկագրությունը, այն նույնությամբ պատճենահանել է նկարագրության հարցակարգում։

Վերոբերյալ հիշատակարանի առաջին մասում գաղտնագրված է թվականը, որը վերծանել է Տիրայր եպիսկոպոսը. 21 հոբելյանը հավասար է 1050-ի, որին պահանջվում է ավելացնել ինը («իններորդ յարաբարդի»), լինում է 1059, որին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1610 թ.։

Ծածկագիրը վերծանվում է.

ԲԻՄ.	ԲՄՍ.	ԲԻՍ.	ՀՉՒ.	ԶԿՑ.	ԴԽՏ.
Ս	ի	մ	է	ո	ն

Նման վերծանությամբ Բոդլյան գրադարանի հիշատակարանը կամբողջանա հետևյալ ձևով. «Արդ՝ գրեցաւ այս սուրբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անարժան, անծան և անծող գրչի Սիմէոն լոկ անուն երիցուիս որդի Լուցքացի (խոսքը Լեհաստանի Լուցք քաղաքի մասին է—Ա. Ա.) պարոն Նիկոլայոսին»։

Ծածկագրի հեղինակը, ինչպես տեսնում ենք, Սիմեոնն է, որը ձեռագրի գրիչն է, որի հիշատակագրություններից ուրիշ մեկի մեջ ընթերցողից խնդրում է հիշել իրեն. «Յիշեսջիք… զտառապեալ գծողիս Սիմէոն»։

(Հրատ. ՀԳՊ, 217—218, ՀԳԳ, 265, ՊԲՀ, 1958, № 1, էջ 179)։

10. ՍՅՈՒՆԱԿԵՏԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրության այս տեսակը կազմված է սյուներից և կետերից, այդ պատճառով էլ կոչվում է սյունակետագիր։ Ուսումնասիրողներից ոմանք նրան այլ անուններ են տալիս՝ «սյունագիր», «կետագիր», «գծակետագիր» և այլն, բոլոր դեպքերում նկատի ունենալով նրա սյուներից և կետերից կազմված լինելը։

Սյունակետագիր ծածկագրության կառուցվածքը պարզ է. վերցնում են մեկից չորս գծիկներ և նրանց կողքին դրված կետերի քանակով որոշում ծածկագրված տառանիշը։ Միավորների համար (Ա-ից՝ Թ) դնում են մեկ գծիկ, տասնավորների համար (Ժ-ից՝ Ղ)՝ երկու գծիկ, հարյուրավորների համար (Ճ-ից՝ Ջ)՝ երեք գիծ, հազարավորների համար (Ռ-ից՝ Ք)՝ չորս գիծ։ Գծիկներին տալիս են ուղղահայաց ուղղություն և նրանց կողքից կամ վե-

բեից շարում կետերը։ Կետերը դրվում են հաշվի առնելով յուրաքանչյուր տառանիշի՝ տառաշարքում ունեցած թվական արժեքը։ Ըստ որում, կետերը դրվում են սյունագծիկների աջից՝ հորիզոնական, բայց հաճախ, երբ սյունագծերը կարճ են, հարկադրված են լինում կետաշարքը վերևում թեքել դեպի աջ և կամ ձգել դեպի վեր։

Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում սյունակետագրի մի քանի բանալիներ են հայտնի՝ № 2370, թ. 1ա, № 5613, թ. 375բ, № 5943, թ. 21ա, № 8255, թ. 95ա և ուրիշներ։ Անհրաժեշտ ենք համարում բերել Անդրեաս Եվդոկեցու գրի առած բանալին 1598 թվականից (ՄԱՄ, № 2370, թ. 391ա)։

Սյունակետագրի առաջին բանալին.



Սյունակետագիր որոշ ծածկագրությունների մեջ հաճախ տառանիշերի հաջորդականությունը հաշվված է լինում մեկ կետ պակասով։ Այսպես, օրինակ, եթե Ա տառանիշի մոտ դրվում է մեկ կետ, այս դեպքում կետ չի դրվում, Բ տառի մոտ երկու կետի փոխարեն դրվում է մեկ կետ և այդպես, մեկ կետի պակասով, հաշվվում են մյուս բոլոր տառանիշերը։

Սյունակետագրի երկրորդ բանալին.



Սյունակետագիր ծածկագրության հնագույնը 11-րդ դարից է. այն հանդիպում է Արծվանիկի վիմագիր արձանագրության մեջ, որը սակայն եղծված վիճակում է, օգտագործված է մեզ անծանոթ տառանիշերի հետ և չի ենթարկվում վերծանության։

Սյունակետագիր ծածկագրի անվնաս մեզ հասած հնագույնը կարելի է համարել Նոր Ջուղայի մատենադարանի № 28 ձեռագրի գաղտնագիրը՝ 1220 թվականից։ Այն օգտագործված է գումարգիր ծածկագրության հետ միասին։

Տարիներ առաջ, ծանոթ չլինելով Արծվանիկի և Նոր Ջուղայի նշված սյունակետագիր ծածկագրերին, մենք մեր «Հայ գրի և գրչության պատմության» և «Հայ գիր և գրչություն» գրքերում սխալմամբ սյունակետագրի հնագույնն ենք համարել Մաշտոցի անվան մատենադարանի № 763 ձեռագրի սյունակետագիր ծածկագիրը 1408 թվականից (ՀԳՊ, էջ 190, ՀԳԳ, էջ 246)։

Նոր Ջուղայի ձեռագրի գլխավոր հիշատակարանից երևում է, որ այն գրել է սկսել Սուքիաս անունով մի քահանա, բայց ձեռագրի գրչությունը չավարտած մահացել է։ Այնուհետ ձեռագրի գրչությունը շարունակել է Վարդան գրիչը և ավարտել Արքայակաղնու գրչության օջախում։ Հիշատակարանում այդ մասին ասվում է. «Ի թուականիս Հայոց ՈԿԹ (=1220) եղեւ աւարտումն աստուածախաւս մատենիս... Որում ցանկացող եղեալ եղբայր ումն Սուքիաս սրբասէր քահանայ, ստանալ զսա յաղագս անձին իւրոյ, ձեռնարկեաց գրել և ոչ ժամանեաց, զի չոգաւ առ Տէրն իւր։ Եւ եա այնր այլ ումն աստուածասէր քահանայ ստացեալ զսա եա աւարտել զսա վասն յիշատակի իւրոյ և ծնաւղաց իւրոց։ Եւ հանդիպեալ իմոյ անարժանութեանս Վարդանայ գրիչի՝ վերջացելոյ յամենայն բարեաց, կատարեցաւ զսա ի վանս սուրբ եւ հռչակաւոր ուխտիս Արքակաղնոյ, ընդ հովանեաւ սրբոց Զօրավարաց եւ սրբոյ Նշանիս Կոստանդեայ։ Յայսմ ամի, ի մոտ տարոյս, հանգեաւ թագաւորն Լեւոն, ողորմեսցի նմա տէր Քրիստոս։ Արդ՝ որք ակտիք ի սմանէ, արժանի արասջիք յիշատակի զաշխատողքս ի սմա՝ զՍուքիասն եւ զՎդնաւիոս, որ ստացաւ զսայ յարդար ընչից իւրոց...» (ՆՁ, I, էջ 43)։

Հիշատակարանի շարունակության մեջ գրի են առնված սյունակետագիր և գումարգիր ծածկագրեր, որոնք հրատարակված են Նոր Ջուղայի հիշատակարանների երկրորդ հատորում և վերծանված։ Բերում ենք ծածկագրերը՝ վերծանություններով.



Կարդացվում է. «Իգնատիոսի է ավետարանս»: Իգնատիոսը, ինչպես երևում է վերոբերյալ հիշատակարանից, ձեռագրի ստացողն է, մեկենասը։

Գումարգիրը վերծանվում է.

ԲԱ, ՌՏ, ԳԲ, Ա, ԺԻ, ՌՍ, Ա, ՌՏ
Գ ր ե ա լ Վ ա ր

ԲԲ, Ա, ՄՄ, Ա, ԲԱ, ՍՎ, ՆՅ, ԺԺ
դ ա ն ա գ ր չ ի

Կարդացվում է. «Գրեալ Վարդանա գրչի»: Վարդանը, ինչպես ասացինք, ձեռագրի ստացողն է։

Ուշադրության արժանի է հիշատակարանում Լևոն Թագավորի մահվան տարեթվի մասին հաղորդվող տեղեկությունը. «ի մուտ տարոյս ՈԿԹ(=1220) հանգաւ Թագաւորն Լեւոն»։ Օրմանյանը, հենվելով «Յայսմաւուրքի» տեղեկության վրա, Լևոնի մահը դնում է 1219 թ. մայիսի 26-ին։ Ղ. Ալիշանը ևս նրա մահվան թվականը համարում է 1219 թ. մայիսի 26-ը։ Քանի որ ներկա հիշատակարանի հեղինակը գրել է Լևոնի մահվան տարում, կարծում ենք, որ այս ավելի վստահելի աղբյուր է, քան «Յայսմաւուրքը»։ Հետևապես, ճիշտ կլինի Լևոն Թագավորի մահվան տարին ընդունել ոչ թե 1219 թ. մայիսը, այլ 1220 թվականի սկիզբները։

* * *

Սյունակետագիր ծածկագրության հնագույն նմուշներից է Գ. Սրվանձտյանի «Թորոս աղբարի» առաջին հատորում հրատարակված բնագիրը, որը, ըստ ձեռագրի հիշատակարանի, գրված է «Ի Թուաբերութեան յոբելեան ռումարիս ՉԽԷ»-ին (=747), այսինքն՝ 1298 թ.։ Բերում ենք ծածկագրությունը վերծանության հետ միասին.



Կարդացվում է. «Տ[է]ր Վարդան աբեղէս»:

* * *

«Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում բանասեր Լ. Մինասյանը հրատարակել է № 175 (№ 714) ձեռագրի սյունակետագիր ծածկագրությունը և վերծանել սյունակետագրի բանալիով (ՆՋ, II, էջ 186)։ Ձեռագրի գրչությունը XIII—XIV դարերից է։ Ծածկագրում նկատվում է ա տառի բացթողում (երկրորդ տողի չորրորդ տառանիշից հետո), որն ավելացված է վերծանվող բնագրում։ Գաղտնագրված է երկրորդ բանալիով։

Տվյալ ծածկագրությունը, ինչպես երևում է, գրված է Հովհաննես քահանայի կողմից, որն իր թողած հիշատակագրության մեջ դիմել է ընթերցողին՝ հետևյալ խնդրանքով. «Աղաչեմ զամենեսեան՝ յիշեցէք զգծող սորայ

զՅովհաննէս զմեղուցեալ եւ սուտանուն քահանայ» (թ. 142ա)։ Ծածկագրության տակ գրված է հղում. «Ով գիտէ՝ կարդա, ով որ չգ[ի]տէ՝ նա լակոտ ա» (ցույց ճիշտ լինի՝ լակոտա)։ Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին.



Կարդացվում է. «Մեղա տ[է]ր ողորմեա ինձ ծառաիս Յովանիսիս»:

* * *

Արիստակես գրիչը 1408 թ. «Մանրուսմունք»-ի բնագիր է ընդօրինակել Դարանաղյաց գավառի Ավագ վանքում և թողած հիշատակարանում գաղտնագրել իր անունը փոխարինագիր և սյունակետագիր ծածկագրերով։ Ի դեպ, գրիչը հիշատակարանում գանգատվում է ժամանակի դառնությունից և աննդի պակասությունից. «Ո՜հ ո՜հ դառն ժամանակիս ...գի շաղգամով մալէզն (ալյուրով խուսը) և կորեկ ճաթն օգնական եղև մեզ գրելն» (ՄԱՄ ձեռ. № 763, թ. 318բ)։ Ծածկագրերը հիշատակարանների հետ միասին հրատարակել է Լ. Խաչիկյանը և վերծանել (Հիշ. ԺԵ, I, 89)։ Բերում ենք սյունակետագիր ծածկագիրը վերծանության հետ միասին։



Վերծանվում է. «Ռեստակէսս»:
(Հրատ. ՀԳԳ, 246, ՀԳՊ, 190)։

* * *

Ջմմառի մատենադարանի № 198 ձեռագրում, որը բովանդակությամբ «Ժամագիրք» է՝ գրված 1485 թ. Եղրդուտի վանքում, ընդօրինակող Հովհաննես գրիչն իր անունը հիշատակարանում գաղտնագրել է սյունակետագիր ծածկագրով։ Բերում ենք հիշատակարանից մի հատված ծածկագրության հետ միասին։ «Արդ գրեցաւ սա ի թուականիս ՋԼԵ (=1486) ընդ հովանեաւ սուրբ վանացս, որ Եղրդուտ կոչի.



Յ ո հ ա ն ի ս ի է *բանս:*

(Հիշ. ԺԵ, III, էջ 467)։

Ծածկագրությունը հիշատակարանի հետ միասին հրատարակել է Լ. Խաչիկյանը և վերծանել. «Յոհանիսի է բանս»։

* * *

Մոսկվայի Լենինյան գրադարանի ձեռագրատան Հայկական հավաքածուի № 10 ձեռագրում գրի է առնված սյունակետագիր հետևյալ ծածկագիրը.



Մ խ ի թ ա ր

Վերծանվում է. «Մխիթար»:

Ձեռագրի գրչությունը 1554 թվականից է։ Գրիչը Ստեփանոսն է, որը թողել է հայ գրչագրության համար հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «...Մատամբ իմով զմագաղաթս քերիցի և գրիցի» (էջ 501)։ «Քերիցի» այստեղ ունի մագաղաթի վրայից նախկին գրությունը մաքրելու, լվանալու նշանակություն։

* * *

Եղիշե Խաչենցին 1523 թ. ընդօրինակած ձեռագրում իր անունը մի քանի տեղ գաղտնագրել է բժշկական կոչվող ծածկագրությամբ և դիմել ընթերցողին հետևյալ պայմանով. «Թէ կարդաս՝ ես քեզ ծառայ» (ՄԱՄ, ձեռ. № 6644, թ. 132բ)։ Նրա բարեկամներից մեկը՝ Հովհաննեսը, վերծանել է ծածկագիրը և իր հերթին սյունակետագիր պատասխանել. «Ես



Յ ո վ տ է ս ս

Ղարաբերդցի, Աստուածատուր Կեղեցի. ըզքո անունն իմացանք ո՞վ եղբայր Եղիշէ Խաչենցի աբեղա։



Ա ս տ ո ւ ա ծ ա տ ո ւ ր

Եղբա՛յր, ողջոյն ընդ քեզ» (թ. 132բ)։

Առաջին սյունակետագիրը վերծանվում է. «Յովտէսս», *իսկ երկրորդը՝* «Աստուածատուր»:

Վերծանությունը նախադասության ամբողջության մեջ կկարդացվի. «Ես Յովտէսս *Ղարաբերդցի, Աստուածատուր Կեղեցի. ըզքո անունն իմացանք ո՛վ եղբայր, Եղիշէ Խաչենցի աբեղա,* Աստուածատուր *եղբայր, ողջոյն ընդ քեզ»։*

(Հրատ. ՀԳԳ, 277—278)։

* * *

Ակադ. Ն. Մառը Պետերբուրգի Արևելյան ճեմարանի ձեռագրական հավաքածուի ցուցակում հրատարակել է Ալեքսանոս, Մարութե և Հովհաննես գրիչների 1534 և 1580 թվականներին Ցայփոսի գրչության օջախում ընդօրինակած ձեռագրի նկարագրությունը և բերել գրչի հիշատակարանն ու գաղտնագրությունը, որը թողել է հետագայի հիշատակագիրներից մեկը։ Ծածկագիրը հետևյալն է.



Յ ի շ ա տ ա կ է ք ա ր

ո վ գ ի ր ք ս Ս ր ա պ ի



ո ն վ ա ր դ ա պ ե տ ի ն

Ծածկագրի վերջում կա գրչի հետևյալ հանձնարարականը.

Թէ դպիր ես նայ կարդայ,
Ջէ՝ նայ վզիտ տուր և հազայ,
Մի մեղադրեր ինձ ակամայ,
Բանդ արուեստի է, ի միտ արայ։

Մառը սյունակետագիր տվյալ ծածկագիրը վերծանել է. «Յիշատակ է քարոզգիրքս Սրապիոն վարդապետին» *(Ն. Մառ, Հայկական ձեռագիրք ճեմարանի արևելեան լեզուաց ի Պետերբուրգ, «Հանդէս ամսօրեայ», 1889, էջ 52)։*

(Հրատ. ՀԳՊ, 191)։

* * *

Սյունակետագիր ծածկագրության երկրորդ բանալիով մի հիշատակագրություն է գաղտնագրված Նոր Ջուղայի մատենադարանի № 232 «Տոնագրության» ձեռագրում, որը հրատարակված է «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում»

ցակում» և չի վերծանված, հավանաբար, գաղտնագրության բարդ կառուցվածքի պատճառով (ՆՋ, I, էջ 343)։

Ծածկագրությունն ուշագրավ է նրանով, որ այստեղ կետերին փոխարինում են գծերը, որոնք դրվում են իրար վրա՝ սյունագծիկի վերևից։ Այս ծածկագրությունն ունի մի այլ բարդություն ևս. առաջին սյունագծի տակ ծածկագրված է երկու տառ. վերևում դրված երկու գծիկով ստեղծվում է «Վ» տառը, իսկ կողքի երկու կետով, վերջին երկու գծիկի հետ, ստեղծվում «Ր» տառը։ Այս բարդությունները հաշվի առնելով, կարելի է լինում ծածկագիրը վերծանել։ Բերում ենք ծածկագիրը մեր վերծանության հետ միասին.



Վերծանությունը կարդացվում է. «Վրթանեասայ աստուծոյ. ամէն»։ Ծածկագրող հեղինակը, ինչպես երևում է, եղել է Վրթանես գրիչը, որը ձեռագրի վերջին ստացողներից մեկն է։ Ծածկագրության տակ կա այսպիսի մի հիշատակություն. «Խին կտակ որ տեսնիք ԲՃԽԲ (242) տարի այ, որ այ[ս] գիր ճառս գրած այ» (թ. 736բ)։ Ձեռագրի գրչությունը 1481 թվականից է, հետևապես նախագաղափար ձեռագիրը գրված կլինի 1239 թվականին։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 487 ձեռագրում (թ. 96բ), որը իրավաբանական նյութերի ժողովածու է՝ ընդօրինակված Վարդան գրչի կողմից 1618 թ., գրի է առնված սյունակետագիր ծածկագրություն, որն իր ձևով որոշ նմանություն ունի սեպագրության հետ։ Ծածկագիր այս բնագրի առորոշ կայությունը նշված է «Ցուցակ ձեռագրացում» և պարզած, որ նրա մեջ գաղտնագրողը Դավիթ անունով մեկն է (Հ. Ա, էջ 331)։ Ծածկագիրը երկու մասից է բաղկացած, երկուսն էլ նույն բովանդակությամբ։ Բերում ենք ծածկագրության միայն երկրորդ մասը վերծանության հետ միասին.



Վերծանությունը կարդացվում է. «ԶԴաւիթ եպիսկոպոսէ, Դաւիթ եպիսկոպոս»: Ծածկագրի սեպագիր ձևը հիմք է տալիս կարծելու, որ միջին դարերում հայ իրականության մեջ ծանոթ են եղել գրության այդ ձևին և օգտագործել այն իբրև ծածկագրության տաղձ։

* * *

Մայր աթոռի մատենադարանի № 64 ձեռագրի գրիչը սյունակետագիր ծածկագրության երկրորդ բանալիով գաղտնագրել է իր անունը։ Ձեռագիրը 16-րդ դարի գրչությամբ է։ Ծածկագրությունը հրատարակված է «Էջմիածին» ամսագրում («Էջմիածին», 1951 թ., № IX—X, էջ 81)։

Ծածկագրի բնագրում սպրդել է մի սխալ. շարքի երրորդ նշանագրից հետո դուրս է ընկել «Ր» տառի գծագիրը։ Տվյալ ծածկագիրը գաղտնագրված է մեկ կետ պակասով։

Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին.



Վերծանությունից պարզվում է, որ էջմիածնի մատենադարանի № 64 ձեռագրի գրիչն Ամիր Սարգիսն է։

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 29 ձեռագրում, որ «Սաղմոսարան» է՝ հեգրված 1622 թ. Մարգար գրչի կողմից Մահտեսի Մովսեսի պատվերով, տագայի հիշատակագիրներից մեկը թողել է հինգ տողից բաղկացած մի ծածկագրություն, որը հրատարակված է Կյուլեսերյանի Անկյուրիայի ձեռա-

գրաց ցուցակում և փոքր սխալով վերծանված (Անկ., սյուն. 175)։ Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին.



Վերծանությունը կարդացվում է. «Անարժան մեղաւոր ոտաց հող ծառա տէր Խաչատուրի ձեռամբ գրեցի»։ Կյուլեսերյանի ցուցակում սխալմամբ վերծանված է. «Անարի անմեղաւոր ոտաց հող ծառայ տէր Խաչատուրի ձեռամբ գրեցի» (Ղալ., սյուն. 176)։

* * *

Զաքարիա գրիչը Վայոց Ձորի Հերմոնի գրչության օջախում 1481 թ. ընդօրինակած ձեռագրում իր անունը գաղտնագրել է սյունակետագիր և եղբայրագիր բանալիներով (ՄԱՄ, ձեռ. № 6699, թ. 295ա)։ Բերում ենք սյունակետագիրը և եղբայրագիրը՝ վերծանության հետ միասին։ Վերծանությունները կատարել է Լ. Խաչիկյանը (Հիշ. ԺԵ, Գ., էջ 16)։



Ն. Լ. Ո. Ջ. Ի. Ը. Փ. Ն. Բ. Զ. Բ. Ց. Ժ. Ս.
յ ի շ ե ց է ք յ ա ղ ա ւ թ ս

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «Զաքարայ գրիչ յիշեցէք յաղաւթս»։

* * *

Բ. Կյուլեսերյանի ձեռագրաց ցուցակում հրատարակված է Ղալաթիայի մատենադարանի № 246 ձեռագրում գրի առնված սյունակետագիր մի ծածկագիր, որի մեջ գաղտնագրված է գրչի անունը։ Ցուցակում՝ ծանոթագրության մեջ, սխալմամբ նշվում է, որ ծածկագրության մեջ իբրև թե գաղտնագրված է հետևյալ նախադասությունը. «Եւայ ես յԱնթափայ թվ. ՌՁԱ (=1632) ամին. յունիս ամսուն ԺԲ (=12), օրըն ԳՇ (=երեքշաբթի)»։ Իրականում, ինչպես կտեսնենք, այդ վերծանությունը բացարձակապես ոչ մի կապ չունի ծածկագրության հետ և մտացածին է։ Ամենայն հավանականությամբ, թյուրիմացությունը գալիս է ոչ թե Կյուլեսերյանից, որը նման սխալ թույլ չէր տա, այլ՝ ցուցակի հրատարակիչներից (Ղալ., սյուն. 1183—1184)։

Ծածկագրությունը հրատարակված է շատ անխնամ. նրա մեջ սպրդել են մի քանի սխալներ։ Առաջին տողի առաջին սյունագծի մոտ չորս կետ է, փոխանակ հինգի։ Նույն տողի իններորդ սյունագծի մոտ երեք կետ է, փոխանակ չորսի։ Երկրորդ տողի առաջին սյունագծից հետո բաց է թողված «բ» տառի սյունագիծը։ Նույն տողի վերջին սյունագծի վրա երկու կետ է երեքի փոխարեն։ Երրորդ տողի առաջին սյունագծի վրա երկու կետ է, պետք է լինի երեքը։ Նույն տողի երկրորդ սյունագիծը երկուսն է՝ չորս կետով, փոխանակ լինի չորս սյունագիծ՝ հինգ կետով։ Նրանից հետո բաց է թողնված «ե» տառի սյունակետագիրը։ Այս ուղղումները կատարելուց հետո, ծածկագիրը կըվերծանվի.



Ծածկագրությունը կարդացվում է. «Ես Ալեքսանոս աբեղայ ծառայ Ա[ստուծո]յ գրեցի ի թվ. ՌՁԱ (1632) յէի»։

* * *

Մայր աթոռի մատենադարանի № 108 ձեռագրում, որը «Մաշտոց» է՝ գրված Հակոբ գրչի կողմից Պետրոս Ջահկեցու պատվերով, գրչության թվականը տրվում է սյունակետագիր ծածկագրությամբ։ Ուշագրավ է, որ սյունակետագրի այս բնագրում կետերը գրված են ո՛չ թե սյունագրի աջ կողմում, այլ՝ սյունագրի վերևում՝ ուղղահայաց ձևով, և բառերի միջև իբրև անջատման նշան խաչեր են դրված։ Բերում ենք ծածկագրությունը՝ վերծանության հետ միասին.



Ծածկագիրը հրատարակված է «Էջմիածին» ամսագրում (տե՛ս «Էջմիածին», 1960 թ., V, էջ 61)։

Վերծանությունից պարզվում է, որ այն գրված է Թոխաթ քաղաքում. «Գրեցաւ ի քաղաքն Թոխաթ»:

* * *

Կյուլեսերյանի «Ձեռագրաց ցուցակում» հրատարակված է Անկյուրիայի № 72 ձեռագրի նկարագրությունը, որը բովանդակությամբ «Բառգիրք» է և «Տոմարի մեկնություն»։ Ձեռագիրն ընդօրինակված է 1668 թ., Էջմիածնում Ներսես գրչի կողմից։ Երկու հեղինակներ հետագայում ձեռագրում գրի են առել սյունակետագիր մի ծածկագիր, որը վերծանված է Կյուլեսերյանի ցուցակում (էջ 374)։ Ստորև բերում ենք ծածկագիրը և նրա վերծանությունը.

Գաղտնագրված է մեկ կետի ավելով։



Վերծանվում է. «Մանուէլ, Ոհան աբեղայք»:

* * *

Նոր Ջուղայի № 280 ձեռագիրը «Ժամագիրք տոնի» է՝ ընդօրինակված Նոր Ջուղայում 1649 թ. խոջա Աբովի պատվերով։ Հիշատակարանում գրիչն իր անունը գաղտնագրել է սյունակետագիր ծածկագրությամբ (թ. 32ա)։



Ծածկագիրը հրատարակված է Նոր Ջուղայի «Ձեռագրաց ցուցակում» և վերծանված «Զաքարայս յիշեց[է]ք» (ՆՋ, I, էջ 487)։

* * *

Մայր աթոռի հավաքածուի № 2 ձեռագրում, որը պարունակում է Ֆրա Պետրոսի «Գիրք յաղագս առաքինութեան» աշխատությունը, Ոսկան գրիչը 1673 թ. թողած հիշատակարանում սյունակետագիր ծածկագրով գաղտնագրել է իր անունը։ Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին։

Կարդացվում է. «Ոսկան գրիչ»:

Ծածկագրությունը, հիշատակարանի հետ միասին, հրատարակված է «Էջմիածին» պարբերականում և վերծանված («Էջմիածին», 1950, № 5—6, էջ 83)։

* * *

Ղալաթիայի մատենադարանի № 30 ձեռագիրը պարունակում է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեայց» խորագրով աշխատությունը, որի ընդօրինակող գրիչն է հանդիսացել Հակոբը։ Այդ մասին հիշատակություններ կան աշխատության գլուխների վերջում։ Ձեռագրի պատվիրատուն է Սահակ աստվածաբան վարդապետը։

Գրիչն իր անունը գաղտնագրել է սյունակետագիր ծածկագրով, որն ուշագրավ է նրանով, որ բառանջատման համար օգտագործել է աստղանիշեր։ Ծածկագիրը հրատարակված է Կյուլեսերյանի ձեռագրաց ցուցակում և վերծանված (Ղալ., էջ 112)։ Բերում ենք ծածկագրությունը վերծանության հետ միասին։



Ծածկագիրը կարդացվում է. «Գրեցաւ ձեռամբ Ակոբ գրչի»:

Ձեռագրի գրչության ժամանակը ձեռագրաց ցուցակում չի որոշված։ Սակայն գրչի մի հիշատակությունը՝ թուրք փաշաներից մեկի Թոխաթում կատարած վայրագությունների մասին, որը տեղի է ունեցել 1731 թվակա-

նին, հիմք է տալիս կարծելու, որ մոտավորապես այդ կամ դրան մոտիկ թվականին էլ գրված պիտի լինի ձեռագիրը, հետևապես և՝ գրչի ծածկագիր հիշատակարանը։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2000 ձեռագրում, որը տոմարական ժողովածու է, ընդօրինակող Գրիգոր գրիչը թողել է սյունակետագիր մի ծածկագրություն, ուր հիշում է իր անունը և նշում ձեռագրի գրչության տարեթիվը (թ. 286ա)։ Ծածկագրության հետ ծանոթ են «Ցուցակ ձեռագրաց» կազմողները և փորձել են վերծանել գրչության թվականը՝ ծածկագիրը համարելով 1781 թվականից, որը կարիք ունի վերանայման։

Ծածկագրի մեջ կա մի սխալ. առաջին տողի ութերորդը՝ երեք սյունագիծ երկու կետ լինելու փոխարեն, մեկ սյունագիծ է մեկ կետով, որը և ուղղում ենք։ Բերում ենք ծածկագրի բնագիրը՝ մեր վերծանությամբ։



Ծածկագիրը կարդացվում է. «ՌՄԲ. ձեռամբ Գրիգոր աբեղայէն, ամսեանն սեպտեմպերի ԺԱ.ին»։ Տարեթիվը հայկական մեծ թվականով է, ներկայիս հաշվով կլինի 1753 թվականի (1202+551=1753) սեպտեմբերի 11-ը։

Ծածկագրության վերծանությունից երևում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիրը գրված է ոչ թե 1781 թվականին, ինչպես կարծված է, այլ՝ 1753-ին։

* * *

Նոր Նախիջևանին մոտիկ Նորաշեն գյուղում Մարտիրոս Ավետիքով Կաֆայեցին ձեռագիր է ընդօրինակել և իր անունն ու գրչության թվականը գաղտնագրել սյունակետագրի երկրորդ բանալիով։ Գաղտնագրության սկզբում հեղինակը թողել է երկտող, ուր իրեն համարում է «յիմար», իսկ ընթերցողին՝ «իմաստուն»։

Ահա գաղտնագիրը՝ մեր վերծանությամբ.



Վերծանությունը կարդացվում է. «Տէր Մարտիրոսէ գրեցաւ թվին Հայոց ՌՄԽԵ (1796) մայիս ԻԵ (25)»։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1681 ձեռագիրը, որն իմաստասիրական նյութերի ժողովածու է, գրված է, հավանական է, Գլաձորի նշանավոր գրչության դպրոցում Կիրակոս գրչի կողմից։ Այդ ձեռագրում 18-րդ դարում Մինաս անունով մեկը, որի սեփականությունն է եղել ձեռագիրը, թողել է սյունակետագիր ընդարձակ մի ծածկագիր։ Բերում ենք այն՝ մեր վերծանությամբ.



(*ՄԱՄ, ձեռ. № 1681, թ. 260բ*)։

Ծածկագիրը վերծանվում է. «Յետին բստացօղ սուրբ գրգոյս ես մերեալ ոգի Մինաս սարկաւագ, միաբան սրբոյ էջմիածնի, զոր ի յետին ժամանակս բստացայ ի վայելս անձին նիւոյս եւ ի փառս սուրբ աթոռոյն Սաղմոսավանու, զոր այժմ ամայի է եղեալ, որ է թիւն ՌՄԶ (*=1757*)»։

Ծածկագրության վերծանությունից երևում է, որ 1757 թվականին Սաղմոսավանքը, հայ գրչության աչքի ընկնող այդ օջախը, գտնվել է ավերակ վիճակում։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6273 ձեռագրում, որը Փիրղալեմյանի հիշատակարանների ժողովածուն է, բերվում է Մանվել գրչի Պոլսում ընդօրինակած ձեռագրում գրի առնված սյունակետագիր հետևյալ ծածկագիրը։ Բերում ենք վերծանության հետ։

Վերծանությունը կարդացվում է. «Ի վայելումն Կուռանցի Պետրոս արքեպիսկոպոսի. հազար ութ հարիւր տասը երեք, մայիսի եօթին»:

Ծածկագիրը վերծանված է Փիրղալեմյանի կողմից (№ 6273, էջ 409)։

11. ՄԻ ՔԱՆԻ ԲԱՆԱԼԻՆԵՐՈՎ ԳԱՂՏՆԱԳՐՎԱԾ ԾԱԾԿԱԳՐԵՐ

Հայ գրչագրության մեջ հաճախ են հանդիպում այնպիսի ծածկագիր բնագրեր, որոնց մեջ օգտագործված են լինում երկու և ավելի գաղտնագիր բանալիներ միաժամանակ։ Սյունակետագիր ծածկագրերի հետ միաժամանակ օգտագործված են լինում եղբայրագիր, գումարգիր, փոխարինագիր և այլ բանալիներով գաղտնագրված ծածկագրեր։ Նման ծածկագրերը մենք նպատակահարմար ենք համարել հավաքել առանձին գլխի տակ։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1849 ձեռագրում, որը տարբեր նյութերի ժողովածու է՝ գրված 1440 թ. Ներսես և Ատոմ գրիչների կողմից, գրի է առնված գումարգրով, փոխարինագրով և սյունակետագրով ծածկագրված հետևյալ ծածկագիր հիշատակարանը.

ՃՃՃ. ՄՆ. ՌՍ. ՌՌ. ԵԲ. ՏՏ. ՄՃ. ՃԾ. ՌՌՌ.
ՌՌ. ԴԳ. ՅՍ. Լ. Կ. Գ. Բ. Գ. Ը.
(*ՄԱՄ, ձեռ. № 1849, թ. 136բ*)։

Ծածկագրի ներքևում ասված է. «Գրչափորձս աղէկ տես. չորս ազգ է։ Թէ գտիր ես կարդայ. թէ չէ ծկականըտ տուր և խաղայ»։
Առաջինը գումարգիր է։ Վերծանվում է.

ՃՃՃ. ՄՆ. ՌՍ. ՌՌ. ԵԲ. ՏՏ.
Յ ո վ ս է փ

Երկրորդը դարձյալ գումարգիր է, բայց այլ կառուցվածքով։ Վերծանվում է այսպես.

ՄՃ. ՃԾ. ՌՌՌ. ՌՌ. ԴԳ. ՅՍ.
Յ ո վ ս է փ

Երրորդը՝ փոխարինագիր է (հինգերորդ տառանիշը «գ» է, փոխ. «չ»-ի).

Լ. Կ. Գ. Բ. Ջ. Ը
Յ ո վ ս է փ

Չորրորդը սյունակետագիր է, առաջին բանալիով վերծանվում է.



Յ ո վ ս է փ

Չորս տեսակի ծածկագրերով, ինչպես տեսնում ենք, գաղտնագրված է հիշատակագրի անունը՝ «Յովսէփ»: *Ծածկագրի լուսանցքում վերծանված է ինչ-որ մեկի կողմից։*

* * *

Ն. Ակինյանը Վասպուրականի ձեռագրաց ցուցակում հրատարակել է Երուսաղեմում, 14-րդ դարում ընդօրինակված մի ձեռագրի հետևյալ ծածկագրությունը.

«Վ Մ Է Թ Բ Ի, Ռ Է Ր Դ Ռ Ե Ռ Խ

 (*Ակ., սյուն. 198*)։

Ակինյանին չի հաջողվել վերծանել ծածկագրությունը։ Լ. Խաչիկյանը «ԺԴ դարի հիշատակարանների» մեջ հրատարակել է Ակինյանի ծածկագիրը, վերծանել միայն փոխարինագիրը, իսկ սյունակետագիրը թողել չվերծանված. «Փոխարինագիր *ծածկագրով,— գրել է նա,— կարդացվում է «Գիրքս է աւետարան»։ Շարունակությամբ* գծակետային *ծածկագրով գրված է մեզ համար անհասկանալի հետևյալ տողը»։ Ապա նա բերել է սյունակետագիր ծածկագիր նշված տողը (Հիշ. ԺԴ, էջ 322)։*

Ներկայացված վիճակով, իսկապես, ծածկագիրն անհասկանալի է, որովհետև այնտեղ տառեր են բաց թողնված և կան կետերի թվի սխալներ։ Ծածկագրի բնագրում կատարում ենք պահանջվող մի քանի ուղղումներ և վերծանում.

Վ Մ Ե Թ Բ Ւ Ռ Ւ Ր Դ Ռ Ե Ռ Խ
գ ի ր ք ս է ա ւ ե տ ա ր ա ն

||∴. |· ||||· |||⁝ ||: |∴ ||||∷ |∴ |· |||⁝
ծ ա ռ[ա]յ ի Գ ր [ի] գ [որ] ա յ

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «Գիրքս է աւետարան ծառ[ա]յի Գր[ի]գ[որ]այ»:

Ծածկագրի վերծանությունից պարզվում է, որ խնդրո առարկա ձեռագիրը Գրիգոր անունով մեկի սեփականությունն է եղել։

(Հրատ. ՊԲՀ 1958, էջ 174, ՀԳԳ, 248)։

* * *

Լ. Խաչիկյանը հրատարակել է Մաշտոցի անվան մատենադարանի № 6268 ձեռագրի հիշատակարանը, որի մեջ գրի է առնված երկու տողանոց մի ծածկագիր։ Ձեռագիրը «Յայսմաւուրք» է՝ գրված Վայոց Ձորի Հերմոնի գրչության դպրոցում, 1474 թվականին, Զաքեոս գրչի կողմից։ Հիշատակարանի ծածկագիրը հետևյալն է. «Աւրհնեալ է արարիչն Աստուած, որ զմեզ բարով թափեց ի յէս գրքէս, զի Բ(=2) եղբարքս Է(=7) տարի էր, որ վերա ինք, հազար բունք պրծանք»։

Դ Բ Ի Շ Յ Վ Ր։ Ե Բ Դ Ը Շ Վ։ ՌՌՄՄ

Ճ. Հ. Ձ. Ֆ. :|| ·||| :|| :|| :| ||||:

Խաչիկյանն այս ծածկագրի առաջին տողի երկու բառերը ճշտությամբ վերծանել է, իսկ մյուս մասը թողել առանց վերծանության՝ տողատակ ծանոթագրության տակ նշելով, որ «շարունակությունը մեզ չհաջողվեց վերծանել» (Հիշ. ԺԵ, էջ 359)։

Ծածկագրությունը ձեռագրում աղավաղված է։ Առաջին տողի մեկական տառերը եղբայրագիր ծածկագրով են գաղտնագրված, իսկ վերջին երկու ՌՌ և ՄՄ տառերը՝ գումարգրով։ Այդ տողը վերծանվում է.

Դ Բ Ի Շ Յ Վ Ր։ Ե Բ Դ Ը Շ ՌՌ ՄՄ

Գ ա լ ո ւ ս տ։ Զ ա գ է ո ս Ն

Երկրորդ տողի Մ. Ճ. Հ. Ձ. Ֆ. տառերը մենք ևս չկարողացանք վերծանել, իսկ նրա շարունակությունը կազմող սյունակետագիրը, որոշ ուղղումով, հնարավոր ենք համարում վերծանել ||||: ||: [|||⁝] |· ||||:

Մ ի Ն ա ս

Ի դեպ, ձեռագիրը գրելու ընթացքում գրիչը գտնվել է հոգեկան ծանր վիճակում, ուստի ծածկագրում նրա աղավաղումը տրամաբանական է. մահացած է եղել իր հարազատ քույրը։ Այդ մասին նա ցավով գրել է.

Ձէս տետրս գրելիս խիստ դառնացա, վա՜յ,
Մէր չունի, մի քոյր ունի, էն մեռաւ, վա՜յ,
Քանի միտս ընկնէր, գրիչս ձեռնէս վէր ընկնէր,
Խիստ կարաւտ ի 'ւ չտեսայ [վ՜այ]՝ (Թ. 454բ)։

* * *

Ջմմառի մատենադարանի № 426 ձեռագրում, որը «Ճաշոց» է՝ 15-րդ դարի գրչությամբ, նրա մեջ փոխարինագիր և սյունակետագիր ծածկագրով գաղտնագրված է հետևյալ հիշատակագրությունը.

Կ ր ձ ի բ տ կ է փ խ տ մ բ



Ծածկագրությունը Ջմմառի ձեռագրաց ցուցակում հրատարակել են Ն. Ակինյանը, Հ. Ոսկանյանը և դժվարացել վերծանել այն (Ջմմ., II, էջ 7)։

Ծածկագրի տակ գրված մի հիշատակագրությունից երևում է, որ մեկը փորձել է վերծանել այն հետևյալ ձևով. «Փակագիրս,—գրել է նա,— այս է. Դու զԹումայս յիշեա, աստուած յիշէ զքեզ, ամէն»։ Իրականում, այդ վերծանությունը բացահայտ մտացածին է, քանի որ ծածկագիրը փոխարինագրի առաջին բանալիով դյուրին վերծանվում է.

Կ Ր Ջ Ի Բ Տ Կ Է Փ Խ Տ Մ Բ
Ո ր պ է ս դ ո ւ գ տ ն ի ս

Փոխարինագրի շարունակության մեջ կա և սյունակետագիր ծածկագիր, որը դժվարացանք վերծանել։

* * *

Ազգագրագետ Գ. Սրվանձտյանը «Թորոս աղբար»-ում հրատարակել է Խալիկն գյուղում Թովմա գրչի 1465 թ. ընդօրինակած ձեռագրի ծածկագիրը՝ թողնելով այն առանց վերծանության («Թորոս աղբար», հ. Ա, էջ 77)։

Լ. Խաչիկյանը «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի երրորդ մասում վերահրատարակել է Սրվանձտյանի հիշատակարանը ծածկագրի հետ միասին, բայց դժվարացել է վերծանել՝ թողնելով տողատակի հետևյալ ծանոթագրությունը. «Այս ծածկագիրը մեզ չհաջողվեց վերծանել» (Հիշ. II, էջ 241)։ Ծածկագիրը հետևյալն է. «Ջմեռեալս հոգւով յիշեա ով ժառանգող Ե Դ Տ Լ Դ Լ Տ Յ Ռ Ռ Ի Ս Ի Ս Ի Ն»։

Բերում ենք ծածկագիրը մեր վերծանության հետ՝ կատարելով գրչական հետևյալ ուղղումները. վեցերորդ տառը պետք է լինի ոչ թե «լ», այլ «չ», սյունակետագրում երրորդի մոտ պետք է լինի ոչ թե երեք, այլ՝ չորս կետ։ Ինչ վերաբերում է շարունակությանը, ապա այն գաղտնագրված է փոխարինագրով։

Առաջինը եղբայրագրով վերծանվում է.

Ե Դ Տ Լ Դ Ձ Տ
Զ Գ ր ի գ ո ր

Եղբայրագրի շարունակության մեջ կա սյունակետագիր, որը վերծանվում է «Կարբեցի»:

7—884

Փոխարինագիրը խիստ աղավաղված է, և մեծ ձգվածությամբ, մի քանի տառի փոփոխությամբ առաջարկում ենք հետևյալ հնարավոր վերծանությունը.

Յ Ո Ե Ի Ր Ի Ս Ի Ն
Կ ա ր բ ե ց ի ի ն

Ծածկագիրն ամբողջության մեջ հիշատակարանում կկարդացվի. «Ձմեռեալս Հոգւով յիշեա ով ժառանգող զԳրիգոր Կարբեցիին»:

* * *

Ե. Լալայանը «Վասպուրականի ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Աղթամարի № 56 ձեռագրում գրի առնված գումարգիր և սյունակետագիր մի ծածկագրություն և դժվարացել այն վերծանել: Ձեռագիրը Ավետարան է, ընդօրինակված 14-րդ դարում, ոմն Հովհաննեսի պատվերով և զարդանկարված Կիրակոս ծաղկանկարչի կողմից: Բերում ենք այն ըստ Լալայանի հրատարակության. «Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք և եղբայրք սիրեցեալք աստուծոյ, որք հանդիպիք աստուածաշունչ գրոցս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր Գ. Դ. Դ. Մ. Յ. Ա. Ճ. Ճ. Ճ. և զհայրն իւր Ո: Ո: Ա: Ո: Ս: Ո: Ո: Ո: Ա: ԱԱ: ԺԺ: ՈՈ: և զմա[յ]րն իմ Ճ: Ճ: Ս: Վ: Ո: Ս: և եղբայրն իմ Բայրամ պէկ» (վերջինս ծածկագրված սյունակետագրով) (Լալ., սյուն. 250):

Ծածկագրության վերջում զետեղված է կծու մի հղում. «Ո՛վ որ գիտնա՝ կարդա. ով որ չգիտնա՝ նա լանկորտա»:

Ծածկագրության այս բնագիրը, դժբախտաբար, հրատարակված է շատ անխնամ: Գաղտնագրությունը, ինչպես պարզվում է, գումարգիր է, ուստի որոշ տառանիշեր պետք է ներկայացված լինեին երկուական, երեքական և չորսական խմբերով, մինչդեռ հրատարակված բնագրում տրված են մեծ մասամբ անջատ, որը և դժվարացնում է վերլուծությունը: Ծածկագրության բնագրում նկատվում են գրչական հետևյալ սխալները.

Ա. առաջին տողի երրորդ տառանիշը պետք է լինի ոչ թե «Դ», այլ՝ «Ղ» (նմանաձև տառերի շփոթություն է):

Բ. Երկրորդ տողի առաջին տառանիշը՝ «Ո»-ն ավելորդ է:

Շարունակության մեջ կա սյունակետագիր ծածկագիր, որը վերծանվում է «Բայրամ պեկ»:

Այս ուղղումները կատարելուց հետո, ծածկագիրը կվերծանվի.

ԳԴ. Ղ. ՄՅ. Ա. ՃՃՃ. և զհարն իւր ՈՈ. Ա. ՈՍՈՈ. ԱԱԱ. ԺԺ. ՈՈ. և զմայրն
Ե ղ շ ա յ Ս ա ր գ ի ս

իւր ՃՃ. ՍՎ. ՈՍ և եղբայրն Բայրամ պէկ:
Մ ր վ

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «...յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր Եղշայ և զհայրն իւր Սարգիս և զմայրն Մրվ (հավանական է՝ Մրվաթ անվան սղումն է—Ա. Ա.) և եղբայրն իմ Բայրամ պէկ»:

* * *

Լ. Խաչիկյանը «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի» երրորդ հատորում հրատարակել է Մաշտոցի անվան մատենադարանի № 8956 ձեռագրի (թ. 476բ) պարունակած հետևյալ ծածկագիրը. «Ո՛վ սուրբ հարք և եղբարք, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր... (անունը քերված) դպիրն և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամմէն և յամենայն ժամ ... Ո. Ո. Ո. Ո. Ո. Ս. Ո. Ո. Ճ. Ճ. Ճ. Ճ. Ճ. Ո. Ժ. Ժ. Ո. Վ. (տողի սկզբից քերված) ... Ո. Ո. Յ. Յ. Շ. Շ. Ո.ծառայ Քրիստոսի» (տողի սկզբից քերված):

Լ. Խաչիկյանն այս ծածկագիրը չի վերծանել և տողատակ տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Ծածկագիրը բռնում է երկու տող: Տողերի ձախ եզրերը մաշվել են և մի քանի տառանիշեր չեն կարդացվում: Ծածկագիրն այս վիճակում չի վերծանվում» (Հիշ. ԺԵ, III, էջ 509):

Ծածկագիրն, իրոք, դժվար է վերծանվում, որովհետև այն գաղտնագրված է երկու տարբեր բանալիներով՝ գումարգիր և փոխարինագիր: Բացի այդ, «ԺԺ»-ից հետո երեք տառ աղավաղված են. «Ճ»-երից մեկն ավելորդ է, երկրորդ «Ճ»-ն աղավաղումն է «Ծ»-ի, իսկ «Ո-ն»՝ «Դ»-ի: Այս ուղղումները կատարելուց հետո ծածկագիրը կվերծանվի.

ՈՈՈՈ Ս Ո Ս ՃՃ Ճ Ծ Դ ԺԺ ՈՎՈ ՅՅ ՇՇՈ
Տ ր Մ ա ր տ ի ր ո ս

Ծածկագիրն ամբողջության մեջ կկարդացվի. «Ո՛վ սուրբ հարք և եղբարք յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր տ[է]ր Մարտիրոս դպիրն և Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն ամմէն և յամենայն ժամ: Տ[է]ր Մարտիրոս ծառայ Քրիստոսի»:

Ձեռագրի հիմնական հիշատակարանից երևում է, որ Մարտիրոսը տվյալ ձեռագրի ընդօրինակող գրիչն է: Ձեռագրում գրչության թվականի մասին թեև հիշատակություն չկա, բայց ըստ հնագրական տվյալների, այն կարելի է համարել 15-րդ դարի ձեռագիր, և Խաչիկյանը ճիշտ է վարվել՝ այն տեղադրելով 15-րդ դարի հիշատակարանների շարքում:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5198 ձեռագրում, որը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի ընդօրինակությունն է, գրված Նորատունկ գրչի կողմից 15-րդ դարում, Սիմեոն անունով մեկը գաղտնագրել է իր անունը գումարգրով. «Գրեցաւ ձեռամբ յոգնամեղ և տրուպ ՈՈ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. ՅՅ. ՄՄ. ԺԺ.»: Այն վերծանվում է.

ՈՈ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. ՅՅ. ՄՄ. ԺԺ
Ս ի մ ե ո ն ի

Վերծանված անունը հիշատակարանի ամբողջության մեջ կկարդացվի. «Գրեցաւ գիրս ձեռամբ յոգնամեղ և տրուպ Սիմեոնի»:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5730 ձեռագիրը, որը գրված է 1616 թ. Զատիկ գրչի կողմից, ունի փոքրիկ հիշատակագրություն գումարգիր ծածկագրությամբ։ «Ո՞վ ընթերցող այր, յորժամ զայս ս[ուր]բ գիրք կարդաս, աղերսեմ ի քէն, զթերավարժ (բնագրում՝ զվերավարժ) գծողս չմոռանաս լոկ անուն ԲԲԲ Ա ՌՌՌՌ ԽԽԽԽ ԺԺԺ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր և Աստուած զձեզ յիշէ» (թ. 172բ)։

Ծածկագիրը հրատարակված է ԺԷ դարի ձեռագրաց ցուցակում և վերծանված ԲԲԲ Ա ՌՌՌՌ ԽԽԽԽ ԺԺԺ (Հիշ. ԺԷ, I, էջ 578)։

Զ ա տ ի լ

Ծածկագրող հեղինակը Զատիկ գրիչն է, հետևապես, պետք է կարծել, որ ԺԺԺ-ն սխալագրություն է ԻԻԻ-ի, այսինքն՝ «Կ» տառանիշի, այդ դեպքում ծածկագրված անունը կկարդացվի «Զատիկ», ինչպես ճիշտ նկատել են հիշատակարանի հրատարակիչները։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1548 ձեռագրում փոխարինագիր, գումարգիր և սյունակետագիր բանալիներով գաղտնագրված են երկու բնագիր՝ մեկը (թ. 384բ-ում), իսկ մյուսը՝ առաջին պահպանակի շուռ տված էջի վրա։ Առաջինը հետևյալն է.

ՃՄ. ՅՅ. Ռ. Ս. Ռ. Ռ. ԽԲ. Տ. Տ.
Լ Կ Գ Բ Ի Պ։ ԱԲ. ՎՍ. ԺԺ. ԱԲ. ՅՅ. ՏՌ։

Երրորդ տողը սյունակետագիր է։

Գաղտնագրողը դիմել է ընթերցողին հետևյալ խնդրանքով. «Զգրափակս աղէկ կարդա և գրողս յիշեա աղաչեմ» (թ. 384բ)։

Ծածկագրի առաջին տողը գումարգիր է՝ բաղկացած վեց երկուական տողերից, սակայն գաղտնագրողը, վերծանությունը դժվարացնելու դիտավորությամբ, ՌՍ ՌՌ և ՏՏ տառերը բաժանել է իրարից միջակետերով։ Իրար մոտ բերելով այդ տառերը, կարելի է վերծանել.

ՃՄ. ՅՅ. ՌՍ. ՌՌ. ԽԲ. ՏՏ.
Յ ո վ ս է փ

Երկրորդ տողի վեց տառերը փոխարինագիր ծածկագրության առաջին բանալիով վերծանվում են.

Լ Կ Գ Բ Ի Պ
Յ ո վ ս է պ

Վերջին «Պ» տառը, ինչպես կարելի է նկատել, թողնված է իր հնչական արժեքով։

Երկրորդ տողի վեց զույգ տառերով գումարգիր ծածկագիրը վերծանվում է.

ԱԲ. ՎՍ. ԺԺ. ԱԲ. ՅՅ. ՏՌ.
Գ ր ի գ ո ր

Երրորդ տողի սյունակետագիր ծածկագիրը վերծանվում է. «Յովսէփ»։



Յ ո վ ս է փ

Ձեռագրի հիմնական հիշատակագրերից երևում է, որ այն գրված է երեք գրիչների կողմից՝ Առաքելի, Հովսեփի և Գրիգորի, 1357 թվականին։ Ծածկագրի վերծանությունը ցույց է տալիս, որ ծածկագրված անուններից երկուսը՝ Հովսեփը և Գրիգորը, գրիչների անուններն են։

Ձեռագրի երկրորդ ծածկագրությունը ուշ ժամանակի հիշատակագրություն է, ավելի ճիշտ՝ գրչախաղ։ Սկզբում տրված է հիշատակագրության թվականը՝ հայկական մեծ թվականի ՋՂԶ-ով (=1547)։ Ծածկագիրը հետևյալն է.

Ր Բ Ի Ն Մ Ք Ռ Խ Ր Ջ Մ Բ
Ո Ռ Ջ Կ Բ ՃՃ ԼԾ ԸԺԲ ԷԲ » ՌՌՎ։

Առաջին տողի տառերը, երկրորդ տողի առջևի հինգ տառի հետ, փոխարինագիր բանալիով վերծանվում են.

Ր Բ Ի Ն Մ Ք Ռ Խ Ր Ջ Մ Բ Ո Ո Ջ Կ Բ
Ե ս Մ խ ի թ ա ր ե պ ի ս կ ո պ ո ս

Երկրորդ տողի շարունակությունը, երրորդ տողի երեք տառերի հետ միասին, գումարգիր ծածկագրություն է՝ երեք դեպքում երկուական տառանիշերով, երկու դեպքում՝ երեքական, իսկ «Ա» տառը տրված է փակվող չակերտի ձևով։ Գաղտնագիրը վերծանվում է.

ՃՃ ԼԾ ԸԺԲ ԷԲ » ՌՌՎ
Մ խ ի թ ա ր

Վերջում ունի սյունակետագիր, որը վերծանվում է. «Մխիթար»:
(Հրատ. ՀԳՊ, էջ 204, ՀԳԳ, էջ 255)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5536 ձեռագրի գրիչ Խաչատուրը փոխարինագիր, սյունակետագիր և եղբայրագիր ծածկագրությամբ գաղտնագրել է հետևյալ տողը.



խ ա Շ Ձ վ

Այս երեք տեսակ ծածկագրերից դժվար է վերծանվում սյունակետագիրը, որովհետև որոշ սյունակետագիր նշանագրեր տրված են երկու տառանիշի արժեքով։ Բացի այդ, սյունագրերի վրա դրված գծիկների թվերի մեջ նկատվում է որոշ անհամապատասխանություն։

Վերծանում ենք մեծ ձգվածությամբ. «խ ե լ ա գ ա ր»։

Եղբայրագիրը վերծանվում է առանց դժվարության.

Խ. Տ. Շ. Զ. Վ
ծ ր ո ղ ս

Փոխարինագիրը վերծանվում է.

Մ. Դ. Ե. Լ. Մ. Ծ. Ր. Ց
ի Տ ր յ ի շ ե ա

Վերծանությունն ամբողջության մեջ կկարդացվի. «խելագար ծրողս ի տ [է] ր յիշեա»։

Ծածկագրի վերծանությունից երևում է, որ ձեռագրի ընդօրինակողը Նորատունկ գրիչն է։ Հավանական է, սա լինի Կիրակոսի որդի Նորատունկը, որը 1463 թվականին Արծկեում վաճառքի միջնորդ է հանդիսացել Հովհաննես գրչի և տանուտեր Էգիլշահի միջև։ Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, այդ դեպքում ձեռագրի գրչության թվականը պետք է համարել ոչ թե 17-րդ դարը, ինչպես նշված է «Ձեռագրաց ցուցակում», այլ՝ 15-րդ դարը։

* * *

Արաբաթիվ, փնջօղակ, սյունակետագիր, օղակետագիր և փոխարինագիր ծածկագրերից բաղկացած խառը մի գաղտնագիր գրի է առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 8051 ձեռագրում (թ. 392ա)։ Գրչագիրն ընդօրինակված է Սիսիանի շրջանի Բազարչայ (=Ակունք) գյուղում 1677 թվականին։ Այդ մասին Մարութե գրչի թողած հիշատակարանում ասվում է. «Արդ աւարտեցաւ սուրբ գիրքս, որ է մեկնիչ խորհրդի ձեռամբ անարժան և եթ Մարութայ քարտուղարի ի յերկիրս Սիւնեաց ի գեօղն, որ կոչի Պազարչայ, որ է էլախ գաւառ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին թվին ՌՃԻԶ (=1677)»։

Ձեռագիրը ստացել է Մարտիրոս Շամբեցին և նվիրել այն Մաղարթի վանքին։

(Գաղտնագրի բնագիրը տե՛ս հաջորդ էջում)։

Արաբաթիվ հինգ տառանիշից բաղկացած ծածկագիրը վերծանվում է «Գեորգ»:

Երկրորդը՝ փնջօղակ ծածկագիրը, վերծանվում է «Պետրոս»:

Երրորդը՝ արաբաթիվ ծածկագիրը, վերծանվում է «յիշեցէք»:

Չորրորդը՝ սյունակետագիր ծածկագիրը, վերծանվում է «ի Տէր»:

Հինգերորդը՝ օղակետագիր ծածկագիրը, վերծանվում է «չն»:

Վեցերորդը՝ փոխարինագիրը, վերծանվում է «չինս»:

Յոթերորդը՝ արաբաթիվ ծածկագիրը, վերծանվում է. «Լա[մ]բռոնացիս է մ[եկ]նիչս այս»;



Գ ե ո ր գ Պ ե տ ր ո ս

յ ի շ ե ց է ք ի տ է ր չ ն չ ի ն ս



Լ ա մ բ ռ ո ն ա ց ի ս է մ ե կ ն ի չ ս ա յ ս

Տարբեր բանալիներով ծածկագրված բառերի վերծանությունները կողք-կողքի բերելով, կարդում ենք. «Գեորգ: Պետրոս յիշեցէք ի Տէր չնչինս: Լա[մ]բռոնացիս է մ[եկ]նիչս այս»:

Փնջօղակ ծածկագրի մոտ գտնված կցագիրը վերծանվում է «Պետրոս»: Կցագրի մոտ գրված է 1817 թվականը։ Ամենայն հավանականությամբ, գաղտնագրի հեղինակն ինքը Պետրոսն է, և գաղտնագրությունը գրված է 1817 թվականին։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 10200 ձեռագրում Մկրտիչ անունով մեկը 1755 թ. գրի է առել սյունակետագիր, արաբատառ և աղվանական ծածկագրությամբ հետևյալ բնագիրը (թ. 296բ)։ Բերում ենք մեր վերծանությամբ.



Ի Ռ Մ Դ ի ն է ր ո ր ե ս Մ կ ր տ ի չ ս

ե կ ի ա յ ս վ ա ն ք ս ր լ ր ա ն ա լ

գ ն ա ց ի ի մբ կ ա ր ա պ ե տ իսկ ի միւս



տ ա ր ո ւ ն ի հ ե տ Գ ե ո ր ք վ ա ր դ ա պ ե



տ ի ն հ ե տ Ա խ ը լ ց խ ա յ գ ն ա ց ի ն ք և ի



նոյն տ ա ր ի ն է ՝ մբ կ ա ր ա պ ե տ

Վերծանությունն ամբողջության մեջ կարդացվում է. «Ի ՌՄԴին (1755) էր որ ես Մկրտիչս եկի այս վանքս, ի լրանալ՝ գնացի ի սուրբ Կարապետ, իսկ ի միւս տարուն, ի հետ Գեորգ վարդապետին հետ Ախլցխայ գնացինք և ի նոյն տարին էլ՝ սուրբ Կարապետ»:

Արաբատառ ծածկագրության մեջ օգտագործված են Ի, Ե, Յ տառանիշերը և Ը-ն՝ ^նշանագծով: Վերջին՝ Կարապետ անունը գաղտնագրված է աղվանական ծածկագրությամբ:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1710 ձեռագրում, որը պարունակում է Սիմեոն Ջուղայեցու «Մեկնութիւն Պրոկղի» աշխատության ընդօրինակությունը, գրված Աբրահամ գրչի կողմից, 1743 թվականին, գրի է առված օղակետագիր և սյունակետագիր հետևյալ ծածկագրությունը (թ. 195ա): Անհրաժեշտ ենք համարում բերել այն մեր վերծանության հետ միասին.

Վերծանված ծածկագիր հիշատակագրությունը կարդացվում է. «Զայս գիրքս առի տ[է]ր Մեսրոպ քահանայէս: Ես Զաքարիա վարդապե[տ] Ռշականցի ի հազար երկու հարիւր քառասուն և հինգ թվին ի մեծ քաղաքս Կոստանդինուպօլիս: Աստված ողորմի հոգւոյս և ծնողացս, ամէն»:

Ծածկագրությունը գրվել է հայկական 1245 թվականին, որին գումարելով 551, կստանանք 1796 թվականը (1245+551=1796):

Ձեռագիրը, ինչպես ասել ենք, գրված է 1743 թվականին, իսկ ծածկագիր այս հիշատակագրությունը՝ ձեռագրի գրչությունից 33 տարի հետո՝ 1796 թվականին:

* * *

Մովսես գրիչը Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 2146 ձեռագրում, որն ընդօրինակված է Ադանայում 1646 թ., թողել է երկու տարբեր բանալիով գաղտնագրված հետևյալ ծածկագրերը.

ԾԾ. ՅԺ. ԳՌ. ՌՌ. ԳԴ. ՌՌ
ԲԲ. ՆՆ. ԺԺ. ԽՌ
Ի. ԻԴ. Լ. ԻԹ. Է. ԻԹ.
Գ. ԻՁ. ԺԱ. ԼԲ.:

Առաջին ծածկագիրը գաղտնագրված է գումարգրով և կարդացվում է.

ԾԾ. ՅՅ. ԳՌ. ՌՌ. ԳԴ. ՌՌ
Մ ո վ ս է ս

ԲԲ. ՆՆ. ԺԺ. ԽՌ.
դ պ ի ր

Երկրորդ ծածկագիրը իր կառուցվածքով բավականին բարդ գաղտնագրություն է. մեկական տառանիշերը թողնված են իրենց հնչական արժեքով և կամ գաղտնագրված են փոխարինագիր ծածկագրությամբ, իսկ երկուսականը՝ գաղտնագրված են ըստ հայկական այբուբենի համարական շարքի և ոչ ըստ տառանիշերի միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվական արժեքների: Այդ հաշվումով հայկական տառանիշերը տասնավորից հետո ստանում են բոլորովին այլ թվական արժեք: Անհրաժեշտ ենք համարում բերել հայկական տառանիշերի թվական նոր արժեքների աղյուսակը:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
1	2	3	4	5	6	7	8	9	10

ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ
ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
11	12	13	14	15	16	17	18	19

Ի	ԻԱ	ԻԲ	ԻԳ	ԻԴ	ԻԵ	ԻԶ	ԻԷ	ԻԸ
մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ
20	21	22	23	24	25	26	27	28

ԻԹ	Լ	ԼԱ	ԼԲ	ԼԳ	ԼԴ	ԼԵ	ԼԶ
ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք
29	30	31	32	33	34	35	36

Այս հաշվարկով առաջարկվող ծածկագիրը վերծանվում է.

Ի. ԻԴ. Լ. ԻԹ. Է. ԻԹ.
Մ ո վ ս է ս

Դ. ԻՁ. ԺԱ. ԺԲ.
դ պ ի ր

Տվյալ ծածկագիրը վերծանված է Ն. Պողարյանի ձեռագրաց ցուցակում (Եղմ., VII, էջ 193)։

12. ՏՈՂԱԳԻԾ ԾԱԾԿԱԳՐԵՐ

Տողագիծ ծածկագրության մի բնագիր ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 894 ձեռագրում (թ. 250բ)։ Երեք տողաշարքով այնտեղ գաղտնագրված է 63 տառանիշերից բաղկացած հետևյալ ծածկագիրը.

«Ծ ի ր ե ք ր ե տ ո ե ը է ե ն մ ա թ ո ի խ ր
ա ր ա տ բ ո ր ս Օ ա տ կ ր ի ե ց ո ւ ւ ն ե
ն տ վ ի ա վ թ ք թ ն մ բ ա մ ղ ն ղ թ ն դ ս»[21]։

Ձեռագիրը բովանդակությամբ «Մաշտոց» է, ընդօրինակված է Ղրիմի Կաֆա քաղաքում 1601 թվականին։ Ձեռագրի գրիչն է Գրիգորը. ծածկագիրն ավելի ուշ ժամանակի է։ Այդ երևում է ծածկագրողի հետևյալ հիշատակագրությունից. «Ես աճամ տեվեցի տ[է]ր խաչատուրի որդի Ղուկաս էրէցս, որ եկի Ղոմիս երկիրն, թվին ՌՃԽ և է (1698) էր, ի յամսեանն հոկտեմբերի ԻԵ(25) էր։ Երես անկեալ աղաչեմ ըզձեզ ո՞վ ընթերցօղք, մէկ մէկ բերան իմ մեղացն թողութիւն խնդրեցէք, Աստուած ձեր մեղքն թողու, ամէն։ Որ եմ պարտական հինգ քանքարացն, անուամբ միայն եմ Քահանայ, ոչ թէ գործով, վա՜յ ինձ, վա՜յ, վա՜յ ինձ»։

Բացի խնդրո առարկա ծածկագրից, ձեռագրի նույն էջում Ղուկաս Տեվեցին և խաչատուր երեց անունով մեկը թողել են սյունակետագիր և եղբայրագիր երեք փոքրիկ ծածկագիր։ Բերում ենք այդ ծածկագրերը՝ վերծանության հետ միասին[22].



21 *Տվյալ ծածկագիր բնագիրը մեր տրամադրության տակ է դրել Մատենադարանի ավագ գիտաշխատող Օ. Եգանյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը։*

22 *Սյունակետագիր և եղբայրագիր այս ծածկագրերը վերծանված են Օ. Եգանյանի կողմից։*

Եղբայրագիրը.

Ր տ բ փ գ ր լ փ ք ե գ ր ա ր ի հ ո գ ի
Տ[է]ր Ա ւ ե տ ի ք։

Ես Տեվեցի



էրէցս։

Սյունակետագիր և եղբայրագիր վերծանությունից մենք ունենք ծածկագրող երկու հեղինակի անուն՝ Տեր Ավետիք և Ղուկաս։ Թվում էր, թե այդ անունները հնարավորություն են տալու լուծելու առեղծվածը։ Այդ ուղղությամբ կատարած մեր փորձերը հաջողություն չունեցան։ Մեզ անսովոր երևացին ծածկագրում օգտագործված տառանիշերը. նրանց մեջ մեծ թիվ էին կազմում «ա»-ն, «ե»-ն և «ո»-ն, իսկ այդ ցույց էր տալիս, որ տառանիշերի հնչական արժեքները չեն փոխված։ Մնում էր ծածկագրի հանգույցը բաց անելու համար այլ ելք փնտրել։ Եվ այդ ելքը գտնվեց։

Պարզվեց, որ այդ ծածկագիրը գաղտնագրված է բոլորովին անսովոր ձևով և այն վերծանելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալը. սկսում ենք «ծ» տառից, իջնում երկրորդ տողի «ի»-ն, ապա՝ նրա տակի «ր»-ն և ստանում «ծանիր» բառը։ Այդ միջոցով՝ վերից վար, վարից վեր բարձրանալով, ամբողջ ծածկագիրը վերծանում ենք հետևյալ կերպ. «Ծանիր տ[է]ր Ավետիf, բարով երթաս fո օրևանըտ, մէկ բերան իմ մեղացն թողութիւն խնդրես»:

Ինչպես տեսնում ենք, ծածկագրող հեղինակն է եղել Տևեցի խաչատուրի որդի Ղուկասը, որը բարի երթ է մաղթում Ավետիքին։

Ծածկագիրն իր բովանդակությամբ պատմական արժեք չի ներկայացնում, սակայն այն կարևոր է իր գաղտնագրության ձևով, որը, իբրև ձանալի, կարող է օգտակար լինել նման տեսակի այլ, բայց ավելի արժեքավոր ծածկագրեր բաց անելու համար։

13. ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրության այս տեսակը կապ չունի հայկական տառանիշերի հետ։ Վերցվում են հայկական այբուբենի չորս դասի ինը գրերի համար իրարից տարբերվող գավազանաձև նշաններ և չորս կետերի համադրությամբ կազմվում ծածկագիրը։ Ըստ որում, մեկ կետը գործ է ածվում միավորների համար, երկուսը՝ տասնավորների, երեքը՝ հարյուրավորների և չորսը՝ հազարավորների։ Զուգակցելով ինը իրարից տարբերվող գավազանները չորս կետերի հետ, կազմվում է ծածկագրությունը։

Գավազանագիր որոշ ծածկագրերում կետերի թիվը իջեցվում է երեքի. միավոր թվական արժեք ունեցող տառերի վրա կետեր չեն դրվում, տասնավորների վրա դրվում է մեկ կետ, հարյուրավորների վրա՝ երկու կետ և հազարավորների վրա՝ երեք կետ։

Ծածկագրության մի քանի բանալիներ են հայտնի։ Մաշտոցի անվան մատենադարանի № 2001 ձեռագրում (թ. 229ա), որը 1313 թ. գրչությամբ է, գավազանների բանալին ներկայացված է հետևյալ տեսքով.



Մաշտոցի անվան մատենադարանի № 5975 ձեռագրում (թ. 34ա), որը 1467 թվականից է, գավազանագրի բանալին մասամբ տարբերվում է վերև բերվածից։ Այն հետևյալ տեսքն ունի.



Բոլորովին այլ ձև ունի Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 69 ձեռագրի ներքև բերված գավազանագրի բանալին։



Ծածկագրության այս բանալին հրատարակել է Ն. եպ. Պողարյանը և տողատակ ծանոթագրության մեջ նշել. «Հ. Աճառյանի հրատարակած ծածկագրերու շարքին մեջ չերևիր գավազանագիրը։ Ծածկագիրս կազմված է այսպես. Ա—Թ ինը գավազան, նույնպես Ժ—Ղ, Ճ—Ջ, և Ռ—Ք։ Գավազանը ունի երկու հոդ, սեպի նմանությամբ, և գլուխ։ Առաջին շարքի ինը գավազանագիրը ունին 9 տարբեր գլուխներ, իսկ հաջորդ շարքերը կզատորոշվին գլուխներուն վրա դրված կետերով. Բ շարքը կկրի մեկ կետ, Գ շարքը՝ երկու կետ, Դ-ն՝ երեք կետ, զետեղված եռանկյունաձև։ Գավազանագիր ծածկագրերը կիրարկությամբ հայտնի չեն» (Նշմ., էջ 233)։

* * *

Ակադ. Ն. Յա. Մառը Պետերբուրգի Արևելյան լեզուների ճեմարանի հայկական ձեռագրերի ցուցակում հրատարակել է տվյալ ինստիտուտի № 3 ձեռագրում գավազանագրով գաղտնագրված մի ծածկագրություն և վերծանել[23]։ Ձեռագիրը գրված է Վայոց ձորի Հերմոնի գրչության օջախում 1421 թ. Կարապետ Դերջանցի գրչի կողմից։

Բերում ենք այն վերծանության հետ միասին.

[23] Ն. Մառ, Հայկական ձեռագիրք ճեմարանի արևելյան լեզվաց ի Պետերբուրգ (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1892, էջ 82)։

Գաղտնագրված է «Խաչատուր» անունը, որը, ամենայն հավանականությամբ, գրչության ժամանակակից անձնավորություն է։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագրում, որը բովանդակությամբ «Յայսմաւուրք» է՝ ընդօրինակված Գրիգոր Վարագեցի և Նազար գրիչների կողմից, գավազանագիր գաղտնագրված են մի քանի անուններ։ Ըստ որում, գավազանագրի հետ նրանք գործ են ածել նաև եղբայրագիր ծածկագրեր։



Երկու ծածկագրերի մեջ գրել է հղում. «Եթէ հմուտ ես դու սորին, նա չես յաջաթ իմ խրատին» («յաջաթ»՝ նշանակում է հակառակ)։

Առաջին գավազանագիր բառը վերծանվում է «Գ ր ի գ ո ր»։ Գավազանագրի տակ գրված տառերը փոխարինագիր ծածկագրով դարձյալ կարդացվում են «Գ ր ի գ ո ր»։ Իսկ երկրորդ գավազանագիրը վերծանվում է «Վ ա ր դ ա ն»։ Նրա տակ գրված տառերը եղբայրագիր ծածկագրով նույնպես վերծանվում են «Վ ա ր դ ա ն»։

Գրիգորը՝ իր անունն է, իսկ Վարդանը՝ իր լծակից ընկերոջ՝ Վարդան գրչի։

* * *

Թ. 277բ

Ոմն ի յերկրէն Ըռշտունեաց,
Էր յոյժ փարթամ յամէն բարեաց,
Նա բարելի սեղան կազմեաց,
Զամեններան ի ճաշ կոչեաց,
Ով յայն հացէն ապստամբեաց,
Նա յաւիտեան քաղցած մնաց։



Սրանք չնայած տարբեր էջերում են (առաջինը՝ թ. 277բ, իսկ երկրորդը՝ 288ա), իրար մոտ բերելիս գավազանագրով և եղբայրագրով վերծանվում են.

Դ Տ Լ Դ Շ Տ
Գ ր ի գ ո ր

Նույնը և՝ գավազանագիրը.

Թ. 284ա

Հովիվ մի կայար խիստ լաւ ճարտար,
Աստուածաբանութեան կամարար,

Գնայուն աղբիւր զվէմն արար,
Զլեղին արբին քան զշաքար։

Վերծանված է.



* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 9758 ձեռագրում, որը գրված է 1814 թ. Ավետիք Բաղիշեցի գրչի կողմից ու իր բովանդակած նյութով մեծ արժեք ունի արհեստագործության պատմության համար, ունի գրչի անվան գավազանագիրը հիշատակարանի հետևյալ հատվածում. «Գիրք արւեստականաց... ժողովեալ եղև այժմ ի բանասիրէ յումեմնէ վարդապետ Բաղիշեցւոյ, որ ասի Սալաձորցի ի հայրապետութեան տեառն Եփրեմ սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց ՌՄԿԳ և յամի տեառն 1814 և նոյեմբերի Բ(2) օրն» (թ. 5ա)։

Ծածկագրված է մեկ կետ պակասով։



* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2370 ձեռագրում (թ. 1ա) գավազանագիր ծածկագրության երկու տարբեր բանալիներ են բերված, որոնցից մեկը վերնագրված է «Այբուբենքս գաւազանագիր են, ո՛վ եղբայր», իսկ մյուսը՝ «Այբուբենքս նշանագիր են, ծանիր»։ Ձեռագրի գրիչը Պողոս Տյուրիկեցին է, հավանաբար նա էլ ծածկագրի բանալիները ներկայացնող հեղինակն է։

Գավազանագիր ծածկագրության մի այլ բանալի հանդիպում է Մաշտոցի անվան մատենադարանի № 5943 ձեռագրում՝ գաղտնագրության մի քանի այլ տեսակի բանալիների հետ միասին (թ. 21ա)։ Ձեռագրի գրչությունը 18-րդ դարից է։

Գավազանագիր ծածկագրության ավելի պարզ տեսակի մի բանալի հրատարակել է բանասեր Բ. Կյուլեսերյանը Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում (սյուն. 70)՝ № 144 ձեռագրի մեջ գրված օրինակի հիման վրա։ Բանալին վերնագրված է. «Գաւազանագիր կու անվանի այս գիրս»։ Ձեռագիրը 18-րդ դարից է։

14. «ԱՂՎԱՆԱԿԱՆ» ԿՈՉՎՈՂ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ձեռագրերում մեկ-մեկ հանդիպում են «Աղուանից գիր» անունով յուրատեսակ նշանագրերով այբուբեններ և այդ գրով կազմված հայկական ծածկագիր բնագրեր, որոնց տառատեսակները նմանություն չունեն ո՛չ Մաշտոցի անվան մատենադարանի № 7117 ձեռագրի հանրահայտ բուն աղվանական այբուբենին և ոչ էլ Մինգեչաուրի աղվանական վիմագիր արձանագրությունների տառանիշերին։ Կովկասագիտության մեջ այդ գրատեսակների մասին բավականին թեր և դեմ կարծիքներ են հայտնվել. ոմանք գտնում են, որ այդ գրության տառաձևը բուն աղվանականից է և հետագայում, հայ ծածկագրության մեջ օգտագործելու հետևանքով, փոփոխվել է, բայց պահել իր անունը, իսկ ոմանք ժխտում են։

Հ. Աճառյանի կարծիքով այդ գրության «աղուանական» անվանումը շփոթության հետևանք է. այն սկզբում ունեցել է «աղունական» անունը՝ ծածկագիր նշանակությամբ, իսկ հետագայում շփոթվելով դարձել է «աղուանական»։ «Աղավնագիր *բառը,—գրել է նա,— (աղավնիի գիր), որ ըստ իս բուն «ծածկագիր» նշանակությունն ունի, ճիշտ այնպես, ինչպես ունենք ծածկալեզվի համար* ճնճղկի լեզու, ագռավի լեզու *կամ* կռկերեն: *Այս աղավնագիր բառը հեշտ շփոթվելով, դիտմամբ կամ պատահմամբ, դարձել է* աղուանից գիր, *և այս առումով ալ հիշված են ծածկագրերը մեր ձեռագրերու մեջ տեղ-տեղ»[24]։*

Մենք ևս մեր երկու հոդվածներում՝ «Աղվանական համարվող մի քանի բնագրերի շուրջը» և «Աղվանական կոչվող ծածկագրության տառաձևը», խնդրո առարկա գրությունը համարել ենք հայկական ծածկագրություն. «Իրողություն է այն,— գրել ենք մենք,— որ մեզ հայտնի «աղվանական» համարվող բոլոր բնագրերն էլ, բացառությամբ Մինգեչաուրի պեղումներից հայտնաբերված արձանագրությունների և Մաշտոցի անվան մատենադարանի № 7117 ձեռագրի բնագրերի, որոնք գրված են իրոք բուն աղվանական տառանիշերով, մյուսները հայկական ծածկագրեր են։ Մեզ հայտնի չէ այդ նշանագրերով թեկուզ մի բառ, որ հայկական ծածկագիր չլինի։ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում մեզ հայտնի է արհեստագործական բովանդակությամբ մի բնագիր, որն ամբողջապես գաղտնագրված է այդ ծածկագրով։ Եթե մենք Աճառյանի հայտնած կարծիքը նույնիսկ համարենք անհիմն և չընդունենք, որ «աղունական» բառն աղավաղվել է «աղվանականի», դարձյալ իրականը կմնա այն, որ մեզ հասած «աղվանական» բնագրերը հայկական ծածկագրեր են, և այն գաղտնագրողներն «աղվանական» տառերով նկատի են ունեցել ծածկագրություն»[25]։

Հայկական մատենագրության մեջ աղվանից ծածկագրության մի քանի տեսակի բանալիներ են հայտնի, որոնց նշանագրերը զգալի տարբերվում

24 *Հ.* Աճառյան, *Հայոց գրերը, էջ 478։*

25 Ա. Գ. Աբրահամյան, *«Աղուանից» կոչվող ծածկագրության տառաձևը (տե՛ս «Լրաբեր հաս. գիտությունների», 1970, № 12, էջ 86—87)։*

են իրարից, ուստի անհրաժեշտ ենք համարում նրանց վրա կանգ առնել առանձին-առանձին։

Աղվանից այբուբենի մի բնագիր կովկասագիտության մեջ հայտնի է եղել շատ վաղուց՝ 1838 թվականին։ Այն հրատարակել է ֆրանսիացի հայագետ Եվ. Բորեն[26]։ Այդ հրատարակության համար հիմք ծառայած ձեռագիրը ներկայումս գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 2013-ի տակ։ Ձեռագրի գրչությունն այնքան էլ հին չէ. ընդօրինակված է 1756 թ. Կարապետ գրչի կողմից։ Աղվանական այբուբենը գրի է առնված հայկական, հնդկական, ասորական և լատինական այբուբենների շարքում զարդագիր գրչախաղից հետո։ Վերջինիս մեջ գաղտնագրված հայկական գրությունը վերծանվում է. «Այս է գիր արարածոց, զոր գրեաց Մովսէս ի գիրս իւր»: *Գրչախաղից հետո բերվում է աղվանական այբուբենը, որի վերջում հայերեն նոտր գրով նշված է.* «աղւնց», *որը համառոտագրություն է, անշուշտ, «Աղուանից» բառի։*

(ՄԱՄ, ձեռ. № 2013, թ. 2ա)



Բորեն սխալմամբ այն կարծիքն է հայտնել, որ իր հրատարակած այ-
բուբենը իբրև թե աղվանական այն այբուբենն է, որն ստեղծել է Մաշտոցը
աղվանների համար, բայց կորել է և փնտրվում է կովկասագիտության մեջ։
Սակայն բանասեր Խորեն Ստեփանեն, պատմահայր Խորենացու աշխարհա-
բար թարգմանության ծանոթագրություններից մեկի մեջ, իրավացի նկա-
տել է, որ «Բորեի գտածը՝ իբր թե աղվաներեն այբուբենը, ամենատգետ
հայն կհասկանար, որ մեր հայկական նոտր գիրն է»[27]։

Աղվանական մի այբուբեն ընդօրինակված է Մաշտոցի անվան մատե-
նադարանի № 3124 ձեռագրում։ Այն հրատարակել է ակադ. Ա. Շանիձեն
1938 թ. «Կովկասյան աղվանների այբուբենի հայտնագործության շուրջը»
խորագրով ուսումնասիրության մեջ։ Ձեռագիրն ընդօրինակված է Մնացող
գրչի կողմից 1757 թ.։ Ծածկագրությունը վերնագրված է. «Այս է Աղուանից
այբուբենն»:

Շանիձեն, ուսումնասիրելով աղվանական այբուբեն համարվող այս
տառանիշերը, եկել է այն հետևության, որ «Չի կարելի նշված այբուբենը
համարել աղվանական, որովհետև այն պարունակում է փոքր-ինչ ձևափոխ-

26 Eugène Boré, Correspondance et mémoires d'un voygeur en Orient, t. II, Paris, 1840, p. 34—53: *(Օգտվել ենք Ն. Ակինյանի «Ս. Մաշտոց վարդապետ» աշխատությունից, էջ 321)։*

27 Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանություն Խորեն Ստեփանեի, ՍՊբ, 1898, էջ 485։*

ված հայկական տառանիշեր, որը ստեղծվել է ծածկագրության կարիքների համար»[28]։



Որ այս այբուբենն, իրոք, հայկական ծածկագրություն է՝ ստեղծված ուշ դարերում, դժվար չէ համոզվել հայկական «և», «օ» ու «ֆ» տառանիշերի առկայության փաստից, տառանիշեր, որոնք հայկական գրչության մեջ են մտել ուշ դարերում։

Շանիձեի հրատարակած այս այբուբենի խմբին է պատկանում Մաշտոցի անվան մատենադարանի № 771 ձեռագրի այբուբենը, որն ունի 18-րդ դարի գրչություն։ Այբուբենը վերնագրված է. «Գիր աղվանից ըստ այբուբենից»։ *Այբուբենի բնագիրը ներկայացված է երեք շարքով. առաջին շարքում այբուբենի տառանիշերը հասցված են մինչև «Մ»-ն, սակայն «Ջ» և «Ղ» տառերը բաց թողնելու և «Ճ»-ի նշանագիրը ճիշտ չարտահայտելու հետևանքով տառաշարքը թերի է թողվել, այն վերցվել է կլոր փակագծի մեջ, իսկ հաջորդ երկու շարքով տրվել այբուբենը մինչև «Ֆ» տառանիշը։ Ծածկագիր տառանիշերի հնչական արժեքը հայկականով չի տրված։*



(ՄԱՄ, ձեռ. № 771, թ. 202բ)

Աղվանական երկու այբուբեն գրի է առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 7017 ձեռագրում, որն ընդօրինակված է 18-րդ դարում։ Այս երկու այբուբեններն էլ չունեն վերնագրեր, չկան նաև հիշատակություններ նրանց աղվանից համարվելու մասին։ Այբուբեններից մեկը գրի է առնված երեք շարքով, իսկ մյուսը՝ երկու։ Երկրորդի ներքևում բերված են «Տ», «Ր» և «Ք» տառերի նշանագրերը և նրանց համապատասխան հայերեն տառերը։ Ծածկագրված տառերի կողքին երևում են նաև «Ք» և «Տ» տառանիշերի նմանվող նշանագրեր։

Մատնացույց արված այդ երկու աղվանից այբուբեններում, չնայած կազմված են նույն սկզբունքով, որոշ նշանագրեր տարբերվում են իրարից։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 69 ձեռագրում ընդօրինակված են հայկական ծածկագրության յոթ տեսակի տարբեր բանալիներ, որոնցից մեկը՝ աղվանական։ Ձեռագիրը շատ հին չէ. գրված է 1728 թ.։ Ձեռագրի գրիչն է խաչերի որդի Արությունը, իսկ պատվիրատուն՝ Եսայի Կեսարացին։ Ծածկագրության այդ այբուբեն-բանալին հետևյալն է։



Աճառյանի հրատարակած «աղվանական» այբուբենի տառանիշերին մեծ նմանություն ունի Մաշտոցի անվան մատենադարանի № 8716 ձեռագրում ընդօրինակված «աղվանական» այբուբենը։ Չորս շարքով, վանդակների մեջ առած, բերվում են նշանագրերը, իսկ նրանց տակ առանձին տողերով տրվում հայկական համապատասխան տառանիշերը։ Ի տարբերություն մյուսների, այս այբուբենում բացակայում են «և», «օ» և «ֆ» տառերը։ Ծածկագրության տակ հայերենով նշված է. «Այս գիրս է Հայոց, որ նախ արարին»: *Աճառյանի հրատարակած աղվանականի, ինչպես և այս այբուբենի նշանագրերը զգալի տարբերվում են ծածկագիր աղվանականի տառանիշերից։*

Հ. Աճառյանը «Հայոց գրերը» աշխատության հավելվածում վերահրատարակել է Միրայր Հիսուսյան քահանայի տարինիր առաջ հրատարակած «Նախաարշակունյան», «Նախավրացական» և «Նախահայկական» անուններով ծածկագիր բանալիները։ Դրանց մենք անդրադարձել ենք մեր «Աղվանական համարվող մի քանի բնագրերի շուրջը» հոդվածում և ցույց տվել, որ «Նախամեսրոպյան» կոչվող այս այբուբենը ոչ մի կապ չունի իրական նախամեսրոպյան գրերի հետ և ծածկագիր աղվանականի տարբերակներից մեկն է՝ կազմված ուշ դարերում հայկական տառանիշերի աղանձի վրա։ «Նախամեսրոպյան» այս այբուբենի տառանիշերը համեմատության մեջ դնելով Մաշտոցի անվան մատենադարանի № 771 ձեռագրի ծածկագիր աղվանական այբուբենի հետ, մենք եկել ենք հետևյալ եզրակացության.

[28] **А. Г. Шанидзе,** К открытию алфавита кавказских албанцев (отдельный оттиск), стр. 47.

Ա. «Նախամեսրոպյան» համարվող գրերը պատճենահանված են աղվանական ծածկագրությունից։

Բ. «Նախամեսրոպյան» այդ գրերը հորինված են հայկական տառանիշերից, աննշան փոփոխություններով, պահելով նաև հայկական այբուբենի տառաշարքը։

Գ. «Նախամեսրոպյան» այդ գրերը 13-րդ դարից ավելի հին լինել չեն կարող, քանի որ այբուբենի մեջ գտնվում են «և», «օ» և «ֆ» տառերը։

Դ. «Նախամեսրոպյան», ավելի ճիշտ՝ աղվանական ծածկագիր այբուբենի նշանագրերը հորինվել են ոչ թե հին հայկական երկաթագրի վրա, այլ՝ բոլորգրի և նոտրգրի վրա։ Հայկական հնագրությամբ զբաղվող մասնագետներին քաջ հայտնի է, որ «ձ» տառը գրվում է ոչ թե ներկայիս փոքրատառ ձևով, այլ՝ «Ձ» ձևով, «շ» տառը գրվում է ոչ ներկայիս շշաձև փոքրատառով, այլ՝ «Շ» ձևով, «յ» տառը գրվում է ոչ թե ներկայիս փոքրատառով, այլ՝ «Յ» ձևով և այլն։ Եվ այսպես, նշել ենք մենք, անտեղի է ժիրայր քահանայի հրատարակած այբուբեններում «նախամեսրոպյան», «նախաարշակունյան» և «նախավրացական» գրեր փնտրելը։

Ակադ. Հ. Աճառյանը «Հայոց գիրը» աշխատության մեջ, ծածկագրերի համադրական ցանկում, հրապարակել է աղվանից այբուբենից մի տարբե-



ՄԱՄ, ձեռ. № 8952, թ. 25ա։

րակ՝ հիմք ունենալով իր ձեռքի տակ եղած նյութերը, ինչպես և «բժշկական» կոչվող ծածկագրի այբուբենը, որը նույն աղվանական ծածկագրությունն է։

«Բժշկական» ծածկագրության այբուբենը թերի է. պակասում են Բ, Ը, Թ, Ժ, Խ, Ծ, Հ, Ձ, Ջ, Ռ տառերի նշանագրերը։

Աղվանական այբուբենի վեց տարբերակ մի էջի վրա գրի է առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 8952 ձեռագրում։ Այս վեց տարբերակներից ոչ մեկը չունի վերնագիր և նշում չկա, որ նա իրոք ճանաչված է իբրև աղվանական։ Ձեռագիրը նոր է. ընդօրինակված է 18-րդ դարում։ Հինգ այբուբենները երկու շարքից են, իսկ երրորդը՝ մեկ և ընդհատվում է «լ» տառում։ Շարադրված է հետևյալ սկզբունքով. նախ տրվում են աղվանական այբուբենների շարքերը, ապա նրանց տակ՝ հայկական տառանիշերը ըստ համապատասխան հնչական արժեքների։ Բացառություն է կազմում յոթերորդ այբուբենի խումբը, որը տրված է առանց հայկական տառանիշերի վերծանության։



ՄԱՄ, ձեռ. № 8360, թ. 570բ։

Աղվանական այբուբենի մի այլ տարբերակ գրի է առնված Մելքոն Քառամխյանի կողմից 1867 թ. Վանում ընդօրինակված ձեռագրում, որն ախտարական բովանդակություն ունի։ Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 8360-ի տակ։ Այբուբենը զետեղված է երեք սյունակների մեջ։ Տառաշարքերը շարադրված են վերից վար։ Հայկական համապատասխան տառերի դիմաց տրվում է աղվանականը։ Այբուբենի այս տարբերակում ևս առկա են հետամուտ «և», «օ» և «ֆ» տառերը։

Աղվանական ծածկագրության մի բնագիր ընդօրինակված է Հովհաննես Ստամբոլցու կազմած ժողովածուում։ Ձեռագիրը 18-րդ դարի գրչությամբ է, նրա պատվիրատուն է Պետրոս կաթողիկոս Հալեպցին։ Այբուբենը վերնա-

գրված է. «Տarr ադուանից, որ է այսպէս»: Շարադրված է հետևյալ կերպ. հինգ շարքով բերվում են նախ հայկական տառանիշերը և նրանց տակ՝ աղվանականը: Ձեռագիրը գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 8562-ի տակ:

Բերված բոլոր աղվանական կոչվող ընդօրինակությունները 17—18-րդ դարերից են: Ըստ որում, նրանցից ոչ բոլորը վերնագրեր ունեն և ոչ միշտ է նշվում նրանց աղվանական լինելը: Դժվար չէ նաև նկատել, որ նրանց տառաձևը ուշ շրջանի հայկական բոլորգիրն է:



ՄԱՄ, ձեռ. № 8562, թ. 69ա:

* * *

Աղվանական ծածկագրությամբ գաղտնագրված հնագույն բնագիրը 1527 թվականից է: Այն գրի է առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 6644 ձեռագրում, որի գրիչը, զարդանկարողը և ծածկագրողը Եղիշե Արևելցին է:

Առաջին ծածկագիրը հետևյալն է.



Հեղինակը ծածկագրի տակ գրել է հղում. «Թէ կարդաս, ես քեզ ծառայ եմ» (ՄԱՄ, ձեռ. № 6644, թ. 144բ):

Ձեռագրում ծածկագրի կողքին գրված է նաև վերծանությունը, միայն այնտեղ սխալմամբ «Եղիշայ» անունը վերծանված է «Եղիեայ». «ՁԱրևելցիս զԵղիշայ կրաւնաւոր և զհայրն իմ Մալիք Սուլտանն»:

(Հրատ. ՀԳԳՊ, 221, ՊԲՀ, 1958, I, էջ 181—182, ՀԳԳ, 277):

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6644 ձեռագրի երկրորդ ծածկագիրը հետևյալն է.



Վերծանությունը գրված է ծածկագրի տակ. «Թողութիւն արարէք ինձ Եղիշայ կրաւնաւորի: Եւ ես մոլորեցայ ի երկրէն իմ, որ այժմ Թաւէն կոչի յազգըն մերս»:

(ՄԱՄ, ձեռ. № 6644, թ.163ա)

* * *

Երրորդ ծածկագրի բնագիրը ընդարձակ է, որպես հեղինակ հիշված է Հայրապետ Սեբաստացին, սակայն գրված է Եղիշե խաչենցու ձեռագրով: Ծածկագրի սկզբում կա հետևյալ հիշատակագրությունը. «Ես շատ նայելով ուսայ զայս գիրս առանց վարպետի»: Վերջում նույնպես հիշատակություն կա. «Խիստ հեշտ է, թէ շատ որոնես»:

Ծածկագիրը այս է.



Վերծանությունը.

«Գրեցաւ սակաւ աշխատանքս որ կոչի գաւազանք ի ս[ուր]բ քաղաքս յԵ[րուսա]ղ[է]մ ի հռչակաւորանքս Հայոց ի ս[ուր]բ Յակոբ, ձեռամբ մեղաւոր գրչի՝ Հայր[ա]պետ կրաւնաւորի Սեպաստեցոյ: Վասն որոյ երես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ թողութիւն մեղաց խնդրել Ա[ստուծո]յ բազմայմեղ գրչիս և ծնողաց իմոց և եղբարց և քերց և յա[մենայ]ն զարմից կենդանեաց և ննջեցելոց և Ք[րիստո]ս զձերն թողցէ նախ և ապայ զմերն, և նմայ փառք յաւիտեանս ամէն: Յոյժ ձմեռն եղև Ե[րուսա]ղ[է]մ, և 6 անգամ ձիւն երեկ, որ ոչ ոք յիշէր»:

Լուսանցքում. «Թվ[ա]կ[ա]նին Հայոց ՉՀՁ (1327)»:

Ծածկագրի տակ ուշ ժամանակի անվարժ գրչով գրված է. «Ես Կիւ[ր]եղ ուսայ առանց վարպետի». գաւազանագիրը է (թ. 165բ):

* * *

Հայ մատենագրության աչքի ընկնող դեմքերից մեկը՝ տաղերգու Հովասափ Սեբաստացին ձեռագիր է ընդօրինակել և զարդանկարել Սեբաստիայում, 16-րդ դարի քառասունական թվականներին և իր անունն այդ ձեռագրում գաղտնագրել աղվանական ծածկագրությամբ: Գաղտնագիրը հետևյալն է.



Ծածկագրի այս բնագիրը առաջին անգամ հրատարակել է պրոֆ. Ն. Քարամյանցը 1886 թվականին «Քսան և մի տառանիշ կորած այբուբենից» սենսացիոն վերնագրով[29]*: «Կորած այբուբեն» ասելով նա նկատի է ունեցել աղվանական այբուբենը: Նա այն համոզումն է ունեցել, որ իրեն հաջողվել է գտնել աղվանական կորած գրության մի նմուշ: Այս սխալ կարծիքը հետագայում մերժել է բանասեր Ֆ. Մուրատը. «Աներկբա է,— գրել է նա,— վերոգրյալ նշանագիրք բնավ չկարեն լինել մնացորդ ինչ կորուսյալ անհայտ գրոցն աղվանից, այլ մանավանդ, որպես ակնհայտն երևի՝ ստուգիվ խորհրդով այլաձևյալ և հերյուրյալ իսկական հայերեն նշանագիրք»*[30]*:*

Ծածկագիրը վերծանվում է. «Յիշեցէֆ զմեղապարտ Յովասափ սարկաւագն»:

(Հրատ. ՀԳԳՊ, 219—220, ԲԵՀ, 1958, № 1, էջ 180—181, ՀԳԳ, էջ 273—274):

[29] **N. Karamianz,** Einundzwanzig Buchstaben eines verlorenen Alphabets („Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft", 40, 1886, էջ 315—319).

[30] Ֆ. Մուրատ, *Նշանագիրք իմաստնոց («Հանդես ամսօրյա», 1903, էջ 333—335):*

* * *

Կիպրոսի հայկական ձեռագրական ժողովածուի № 16 ձեռագիրը գրված է Պետրոս գրչի կողմից, 1303 թվականին: Գրչությունից երկու հարյուր տարի հետո այն ընկել է Հովասափ Սեբաստացու ձեռքը, որը և աղվանական գաղտնագրությամբ թողել է հետևյալ հիշատակագրությունը.



Վերծանվում է. «Զմեղապարտ Յովասափն յիշեցէֆ ի տ[է]ր զՄուրատն»: *Կիպրոսի ձեռագրական ժողովածուն տեղափոխվել է Անթիլիասի կաթողիկոսարանի գրադարանը (օգտվել ենք անմիջապես ձեռագրից):*

(Հրատ. ՀԳԳՊ, 224, ՊԲՀ, 1958, № 1, էջ 183, ՀԳԳ, էջ 278):

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 848 ձեռագրում, որն ունի 16-րդ դարի գրչություն, Հովասափ Սեբաստացին թողել է աղվանից գաղտնագրությամբ հետևյալ հիշատակագրությունը.



Ծածկագրին ծանոթ է եղել Ն. Ակինյանը. նա Մաշտոցի անվան մատենադարանի իր կազմած ձեռագրաց ցուցակում (անտիպ), գրչագրի նկարագրում թողել է հետևյալ ծանոթագիրը. «Ստորև կա հին թերթիկի վրա ծածկագրություն, հունական նշանակագրերու նկարագրով, զոր չեմ կարող լուծել»:

Ակինյանի ակնարկած «հունարեն նկարագրով» գրությունը իրականում աղվանական ծածկագրություն է, որը դյուրությամբ վերծանվում է. «Զմեղապարտ Յովասափ սարկաւագս յիշեց[էֆ]»:

Կասկած լինել չի կարող, որ ծածկագրող հեղինակը մեզ ծանոթ Հովասափ Սեբաստացին է:

(Հրատ. ՊԲՀ, 1965, № 4, էջ 231—232: ՀԳԳ, էջ 277—278):

* * *

Աղվանական մի տող ծածկագրություն գրի է առնված Անկյուրիայի մատենադարանի № 92 ձեռագրի 474-րդ էջում։ Գլխավոր հիշատակարանից երևում է, որ ձեռագիրը գրված է 1584—1597 թվականներին, Սարգիս գրչի կողմից, որը ընթերցողներից խնդրում է հիշել «զՍարգիս անուն տարաժամ ոգին, զոր յիշելոյ չեմ արժանին»։

Ծածկագրությունը նմանահանությամբ հրատարակված է Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում (Անկ., սյուն. 468), բայց ո՛չ ցուցակ կազմող Բ. Կյուլեսերյանը և ոչ էլ այն հրատարակողները չեն փորձել վերծանել։

Ծածկագիրը հետևյալն է.



Վերծանվում է. «Ցույց ի տէր Սար[գ]սին»:

«Ցույց» բառն այստեղ գործ է ածված «բարեխոսության», «հիշելու» իմաստով։ Կասկած լինել չի կարող, որ ծածկագրող հեղինակն ինքը՝ գրիչն է։

(Հրատ. ՊԲՀ, 1965, № 4, էջ 232—233)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6731 ձեռագիրը գրված է Լվով քաղաքում, Գրիգոր Տոմարժիրսկու կողմից։ Այդ ձեռագրում վանեցի Հովասափ անունով մեկը 1652 թվականին աղվանագիր ծածկագրով թողել է հետևյալ հիշատակագրությունը.



Ծածկագիրը վերծանվում է. «Զի զfո [է] արfայութիւն: Թվի[ն] ՌՃԳ (1654): Վանեցի է»:

(Հրատ. ՊԲՀ, 1958, № 1, էջ 183։ ՀԳՊ, 223—224)։

* * *

Աստվածատուր երեց Ղալաթեցին Նիկողայոս եպիսկոպոսի պատվերով 1706 թ. ընդօրինակել է «Մեկնութիւն ժամանակագրութեան» աշխատությունը և աղվանագիր ծածկագրությամբ թողել չորս տողանոց մի գաղտնագիր։ Ձեռագիրը Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի սեփականությունն է և գրանցված է № 1000-ի տակ։

Ծածկագիրը հետևյալն է.



Վերծանվում է.

Ես ձեզ աղաչեմ ով եղբարք իմ
մի մոռանայցէք զգիս զմեղա-
ւորս իմ յիշել աղաօթիւք զ-
ցայգ և ցորեկ յիշելոյ. ՌՃՀԱԻՆ (Եղմ., III, էջ 619)։

Հրատարակել է Ն. Պողարյանը և վերծանել։ Վերանայման կարիք ունի գրչության տարեթիվը. տասնավոր ծածկագիր թվանշանը ոչ թե «Հ» է, այլ՝ «Կ», հետևապես ձեռագրի գրչության թվականը կլինի ո՛չ թե ՌՃՀԱ (1722), այլ՝ ՌՃԿԱ (1712), այսինքն՝ վեց տարի առաջ։

* * *

Աղվանական ծածկագրությամբ երկու տող հիշատակագրություն է պարունակում Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանի № 138 ձեռագիրը, որի գրիչն ու գրչության վայրը հայտնի չեն։

Ծածկագիրը հետևյալն է.

Արդ գրեցաւ ձեռամբն



(Անկ., սյուն. 676)

Բ. Կյուլեսերյանը չնայած չի վերծանել ծածկագրությունը, սակայն կռահել է, որ ձեռագրի գրչի անունը պետք է որ գաղտնագրված լինի ծածկագրության մեջ. «Գոնե գրչին անունը պիտի գիտնայինք,— գրել է նա,— եթե կարելի ըլլար մեզ քակել 342ա էջի ծածկագրությունը» (Անկ., էջ 673)։

Ծածկագիրը ուշագրավ է նրանով, որ աղվանական նշանագրերի հետ միասին օգտագործված են օղակետագիր ծածկագրության նշանագրեր մեկ կետ պակաս հաշվով։ Ծածկագրի սկզբում դրված «մէկ մէկ Բ»-ն գումարգիր է և վերծանվում է Դ տառով (1+1+2=4)։ Այս առանձնահատկությունները հաշվի առնելով, ծածկագիրը կվերծանվի.



Վերծանությունը նախադասության ամբողջության մեջ կկարդացվի. «Արդ՝ գրեցաւ ձեռամբն դպիր Եղիային, ամէն»:

* * *

Իր տառաձևերով աղվանագիր ծածկագրությունը նմանվում է Մյունխենի արքունական մատենադարանի հայկական ձեռագրական ժողովածուի № 7 գրչագրի պարունակած ծածկագրին։ Այս ծածկագրի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել բանասեր Գ. Գալեմքերյանը, որը իր «Ջեռագրաց ցուցակում» հետևյալ տեղեկությունն է հաղորդել. «Այս գրությունը, որովհետև 15 տող մաքուր գրված է, գրչի խաղ չի կարելի համարել։ Մենք համեմատելով Ն. Քարամյանցի «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft» լրագրույն մեջ (X և BD. II Heft, s. 315—319) հրատարակված աղվանից գիր համարված գրերուն հետ, քանի մի տեղ ճշգիվ նույնություն գտանք»[31]։

Ակադ. Ա. Շանիձեն Մյունխենի մատենադարանից ստացել է այդ ծածկագրի լուսանկարը, ուսումնասիրել այն, վերծանել և բնագիրն իր հետազոտության հետ միասին հրատարակել Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում»[32]։

---

31 Գ. Գալեմքերյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Արքունի մատենադարանին ի Մյունխեն, Վիեննա, 1892, էջ 21։

32 **А. Г. Шанидзе**, Криптографическая запись в одной армянской рукописи из Мюнхенской коллекции (Հայկ. ԳԱ-ի «Տեղեկագիր» 1960, № 9, էջ 91—98)։

Ծածկագրի գծանկարը հետևյալն է.



Շանիձեն իրեն հատուկ բարեխղճությամբ և բծախնդրությամբ վերծանել է.

Թվականութի ի գալստենէն
փրկչին մերմէ իամին Ռ Ճ Լ Գ (1683)
ամի ապրիլ ամսոյն Ժ Բ (12) օրն
լեհաց տումարաւ, հայոց տումարաւ ապրիլի Բ. ըն (2-ըն)։
Յայն ժամն Դաւիթ անուն
ալաման էր պուռմիստրի
Պօիանդովիչն էր բոցգաուդի։
Այս տարիս էր որ ի Վարշաւս
քաղաքացի գրվեցանք։

Ծածկագրում, ինչպես նկատել է Շանիձեն, թվանշան տառերի և տերունական բառերի վրա կետեր են դրած, փոխանակ պատվի նշանի։ Վեցերորդ տողի ռ-ի փոխարեն սխալմամբ գործ է ածված ա-ի նշանագիրը։ Շանիձեն սխալ է համարում նաև վերջին գրվեցանք բառի մեջ գործածված շ-ի նշանագիրը և ենթադրում, որ այն շփոթություն է ի տառի կամ ավելորդ տառ է։

Մեր կարծիքով, վիճելի նշանագիրը վ̇ տառն է, և տվյալ բառը պետք է կարդալ «գrեցանf», այսինքն՝ գրացվեցինք։

Շանիձեն կասկածանք է հայտնել նաև ծածկագրի մեջ գործածված ՌՈՁԴ թվականի մասին, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ձեռագրի գրիչ Գրիգոր ոսկերչի գլխավոր հիշատակարանից երևում է, թե ձեռագիրը գրել ու ավարտել է 1673 թվականին, հետևապես տասը տարի հետո չպետք է որ գրած լիներ ծածկագիրը։ Որքան էլ համոզեցուցիչ լինի Շանիձեի կռահումը, այնուամենայնիվ, ծածկագրում որոշակի երևում է 1684 թվականը, որը սրբագրելու հիմք չունենք։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 7715 ձեռագրի, որը տաղերի և պատմա-կրոնական նյութերի ժողովածու է՝ ընդօրինակված Պապիկ, Անտոն և Գրիգոր գրիչների կողմից Հովհաննես անունով մեկի պատվերով 18-րդ դարում (1717 թվականից առաջ), թերթ 80բ-ում գրի է առնված նաշադիր պատրաստելու մի դեղատոմս։ Հեղինակը ցանկանալով, որ այդ հասկանալի չլինի բոլորին, վերնագիրը գաղտնագրել է աղվանական ծածկագրով։ Այդ վերնագիրը վերծանվում է. «Նիշատիր շինելու մասին»։

* * *

Աղվանագիր ծածկագրությամբ ամենաընդարձակ գաղտնագիրը (20 էջից ավելի) գրի է առնված Ավետիք Սալաձորեցու «Գիրք արուեստականաց» վերնագրով աշխատության մեջ։ Սա պարունակում է արհեստագործության՝ ոսկերչության և արծաթագործության վերաբերող խորհուրդներ։ Ձեռագիրը գրված է 1814 թ., գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում (№ 9758)[33]։

Բերում ենք այդ խորհուրդներից մի քանիսը՝ մեր վերծանությամբ.

Լուսացում բորակի





(6ա—6բ)

[33] Այս ծածկագրի մասին խոսել է պատմական գիտությունների դոկտոր Ա. Շ. Մնացականյանը (տե՛ս «Լրաբեր» Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1973, № 2, էջ 91—97)։

Առ զգուպու բորակն և լիցի ի հեփեալ
ջուրն և եփեա մի պահ և դիր հռաւաղն
որ պարզի և ապա քամեա քէչէյով և կրկին
եփեա մինչև ցամաքի և բորակ պատրաստեալ
և մաքրեալ լինի։

* * *

Երկաթի ժանգ, որ ասի աղբերց արիւն



(թ. 7ա)

Առ զերկաթն և օծ ըկեալ նշատրիւ կախէ ի վերայ քացախին, թող որ ժանգ բռնէ, քերէ և այդպէս արա բազում անգամ, մինչև ունիցիս ըստ բաւականին և պահէ մինչև գործ ածէս։

* * *

«Բորակ շինելոյ խրատ» գլխի տակ ծածկագրված է (բերում ենք վերծանությունը).

Առ մի լիտր ղալէքար և մի լիտր կիր, ծեծէ
մանր, զերկուսն բեր թաղար մի, և վօռն ծակէ
շաղափով մի և զորքա լից ի մէջ թաղարին, և Բ (2)
լիտր ջուր լից և վ̄ր և խառնէ և թող որ սուզմիշ
լինի, և ջուրն 3 անգամ դարձոյ ի վ̄ր տուրտուն, լից ի պղինձն
և որքան ջուրն է, կէս կշռովն ղազմա աղ, որ՝ Կողբա քարաղ,
և խփե մինչև թանձրանայ և լից ի լաթէ կնգուղ մի և կախէ,
հան, մինչև չորանայ և այդ է գուռջու բորակն։

«Կիր ճակրի» գլխի տակ ծածկագրված է (բերում ենք վերծանությունը).

Առ զկորպիրն հակթի և դիր ի ջուրն
երիս օրս և ապա զմիջի եղեալ մէջն, որ փա-
կեալ կայ ի կպէճն, բաժանէ ի նմանէ և լից
զշոր արեալ կպէճ ի մի կրակամուտ աման
մի և դիր ի կրափուռն մինչև կիր դարձցի
և լիցի սպիտակ և մածղական։

* * *

Լցացուցանել նշատրի և կամ այլ աղերաց



(թ. 6բ)

Առ մի փալամփուշտ մի, որ է ղուրսաղ, և
լից ի մէջն և զբերան կապէ թուլ և ձգէ ի
ջուրն և թող մի օր մի գիշեր մինչև դարձցի
լկեալ ջուր և ի բան տար։

* * *



(թ. 6ա)

«Պատրաստումն ջրոյ այսպէս» վերնագրի տակ ծածկագրված է հետևյալը.

Առ զջուրն անձրևաց և եփէ լաւ մի պահ
և ապա դիր լռաւաղն, և ապա գործ ածէ
արհեստիս։

* * *

Լուացումն աղի, զոր ի գործ ածիմք, որ ասի աղք ճանայից



(թ. 6ա)

Առ հասարակ աղն, զոր ոստեմք և լից ի ջուրն
որ հալի և ապա մի պահ եփէ, թող որ պարզի
և սուզմիշ արա, դիր որ եփի մինչև դարցցի
կրկին յաղ։

Աղվանական այբուբենի մի տարբերակ ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 3185 ձեռագրում՝ 18-րդ դարի գրչությամբ։ Այբուբենը շարադրված է երեք շարքով. առաջին շարքում տրված է «ա»-ից մինչև «լ» տառը, երկրորդ շարքում՝ «խ»-ից մինչև «ո»-ն, իսկ երրորդում՝ «չ»-ից մինչև «փ»-ն, մինչդեռ «ք», «օ», «ֆ» տառերը տրված են առանձին։ Աղվանական շարքերի տակ տրվում են նրանց համապատասխան հայերեն տառերը։



Աղվանական այս այբուբենը մեզ հայտնի միակ բնագիրն է, ուր գաղտնագրության ձևը ցույց տալու նպատակով, այբուբենի ներքևի մասում ծածկագրված է մի տող, որը վերծանվում է. «Շարն այսպէս ձգես իմ եղբայր ճարազատ» *(«այսպէս» բառի երկրորդ վանկը՝ «պէս»-ը, գրված է տողատակ)։ Ծածկագրողը ցանկացել է ասել, թե ցույց տրված օրինակի նման պետք է ծածկագրել։*

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1297 ձեռագրում, որն ընդօրինակված է 1363 թվականին, հետագայի հիշատակագիրներից մեկը

թերթ 120բ-ում գրի է առել մի գաղտնագիր, որի տառանիշերը որոշ նմանություն ունեն աղվանականի հետ։ Գաղտնագիրն ընդամենը երեք տող է։ Նրա մեջ օգտագործված «թ̅ի» (=թիւն) հայերենի սովորական հապավումը և աղվանական մեզ ծանոթ տառանիշերի գործածությունը հնարավորություն տվեցին առանց դժվարությունների վերծանել այն։ Անհրաժեշտ ենք համարում բերել ծածկագրությունը մեր վերծանության հետ միասին։



Փ ա ռ ք ի բ ա ր ձ ո ւ ն ս ա̅յ ե ւ յ ե ր կ ի ր խ ա ղ



ա ղ ո ւ թ̅ի ի մ ա ր դ ի կ հ ա ճ ո ւ թ̅ի ւ ն ե ւ



ա ւ ր հ ն ո ւ թ̅ի ք ե զ ի բ ա ր ձ ո ւ ն»

Վերծանությունը կարդացվում է. «Փառք ի բարձունս Ա[ստուծո]յ եւ երկիր խաղաղութի[ւն] ի մարդիկ հաճութի[ւն] եւ օրհնութի[ւն] քեզ ի բարձունս»: *Ծածկագրության մեջ, ինչպես տեսնում ենք, արտահայտված է մարդկության դարավոր երազանքը՝ խաղաղություն երկրին և հաճություն մարդկանց։*

* * *

Նոր Ջուղայի մատենադարանի № 351 ձեռագրի գրիչ Հովհաննես քահանան իր հիշատակարանում աղվանական ծածկագրությամբ գաղտնագրել է երկու բառ։ Բերում ենք հիշատակարանից այն նախադասությունը, ուր գործ է ածված ծածկագրությունը. «Կրկին ժտի  *քահանայ յիշել ի տէր*  *»։*

Ծածկագրությունը նմանահանությամբ հրատարակված է Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակում և տողատակ ծանոթագրության մեջ վերծանված՝ «Յօվանէս» և «ՌՃՁԹ» (ՆՋ, I, էջ 545)։ Մինասյանը, կարծում ենք, սխալվում է, երբ ՌՃՁԹ-ի վերջին «Թ»-ն միավոր թվանշան է համարում և թվականը վերծանում 1740։ Նկատի ունենալով, որ «Թ»-ից հետո կետ է դրված, պետք է կարծել, որ այն հապավված «թուական» բառի առաջին տառն է, այդ հաշվումով կունենանք «ՌՃՁ թ.», որը համասար կլինի 1731 թվականի։ Սխալ է նկատվում հիշատակարանի վերծանության մյուս տեղում ևս. «Արդ գրեցաւ ձեռնադրութեանս տետրս ի թուահաշուութեան Հայոց ՌՃՁԹ (1740)»։ Այստեղ ևս վերջին «Թ»-ն թվանշան չէ, այլ՝ «թուական» բառի առաջին տառը։ Այդ հաշվումով, ձեռագիրը գրված կլինի ոչ թե 1740 թվականին, այլ՝ 1731-ին։

15. ԱՐԱԲԱԹՎԱՆՇԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արաբաթվանշան է կոչվում հայ գաղտնագրության այն խումբը, որի համար աղաղձ են ծառայում արաբական թվանշանները։ Վերցվում են միավոր թվանշանները և նրանց մոտ մեկից երեք կետեր դնելով կազմվում հայկական ծածկագրություն։ Միավոր տառանիշերի մոտ կետեր չեն դրվում, տասնավորների մոտ դրվում են մեկական կետեր, հարյուրավորների մոտ՝ երկուական, հազարավորների մոտ՝ երեքական։ Արաբական թվանշանները հայ գաղտնագրության մեջ գործ են ածվում երկու ձևով՝ բուն արաբական և ներկայումս մաթեմատիկայի մեջ գործածվող թվանշանների ձևով։

Արաբաթվանշան ծածկագրի բանալիներ են գրի առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 2370 (թ. 1ա), № 2000 (թ. 223ա), № 5943 (թ. 21ա), № 8716 (թ. 54ա) ձեռագրերում և Երուսաղեմի ձեռագրական հավաքածուի № 69 ձեռագրում և այլն։

Ծածկագրության թվանշանները հանդիպում են երեք տարբերակով։

Առաջին տարբերակի բանալին.

Երկրորդ տարբերակի բանալին.



Երրորդ տարբերակի բանալին.



Մաշտոցի անվան մատենադարանի № 8716 ձեռագրում, արաբաթիվ ծածկագրության բանալու օգտագործումը դյուրացնելու նպատակով, տըրված է հետևյալ խորհուրդը. «Ով գրասէր, իմայ զմուտ աղիսակիդ այսպէս արա, զի այն որ կայ ۱ նա մեկ է, ۲ սայ երկուք է, և սայ ۳ նայ երեք է, ٤ չորս է, և որպէս գիրն ցուցանէ ի կարգին որ կայ ի ներքեն ա բ գ դ և այլն կարգի»։ Այդ նույն ծածկագիր բանալուց ներքև գրիչը թողել է ծածկագրության տառանիշերը՝ ۱۲۳٤٥٩٧٨٩ և ապա ծածկագրությունը գովերգող հետևյալ քառյակը.

Ճուհարն անգին է սառաֆին,
Բայց խոտան է չի գիտցողին,
Ով իմանայ զգին ճուհարին,
Նա ուրախանայ, հանգչի հոգին։

Այս խմբի ծածկագրով գաղտնագրված ամենից ընդարձակ բնագիրը մեզ հանդիպում է Մաշտոցի անվան մատենադարանի № 10200 ձեռագրում, որը 17-րդ դարի գրչություն ունի։ Ձեռագիրն ընդօրինակված է Սարգիս և Ամիրաս գրիչների կողմից Տրապիզոնում։ Գաղտնագրված է ախտարական բնույթի ընդարձակ մի աշխատություն, որը, դժբախտաբար, պատմական արժեք չունի։ Անհրաժեշտ ենք համարում իբրև նմուշ բերել միայն չորս հատված մեր վերծանությամբ։

* * *



 խմցուր որ ինքն չիմանայ

յղանայ ա͞վ: (թ. 331բ)

Վերծանվում է. «Կին, որ տղայ չբերէ,
զձիու կաթն
խմցուր, որ ինքն չիմանա, յղանա ա[ստուծո]վ»։

Դարձեալ  յար-

գանդ  և ընդ առն

լինի յղանայ Ա͞վ:

Վերծանվում է. «Դարձեալ, զանկղի լեղին
յարգանտ դնէ
և ընդ առն լինի, յղանա ա[ստուծո]վ»։

Դարձեալ  առ

ցորեննհատ կշռ; և լից ի 

և երեք շամփուր խորոված կերցուր, յղանա ա[ստուծո]վ»։
Վերծանվում է. «Դարձեալ, զգայլու լեղին
առ, ցորեննհատ կշռէ, և լից ի ֆիթն
ի վար, և գ(3) շամփուր խորոված կերցուր։
յղանա ա[ստուծո]վ»։

* * *

Մովսես անունով մեկը Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագիր «Յայսմաւուրք»-ում, որն ընդօրինակված է 1684 թ. Վառաքում Սահակ, Վարդան և Գրիգոր վարագեցիների կողմից, ուշ հիշատակարաններից մեկը արաբաթիվ բանալիով գաղտնագրել է Մովսես, Ջանշին և Մարկոս անունները.



Մ ո վ ս է ս — Ջ ա ն շ ի ն — Մ ա ր կ ո ս

(ՄԱՄ, ձեռ. № 4723, թ. 284բ և 354ա)։

Արաբաթվանշան ծածկագրությամբ էջմիածնի մատենադարանի № 47 ձեռագրում գաղտնագրված է երկու բառ։ Ձեռագիրը 17-րդ դարի գրչություն ունի («էջմիածին», 1951 թ., № IV—VII, էջ 82)։ Բերում ենք մեր վերծանությամբ.



Ս ր բ Գ ր ի գ ո ր

Վերծանությունը կարդացվում է. «Ս[ու]րբ Գրիգոր»:

* * *

Զմմառի մատենադարանի № 521 ձեռագիրը պարունակում է Աբու Սայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» աշխատությունը և ունի գրչի հետևյալ ծածկագիր հիշատակարանը. «Գրեցաւ թվին ՌՃԼԵ (1686) ձեռամբ մեղապարտ քահանայի, որ կոչի տէր Ապտալահ.



(էջ 71ա)։

Ծածկագիրը արաբաթիվ է, այն հրատարակված է Զմմառի ձեռագրաց ցուցակի երկրորդ հատորում և չի վերծանված (Զմմառ, II, էջ 124)։

Վերծանվում է. «Ապտալահ»:

Ծածկագրության վերծանությունից երևում է, որ գաղտնագրության հեղինակն ինքը՝ ձեռագրի գրիչն է։ Գրչի մասին հիշատակություն կա գրչագրի թ. 31ա-ում։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6540 ձեռագիրը, որ բովանդակում է Ալեքսանդր Գալամաթօի «Անտառ նորագոյն մտածմանց» աշխատությունը, ունի արաբատառ մի ծածկագրություն, որը, որքան մեզ հայտնի է, դեռ չի վերծանված։ Նրա մասին հիշատակություն ունեն «Ցուցակ ձեռագրացի» կազմողները, սակայն վերծանության մասին ոչինչ չեն ասել (Ցուցակ ձեռագրաց, Բ, էջ 341)։ Ստորև բերում ենք ձեռագրի այն էջը, որի ներքևի երկու տողում ծածկագրությունն է.



Վերծանությունը կարդացվում է. «Աբրահամ վարդապետ, որ է հայր բազմաց»:

* * *

Մատենադարանի № 8540 ձեռագրում, որը տարբեր նյութերի ժողովածու է՝ գրված 1789—1800 թ., մեկը արաբատառ ծածկագրով գաղտնագրել է ախտարական բնույթի երկու բառ։ Բերում ենք ծածկագրությունը։



Վերծանվում է. «Գիր գլխացավի»:

Որոշ ծածկագրերում հանդիպում են արաբաթվանշան գաղտնագրերի շատ պարզ տեսակներ. վերցնում են ներկայումս գործածվող թվանշանները և նրանցով ծածկագրում։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 3464 ձեռագրում արաբաթիվ ծածկագրված է ընդարձակ մի բնագիր ձեռագրի վերջից կցված պահպանակի առաջին էջի վրա։ Ձեռագիրը 17—18-րդ դարի գրչություն ունի և բովանդակում է Սիմեոն Ջուղայեցու «Քերականութիւնն» ու «Տրամաբանութիւնը»։ Ծածկագրի վերջում գրված է հետևյալը. «Ով զսայ կարդայ՝ նա դպիր է»։



Բերում ենք ծածկագիրը վերծանության հետ միասին.

9000 5000 20 2000 4000 600 2000 20
թ ր ի " տ " " ի
50 1 1000 1 300 1 30 7 9000 2000 1 400
ծ ա ռ ա յ Ա լ ե ք " ա ն
3000 1 5000 4 1 800 5 4000 300 20
վ ա ր դ ա պ ե տ յ ի
500 5 30 20 4000 7 5000 1 90 1 700 5 200։
շ ե ւ ի տ է ր ա ղ ա չ ե մ

Կարդացվում է. «Քրիստոսի ծառայ Ալէքսան վարդապետ յիշել ի տէր աղաչեմ»:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագրում 1780 թ. հիշատակագիր մեկը արաբաթվանշան գաղտնագրով թողել է հետևյալ ծածկագիրը։ Բերում ենք մեր վերծանության հետ միասին.



Վերծանվում է.

«Փիլիպոս

տէր Աւետիք

ՌՄԻԹ (=1780)»։

16. ԶԱՔԱՐԻԱ ԱՎԱՆՑՈՒ ԾԱԾԿԱԳՐԵՐԸ

Զաքարիա Ավանցին հայ գրչագրության մեջ տարբեր տեսակի ծածկագրեր գործածող հեղինակներից մեկն է։ Նա հիշվում է նաև Վանեցի մականունով, որովհետև ծննդավայրը եղել է Վասպուրականի Վան քաղաքին մոտիկ Ավանց գյուղը։ Ծննդյան ճիշտ թվականը հայտնի չէ, սակայն նկատի ունենալով, որ մահացել է 1618 թվականին, հասուն տարիքում, կարելի է ենթադրել, թե ծնված պետք է լինի 16-րդ դարի վաթսունական թվականներին։ Նա հայ գրիչների մեծ մասի համար սովորական թափառիկ կյանք է ունեցել։ Այդ երևում է տարբեր վայրերում նրա գրած ձեռագրերից։ Ստեղծագործական աշխատանքի վերջին տարիներին նա հաստատվել է Նոր Ջուղայում և զբաղվել գրչությամբ, մանրանկարչությամբ և կազմարարությամբ։ Տարբեր մատենադարաններում շուրջ 20 ձեռագրեր են հայտնի, որոնց գրիչը կամ զարդանկարիչն ու կազմողը նա է։

Զաքարիա Ավանցին իր ծածկագրության մեջ օգտագործել է մի քանի տեսակ բանալիներ՝ գավազանագիր, արաբաթիվ, գումարգիր, կետագիր, սյունակետագիր, ճիրանագիր և այլն։ Նա գործ է ածել յուրատեսակ մի այլ բանալի ևս, որը այլ ծածկագրերում չի հանդիպում, ուստի նրա հեղինակը պայմանականորեն համարել ենք իրեն՝ Զաքարիային, և անվանել «զաքարագիր»։

Ավանցին իր ծածկագրերի մեջ հիմնականում գաղտնագրել է իր անունը, խնդրելով միաժամանակ ընթերցողից՝ բարի ողորմիով հիշել իրեն։

* * *

Զաքարիա Ավանցու մեզ հասած հնագույն ծածկագիր բնագիրը 1600 թվականից է։ Այն գրի է առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 5794 ձեռագրում (թ. 22բ), որի գրիչն է մեր հեղինակի համագյուղացի Կարապետ աբեղան։ Ձեռագրի գրչությունը 1599—1600 թվականներից է։ Զաքարիան հանդիսացել է տվյալ ձեռագրի մանրանկարող և կազմող հեղինակը։ Այդ մասին նշվում է հիշատակագրության մեջ։ Ծածկագրությունը հետևյալն է։ Բերում ենք վերծանության հետ։



ԳԲ. ԷՌ. ԳԳ. ԲԼ. Ա. ԳԳ. ԲԺ. ԶԺ. ԽԾ. ԲՌ

ե ւ զ կ ա զ մ ո ղ ս

Ծածկագիրը գաղտնագրված է գավազանագիր, արաբաթիվ, զաքարագիր, սյունակետագիր և գումարգիր բանալիներով։ Այն վերծանվում է. «Զմեղապարտ Զաքարաի Աւանցիս՝ զնկարողս եւ զկազմողս [յիշեա]»։

* * *

Զաքարիա Ավանցին մեկ տող ծածկագիր ունի Մաշտոցի անվան մատենադարանի № 10220 ձեռագրում։ Իր թողած հիշատակագրությունից երևում է, որ նա նաև տվյալ ձեռագրի կազմարարն է։ Այդ մասին նա գրում է. «Արդ՝ նորոգեցաւ և կազմեցաւ Ս. Աւետարանս ի ՌԾ (1601) թվին, ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի Զաքարի, ի յերկիրս Վասպուրականի, ի գեաւղեաքաղաքս որ կոչի Աւանց, ընդ հովանեաւ Ս. Յովհաննէս Մկրտչին և Ս. Գրիգոր Լուսաւորչին, յիշատակ տէր Ղազար սրբամիտ քահանային...» (թ. 307բ)։

Ծածկագիրը այս է.



Վերծանվում է. «Ձեռամբ բազմամեղ Զաքարայ Աւանցոյ»։ (Վերծանությունը գրված է ծածկագրի տակ)։

Վերծանության շարունակության մեջ Ավանցին դիմում է ընթերցողներին և խնդրում. «Թէ մի բերան կու յիշես, թէ չէ, նա դու գիտես ազիզ տէրտէր»։

Հիշատակարանը ծածկագրի հետ միասին հրատարակված է ԺԷ դարի ձեռագրերի հիշատակարանում և վերծանված (Հիշ. ԺԷ, էջ 21—23)։

* * *

Զաքարիա Ավանցին երկու տողից բաղկացած ծածկագրություն է գրի առել Մաշտոցի անվան մատենադարանի № 4101 ձեռագրում (թ. 327), որի գրիչներն են Կարապետ և Հովհաննես աբեղաները։ Ավանցին զարդանկարել է այդ ձեռագիրը և իր թողած հիշատակագրության մեջ գրել. «Նկարեցաւ ձեռամբ Զաքարայ Աւանցոյ ի ՌԾԲ (1603) թվին։ Մի բերան յիշեայ և Աստուած զքեզ յիշէ»։ Ծածկագիրը հետևյալն է.



Զ ա ք ա ր ա յ ծ ա ռ ա յ



ս ք Գ ր ի գ ո ր Լ ո ւ ս ա վ ո ր ի չ

Այն գաղտնագրված է արաբաթիվ, գավազանագիր, զաքարագիր և սյունակետագիր ծածկագրություններով։ Վերծանվում է. «Զաքարայ ծառայ. ս[ուր]բ Գրիգոր Լուսավորիչ»։

Ծածկագիրը հրատարակված է ԺԷ դարի հիշատակարանների Ա հատորում և վերծանված (Հիշ. ԺԷ, հ. Ա, էջ 79—80)։

* * *

Զաքարիա Ավանցին փոքրիկ մի ծածկագրություն ունի Նոր Ջուղայի մատենադարանի № 87 ձեռագրում, որն ընդօրինակված է Մարտիրոս քահանայի կողմից, Կնջան գավառի Փարխու գյուղում, 1570 թվականին։ Զաքարիան կազմել է այդ ձեռագիրը և այդ մասին թողել հետևյալ հիշատակագրությունը. «Կազմեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Զաքարա Վանեցոյ ի ՌԾԹ (1610) թվին, ի գիւղաքաղաքս Ջուղայ» (թ. 305ա)։ Ծածկագիրը գաղտնագրված է արաբաթիվ և գավազանագիր բանալիներով։ Այն հրատարակված է «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում և վերծանված (ՆՋ, հ. Ա, էջ 127)։ Բերում ենք ծածկագիրը՝ վերծանության հետ միասին.

Զ ա ք ա ր ա յ   ա ն պ ի տ ա ն ի

* * *

Զաքարիա Ավանցու ծածկագրերից մեկը հրատարակել է ակադ. Մ. Բրոսսեն «Mélanges asiatiques» պարբերականում (t. V, p. 65—77)։ Ծածկագիրը պարունակող ձեռագրի մասին Բրոսսեն հետևյալ հակիրճ տեղեկությունն է հաղորդել. ձեռագիրը Ավետարան է և պատկանել է բանասեր Գալուստ Շիրմազանյանին։ Բրոսսեն ձեռագիրը տեսել և նկարագրել է 1853 թվականին Թեհրանում գտնված ժամանակ։ Տեղի գիտակ հայ մարդիկ աշխատել են Բրոսսեին համոզել, որ ձեռագրի պարունակած նշանագրերը ուղինական (այսինքն՝ աղվաներեն) գրություն են, որոնք պահել են միայն հայկական ձեռագրերը, սակայն ինքը կասկածել է։ Ծածկագիրը գրի է առնված եղել Ավետարանի տարբեր էջերում։ (Ծածկագրերի տակ գրված է եղել վերծանությունը)։

Ձեռագրի գրչության մասին կա հետևյալ հիշատակարանը. «Արդ՝ գրեցաւ, նկարեցաւ և կազմեցաւ Ս[ուր]բ և հրաշալի, և սքանչելագործ, և հրաշափառ Աւետարանս ի ՌԿ (1611) թվականին հայկական տումարին ի յաշխարհս Պարսից, ի յերկիրս Գանդմանայ՝ որ է հուքմն Ասպահանայ, ի գեւղս Քաղաք, ի դուռն Ս. Աստուածածնին, ի կաթողիկոսութեան էջմիածնայ Դաւթի պատրիարգին, ձեռամբ անպիտան և փծուն, եղկելի և անարժան Զաքարայ իրիցու Վանեցոյ» (թ. 291բ)։

Զաքարիան ծածկագիրը թողել է ձեռագրի երեք տարբեր էջերում։ Օգտագործել է ծածկագրության իրեն ծանոթ բոլոր բանալիները։ Ըստ որում, ծածկագիր բոլոր նշանագրերի տակ տրվում են վերծանությունները։

Էջ 150բ-ում



Զաքարայ գծողս

մի բերան յիշեայ

եւ ա[ստուա]ծ զք-

եզ յիշեայ:

Էջ 231-ում



Զաւfարայ գծո-
ղս մի բերան յ-

իշեայ եւ

դու յիշ-

եալ լինիս ի

Ք[րիստոս] է: Գրեցաւ

Ք[րիստոս]է ի ՌԿ
(1610) թվին:

Էջ 287-ում



Գրեցաւ
ձեռամբ

Զաքարայ
իրից-

ուՌԿ (1610)
թվին:



Զաfարայ գծ-

ողս մի բեր-

ան յիշեայ.

եւ ած զf-

եզ յիշե-

այ ի միւ անգամ

գալուստն. ամէն:

* * *

Զաքարիա Ավանցին ծածկագրություն է թողել 1611 թվականին իր գրած մի ձեռագրում, որն այժմ գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 5345-ի տակ։ Նա գրչության թվականի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդել. «Գրեցաւ, նկարեցաւ և կազմեցաւ Ս[ուր]բ և հրաշալի Աւետարանս ձեռամբ Զաքարայ անարժան Վանեցւոյ երիցու, ի յաշխարհս Պարսից ի յերկիրս Գանդմանայ, որ է հուքմն Ասպահանայ, ի գեաւղս Քաղաք, ի դուռն սուրբ Աստուածածնին, ի ՌԿ (1611) թվին» (թ. 86ա)։



Վերծանված է. «Զաfարայ գծողս մի բերան յիշեայ, եւ Ա[ստուա]ծ զfեզ յիշէ, ամէն»:

Ծածկագրությունը գրի է առնված երեք տարբեր էջերում։ Օգտագործել է ծածկագրության իրեն ծանոթ բոլոր տեսակի բանալիները։



Վերծանվում է.

Զաfարայ գծող ծառայս Ա.[ստուծո]յ մի բերան յիշեայ:

Երկրորդ ծածկագրության տակ կա հետևյալ չափածո հիշատակարանը.

Զեռքս գնա տեղն երևայ,
Մարմինս փտեալ ի հող դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ։
Ամէն տեսի բերան մ յիշեա,
Թէպէտ խոշոր է գիր սորայ,
Այլ դիւրընթերց ով գիտենայ։
Յերբ բանաք ընթեռնուք զսայ,
Յիշեա ի Տէր գըծող սորա,
Զաքարայ անպիտանիս մի բերան ողորմի ասայ,
Եւ Աստուած զքեզ յիշեայ. ամէն։ (թ. 154բ)



Զաfարայ գծողս
մի բերան յիշեայ
եւ Աստուած զfեզ
յիշեայ:

* * *

Երեք բառից մի ծածկագիր Զաքարիա Ավանցին թողել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 349 (№ 34) ձեռագրում, որի գրիչը, զարդանկարողը և կազմողն ինքն է։ Այդ երևում է նրա հետևյալ փոքրիկ հիշատակարանից. «Գրեցաւ, նկարեցաւ և կազմեցաւ [գի]րքս, որ կոչի Աղ[աւ]թմատոյց ձեռ[ա]մբ անարժան Զաքարայ Վանեցի իրիցու, ի թուսկանիս Հայկազան տումարին ՌԿԱ (1612) ամին, ի յաշխարհն Պարս...» (թ. 120բ)։ Ծածկագիրը գաղտնագրված է գավազանագիր, արաբաթիվ և զաքարագիր բանալիներով, այն հրատարակել է Լ. Գ. Մինասյանը Նոր Ջուղայի

ձեռագրաց ցուցակի երկրորդ հատորում և վերծանել (ՆՋ, II, էջ 44)։ Բերում ենք ծածկագիրը՝ վերծանության հետ միասին։



Վերծանվում է. «Զաfարայ ծառայ Ա̄յ (Աստուծոյ)» *(թ. 120բ)։*

* * *

Զաքարիա Ավանցու երկու տողից մի ծածկագրություն հանդիպում է մեզ Մայր Աթոռի ձեռագրական ժողովածուի № 47 ձեռագրում (թ. 129ա)։ Ծածկագրությունը հիշատակագրություն է՝ գրված 17-րդ դարի սկզբներին (ոչ ուշ քան 1618 թվականը)։ Օգտագործված են գավազանագիր, սյունակետագիր և զաքարագիր բանալիները։ Ծածկագիրը հետևյալն է.



Այն հրատարակված է «էջմիածին» ամսագրում և վերծանված. «Զաfարայ ծառայ ս[ուր]բ Գրիգոր Լուսաւորիչ»:

* * *

Զաքարիա Ավանցու ընդարձակ մի ծածկագիր հանդիպում է Հին Նախիջևանի Գզնուտ գյուղում գտնվող մի ձեռագրում, որը վերջերս հանձնվել է Մայր Աթոռի մատենադարանին։ Ծածկագրությունը հիշատակագրություն է՝ մեր հեղինակի կողմից ձեռագիրը մանրանկարելու և կազմելու մասին։ Օգտագործված են ծածկագրության բոլոր տեսակի ծանոթ բանալիները։ Բերում ենք ծածկագիրը՝ վերծանության հետ միասին։



Վերծանվում է. «Զմեղապարտ Զաքարայ նկարողս մի բերան յիշեայ, եւ Ա[ստուա]ծ զքեզ յիշեայ։ Զմեղացպարտ Զաքարայ նկարողս եւ զկազմողս մի բերան յիշման արժան արայ»։

17. ՀՈՒՆԱՏԱՌ ԾԱԾԿԱԳՐԵՐ

1944 թ., Երուսաղեմում գտնված ժամանակ, Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագրական ժողովածուն ուսումնասիրելիս, մեր ուշադրությունը գրավեց № 1297 գրչագիրը, որը պարունակում էր իմաստասիրական բնույթի բնագրեր և աչքի էր ընկնում գեղեցիկ գրչության արվեստով։ Այն գրված է Տփխիսի գրչության դպրոցում։ Այդ մասին ձեռագրում կա գրչի հետևյալ հիշատակագրությունը. «Արդ՝ գրեցաւ ի թուաբերութեանս Հայոց Պ և ԺԲ (=1363) ի մայրաքաղաքս Տփխիս, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս» (թ. 229բ)։

Ձեռագիրը թանկարժեք ունիկում է։ Նրա պատվիրատուն է հանդիսացել Գլաձորի համալսարանի նշանավոր ուսուցչապետ Եսայի Նչեցու աշակերտ Հովհան Որոտնեցին։ Հիշատակարանում այդ մասին ասված է. «...գրեալ եղև խնդրոյ տիեզերալոյս վարդապետին Յովհան[ն]իսի, որո[յ] գաւառն և հայրենիքն Որոտն է, զոր տէր Աստուած վայելել տացէ» (թ. 229բ)։

Գրչի անունը ձեռագրում ջնջված է՝ բայց անհաջող. քերված տեղում կարելի է լինում վերականգնել «Յուսիկ» անունը. «Ես զմեղաւոր գրիչս Յուսիկ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ» (թ. 229բ)։

Ձեռագրի բնագրերից առանձնապես արժեքավոր են Շիրակացու թվաբանական աղյուսակները, Հովհաննես Իմաստասերի «Յաղագս անկիւնաւոր թուոց» մաթեմատիկական աշխատությունը, Հերմեսի փիլիսոփայական աշխատությունը և իմաստասիրական բնույթի այլ նյութեր։ Մեզ հետաքրքրող ծածկագիրը գտնվում է 32ա թերթում և բաղկացած է ընդամենը 13 տողից։ Սկզբում հայերեն սովորական տառերով գրված է «Պղատոնի է», իսկ վերջում զետեղված է սովորական հղում. «Թէ գպիր ես ընթերցիր, թէ ոգետ՝ արացիր»։ Անհրաժեշտ ենք համարում բերել ծածկագիր բնագիրը։



Ծածկագրի բնագրում, ինչպես տեսնում ենք, հայերեն սովորական տառերով կարելի է կարդալ հետևյալ բառերը՝ «Պղատոնի», «Որփեւս» և «Աշխարհացուցին նկարագրեալ այսպիսի»։

Այս ծածկագիրը, վերծանության հետ միասին, մենք հրատարակել ենք 1946 թ. Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատությունների» 32-րդ հատորում (էջ 451—452), «Երուսաղեմի հունատառ հայերեն ծածկագրի վերծանությունը» խորագրով։

Այնուհետև նրա մասին խոսել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմություն» աշխատության մեջ (էջ 45—46)։

Ծածկագիրը մեզ հաջողվել է վերծանել մեծ դժվարությամբ, որովհետև որոշ տառեր տողի վերջում վատ են երևում, ծածկագրում օգտագործված են մի քանի բոլորովին անծանոթ նշանագրեր, և բնագիրը բառանջատված չէ։

Ուսումնասիրությունից պարզվեց, որ գաղտնագրված է վեց տարբեր պարբերություն տարբեր հեղինակներից, որոնցից անունով հիշված են միայն երեքը՝ Պղատոնը, Որփեսը և Եվրիպիդեսը։ Անհավանական չէ, որ մյուսները ևս քաղված լինեն իմաստասիրական աշխատություններից։

Ծածկագիրը սկսվում է «Պղատոն» վերնագրով։ Այնտեղ հիմնականում օգտագործված են հունարեն տառերը, հայկական այբուբենից վերցված են միայն այն տառերը, որոնք բացակայում են հունարենում՝ Հ, Խ, Ծ, Ձ, Չ, Ջ, Ի, Ք։

Ծածկագրությունը բարդացնելու նպատակով ստեղծվել են նոր նշանագրեր Դ, Պ, Վ, Ց տառերի համար։

Պղատոնի անունից հետո սկսվում է բուն ծածկագրությունը։ Առաջին նախադասությունը վերծանվում է. «Վ Ա Ս Ն Ջ Ի Ա Ն Ձ Ա Մ Բ Ա Ն Ձ Ի Ն Յ Ա Ղ Թ Ե Լ Ն Ք Ա Ն Ջ Ա Մ Ե Ն Ա Յ Ն Յ Ա Ղ Թ Ո Ւ Թ Ի [Ի] Ն Ա Ռ Ա Ջ Ի Ե Ի Ք Ա Ջ է»։ Նախադասությունը, ինչպես երևում է, սկզբից թերի է, այլապես այն չէր սկսվի «Վասն զի» բառերով։ Իմաստն այն է, թե ինքդ քեզ հաղթելը, այսինքն՝ քո կրքերը, քո ցանկությունները սանձահարելն ամեն տեսակ հաղթություններից առաջինը և ամենամեծն է։

Երկրորդ նախադասությունը վերծանվում է. «Ո Ր Փ Ե Ի Ս. Մ Ի Տ Ե Ս Ա Ն Ե Ն Ա Ն Մ Ի Տ Ք Ե Ի Ա Ս Ե Ն Ե Ի Ա Յ Ղ Ն Ա Մ Ե Ն Ա Յ Ն Խ Ո Ւ Լ Ե Ի Հ Ա Մ Ր է»[34]։ Նախադասության իմաստն այն է, թե անմիտներն իրենք իրենց արածները չեն տեսնում և կարծում են, թե բոլորը խուլ ու համր են։ Այս հատվածը վերցված է Որփեսից, որի անունը և գրված է առջևում։

Երրորդ նախադասությունը վերծանվում է. «Ե Ի Ր Ի Պ Ի Դ է Ս. Հ Ա Ր Ե Ց Ի Ց Ա Ր Ո [Յ] Ր Ս Ի Ր Ա Ւ Ա Ց Ի Կ Ե Վ Ջ Դ Ր Ո Ւ Ն Ս Ա Հ Ե Ց Ի Ց Ի Պ Ղ Ծ Ո Ց»։ Այս նախադասության մեջ «արոր» բառի մեջ մենք «յ» ենք ավելացրել, որովհետև այստեղ խոսքը «արորի» մասին չէ, այլ «արոյր»-ի, որ նշանակում է պղնձյա գավազան։ «Ահել» բառը նշանակում է «սաստել», «դուրս անել»։ Նախադասության ընդհանուր իմաստն այն է, թե մոգական գավազանով կխփեմ և դուրս կանեմ աղտեղությունը։

Չորրորդ նախադասությունը վերծանվում է. «Ո Ր Ջ Ք Ա Ր Ի Ն Ս Գ Գ Ո Ւ է՝ Ա Տ Ա Կ Ք Լ Ի Ն Ի»։ Իմաստն այս է. ով գգվում է քարը, զորավոր է լինում, այսինքն՝ ամուր հենարան ունեցողը զորեղ է լինում։

Հինգերորդ նախադասությունը վերծանվում է. «Ո Ր Ի Ծ Ո Վ Ս Ե Ր Մ Ա Ն է, Ջ Ձ Կ Ո Ւ Ն Ս Կ Ե Ր Ա Կ Ր է»։ «Սերմանել» բառն

[34] Ն. Պողարյանը երկրորդ նախադասությունը ուղղում է. «Մի[տք] տեսանին եւ միտք լսին, եւ այլն ամենայն խուլ եւ համր է» (Եղմ., IV, էջ 520)։

10—884

այստեղ ունի «ձգել» իմաստը։ Սա ժողովրդական ասացվածք է. մի բան ծովը ձգողը ձկներին է կերակրում։

Վեցերորդ նախադասությունը վերծանվում է. «Ա Ր Ե Գ Ա Կ Ն Կ Ո Ւ Ր Ա Ց Ո Չ Ծ Ա Գ Է Ե Ւ Ո Չ Մ Տ Ա Ն Է»։ Դարձյալ ժողովրդական ասացվածք է. կույրերի համար արևածագ և մայրամուտ գոյություն չունի։

Հունատառ հայերեն այս ծածկագրությունը հայ գաղտնագրության պատմության մեջ մեծ արժեք ներկայացնող բնագիր է։ Նա մեզ հասած հնագույն ծածկագրություններից մեկն է, գուցե և առաջինը, եթե հաշվի չառնենք Եզր կաթողիկոսի Ավանում թողած վիմագիր արձանագրությունը և մի քանի ուրիշներ։

* * *

Հունատառ հայերեն ծածկագրերի շարքին պետք է դասել Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1280 ձեռագրում հայկական միջնադարյան պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչ Ստեփանոս Օրբելյանի երեք բառից բաղկացած հիշատակագրությունը։ Այն հրատարակել է Պողարյանը իր կազմած «Ձեռագրաց ցուցակի» չորրորդ հատորում։ Ծածկագիրը հետևյալն է.

ZCTEՖANΩC MEΓAΠAPT HXEՑEK

Այստեղ գործ են ածված հայկական «Ֆ» և «Ց» տառերը, իսկ «Ճ» տառը տրված է «X»-ով, «Ղ»-ն՝ «Γ»-ով, «Ք»-ն՝ «K»-ով՝ «Ե» և «Է» տառերի համար հեղինակը գործ է ածել հունական «E»-ն։

Ծածկագիրը վերծանվում է (վերծանությունը Պողարյանինն է. Եղմ., IV, էջ 469).

ZCTEՖANΩC MEΓAΠAPT HXEՑEK
Զ Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Մ Ե Ղ Ա Պ Ա Ր Տ Ց Ճ Ե Ց Է Ք

Պողարյանը իրավացի ենթադրել է, որ ծածկագրում հիշվող Ստեփանոսը «Կրնա ըլլալ ձեռագրին տիրոջ՝ Ստեփանոս Օրբելյանի գիրը»։ Որ իրոք, տվյալ ծածկագրությունը գրված է Օրբելյանի ժամանակ և Օրբելյանի պատվերով, որոշակի երևում է Հովհաննես գրչի 1284 թ. թողած հետևյալ հիշատակարանից. «Աստուածաւր յանգ հիւսել կատարեցաւ դպրութիւն Բժ.ան աստուածախաւս սուրբ մարգարէիցն ի նահանգին Սիւնեաց եւ ի տէրութիւն մեծաշուք իշխանի այսմ գաւառի Տարսայիճին, իսկ հանուրց ազգին նետողաց՝ ի թագաւորութիւնն Հայոց Լեւոնի եւ ի հայրապետութեան տեառն Յակոբա. եւ ի տումարի Հայոց ՉԼԳ (=1284) հրամանաւ եւ արդեամբ ազնուազարմ եւ իշխանաշուք, վեհիմաստ եւ զուարթանուն րաբունւոյ Ստեփանոսի, որ տարփացաւ բանից սորին անբիծ, եւ հրամայեաց դրոշմել ի գիծ ինձ ամենամեղ Յովհաննէս քահանայի...»։

* * *

Սիսիանի տաճարի հարավային պատի արևմտյան մասի կենտրոնում դրսից Գրիգոր անունով մեկը փորագրել է տվել իր անունը.

ЕС ГРНГОР ГРЕՑН[35]
Ե ս Գ ր ի գ ո ր գ ր ե ց ի

Տաճարի կառուցումը ենթադրվում է 6-րդ դարում։ Եթե ընդունելու լինենք, որ տվյալ արձանագրությունը ժամանակակից է տաճարի կառուցմանը, այն դեպքում մենք ունենում ենք հունատառ հայերեն հնագույն արձանագրություններից մեկը։ Ուշագրավ է, որ այս արձանագրության մեջ «Ց» տառանիշը տրված է հայերեն։

* * *

Զմմառի մատենադարանի № 98 ձեռագրում, որը պատմա-տոմարագիտական բովանդակությամբ արժեքավոր ունիկում է՝ գրված հայ ականավոր ժամանակագիր Սամուել Անեցու կողմից 1178 թ., գրի են առնված հունատառ հայերեն մի քանի փոքրիկ ծածկագրեր, որոնք վերծանված են ուրիշ մեկի կողմից անմիջապես ծածկագրերի վրա։ Բերում ենք նրանցից որոշ նմուշներ։

Թ. 99բ-ում ծածկագրված է.


Ս ա մ ու է լ մ ե ղ ա պ-

ա ր տ գ ր ո ղ



Յ ո ն ա ց է (թ. 99բ)։

Ե բ ր ա ց ո ց [է] (թ. 95ա)։

Ա ս ո ր ո ց է (թ. 101ա)։

Մ ա կ ե թ ո ն ա ց ո ց է (թ. 102ա)։

Ա թ ե ն ա ց ո ց է (թ. 103ա)։

Բ ի ւ թ ն ա ց ո ց է (թ. 103բ)։

Կ ա պ ա տ ո կ ա ց ո ց է (թ. 104ա)։

Ե թ ե ո պ ա ց ո ց է (թ. 95ա)։

---

35 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 88։

Թ. 105բ-ում Սամուել Անեցին ծածկագրել է իր անունը և գրչության թվականը։



Սանւիել մեղապ-
արտ Խաճաճա յաղաւ
ս ձեր յիշման արժանի արար-
եք և Քս ողորմեայ ամէն։

Շրջան լուսնին ԺԹ։ Ամե[ն]ա-
բարձ գեղջ Կպարպ
իՒ բւականիս խոռոմի
. . . . . . ՈՒԾ գրեցաւ գիրս։

Տվյալ վերծանության «լուսնի ԺԹ»-ն տարվա ոսկեգիրն է։ Գյուղի անունը կարելի է կարդալ նաև «Կարպի» կամ «Պարպի»։ «Թւականիս խոռոմի»-ից հետո ջնջված է տարեթիվը։ ՈՒԾ-ն հայկական մեծ թվականով է, որին անհրաժեշտ է գումարել ոչ թե 551, այլ՝ 552, և ստանալ 1176 (625+552=1177), քանի որ ոսկեգիրը ԺԹ (19) է եղել 1177-ին։



Թ. 99բ-ում Սամուել Անեցին ծածկագրել է.

Վերծանվում է.

«Սանւիել մեղ[ապ]արտ գրող Նեւանէս գրօ»:

Ներքևի ինը նշանագրերը արաբական հազարավոր տառանիշեր են՝ մեկ հազարից մինչև ինը հազար։

18. ՃՅՈՒՂԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նոր Ջուղայի մատենադարանի № 593 ձեռագրում տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրերից առանձնապես ուշագրավ է մի բնագիր, որն արտաքուստ թողնում է զարդագրի տպավորություն (ՆՋ, II, 4)։ Այն հետևյալն է.



Այս ծածկագրին մենք պայմանականորեն ճյուղագիր ծածկագրություն անունն ենք տալիս, նկատի ունենալով նրա արտաքին ձևը. վերև ձգվող ոստի վրա աջից և ձախից բարձրանում են տարբեր թվով ճյուղեր։ Պարզվում է, որ ձախից բարձրացող ճյուղերը ներկայացնում են հայկական միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվերի չորս շարքերը, իսկ աջից՝ այդ շարքերի համապատասխան տառանիշերը ըստ համարական կարգի։

Ծածկագրության բանալին հետևյալն է.



Վերը բերված ծածկագրի վերծանությունը.



Տվյալ վերծանությունը կատարված է ոչ թե մեր, այլ՝ ձեռագրաց ցուցակի հրատարակիչների կողմից, բայց մենք անհրաժեշտ համարեցինք մեջ բերել և գիտական լայն շրջանառության մեջ դնել, նկատի ունենալով, որ մեր պատմական հուշարձանների վրա և մանրանկարչության մեջ հաճախ կարելի է տեսնել նման զարդագրեր, որոնց տակ, անհավանական չէ, որ լինեն քարգործ վարպետների և զարդանկարող ծաղկարարների անունները։ Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր դեպքերում է թույլատրելի եղել պատվիրատուների կողքին գրել նաև ստեղծագործող մշակների անունները։

(Հրատ. ՊԲՀ, 1974, № 1, էջ 185—186)։

19. ՕՀԱՆԱԳԻՐ

Մաշտոցի անվան մատենադարանի № 8446 ձեռագրում երկու տեղ հանդիպում է հայկական տառանիշերի ձևափոխությունների միջոցով կազմված անծանոթ ծածկագրության բանալի «Այս Օհանայ գիրն է» վերնագրով (թ. 136բ և 143ա)։ Այդ նույն ծածկագրության մի այլ բանալի ընդօրինակված է Մաշտոցի անվան մատենադարանի № 9156 ձեռագրում (թ. 6ա)։ Ո՞վ է ծածկագրությունը կազմող այս Օհանը կամ Հովհանը, դժվար է որոշակի ասել, բայց չենք կասկածում, որ նա պետք է եղած լինի քիմիկոս կամ ալքիմիկոս, որովհետև հիշված երկու ձեռագրերն էլ արհեստագործական բովանդակությամբ են և ծածկագրության բանալին, անշուշտ, պատահական ձևով այնտեղ գրվել չէր կարող։

Ահա այդ բանալին.



Այս ծածկագրությամբ հիշված № 8446 ձեռագրում գաղտնագրված են մի քանի արհեստագործական բնույթի բաղադրատոմսեր։ Ձեռագիրը քիմիական բնագիր է, բովանդակում է հարյուրից ավելի բաղադրատոմսեր ոսկերչության, արծաթագործության և այլ արհեստների վերաբերյալ։ Գրված է Ղրիմի Բախչիսարայ քաղաքում, Հովասափի որդի Առաքելի կողմից 1725 թ., որն իր թողած չափածո հիշատակարանում խոսելով օգտագործած ծածկագրության կարևորության մասին, հետևյալն է գրում.

Արդ գրեցաւ փոքր գրըգիկս, որ է անպատմելի, անճառելի,
Սայ չէ անմտած գործելի, այլ իմաստնոց է գովելի,
Թէպէտ սայ ծածուկ է պահուելի, այլ խորագիտաց գիտելի,
Ով որ հասցէ այսմ գործի, առցէ զփառս հաւիտենի,
Սայ գործով է ծածուկ, յայտնի և բաց աչօք տեսանելի,
Ով հասնի սորին մասի տըւող է բարեաց ամենայնի...

(ՄԱՄ, ձեռ. № 8446, թ. 141ա—141բ)։

Հեղինակը ձեռագրի թ. 143ա-ում տվյալ ծածկագրությամբ գաղտնագրել է իր անունը և ձեռագրի գրչության թվականը։ Բերում ենք ծածկագիրը՝



մեր վերծանությամբ. «Ես Միքայէլս գրեցի թվին ՌՃՀԲԻՆ (1729)»։

Նույն ծածկագրությունն օգտագործված է նաև մի քանի բաղադրատոմսեր գաղտնագրելու համար։ Ստորև բերում ենք նրանցից երկուսը՝ մեր վերծանությամբ։ Առաջինը վերաբերում է կաթից ղայմաղ (սեր) պատրաստելուն. վերծանված կկարդացվի. «Եթէ կամիս կաթն ղայմաղ շինես, այսպէս արա. առ



բեր կէս հօխա, խամ կաթն տաքցուր, յետ[ոյ] առ բեր այն ասած ինչիրին կաթն, կաթցուր կաթին մէջն հինգ վեց կաթ, որ մի քիչ կենաս, աստուծով այն կաթն ղայմաղ է դառնալու ուզածիտ պէս կաթն, որպէս որ մածուն անիլ։ այնպէս կլինի, կաթցուր»։

Երկրորդ ծածկագրությունը կաթից դյուրին ճանապարհով յուղ պատրաստելու բաղադրատոմս է. «Եթէ կամիս կաթն եղ շինես, այսպէս արա. առ մի հօխա խամ եղ, դիր





այնչափ, որ մին մինու ուտէ, ետև պարզ ջուր լից վրան, քամէ, ամէնն ելնուլ է եղ»։

20. ԶԱՐԴԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Զարդագիր ծածկագրության ուշագրավ մի տարբերակ հանդիպում է ՄԱՄ-ի № 8540 ձեռագրում, որի գրիչը, ինչպես երևում է գրառումներից, առևտրական է եղել, շրջագայել է տարբեր երկրներում և ձեռագրի մեջ, ըստ իր նախասիրության, գրի է առել այն նյութերը, ինչ անհրաժեշտ է համարել՝ նամակների և պայմանագրերի պատճեններ, թվական հաշվումներ, դեղատոմսեր, տաղեր, թվանշանների անունները ռուսերեն լեզվով և այլն։

Ձեռագրի թ. 42բ-ում բերվում է զարդագիր ծածկագրության հետևյալ բանալին.



Ծածկագրության բանալիով հեղինակը գաղտնագրել է միայն մի բառ (թ. 68-ում).

Առերևույթ, տվյալ ծածկագրի նշանագրերը նմանություն չունեն վերոբերյալ ծածկագրության նշանագրերի հետ, բացի վերջինից: Սակայն այս խաբուսիկ է. պարզվում է, որ ծածկագրողը ցանկանալով գաղտնագիրը ավելի բարդացնել, այն գլխիվայր շուռ է տվել: Անհրաժեշտ ենք համարում այն դնել ոտքի վրա և վերծանել «Հարություն»:



Որ տվյալ ծածկագրության հեղինակն իրոք Հարությունն է, այդ երևում է գաղտնագրության տակ թողած հիշատակությունից՝ 1799 թ. նոյեմբերի 20-ին իր Պոլիս ժամանելու մասին. «Թվին Հայոց ՌՄԽ-ին (1799-ին) և ամսեանց նոյեմբերի Ի-ին (20-ին) [Ես Հարութիւն] եկի Ըստամպօլ քաղաքն» (թ. 68բ): Այդ հիշատակագրությունը հիմք է տալիս թվագրելու նաև ծածկագիրը գրելու տարին և ամսաթիվը՝ 1799 թ. նոյեմբերի 20-ը:

«Ցուցակ ձեռագրացի» հեղինակները, գրչագրում եղած այլ հիշատակությունների հիման վրա, հարցականով, ձեռագրի գրիչ համարել են Հարությունին: Ծածկագրության տակ, ինչպես տեսնում ենք, թաքնված է եղել նույնպես Հարություն անունը:

21. ԿՈՏՈՐԱԿԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտորակագիր ծածկագրությունը կազմվում է դարձյալ սյունակետագրի սկզբունքով, միայն թե այստեղ սյուների փոխարեն օգտագործվում են կոտորակի հայտարարի կետերը, իսկ համարիչի կետերը՝ միավոր թվանշանների փոխարեն: Այս ծածկագրության հետաքրքիր մի օրինակ Գ. Սրվանձտյանը հրատարակել է «Մանանա»-ի մեջ[36], որից և մենք օգտվում ենք.



Կոտորակագիր ծածկագրության խմբին է պատկանում Ն. Մարտիրոսյանի և Ա. Մուրադյանի Ս. Առաքելոց Թարգմանչաց վանքի ձեռագրաց ցուցակում[37] հրատարակած ծածկագիրը, որը նախորդից տարբերվում է նրանով, որ այստեղ հիմք է վերցված միավոր, հարյուրավոր ու հազարավոր տառաշարքերի առաջին՝ «Ա», «Ճ» և «Ռ» տառերը և նրանց վրա դասավորված այդ շարքի համարական կարգի տառերը: Տվյալ ծածկագրության մեջ գաղտնագրված է «Թորոս երեց»: Ստորև բերում ենք ծածկագրությունը վերծանության հետ միասին (վերծանությունը «Ձեռագրաց ցուցակի» հեղինակներինն է):



Ծածկագրությունը, ըստ տեղեկությունների, Թորոս երեցը կատարել է 1597 թվականին:

22. ՆՇԽԱՐԱՏԵՍՔ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օղակետագիր ծածկագրության տարբերակների շարքին կարելի է դասել մի այլ ծածկագրություն, որին մենք նշխարատեսք անունն ենք տվել: Այն կազմված է նշխարի տեսք ունեցող բոլորակներից, որոնց վրա գրվում

36 Գ. Վ. Սրվանձտյան, Մանանա, էջ 312:

37 Ն. Մարտիրոսյան և Ա. Մուրադյան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967, էջ 152:

են կետեր։ Ըստ որում, միավոր տառերի բոլորակը ներսից գծեր չի ընդունում, տասնավոր տառերի բոլորակը կիսվում է վերից-վար հորիզոնական գծով, հարյուրավորներինը՝ բոլորակը կիսող գծից տարվում է մի գիծ դեպի աջ, իսկ հազարավոր թվերի բոլորակի մեջ խաչաձևով գծեր են տարվում։ Վերև դրված կետերը ցույց են տալիս իննյակներին համապատասխանող տառերը։ Այս ծածկագրության բանալին համառոտված ձևով կա Մաշտոցի անվան մատենադարանի № 5943 և Անկյուրիայի մատենադարանի 144 ձեռագրերում։

Նշխարատեսք ծածկագրության բանալին.



Ծածկագրության այս բանալիով գաղտնագրված է մեկ բառ Մաշտոցի անվան մատենադարանի № 4723 ձեռագրում (թ. 284բ, 1654 թ.)։ Այն հանդիպում է մեզ արաբագիր, գավազանագիր, եղբայրագիր և փոխարինագիր ծածկագրությունների հետ միասին։

Թ. 284բ

Ոմն ի հընգից հինգ ծնընդոց,
Յիսրայէլէան ժողովրդոց,
Դարձաւ երեսն իւր զերթ բոց,
Յետոյ չեղև առանց պատժոց։



Վերծանվում է Մ ո վ ս ե ս։

23. ՃԻՐԱՆԱՎՈՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գծակետային այլ սկզբունքով է կազմված ճիրանավոր ծածկագրությունը։ Այստեղ վերցվում է մի օղ և նրա կողքից չորս ուղղությամբ ձգվում են մեկից չորս ճիրաններ. միավորի համար կցվում է մեկ ճիրան, տասնավորի համար՝ երկու, հարյուրավորի համար՝ երեք և հազարավորի համար՝ չորս։ Այնուհետև, ըստ տառանիշի թվական արժեքի, դրվում են կետեր։ Կետագրության համակարգը նման է գծակետային ծածկագրի վերջին տեսակին, այսինքն՝ մի թվանշանով պակաս, քան սովորաբար ծածկագրվում է։

Ճիրանավոր ծածկագրության առաջին բանալին բերվում է Մաշտոցի անվան մատենադարանի № 5943 ձեռագրից։ Այնտեղ տրված են չորս տառաշարքի առանձին տառանիշերի չորս ձևերը՝ առանց կետերի։ Դրանք լրացված են մեր կողմից։



Այս ծածկագրությամբ գաղտնագրված մի շարք բնօրինակներ կան Զաքարիա Ավանցու ծածկագրերի մեջ, որի մասին խոսք եղել է իր տեղում։

Ճիրանավոր ծածկագրության երկրորդ բանալին մասամբ տարբերվում է առաջինից. այստեղ կետեր դրվում են նշանագրերի ներքևից։

Ճիրանավոր ծածկագրության երկրորդ բանալին.



* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4676 ձեռագրի ճիրանավոր ծածկագրությունը կազմված է այնպես, որ կլոր օղերին կցվում են ոչ թե չորս ճիրան, այլ՝ երեքը. միավոր տառանիշերի համար միայն մի օղ է, առանց ճիրանի, տասնավորների համար մեկ ճիրան է և կցվում է վերևից, հարյուրավորների համար՝ երկուսը, կցվում է վերևից և ներքևից, իսկ հազարավորների համար՝ երեքը, կցվում է վերևից, ներքևից և աջից։ Ըստ որում, կետերն այստեղ դրվում են սովորականից մեկի պակասով։ Ծածկագրությունը վերծանության հետ միասին հրատարակված է մեր «Մի քանի ծածկագրերի վերծանությունը» հոդվածում։ Ահա այն.



Վերծանությունը կարդացվում է. «Տ[է]ր Գրիգոր»:

Տվյալ ծածկագիրը պարունակող ձեռագիրն ունի 15-րդ դարի գրչություն, բովանդակությամբ «Ճառընտիր» է՝ գրված Հովհաննես և Ստեփանոս գրիչների կողմից։ Ծածկագրության գրչությունը ժամանակակից է ձեռագրի ընդօրինակությանը, հետևապես ծածկագրող հեղինակը գրիչներից մեկի մոտիկ անձնավորությունն է։

* * *

Ճիրանավոր ծածկագրությամբ երկու բառ է գաղտնագրված Զաքարիա Ավանցու 1611 թ. գրած մի հիշատակարանում, որը հրատարակել է ակադեմիկոս Բրոսսեն։ Այդ մասին խոսվել է այս աշխատության 141-րդ էջում։ Գաղտնագրված այդ երկու բառերն են՝ «Գալուստ, ամէն»:

Լենինգրադի Արևելյան ինստիտուտի հայկական ձեռագրերի հավաքածուի A—29 գրչագիրը պարունակում է անսովոր նշանագրերով կազմված երեք տեսակի ծածկագրեր, որոնք գրի են առնված իրենց բանալիների հետ[38]։ Ծածկագրերի բանալիներն առանձին հրատարակել է Գ. Աղանյանցը «Դիւան Հայոց պատմութեան» առաջին հատորի հավելվածում, ամենայն հավանականությամբ, սկզբնաղբյուր ունենալով ներկայումս Լենինգրադում գտնվող վերև հիշված ձեռագրի ծածկագրությունը։

Ձեռագիրը դավանաբանական և ախտարական նյութերի ժողովածու է՝ գրված երկու տարբեր հեղինակների կողմից։ Ժողովածուն կազմող հեղինակներից մեկը, իր «Առ բարեմիտ ընթերցողս» վերնագրով առաջաբանում, ժողովածուն անվանել է «Ջնջատեսակ, որ կոչի այս ծաղիկ ցանկալի»։ Ժողովածուի մեջ հատվածներ են բերված Գրիգոր Տաթևացուց, Կյուրեղ Աղեքսանդրացուց, Գրիգոր Աստվածաբանից և այլ հեղինակներից։

Առաջին ծածկագրության բանալին բերված է թ. 37բ-ում։ Այն հետևյալն է.

Ծածկագրված է ընդամենը երկու տող։ Անհրաժեշտ ենք համարում բերել ծածկագրությունը՝ վերծանության հետ.



38 Լենինգրադի Արևելյան ինստիտուտ, Հայկական ձեռագրերի հավաքածու A—29, թ. 1ա։

Ծածկագրության երկրորդ բանալին հետևյալն է[39] (թ. 37բ).



Այս ծածկագրով գաղտնագրված է միայն երկու տող։ Բերում ենք վերծանության հետ.



Ծածկագրության երրորդ բանալին հետևյալն է (թ. 44ա).



39 Ծածկագրերը մեզ է տրամադրել բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Մուրադյանը։

Այբուբենը վերևից ունի «Այս լեզուի տառքս, այս է կերպ այբուբենից» վերնագիրը։ Իսկ այբուբենի ներքևում ծածկագրված է երկու տող և վերծանված։ Դրանք հետևյալներն են.



Երրորդ բանալիով գաղտնագրված է շուրջ տասն էջ բնագիր ախտարական բովանդակությամբ. ըստ երևույթին այն օգտագործվել է փիթիներ գրելու նպատակով։ Դրանք պատմական արժեք չեն ներկայացնում, ուստի ավելորդ ենք համարում շատ օրինակներ բերել։

Դժվար չէ նկատել, որ բերված երեք ծածկագրերն էլ բարդ գծագրերով կազմված գաղտնագրեր են, ուստի բնական է, նրանք լայն գործածության մեջ դրվել չէին կարող։ Այդպես էլ եղել է. Լենինգրադի խնդրո առարկա ձեռագրից բացի մեզ հայտնի չէ այդ ծածկագրերով գաղտնագրված ուրիշ այլ բնագիր։

25. ԵՂԻԱ ԿԱՐՆԵՑՈՒ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Ուշագրավ մի ծածկագիր հիշատակագրություն գրի է առնված Եղիա Կարնեցու «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց» ձեռագրի ուղեգրության մեջ, որը Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի սեփականությունն է և գրանցված է ձեռագրերի № 980 թվահամարի տակ։

Այս ձեռագրի գիտական նկարագրությունը հրատարակել է Հ. Հ. Ոսկանյանը երկու անգամ՝ նախ «Հանդէս ամսօրեայ»-ում (1927, էջ 28—30), իսկ հետո՝ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրերի երկրորդ հատորում (էջ 567)։

Ծածկագրերի նշանագրերը որոշ նմանություն ունեն վրացական տառանիշերին, այդ է պատճառը, որ Ոսկանյանը թյուրիմացաբար կարծել է, թե վրացական գրեր են, և նշել, թե «վրացերէն» են, ու վերծանելու փորձ չի արել։

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ նշված բնագիրը ոչ մի կապ չունի վրացերենի հետ և հայկական սովորական ծածկագիր է։ Ըստ որում,

ծածկագրության տառաձևերին նայելով, դժվար չէ նկատել, որ այն գրված է տարբեր գրչությամբ և չի պատկանում Եղիա Կարնեցու գրչին։

Այս ծածկագրության բանալին մեզ հայտնի չէր. մեծ դժվարությամբ կարողացանք պարզել նշանագրերի հնչական արժեքը և վերծանել ծածկագիրը։

Ծածկագրության մեջ օգտագործված նշանագրերի սահմաններում հնարավոր եղավ կազմել տվյալ ծածկագրության բանալին։



Ծածկագիրը հետևյալն է.



Վերծանվում է.

«Գիrf սաpուկեցու nr արար Եղիյաէ էrզrումեցn մակ Յայյայ բէկ կոչեցեալ: Ով nf nr սա չաrեrեին գազանին գիrfին հաւատարմուբիւն անէ եզօվեալ լինի»:

Պարզվում է, որ Եղիա Կարնեցին իր «Ուղեգրության» մեջ բազմաթիվ փաստերով մերկացրել է ճիզվիտներին, նշավակել նրանց խարդախ գործունեությունը Մերձավոր Արևելքում։ Ըստ որում, իր ներածության մեջ նա խնդրել է բարեմիտ ընթերցողներին՝ հրատարակել իր գրած աշխատությունը, որպեսզի կարդան բոլորը, բացվեն հայերի աչքերը, տեսնեն, թե ինչպիսի

նկարագիր ունեն ճիզվիտները։ Հետագայում Կարնեցու աշխատության հետ ծանոթացող կաթոլիկ մեկը, զայրույթով լցված նրա այդ աշխատության նկատմամբ, վերև բերված ծածկագրով անիծել է այն մարդուն, ով հավանություն կտա Եղիայի մեղադրանքներին ու փորձ կանի այն հրատարակել։ Ո՞վ է եղել ծածկագրի հեղինակը, դժվար է ասել, մի բան միայն անվիճելի է, որ այդ անձնավորությունը եղել է ճիզվիտ մեկը։

(Հրատ. ՊԲՀ, 1965, № 4, էջ 233—234)։

26. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Մաշտոցի անվան մատենադարանի ավագ գիտական աշխատող Օ. Եգանյանը սիրալիր մեզ է տրամադրել բոլորակների մեջ առնված արտասովոր մի ծածկագրություն, որը հայտնի է «Գրիգոր Տաթևացու ծածկագիր» անունով։ Նա այդ ծածկագրության բնագիրը հայտնաբերել է Մաշտոցի անվան մատենադարանի № 46 ձեռագրում։

Մատենադարանի № 46 ձեռագիրը պարունակում է Պետրոս Արագոնացու «Գիրք ութն առաքինութեանց» աշխատությունը։ Ընդօրինակող գրիչն է ականավոր մատենագիր Գրիգոր Տաթևացին, իսկ ստացողը՝ նրա ուսուցիչ Հովհան Որոտնեցին։ Ձեռագրի գրչության վայրը Հովհան Որոտնեցու ծննդավայր Սյունիքի Վաղուտի գյուղն է։ Տաթևացին ձեռագրում թողել է մի քանի հիշատակարան, որոնք հրատարակել է Լ. Խաչիկյանը։ Նրանցից մեկի մեջ ասված է. «Զքարերջանկացեալն երանականն կենաւք և զկայծակնամաքուր հոգիամուխ արփիաւորեալն մտաւք, զտիեզերալոյս բարունապետն՝ զտէրն իմ Յովհաննէս Որոտնեցի, հանդերձ ամենայն աշխատանողաւքն ի սմա, յարուցեալ դասաւորեսցէ Քրիստոս ի կեանս անմահ, ի պատիւ և ի հաղորդակցութիւն սիրեցեալ իւրոց, ամէն» (Հիշ. ԺԴ, էջ 564)։

Խաչիկյանը, հիմք ունենալով հիշատակարանում Հովհան Որոտնեցու հասցեին ուղղված «անմահ կեանք»-ի մաղթանքը, որոշել է ձեռագրի գրչության ժամանակը. Որոտնեցին մահացել է 1386 թվականին, հետևապես ձեռագիրը պետք է գրված լինի այդ թվականից հետո (Հիշ. ԺԴ, էջ 564, տողատակ ծանոթագրություն)։ Այս ձեռագրից Լ. Խաչիկյանը հրատարակել է Տաթևացու ձեռքով գրված չափածո երկու այլ հիշատակարան, որոնցից մեկը հետևյալն է.

Ո՜հ թէ զմեղօք զմեռեալ ոգի,
ԶԳրիգորի փցուն գրչի,
Յիշման առնէք արժան բանի,
Յօժար սրտիւ զտէր-ողորմի,
Զոր հասարակ առատասցի,
Տալ զպարգևըս հայցողի։ (Հիշ. ԺԴ, էջ 565)

Տաթևացու մյուս չափածո հիշատակարանում ասված է.

Յուսոյ գիրքս և սիրոյ,
Որ շաղկապեալ [հաւատոյ],
[Հր]աման է մեծ Րաբունոյ,
Յոհանիսի Որոտնեցոյ,

11—884

[Աւար]տեցաւ ի վանքս Վաղատնոյ,
Ձեռամբ Գրիգորի Տաթեւաց[ւոյ]։ (Հիշ. ԺԴ, էջ 565)

Ձեռագրի մեջ հետագա դարերում գրված մի քանի հիշատակագրություններից երևում է, որ ձեռագիրն ընկել է ունիթոր դավանանք ունեցող մեկի ձեռքը, որը երկրորդ չափածո հիշատակարանի միջից ջնջել է Հովհան Որոտնեցու անունը և նրա տեղ գրել Պետրոս Արագոնացունը, սակայն ջնջումը կատարել է անհաջող և նոր գրվածի տակից երևում է առաջվանը։

Տաթևացու ընդօրինակած ահա այս ձեռագրում իբրև հիշատակարան գրի է առնված խնդրո առարկա ծածկագիրը։ Պետք է ասել, որ ծածկագիրն այնպիսի արտասովոր տեսք ունի, որ փորձված աղբյուրագետն անգամ կարող է շփոթվել և ուշադրություն չդարձնել նրա վրա՝ կարծելով, թե այն ձեռագրերում հանդիպող սովորական տոմարական բոլորակ է, եթե չլիներ գաղտնագրողի հետևյալ կողմնորոշող հիշատակարանը.

Թէ դպիր ես իմաստուն,
. . . . . . իր զինքս սիրուն,
Քանզի դիւրաւ լինիս հասոյն,
Թէ հետևիս մտօքտ ի սոյն։
Բայց [բանալին գաղտնագր]ոյն
Քեզ ցուցանէ դայն ի գրոյն,
Որ [դրոշմեց]աւ ի սոյն
Եւ զիս յաղօթս յիշես ի քոյն։

Ծածկագիրը տեղադրված է հինգ շրջանակների մեջ՝ յուրաքանչյուրը բաժանված 18 մասի՝ մեկական տառանիշով, իսկ միջին բոլորակի մեջ, ավելի խոշոր և կարմրագույն մելանով գրված է «Ն» տառը։ Ծածկագրում օգտագործված է իննսուն տառանիշ։



Ուսումնասիրությունից պարզվեց, որ ծածկագրի վերծանությունը պետք է սկսել վերին շրջանակի կենտրոնում գտնվող «Դ» տառից, ինչպես խորհուրդ է տրվում վերև բերված չափածո հիշատակարանում. «Քեզ ցուցանէ դայն ի գրոց»։ Վերծանությունն սկսելով «Դ»-ից, անհրաժեշտ է լինում շարժվել ձախից աջ և մի շրջանակի տառերը վերջացնելուց հետո, նույն հերթականությամբ, անցնել հաջորդին։

Ծածկագրի հինգ շրջանակների միջից տառանիշերը դուրս հանելուց հետո, երբ նրանք դասավորում ենք ըստ հերթականության, ունենում ենք հետևյալ տառաշարքերը.

Դ Ց Լ Ջ Ց Ք Ք Ց Վ Լ Ր Վ Ց Ր Ջ Ջ Կ Ւ
Տ Դ Բ Ց Ց Ջ Ե Բ Բ Խ Ջ Ղ Ջ Ջ Ր Ս Լ Բ
Ճ Ց Ց Գ Բ Վ Ց Բ Բ Դ Ճ Ը Ջ Ջ Փ Ց Ճ Դ
Հ Լ Բ Ճ Ծ Է Ջ Դ Բ Լ Խ Ց Լ Ք Վ Վ Լ Վ
Ա Լ Կ Ց Բ Ջ Ն Ն Լ Բ Ճ Վ Բ Ր Ց Ն Ը Փ

Ի՞նչ բանալիով և ի՞նչ սկզբունքով է կազմված այս ծածկագիրը։ Ուշադիր նայելով տառաշարքին, դժվար չէ նկատել, որ նրանց մեջ հաճախ գործածված տառանիշը «Բ»-ն է։ Հայտնի է, որ հայկական բառապաշարում ամենից շատ գործածվող տառը «Ա»-ն է, հետևապես դժվար չէ կռահել, որ «Բ»-ի տակ թաքնված է «Ա»-ն, այլ կերպ ասած՝ գաղտնագիրը պիտի լինի եղբայրագիր։ Այդ կարելի եղավ ճշտել մի քանի տառանիշերի համեմատության միջոցով։ Հայտնի դարձավ, որ տվյալ ծածկագիր բնագիրը գաղտնագրված է եղբայրագրի ինքնատիպ մի բանալիով, որի ժամանակ օգտագործվում է ոչ թե սովորական հարևան տառերից մեկն ու մեկը, այլ վերցված է ծածկագրված տառի թվական արժեքը մեկով բարձրացված, այլ խոսքով ասած՝ «Ա» գրելու փոխարեն գրվում է «Բ», «Բ» գրելու փոխարեն՝ «Գ» և այլն։

Գաղտնագրության սկզբունքը հայտնի լինելուց հետո կարելի եղավ այն վերծանել և ստանալ հետևյալ փոխարինող շարքը.

Գ Ր Ւ Ո Ր Ք Ք Ր Ս Ւ Է Ս Մ Տ Ե Ո Ծ Ս
Վ Գ Ա Ր Ր Ե Դ Ա Ա Լ Պ Ջ Ե Ե Տ Ռ Ւ Ա
Ն Մ Մ Բ Ա Ս Կ Ա Ա Գ Ն Է Ո Ո Ւ Ր Ն Գ
Կ Ւ Ա Ն Խ Ջ Ե Գ Ա Ւ Լ Ր Ւ Ք Ս Ս Ւ Ս
Ա Ւ Ծ Ր Ա Ո Ց Ց Ւ Ա Ն Ս Ա Տ Ս Ո Է Ւ

Վերծանված բնագիրը ձախից աջ կարդալով՝ մեկ-երկու բառ ենք հասկանում, սակայն ամբողջությամբ վերցրած ոչինչ չի ստացվում։ Խորամուխ լինելով գաղտնագրի մեջ, հայտնի դարձավ, որ ծածկագրող հեղինակը, վերծանությունը դժվարացնելու նպատակով, ստեղծել է մի այլ բարդացում. կողք-կողքի է գրել տարբեր նախադասությունների բառերի տառանիշերը։ Պարզվեց նաև, որ իրար հաջորդող կենտ թվական արժեք ունեցող տառանիշերը պատկանում են մի նախադասության, իսկ զույգերը՝ մի այլ։ Պետք է ասել, որ նման ձևով գաղտնագրված ծածկագրություն մեզ առաջին անգամ է հանդիպում։

Բաժանելով զույգ և կենտ տառանիշերն իրարից, ունենում ենք հետևյալ տասնմեկ տառաշարքը.

Գ Ի Ր Ք Ս Է Մ Ե Ծ
Ր Ո Ք Ր Ի Ս Տ Ո Ս
Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ի
Գ Ր Ե Ա Լ Ձ Ե Ռ Ա
Ն Մ Ա Կ Ա Ն Ո Ի Ն
Մ Բ Ս Ա Գ Է Ո Ր Գ
Կ Ա Խ Ե Ա Լ Ի Ս Ի
Ի Ն Ջ Գ Ի Ր Ք Ս Ս
Ի Ր Ո Յ Ա Ս Տ Ո Ի
Ա Ծ Ա Յ Ի Ն Ա Մ Է

Սակայն դասակարգված այս տողերի տառանիշերի ընթերցումից էլ բան չի ստացվում. նախադասությունները իրար հետ չեն կապակցվում։ Պարզվում է, որ վերծանությունը եռաստիճան բարդացնելու նպատակով ծածկագրողը խառնել է ոչ միայն զույգ ու կենտ տառանիշերը, այլև՝ տողերը, որոնք դժվար չէ ըստ իմաստի իրար մոտ բերել։

Անհրաժեշտ է նշել, որ ծածկագրությունը կազմված է արտակարգ օրինաչափ կերպով և անթերի, ի տարբերություն մեզ ծանոթ եղբայրագիր այլ ծածկագիր-բնագրերի, որոնցում կատարվում են կամայական շեղումներ և անճշտություններ, օգտագործված իննսուն տառանիշերից ոչ մեկը չի շեղվում օրինաչափությունից և չկան վրիպումներ։ Միայն «Ք» տառանիշն է թողնված իր սեփական հնչական արժեքով, որովհետև այն հայկական այբուբենում չունի իրեն հաջորդող տառանիշը։ Մի անգամ միայն «Ա»-ն (11-րդ տողի առաջին տառը) թողնված է իր հնչական արժեքով, նկատի ունենալով աստված բառի առաջին տառ լինելը։

Պարզվում է, որ բոլորակի մեջտեղում կարմիր, խոշոր գրված «Ն» տառը ծածկագրված բնագրի վերջին՝ 11-րդ տողի «ԱՄԷՆ» բառի վերջին տառանիշն է, որը բոլորակի մեջտեղում է գրվել գեղեցկության համար։

Ահա այս բոլոր բարդացումների գաղտնիքները պարզելուց հետո կարելի եղավ ծածկագրի վերծանությունը վերջնական տեսքի բերել և ստանալ հետևյալ բնագիրը.

Գ Ի Ր Ք Ս Է Մ Ե Ծ
Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ի-
Ն Մ Ա Կ Ա Ն Ո Ի Ն
Կ Ա Խ Ե Ա Լ Ի Ս Ի-
Ր Ո Ք Ր Ի Ս Տ Ո Ս։
Գ Ր Ե Ա Լ Ձ Ե Ռ Ա-
Մ Բ Ս Ա Գ Է Ո Ր-
Գ Ի Ն։ Ջ Գ Ի Ր Ք Ս
Ս Ի Ր Ո Ա Ս Տ Ո Ի Ա
Ա Ծ Ա Յ Ի Ն, Ա Մ Է Ն։

Ծածկագրի վերծանությունից երևում է, որ ձեռագիր մատյանն, իրոք, պատկանել է Հովհան Որոտնեցուն. «Գիրքս է մեծ վարդապետին մականուն կախեալ սիրոյ Քրիստոս»։ Հայ մատենագրությունից հայտնի է, որ «Կախիկ» մականուն է ունեցել միայն Հովհան Որոտնեցին։ Վերծանությունից նաև պարզ դարձավ, որ ծածկագրի հեղինակը ոչ թե ձեռագիր մատյանի գրիչ Գրիգոր Տաթևացին է, ինչպես կարծվում էր, այլ Գեորգ անունով մեկը՝ «Գրեալ ձեռամբ սա Գէորգին»։ Ամենայն հավանականությամբ, ծածկագրող Գեորգը՝ Գեորգ Երզնկացին է, Գրիգոր Տաթևացու երեց ընկերը, Հովհան Որոտնեցու աշակերտը, հայտնի տոմարագետ Հակոբ Ղրիմեցու ուսուցիչը։

Այս ծածկագիրը արժեքավոր բնագիր է իբրև Հովհան Որոտնեցու գըլխավորած բարձրագույն դպրոցի ստեղծագործություն։ Այն միաժամանակ ուշագրավ է իր բարդ և սրամիտ կառուցվածքով։ Ներկայացվող ծածկագրի գյուտը հայ աղբյուրագետների համար ունի նաև ուսուցողական արժեք. ձեռագիր մատյաններում հաճախ են հանդիպում բոլորակներ, որոնց վրա, դըժբախտաբար, ուշադրություն չենք դարձնում՝ դրանք համարելով զարդարական։ Չենք կասկածում, որ այս ծածկագիր բոլորակն իր խմբի մեջ հայտնի դարձած առաջնեկը չէ, և մեր ձեռագրերում կգտնվեն նման ուրիշ ծածկագրեր, եւ՝ հնարավորություն տալով լուծել շատ առեղծվածներ։

27. ԳՐԻԳՈՐԻՍ ՌԱԲԲՈՒ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Գրիգորիս ռաբբին Մաշտոցի անվան մատենադարանի № 468 ձեռագրում ունի հայ մատենագրության մեջ բոլորովին չօգտագործված մի ծածկագիր «Այս է ախմարաց կրքանակ» *վերնագրով (թ. 115բ)։ Ծածկագիրը հետևյալն է.*

Ռ . Ի . Բ՝ . Պ . Ո . Խ . Տ . Ե .												
Ա Մ Վ . Ս . Ր . Ի . Ս .												
Թ	Ե	Ա	Մ	Ո	Ս	. Ի .	Ս	Ո	Մ	Ա	Ե	Թ
Ը	Դ	Վ	Խ	Տ	Ր	. Ի .	Ր	Տ	Վ	Խ	Դ	Ը
Է	Գ	Ս	Լ	Ց	Ի	. Ի .	Ի	Ց	Լ	Ս	Գ	Է
Ջ	Բ	Ռ	Ի	Փ	Ռ	. Ի .	Ռ	Փ	Ի	Ռ	Բ	Ջ

Սա, ինչպես պարզվում է, գաղտնագրված է այնպիսի սկզբունքով, ուր տառանիշերը չեն փոխում իրենց հնչական արժեքը՝ ինչպես մեզ ծանոթ մյուս ծածկագրությունների ժամանակ, այլ ցրվում են առաջ ու ետ, զատվում իրարից և այդ միջոցով ստեղծում ծածկագիրը։ Վերծանության ժամանակ անհրաժեշտ է լինում տառանիշերն իրար մոտ բերել։

Ծածկագրի ներքևում Գրիգորիսը թողել է իր հանձնարարականը. «Անա դպիրք կարղացէք», *իսկ նրա կողքին երեք առանձին կապգրերի միջոցով դրել իր ստորագրությունը, որը վերծանվում է.* «Նաստ Գրիգորիս ռաբբի»։

Ծածկագրի առաջին և երկրորդ տողերը հոդվում են իրար։ Վերցնում ենք առաջին տողի առաջին տառը՝ Ռ, երկրորդ տողի առաջինը՝ Ա, առաջին տո-

ղի երրորդը՝ Բ՛ (որի կողքին աջից ապաթարցի նշան է դրված, այն կրկնելու նպատակով՝ ԲԲ), առաջին տողի երկրորդը՝ Ի, և ստանում Ռ Ա Բ Բ Ի բառը։

Վերցնում ենք երկրորդ տողի երկրորդը՝ Մ, առաջին տողի ութերորդը՝ Ե, երկրորդ տողի չորրորդը՝ Ս, երկրորդ տողի հինգերորդը՝ Ր, առաջին տողի հինգերորդը՝ Ո, առաջին տողի երրորդը՝ Վ, առաջին տողի չորրորդը՝ Պ, առաջին տողի վեցերորդը՝ Ի, երկրորդ տողի վեցերորդը՝ Ս, և ստանում Մ Ե Ս-Ր Ո Վ Պ Ի Ս անունը։ Այսպիսով, երկու տողերի զատված տառանիշերն իրար մոտ բերելով ստանում ենք Ռ Ա Բ Բ Ի Մ Ե Ս Ր Ո Վ Պ Ի Ս։

Աղյուսակի երրորդ շարքում Ի տառից առաջ ու հետ ծածկագրված է նույն բառը. առաջինը գրված է ձախից աջ, իսկ երկրորդը՝ աջից ձախ, Այդ տողն առանձին վերծանում ենք. վերցնում ենք չորրորդ տառը՝ Մ. երրորդը՝ Ա, առաջինը՝ Թ, երկրորդը՝ Է, հինգերորդը՝ Ո, վեցերորդը՝ Ս, ու ստանում Մ Ա Թ Է Ո Ս անունը։

Ավելի խառն են գաղտնագրված չորրորդ, հինգերորդ և վեցերորդ շարքերը։ Վերծանում ենք այն մեծ ձգվածությամբ և երաշխավորել չենք կարող ճշտությունը։ Երեք տողերի մեջ օգտագործված տառանիշերի համարաշարքը վարից վեր պահպանելու նպատակով Գրիգորիսը հարկադրված է եղել դիմել հապավագրության, որն ավելի է դժվարացնում վերծանությունը։ Ըստ որում, այս տողերում ևս Ի տառից առաջ ու հետ ծածկագրված են նույն բառերը։

Վերծանությունն սկսում ենք չորրորդ տողից։ Վերցնում ենք հինգերորդ տառը՝ Տ, երկրորդը՝ Դ, առաջինը՝ Ր, և ստանում հապավված ՎԴՐ, որը համարում ենք «վարդապետը» բառի հապավումը։

Վերցնում ենք չորրորդ տողի հինգերորդը՝ Տ, չորրորդը՝ Խ, վեցերորդը՝ Ր, հինգերորդ տողի հինգերորդը՝ Ց և նույն տողի վեցերորդը՝ Ի, իրար մոտ բերելով տառանիշերը, ստանում ենք «Տ Խ Ր Ց Ի», որը համարում ենք հապավում «տխրեցաւ» բառի։

Վերցնում ենք հինգերորդ շարքի երկրորդ տառը՝ Գ, նույն շարքի առաջինը՝ Է, չորրորդը՝ Լ և երրորդը՝ Ս, ու միացնելով տառանիշերը, ստանում Գ Ր Է Լ Ս՝ Ր-ի բաց թողումով։

Վերցնում ենք վեցերորդ շարքի առաջին տառը՝ Զ, հինգերորդը՝ Փ, վեցերորդը՝ Ռ, միացնելով տառերը, ստանում ենք Զ Փ Ա Ռ, Ա-ի բացթողումով։

Վերցնում ենք վեցերորդ շարքի երկրորդ տառը՝ Բ, երրորդը՝ Ռ, չորրորդը՝ Ս, միացնելով տառանիշերը, ստանում Բ Ա Ռ Ս՝ Ա-ի բացթողումով։

Այսպիսով, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ շարքի վերծանված բառերը միացնելով առաջին և երկրորդ շարքի բառերին, հավանական ճշտությամբ ստանում ենք հետևյալ վերծանությունը. «Թովմաս վ ա ր դ ա պ ե տ ը տ խ ր ե ց ա ւ գ ր է լ ս զ փ ա ռ բ ա ռ ս»։ «Փառ բառս» ասելով այստեղ նկատի է ունեցվել գաղտնագրված հյուսվածքը։

28. ՆԵՐՍԻՍՅԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սա Ներսիսյան է կոչվում այն պատճառով, որ ծածկագիրն ստեղծողը և գաղտնագրության մեջ գործածության դնողը, ինչպես պարզված է, եղել է Ներսես Աշտարակեցին (1843—1857)։ Ծածկագիր բնագրերի վերծանության պատիվը պատկանում է հայտնի բանասեր Գ. Տեր-Մկրտչյանին։ Նա Ներսիսյան ծածկագրությամբ երկու նամակ, իրենց վերծանություններով, հրատարակել է «Արարատ» ամսագրում։

Առաջին նամակի հեղինակն է Հովհաննես վարդապետ Կարբեցին՝ հետագայի կաթողիկոսը (1831—1842 թթ.)։ Նամակը, հրատարակչի կարծիքով, գրված պետք է լինի 1801 թ. ապրիլի 28-ին։ Այն հասցեագրված է Ներսես Աշտարակեցուն՝ նրա Ուչքիլիսեում գտնված ժամանակ։

Երկրորդ նամակի հեղինակը Ռոթեոս եպիսկոպոսն է, որը Աշտարակեցու կուսակիցներից մեկն է եղել՝ կատաղի հակառակորդ Դավթի կաթողիկոս դառնալուն։ Բերենք մի հատված ծածկագրից։



Առաջին նամակի[40] վերծանությունը.

Հոգւոյս ցանկալւոյ, աչացս լոյս,
Ներսէս րաբունւոյդ մատու-
ցանեմ ողջոյն գրկախառ համ-
բուրիւ։ Տէր իմ, զպատուիրանս, որ
ընդ էվճիլարցի Մանուկին գի-

[40] Վավերագրի գրության ժամանակը չի նշված։ Գ. Տեր-Մկրտչյանը, պատմական որոշ իրադարձություններ նկատի ունենալով, այն համարել է գրված 1801 թվականին։

տակ եղաք և ըստ յարգւոյդ և մեր
բնիկ մտաց կամեցաք իսկ և իսկ
կատարել, բայց ըստ մեր պայմա-
նի և ժամադրեալ ժամու ոչ եկին։
Գիտացաք որ վն(վասն) սաստիկ երկիւղին
չկարողացան գալ։

Լո՛ւր հոգի իմ, մեր անունաս (անվնաս) հասանիլն առ ցանկալիդ այս-պէս պարտիս առնել. կոչել ի Քօրօն բնակել (բնակեալ) գօշի(Թերևս Ղօչի) ուէսն[41] և յանձնել նմա Դ(4) քաչ անձինք և Բ(2) ազնիւ ձիս, զի ինքն Շամ-տինի տղայի ըռհաթն (ըռահաթն) է, կարող է աներկիւղ գալ շրջիլ և ի Սահաթայ գիւղօրայսն և այսու ձևով ի ձեռս բերել զմելիք Մինասն[42] և ի ձեռս նորին ծանոցանել (ծանուցանել) մեզ և մեք ի պայմանադրեալ ժամում ի գիշերին եկցուք ի պարսպէն և ի լուսանալն առաւօտուն ավ (աստուծով) փտցուք զՋծռայ գետուկի։

Այսպէս պարտիս պատուիրել և ամի (ամենայնի) զգոյժ (զգոյշ) լինիլ. զի դա զիս և ես զդա լաւ գիտեմք, քաջ է և հմուտ ամ (ամենայն) ճանապար-հացն լե՛ր անհոգ։

Եւ զայս ինչ կարծիս ունիմ ի Գեօշի ուէսէն, հրամանքդ ես խորհեա՛ և ապա կատարումն տուր բանիցն, զի դա բարեկամ և ծանօտ (ծանօթ) է փաշայի Գէորգին, մի գուցե ծանուցէ նմա և մեզ վնաս լինի։ Յայսմանէ միամիտ լեր և ապա խօսիր։ Յայս կարծեացս եթէ անհոգասցիս միւսքն ամ (ամենայն) կարողանաս ի գլուխ բերել։

Եթէ ըստ այսմ լինիցի՝ Աբրահամն Աժտարխանցի և Յակոբն Պօլսեցի[43] Թարց կարծեաց ընդ իս բերելոց եմ։ Տիրցւ (տիրացու) Բարսեղն լինի թէ զկնի քանի աւուրց յղեսցուք։

Ո՛վ ջանիկ, զարմանամ թէ զիարդ մաժէք (մաշէք) զոգիս մեր, օրէ օր ձգելով զօծումն Սրբազան Տեառնս (Դանիէլի) մերոյ, որոյ մաքոր (մաքուր) գարշապարացն համբոյրս մատուցանեմ թաղձեալ սրտիս. և միջակ-ուրս առնէք զմերայինսն։ Թէ այսպէս և թէ այնպէս. Թողլով զա (զամենայն կամ զառջին) պատճառսն, ջանացէք զայդ կատարել։

Վասն անցից և որպիսութեանց ոչինչ ունիմ գրելի, գիտելի է և լինելոց է, միայն թէ զԱնտօն վարդապետ, սիրական եղբօրս եղբայրն յորժամ գայցէ յադր (յայդր) ի խնամս ունիցիս։

Առ ձեզ եղեալ եպիսկոպոս հարցս՝ Կլկլ[44] բաբայիս, Գրիգոր բնիկ սի-րելւոյս, Աւրանցի[45] ցանկալւոյս մաքուր զաջսն համբուրեմ և զանոյշ խաթրսն հարցանեմ. լե՛ր ողջ ի սէր։

---

[41] Քորոն՝ գյուղ Ջոռի մյուս կողմում, Մուսունի մոտ։ (Այս և մյուս ծանոթագրությունները վերցված են Գ. Տեր-Մկրտչյանից)։

[42] Մինասը Բլուր գյուղի մելիքն է եղել։

[43] Աբրահամ Աստրախանցին և Հակոբ Պոլսեցին էջմիածնի միաբանության անդամներից են, սպանվել են էջմիածնի մոտ 1804 թ. տեղի ունեցած կռվում։

[44] Կլկլ—էջմիածնի միաբան Հովհաննես եպիսկոպոսի մականունն է։

[45] Ավրան—Տարոնի հայկական մեծ գյուղերից մեկը։

Կար. Յով. (Կարբեցի Յովհաննէս)։

Ճանճոտն մեր սուրբ աջդ համբուրէ և ասէ. մեռաք պռէպռս տալով։ Գրի ի սուրբ աթոռս յամսուս ԻԶ (26)»։

(«Արարատ», 1888 հունվար, էջ 45—46)։

«Արդ սա (Դաւիթ) որպէս թէ զօրութիւն առեալ մինչև 60 թուղթս գրէ ի Թիֆլիզ և ի կողմն Հաշտարխանու և առ կայսն (կայսրն)։ Լե՛ր ողջ ի Տէր, ի սէր։

Ռէթոս։

Թուղթքդ հասին առ իս. մանուէրից միոյ հասանիլն իմացան, յետինն՝ ոչ։

Յունիս ԺԲ (12) (1801) ի սուրբ էջմիածին»։

Երկրորդ նամակի վերծանությունը.

«Ի ձեռ Ներսէս վարդապետին

Ի Ուշֆիլիսէ, ի ձեռ Ներսէս վարդապետին հասցէ:

Ներսէս վարդապետ ազնիւ եղբայր իմ:

Յուիս(յունիս) ամսոյս Է (7) Դաւթիս մարդիք ի Թիֆլիզոյ եկին ընթովք Սօլօմօնին[46], Կարապետին, Աբրահամին և Մաղաքիէլի Յովհաննէսին։ Գրեալ են թէ ժողովեցաք առ Կաւալիցկին[47], խօսեաք վասն քո և նա ասաց թէ զորն կամիք՝ նա է ձեր կաթուղիկոսն. և ըստ այսմ ասաց թի(թէ) յառաւօտուն բազմութեամբ գնալ առ ինքն թի(թէ)՝ առ Կնօրինն[48] գնասցուք։ Գնացեալ ի յառաւօտն քո բանն գլուխ հան, իսկ Աբրահամն կարճ գրէ թէ՝ կոդակն փո-ղոցսն կարդացաք և խստացան (խոստացան) մոմն տալ և անունդ Գ(3) ժա-մըս յիշեցաք։ Ջիք-Կարապետն գրէ թէ՝ մեզ Կնօրինն խոստացեալ է թէ՝ Ղռամաթն բերել տալ և այլ այսպիսիք։

Իսկ Աբրահամ գրէ և զայս թէ Յովհաննէսն իւր համախոհիւքն առ քեզ յղեսցուք։

Արդ թէպէտ երևի թէ փարայի տուզախ է, այլ մի գուցե չփոթն տևեսցէ. Արդ թէպէտ երևի թէ Հայոց և թէ Ռուսաց (Ռուսաց) և օրինակս այդի թուղթս առ մեծամեծս թէ Հայոց և թէ Ռուսաց (Ռուսաց) և օրինակս Պօլսոյ բանից շուտով առաքեսջիք։ Թէպէտ այս բանից լրովքն յուսակտուր էաք, մինչ օրինակ Մանուէլի գրոյն տեսի, յիրաւի նորոգեցան կեանք մեր։

Մի բազմակընիք ես որ յղեալ եմք, չգիտեմք էհաս թէ որպէս եղև, գրես։ Կամիմք առ Կայսրն և առ Սինօթն Ռուսաց ես շինել և յղել առ Իփրեմ հայր սուրբն։ Եթէ պայշաճաոր (պատշաճաւոր) համարիք՝ առ ձեզ առաքեմք, յղել ձեր թղթովքն։

Մեռոնի իւղի պատրաստութիւն տեսէք և այս նիւթից հոգսն ես հոգացէք. իսկ մնացելոց բանքն ղօլայ է։ Ի Պոլսոյ կափ(կամ) ի Կարնոյ կարելի է թէ գտանի բերել տայցէք։

Պալասան 150 տրէմ, միայսալի, որ զուգի ձեթ՝ 30 տրէմ, ամբար՝ 5 տրէմ, մուշկ՝ 5 տրէմ, լատան՝ 15 տրէմ։ Այսոքիկ դուք բերել տուք, իսկ միւսքն յետոյ ես հոգացուփ»։

(«Արարատ», 1888 հունվար, էջ 48)։

---

[46] Սոլոմոն Արղումանյանը Դավթի ջերմ կողմնակիցներից մեկն է եղել, որը Թիֆլիսում աշխատանք է տարել նրա օգտին։

[47] Կավալենսկին այդ ժամանակ Վրաստանի ռուսական կառավարիչ Կովալենսկին է։

[48] Կնորինը ժամանակի ռուսական զորքերի հրամանատարն էր Կովկասում։

Ներսիսյան ծածկագրության բանալիով գաղտնագրված մի այլ վավերագիր մեզ է հասել 1813 թվականից։ Այդ Նահապետ Արշակյանի նամակն է՝ ուղարկված Թբիլիսիից էջմիածին, Ներսես վարդապետին։ Վավերագրի բովանդակած նյութը, առանց ծածկագրի բնագրի, հրապարակել է Մաշտոցի անվան մատենադարանի գիտական աշխատող Ա. Ադամյանը[49]։

Ուշագրավ է, որ Արշակյանը, ծածկագիր նամակի վերծանությունը հասցեատիրոջ համար դյուրացնելու նպատակով, նամակի երկրորդ թերթի առաջին երեսի վրա բերել է ծածկագրության բանալին՝ հետևյալ ծանոթագրությամբ. «Ով իմ քաղցր ողորմած սրբազան հայր, միւսյս երեսի գրած գիրս եթէ ուղիղ է կամ անուղիղ, իմ սիրելի և պատուական Կրպ (Կարապետ) սանահօրս սօրվացրած գիրն է պահպանած ժամանակիս. և աստ նույն գիրն է՝ այբ և բին, գիմ դան գրիմ, ոպ (որպէս) սօվորած իմ, և անսղալ է գրուին (գրութիւնս), ահա այս է ալվավիտայն, զոր գրեմ ի ներքոյ աստ»։ Բերում է այբուբենը.



Վերջում ավելացնում է. «Բայց փիւր գիրն չունիմ, ջնջված է և եղծած, և ի տեղի փիւրի բենն գործ ածեմ միշտ. եթէ կարելի է խնդրեմ մին լավ հավատարիմ անցամբ ձեր գիտեցց (գիտեցայ) ալվավիտայն գրելդ առ մեզ ցանկամ. և կամ փիւր գիրի օրինակն ուց (որպէս) է, գրես. և այս գրի մեջն նշանագիր օրինակել եմ, հին գիրի են (և այլն). այս նոր գիրն են էլ այսպէս օրինակել եմ[50]»։

Ծածկագիրը ուշագրավ է նրանով, որ այն պարունակում է հայ ծածկագրության մեջ քիչ հանդիպող քաղաքական տեղեկություններ Նապոլեոն Բոնապարտի 1812 թ. արշավանքի, ինչպես և՝ Անդրկովկասում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին։ Ստորև բերում ենք ծածկագրի լուսանկարը և վերծանությունը (տե՛ս հաջորդ էջում)։

Ծածկագիրը վերծանվում է այսպես.

Նոր լուր այս է. Պօնապօրտն
ԲՃՌ (200 000) զօրօք անց կացաւ գնաց
իւր հօղն, հաստատն այս է, զօր

[49] Ա. Ադամյան, Վավերագրեր 1812 թ. հայրենական պատերազմի մասին (տե՛ս «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1964, № 8, էջ 80)։

[50] Վավերագրի վերջին էջի վրա գրված է. «Ի Թիֆլիզոյ 1813 յունվար 26։ Առ Ներսէս վարդապետ։ Նահապետ Արշակեան գրէ վասն Բօնօփարտի դառնալոյն, վասն յաղթութեանց ի կողմանս Պարսից, և վասն անգոհունակութեան Նախիջևանցւոց ի Յոհաննէս առաջնորդէն»։



գրեմ, եթէ այլ ինչ ասխս գրեն
կամ ասեն, ունայն է կամ քազետի
գրուի (գրութիւն). և տեղիս մալեպնի կատարելն
այլ իմն բան է, ոպ (որպէս) գիտէք են (և այլն)։
Մօսկօվիցն ԲՃ (200) արապա ոսկի և
արծաթ տարել է հետն, և երևում (է)
գարունն մեծ կռիւ պիտի լինի ևս։
Այս գիրս գրած օրն Գալտերէսկի-
էն գիր եկաւ. շահզատէի հետ
կռիւ արել ին, և շահզատէի բոլոր
բանակն առել ին և մեծ կոտորվածք
եղել է, շահզատէն միայն բուցել է,
և բոլոր թօփերն առել ին. այս աղտուի (աղտութիւն)
առաջվացն չօր (չորս) խատ (խետ) աւել է լեալ։
Նախիջևանու գիր առի. անգոհան-
անուի (անգոհանակութիւն) գրեն Օհանէս առաջնորդիցն,
և Գրիգոր վարդապետին կամին ուզել. և
Գալտերևսկուն ոտքն կոտրել է
կռվումն, այս տեղաց մին լաւ տօք-
տուր պիտի ուղարկեն սույն ամսուս
Իէ. ին (27-ին), այլ ևս զօրք ղրկելոց են Նր (Նորա)
Լանքարան էլ առիլ ին, Տալիշ էլ, Փարշ էլ։
(ՄԱՄ, արխիվային բաժին, Կաթ. դիվան, թղթ. № 24, վավ. № 193)։

29. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԱԾԿԱԳՐԵՐ

ա) Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետի ծածկագիր-զեկուցագիրը գաղտնի խորհրդական Պյոտր Անդրեյիչ Տոլստոյին (1725 թ. մայիսի 11)[51]։

«Սպոտինը մօյեմու Բետր Անդրէյիչ Դոլստովը

Եժիլի պա[զ]վոլիշ ըսպրաշըվըշ ըզդեշնի վետըմը, իմընըայ նապիսնա նա փեչատնը պումակ[է], դեսիտ փեչատ եստ, ըզդեշնի գլավնիշանի պէ-չատիլի։ Այ էդի Թուրքի, կոտորի պրիշլի օկլի Քուրի ու Ախնազար պէկը, օն իըխ զակօն։ Այ էդի դրի փաշա, գոտորի իմը նապիսնա դամ, սավեդըվլի, ըշդօ կակ մի պաեդիմ Արմանցկի զեմլա, իզ Ֆիսակի Սղնախ ուզպաշի ըզ-վատ կը սեպէ, ի ֆեսմու կաֆդան պոտարքի ըսդանիմ դաւատ, պակամիստը վայդոմ իըխ կոըըտ, կոդորը եստ նա կոռախ, ըսդանիմ գլավնիշ ըուպիտ, այ զեմլա տը մի պուդիմ վըլատետ։ Նա դրիդցիդ դրի դերենը պը ֆաթերը պըվելի, դըվա դեն կօռմիլի։ Օնի պօչիլի սիլնը մընօկը դելայ դելատ։ Այ ըզդեշնի նառօտ սավետվիլի, ըշդօ մի իըըխ ռուուկ նէ պուտիմ ժիվ, կոտորի պը չոստեամ ըռուպիլի, մալը չիսլա ուշլի։ Նինչի դումըտ նառօտ՝ պուտի՞տ լի ատ վելիքը ցարա նամ միլըստ, իլի նետ, կօլի ըսկօըըա միլըստ դա նաս նէ պուտիդ, նաշի արմանցկի նառօտ վէստ պր[ա]պատեօմ։

Կակ էդը դելը ըզդելիլի, պօչիլի ըս կըզըլպաշըմ միր. դվաըստօ կըլօվա պասլալի դա շախը, Քալբլաի պէկըմ միր զաչիլի դա վըրեմը։ Եժելի ադ վաշը ըսդօռնու ադին վեդըմ պուտիտ, մի օպատ ըստանիմ պա ստառմու ըս կըզըլպաշիմ կօնթր ըզդէլըտ։

Այ նինը պըրիշլի կուպցի իզ Իրեան, ըսպրաշըվլիլի՝ ըշդօ վեդըմը, ըս-կազալի՝ սեմսօդ լուդի պրիշլի ըզ պօսօլըմ, նէ զնայը՝ իզ նաշը՞վ, իլի իզ ցիցըր Շահնավազ խանը չելէվէք։ Այ իմը եվօ Դաւուդ պէկ։ Օնը ժը ժիվեօտ Կապանցկի զեմլա, դամըշնի արմանի սօպրալ սեպէ։ Թուրք պրիշօլ, պատալի դավալ, ադ նիխ մընօկը պօպիլ. նենը, ըսկազըվըտ, ի դամ Թուրքի նետ։

Եժելի իզվօլիշ ըսպրաշըվըտ ու կավօ՞յ եա ժիվու, եա ժիվու ու Թարխան ուզպաշի, օն մենէ քօռմիտ։ Ըսքօլքի վըէմ նէ ժիվ նէ մեօղըվ ատ պէչալը, լարտի ադին վետըմը։ Դրի չօթիր ըազ պըօսիլ՝ Դայդ[ե] մենէ ադին պիսմա, եա պոյդու նազատ։ Ըսկազալի՝ Տի պօյդօշ, նաշի նառօտ վէս պր[ա]պա-դեօտ, մի նէ մօժիմ թէպէ ատկազատ։ Այ նինը ըզդեշնը նառօտ պօչիլի զկը-զըլպաշըմ միր, այ շախ պասլալ պօդարքի պօ [օ]տնօմու կաֆդան կաժնոմու ուզպաշամ, ի նինը միր ըստալ լատըվա պըմիրիլի, ըշդօ ադ նաշը ըսդօռնու ադին վեդըմը նեյդ. օտ ադին ըսդօռնու Թուրքի ադին։

Մարտը սեմնադցատվա չիսլա պօսլըմը պըլիզ Կիլանի լարդի վիտըմը, ըզդէշնը, այ պօսլըն պըլիզ ջնդրալ Մ[ա]տուշկին։ Իմը եօվօ Սահրատ Սէր-կէյըվ։ Իզվէստըվը վետըմ պրիշօլ քը նամ, ջնդրալը պըկազ, կոտորը իս-պոտպոտպիսնա, եժէլի պուտիտ բըէժատ կը վամ Թուրեցքի ոյսկի, տի պիշի ատին պիսմա Էրեվան, ու նիխ գլավնիշ, վելի պըդաժդատ, պակամեստի նաշը ստտար պօսօլ պասլալ նա տըվօեու ստդարու, ըսմոտրի[մ], ըշդօվի վետըմ պօդիդ, կակ պըիկազնը, դակ պուտիտ դելըտ։ Պէզ պիսմը պրիշօլ, այ եայ եօվօյ նէ վէրըլ։

Այ նինը վետըմ բըիշօլ, տակ ըսկազըվըտ. շախ ոյսկի ստւպիրալ, պօյ-դօտ ըս Միրվեյսըվիվ, [ս]ընըմ պատալի դաւատ, այ պօսլինը նէ վէտիմ։

Ապ Թուրքի վետըմ իզվօլիշ ըզնավադ, նինչը սիտեատ Իրեվան, նէ կուտի նէ վիշլի դէսէյպօր, պօսլի էտ չիսլա վիտուտ՝ ըշդօ Կենջե կօըըդ վիզատ։

Դակ կրէպքը ըսդալ չօթիր ըսդօռնը, նի ատին եզդաքօֆ նետ, ըշդօ վե-տըմ ըզնաւատ, կոտորը մի իշլիշիմ ի դօտ Թիխոնքը»։

Լուսանցքում.

«Այ նինի ըզդեշնը նառօտ պօչլի զկզըլպաշըմ միր, այ շախ պասլալ պօ-տարքի պ[օ]օդնամու կաֆդան կաժնմու ուզպաշամ, ի նինը լատըվա, պը-միրիլի։ Ըշդօ ադ նաշը ըսդօռնու ադին վեդըմը նէ յդօտ, ադին ըսդօռնու Թուրքի, ադին ըստօռնու կըզլպաշ, ադին ըստօռնու լէկզի, սամի աստալի ի, ֆսեյօ Թաքի, ֆեսու տոմուտ՝ կակ նամ պուտիտ, անի կուարատ»։

Ծածկագիր վավերագրի բնագիրը հրատարակվել է մեր «Մի էջ Անդըր-կովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմու-թյունից» աշխատության մեջ, 1953 թվականին (էջ 225—227), իսկ 1967 թվականին այն վերահրատարակվել է «Армяно-русские отношения в XVIII веке» *վավերագրերի ժողովածուում (էջ 241—242)։ Վերծանությունը հրատարակվել է վերև հիշված ժողովածուի մեջ (էջ 242—244)։*

բ) Նույն վավերագրի ռուսերեն վերծանությունը

Господину Петру Андреевичу Толстому мая 11-го.

Ежели позволишь спрашивать здешни ведомости, имена написаны на (за)печатанной бумаге, десять печатей есть, здешние главные они печатали. А эти турки, которые пришли около Куры у Ахназар бека, он их закон/а/. А эти три паши, которые имя написаны там, советовали, что как мы поедем Армянские земли, из всяких сыгнах/ов/ юзбаши звать к себе, всему кафтан подарки станем давать, пока вместе войдем их герод, который есть на горах, станем главнейш/их/ рубить, а землей — да мы будем владеть. На тридцать три деревни по фатера/м/ повели, два дня кормили. Они почали сильно много дела делать. А здешнии народ советовали, что мы /в/ их рук/ах/ не будем жив/ы/. Которых по костям рубили, мало числа /их/ ушли. Нынче думает народ будет ли от велик/ого/ царя нам милость, или нет. Коли скоро милость до нас не будет, наш армянский народ весь пропадем.

Как это дело сделали, почили с кизилбашем мир: два сто голова послали до шаха, Калбали беком мир зачили до время. Ежели от вашей стороны одна ведом/ость/ будет, мы опять станем по старому с кизилбашем контр сделать.

А ныне пришли купцы из Еревана, спрашивали, что ведомо; сказали, семьсот люди пришли с послом, не знаем, из наших или из числа Шахнаваз хана человек, а имя его Давуд бек /т. е. Давид бек/, он же живет /в/ Капанской земле; тамошних армян собрал к себе, турок при-

[51] *Պյոտր Անդրեյիչ Տոլստոյը եղել է Պետրոս I-ի խորհրդականը։*

шел, баталии давал, от них много побил, ныне сказывают и там турок нет.

Ежели изволишь спрашивать, у кого я живу? Я живу /у/ Тархана юзбаши, он меня кормит. Сколько времени не жив, не мертв от печали ларти один ведом. Три четыре раз/а/ просил дайте мне одно письмо, я пойду назад. Сказали, ты пойдешь наш народ весь пропадет, мы не можем тебе отказать. А ныне здешний народ, пачили с казилбашем мир, а шах послал подарки по одному кафтану каждому юзбаши, и ныне мир стал, ладно помирились. Что от нашей стороны /ни/ одной ведом/ости/ нет. От одной стороны турки одни.

Марта семнадцатого числа послал близ Гилани ларти[52] ведомоздешнии, а послан близ генерал Матюшкин. Имя его Саград Сергеев. Извест/ная/ ведом/ость/ пришла к нам, генерала приказ, который испот подписан ежели будет приезжать к вам турецки войски, ты пиши одно письмо /в/ Ереван, у них главниш, вели подождать, покамест наш сударь посол послал на твоему сударю, смотри, чтоб ведом подать, как приказано, так будет делать. Без писма пришел. А я его не верил. А что здесь ведом был, писали здешний народ и я писал одно писмо с ним послал до Баку. Сколько писма послал и /в/ Баку, и /в/ Дербент тамошним главнейшим имя не знаю, что ведуму писма писать у них имя сторону кизилбаш, один сторон легзи, сами остали в серодке, все думают, как нам будет. Они говорят ежели от вашей стороны одна ведомость будет, мы опять станем по старому с кизилбашем контр делать.

А ныне ведом/ость/ пришла такая, сказывают, шах войско собрал, пойдет с Мирвейсом, с ним баталии давать, а подлинно не ведомо.

Об турки ведом изволишь знать, нынче сидят /в/ Ереван, не куды не вышли до сих пор, после этого числа выйдут, что Генже город взять. Так крепко стало /в/ четыре стороны ни одного ездока нет, что/б/ ведом/ость/ знать, котор/ую/ мы слышим и тот тихонько.

Меньший слуга Иван Карапет[53].

* * *

գ) Հատված Ե. Լևաշովի՝ Ա. Ի. Օստերմանին գրած ծածկագիր նամակից

Գեներալ Ե. Լևաշովը 1726 թ. օգոստոսի 11-ին Ալեքսանդր Իվանովիչ Օստերմանին ուղարկել է ծածկագիր մի նամակ Անդրկովկասում և նրա հարևան երկրներում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների մասին։ Այդ նամակում խոսվում է նաև հայ և ադրբեջանցի ժողովուրդների՝ թուրք նվաճողների դեմ մղած համատեղ և հերոսական կռիվների մասին։

52 Последующее слово «ларти» не понятно.

53 Письмо к действительному тайному советнику и кавалеру, графу Петру Андреевичу Толстому получено при доношении из Бакиа от 24 июня 1725 г., а переведено через Луку августа 8 дня. (АВПР, ф. 100, 1725 г., д. 2, л. 6 и об. Подлинник). Транскрипция по док. № 312.

*Այդ է, անշուշտ, պատճառը, որ արքունիքի գործավարությունն անհրաժեշտ է համարել այդ վավերագիրը զետեղել «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» ֆոնդի Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետի թղթապանակում (*ГАФКЭ, ф. СРА, *1739, № 2, л. 10)։*

Ծածկագիրը մեծ դժվարությամբ կարողացանք վերծանել, քանի որ ձեռքի տակ չունեինք նրա բանալին, և ընդհանրապես մեզ հայտնի չէր, թե ռուսական ծածկագրության մեջ հայտնի՞ է արդյոք նրա բանալին։ Ծածկագրության գաղտնիքը պարզելու գործում մեզ օգտակար եղան վավերագրի վերջում նշված տարեթվի մոտ գրված ծածկագրված «году» *և* «августа» *բառերը։ Այնուհետև կարելի եղավ մի շարք համեմատությունների միջոցով գտնել մյուս ծածկագիր տառերի հնչական արժեքը և ամբողջացնել ծածկագրի բանալին, որը հետևյալն է.*



Ծածկագրի այն հատվածը, որը վերաբերում է հայ և ադրբեջանցի ժողովուրդների՝ թուրքերին ցույց տված դիմադրությանը և համագործակցությանը.



...Токмо всему нам надобно на Куре реке крепость иметь. И хотя они турки и весьма многолюдны, но как разсмотрены, их поступки, не равны мнится быть оныя с европейскими турками, но больше по делу их показолося со армянами, о которых надеются нам.

Моему государю известно, но и я сколько известен при сем об'являю; турки с великими утугами неоднократно на армян ходили, но четверократно батали проиграли; армяня туркам сопротивляются.

И на муганцов неоднократно турки ходили и овладеть ими не могли. И из оных муганцов не мало число ко армянам же проибщились, что и турки самим уже разграничение запрятни быть иметь под мнением чтоб поменутые народе страх возимели.

դ) Հայերեն թարգմանությունը

... Այս ամենից բացի, անհրաժեշտ է Քուռ գետի վրա ամրություն ունենալ։ Թեև նրանք՝ թուրքերը, զգալի չափով մեծաթիվ են, բայց ինչպես դիտվել է, նրանց վերաբերմունքն այնպիսին չէ, ինչպիսին է եվրոպական թուրքերինը. գործով, ինչպես երևում է, նրանք հայերի հետ են, որի վրա հարկավոր է մեզ հույս դնել։

Իմ տիրոջը հայտնի է, բայց ես ևս, ինչ որ ինձ հայտնի է, սրանով ուզում եմ հայտարարել ձեզ։ Թուրքերը մեծ խմբերով բազմաթիվ անգամներ հայերի վրա են գնացել, բայց չորսնապատիկ ճակատամարտերը տանուլ են տվել։ Հայերը թուրքերին դիմադրում են։

Թուրքերը բազմաթիվ անգամներ գնացել են նաև Մուղանի (ադրբեջանցիների) վրա, բայց նրանց տիրել չեն կարողացել։ Եվ նրանցից՝ մուղանցիներից շատ (կովողներ) միացել են հայերին, որի հետևանքով թուրքերը հարկադրված են եղել սահմանափակել իրենց առաջացումը։ Նրանց դիտավորությունն այն է, որ սարսափահար անեն նշված ժողովուրդներին։

Այս ծածկագրի մի հատվածի վերծանությունը և թարգմանությունը հրատարակել ենք մեր «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության մեջ (էջ 131)։

30. ՇԱՀԱՄՐԱՆԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ

1957 թ. Անթիլիասում գտնված ժամանակ, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանի ձեռագրերն ուսումնասիրելիս, մեր ուշադրությունը գրավեց այդ հավաքածուի հայկական ձեռագրերից մեկը, ուր գրի էր առնված անծանոթ նշանագրերով մի գրություն, որի հայկական ծածկագիր լինելը անտարակուսելի երևաց, քանի որ գրության վերջում կային երեք բառ, որոնցից երկուսը հապավված՝ ՀՅ Թվ, որ վերծանվում է «հայոց թվական», իսկ մյուսը՝ հին հայկական Տրէ ամսանունը։ Մենք վերցրեցինք այդ ծածկագրի լուսանկարը։ Դժբախտաբար, անփույթ գտնվեցինք կատարելու տվյալ ձեռագրի գիտական նկարագրությունը, որը, թերևս, հնարավորություն կտար

ավելի հանգամանորեն խոսելու ծածկագրող հեղինակի մասին և կօգներ ավելի դյուրին ճանապարհով ու անթերի վերծանելու ծածկագիրը։

*Տարիներ հետո, երբ ձեռնարկեցինք այդ ծածկագրի վերծանությունը,
պարզվեց, որ հայկական ծածկագիր նշանագրերից ոչ մեկը նմանություն
չունի այս ծածկագրության մեջ գործածված նշանագրերին, եթե հաշվելու
չլինենք մի քանիսի նմանությունը հայկական նոտր տառանիշերին։ Մեզ
մնում էր դիմել բավական բարդ և դժվարին եղանակի՝ նշանագրերի հնչա-
կան արժեքները որոշել բառերի և տառերի համադրության միջոցով։*

*Արձանագրությունն ասումնասիրելու ընթացքում պարզվեց, որ ծած-
կագրող հեղինակը պատվի նշանի համար օգտագործել է միջակետ, որը դրել
է հապավվող բառերի վրա։ Ծածկագրում երկու այդպիսի հապավում է օգ-
տագործված։ Հին ժամանակներում և միջին դարերում սովորություն է եղել
հապավել տերունական յոթ բառ՝ ԱԾ (Աստուած), ՅՍ (Յիսուս), ՔՍ (Քրիս-
տոս), ՏՐ (տեր), ՍԲ (սուրբ), ԻԷՂ (Իսրայէղ), ԵՂՄ (Երուսաղէմ)։ Հավանա-
կան երևաց, որ վերև հիշված հապավված երկու բառերի տակ գաղտնագրը-
ված են ՔՍ (Քրիստոս) կամ ԱԾ (Աստուած) բառերը։ Մեր այս ենթադրու-
թյան օգտին են խոսում ՔՍ հապավման առաջին տառանիշի նմանությունը
հայկական նոտր «Ք» տառանիշին։*

*Աղբյուրագիտական ուսումնասիրությունների տարիների փորձը մեզ
ցույց է տվել, որ այլ նշանագրերով գաղտնագրված հայկական ծածկագրու-
թյան տառանիշերի հնչական արժեքը որոշելու գործում մեծ չափով օգնում
է «ՈՒ» տառի ծածկագրությունը, ուր «Ո» և «Ւ» տառերը միասին են հան-
դես գալիս։ Մեր դիտարկումից պարզվեց, որ տվյալ բնագրի մեջ ութ անգամ
կողք-կողքի հանդիպում են զույգ տառեր։ Այդ հիմք տվեց մեզ հնարավոր
համարելու, որ առաջին տառանիշը լինի «Ո»-ն, իսկ երկրորդը՝ «Ւ»-ն։*

*Անծանոթ նշանագրերով ծածկագրված բնագրերը վերծանելիս, մեզ
զգալի չափով օգնում է նաև «Ա» տառի գործածությունը. հայտնի է, որ այդ
տառը հայոց լեզվում ամենից շատ գործածականն է։ Նշված ծածկագրում
կա մի նշանագիր, որ գործ է ածված 26 անգամ։ Կասկած չէր հարուցում,
որ այն պիտի լիներ հայկական «Ա» տառանիշը։*

*Հայոց լեզվում հաճախ օգտագործվող տառանիշերից են նաև «Ե» և «Ի»
ձայնավորները, իսկ արձանագրության մեջ կան երկու տառանիշեր, որ հա-
ճախ են հանդիպում. առաջինը հանդիպում է վեց, իսկ երկրորդը՝ տասն
անգամ։*

*Այսպիսով, շատ ու քիչ հավանական ձևով, կարելի եղավ որոշել ութ
տառերի հնչական արժեքը՝ Ա-ի, Ե-ի, Ի-ի, Ո-ի, Ւ-ի, Ք-ի, Ս-ի, Ծ-ի։ Ձեռք
բերված այս հավանական պաշարով մենք դիմեցինք բազմաթիվ փորձերի,
մինչև որ կարողացանք վերջնականապես ճշտել ծածկագրության նշանա-
գրերի հնչական արժեքը և դիմել վերծանության։ Դժբախտաբար, մեզ չը-
հաջողվեց այդ ծածկագրի մեջ գտնել 11 տառի նշանագրեր, որոնք չէին գոր-
ծածված տվյալ բնագրում։ Դրանք հետևյալ տառերն են. Բ, Ը, Ժ, Խ, Ձ, Ճ, Չ,
Պ, Ջ, Ռ, Տ։*

Վերծանության ընթացքում առաջացան այլ դժվարություններ ևս։ Թեև,

մեր կարծիքով, գտել էինք ծածկագրում գործածված բոլոր նշանագրերի հըն-չական արժեքները, սակայն վերծանությունից ստացվում էին այնպիսի բառեր, որոնք հայերեն չէին, և վերծանված նախադասությունները իմաստ չէին տալիս: Մեծ դժվարությունից հետո պարզվեց, որ ծածկագրող հեղինակը պարսկահայ է և ծածկագրության մեջ գործ է ածել պարսկերեն բառեր:

Ծածկագրության բանալին հետևյալն է.



Առաջին նախադասությունն առանձին բարդություն չունի. այն դյուրությամբ վերծանվում է. «Ամf Եrեfից ԼԳ (=33) թուղթն»: Վերծանված այս նախադասությունից երևում է, որ տվյալ ձեռագրի գրիչը մեր ծածկագրող հեղինակն է, ձեռագիրը եղել է 33 թերթից, որը նա ընդօրինակել է բավականին երկար ժամանակ՝ շուրջ երեք տարի:

Երկրորդ նախադասությունը վերծանվում է. «Աշչի ղաfաֆ, նախեf իմ Մալիշկայից, որդուցն խոյից, հօտից Քրիստոս Աստուած»: Վերծանված նախադասության առաջին երկու բառերը հայերեն չեն. աշչի (aşç) բառը թուրքերեն է և նշանակում է խոհարար, իսկ ղաfաֆ բառը պարսկերեն է և ունի «նվաստ» նշանակությունը (պարսկական խաfի (خاکی) նվաստ արմատից): Պարզվում է, որ մեր ծածկագրող հեղինակը մասնագիտությամբ խոհարար է եղել:

Տվյալ նախադասության մեջ «նախեք» բառն օգտագործված է նախնիf իմաստով, որոնք, ըստ ծածկագրողի, Մալիշկայից են, խոյեցի և քրիստոնյա՝ «հօտից Քրիստոս Աստուած»: Մալիշկա անունով մի գյուղ կա Ներկայումս Եղեգնաձորի շրջանում, բնակիչները, իրոք, խոյեցիներ են, գաղթել են Պարսկաստանի խոյից: Նկատի ունենալով, որ մալիշկեցիները Եղեգնաձոր են գաղթել Թուրքմենչայի 1828 թվականի պայմանագրի կնքումից հետո, իսկ ծածկագրությունը գրված է 1774 թ., խոսքը կարող է վերաբերել Պարսկաստանի խոյում գտնված Մալիշկա գյուղին, որի բնակիչները գաղթելու էին Եղեգնաձոր:

Պետք է խոստովանել, որ տվյալ նախադասության վերջը մեզ այնքան էլ պարզ չի. դժվարանում ենք ասել, թե «Քրիստոս Աստուած» բառերը կապվա՞ծ են «հօտից» բառի հետ, թե՞ հաջորդ նախադասության սկիզբն են հանդիսանում:

Հաջորդ նախադասությունը վերծանվում է. «Ամելուն խաչն մոնայից էն խաչն կցուրդ ան յամյ շողն այն այն fիչն, մուf fուչացել փրվուf գանf»:

«Ամելուն» բառը պարսկերեն է, նշանակում է «պաշտպան», «փրկարար» (آمل արմատից՝ նույնն, փափագներ նշանակությամբ): «Մոհա» բառը նույնպես պարսկերեն է՝ կենդանություն տալու իմաստ ունի: Երկու բառերն ի մի բերելով, ստանում ենք «Փրկարար խաչը արհամարհված է»:

«Կցուրդ» բառն այստեղ ունի «օրհնանք» իմաստը՝ խաչը, ուզում է ասել, օրհնություն է, հետո շարունակում է, «յամյ»՝ բայց իմաստով «շողն շատ քիչն և մուք քուչացել փրվուք գանք»: «Շող» բառը մեր ծածկագրողը գործ է ածել «ուժ», «զորություն» իմաստով: «Փրվուք» բառը Սալմաստի բարբառով ունի «փռված», «սփռված» նշանակությունը: Տվյալ նախադասության ընդհանուր իմաստն այն է, թե «Փրկարար խաչն արհամարհված է, խաչը օրհնություն է, բայց նրա զորությունը շատ է քչացել և մենք (այսինքն՝ հայերս—Ա. Ա.) քչացել և ցրված ենք ամենուր»:

Վերջին նախադասությունը վերծանում ենք. «Զամենայն խորհրդոյ նիազորդութեանս Քրիստոս Աստուած, Աստուած յամենայնի, Շահ Ամրանիս նար խիրո fաչfերուց»:

Սակայն վերծանության մեջ երկրորդ «ած»՝ «աստուած» վերծանումը թեական է, քանի որ նրա վրա պահանջվող պատվի նշան չկա:

Այս նախադասության մեջ «Նիազորդություն» բառը պարսկերեն է և ունի խնդրանf, աղաչանf իմաստը: Պարսկերեն է նաև «շահ» բառը՝ «անարգ» նշանակությամբ: Ամիր-ը ծածկագրող հեղինակի անունն է՝ «շահ Ամրանիս», այսինքն՝ անարգ Ամրանիս: «Նար խիրո» բառերն էլ պարսկերեն են. առաջինը ունի «պաշտպան» նշանակությունը, իսկ երկրորդը՝ «խիրո», ունի «վտանգավոր», «չարակամություն» նշանակությունը: Ամբողջ նախադասության իմաստը հետևյալն է. «Քրիստոս աստված, աստված ամենայնի, խնդրանքս, խորհուրդս այն է, որ ինձ պաշտպանես չարքերից»:

Ծածկագրի վերծանությունն ամբողջության մեջ այսպիսին է. «Ամf Եrեfից 33 թուղթն: Աշչի ղաfաֆ, նախեf իմ Մալիշfայից, որդուցն խոյից, հօտից Քրիստոս Աստուած: Ամելուն խաչն մոնայից էն, խաչն կցուրդ ան, յամ[ա]յ շողն այն fիչ [ե]ն, մուf fուչացել փրվուf գանf: Զամենայն խորհրդոյ նիազորդութեանս Քրիստոս Աստուած, Աստուած յամենայնի, շահ Ամրանիս նար խիրո fաչfերուց»:

Ծածկագրի վերջում նշվում է գրչության թվականը արաբական թվանշաններով՝ ١٢٢٣ (1223), բայց հայկական մեծ թվականով, որը մեր ներկա թվահաշվով համասար կլինի 1774-ի (1223+551=1774): Նշվում է նաև հայկական տրի ամսի մեկը, որը մեր ներկա ամսաթվով կհամապատասխանի նոյեմբերի 9-ին:

Մեր կատարած այս վերծանությունը ներկայացվում է միայն սովերագիր: Նրա մեջ կան բառեր, որոնք ստուգման կարիք ունեն:

31. ԱՐԾՎԱՆԻԿԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԾԱԾԿԱԳԻՐԸ[54]

1974 թ. օգոստոսին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի հայկական խաչքարերն ուսումնասիրող հատուկ արշավախումբը, Ա. Ն. Շահինյանի ղեկավարությամբ, հաշվառման ենթարկեց հանրապետության Ղափանի, Գորիսի, Ազիզբեկովի, Սիսիանի, Եղեգնաձորի և Սևանի ավազանի շրջանների կոթողային հուշարձանները և վիմագրական արձանագրությունները։ Դրանցից առանձնահատուկ հիշատակության են արժանի Եղեգնաձորի նորահայտ արձանագիր կոթողը և Արծվանիկի (Ղափանի շրջան) հայերեն ծածկագիր արձանագրությունը, որոնք զգալի արժեք են ներկայացնում հայկական միջնադարյան կոթողաշինության և հայերեն ծածկագիր վիմագրության պատմության ուսումնասիրության համար։

Արշավախմբի համար մեծ նորություն էր Արծվանիկի խաչքարի ծածկագիր արձանագրությունը։ Նախապես պետք է նշենք, որ խաչքարերի վրա նման ծածկագիր հայտնաբերվում էր առաջին անգամ։

Խաչքարն այժմ գտնվում է Արծվանիկ գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի արևմուտք, կոփածո քարերով շինված, X դարի թաղակապ ոչ մեծ մի եկեղեցում։ Այն կերտված է բազալտ քարից, ունի 0,67 մ բարձրություն և 0.46 մ լայնություն։ Հաստությունը 0,26 մ է։ Խաչքարի ներքևում պահպանվել է երկտողանի հետևյալ արձանագրությունը.

ՅԻՇԵԱ Ք[ՐԻՍՏՈ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ
ՋԴԱՒԻԹ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ[55]

Այս արձանագրության հրատարակիչ Ս. Բարխուդարյանի աչքից վրիպել է խաչքարի թիկունքին փորագրված 13 տողանի արժեքավոր արձանագրությունը, որի յոթ տողը գաղտնագիր է։ Դժբախտաբար, արձանագիր այս խաչքարի թիկունքի վերին ձախ անկյունը և միջին մասը ջարդվել են։ Ուշագրավն այն է, որ սույն ծածկագրի մեջ, ինչպես պարզվեց, օգտագործված են հայերեն գաղտնագրության վեց տեսակներ, ընդ որում, նրանց մի մասը հնագույններն են իրենց խմբերում[56]։

Թեև կոթողի ճակատի ու թիկունքի արձանագրությունների որոշակի տարբերությունը խոսում է այն մասին, որ նրանք փորագրված են տարբեր գրիչների կողմից, սակայն անվիճելիորեն նույն դարում, հավանական է, մի քանի տարիների տարբերությամբ։ Այս խաչքարի կերտման ժամանակագրության հարցում կարևոր է դարի յուրահատկությունը՝ խաչաքանդակի եռաճյուղ ծայրերը գնդիկներով դրվագելը և նրանից ներքև պատկերված յուրահատուկ քանդակն ու ծաղկաձև կլոր վարդյակը, որպիսիք հատուկ են X—XI դարերին։



Արծվանիկի ծածկագիր արձանագրությունը

Խաչքարի երկու երեսներին փորագրված եռաստեղ Ա-երը ևս վկայում են նրա՝ X դարի վերջին և XI դարի սկզբին պատկանելու մասին։ Նման տեսքի խաչքարեր՝ վերը նշված քանդակազարդումով, մեզ հայտնի են Արատեսի և Շողուագա վանքերից, Կարճաղբյուրից, Ցախաց քարից և այլ հուշարձաններից։

Արծվանիկի նորահայտ այս կոթողի և նրա արձանագրության ժամանակի բացահայտման հարցում պակաս շահեկան չէ նաև հիշյալ եկեղեցու ներսում պահպանված մյուս խաչքարերի և արձանագրված բեկորների ժամանակագրությունը։ Տաճարում գտնվող 10 արձանագիր բեկորներից ու խաչքարերից վեցը թվագրվել են 960, 991, 1032, 1045, 1050 և 1055 թթ., իսկ մնաց-

---

[54] Արծվանիկի ծածկագիրը հայտնաբերել է պատմական գիտությունների թեկնածու, վիմագրագետ Ա. Ն. Շահինյանը։ Նա մասնակցել է ծածկագրի վերծանությանը և հեղինակակից է «Պատմա-բանասիրական հանդես»-ում հրատարակված հոդվածին։

[55] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 2, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան. 1960, էջ 135։

[56] Ա. Գ. Աբրահամյան, Հայ գիր և գրչություն, Երևան, 1974, էջ 244—279։

յալ չորսը ևս, անկասկած, X—XI դարերին են պատկանում[57]։ Այս բոլորից ելնելով, նորահայտ ծածկագիր արձանագրության՝ X—XI դդ. պատկանելը կասկածից դուրս ենք համարում։ Բացի այդ, Արծվանիկի ծածկագիր արձանագրության մեջ հիշատակված Դավիթը, ամենայն հավանականությամբ, նույն այն վարպետ Դավիթն է, որը 1032 թ. վերանորոգել է վերոհիշյալ եկեղեցին։ Վարպետ Դավթի այս երկրորդ նույնանման հիշատակագրությունը ևս գտնվում է նույն այս եկեղեցու մեջ և դարձյալ մի փոքրիկ որմնախաչի վրա։ Ահա այդ արձանագրությունը Ս. Բարխուդարյանի վերծանությամբ.

ԶԾԱՂԻԿ ՆՈՐՈԳՈՂ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԶԴԱՒԻԹ ՅԻՇԵԱ Ք[ՐԻՍՏՈ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ Թ[ՎԻՆ] ՆՁԱ[58]

Ինչ խոսք, այստեղ մենք գործ ունենք միևնույն անձնավորության և նրա անվան հիշատակագրությամբ երկու խաչքարերի հետ։ Հետևաբար, վարպետ Դավթի անվամբ երկրորդ խաչքարը, որի թիկունքին վերը նշված ծածկագիր արձանագրությունն է, կերտված ու արձանագրված կարող է լինել X դարի վերջերին կամ XI դարի սկզբներին։

Արդ, ե՞րբ է կառուցվել Արծվանիկի (հնում՝ Երեց, Երեցվանիկ) վերոհիշյալ թաղակապ ոչ մեծ եկեղեցին։ Վերևում մենք արդեն նկատեցինք, որ այն, իրոք, վերանորոգվել է 1032 թ.։ Եվ եթե դա այդպես է, ուրեմն հուշարձանը պիտի որ կառուցված լիներ ավելի շուտ, քան XI դարը։ Դրա լավագույն ապացույցը Գորիսի գավառագիտական թանգարանում պահպանված 991 թվակիր արձանագրությունն է, որը բազալտից կերտված մի փոքրիկ խաչքար է։ Թե ե՞րբ և որտեղի՞ց է այստեղ բերվել, հայտնի չէ, բայց որ այդ խաչքարը և նրա արձանագրությունը անմիջականորեն առնչվում են Արծվանիկի Դավիթ վարպետի վերանորոգած հիշյալ տաճարի հետ՝ չպետք է կասկածել։

Ս. Բարխուդարյանը հիշյալ խաչքարը համարել է Տաթևի վանքից բերված և նրա արձանագրությունն էլ հրատարակել է Տաթևի հուշարձանների շարքում[59]։ Այս խաչքարը պատրաստված է եղել հատկապես պատի մեջ ագուցելու նպատակով, քանի որ պոչուկ չունի, իսկ թիկունքն էլ անհարթ է, հետևաբար, այն որմնախաչ է։ Նրա բարձրությունը 0,80 մ է, լայնությունը՝ 0,64 մ, հաստությունը՝ 0,15 մ։

Տաթևի վանքին պատկանող և մեծ ճաշակով արված, խաղողի քանդակներով զարդարված այս որմնախաչի շրջանակներին փորագրված է հետևյալ արձանագրությունը.

57 Ս. Բարխուդարյան, Դիվան, պրակ 2, էջ 133—135։

58 Նույն տեղում, էջ 134։

59 Նույն տեղում, էջ 32։

ԶԵՐԻՑԱԿ ՍԻՒՆԵԱՑ ՎԱՆԱԿԱՆ ՇԻՆՈՂ ՏԱՃԱՐԻՍ ՅԻՇԵԱ Ք[ՐԻՍՏՈ]Ս Թ[ՎԻՆ] Ն Խ[60]։

Արձանագրությունից երևում է, որ Սյունյաց վանական Երիցակը շինել է տվել մի եկեղեցի։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Տաթևի վանքից Երիցակ անունով Սյունյաց վանական հայտնի չէ ո՛չ վիմագրությունից և ոչ էլ մատենագրությունից։ Հետևաբար, հնարավոր ենք համարում, որ այս վանական Երիցակը այժմյան Արծվանիկ գյուղից էր՝ Երեցվանիկից, և այստեղ էլ 991 թ. շինել է տվել այն տաճարը, որը 1032 թ. վերանորոգել է տվել ոմն Ծաղիկ՝ վարպետ Դավթի ձեռքով։ X դարի գործիչ Սյունյաց Երիցակ այս վանականին, որին պայմանականորեն Երիցակ երկրորդ ենք անվանելու, չպետք է շփոթել Սյունիքից և դարձյալ Երեցվանիկ-Արծվանիկից մեզ ծանոթ այն Երիցակի հետ, որը պատմության մեջ հայտնի է VI դարից և Սյունյաց եպիսկոպոսների ցանկում ստացել է «մեծ էգոնոմոս», «խարանազգեստ և խստակրոն ճգնավոր», «եպիսկոպոս Սիւնեաց» և այլ անուններ[61]։ Այդ առթիվ ճիշտ է նկատել վիմագրագետ Ս. Բարխուդարյանը, երբ վերջինիս համարել է Արծվանիկ գյուղից 3 կմ դեպի արևելք, սարի գլխին գտնվող հուշարձանի՝ Երիցու վանքի հիմնադիրը, որտեղ, սակայն, ոչ մի արձանագրություն չի պահպանվել[62]։

Այս բոլորից ելնելով ենթադրում ենք, որ Գորիսի թանգարանում այժմ գտնվող 991 թվակիր հիշյալ խաչքարը այստեղ բերվել է ոչ թե Տաթևի վանքից, այլ՝ Արծվանիկից, գյուղից դեպի արևմուտք գտնվող և Դավիթ վարպետի ձեռքով 1032 թ. վերանորոգված եկեղեցուց։ Հետևաբար, Երիցակ վանականը ոչ այլ ոք է, քան հիշյալ տաճարի կառուցողը, և խաչքարն էլ փաստորեն այդ հուշարձանի շինության միակ հիշատակարանն է։ Վերը նշված հանգամանքներից կարելի է եզրակացնել, որ Արծվանիկի հիշյալ եկեղեցին կառուցվել է 991 թ. Սյունյաց վանական Երիցակ II-ի կողմից։ Եկեղեցին վերանորոգել է տվել ոմն Ծաղիկ՝ վարպետ Դավթի ձեռքով։ Կառուցված այս եկեղեցու և այն 1032 թ. վերանորոգած վարպետ Դավթի անվան հետ է կապվում նորահայտ ծածկագրությամբ խաչքար կոթողը, որի ծածկագիր արձանագրության գրիչը Մովսեսն է։ Խաչքարի և նրա արձանագրության ժամանակը համարում ենք XI դարի սկիզբը։

* * *

Արծվանիկ գյուղի մոտ հայտնաբերված վիմագիր արձանագրությունը հայկական գաղտնագրության հնագույն և ուշագրավ նմուշներից մեկն է։ Այն, փաստորեն, մեզ հասած հնագույն ծածկագրությունն է, որի մեջ միաժամա-

60 Նույն տեղում, էջ 134։

61 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 72, 75—77 և այլն։

62 Տե՛ս «Դիվան», պրակ 2, էջ 133։ Այս հուշարձանախումբը բաղկացած է թաղակապ եկեղեցուց, առանձին կանգնած մատուռից և այլ շենքերից։ Այժմ բոլորն էլ կիսավեր վիճակում են։

նակ գործ են ածված վեց տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրեր՝ սյունակետագիր, փոխարինագիր, գումարգիր, աջից ձախ, երկբանալի և կետագիր։

Ծածկագրերից առաջինը սյունակետագիրն է։ Արձանագրության վերին մասը, դժբախտաբար, ջարդված է, տողում մնացած տառանիշերը և սյունակետագրերն այնքան են խաթարված, որ դժվար է վերականգնել նրանց գծապատկերները։ Վատ են երևում մանավանդ կետերը, իսկ առանց նրանց քանակի ճիշտ որոշման անկարելի է պարզել գաղտնագրված տառանիշերի հնչյունական արժեքը։ Այդ մասին խոսք կլինի քիչ հետո։

Երկրորդ ծածկագիրը փոխարինագիր է։ Այն գտնվում է երկրորդ տողում և ունի զգալի վնասվածք աջևից ու վերևից. պակասում են տառեր։ Մնացել են միայն հետևյալ տառերը (պակասող տառերը այստեղ և հետագայում տրվում են կետանիշերով).



Ծածկագիրը գաղտնագրված է փոխարինագրի հետևյալ բանալիով.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Փոխարինագրի պակասող տառերը՝ ձախից Ն, Շ, Ս, Ծ, Շ, իսկ աջից՝ Վ. Ջ, հնարավոր է լինում վերականգնել և լրացնել մյուս ծածկագրերի հիման վրա, որոնք նույն բովանդակությունն ունեն։ Բերում ենք վերականգնված տառախումբը՝ վերծանության հետ միասին.

[Ն Շ Ս Ծ Շ] Ը Հ Ս Բ Է Յ Լ Ժ [Վ Ջ]
Տ ր մ ե ր ձ է մ ի հ ո գ ա յ ք

Վերծանությունը կարդացվում է. «Տ[է]ր մեծ է, մի՛ հոգայք»։ Ըստ երևույթին սա մեջբերում է Մատթեոսի ավետարանի վեցերորդ գլխից և կամ «Յովհաննու Յայտնութեան» առաջին գլխից։

Ակադ. Հ. Աճառյանը փոխարինագիր ծածկագրության հնագույն նմուշը համարել է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 7 ձեռագրի բնագիրը՝ գրված 1439 թ.[63]։ Նորագույն ուսումնասիրություններից, սակայն, պարզվել է, որ կան դրանից առաջ գրված մի քանի փոխարինագիր ծածկագրեր։ Մենք նկատի ունենք Եզր կաթողիկոսի արձանագրությունը՝ VII դարից[64], Կիլիկիայի կաթողիկոսարանի ձեռագիրը՝ 1250 թ.[65], Նոր Ջուղայի № 34 ձեռագիրը՝ 1284 թ.[66] և այլն։ Արծվանիկի ներկա փոխարինագիրն իր հնությամբ կարելի է համարել այս խմբի երկրորդը։

[63] Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, Վիեննա, 1928, էջ 477։

[64] Կ. Գ. Ղափադարյան, *Ավանի երկլեզվյան արձանագրությունը*, Երևան, 1945։

[65] Գ. Հովսեփյան, *Հիշատակարանք ձեռագրաց*, Անթիլիաս, 1951, էջ 1010։

[66] Ս. Վ. Տեր-Ավետիսյան, *Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի*, հ. I, Վիեննա, 1970, էջ 51։

Արծվանիկի վիմագիր արձանագրության երրորդ ծածկագիրը գումարգրով է արված, սկսվում է երկրորդ տողի վերջից, շարունակվում երրորդ և չորրորդ տողերում։ Առաջին տողի սկզբից ջարդվել են ՌՎ և ՌՏ զուգատառերը, վերջից՝ ԱՆ, իսկ հաջորդ տողի վերջից՝ ՄՌՓ։





Ի տարբերություն գումարգիր ծածկագրերի այն տարբերակի, երբ գաղտնագիր թվանշանները կազմվում են բազմապատկման միջոցով, Արծվանիկի ծածկագրության մեջ գործ է ածված միայն գումարման գործողությունը. միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր տառանիշերի թվական արժեքներն իրար գումարելով, նրանց տակ թաքցվում է գաղտնագրված տառանիշը։ Բացառություն են կազմում Ա, Ժ, Ճ, Ռ տառերը, որոնք թողնվում են իրենց սովորական հնչական արժեքով։

Ծածկագրության բանալին հետևյալն է.

Ա	ԱԱ	ԱԲ	ԱԳ	ԱԴ	ԱԵ	ԱԶ	ԱԷ	ԱԸ
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
Ժ	ԺԺ	ԺԻ	ԺԼ	ԺԽ	ԺԾ	ԺԿ	ԺՀ	ԺՁ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
Ճ	ՃՃ	ՃՄ	ՃՅ	ՃՆ	ՃՇ	ՃՈ	ՃՉ	ՃՊ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
Ռ	ՌՌ	ՌՍ	ՌՎ	ՌՏ	ՌՐ	ՌՑ	ՌՒ	ՌՓ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Ծածկագրի պակասը լրացնելուց հետո կարելի է լինում այն վերծանել.

[ՌՎ	ՌՏ]	ՃՃ	ԱԴ	ՌՏ	ԺՀ	[ԱԵ]	ՃՃ	ԺԺ	ԺԿ	ՃՇ	ԱԲ	Ա	ՃՄ [ՌՓ]
Տ	ր	մ	ե	ր	ձ	է	մ	ի	հ	ո	գ	ա	յ ք

Վերծանությունը կարդացվում է. «Տ[է]ր մեծ է, մի՛ հոգայք»։

Այս խմբի ծածկագրության հնագույն նմուշը Անկյուրիայի № 186 ձեռագրի բնագիրն է՝ X—XII դդ. (Անկ., էջ 904) այնուհետև գալիս են Սեբաստիայի Ս. Նշան վանքի № 2 ձեռագիրը՝ 1313 թ.[67], Մինաս Թոխաթեցու ծածկագիրը՝ 1572 թ.[68] և այլն։

[67] Բ. Գուշակյան, *Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա*, «Հանդես ամսօրյա», 1923, էջ 702։

[68] Ն. Ակինյան, *Մինաս Թոխաթեցի*, «Հանդես ամսօրյա», 1921. էջ 40։

Արձանագրության չորրորդ ծածկագիրը աջից ձախ կոչվող ծածկագրությամբ գաղտնագրվածն է, որի վերծանությունն առանձին դժվարություն չի ներկայացնում. անհրաժեշտ է արաբական գրության սկզբունքով կարդալ այն՝ աջից ձախ։ Ծածկագրի առջևից ջարդվել են Տ և Ր տառերը։

Ծածկագրի տառախումբը հետևյալն է.



Վերծանվում է. «[Տէր] մեծ է, մի՛ հոգայք»:

Աջից ձախ այս ծածկագիրը իր խմբի հնագույնն է։ Նրանից հետո են գրված Հովհաննես Սանդղկավանեցու ծածկագիրը՝ XI դարի վաթսունական թթ[69], Երուսաղեմի մատենադարանի № 283 ձեռագրի ծածկագիրը՝ 1486 թ[70], Մաշտոցի անվան մատենադարանի № 112 ձեռագրի ծածկագիրը՝ 1498 թ.[71] և այլն։

Արծվանիկի վիմագիր արձանագրության հինգերորդը երկբանալի ծածկագիր է՝ գաղտնագրված աջից ձախ և եղբայրագիր բանալիներով։ Վերջից ջարդված է միայն Վ տառը։ Այս ծածկագրի տառախումբը հետևյալն է.



Ծածկագրված է եղբայրագրի հետևյալ բանալիով.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք
ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	ա

Ծածկագիրը վերծանվում է այսպես՝

Փ	Մ	Ա	Բ	Շ	Կ	Ժ	Ճ	Ջ	Հ	Տ	Դ	Ճ	Տ	[Վ]
ք	յ	ա	գ	ո	հ	ի	մ	է	ձ	ր	ե	մ	ր	տ

69 Ա. Մաթևոսյան, Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի, «Բանբեր մատենադարանի», № 10, էջ 383։

70 Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Հակոբյանց, հ. Բ, էջ 105։

71 Այս ծածկագիրը հրատարակել և վերծանել է Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը (տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Գ, էջ 273)։

Ձախից աջ կարդալիս, վերծանությունից ոչինչ չի հասկացվում, իսկ աջից ձախ կարդացվում է. «Տ[է]ր մեծ է, մի՛ հոգայք»:

Երկբանալի ծածկագրության մի քանի բանալիներ են հայտնի։ Դրանցից է, օրինակ, Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցու ծածկագիրը՝ 1284 թ.[72], Հովհաննես գրչի ծածկագիրը՝ 1620 թ. և այլն, սակայն Արծվանիկի երկբանալի ծածկագիրը, ի տարբերություն մյուս ծածկագրերի, գաղտնագրված է այլ սկզբունքով. եթե նրանցում գաղտնագրության համար օգտագործված են գումարգիր բանալիները, ապա Արծվանիկում՝ եղբայրագիր և աջից ձախ բանալիները։ Այս ծածկագիրը հայ մատենագրության մեջ երկբանալի՝ աջից ձախ և եղբայրագիր ծածկագրված առաջինն է, նման այլ բանալի մեզ հայտնի չէ։

Վեցերորդ ծածկագիրը կետագիր է։ Այն աննշան կոտրվածք ունի. տողի վերջում Ռ տառի մոտ գտնվող ութ կետերից հինգը ջարդված են։ Գաղտնագրված է կետագրի առաջին բանալիով. վերցրել են Ա, Ճ, Ժ, Ռ տառերը և նրանց կողքին դրված կետերի քանակով գաղտնագրել տառերը։ Ըստ որում, Ա, Ճ, Ժ, Ռ տառերը պահպանում են իրենց սովորական հնչյունական արժեքը։

Արծվանիկի կետագիր ծածկագրի տառախումբը հետևյալն է.

Տ Ր Ճ. Ա⁝ Ռ⁝ Ժ⁞⁞ Ա⁞ Ճ. Ժ. Ժ:. Ճ:: Ա: Ա Ճ: Ռ:::

Կետագիր ծածկագրի բանալին հետևյալն է.

Ա	Ա.	Ա..	Ա...	Ա:..	Ա::.	Ա:::	Ա:::.	Ա::::
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
Ժ	Ժ.	Ժ..	Ժ...	Ժ:..	Ժ::.	Ժ:::	Ժ:::.	Ժ::::
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
Ճ	Ճ.	Ճ..	Ճ...	Ճ:..	Ճ::.	Ճ:::	Ճ:::.	Ճ::::
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
Ռ	Ռ.	Ռ..	Ռ...	Ռ:..	Ռ::.	Ռ:::	Ռ:::.	Ռ::::
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Ծածկագրի վերծանությունը.

Տ Ր Ճ. Ա.... Ռ.... Ժ....... Ա ..... Ճ. Ժ. Ժ....... Ճ..... Ա.. Ա Ճ.. Ռ:::
Տ Ր մ ե ր ձ է մ ի հ ո գ ա յ ք

Վերծանությունը կարդացվում է. «Տ[է]ր մեծ է, մի՛ հոգայք»:

Կետագիր ծածկագրությամբ մի քանի գաղտնագրեր են մեզ հայտնի. Հովհաննես Սանդղկավանեցունը՝ 1053 թ.[73], Մաշտոցի անվան մատենադա- րանի № 6862 ձեռագրինը՝ 1441 թ.[74], Մուշի Առաքելոց վանքի ձեռագրինը՝

72 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գիր և գրչություն, էջ 264։

73 Ա. Մաթևոսյան, Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի, «Բանբեր մատենադարանի», էջ 379—398։

74 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 6862, թ. 141բ (հրատարակել է Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» Գ հատորում, էջ 77)։

1597 թ.[75] և այլն։ Ներկայացվող ներկա ծածկագիրը նման է Վենետիկի մատենադարանի № 322 ձեռագրի ծածկագրին, որը 1216 թվականի է[76]։

Դժվարանում ենք վերծանել սյունակետագիր ծածկագրությունը, որովհետև տողի աջ կեսում մնացած տառանիշերը և սյունակետ նշանագրերը այնքան են եղծված, որ նրանց մեջ փոքր-ինչ օրինաչափություններ գտնելու մեր ջանքերը ապարդյուն եղան։ Մեզ անհասկանալի է մնում, թե ի՞նչ նպատակով են սյունակետագիր ծածկագրության մեջ խառը օգտագործված հայ ծածկագրության համար անսովոր տառանիշերը՝ կողքերին կետեր դրված։

Վեցերորդ ծածկագրից հետո գրված է հետևյալ երկու տող ասույթը՝ սովորական, չծածկագրված տառանիշերով.



Կարդացվում է. «Այն, որ եկն եւ գալոց է անուամբ տ[եառ]ն: Յ[իսու]ս Ք[րիստո]ս տ[էր]»:

«Տէր» բառի վերջին տառերը (էր) չեն երևում, ենթադրում ենք, որ «Յիսուս Քրիստոս» անուններից հետո Տ տառով սկսվողը կարող է լինել «Տէր» բառը։

Այս ասույթը քրիստոնեական հավատքի հիմնական դրույթներից մեկն է, մտել է հայկական շարականների մեջ և երգվում է ծաղկազարդի կիրակի օրը[77]։ Օգտագործվում է նաև մեսեդու (միջնորդության) մեջ[78]։

Այս ասույթին հետևում է ծածկագիրը փորագրող հեղինակի անվան գաղտնագրությունը՝ փակագրով, որի տառանիշերը քառակի անգամ ավելի խոշոր են, քան ծածկագրերի տառանիշերը։ Փակագրված է երկու բառ, իսկ նրանց աջ կողմում, քառակուսի վանդակի մեջ, կրկնակի գծիկներով՝ չորս նշանագիր։



Առաջին կապգրության մեջ փակագրված է «Մովսէս» անունը. Ո և Մ կցագիր տեղների վրա ագուցված են Է և Վ տառերը։ Երկրորդ կապգրության մեջ փակագրված է «գրեաց» բառը. Ա տառանիշի ստեղների վրա ագուցված են Գ, Ե և Ր տառերը, իսկ Ց տառը գրված է առանձին, հավանաբար,

75 Ս. Ա. Մուրադյան և Ն. Ա. Մուրադյան, Ցուցակ ձեռագրաց Մշո Ս. Առաքելոց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967, էջ 152։

76 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 92։

77 «Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1902, էջ 299։

78 «Կարգաւորութիւն», Վենետիկ, 1898, էջ 331։

հարմար չհամարելով զետեղել Ա-ի ստեղների վրա։ Այսպիսով, երկու բառերն իրար միացնելով, ունենում ենք. «ՄՈՎՍԷՍ ԳՐԵԱՑ»։

Ըստ երևույթին, ծածկագրի հեղինակն ինքը՝ Մովսեսն է (հիմք չունենք կասկածելու նրա գրածի վրա, թե՝ «ՄՈՎՍԷՍ ԳՐԵԱՑ»)։ Հավանաբար, Մովսեսն աշխարհիկ անձնավորություն է, քանի որ եթե հոգևորական անձնավորություն լիներ, չէր զլանա նշելու իր կոչումը։ Մովսեսը փորագրող վարպետ է և շատ վարժ։ Այդ է ապացուցում օգտագործված տառանիշերի գեղեցիկ գծագրությունը։ Եվ, վերջապես, օգտագործված ծածկագրերում կարելի չեղավ գտնել թեկուզ մեկ սխալ, որը սովորական է միջնադարյան հայ ծածկագրության մեջ։

Արծվանիկի վիմագրության առաջինի՝ սյունակետագրի մեջ, ինչպես նշել ենք, օգտագործված են ոչ հայկական նշանագրեր, որոնցից չորսը՝ արձանագրության առաջին տողում, իսկ երեքը՝ քառակուսի վանդակի մեջ։ Ըստ որում, վերջինիս մեջ բերված նշանագրերը նույնն են, ինչ սյունակետագրի մեջ գործածվածները։ Խաթարված այդ տողի գծանկարը հետևյալն է.



Խաչարձանի ներքին մասում, վարպետ Մովսեսի փակագրված անվան տակ, մանր, հազիվ նշմարելի տառերով գրված է մի տող, որը գուցե կարելի է վերծանել.



Առաջին տառը հունարեն է և ըստ իմաստի գործ է ածված «յի»-ի հնչական արժեքով, հետևապես տողը կարելի է վերծանել. «ՅԻՇԱՏԱԿՍՆ Լ»։

Ենթադրում ենք, որ առաջին բառը եղած կլինի Ծ Ա Ռ Ա Յ Ի, իսկ երկրորդ փակագիրը բաց անելով ունենում ենք Ց Ո Ս Ռ Ժ Ռ Ժ, որը համարում ենք եղբայրագիր և վերծանում այսպես՝

Ց Ո Ս Ռ Ժ Ռ Ժ
Մ ո վ ս ե ս ի

Այս երկու տողերի մեր վերծանության ճշտությունը չենք երաշխավորում։

Վեց տարբեր բանալիներով գաղտնագրված Արծվանիկի հուշարձանը հայ մատենագրության եզակի և մեծարժեք հուշարձաններից մեկն է։

32. ՏՈՄԱՐԱԹԻՎ ԾԱԾԿԱԳՐԵՐ

ՀՈԲԵԼՅԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագրության այս խումբը տոմարաթիվ է կոչվում այն պատճառով, որ նախ մեծ մասամբ գործ է ածվում տոմարական բնագրերում, ապա գաղտնագրության համար օգտագործվում են տոմարական գիտության մեջ ընդունված և քաղաքացիություն ստացած պարբերաշրջանների տարեթվեր։ Ներկա դեպքում **հոբելյան** *ասելով նկատի է առնվում հիսուն տարիների պարբերաշրջանը։*

Վիեննայի մատենադարանի № 625 ձեռագրում, որ ընդօրինակված է Ամիդ քաղաքում, Ստեփանոս գրչի կողմից, Մելքիսեդեկ Սեբաստացին գրի է առել հետևյալ չափածո ծածկագիրը.

Վեց հարիւր կրկին վեցի,
Վեցին և վեց տասն աւարտի,
Եւ ոբելեան ի կարգ սորին,
Մի ոբելեան որ յինի գրի... (Ոսկ., էջ 107)։

Այն հրատարակել է Ոսկանյանը, բայց չի վերծանել։

Ծածկագրում որոշ բաներ այնքան էլ հեշտ հասկանալի չեն. օրինակ, «Վեց հարիւր կրկին վեց» ասելով նկատի ունի 600-ի վրա ավելացրած վե՞ց, թե՞ վեց անգամ վեց. կամ՝ «վեցին և վեց» ասելով նկատի ունի երկու վեցերն իրար գումարա՞ծ, թե՞ վեցը վեցով բազմապատկած։ Վերջապես, անորոշ է «որ յինի գրի». նկատի ունի «յի» տառանիշը՝ 300 կամ «ինի» տառանիշը՝ 20, թե՞ աղավաղումն է «լինի» բառի։ Գոյություն ունեցող մի շարք տարբերակներից մենք ընդունում ենք հետևյալը. վերցնում ենք 600, նրան ավելացնում ենք 6, ստացած վեց հարյուր վեցին գումարում ենք 360 (6×6×10), ստանում ենք 966, ապա սրան ավելացնում 50, լինում է 1016, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1617 թվականը։ Եթե ճիշտ համարվի, որ ծածկագիրը գրվել է 1617 թվականին, այն դեպքում պետք է ընդունել, որ այդ տարին էլ վերակառուցվել է Ամիդի եկեղեցին։ Վերծանությունն անվիճելի չի կարող համարվել։

* * *

Գլաձորի հայտնի մանրանկարիչ Մոմիկը Վայոց Ձորի Նորավանքում ընդօրինակել է մի ձեռագիր և գրչության թվականը հայտնել հետևյալ ծածկագրով. «Գրեցաւ... ի նոր շրջագայութեանս ՄԹ(=209), ի չորեքտասան յոբելեանիս՝ ԽԱ (=41) թվոց յաւելմամբ և ի ԽԹ (=49) ընտիկտիոնիս՝ Զ.իւ (=վեցիւ) աճեցեալ, ութնեկ հարիւրիս և ի քառեկ Ժ.եկիս (=տասնեկիս) միակիւ պսակեալ» (ՄԱՄ, ձեռ. № 2848, թ. 317ա)։

Տվյալ ծածկագրում գրչության տարեթիվը հայտնված է երեք տարբերակով։ Առաջինը՝ ՄԹ-ն (209), Հովհաննիսադիր փոքր թվականն է. որին անհրաժեշտ է գումարել 1083. ստանում ենք 1292 թվականը (1083+209=1292)։

Երկրորդը՝ հայկական մեծ թվականն է հոբելյան թվահաշվով. 14 հոբելյանը հավասար է 700-ի (14×50=700), որին անհրաժեշտ է գումարել 41

(«ԽԱ թուոց յաւելմամբ»), ստանում ենք 741, նրան էլ ավելացնելով հայկական մեծ թվականի տարբերությունը, ստանում ենք 1292 թվականը։

Երրորդը՝ դարձյալ հայկական մեծ թվականն է ընդիքտիոնով. ընդիքտիոնը՝ 15 է, 49 ընդիքտիոնը կլինի 735 (49×15)։ Ստացածին պահանջվում է գումարել 6 («Զ.իւ աճեցեալ»), լինում է 741, սրան էլ գումարելով հայկական մեծ թվականի տարբերությունը, ստանում ենք 1292 թվականը (741+551=1292)։

Չորրորդը՝ դարձյալ հայկական մեծ թվականով է, բայց առանց բարդացման. առաջարկվում է վերցնել 700 («ութնեկ հարիւր»), 40 («քառեկ տասնեկ») և մեկ, որոնք գումարելով իրար ստանում ենք 741 (700+40+1=741), սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք դարձյալ 1292 թվականը (741+551=1292)։

Այսպիսով, Մոմիկի կազմած ծածկագիր հիշատակարանի մեջ չորս տարբերակով տրված թվականի վերծանությունից երևում է, որ տվյալ ձեռագիրը, որը ներկայումս գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում, գրված է 1292 թվականին։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 2 ձեռագրում Գրիգոր գրիչը ընդօրինակել է «Մեկնութիւն կաթողիկեայց» աշխատությունը և գրչության թվականի մասին թողել հետևյալ հիշատակարանը.

Յանգելումն աւարտի,
Յաբեթականս տումարի,
Ի հնկետասան ոբելենի,
Ի յերիրս տասնեկի,
Եւ եզակ ութնիկի,
Ի յունիս ամսոյ յունի,
Եւ ի սիւան երրայեցի,
Եւ յարաց իմում սեռի,
Եւ ի յարդեան ժամանակի,
Տեառն Յակովբայ հեղինակի,
Ի թագաւորութեանն Լեւոնի
Տղայ կոչեցեալ բարեպաշտի
Եւ ի մերումս նահանգի,
Տէր Սահակայ առաջնորդի,
Ի բռնակալութեան սուլտանի,
Հողեցելոյ Պայազիտի։ (Եղմ., I, էջ 45)

Տասնհինգ հոբելյանը հավասար է 750-ի։ Նրան գումարած «երիս տասնեակ»՝ 30, և «եզակ ութնիկ»՝ 7, լինում է 787։ Վերջինիս վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1338 թվականը։

Տվյալ թվականը համապատասխանում է հիշատակարանում մատնացույց արված Լևոն Չորրորդի (1320—1342 թթ.), Հակոբ Անավարզեցի կաթողիկոսի

(1327—1341 թթ.) և մոնղոլական Աբու-Սայիդի (1317—1335) գահակալության տարիներին։

Ինչ վերաբերում է հիշատակարանում նշված հայկական, հռոմեական և եբրայական ամսաթվերին, ապա նրանք 1338 թ. գտնվել են հետևյալ զուգորդության մեջ. սիվան ամիսը հռոմեականին համապատասխանել է մայիսի 21-ից հունիսի 19-ը, իսկ հայկական արաց ամիսը հռոմեականին զուգորդվել է հունիսի 7-ից հուլիսի 6-ը, հետևապես, ձեռագիրը գրված պիտի լինի 1338 թ. հունիսի 20-ից մինչև 30-ը։

* * *

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 113 ձեռագիրը ընդօրինակել է Գրիգոր գրիչը 1356 թ. Կիլիկիայի Սիս քաղաքում։ 17-րդ դարում նրա սեփականատերն է եղել Հովհան Այնթափցին, որը վերանորոգել է ձեռագիրը և իր թողած չափածո հիշատակագրության մեջ գաղտնագրով հայտնել նորոգման թվականը.

Ընդ առաջին և ընդ զմիջին,
Ստացողաց այս սուրբ տառի,
Եւ ինձ վերջին ստացօղի
Եւ նորոգողի յայս սուրբ կտակի,
Ինձ Յովհաննու բանասիրի
Եւ սուտ անուամբ վարդապետի,
Որ ըստ ծննդեանս իմ Անթպցի
Սնըամբ վարժմամբ Կիլիկեցի
Արքայանիստ մեծ աթոռի,
Աստուածապահ Սիս քաղաքի,
Քան և մին յոբէլինին,
Հազար Ծ թուականին։ (թ. 103ա)։

Հրատարակել և վերծանել է Հ. Տաշյանը Վիեննայի Մխիթարյանների «Ձեռագրաց ցուցակում» և վերծանել՝ 21×50+551=1601։ (Տաշ., էջ 394)։ (Վերահրատարակությունը տես նաև ՀՁՀ ԺԷ դ., I, էջ 40)։

* * *

Վիեննայի մատենադարանի № 11 ձեռագրի կազմարար Հակոբ երեցը թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Արդ՝ ես անարժան և մեղաւք զառածեալ Հակոբ էրէցս ստացա զսա ի թուաբերութեան աբեթական տումարիս քան և մի յոբելինի և է թիւ յաւելորդի, յամսեանն հոկտեմբերի, ի ժամանակս թագաւորութեան Իլախաց Զիկմունդի երրորդի...»։

Հրատարակված է Ալիշանի «Կամենից»-ում և վերծանված («Կամենից», էջ 169—170). (21×50)+7+551=1608)։ (Վերահրատարակությունը տե՛ս ՀՁՀ, ԺԷ դ., I, էջ 325)։

* * *

Ղալաթիայի մատենադարանի № 157 ձեռագրում տիրացու Գրիգորն իր որդի Հակոբի ծննդյան թվականը գաղտնագրել է հետևյալ չափածո հիշատակարանում.

Զորս յոբելեան երիցս կրկնեալ
Եւ մի շրջան նորուն կցեալ,
Զայ ընդ զայիւ նոցին յօդեալ,
Թուին Հայոց կերպաւորեալ,
Յամսո[ւ]ն յունվար յորչորջեցեալ,
Քան յերկուսն եղեւ ծընեալ։
Յակոբ որդիս աշխարհ եկեալ... (սյուն. 996—997)

Հիշատակարանը հրատարակել է Կյուլեսերյանը և վերծանել։ Զորս հոբելյանը հավասար է 200-ի, որը երեք անգամ կրկնելով, ստանում ենք 600։ Նրան գումարում ենք մի «շրջան», այսինքն՝ 532, լինում է 1132։ Ստացած թվին գումարում ենք 80 («ձայ») և 6 («զայ»), դառնում է 1218 (1132+80+6=1218)։ Սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1769 թվականը։

* * *

Ղալաթիայի № 161 ձեռագրում Ստեփանոս վարդապետի թողած հիշատակագրությունից երևում է, որ տվյալ ձեռագիրը իրեն է նվիրել Դավիթ Սեբաստացին։ Ստեփանոսը ձեռագիրն ստանալու տարեթիվը հայտնում է տոմարաթիվ ծածկագրով. «...ի հաշվականութեան արմէնազեայ տոհմիս տումարի բերմանն, հազարեքեան, հարիւրեքեան եւ համոբելեան, եւ վեցերորդ վեցերորդեան, եւ քառորդենոյ թւի հանդիսաւորութեան, եւ միոյ ընդիքտիոնի ի բաց առեցմանն»։

Հիշատակարանը հրատարակել է Կյուլեսերյանը «Ղալաթիայի ձեռագրաց ցուցակում» և տարեթիվը հարցականով վերծանել 1711 (Ղալ., սյուն. 1018), որ սխալ է։

Հիշատակարանում առաջարկվում է վերցնել մեկ հազար, մեկ հարյուր, մեկ հոբելյան (50), «վեցերորդ վեցերորդեան», այսինքն՝ 36 և մի քառորդ, որոնք գումարելով ստանում ենք 1190 (1000+100+50+36+4=1190)։ Այս թվից պահանջվում է հանել մի «ընդիքտիոն», այսինքն՝ 15, մնում է 1175, որին գումարելով 551, ստանում ենք 1726 թվականը։

Այսպիսով, պարզվում է, որ Ղալաթիայի № 161 ձեռագիրը գրված է ոչ թե 1711 թվականին, այլ՝ 1726-ին։

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 97 գրչագրի Ամիր Սարգիս գրիչը ձեռագրի ընդօրինակման տարեթվի մասին թողել է ներքև բերված չափածո հիշատակարանը, որը հրատարակել է Բ. վ. Կյուլեսերյանը և վերծանել։

Ի Թուականիս Հայկազեան սեռի,
Ջոր առ սոքօք յայտնի լիցի.
Հնգիւկ քառեակ յոբելինի,
Քառորդ տասնեակ յարաբարդի,
Երկեակ քառիւք երկք աւելի,
Ի յամսեանն մայիսի՝
Եռեակ երկիւք երկք աւելի։ (Անկ., սյուն. 496)

Հիշատակարանից երևում է, որ Ամիր Սարգիսը ձեռագրի գրչությունն ավարտել է հայկական թվականի «հնգիւկ քառեակ յոբելինի» ($5 \times 4 \times 50 = 1000$), «քառորդ տասնեակ յարաբարդի» ($4 \times 10 = 40$), «երկեակ քառիւք երկք աւելի» ($2 \times 4 + 2 = 10$)։ Իրար գումարելով առաջարկվող այս թվականները, ստանում ենք 1601 թ. ($1000 + 40 + 10 + 551 = 1601$)։ Ամսաթիվը՝ «եռեակ երկիւք, մակ աւելի», հավասար է 7-ի ($3 \times 2 + 1 = 7$)։

Անկյուրիայի մատենադարանի № 97 ձեռագիրը, ուրեմն, գրված է 1601 թ. մայիսի 7-ին։ (Հրատ. ՀԶՀ, 17-րդ դ., I, էջ 38։ ՀԳԳ, էջ 168)։

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 38 ձեռագրի, որը գրված է Կամենից քաղաքում Սահակ սարկավագի կողմից Եագուպի պատվերով, հիշատակարանում գրչության ավարտման տարեթվի մասին ասված է. «Արդ՝ եղև զրաւ սուրբ գանձարանիս յամի շրջագայութեան արամազեանս տոհմի, Հայկազան սեռի, աբեթական տումարի և ի ԻԱ յոբելենի, և վեցերորդ յաւելորդի, փետրվարի ԺԹ (19)»։

Հրատարակված է Անկյուրիայի ցուցակում և վերծանված։ Ձեռագիրը գրված է 1607 թվականին. $21 \times 50 + 6 + 551 = 1607$ (Անկ., սյուն. 208. վերահրատարակված՝ ՀԶՀ, ԺԷ դ., I, էջ 273)։

* * *

Նոր Ջուղայի մատենադարանի № 246 ձեռագրում, որը «Յայսմաւուրք» է՝ գրված 1641 թ. Սպահանում, հետագայի հիշատակագիրներից մեկը գրի է առել հետևյալ չափածո գաղտնագիրը.

Վերջ եւ արդար եղեւ տառիս,
Որ նկարեալ է ի քարդիզիս,
Թէ գիտուն ես միտ դիր բանիս,
Ջի՞նչ է նկարեալ ի յայս տառիս,
Քառից, հնգից ճոբելենից,
Երրորդ ճոբելեան ի սուն հարից,
Ութն և տասն ամից,
Թիւ է ազանց Հայկայզունից։ (ՆՋ, I, էջ 385)

Ծածկագիրը հրատարակված և վերծանված է Տեր-Ավետիսյանի «Ձեռագրաց ցուցակում»։

Առաջարկվում է վերցնել «քառից հնգից» հոբելյան, այսինքն՝ 20 հոբելյան, որը հավասար է 1000-ի ($4 \times 5 \times 50 = 1000$)։ Ստացածին պահանջվում է ավելացնել ևս երեք հոբելյան («Երրորդ յոբելեան ի սուն հարից»)՝ 150 ($3 \times 50 = 150$) և 18 տարի, լինում է 1168, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք հիշատակագրի գրության 1719 թվականը ($1168 + 551 = 1719$)։

* * *

Ավետիք գրիչը Նոր Ջուղայում ընդօրինակել է «Ժամագիրք ատենի» և գրչության թվականը ծածկագրել չափածո հիշատակարանում։ Այդ ձեռագիրն այժմ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի սեփականությունն է և գրանցված է 269 թվահամարի տակ.

Իսկ ըստ Թուոյ Հայկականի՝
Երկ մետասամբք յոբելինի,
Եւ ինդոս Թիւ մու հինգ բարդի,
Հինգ կուսաթիւ եռ եւս հաշւի,
Եօթամբք քառիւք հոգտեմբերի,
Տեառն օգնութեամբ սա կատարի,
Պատկեր աւուր ի խաչ գիւտի։ (ՆՋ, I, էջ 477)

Ծածկագիրը հրատարակված է Նոր Ջուղայի «Ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում և չի վերծանված, ամենայն հավանականությամբ, «ինդոս» և «կուսաթիւ» բառերի թվական արժեքը չիմանալու պատճառով։

Երկու մետասան հոբելյանը հավասար է 1100-ի ($2 \times 11 \times 50 = 1100$)։
Նրան գումարում ենք երեք «ինդոս». «ինդոս»-ը 8 է, երեք «ինդոսը»՝ 24,
դրան գումարած 5 կլինի 29, որն ավելացնելով 1100-ին, կունենանք 1129։
Ծածկագրի չորրորդ տողում անորոշություն է նկատվում. կամ «հինգ կուսա-
թոփ» մեջ գրչական սխալ է տեղի ունեցել, պետք է լինի «ութ կուսաթիւ»,
և կամ հաջորդ «եռ եւս» հաշվումը վերաբերում է նաև «կուսաթվին»՝ լրացու-
ցիչ հինգին երեք գումարվող միավորով։ Բոլոր դեպքերում, ծածկագրողը,
ինչպես կտեսնենք հետո, նկատի է ունեցել ութ կուսաթիվ. կուսաթիվը 7 է,
ութ կուսաթիվը՝ 56, նրան գումարելով 3, ստանում ենք 59, այն էլ ավելացնելով նախորդ գումարին, ունենում ենք 1188 ($1129 + 59 = 1188$), իսկ սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1739 ($1188 + 551 = 1739$)։

Մեր այս վերծանության ճշտությունը ստուգվում է երկու փաստով. առաջինը՝ այդ ձեռագրում կա մի այլ հիշատակություն, ուր ասվում է, որ ձեռագիրը գրվել է «Յամի կենարարին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՉԼԹ» (1739)։ Իսկ երկրորդը՝ ծածկագրում հիշատակված «Սուրբ խաչ»-ի տոնի ամսաթիվն է. «Պատկեր աւուր ի խաչ գիւտ»-ի՝ հիշված է «Եօթամբք քառիւք հոգտեմբերի», այսինքն՝ հոկտեմբերի 28-ին ($7 \times 4 = 28$)։ 1739 թվականին Սուրբ խաչի տոնը, իրոք, եղել է հոկտեմբերի 28-ին։

* * *

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 593 ձեռագիրը պարունակում է «Գանձ վկայութեանց վարդապետաց» աշխատությունը՝ գրված 1699 թ. Նոր Ջուղայում, Աստվածատուր գրչի կողմից։ Ձեռագիրը պարունակում է մի բանաստեղծության ընդօրինակություն, որի առաջին քառատողի մեջ գաղտնագրված է նրա գրության թվականը.

Շրջապատումն Կոռնոսի,
Վեցիցս վեցեակ եւ մակ նոյնի,
Յորմէ ի բաց առեալ հնգի,
Թիւ Արամեան բովանդակի... (ՆՋ, II, էջ 74)

Քառատողը հրատարակված է բանասեր Լ. Գ. Մինասյանի կազմած «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում, բայց ծածկագիր թվականը չի վերծանված։ Դժվարություն հարուցողը, անշուշտ, «կոռնոս» բառն է եղել, որի թվական արժեքը հայտնի չի եղել հրատարակչին։

«Կոռնոսը»՝ մեկ հազար է, որին անհրաժեշտ է գումարել 36 («վեցիցս վեցեակ») և 36-ի կրկնակը՝ 72 («մակ նոյնի»)։ Ստանում ենք 1108 (1000+ +36+72=1108)։ Պահանջվում է նրանից հանել 5 («յորմէ ի բաց առեալ հնգի»), ունենում ենք 1103, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1654 թվականը (1103+551=1654)։

Քառատողի պարունակած թվականից երևում է, որ տվյալ բանաստեղծությունը գրված է 1654 թվականին, իսկ ընդօրինակությունը՝ 1699-ին։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 109—110)։

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 627 ձեռագիրը բովանդակությամբ «Տոմարատետր» է, գրված է Նոր Ջուղայում, Աստվածատուր գրչի կողմից։ Չափածո հիշատակարանում գաղտնագրված է գրչության տարեթիվը։ Բերում ենք հիշատակարանի այդ մասը.

Էր թիւ Հայկայ մեծի տոհմեալ,
Կրկին շրջան համար բերեալ,
Մու յոբելեան ընդ Խ-էի հաշուեալ,
Եռեակ թուով միմեանց բարդեալ։
Որով յետնեալս ամէն բարեաց,
Աստուածատուր գործօղ չարեաց,
Ջի եւ ինձ լիցի մասնիկ բարեաց,
Հայցմամբ ձերոց ընթերցողաց։ (ՆՋ, II, էջ 100)

Չափածո այս ծածկագրված թվականը հրատարակել է Լ. Գ. Մինասյանը «Նոր Ջուղայի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում, բայց չի վերծանել, հավանական է, «կրկին շրջանի» թվական արժեքին ծանոթ չլինելու պատճառով։

«Շրջան» ասելով գրիչը նկատի է ունեցել ՇԼԲ պարբերաշրջանը,

որը հավասար է 532-ի։ «Կրկին շրջանը» հավասար կլինի 1064-ի։ Պահանջվում է ստացած թվին գումարել մեկ հոբելյան՝ 50 և 40 («ընդ Խ. էի հաշուեալ»). ստանում ենք 1154 (1064+50+40=1154)։ Նրան պետք է գումարել երեք («եռեակ թուով միմեանց բարդեալ»), ստանում ենք 1157, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1708 (1157+551=1708)։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 109—110)։

* * *

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 188 ձեռագրի գրչության տարեթվի մասին հիշատակարանում ասվում է. «Եւ սոյն այս տառս գրեալ ծաղկեցաւ և աւարտեցաւ ի քաղաքս յՕւդոկիայ, որ և ասի Թօխաթ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային՝ ի թուին Հայոց երկշրջանի, երբ յոբելենի և միտասան յարաբարդի ի յունիս ամսոյ, ձեռամբ յոգնամեղ և բազմասխալ Պօղոս անարհեստ գրչի ի խնդրոյ վերոյ գրեալ... մահտեսի Եաղլուին և մահտեսի Արութինին, որ և ստացաւ զսա ի հալալ ընչից և արդեանցն իւրոց...» (Սարգ., I, սյուն. 786)։

Հիշատակարանը հրատարակել է Բ. Սարգիսյանը և դժվարացել վերծանել ծածկագիրը։ Նա միայն ենթադրություն է արել, որ «ժամանակը բացորոշ թվերով նշանակված չէ, հավանորեն ՌՄԿԳ=1814»։

«Երկշրջանակ» ասելով, ծածկագրողը նկատի ունի տոմարական մեծ պարբերաշրջանը, որը հավասար է 532-ի, իսկ երկու պարբերաշրջանը՝ «երկշրջանը», կլինի 1064։ Այդ թվին պետք է գումարել երեք հոբելյան («երր յոբելենի»), այսինքն՝ 150՝ (3×50), նրան ավելացնելով 1064, կունենանք 1214 (1064+150=1214)։ Ստացված գումարին անհրաժեշտ է ավելացնել նաև 11 («միտասան յարաբարդի»), կլինի 1225, սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, կունենանք 1776 թվականը՝ 1225+ +551=1776։

Վենետիկի № 188 ձեռագիրը, ուրեմն, գրված է ոչ թե 1814 թվականին ինչպես կարծել է Սարգիսյանը, այլ՝ 1776-ին։

(Հրատ. ԲԵՀ, 1967, I, էջ 211։ ՀԳՊ, 237, ՀԳԳ, 168)։

* * *

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 263 ձեռագրում, որը «Ոսկեփորիկ» է՝ ընդօրինակված 1628 թ. Մկրտիչ գրչի կողմից, գրի է առնված չափածո մի հիշատակարան Ջարխափան Աստվածածնի վանքի վերակառուցման մասին, որի թվականը տրվում է ծածկագրով։ Այն հրատարակված է Սարգիսյանի «Ձեռագրաց ցուցակում», բայց չի վերծանված։

Ջարխափան վանքս Աստուածածնի
Նախահիմնեալն Անդրէի,
Յաւազակաց այրեալ քակի...
Ի տեսչութեան արհւոյ դիտի,

Տեառն Յոհաննու վարդապետի,
Երբեմն Պօլսոյ պատրիարգի,
Եւ Պաղտացի անուանողի...
Յոլով ջանիւք հայկասեռի։
Ի մեր Հայոց թվականի,
Քսանեչորս յոբելենի,
Քառասո[ւ]ն երիսն հիմն արկանի
Եւ ի չորրորդն աւարտի։ (Սարգ., II, սյուն. 837)

Ծածկագրում հիշված 24 հոբելյանը հավասար կլինի 1200-ի (24×50=1200), նրան գումարելով 43 և հայկական թվականի տարբերությունը. ըստանում ենք 1794 (1200+43+551=1794)։ Այդ թվականին է, ինչպես երևում է, կառուցվել հուշարձանը, իսկ հաջորդ տարին՝ գրվել ձեռագիրը։
(Հրատ. ՀԳՊ, 211)։

* * *

Կյուլեսերյանը «Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Հակոբ գրչի հիշատակարանը, ուր բերվում են քրիստոնեական և հայկական զուգահեռ թվականները տոմարաթիվ հետևյալ ծածկագրով. «Յամի երեսներորդի և երկրորդի յոբելեանի, երկու նոնոսի և միոյ ղիմպիաթի, թուաբերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի, նայև ըստ համարո[յ] Յաբեթազին տոմարի, հարիւր քսան և հինգ ինդոսի, երէք ընդիքտիոնի և չորս նահանջի, եղև սկիզբն և յաւարտումն գրի։ Յանդ եւլ Հայոց ամսոյն արաց մէկ ինդոսի (հրատարակված բնագրում «արացի»—Ա. Ա.), Հռոմայեցոց ամսոյն մարտի հինգ նոնոսի, եբրայեցոց ամսոյն նիսանի միոյ ղիմպիաթի... Այդ գրեցաւ սայ ձեռամբ յոգնամեղ Յակոբ սգաւորէն... յերկիրն Գաղատացւոց, որ կոչի յԱնկիւրեայ» (Անկ., սյուն. 608—609)։

Կյուլեսերյանը չի վերծանել։ Ըստ որում, գրչության թվականը ձեռագրի նկարագրության հարակարգում բաց է թողնված։

Հիշատակարանում բերված առաջին թվականը՝ քրիստոնեականն է։ Այն վերծանվում է. 32 հոբելյանը հավասար է 1600-ի (32×50=1600), նրան գումարած երկու «նոնոս՝ 10 (5+5=10) և մեկ ոլիմպիադ՝ 4, լինում է 1614 թվականը։

«Յաբեթազէն տոմար»-ը հայկական մեծ թվականն է, մեկ «ինդոսը»-ը՝ 8 է, 125 «ինդոսը»՝ մեկ հազար (125×8=1000), նրան գումարած երեք ընդիքտիոն՝ 45, և չորս նահանջ՝ 16։ Ի մի բերելով նշված թվականները, կըստանանք 1061 (1000+45+16=1061)։ Նրան էլ գումարենք 551, կստանանք 1612 թվականը։ Քրիստոնեական թվականը հայկական հաշվով է, ուստի երկու տարին ավելի է ցույց տրված։
(Հրատ. ՀՁՀ, 17-րդ դ., I, էջ 473)։

* * *

Անթիլիասի կաթողիկոսարանի մատենադարանի համար չոմեցող մի ձեռագրում ընդօրինակված է չափածո ծածկագիր-հիշատակարան՝ ձեռագրի գրչության թվականի մասին.

Թըւին ընդ կէս չորից յօդի,
Սակայն քըսանն նախորդ հաշւի,
Իսկ յոբելեանն քառակուսի,
Արեն հազար իրենից ծագի։ (թ. 1ա)

Ծածկագիր այս քառյակը, որքան մեզ հայտնի է, չի վերծանված և չի հրատարակված։

Ծածկագիրը վերծանվում է հետևյալ կերպ. վերցնում ենք չորսի կեսը՝ 2-ը, («կէս չորից յօդի»), նրան գումարում ենք 20 («քսանն նախորդ հաշւի»), լինում է 22, սրան գումարում ենք չորս հոբելյան՝ 200 (50×4=200) («յոբելեան քառակուսի») և մեկ հազար («Արեն հազար իրենից ծագի») և ստանում 1222 (22+200+1000=1222)։ Ստացված գումարին ավելացնում ենք հայկական թվականի տարբերությունը և գտնում ձեռագրի գրչության ծածկագրված թվականը, որը ըստ կատարած հաշվումների եղել է 1773-ը (1222+551=1773)։

* * *

Անթիլիասի կաթողիկոսարանի № 10 ձեռագրի գրչության թվականը հիշատակարանում հայտնվում է գաղտնագիր.

Ի թուականի հայոց քսան յոբելեանի,
Եւ հարիւրերորդի, հնգեակ հնգի,
Թիւ Արամեան բովանդակի։

Քսան հոբելյանը հավասար է հազարի (20×50=1000), նրան ավելացրած 100 («հարիւրերորդի») և 25 («հնգեակ հնգի») ու հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1676 թվականը։

Ծածկագրի վերծանությունից երևում է, որ Անթիլիասի կաթողիկոսարանի մատենադարանի № 10 ձեռագիրը գրված է 1676 թ.։ (Անթ., № 10, թ. 172ա)։

* * *

Ա. արքեպ. Սյուրմեյանը Հալեպի և Անթիլիասի մատենադարանների ձեռագրերի ցուցակում հրատարակել է Ղազար գրչի չափածո հիշատակարանը, ուր նա գաղտնագրել է գրչության թվականը.

...Պայծառամիտք և հրաշալի,
Որք ընթեռնույք բան կտակի,
Ջղամբարեալս յայս մատենի,
Ինձ ողորմել անարժանի,
Ղազար յանուն տխմար գրչի,

Որ ամենևին չի արժանի,
Գրոց հարցմանցս հնոյն և նորի։
Ներելով Ա[ստուծո]յ ատարտեցի,
Տխեղծ մատամբ շարադրեցի,
Ի թվակ[ա]նի Հայոց քանակի,
Քառից կրկին հարիւր չափի,
Քառւ մի պարզ երկ ւ՛ եսնիկի,
Եւ ընդ նմին երկ հարիւրի (Սյուրմ., Եվր. մասն., հ. Բ, էջ 57)։

Սյուրմեյանը վերծանել է. $(4\times2\times100)+4+2+50+200+551=1607$։ Նույն հաշվումը ընդունել է նաև Վ. Հակոբյանը։ (Վերահրատարակությունը տե՛ս «Հիշ. ԺԷ դ., I, էջ 279—280)։

Մեզ թվում է սխալ է վերծանված. ճիշտ չէ նախավերջին տողի «երկ ւ՛ եսնիկի» բառերը համարել 2+50։ Այստեղ «ւ՛ եսնիկի» բառն ունի «յիսնեակի» իմաստ, այսինքն՝ «երկու յիսնեակ», ուստի երկուսը ոչ թե պետք է գումարել, այլ՝ բազմապատկել. այդ հաշվով երկու հիմնյակը կլինի 100, և ձեռագիրը գրված կլինի ոչ թե 1607 թ., այլ՝ 1655-ին. $(4\times2\times100)+4+(2\times50)+200+551=1655$։

Եվ այսպես, Ղազար գրչի ձեռագիրը գրված կլինի ոչ թե 1607 թ., ինչպես կարծել են Սյուրմեյանը և Հակոբյանը, այլ՝ 1655 թ.։

* * *

Հ. Թոփչյանը «Արմաշի ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Մայնց քաղաքի բնակիչ Մինաս Դերջանցու չափածո հիշատակարանը, ուր ձեռագրի գրչության թվականը տրված է չորս զուգահեռ դարագլուխներով՝ արարչության, քրիստոնեական, հայկական մեծ և սարկավագդիր.

Բայց ատարտումն եղև սմին,
Ըստ Եւսեբեայ քրոնիկոնին,
Որ վեց հազար ամք գումարին,
Առ ի յելից նախնւոյ հաւին։
Իսկ հինգ հարիւր և չորս պաղին,
Որք ամ յամէ աճմամբ սերին։
Եւ ի դարձ ի նոյն նախածնին,
Դրախտաժառանգ լինել կրկին,
Երեքտասան հարեւր լինին,
Յիսուն և վեց և այլն աճին։
Իսկ ի թուական մեծաց Հային,
Ի յութ հարիւր և երեքին[1]։
Եւ ի փոքրիկ մեր շրջանին,
Յերկու հարիւր ւ յիւթանասնին,

[1] Բնագրում սխալմամբ «երեսնին», փոխանակ «երեքին»։ Այդ երևում է մյուս թվականների զուգադրությունից։

Վճար ւ ատարտ եղև սըմին,
Առ ի կողմանս հիւսւսային,
Յաշխարհն Հոնաց և դաշտային
Եւ ի Սուլխաթ քաղաք սորին։
Յիշխանութեան Ճանիպեկին,
Որդւոյ մեծի Օզպէկ խանին։
Իսկ ի մերոյ մեծ արքային,
Որ Կոստանդին անուն ասին։
Եւ ի հանուրց Հայաստանին,
Տէր Մխիթար հայրապետին։
Իսկ ի կողմանս հիւսւսային
Տէր Ստեփանոս վարդապետին[2]։

Արարչության թվականը հաշված է վեց հազար, հինգ հարյուր և չորս («պաղ» բառն այստեղ գործ է ածված բաղադրել, կցել իմաստով), որոնց գումարը կլինի 6504։ Հետագա տողերում պահանջվում է տվյալ թվականին ավելացնել 113 և 65, որով ունենում ենք 6673 $(6504+113+58=6673)$։ Թեև հիշատակարանում արարչության թվականը Եվսեբիոսի է անվանված, իրականում հրեականն է, որը հաշվում է 5320—5319 մեր թվականությունից առաջ. 6673-ից հանելով 5319-ը, ունենում ենք 1354 թվականը։

Հայկական թվական է ցույց տված 803-ը, որին գումարելով 551, ունենում ենք 1354 թվականը։

Քրիստոնեական թվականը՝ 1356, հայկական թվահաշվով է, ուստի նրանից հանելով երկու ավելի տարիները, ունենում ենք 1354 թվականը։

Հայկական փոքր թվականը 270 է, որին գումարելով 1084, ստանում ենք 1354 $(270+1084=1354)$։ Հայտնի է, որ օգոստոսի 11-ից առաջ տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ գումարում ենք 1084, իսկ հետո՝ 1083։ Քանի որ զուգահեռ թվականների համադրությունից երևում է, որ պետք է գումարել 1084, ուրեմն պետք է ասել, որ ձեռագիրը գրված է 1354 թվականի օգոստոսից առաջ։

Որ մեր կատարած վերծանությունը ճիշտ է, այդ երևում է նույն ձեռագրում եղած մի այլ հիշատակարանից, ուր գրչության թվականը տրված է չծածկագրված. «Գրեցաւ գիրքս այս,—կարդում ենք այնտեղ,—ի թուականութեան Հայոց, յաշխարհիս Հոնաց և ի յերկիրն Քրիմի ի հոյակապ և հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Սուրխաթ ի ՊԳ թվականին»։ Հայկական ՊԳ (803) թվականը ներկա թվահաշվով հավասար է 1354-ի $(803+551=1354)$։

* * *

Խաչքո Տոմաժիրսկին Լվով քաղաքում ընդօրինակել է Գրիգոր Նյուսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությունը և գրչության թվականը հայտնել հետևյալ ծածկագրությամբ. «Արդ՝ եղև գրաւ գրչութեան սորա ի թվին Հայկազան տոմարի ԻԱ ոբէլանի և ԺԸ թիւ աւելի, յամսեանն մարտի ժէ.երորդի, օրն չորեքշաբթի»։

[2] Հ. Թոփչյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 424։

Հրատարակել է Վ. Թորգոմյանը «Բազմավէպ» ամսագրում (1923 թ., էջ 139) և վերծանել. $(21\times50)+18+551=1619$։ (Հրատ. ՀՁՀ, ժէ դ., I, էջ 712)։ 1699 թ. մարտի 17-ը, իրոք, եղել է չորեքշաբթի։

* * *

Անթիլիասի կաթողիկոսարանի մատենադարանի №7 ձեռագրում ընդօրինակված է էջմիածնին նվիրված մի տաղ, որի գրչության տարեթվի մասին հետևյալն է ասված.

Տարոյս թուին ընդ եռն կարգի,
Զորք յոբելեան ընդ քսանի,
Արևն յերկնից ստորև ծագի,
Հազարն յատուկ պարզ ճաճանչի։ (Անթ., № 7, թ. 10բ)

Այս ձեռագրի նկարագրությունը, ինչպես և վերոհիշյալ ծածկագիրը, որքան մեզ հայտնի է, դեռ չեն հրատարակված։ Այն վերծանում ենք հետևյալ ձևով. վերցնում ենք չորս հոբելյան, որը հավասար է 200-ի $(4\times50=200)$, նրան գումարում քսան («Զորք յոբելեան ընդ քսանի»), լինում է 220, սրան գումարում ենք արեգակի պարբերաշրջանի 1000 տարիները («Արևն յերկնից ստորև ծագի») և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք էջմիածնին նվիրված տաղի տարեթիվը 1771 $(1220+551=1771)$։

* * *

«Կոյս» թիվը յոթի նշանակությամբ գործ է ածված Մանչեստրի մատենադարանի հայկական մի ձեռագրի չափածո հիշատակարանում։ Տիրայր եպիսկոպոսը իր «Ձեռագրաց ցուցակում» բերել է այն, բայց դժվարացել է վերծանել, հավանական է, տեղեկություն չունենալով «կոյսի» թվական արժեքի մասին։ Ծածկագրված թվականը պարունակող հիշատակարանի այդ մասը հետևյալն է.

Ի թուին Հայոց մեծ տոմարի։
Ներ այսմ ամի ծրեալ լինի,
Երկ երկոտասան յոբելենի,
Յորմէ կոյս թիւ ի բաց թողցի,
Կուսաթուով ապրիելի։ (Տիր., Մանչ. թղ. I բ, էջ 144—145)

Այս ձեռագրի ծածկագրված թվականը վերծանում ենք հետևյալ կերպ. «երկ երկոտասանը» հավասար է 24-ի, քսանչորս հոբելյանը կլինի 1200 $(24\times50=1200)$։ Նրանից հանելով «կոյս» թիվը՝ 7-ը, մնում է 1193, գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1744 $(1193+551=1744)$։

* * *

Ք. Պատկանյանի «Նշխարք մատենագրութեան հայոց» աշխատության մեջ հրատարակված է Գրիգոր Կամախեցու կողմից Կիրակոս Գանձակեցու Պատմության Բաբերդում ընդօրինակած ձեռագիրը, որի հիշատակարանում գրչության տարեթվի մասին հետևյալն է ասված. «Արդ՝ շնորհիւ տեառն սկ[ս]այք և ողորմութեամբ նորին աւարտեցաք զվիպասանագիր պատմագրութիւնս անցից ժամանակաց Կիրակոս վարդապետին, աշակերտին Եռամեծի Վանականայ, ի թուաբերութեանս Հայկազնս տուր կրկին հնգից հարիւրից յոբելեան երկթվոց ի մայիսի աւարտին և մուտն յունիսին, ի գաւառին Խախտեաց, ի քաղաքին, զոր այժմ Բաբերդ ասի»։

Վերծանվում է. $(2\times5\times100)+50+2+551=1608$)։ (Հրատ. ՀՁՀ, ժէ դ., I, էջ 329)։

* * *

«Մշո Առաքելոց վանքի և շրջակայից ձեռագրաց ցուցակում» նկարագրված է № 24 ձեռագիրը, ուր չափածո հիշատակարան է գրի առնված Հալեպում տեղի ունեցող մահտարաժամի մասին, ծածկագրված թվականով.

Յամի Հայոց մեծ թվականի,
Քառից հնգից յոբելինի,
Վաթսուն և ինն աւելորդի,
Որ է նահանջ ի յայս տարի։
Յուլիս Հռովմայ ամսոյ միջի,
Ամառնային եղանակի,
Որ էր խիստ մահ այս քաղաքի,
Հալապ կոչեալն Իբերյի։ (էջ 116)

Վերծանված է «Մշո Առաքելոց վանքի և շրջակայից» ձեռագրաց ցուցակում. $(5\times4\times50)+69+551=1620$։ (Հրատ. ՀՁՀ, ժէ դ., I, էջ 743)։

* * *

Հ. Աճառյանը Նոր Բայազետի ձեռագրաց ցուցակում հրատարակել է Սևանի նախկին մատենադարանի № 31 ձեռագրի չափածո ծածկագիր թվականը։ (Այդ ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում և գրանցված է № 7758-ի տակ)։

Ծածկագիրը հետևյալն է.

Որ ենթ տասնին՝ կոյսըն թվիկ ասացեալ.
Եռ յիմնաբար վերայ երկերիւրից շարադրեալ.
Բայն իւր պարագայիւք ափիով աստ մտեալ.
Արիստոտէլն ընդ Պորփիւրին հաշվեցեալ.
Երկեակ թվովք գիրս Մինասայ յանկ ելեալ։

Զնայած ծածկագրի բնագրի աջ կողմում տրված են գաղտնագրված բառերի թվական արժեքները, սակայն Աճառյանը, ամենայն հավանակա-

նությամբ, ծանոթ չլինելով որոշ բառերի ծածկագիր իմաստներին, դժվարացել է վերծանել ծածկագիրը[3]։

Առաջին տողը՝ «Որ ենթ տասնին՝ կոյսրն թվիկ ասացեալ», պետք է հասկանալ այնպես, որ տասը թվանշանից պետք է վերցնել միայն յոթը։ Այս թվանշանը բազմապատկելով երեք հիսունով («եռ յիսնաբար»), ստանում ենք 1050 (7×3×50=1050), սրան գումարում ենք երկու հարյուր («երկերիից շարադրեալ»), լինում է 1250։ Ստացածի վրա ավելացնում ենք 9 («պարագան» 9 է հաշվվում), 10 («Արիստոտէլ»), 5 («Պորփիւր») և 2 («երկեակ թիւ») և ստանում 1276, որին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1827 (1250+9+10+5+2+551=1827)։

Ծածկագիրը կազմող հեղինակը Մաշտոցի անվան մատենադարանի մի քանի ձեռագրերից հայտնի Մինաս քահանան է։ Այս ծածկագիրը կազմելու շարժառիթը, ինչպես երևում է, հանդիսացել է 1827 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու իրողությունը։ Ծածկագրի ներքևում նա թողել է հետևյալ գրառումը. «ՌՄՀՁ (1827) ուռուս գալն»։

* * *

Ղալաթիայի № 78 ձեռագիրը Հովհաննես Դամասկացու «Համառոտութիւն ստորոգութեանց հռետորից և աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» աշխատության ընդօրինակությունն է, որի գրիչը թողել է չափածո մի հիշատակարան՝ ծածկագիր թվականով։ Այն հրատարակված է Կյուլեսերյանի «Ձեռագրաց ցուցակում» և վերծանված.

Յորժամ հասի սորա վերջին,
Թիւն Հայոց էր սուրբ խաչին։
Գիրքս այս ասի Դամասկացւոյն,
Սու[ր]բ Յոհաննու ընտրեալ դասուն։
Օգոստոսի օրն առաջին
Ի յուրբաթու ինեակ ժամուն... (Ղալ., սյուն. 524—525)

Տարեթիվը ծածկագրված է «խաչին» բառի մեջ, որի թվագումարը հավասար է 1161-ի. Խ (40)+Ա(1)+Չ (700)+Ի (20)+Ն (400)=1161։ Հայկական մեծ թվականը ներկա թվականին վերածելու համար 1161-ին գումարում ենք 551 և ստանում 1712 թ.։ 1712 թ. օգոստոսի մեկը, իրոք, եղել է ուրբաթ։

(Հրատ. ՀԳԳ, էջ 170)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1864 ձեռագրի հիշատակագիրն իր ընդօրինակած ձեռագրի թվականն է համարում «Նայէ զի եկայ» (թ. 425ա), որը վերծանվում է. Ն (400)+Ա (1)+Յ (300)+Է (7)+Զ (6)+Ի (20)+Ե (5)+Կ (60)+Ա (1)+Յ (300)+551=1651։ Ձեռագրի գրչության ժամանակն է, ուրեմն, 1651 թվականը։

[3] Հ. Ոսկյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազետի, Վիեննա, 1924, էջ 30։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1971 ձեռագիրը տոմարական նյութերի ժողովածու է՝ ընդօրինակված Ավետիս (=Ավիկ) գրչի կողմից։ Ձեռագիրը գրվել է Լիմ անապատում, Ստեփանոս վարդապետի վանահայրության տարիներին։ 123ա թերթում գրիչը թողել է վեց տողից բաղկացած չափածո մի հիշատակարան, որի տողերի առաջին տառերից հոդվում է գրչի անունը՝ Ավետիս։ Այդ նույն էջում գրիչը թողել է գումարգիր ծածկագրությամբ գաղտնագրված հայկական և հռոմեական զուգահեռ թվականներից կազմված հետևյալ ծածկագիրը.

Թվական Հայոց զի ոչ է ստտ,
Ռահագա ադա ոնի լալա։
Բայց հռոմայեցոց մեծն ծառ մեծ խլաթ.
Եւ փոքրն՝ մաճաթաժ։

Երկրորդ տողի առաջին երկու բառերի («Ռահագա ադա») մեջ գաղտնագրված է հայկական մեծ թվականը։ Այն վերծանվում է. Ռ (1000)+Ա(1)+Հ(70)+Ա(1)+Գ(3)+Ա(1)+Ա(1)+Դ(4)+Ա(1)=1082։ Ներկա թվականով այն հավասար կլինի 1633-ի (1082+551=1633)։

Նույն տողի հաջորդ երկու՝ «Ոնի լալա» բառերի մեջ նույնպես գաղտնագրված է հայկական մեծ թվականը։ Այն վերծանվում է. Ո (600)+Ն (400)+Ի (20)+Լ (30)+Ա (1)+Լ (30)+Ա (1)=1082, գումարած 551, կլինի 1633։

Երրորդ տողում բերված են «Ծառ մեծ խլաթ» բառերը և նշված, որ գաղտնագրված է հռոմեական մեծ թվականով։ Այն վերծանվում է Ծ (50)+Ա (1)+Ռ (1000)+Մ (200)+Ե (5)+Ծ (50)+Խ (40)+Լ (30)+Ա (1)+Թ (9)=1386։ Հռոմեական մեծ թվականը ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է գումարել 247, որով կստանանք 1633։

Չորրորդ տողում «մաճաթաժ» բառի մեջ գաղտնագրված է հռոմեական փոքր թվականը։ Այն վերծանվում է. Մ(200)+Ա (1)+Ճ (100)+Ա (1)+Թ (9)+Ա (1)+Ժ (10)=322։ Հռոմեական փոքր թվականը ներկա թվականի վերածելու համար անհրաժեշտ է գումարել 1311, որով ստանում ենք դարձյալ 1633 թվականը։ Բերված հայկական երկու մեծ և հռոմեական մեծ ու փոքր թվականներով անսխալ գաղտնագրված է 1633 թվականը։

Կարելի է ենթադրել, որ առաջին «զի ոչ է ստտ» բառերի տակ գաղտնագրված լինի արարչության թվականը, մի պայմանով, եթե ընդունենք, որ ծածկագրողը հիմք է վերցրել արարչության Եվսեբիոսի թվահաշիվը և նրա մեջ թույլ է տվել հարյուր տարվա սխալ։ Այդ դեպքում նա կվերծանվի. Զ(6)+ Ի(20)+ Ո(600)+ Չ(700)+ Է(7)+ Ա(1)+ Ս(2000) + Տ(400)= =7333։ Արարչության Եվսեբիոսի թվականը ներկա թվականի վերածելու համար անհրաժեշտ է նրանից հանել 5600. 7333-ից հանելով 5600, ստանում ենք 1733՝ սպասածից հարյուր տարով ավելի։

«Ցուցակ ձեռագրացի» հեղինակները տվյալ ձեռագրի գրչությունը համարել են 1632 թվականից, հավանական է նկատի ունենալով ձեռագիրը գրել

սկսելու թվականը, իսկ ավարտման թվականը, ինչպես տեսնում ենք, եղել է 1633-ը։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2107 ձեռագրում Բասիլիոս Աղբակեցու մահվան թվականը հիշված է հետևյալ չափածո հիշատակարանում.

Երկեակ քառեակ թիւ հարիւրի,
Հնգից յիսնից, տասն ըզկնի,
Այդ Դ ամ յարաբարդի
Դժնեա և դառն յեղանակի։
Ի պարփակեալ ժամանակի,
Եւ ի լրման սոյն աւրի,
Ի մուտ տրէի Հայոց ամսի,
Յէ և ի Ժ (17) յունվարի,
Մեծ վարդապետն Հայկազնի,
Բասիլիոսն Աղբակեցի[4]
Հանգեաւ մարմնով ի տապանի,
Ի դուռն սուրբ Յովանիսի... (թ. 2բ)։

Վերծանվել է այսպես. (2×4×100) +(5×50)+10+4+551=1615։ (Հրատ. ՀՁՀ, ԺԷ դ., I, էջ 447)։

* * *

Վենետիկի Ա[ստուա]ծաշնչի ընդօրինակություններից մեկում ձեռագրի գրչության ժամանակը ծածկագրով է հայտնված, որը մեջ է բերել Գ. Զարբհանալյանը, բայց չի վերծանել։

Զրոյց Թուոցըս մատենի,
Լրումն խոստմանն, որ է յայտնի...
Մոյծ ընդ Թուով գաւազանի
Զյոռիս ընդ լաւնն ի քում հաշուի.
Որ զՌահաբեան Թուես ի գրի
Քեզ ամենայն ծոնր կրկնի[5]։

Այստեղ թվականը ծածկագրված է ՌԱՀԱԲԵԱ բառի մեջ, որը հավասար է 1631-ի (Ռ (1000)+Ա (1)+Հ (70)+Ա (1)+Բ (2)+Ե (5)+Ա (1)+551= 1631)։

* * *

Հակոբ Քռնեցին լատիներենից հայերեն է թարգմանել դոմինիկյան «Ժամագիրքը» և գրել չափածո հիշատակարան, որի տողերի սկզբնատառերով երկու անգամ հոդվում է. «Յովհաննէս վարդապետ, որ կոչեցեալ Քռնեցի», իսկ վերջնատառերով երկու անգամ՝ «Յակոբ թարՐման ի կարգէ քարոզողաց»։ «Ժամագրքի» ձեռագիրը գտնվում է Բրիտանական թանգարանում, իսկ հիշատակարանը հրատարակված է Ֆ. Կոնիբերի կազմած «Բրիտանական Թանգարանի հայկական ձեռագրերի ցուցակում», սխալներով։ Ձեռագրի գրչության տարեթիվը տրված է ինչպես հայերեն, այնպես էլ քրիստոնեական թվականներով։ Բերում ենք Քռնեցու հիշատակարանի այն հատվածը, ուր հիշվում են թվականները.

Յամի ծննդեանն փրկչին մերոյ
Որ և հազարն, ընդ նմին Թ վեր[ա]յ,
Հայկազեան պշրջանակ,
Այլ և ընդ նոյն միացոյ...
Յամաք զՈհան ուղ[ղ]իչ հոգոյ
Իսկ Յակօփոս թարքման սորին։
Յեր հարիւրից և երեսնոյ
Որ և զութնեակն[6] ընդ նմին յետ[ո]յ
Համ երեսուն[7] էր և ութ[ն]եակ
Առ զվեցհարիւրն և դաս[ց]ո... (Conyb., էջ 158)

Ղ. Ալիշանը իր «Սիսական» խորագրով աշխատության մեջ «Ժամագրքի» թարգմանության տարեթիվը համարել է 1338-ը (էջ 375), իսկ մի այլ անգամ թարգմանության թվականն է համարել 1333-ը (էջ 385)։ Մակլերը նույն հիշատակարանի Փարիզի ազգային գրադարանում եղած ընդօրինակության հիման վրա «Ժամագրքի» թարգմանության թվականն է համարել 1330[8]-ը։ Խաչիկյանը Քռնեցու չափածո այս հիշատակարանը զետեղել է «Հիշատակարանների» ժողովածուի մեջ և կասկածելով Ալիշանի ու մյուսների բերած թվականների վրա, անհրաժեշտ է համարել տողատակի ծանոթագրության մեջ նշել. «Մեծ կասկածանքով հիշատակարանը տեղադրում ենք 1338-ի թվաշարքում»[9]։

Հիշատակարանում բերված առաջին թվականը քրիստոնեական թվականն է հայկական հաշվով, այսինքն՝ երկու տարի ավելի, քան ներկայումս գործածվող թվականն է։ Առաջարկվում է վերցնել մեկ հազար ու նրան գումարել իննը և «հայկական շրջանակ»-ը։ Քննարկելի է այստեղ «հայկական շրջանակ» արտահայտությունը. ի՞նչ է հասկացել հեղինակը։ Մեր կարծիքով, նա նկատի է ունեցել 1320 թվականը, երբ հայկական թվականը զուգադրվեց հռոմեականի հետ և անհրաժեշտ եղավ հայկական տոմարի նոր շրջանին անցնել։ Բայց քանի որ սովորություն է եղել այդպիսի դեպքում դեն նետել հազարավոր թվականը, ինչպես վարվել են հռոմեական տոմարի հետ 247 թվականին, նույն սկզբունքով է առաջնորդվել նաև Քռնեցին. վերցրել է 1009

[4] Բասիլիոսը կամ Բարսեղ Աղբակեցին XVII դ. սկզբներում հանդես եկող աչքի ընկնող մանկավարժ գիտնական հեղինակներից մեկն է։ Նրա անձնավորության մասին տե՛ս Առաքել Դավրիժեցու Պատմության 29-րդ գլխում։

[5] Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 132։

[6] Բնագրում «զօթնեակ», կարծում ենք, որ սկզբնական ձևում եղել է «զութնեակ», աղավաղվել է «զաւթնեակ», ուշ շրջանում տառադարձվել է «զօթնեակ»։

[7] Տոմարական հաշվումը բերում է մեզ այն համոզման, որ «ութսուն» լինել չի կարող, ուստի մենք արարչության թվականի հետ համադրելու համար ուղղել ենք «երեսուն»։

[8] Bibl. Nationale № 105.

[9] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 317։

թվականը, գումարել հայկական շրջանը։ Այդ հաշվով թարգմանությունը կատարված է 1329 թվականին (1009+320=1329)։

Երկրորդ թվականը հայկական մեծ թվականն է։ Առաջարկում է վերցնել 130, նրան գումարել ութեակ, երեսունութ և վեց հարյուր։ Տրված թվականները գումարելով իրար և ավելացնելով հայկական մեծ թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1327 թվականը (130+8+38+600+551=1327)։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № I, էջ 102—103)։

Զարմանալի է միայն, թե ինչպե՞ս է, որ Քոնեցին առաջնորդվել է ոչ թե քրիստոնեական հռոմեական հաշվով, այլ հիմք է վերցրել քրիստոնեական հայկականը։

* * *

Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը իր «Նկարագիր ս. Կարապետի վանից» աշխատության մեջ[10] հրատարակել է Ղազար կաթողիկոս Ջահկեցու երգարանի ընդօրինակության չափածո հիշատակարանը, գրված Մարկոս քահանայի կողմից, Երնջակի գավառի Մազրա գյուղում։ Հիշատակարանում գրչության ժամանակը գաղտնագրված է ծածկագիր հոբելյանով։ Սմբատյանցը, ինչպես երևում է, ծանոթ չլինելով հոբելյան կոչվող թվահաշվին, ձեռագրի գրչության տարեթիվը սխալ է հաշվել։

Հիշատակարանում գրչության ժամանակին վերաբերող քառյակներում ասված է.

Ես անպիտան Մարկոս գոլով,
Զցայգ և զցերեկ աշխատելով,
Լոկ անուամբս քահանայ գոլով,
Զայս տառս գրեցի համեղ գոլով։
Ես Ոմանի որդի գոլով,
Ազգաւ Տէրունեանքն անուանելով,
Ի գիւղս անուն Մազրայ գոլով,
Ի Արընճակայ գետ անուանելով։
Ի թւին Հայկազունեան,
Ռի և Դ ոբելեան,
Ի տասներորդի ամսեան,
Որ անուն մայիս կոչեցեալ,
Ի Ժ և Դ աւուրն աւարտեալ։

Սմբատյանցը հիշատակարանի ծածկագիր թվականը վերծանել է հետևյալ կերպ. վերցրել է երրորդ քառյակի «Ռի և Դ»-ն, հաշվել է 1024, նրանից դուրս թողնելով հոբելյանի թվահաշիվը, 1024-ին գումարել է հայկական թվականի տարբերությունը՝ 551, և ստացել 1575 թվականը։

Ամփոփելով իր կատարած վերծանությունը, նա գրել է. «Երգարան Ղազարու Հայրապետի Ջահկեցւոյ՝ գրեալ ի թ. ՌԻԴ (1575) ի Մարկոս քահանայէ ի գիւղն Մազրայ Երնջակայ գաւառի, մերձ ի Շահկերտ, որոյ յիշատակարանն՝ գրեալ համառակ մանր գրչութեամբ, իբր թէ ոտանաւոր չափով»։

Սմբատյանցը տվյալ վերծանության մեջ թույլ է տվել ոչ միայն սխալ, այլև որոշ անփութություն, հաշվի չի առել, որ Ղազար Ջահկեցին, որի երգարանն ընդօրինակել է Մարկոս քահանան, 16-րդ դարի անձնավորություն չէ. 1575 թ. Ջահկեցին դեռ ծնված չէր, հետևապես երգարան գրել չէր կարող։ Ըստ Մ. Օրմանյանի հաշվումների, Ղազար Ջահկեցին Էջմիածնում կաթողիկոսական գահի վրա է գտնվել 1737—1751 թթ.։

Տվյալ ծածկագիր թվականը կարելի է վերծանել հետևյալ ձևով. «Ռի»-ն հավասար է 1020-ի, նրան անհրաժեշտ է գումարել չորս հոբելյան, այսինքն՝ 200 (4×50=200), կստանանք 1220, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, կունենանք 1771 (1220+551=1771)։

Ծածկագրի վերծանությունից երևում է, որ Ջահկեցու երգարանի ձեռագիրը ընդօրինակվել է ոչ թե նրա կենդանության ժամանակ, այլ նրա մահվանից շուրջ քսան տարի հետո։

* * *

Մ. Սմբատյանցը իր նույն գրքի մեջ հրատարակել է Երնջակի գավառի Շոռոթ գյուղում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարան, ուր գրչության թվականի մեջ օգտագործված է հոբելյան։ Այստեղ ևս երևում է, որ հրատարակիչը ծանոթ չէ հոբելյանի թվական արժեքին, ուստի, սխալանքի մեջ չընկնելու համար նպատակահարմար է համարել թվականի վերծանությունը բաց թողնել։

Հիշատակարանը հետևյալն է.

Աւարտ եղև յայսմ տարի,
Ի թուականիս Հայկայ սեռի,
Երկ քառեակ երկ հարիւրի,
Երկ յոբելեան և երկ հնգեակ ի նոյն յարի,
Եւ երրեակ թիւ այլ յարաբարդի,
Ամսեանն յունաց ապրիէլի,
Եռեակ հնգեակ և քառակի,
Եւ թիւ մի այլ աւելի՝
Երկիրս Երնջակ ասի,
Ի վիճակն ս[ուր]բ Կարապետի,
Առաջնորդութեան տեառն յՆասյի,
Հեզահոգի վարդապետի,
Եւ կաթողիկոսութեան Հայոց Ս. Էջմիածնի,
Յակոբայ րաբունապետի,
Գծագրեցաւ տառս ցանկալի,
Ասացեալ Եղիշէի թարգմանողի,
Ի գեօղն Շօռօթ վերակոչի,
Ի դուռն Ս[ուր]բ Ա[ստուածածն]ի,
Ընդ հովանեաւ Ս[ուր]բ Լուսաւորչի։ (Նույն գրքում, էջ 154)

[10] Մ. Սմբատեանց, *Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 142—143։*

Հիշատակարանում առաջարկվում է վերցնել երկու քառյակ երկու հարյուր, այսինքն՝ երկու անգամ չորս, գումարած երկու, անգամ հարյուր, կլինի հազար։ Հաջորդ տողում առաջարկվում է տացված թվանշանին գումարել երկու հոբելյան, այսինքն՝ հարյուր (2×50=100) և մեկ հնգյակ, որով կլինի հազար հարյուր հինգ։ Իսկ սրա վրա էլ պահանջվում է ավելացնել երեք։ Տրված թվանշանները գումարելով իրար և ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1659 (1105+3+551=1659)։ Ըստ Մ. Օրմանյանի հաշվումների, Հակոբ Ջուղայեցին էջմիածնում գահակալել է 1655—1680 թթ.։ Հիշատակարանում 1659 թ. կաթողիկոս է հիշվում, իրոք, Հակոբ Ջուղայեցին։ Ինչ վերաբերում է ամսաթվին, «եռեակ, հնգեակ և քառակի և թիւ մի աւելի», այն կլինի. 3×5=15, որին գումարելով մի քառյակ և մեկ, ունենում ենք 19 (15+4+1=19)։ Այսպիսով, պարզվում է, որ Շառոթի նշված ձեռագիրը գրվել է 1659 թվականի ապրիլ ամսվա 19-ին։

* * *

Ստեփանոս գրիչը Տիգրանակերտում իր ընդօրինակած ձեռագրի տարեթիվը հայտնում է հետևյալ չափածո հիշատակարանում.

Գծագրեցաւ գիրս սորա,
Ի թվակա[նի]ս մեր Հայ[կա]զնեայ,
Ք[սա]ն և մէկ յոբելինեայ,
Եւ ութնաթիւ յաւել վերայ,
Մայիս ամիսն Հռոմայ
Եւ մեհեկի Հայոց էր սա,
Աւարտեցաւ բանն սորա,
Մայրաքաղաքն Տիգրանայ։ (ՄԱՄ, ձեռ. № 9041, թ. 122բ)

Հոբելյանն ընդունելով հիսուն տարի, ձեռագիրը գրված կլինի 1609 թվականին (21×50+8+551=1609 թ.)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրում Մինաս երեցի թողած գաղտնագրերում որոշակի նշվում է, որ «թրիթակ» բառն ունի մեկ հազարի թվական արժեք։ Դժվարանում ենք տալ բառի ստուգաբանությունը. հայերենում նման բառ գոյություն չունի, հավանական է, վերցվել է այլ լեզվից։

Այդ բառը, մեկ հազարի թվական արժեքով, գործ է ածված Մինաս քահանայի կազմած մի բարդ ծածկագիր բնագրում, ուր «թրթակից» բացի հանդիպում են «Արիստոտէլ» (=10), «Պորփիւր» (=5), «նոնոս» (=5), «ադոն» (=10), «կուսաթիւ» (=7) և «ինդոս» (=8) ծանոթ թվարժեք բառեր։

Տրամադրեմ զԱրիստոտէլն և զՊորփիւր
Էրամախուսն քառեակ նէնոս զէտ աղբիւր,
Բամեալ եզակ թրիթակնիւ զուսպանթիւր.

Մուծեալ ադոնք երկ արիստ[ոտէ]լիւ հաշվիւր.
Ինդոսաշար լիցի կուսին համարիւր.
Նայսըմ թվոյս ինդոս մ՝ ւ անդոն մ՝ բաց ձգիւր.
Արամեանս թիւ Կիլօս առ խս յուղարկիւր,
Ստրուկ էրէցս աթրագռեհ Մինասիւր,
Իսկ մոռացիր զայն որ երկ յօնսայ ասիւր։ (թ. 364ա)

Վերծանվում է. «Արիստոտէլ»-ը 10 է, «Պորփիւր»-ը՝ 5. 10+5=15։ Նոնոսը՝ 5 է, 4 նոնոսը՝ 20 (4×5=20)։ Թրիթակը 1000 է։ Ադոնը 10 է, երկու ադոնը՝ 20, որը բազմապատկած արիստոտելով, կլինի 200 (10×20=200)։ Ինդոսը 8 է, կույս թիվը՝ 7, բազմապատկելով ստանում ենք 56 (8×7=56)։ Բոլոր թվերը գումարելով, ստանում ենք 1291 (15+20+1000+200+56=1291)։ 1291-ից հանում ենք մեկ ինդոս (8), մեկ ադոն (10) և երկու հոնսա (6), այսինքն՝ 24, ստանում ենք 1267 (1291—24=1267), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1818 թ. (1267+551=1818)։

Եվ այսպես, պարզվում է, որ Մինաս երեցը ծածկագիրը կազմել է 1818 թվականին։

* * *

Տառաթիվ ծածկագրության մի օրինակ գրի է առնված Մաշտոցի անվան մատենադարանի № 6576 ձեռագրում, որը պարունակում է Պետրոս Բերթումյանի «Աղբիւր բացեալ» աշխատությունը՝ գրված Կոուց անապատում, Հովհաննես Պոլսեցու կողմից։ Ծածկագրում ասված է.

Ի թվականիս Հայոց ազգիս,
Զորեակ յիւնից և յինկ թվից,
Եօթեակ հնգիւ[11] ի նմայ զուգիս,
Միով տասիւ ի վեր հայիս։
Եթէ կամիս և վերծանիս,
Այսպէս գտանիս թիվ մատենիս…
Ի քսան և յինկ յօբելենիս,
Կատարեցաւ մինչև այս բանս։ (թ. 1ա)

Այս ծածկագրի հիմքում ընկած է «յ» տառը («յիւնը»), որի թվարժեքն է
300։ Առաջարկվում է չորսը բազմապատկել «յ»-ով, ստանում ենք 1200
(300×4=1200)։ Պահանջվում է նրան գումարել 5, դառնում է 1205։ Երրորդ
տողում նկատվում է գրչական սխալ. դրանում դժվար չէ համոզվել. երկրորդ
քառյակի «հնգիւ» բառը աղավաղվել է անիմաստ՝ «տասիւ»-ի։ Յոթը բազ-
մապատկելով հինգով, ստանում ենք 35, որը գումարելով 1205-ին, դառնում է
1240 (1205+35=1240)։ Սրան էլ գումարելով պահանջվող տասը և հայկական
թվականի տարբերությունը, ստանում ենք 1801 թվականը (1240+10+551=
1801)։

11 Բնագրում՝ տասիւ, որ սխալ է։

Վերևում մեր առաջարկած ուղղումը ստուգվում է երկրորդ քառյակում հայտնված թվականով, որն ավելացրել է ծածկագրողը, հավանական է, վերծանության գործը դյուրացնելու նպատակով։ Նա թվականը հայտնում է հոբելյան թվահաշվով՝ 25 հոբելյան։ Հոբելյանը 50 տարի է, 25 հոբելյանը կլինի 1250 (25×50=1250), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1801 թվականը (1250+551=1801)։

* * *

«Թրթակ» բառը «թրիթաթ» ձևով՝ հազարի նշանակությամբ և «յոնսան»՝ երեքի, գաղտնագրված ենք հանդիպում Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրի հետևյալ ծածկագրում.

Ոլիմպիաթ թվոյն կալեալ,
Իւրով ինքեամբ լիցի կրկնեալ,
Եւ յօնսայի թիւըն զուգեալ,
Կրկին զնոսայ յոգնապ[ա]տկեալ,
Թրիթաթնով նայ միացեալ,
Քառ յոբելեան վերաբերեալ,
Կույս թուովք զպորփիւրին աստէն կալ,
Մու ընդ սոսա յոյժ յարմարեալ[12]։ (թ. 363բ)

«Ոլիմպիադը» 4 է, կրկնելով այն («ինքեամբ լիցի կրկնեալ»), ստանում ենք 8։ «Յօնսան» երեք է, որը զուգադրելով («թիւն զուգեալ»), ունենում ենք վեց։ Ստացած երկու թվերը գումարում ենք իրար և կրկնապատկելով (կրկին զնոսայ յոգնապատկեալ») ստանում 28 (8+6×2=28)։ Նրան գումարում ենք մեկ հազար («մեկ թրթակ») և 35 («կույս» թիվը բազմապատկած «Պորփիւր»-ով. 7×5)։ Վերջում գումարում ենք մեկ («Մու ընդ սոսա յոյժ յարմարեալ»)։ Տրված թվերը գումարելով ստանում ենք 1264 (28+1000+200+35+1=1264)։ Սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1815 տարեթիվը (1264+551=1815)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 819 ձեռագրում Հակոբ գրիչը իր թողած հիշատակարանում գրչության ավարտման թվականը գաղտնագրել է «ինդոս» բառով. «Արդ՝ գրեցաւ սայ Հարցմանց կիսատն... ձեռամբ յոգնայմեղ և անպիտան սոսկանուն Յակոբ Սգաւորի, Արթուն անուամբ կոչեցեալ և գործովք ի քուն մահու ընկլուզեալ, ըստ համարոյ յաբեթացին տոմարի հարիւր և երեսուն ու երկու ինդոսի եղև յաւարտումն գրի, յամսեանն

[12] Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրի տոմարաթիվ ծածկագրերը իրենց բնույթով առանձին խումբ են կազմում։ Թվական նշանակությամբ գործածված անուններ՝ «Արիստոտէլ», «Պորփիւր» և այլն, ամենից շատ այնտեղ են հանդիպում։ Ծածկագրերի զգալի մասի վերծանությունը տրված է էջերի լուսանցքներում։ Ձեռագրում կան մի քանի ծածկագրեր, որոնք, չկարողանալով վերծանել, բաց ենք թողել։

Հայոց աՀեկի քսան և երրորդի, աւրն կաղմութեան, որ թարգմանեալ ուրբաթ, յեբրայեցոց ամսին Թամուզի ԻԱ (21), Հռոմեացոց յուլիսի Ժ (10)...» (թ. 550ա)։

Հրատարակված և վերծանված է 17-րդ դարի հիշատակարանների առաջին հատորում (Հիշ. ԺԷ դ., I, էջ 240)։ Ինդոսը 8 տարվա պարբերաշրջան է, 132 ինդոսը հավասար կլինի 1056-ի, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1607 թվականը։

(Հրատ. ՀԶՀ, էջ 240)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1719 ձեռագրում Նիկոլ Տոմաժիրսկին թողել է տոմարաթիվ ծածկագրով հետևյալ գաղտնագրությունը. «Բայց աւարտեցաւ սա ի թվին Ի (20) ոբելեանի, և Ա (1) ոբելալնի, և տասն չորսին և մարտի ամսոյ Ի (20), օրն չորեքշաբթի ծաղկազարդի» (թ. 32բ)։

Հրատարակված է 17-րդ դարի հիշատակարանների առաջին հատորում և վերծանված հետևյալ ձևով. 20+1×50+14+551=1615։ (ՀԶՀ, 17-րդ դ., I, էջ 546)։

Մեր կարծիքով, անհրաժեշտ է թվականը ճշտել։ Այդ ասելու հիմք է տալիս «ծաղկազարդի չորեքշաբթի» հիշատակությունը։ 1615 թ. ծաղկազարդի չորեքշաբթին եղել է ոչ թե մարտի 20-ին, այլ՝ ապրիլի 5-ին (զատիկը եղել է ապրիլի 9-ին)։ Եթե ընդունելու լինենք անգամ, որ զատիկը հիշված է Գրիգորյան տոմարով, ապա 1615-ին ծաղկազարդը եղել է մարտի 30-ին (զատիկն՝ ապրիլի 3-ին)։ Այլ է, եթե ընդունելու լինենք 1614 թվականը. այդ տարում ծաղկազարդը, իրոք, եղել է մարտի 20-ին, զատիկը՝ 24-ին։ Հետևապես անտեղի է Հակոբյանի վերծանությունը 1615-ով և նրա դիտողությունը, թե՝ «Չորեքշաբթի ճիշտ չէ, պետք է լինի երկուշաբթի»։ Պետք է նկատի ունենալ, որ ծաղկազարդը միշտ լինում է կիրակի օրը, և գրիչը չէր կարող չորեքշաբթին շփոթել երկուշաբթիի հետ։ Ամենայն հավանականությամբ հիշատակարանում տեղի է ունեցել գրչական սխալ. ԺԴ-ն սխալ ընթերցանությամբ դարձել է ԺԳ։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 1803 ձեռագրի գրչության տարեթիվը նշված է հետևյալ ծածկագիր հիշատակարանում. «Էր թվականս Հայկական Շօշ, բառս քեզ համարողական. 0-ն ոչ հաշիւ թիւ դասական, և ոբելեան, ընտիրքտիոն Զ (6) ընդ նա խառնեսցես և երրորդ ոլոմպիաթ ի բաց մերժեսցես, ապա զթվականն ուղիղ գտանիցես» (թ. 57բ)։

Հրատարակել է Վ. Հակոբյանը և վերծանել հետևյալ կերպ. Ծածկագիրը հազարը (500+500), նրան գումարել է մեկ հոբելյան վերցրել է երկու Շ-ն՝ (50), մեկ ընդիքտիոն (15), հանել է 12 (3×4), գումարել հայկական թվականի տարբերությունը և ստացել 1604 թվականը (ՀԶՀ, ԺԷ դ., I, էջ 131)։ Այսպես է վերծանված նաև «Ցուցակ ձեռագրացում» (Հ. Ա., էջ 44)։

Տվյալ վերծանությունը, մեր կարծիքով, ճիշտ չէ։ Սխալն առաջացել է

նրանից, որ բնագրի «ընդիքտիոն Զ ընդ նա խառնեսցես»-ի վերծանության ժամանակ վեցի թվական արժեքով օգտագործված Զ-ն դարձրել են նախդիր և միացրել «ընդ»-ին՝ստանալով «ընդիքտիոն զընդ նա խառնեսցես»։ Սածկագրողը ցանկացել է ասել, թե՝ «ընդիքտիոն Զ (6) ընդ նա խառնեսցես», այսինքն՝ 6 ընդիքտիոն պիտի գումարել առաջարկված թվականին։

Ճիշտ վերծանությունը կլինի. 500+500 (երկու Շ-ի թվագումարը) + 50+90 (վեց ընդիքտիոնը ×15-ով=90), հանած 12 (երեք ոլիմպիադ), ունենում ենք 1228, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1679։

Այսպիսով, պարզվում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիրը գրված է ոչ թե 1604 թվականին, այլ՝ 1679-ին։

* * *

Լ. Խաչիկյանը «Հիշատակարանների» երրորդ հատորում հրատարակել է Մաշտոցի անվան մատենադարանի № 112 ձեռագրի հիշատակարանը, ուր գրչության թվականը ամփոփված է հետևյալ քառյակում (թ. 436բ).

Չորս երկեակ և ի թուակ,
Քառեակ, տասնեակ և ի եւթնեակ,
Յաւարտ եկաւ այս սուրբ կտակ,
Ի դառնացեալս այս ժամանակ։

Խաչիկյանը այս թվական վերծանության մասին գրել է. «Սածկագիր այս թվականի միակ ճիշտ վերծանումը հետևյալն է. «Չորս երկեակ և մի թուակ» հավասար է 9-ի (4×2+1). սա հարյուրավոր թիվն է. «Քառեակ տասնեակ և ի եւթնեակ»-ը հավասար է 47-ի (4×10+7), ուստի թվականն է 947 հայկական, կամ 1498՝ ներկա թվականության» (Հիշ. ԺԷ, III, էջ 272)։

Առաջարկվող վերծանությունն անհաջող է, քանի որ հիմք չունենք «Չորս երկեակ և մի թուակ»-ը հարյուրավոր թիվ համարելու։ Առաջին տողի «թուակ» բառը, մեր կարծիքով, աղավաղումն է «թրթակ» բառի, իսկ վերջինս ունի հազարի թվական արժեք։ Եթե ընդունելի համարվի մեր այս ուղղումը, այն դեպքում ձեռագրի գրչության թվականը կվերծանվի «Չորս երկեակ և մի թրթակ», այսինքն՝ 8 (4×2=8)+1000=1008։ Այս թվին անհրաժեշտ է գումարել «քառեակ, տասնեակ և յոթնեակ», ստանում ենք 1029 թվականը (1008+4+10+7=1029)։ Սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1580 թ. (1029+551=1580)։ Եթե ճիշտ համարվի մեր այս վերծանությունը, ապա Մաշտոցի անվան մատենադարանի № 112 ձեռագիրը գրված կլինի ոչ թե 1498 թվականին, այլ՝ 1580-ին։

* * *

«Կրոնոս» բառը մեկ հազար թվական արժեքով օգտագործված է Մաշտոցի անվան մատենադարանի № 6 ձեռագրում, որը պարունակում է տաղերգու Պետրոս Բերթումյանի «Աղբիւր բացեալ» աշխատությունը։ Ձեռագիրը, ըստ «Ցուցակ ձեռագրաց»-ի կազմողների, XVIII դարի գրչություն ունի։

Ձեռագրի հիշատակարանում գաղտնագիր տրվում է ձեռագիրը գրվելու տարեթիվը (թ. 1ա), որն, ինչպես երևում է, չի հաջողվել վերծանել «Ցուցակ»-ը կազմողներին։ Բերում ենք հիշատակարանից տարեթիվ պարունակող հատվածը.

Իսկ թըվական տարւոյս ծագի ֆարտի,
Հինգ յարտաքուստ ստորև փութալ վաղէ,
Ընդ քսանին շարահիւսիլ կրօնիւ,
Առք չորք յոբելեան ակըմբիշ յօդիւ,
Յաթոռ քառաթեւի հաստիլ կերպիւ,
Արքայն արև ծագիլ հազար շողիւ։

Սածկագրության մեջ առաջարկվում է վերցնել հինգը՝ քսանի հետ («հինգ... ընդ քսանին») և գումարել «կրօնոս»-ին՝ հազարին. ստանում ենք 1025 (5+20+1000=1025), նրան ավելացնում ենք չորս հոբելյան՝ 200 («Առ չորք յոբելեանն»), լինում է 1225, վերջինիս էլ գումարում ենք հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1776 թվականը (1225+551=1776)։

Այսպիսով, պարզվում է, որ այդ ձեռագիրը գրված է 1776 թվականին։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 268 ձեռագրում Հայրապետ գրչի թողած հիշատակագրությունից երևում է, որ ձեռագրի գրչությունն ավարտել է «էր թուական մերոյս ազեան» (այսինքն՝ մեր ազգի—Ա. Ա.)՝ Երկ շրջան և մու յոբելեան, Քառեակ հնգեակ և մի տասնեակ, Եւ երկ լծակ։ Ձեռամբ մեղսամած և մրգուզ Հայրապետի պիտակ աբեղայի... դեկտեմբեր ամսոյ Ե. երորդի...» (թ. 315ա)։

Սածկագրողն այստեղ «երկու շրջան» ասելով, նկատի է ունեցել ՇԼԲ շրջանները. մեկ շրջանը հավասար է 532-ի, երկու շրջանը հավասար կլինի 1064-ի, առաջարկում է դրան գումարել մեկ հոբելյան՝ 50 տարի, չորս հնգյակ՝ 20 («քառեակ հնգեակ, մի տասնեակ և երկու լծակ»)։ Լծակը մեկ միավոր է, երկու լծակը հավասար կլինի երկուսի։ Առաջարկած թվերն իրար գումարելով, ստանում ենք 1146 (1064+50+20+12=1146)։ Սրան ավելացնելով հայկական մեծ թվականի տարբերությունը, ունենում ենք 1697 թ. (1146+551=1697)։

(Հրատ. ՀԳԴ, 167)։

* * *

Արթուն գրիչը Լվով քաղաքում Աստվածատուր քահանայի համար մի ձեռագիր է ընդօրինակել և գրչության թվականի մասին թողել հետևյալ հիշատակագրությունը. «...յամի երեսներորդի առաջներորդի յոբելանի և ընդիքտակագրությունը. «...յամի երեսներորդի առաջներորդի յոբելանի և ընդիքտիոնին երկրորդի, բեսեքստոնի և միոյ ղիմպիաթի, այլ և առաջներորդի ամին, թուաբերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի, նա և ըստ համարոյ յաբեթացին տումարի հարիւր քսան և հինգ իդոսի, և ութներորդ նոնոսի

և միոյ ոլիմպիաթի եղև սկիզբն և աւարտումն տրամաբանութեան գրի… ի խնդրոյ աստուածասէր և ողջախոհ քահանային տէր Մինասի որդոյ տէր Աստուածատուրին, որ այժմու ժամանակի պանտուխտ գոլով ի յաշխարհս Իլախաց բարէլի մայրաքաղաքն Լէօպօլիս կոչեցեալ… Բայց գրեցաւ ընդ հովանեաւ նընջման սուրբ Աստուածածնին ի թագաւորութեան քրիստոնէական զարմի երրորդ Զիկմունտի» (թ. 193—195)։ Ձեռագիրն այժմ Մաշտոցի անվան մատենադարանում է և գրանցված է 570 համարի տակ։

Սկսենք վերծանությունը հայկական թվականից՝ «Յաբեթազին տումարից», որը կազմված է 125 ինդոսից, 8 նոնոսից, 1 ոլիմպիադից։ Ինդոսը ութ տարվա շրջան է, 125 ինդոսը հավասար կլինի մեկ հազարի ($125\times8=1000$)։ Նոնոսը հինգ տարվա շրջան է, ութ նոնոսը հավասար կլինի 40-ի ($5\times8=40$)։ Ոլիմպիադը կամ ղիմպիադը՝ 4 տարվա շրջան է։ Այս թվերն ի մի հավաքելով և նրանց գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1595 թ. ($1000+40+4+551=1595$)։ Ուրեմն՝ ձեռագիրը գրված է 1595 թվականին։

Ձեռագրի գրչության տարեթիվն ըստ ներկա թվականի գտնելու համար պահանջվում է հաշվի առնել 31 հոբելյան, երկու ընդիքտիոն, մեկ բեսեքիստոն և մեկ ոլիմպիադ։ Հոբելյանը 50 տարվա շրջան է, 31 հոբելյանը հավասար է 1550-ի ($50\times31=1550$), ընդիքտիոնը 15 տարվա շրջան է, երկու ընդիքտիոնը հավասար է 30-ի, բեսեքիստոնը 12 տարի է հաշված, ոլիմպիադը՝ 4 տարվա, և այդ բոլորի վրա պահանջվում է ավելացնել մեկ։ Բոլոր թվականները ի մի գումարելով, ստանում ենք 1597 ($1550+30+12+4+1=1597$)։ Քրիստոնեական թվականը, ինչպես երևում է, հայկական թվահաշվով է, ուստի երկու տարով ավելի է ($1597-2=1595$ թ.)։

(Հրատ. ՀԳԳ, էջ 166—167)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 609 ձեռագրում, որը պատմափիլիսոփայական բնագրերի ժողովածու է՝ գրված Գասպար գրչի կողմից, գրչության տարեթիվը գրի է առնված տոմարաթիվ ծածկագրության մեջ՝ օգտագործելով «յոբելեան», «նոնոս», «ոլիմպիադ», «ինդոս», «ընդիքտիոն», «նահանջ» թվարժեք բառերը։ Գրչության տարեթիվը տրված է քրիստոնեական և հայկական թվականներով։ Հիշատակարանից բերում ենք տարեթվին վերաբերող հատվածը։

«Յամի երեսներորդի և երկրորդի յոբելեանի, երկու նոնոսի և միոյ ղիմպիաթի Թուաբերութեան ժամանակի մարդեղութեան փրկչի, նայէ ըստ համարոյ Յափեթազէն տոմարի հարիւր քսան և հինգ ինդոսի, երեք ընդիքտիոնի և չորս նահանջի եղև սկիզբն և յաւարտն գրի։ Յանդ նլաւ Հայոց ամսոյն արաց մէկ ինդոսի, Հռոմայեցոց յամսոյն մարտի հինգ նոնոսի, եբրայեցոց ամսոյն Նիսանի միոյ ղիմպիաթի» (թ. 141ա)։

«Ցուցակ ձեռագրացի» հեղինակները, ինչպես երևում է, դժվարացել են վերծանել ծածկագիրը և ձեռագրի գրչության թվականը մոտավոր ձևով ցույց տվել «1737-ից առաջ» («Ցուցակ ձեռագրաց», հ. Ա., էջ 362)։

Ծածկագիրը վերծանվում է այսպես. երեսուն և երկու հոբելյանը հավասար է 1600-ի ($32\times50=1600$), երկու նոնոսը՝ 10-ի ($5+5=10$), մեկ ոլիմպիադը՝ 4-ի, գումարելով իրար այս տարիները, ստանում ենք 1614 թվականը ($1600+10+4=1614$)։

Ինդոսը 8 է, հարյուր քսան և հինգ ինդոսը հավասար կլինի 1000-ի ($125\times8=1000$), երեք ընդիքտիոնը՝ 45-ի ($3\times15=45$), չորս նահանջը՝ 16-ի ($4\times4=16$), գումարելով նրանց հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1612 թվականը ($1000+45+16+551=1612$)։ Քրիստոնեական թվականի համեմատությամբ հայկական թվականի երկու տարվա տարբերությունից երևում է, որ քրիստոնեականը հայկական թվահաշվով է։ XVII դարում ևս, ինչպես պարզվում է, դեռ շարունակվում էր կիրառվել քրիստոնեական հայկական թվահաշիվը։

* * *

Մատենադարանի № 9646 ձեռագրում հանդիպում ենք Մինաս երեցի կազմած հետևյալ ծածկագրին.

Գիշերատիւ միոյ աւուր ըզթիւ ժամուցըն վեր առեալ,
Զիւրաքանչիւրն որոշակի յոբելեան իմն համարեալ,
Ի վերայ այսր ամենայնի ըզծայ գիրըն վերայ բերեալ,
Եւ իբրու հարկեոր գոլով զեկտի քառեակս զուգակցեալ,
Որքանութիւնն թվականիս ապա կարծիք լինի յայտնեալ,
Եւ ի նամսեանըն նոյեմբերի երկեակ հնգակին պատահեալ,
Ի Պէազիտ քաղաքիս մեր եղև իսկ այս գրչագրեցեալ,
Ձեռամբ Մինասի իբր երիցու ձախու Լեղիշտւոյն յորջորջեալ։
(թ. 25բ)

Ծածկագիրը վերծանվում է հետևյալ կերպ։ Վերցնում ենք օրվա 24 ժամերի թիվը («ըզթիւ ժամուցըն վեր առեալ») և բազմապատկում հոբելյանով (50-ով), ստանում ենք 1200 ($24\times50=1200$), նրան ավելացնում ենք «ծայ»-ն, «եկ-այսինքն՝ 50-ը, լինում է 1250։ Գումարում ենք «եկտի քառակուսին» («եկտին» երկու է, նրա քառակուսին կլինի 8), որով լինում է 1258, նրան ավելացնում ենք հայկական թվականի տարբերությունը՝ 551, և ստանում 1809 ($1258+551=1809$)։

Մինաս երեցը, ինչպես տեսնում ենք, ծածկագիրը կազմել է Բայազետում 1809 թվականի նոյեմբերի 10-ին («երկեակ հնգեկին»)։

(Հրատ. ՀԳԳ, ԲԵՀ, 1967, № 1, էջ 209—210)։

* * *

Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի ցուցակում հանդիպում ենք տոմարական մի ծածկագրի, որը հրատարակել է պրոֆ. Ֆ. Կոնիբերը, բայց դժվարացել է վերծանել։ Այն հետևյալն է.

Թիւ գրգուկիս աւարտեցման,
Զոյգ շրջանիկ, եղ յոբելեան,
Եւ մակ եռակ քառապատկեան,
Քառիկ դարձեալ և մու քըսան։ (Conyb., էջ 310)

Ծածկագրում գործածված շրջանակը 532 տարիների պարբերաշրջանն է, որը զույգ վերցնելու պարագայում կունենանք 1064 (532+532=1064)։ Նրան պետք է գումարել մեկ հոբելյան՝ 50։ (Այստեղ «եղ»-ն ունի մեկ թվանշանի արժեք)։ Եռյակը քառապատկելով, կստանանք 12։ Դրան պիտի ավելացնենք 24 («Քառիկ դարձեալ և մու քսան»)։ Տրված բոլոր թվերը գումարելով, ստանում ենք 1150, որին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1701 (1064+50+12+24+551=1701)։

Այսպիսով, պարզվում է, որ Բրիտանական թանգարանի մեզ հետաքրքրող ձեռագիրը գրված է 1701 թվականին։

(Հրատ. ԲԵՀ, 1967, № 1, էջ 210, ՀԳԳ, էջ 165—166)։

* * *

Պրոֆ. Ն. Ադոնցը իր «Дионисий Фракийский и армянские толкователи» աշխատության ներածական մասում հրատարակել է Վենետիկի Մխիթարյանների № 990 ձեռագրում գրառված Հակոբ գրչի հիշատակարանը, ուր ոտանավորաթիվ ծածկագրությամբ է հայտնված գրչության տարեթիվը. «Յամի երեսներորդի երկրորդ երրորդի յոբելեանի, միոյ բիսեքիստոնի, մին ղիմպիադի թուաբերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի. նաև ըստ համարոյ յաբեթազին տումարի հարիւր քսան և ութ (վերևից ուղղված է երեսուն և երկու) ինդոսի երկրորդին ամի եղեւ սկիզբն եւ յաւարտումն գրի, որ է տումար եւ քերական, հետ երկոքին ի մի տեղ եւ մի կապ, յամսեանն հայոց ահեկի, տգոնի միոյ նոնոսի, յեբրայեցոց յամսին թամուզի, ինդոսի միոյ ողոմպիադի հռոմայեցոց յամսեանն յուլին առաջնումն աւուր շ[ա]բ[ա]թ ի ժամն Ի (20)»[13]։

Ադոնցը դժվարացել է այս ծածկագիրը վերծանել և նշել է, որ ծածկագիրը «...այնքան աններդաշնակ է և անհասկանալի, որ թվականի խնդիրը մնում է մեծ հարցականի տակ»[14]։

Իրականում, տվյալ հիշատակարանում նշված թվականը կասկածանքի տեղիք չի տալիս։ Ադոնցը, ինչպես երևում է, ծանոթ չի եղել տոմարական թվահաշվումներին։ Ծածկագիրը բավականին հաջող վերծանվում է։

Քրիստոնեական թվականը կազմված է 32 հոբելյանից, որը հավասար է 1600-ի (32×50=1600), նրան գումարած մեկ բեսեքիստոն (բեսեքիստոնը 7 է)[16] և մեկ ոլիմպիադ՝ 4, կստացվի 1611 (1600+7+4=1611)։

Հայկական մեծ թվականը կազմված է 132 ինդոսից (ճիշտն ուղղվածն է և ոչ 128-ը), ինդոսը՝ 8 է, 132 ինդոսը հավասար կլինի 1056-ի (132×8=1056), որին անհրաժեշտ է գումարել երկու, կստացվի 1058, նրա վրա ավելացնելով 551, ստանում ենք 1609 (1058+551=1609)։

Քրիստոնեական թվականի համեմատությամբ նկատվող երկու տարինե-

[13] Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915, էջ XXIV:

[14] Նույն տեղում։

[15] Բեսեքիստոնը մեր նախորդ վերծանության մեջ սխալմամբ հաշված է 5։

րի տարբերությունը հասկանալի է. քրիստոնեական թվականը հայկական թվահաշվով է։

Գրչության ամսաթիվը տրված է հռոմեական, հայկական և եբրայական հաշվումներով. հռոմեականով կլինի հուլիսի մեկին, եբրայականով՝ թամուզ ամսի 12-ին (մեկ ինդոս՝ 8 և մեկ ոլիմպիադ՝ 4), հայկականով՝ ահեկի ամսի 15-ին (տգոնը՝ 10 է, իսկ նոնոսը՝ 5), որը շարժական տոմարով է և համապատասխանում է հռոմեական ու եբրայական ամսաթվերին։ 1609 թ. հուլիսի մեկին հայկական շարժական տոմարով եղել է ահեկի 15-ը։ Ինչ վերաբերում է շաբաթվա օրվան, ապա 1609 թվականի հուլիսի 1-ին, իրոք, եղել է շաբաթ[16]։

(Հրատ. ՀԳՊ, էջ 279։ ՀԳԳ, էջ 132—133։ ՀՁՀ 17-րդ դ., I, էջ 355)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4253 ձեռագիրը պարունակում է չորս տարբերակով գաղտնագրված ուշագրավ մի ծածկագիր, որը, որքան մեզ հայտնի է, դեռ ամբողջությամբ չի վերծանված։ Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց» կազմողները չեն վերծանել ծածկագիրը և ձեռագրի թվականը հարցականով դրել են 1608։ Տվյալ ծածկագրին մենք անդրադարձել ենք մեր «Ծածկագիր թվականների վերծանությունը» հոդվածում և երկու ծածկագիր թվական վերծանել (ԲԵՀ, 1967, № 1, 209)։

Ծածկագիրը բաղկացած է չորս շարքից, որոնցից յուրաքանչյուրում տրվում է ձեռագրի գրչության թվականը տարբեր գաղտնագիր հաշվումներով։ Առաջին շարքում տված է.

Ըստ գերակատար թուոց կրկնեալ զհնդետասնեան,

Պարաբարձմամբ յայնց կրկնակի ընդ իդոսեան։

«Գերակատար թիվն» այստեղ հաշված է 532, որը կրկնելով, ստանում ենք 1064, նրան գումարելով 15 («հնգետասան»), ստանում ենք 1079։ Ստացած թվի վրա ավելացնում ենք կրկնակի «իդոս»՝ 16 և հայկական թվականի տարբերությունը և ստանում 1646 (1079+16+551=1646)։

Ծածկագրի երկրորդ շարքում տվում է.

Եռաչափեալ ըստ շաբաթու թիւ յոբելեան,

Եդեալ ընդ նոյնս թիւ կատարեալ եօթնառնական։

«Եռաչափեալ շաբաթ» ասելով ծածկագրողը նկատի ունի երեք շաբաթվա օրերը, այսինքն՝ 21 (7×3=21), որը բազմապատկելով հոբելյան թվով՝ հիսունով, ստանում ենք 1050 (21×50=1050)։ «Կատարեալ» թիվն այստեղ հաշված է 50, 1050-ին գումարելով 50, ստանում ենք 1100։ Ստացած թվից պահանջվում է հանել յոթը («եօթնառնական»), մնում է 1093 որին պետք է գումարել հայկական թվականի տարբերությունը՝ 551. ձեռագիրը ներկա թվականով գրված է 1644 թվականին։

[16] Այս ծածկագրի վերծանությանն անդրադարձան պատմական գիտությունների դոկտոր Վ. Հակոբյանը և բանասիրական գիտությունների թեկնածու է. Պիվազյանը մեր «Հայոց գիր և գրչություն» աշխատության մասին գրած իրենց գրախոսականում (ՊԲՀ 1975, № 4, էջ 212)։ Մենք դրան պատասխանել ենք նույն պարբերականի 1976 թ. № 2-ում։

Ծածկագրի երրորդ շարքում ասված է.

Գծագրեաւ ներբողենի գիծս մեկնութեան,
Որ ի մեծէ տեառն Ներսիսէ դիտէ Հայկեան,
Կրկնապատկեալ մասամբ տասին երկ յիսնական,
Երկեակ եռորդ ընդիքտիոն Թիւ կրկնական։

Երկու հինգյակ թվականները բազմապատկելով տասով, ստանում ենք հազար, նրան գումարում ենք «երկեակ եռորդ ընդիքտիոն», այսինքն՝ 90(2×3×15=90), ստանում ենք 1093, որին գումարելով 551 ստանում ենք 1644։

Ծածկագրի չորրորդ շարքում գրված է.

Ի Թիւ հայկեան ներեղերեալ բարդեալ շրջան,
Երկ ընդիքտիոն, յորմէ երկեակ ի բաց առման։

«Շրջան» ասելով ծածկագրողը նկատի ունի լուսնա-արեգակնային շրջանը՝ 532 (ՇԼԲ)։ Այն «բարդելով», այսինքն՝ կրկնելով, ունենում ենք 1064։ Պահանջվում է նրան գումարել երկու ընդիքտիոն՝ 30 (մեկ ընդիքտիոնը 15 է), ունենում ենք 1094, որից հանելով երկու («երկեակ ի բացառման»), մնում է 1092։ Նրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1643։

Չորս շարք ծածկագիր թվականների վերծանությունից պարզվում է, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 4253 ձեռագիրը գրված է ո՛չ ԹԾ 1608 թվականին, ինչպես ենթադրել են մատենադարանի ձեռագրացուցակ կազմողները, այլ 1643—1644 թվականներին։ Ուշագրավ է, որ «գերակատար» թիվը տվյալ դեպքում գործ է ածվում 532-ի նշանակությամբ, իսկ կատարյալ թիվը՝ հիսունի։

(Հրատ. ԲԵՀ, 1973, № 1, էջ 100, ՀԳԳ, 164, ԲԵՀ, 1967 թ., № 1, էջ 209)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 7758 ձեռագրում բերված է Մինաս քահանայի կազմած մի այլ ծածկագիր թվական, և նրա վերծանությունը դյուրացնելու նպատակով տրված են անհրաժեշտ տեղեկություններ որոշ բառերի թվական արժեքների մասին։ Ծածկագիրը հետևյալն է.

Թիւ արկանեմ ի քարտիսի.
Ութն մասամբքն քերթողի.
Յօդն ի սոցունց արդ արտաքսի.
Մուծմամբ եկտի յոբելեանի.
Պարիւք քսանից յօնսայի.
Միով հաշիւ յանկ ելանի.
Թեպրաւ գրչաւ փիրս փոքձի,
Մինաս Լեղէշտ քահանայի։ (թ. 213բ)

Այս ծածկագիրը հրատարակել է Աճառյանը և դժվարացել է այն վերծանել։

Ծածկագիրը կազմված է հետևյալ սկզբունքով. վերցված են քերականության ութ մասերի անունների առաջին տառանիշերի թվական արժեքները, այսինքն՝ անունը՝ 1, բայը՝ 2, ընդունելությունը՝ 8, դերանունը՝ 4, յոդը՝ 300, նախդիրը՝ 400, մակբայը՝ 200, շաղկապը՝ 500։ Գումարելով այս բոլոր թվերն իրար, ստացվում է 1415 (1+2+8+4+300+400+200+500=1415)։ Սրանից հանելով 300 («Յոդն ի սոցունց արդ արտաքսի»), ստացվում է 1115 (1415—300=1115), որին գումարելով երկու հոբելյան՝ 100 և 20 «յոնսա»՝ 60 և մեկ («միով հաշիւ յանկ ելանի»), դառնում է 1276 (1115+100+60+1==1276)։ Ստացածը հայկական մեծ թվականն է, որին գումարելով տարբերությունը՝ 551, ստանում ենք 1827 (1276+551=1827)։

Այս թվականը կազմված է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու առթիվ։

* * *

Վարդան Կաֆայեցին չափածո հիշատակարան է գրել իր պատվերով Վրթանես գրչի ընդօրինակած Աստվածաշնչի ձեռագրում, որը պարունակում է ծածկագիր թվական։ Այդ ձեռագիրն այժմ Մաշտոցի անվան մատենադարանի սեփականությունն է՝ գրանցված է № 2706-ի տակ։ Ծածկագիրը, որքան մեզ հայտնի է, դեռ չի վերծանված։ Ճիշտ է, Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» (Ա, էջ 858) հեղինակները ձեռագրի նկարագրության հարակարգում գրչության թվական են նշել 1668-ը, բայց դա բացահայտ սխալ է։ Կաֆայեցու ծածկագիր այդ հիշատակարանը հետևյալն է.

Ի ծնենդենէ մարմնոյ փըրկչին Քրիստոսի.
Հազար և վեց հարիւր և Ղ Թըւի.
Ապրիլ ԺԵ աւուր սուրբ զատկի.
Եւ վերադիր տարոյն վեցերորդ Թուին։
Մինչ Քրիստոսի ծնընդեանն ի սուրբ Գրիգորի,
Երեք հարիւրեան երկոտասանի,
Անտի հայ Թուականն և երկերիւրի,
Քառասուն և մեկ Թիւ է աւելորդի...
Յորժամ լինելութեան ըսկիզբն աշխարհի։
Յերրայեցւոց ազգաց մեծ Թըւականի,
Եւ եւթըն հազար հարիւր Ժ. երեք Թուի.
Այսպէս իմա հոգի եղբայր սիրելի։
Սա յարմարեալ մեծ ի հայ Թուականի.
Հազար հարիւր երեսուն և եւթըն Թուի,
Ասացեալ Վարդան եպիսկոպոսի.
Առ ոտն Կաֆայու վանք Աստուածածնի»։ (թ. 676բ)

Հիշատակարանում գործածված քրիստոնեական թվականը՝ 1690-ը, հայկական թվահաշվով է, ուստի նրանից հանելով երկու ավելի տարիները, ստանում ենք 1688։

Երկրորդ գործածված թվականը Գրիգոր Լուսավորչի թվականն է, ավելի ճիշտ՝ քրիստոնեության՝ Հայաստանում պաշտոնական կրոն ճանաչվելու թվականը, որի համար հիմք է վերցրած 312-ը, այսինքն՝ Միլանի էդիքտի ըն-

դունման տարին, որին գումարելով 241, ստացվում է 553՝ հայկական մեծ թվականը սկզբնավորելու տարին։

Արարչության թվականը թեև հիշատակարանում համարվում է երրայականը, բայց, իրականում, Անդրեասի հանրահայտ թվահաշվով է։ Տրված թվականից անհրաժեշտ է հանել 5425 թվականը։ Արարչության 7113 թվականից հանելով 5425-ը, ստանում ենք 1688։

Հայկական մեծ թվականը հիշատակարանում 1137-ն է, որին գումարելով 551, ստանում ենք 1688։ Այսպիսով, զուգահեռ բերված թվականները չեն հակասում իրար. Վարդան Կաֆայեցու հիշատակարանը գրված է 1688 թվականին։

Հիշատակարանում հիշված է նաև տարվա վերադիրը և զատիկը. 1688 թվականին զատիկը, իրոք, եղել է ապրիլի 15-ին, իսկ տարվա վերադիրը՝ վեց։

(Հրատ. ԲԵՀ, 1973, № 1, էջ 105—106)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 545 ձեռագիրը «Բառգիրք» է՝ գրված Մեսրոպ գրչի կողմից, Շատիքո անապատում։ Չափածո հիշատակարանում գրչության թվականը հայտնված է ծածկագրով՝ օգտագործելով Հայկ նահապետի անվան տառանիշերի թվարժեքների գումարը։ Ծածկագիրը հետևյալն է.

Զթուականս այսպէս արա՛յ,
Անուն նախնուն կրկնապատկեա՛,
Ըստ նոյն չափոյ առ նա դասեա՛,
Քառ յոբելեան ընդ մու հարիւրեա,
Վերաբերեալ ի նոյն յարեա՛,
Ի ծայրալիր գլխոյ նորա,
Ութն կրկին ի բաց ձգեա՛,
Զբոլորն առեալ քեզ հոտոտեա,
Իսկ նա իսկոյն թիւ բաղկանայ։ (թ. 173բ—174ա)

Հայկ անվան տառանիշերի թվերի գումարը հավասար է 431-ի. Հ(70)+ա(1)+յ(300)+կ(60)=431։ Այդ թիվը պետք է կրկնապատկենք («ըստ նոյն չափու առ նա դասեա»), կստանանք 862 (431+431=862)։ Ստացված գումարին պետք է ավելացնենք «քառ յոբելեան», այսինքն՝ 200 (4×50=200), «մեկ հարիւրեա» և մեկ («ի ծայրալիր գլխոյ նորա»), կլինի՝ 1163 (862+260+100+1=1163)։ Այս թվից պիտի հանենք 16 («ութն կըրկին ի բաց ձգեա»), կստանանք 1147։ Սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1698։ Պահանջվում է վերցնել 5 («երկու կըրկին և ընդ մուխ»), կլինի 1147, նրան էլ գումարենք հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1698, այսինքն՝ այն թվականը, որը գաղտնագրված է հաջորդ ծածկագրերի մեջ։

(Հրատ. ՀԳԳ, 174, ՀԳՊ, 236, ԲԵՀ, 1967, № 1, էջ 206)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5613 ձեռագիրը, որ պատմական նյութերի ժողովածու է, ունի գրչության թվականը նշող հետևյալ ծածկագիր հիշատակարանը. «Յամի երեսներորդի առաջներորդի յոբելինի և ընդիքտիոնին երրորդի, բեսէքիստոնի և միոյ ինդոսի Թուաբերութեան ժամանակի մարդեղութեանէ փրկչի։ Նայ և ըստ համարոյ յաբեթային տոմարի հարուր և երեսուն ինդոսի, բեսէքիստոնի և միոյ տգոնի եղև յաւարտումն մեկնիչ տոմարի յամսեանն Հայոց նաւասարդի է(7), օրն գիշերի ժամն ԻԲ (22)» (ՄԱՄ, ձեռ. № 5613, թ. 161ա—161բ)։

Այստեղ մենք ունենք գաղտնագրված երկու թվական՝ քրիստոնեական և հայկական, որոնք և հնարավորություն են տալիս մեկը մյուսի միջոցով ստուգելու նրանց ճշմարտությունը։

Քրիստոնեական թվականը, ըստ հիշատակարանի, բաղկացած է 31 հոբելյանից, երեք ընդիքտիոնից, մեկ բեսեքիստոնից և մեկ ինդոսից։ 31 հոբելյանը հավասար է 1550-ի (31×50=1550)։ Ընդիքտիոնը հավասար է 15-ի, երեք ընդիքտիոնը կլինի 45։ Բեսեքիստոնը՝ 7 է, իսկ ինդոսը՝ 8։ Գումարելով այդ թվերը, ստանում ենք 1610 (1550+45+7+8=1610)։

Հայկական թվականը բաղկացած է 130 ինդոսից, մեկ բեսեքիստոնից և մեկ տգոնից։ Ինդոսը՝ 8 է, 130 ինդոսը կլինի 1040, բեսեքիստոնը 7 է, տգոնը՝ 10, որոնց գումարը կլինի 1057 (1040+7+10=1057)։ Այդ գումարին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1608 թ., այսինքն՝ երկուսով պակաս նախորդից։ Քրիստոնեական թվականը, ինչպես երևում է, ներկայումս մեր գործածական քրիստոնեական հռոմեական թվականը չէ, այլ քրիստոնեական հայկականը, որին պետք է ավելացնել ոչ թե 551, այլ՝ 553։ Այդպիսի հաշվումով, զուգահեռ բերված երկու թվականներն էլ կհամապատասխանեն իրար։

(Հրատ. ՀԳԳ, 166, ԲԵՀ, 1967, № 1, էջ 211)։

* * *

Թեոդորոս գրիչը Կարինում ընդօրինակած ձեռագրի տարեթիվը գաղտնագրել է ստորև բերված չափածո հիշատակարանում.

Այս հրաշափառ մեծի տառիս,
Քեզ երանի թէ հանդիպիս...
Արդ զիս յիշայ զմեռեալ հոգիս՝
Զթէոդորոս գծող տառիս,
Ի թվականիս Հայոց ազգիս,
Հազար, հարիւր, յոբելեանիս,
Տասն և հինգ այլ ի նոյն եռիս,
Կատարեցաւ Կարնոյ միջիս։ (ՄԱՄ, ձեռ. № 8159, թ. 157բ)

Ձեռագիրը գրված է 1716 թվականին (1000+100+50+15+551=1716)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2381 ձեռագիրը, որը քերականական նյութերի ժողովածու է, գաղտնագրված ունի հայկական մի թվական հետևյալ չափածո հիշատակարանում.

Արդ ես տկար անձն անարժան,
Գծաւղ տառիս իմաստութեան,
Հասեալ ի կէտն աւարտման
Հնչեմ ձայնիւ բան գոհութեան։
Եթէ կամիս ըզթվականն,
Կալ և հաշուեա զքսան յոբելեան,
Երկեռակի տասն բեր յայն,
Իդոսն թիւ ընդ երկոտասան։ (թ. 247ա)

Պրոֆ. Ն. Ադոնցը հրատարակել է այս ծածկագիր թվականը և փորձել է վերծանել։ Դժբախտաբար, նա սխալ է հասկացել «իդոս» բառի նշանակությունը՝ կարծելով, թե այդ աղավաղված է «Բ. Դսին», «Ի դոսն,—գրել է նա,— ըստ երևույթին, ոչ ճիշտ ընթերցումն է Բ Դ-նն, այսինքն՝ երկուսը բազմապատկած չորսով, հավասար է 8-ի»։ Այդ հաշվումով նա ստացել է հայկական 1080 թ. ($50\times20+2\times3\times10+2\times4+12=1080$)։ Նրականում «ինդոսն» աղավաղված բառ չէ, այն «իդոս» բառն է, որը տոմարական գրականության մեջ գործ է ածվում ութ տարվա շրջանի համար։ Այդ մասին, ինչպես ասվեց, ունենք որոշակի ցուցմունք Շիրակացու «Տիեզերագիտության» մեջ. «Իդոսն՝ Ը (8) ամ է»։

«Իդոսն» իր ճիշտ նշանակությամբ հասկանալու պարագային, ծածկագիրը կվերծանվի այսպես. քսան հոբելյանը հավասար է հազարի, նրան գումարած 60 («երկ եռակի տասն բեր յայն») և 20 («Իդոսն թիւ ընդ երկոտասան»), որի վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, կունենանք 1631 թվականը ($1000+60+8+12+551=1631$)։

(Հրատ. ԲԵՀ, 1967, № 1, էջ 210։ ՀԳԳ, էջ 165)։

Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիրն ուրեմն գրված է 1631 թվականին։

* * *

№ 9646 ձեռագրում գաղտնագրված է հիջրայի մի թվական՝ «Թվական հազարացոց տաճկաց» վերնագրով։ Բերում ենք այդ ծածկագիրը՝ նրա հետ չառնչվող մասերի կրճատումով։

Մըտօք շարեմ զթիւն խըլամին,
Իմաստ մըտացս զի փայլեսցին,
Նէնոսք վաթսուն նախ կալնանին,
Ադօնք հաշիւ յիսնից կանգընին,
Սոսկ մի դիցուք, զընդիքտօնին,
Քանակք եկտի, փոքր շրջանին,

Առ և զթաւալ մեծ արեգին,
Հանցես ի բաց զթաւալ փոքրին,
Արիստոտէլին կալցես զինն,
Նըստեալ Ժ.իւ թիւըն կուսին,
Առ ըզկաղանդսն ութն 'ւ եկտին,
Ի ստանէ երկ վէշք արտաքսին...
Հոռոմ յունիս ԺԵ.ին
Երկ յոբելեան և Ի կցին։ (թ. 365բ)

Ծածկագրի վերջում հեղինակը բացականչում է. «Ո՜հ տէր Մինասիս. ձեռքս գրեաց դառնայ ի հող, գիրս մնացէ յիշատակող»։

Նոնոսը 5 է, 60 նոնոսը՝ 300։
Ադոնը 10 է, հիսուն ադոնը՝ 500։
Ընդիքտիոնը 15 է, գումարելով 1, կլինի 16։
Մեծ թավալը 500 է։
Փոքր շրջանը 28 է, երկու շրջանը՝ 56։

Տրված թվերը գումարելով, ստանում ենք 1372 ($300+500+16+500+56=1372$)։ Սրանից պահանջվում է հանել «փոքր թավալը», որ հավասար է 360-ի, և արիստոտելից մեկ (ընդհանուր գումարով 361), կմնա 1011։

Կույս թիվը 7 է, տասն կույս թիվը՝ 70։

Կաղանդը 5 է, ութ կաղանդը՝ 40։

Եկտին երկուս է։

Տրված նոր թվերը գումարելով 1011-ին, ստանում ենք 1123 ($1011+70+40+2=1123$)։

«Վեշքը» 6 է, երկու վեցը՝ 12, հանելով այն 1123-ից, մնում է 1111 ($1123-12=1111$)։

Պահանջվում է նրան գումարել երկու հոբելյան և քսան. ստացվում է 1231 թվականը ($1111+(2\times50)+20=1231$)։

Ծածկագրող Մինաս քահանան գրել է իր ծածկագրության բանալին արաբական թվանշաններով (١٣٢٢), նույնը նաև հայկական մեծ թվականով՝ ՌՄԿԵ, մեկ տարի ավելացնելով։ Հիջրայի 1231 թվականը, իրոք, համապատասխանում է ներկայիս 1815 թվականին. այն սկսվել է հունվարի 13-ին և վերջացել դեկտեմբերի 3-ին։ Քանի որ ծածկագրում նշվում է նաև ամսաթիվը, ուրեմն առանց դժվարության կարելի է ասել, որ այն կազմված է 1815 թվականի հունիսի 15-ին։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 113, ՀԳԳ, 171)։

* * *

Ղազար Թոխաթեցին Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 97 ձեռագրում իր թողած հիշատակարանում գրչության ավարտման ժամանակի մասին հետևյալն է հայտնում. «Արդ՝ եղև գրաւ սուրբ գանձարանիս՝ որ կոչի աւետարան, յամի շրջագայութեան արամաղեան տոհմի, հայկազան սեռի՝

15—884

աբեթական տոմարի ԻԱ (21) յոբելէնի և Ե.երորդ յարաբարդի, սեպտեմբեր ամսոյ ԻԷ. (27), ի օրն շաբաթ մօտ կիրակի» (էջ 367)։

Հրատարակել է Հ. Տաշյանը և վերծանել. $(20\times50)+7=$ ՌԾԵ (Տաշ., էջ 367)։ Նկատվում է տպագրական սխալ. բնագրում 21 հոբելյան է և ոչ 20, իսկ 21 հոբելյանը հավասար է 1050-ի, որին գումարելով 5 և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1606 թվականը $(1050+5+551=1606)$, ինչպես ճիշտ նշված է ձեռագրաց ցուցակում գրչագրի նկարագրության հարակարգում։

Որ վերծանված 1606 թ. ճիշտ է, այդ ստուգվում է ամսաթվի և շաբաթվա օրվա միջոցով. 1606 թ. սեպտեմբերի 27-ը, իրոք, եղել է շաբաթ։
(Հրատ. ՀՁՀ, ԺԷ դ., էջ 226)։

* * *

Ըսկանտար գրիչը Մաշտոցի անվան մատենադարանի № 1232 ձեռագրում թողած չափածո հիշատակարանում պատմում է իր Երուսաղեմ գնալը և այնտեղ Հովհաննես Ուռհայեցու հանձնարարությամբ «Մեկնութիւն առակացն Սողոմոնի» աշխատության արտագրելը։ Նա Երուսաղեմ գնալու թվականը հայտնել է հետևյալ ծածկագրով.

Յամի Հայոց մեծ թուականի,
Քառից հնկից յոբելինի,
Վաթսուն և ինն աւելիորդի,
Որ է նահանջ ի յայս տարի... (թ. 257ա)

Վերծանվում է $(4\times5)\times50+69+551=1620$։ 1620 թ., իրոք, նահանջ է եղել։ (Հրատ. ՀՁՀ, XVII, էջ 718)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1375 ձեռագիրը պարունակում է հայ նշանավոր տոմարագետ Հակոբ Ղրիմեցու «Տոմարի մեկնութիւնը», որը նա գրի է առել Թովմա Մեծոփեցու խնդրանքով, ինչպես և՝ անտիկ ականավոր գիտնականների հայտնած կարծիքները հասարակական տարբեր հարցերի մասին։ Ձեռագրի ընդօրինակող հեղինակն է Գրիգոր Ղափանցին, որը թողել է ծածկագիր մի հիշատակարան՝ հետևյալ բովանդակությամբ.

Գրքոյկս այս Տումարի մեկնիչ որջորջեալ...
Ընդ փափաքումն Թումայ պետի նախանձեալ,
Որ Մեծոփայ վանից առաջնորդ լեալ...

Եւ զԳրիգոր աբեղայն այն ձրի գաղափարեալ...
Ի սուրբ քաղաքն Երուսաղէմ զրաւեալ,
Օգոստոսի յամսոյ մետասան լեալ,
Ի թուականիս Հայոց վերծանեալ,
Զգերակատարն կատարեալ թուով չորրորդեալ,
Ընդ մշտաբուխ աղբերն զբէսէքիստոն լեալ,
Զյատուկ շրջան արեգականն ընդիքտիոնի լեալ,
Լուսնի զյատուկ շրջանն կատարուն թուով լեալ,
Կոյս թիւն զինքն ընդ ինքեան յոգնապատկեալ,
Երկ ընդիքտոնի օլոմպիաթն կցեալ,
Եւ զմէն մի քառեկիւ վերջաւորեալ։
Զերրորդական անձինք համապատուեալ,
Յերիցն միակ դաւանմամբ երկրպագեալ... (Եղմ., V, էջ 13—14)

Ծածկագիրը հրատարակված է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի «Ձեռագրաց ցուցակի» հինգերորդ հատորում։ Պողարյանի մի ծանոթագրությունից երևում է, որ ծածկագրության վերծանությամբ ժամանակին զբաղվել է Խապայանը և չկարողանալով վերծանել այն, հիշատակություն է թողել՝ «Չըկըրցա լուծել»։ Պողարյանը ևս փորձել է վերծանել, բայց՝ անհաջող։

Պողարյանն առաջնորդվել է հետևյալ սխալ սկզբունքով.

Ա. «Կատարեալ» թիվն ընդունել է տասն, իսկ «գերակատարը»՝ հարյուր, գումարել է իրար, բազմապատկել չորսով և ստացել 440։

Բ. «Բեսեքիստոնը» ընդունել է երեք, գումարել չորս (հավանական է, հաշվի առնելով «չորրորդեալ» բառը, որը տվյալ դեպքում ոչ մի կապ չունի բեսեքիստոնի հետ) և ստացել 7՝ հարցականով։

Գ. Արեգակի պարբերաշրջանը՝ 28-ը, բազմապատկել է ընդիքտիոնով՝ 15-ով, ստացել՝ 420։

Դ. Լուսնի պարբերաշրջանը՝ 19-ը, բազմապատկել է «կատարեալ» թվով (որն ընդունել է 10) և ստացել 190։

Ե. «Կոյս» թիվը՝ 7-ը, բազմապատկել է «կոյս» թվով՝ 7-ով, ստացել է 49։

Զ. Ընդիքտիոնը՝ 15-ը, բազմապատկել է երկուսով և ստացել 30. նրան գումարել է չորս և ստացել 34։

Է. Եվ վերջում «զմէն մի», չգիտես ինչու, ընդունել է 6, բազմապատկել չորսով և ստացել 24։

Վերջում այս բոլոր թվերը գումարելով իրար, ստացել է 1715 $(440+7+420+190+49+34+24+551=1715)$։

Պողարյանի վերծանության սխալը դժվար չէ նկատել թեկուզ այն հաշվի մեջ, որ նա «զմէն մի»-ն համարել է 6, այնինչ ծածկագրողը «մէն մի» ասելով նկատի ունի մեկ «Մ», այսինքն՝ մեկ երկուհարյուր, իսկ այդ ճիշտ ընդունելու դեպքում, խախտվում է Պողարյանի վերծանության ողջ թվահաշիվը։ Մեր կարծիքով, սխալ են նաև «գերակատար» և «կատարեալ» բառերին Պողարյանի տված թվական արժեքները։

Տվյալ ծածկագիրը մենք վերծանում ենք հետևյալ կերպ.

Ա. «Գերակատար» թիվն ընդունում ենք 532՝ ՇԼԲ, ինչպես այն գործ էր ածված էջ 219-ի ծածկագրության մեջ: «Կատարեալ» թիվը հաշվում ենք 50: Կատարյալ թիվը բազմապատկում ենք չորսով և նրան գումարում «գերակատար» թիվը, ստանում ենք 732 ($50 \times 4 = 200 + 532 = 732$):

Բ. «Մշտաբուղխ աղբիւրը» հաշվում ենք 12[17], որին գումարում ենք մեկ բնեկքիստոն՝ 8 և ստանում 20:

Գ. Արեգակի հատուկ շրջանին՝ 28-ին, գումարում ենք մեկ ընդիքտիոն՝ 15, ստանում ենք 43:

Դ. Լուսնի պարբերաշրջանին, որ բաղկացած է 19 տարիներից, գումարում ենք «կատարեալ» թիվը՝ 50, և ստանում 69:

Ե. «Կոյս» թիվը բազմապատկելով «կոյս» թվով, ստանում ենք 49:

Զ. Երկու ընդիքտիոնին գումարում ենք մեկ ոլիմպիադ և ստանում 34 ($2 \times 15 + 4 = 34$):

«Մեն մի քառեակիւ» վերծանում ենք. Մ-ն՝ երկու հարյուր, և մեկ չորս, այսինքն՝ 204:

Տվյալ բոլոր թվերը և հայկական մեծ թվականի տարբերությունը գումարելով իրար, ստանում ենք 1702 ($732 + 20 + 43 + 69 + 49 + 34 + 204 + 551 = 1702$):

Ուրեմն Ս. Հակոբյանց մատենադարանի № 1375 ձեռագիրը գրված է ոչ թե 1715 թվականին, ինչպես վերծանել է Պողարյանը, այլ՝ 1702-ին:

(Հրատ. ԲԵՀ, 1973, № 1, էջ 101—102):

* * *

Մոսկվայի մասին հայ մատենագրության մեջ մեզ հասած հնագույն հիշատակություններից մեկը 1565 թվականից է: Այն հանդիպում է Կարապետ վարդապետ Բաղիշեցու «Տաղ արարածոց Կարապետ վարդապետի ասացեալ» բանաստեղծության մեջ, որն աշխարհագրական բովանդակությամբ ընդարձակ մի բնագիր է: Տաղերգուն հերթականությամբ նկարագրելով եվրոպական երկրները, Ռուսաստանին նվիրել է հետևյալ ութնյակը[18].

Ի սառնամանիք հիւսիս է՝
Ըռուս ազգըն բնական:
Աշխարհ նոցա Մոսկով՝
Մինչև ծովն Կասբիական:
Եւ ազգըն նոցա գերող է
Թաթարըն նետողական:
Լայն 'ւ արձակ անկեալ է նա՝
Որ հասանի մինչև ի Կաֆայն: (ՄԱՄ, ձեռ. № 1677, թ. 62բ):

Դժվար չէ նկատել, որ Բաղիշեցու այս տեղեկությունը վերաբերում է Իվան Ահեղի ժամանակին, երբ Ռուսաստանին էին միացվել Ղազանը (1552-

[17] «էին անդ երկոտասան աղբիւր» (Ելք., ԺԵ, 27):

[18] Կարապետ Բաղիշեցու տվյալ տաղի ճշտմանը մենք անդրադարձել ենք «Ռուս ժողովուրդը և Մոսկվան միջնադարյան հայ մատենագրության մեջ» մեր հոդվածում («Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ», 27-րդ հատոր, էջ 223—224):

ին), Սիբիրը (1555-ին) և Աստրախանը (1556-ին), և երբ Ռուսաստանի հարավային սահմանները հասնում էին մինչև Կասպից ծովն ու Ղրիմի խանությունը («Մինչև ի ծովն Կասբիական» և «Մինչև ի Կաֆայն»):

Բանասեր Ն. Ակինյանը, հրատարակելով Բաղիշեցու այս տաղը, ճիշտ չի վերծանել տաղի գրության ժամանակը: («Հանդես ամսօրյա», 1837, էջ 318—347): Բաղիշեցին իր տաղի վերջում գրության ժամանակի մասին գրել է.

Ի թըւին Հայոց ազգիս
Տէր քննէ մինչև յաւիտեան.
Ինըն հարիւր և ութսուն
Ինն թիւ այլ Ի հետ նորայն.
Ո՜վ ողորմելի Կարապետ
Վարդապետ և խիստ անպիտան:

Ակինյանը սխալ հաշիվ կատարելով հանգել է այն եզրակացության, որ տաղը գրվել է հայոց 989 թվականին, այսինքն՝ մեր ներկա թվականի 1540-ին: Նա չի նկատել, որ մեջբերված քառյակի չորրորդ տողի «Այլ Ի հետ նորայն» արտահայտության մեջ Ի-ն թվականի իմաստով է գործածված. տաղերգուն ուզեցել է ասել՝ 989 թվական և 20-ն էլ նրա վրա («Այլ Ի (20) հետ նորայն»), որ եթե հաշվելու լինենք, կստանանք 1560 թ. ($989 + 20 + 551 = 1560$): Ի դեպ, ճիշտ թվականն առանց ծածկագրության ունի Վենետիկի մատենադարանի № 243 ձեռագիրը:

Այսպիսով, պարզվում է, որ Կարապետ Բաղիշեցու «Տաղ արարածոց»-ը գրված է ոչ թե 1540 թվականին, այլ՝ 1560-ին:

* * *

Ղալաթիայի № 53 ձեռագիրը պարունակում է «Ատենագրութիւն տիեզերական և ընդհանուր ժողովոյն Տրիդէնթինոյ» աշխատությունը: Ընդօրինակված է այն Եվդոկիայում Հակոբ դպրի կողմից Պոլսի Հակոբ Նալյան պատրիարքի պատվերով: Ձեռագրի չափածո հիշատակարանում գրչության թվականը հայտնված է հետևյալ գաղտնագրությամբ.

Ի թվականիս հայկա սեռի,
Երկեակ մեծ շրջանի,
Եւ ամուլ Հոմերոսի,
Եւ քառեակ Պորփիւրի,
Եւ երկեակ Պղատոնի,
Եւ քնարիկն Դաւթի,
Եւ մու թուիկ ընդ երկուսի,
Սոքօք գծիւս այս կատարի,
Արդ աղաչեմ հայրքդ բարի,
Որ հանդիպիք սոյն մատենի,
Ներել իմում սղալանքի...
Ի սէր փրկչի կենարարի: (Ղալ., սյուն. 302)

Կյուլեսերյանը նշել է, որ «Ձեռագիրս կարևոր հիշատակարան մը չունի. կարևոր տեղեկություններ դրված են արդեն գրքի ճակատը։ Վերջընթեր թուղթին վրա կա ոտանավոր մը»։ Պարզվում է, որ Կյուլեսերյանի մատնացույց արած այդ ոտանավորը գաղտնագրություն է ձեռագրի գրչության թվականի մասին, որի հետ ծանոթ չէ Կյուլեսերյանը։

Ծածկագիրն ուշագրավ է նրանով, որ պարունակում է թվական արժեքով գործածված մի քանի անուններ, որոնք առաջին անգամ են հանդիպում. «Հոմերոս»-ը գործ է ածված 12 թվանշանի համար, «ամուլ թիվը»՝ 7-ի, «Դաւթի քնարը»՝ 8-ի, «Պղատոնը»՝ 6-ի։

Վերծանենք ծածկագիրը. «երկեակ մեծ շրջանին». մեկ շրջանը 532 է, երկու շրջանը՝ 1064։ «Ամուլ Հոմերոսի». «ամուլ» թիվը 7 է, իսկ «Հոմերոսը»՝ 12, յոթը բազմապատկած 12-ով, կլինի 84։ «Պորփիւրը» 5 է, չորս «Պորփիւրը»՝ 20։ «Պղատոնը» 6 է, «երկեակ Պղատոնը»՝ 12։

«Դաւթի քնարիկը»՝ 8։

«Մու թուիկ ընդ երկուսի»՝ 3։

Գումարելով նշված այս բոլոր թվերը, ստանում ենք 1191 (1064+84+20+12+8+3=1191)։ Քանի որ նշվում է, թե տրված թվականը հայկական է, ուստի 1191-ին գումարելով 551, ստանում ենք 1742 (1191+551=1742)։ Ի դեպ, Հակոբ Նալյանը Պոլսի աթոռի պատրիարքն է եղել 1741—1749 թթ.։

Մեր ստացած այս թվականի ճշտությունը ստուգվում է նույն ձեռագրում եղած մի այլ հիշատակարանից, ուր ասված է. «Միջնորդութեամբ գծագրել տուողի գրգույս՝ մեծաւ հոգաբարձութեամբ Յովհաննիսի վարդապետի Կոստանդնուպօլսեցւոյ, ի քաղաքն Եւդոկիոյ յամի տեառն 1742» (Ղալ., սյուն. 301)։

* * *

Մեզ է հասել տաղերգու Խաչատուրի (Խասպեկի) ընդօրինակած մի ձեռագիր, որն այժմ գտնվում է Փարիզի ազգային մատենադարանում և գրանցված է Հայկական ժողովածուի 61 թվահամարի տակ։ Ձեռագրում գրչության տարեթվի մասին կա չափածո հիշատակարան, ուր հետևյալն է ասված ծածկագրով.

Ի թուականութեանս հայազուն սեռի
Եւ յաքեթական տումարի
Քսան և երկու յոբելինի
Եւ միակ եւթն և տասնեկի։ (Mac. 30)

Մակլերը հրատարակել է այս հիշատակարանը, սակայն դժվարացել է վերծանել, հավանական է, «յոբելեան»-ի թվահաշիվը չգիտենալու պատճառով։ Ծածկագիրը վերծանվում է այսպես. քսան և երկու հոբելյանը հավասար է 1100-ի, որին գումարելով պահանջվող 17-ը և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1668 թվականը. (1100+17+551=1668)։

Փարիզի ազգային մատենադարանի ձեռագիրը, ինչպես պարզվում է, գրված է 1668 թվականին։

(Հրատ. ԲԵՀ, 1967, № 1, էջ 205, ՀԳԳ, էջ 168)։

* * *

Ազգագրագետ Լալայանը՝ Վասպուրականի «Ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Վանի Արարուց եկեղեցու 16 ձեռագրի հիշատակարանները, որոնցից մեկը չափածո է, գրված Կարապետ գրչի կողմից և պարունակում է գրչության ծածկագրված հետևյալ թվականը.

Ի թվականիս միրոմ հազար,
Հընգեակ յոբել ձըգեա ի շար,
Ժէ և կոյս տեառն առցես համար,
Թիւ ամացս լիցի կատարեալ։ (Լալ., սյուն. 337)

Լալայանը հարցականով վերծանել է այս ծածկագիր թվականը և ստացել 1577։ Նա ծանոթ չի եղել «կոյս» բառի թվական արժեքին։ Հիշատակարանը, ինչպես պարզվում է, գրված է 1577 թվականից բավականին ուշ։ Վերծանությունն այս է. վերցնում ենք հազարը, գումարում հինգ հոբելյան, այսինքն 250, ստացված թվին ավելացնում ենք հանձնարարվող 17-ը և «կոյս» թիվը, այսինքն՝ 7-ը, ստանում ենք 1274 (1000+250+17+7=1274), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1825։ Որ մեր այս վերծանությունը ճիշտ է, այդ երևում է տվյալ հիշատակագրի միջանկյալ մի այլ տեղեկությունից, ուր ակնարկվում է, որ ձեռագրի նախագաղափար օրինակը, որից ընդօրինակվել է տվյալ ձեռագիրը, գրված է 1421 թվականին՝ չորս հարյուր տարի առաջ. նախագաղափար ձեռագրից չորս հարյուր տարի հետո ընդօրինակվող ձեռագիրը, բնական է, որ պետք է համապատասխանի 19-րդ դարի քսանական թվականներին։

* * *

Զմմառի մատենադարանի «Ձեռագրաց ցուցակում», 614 թվահամարի տակ, հրատարակվել է ձեռագրի գրչի՝ Ղափանի Վանքի գյուղացի Տեր-Աստվածատուրի որդի Մխիթար Ղափանցու հիշատակարանը, ուր նա ծածկագիր հայտնում է իր ծննդյան թվականը։ Ցուցակի հրատարակողները փորձ չեն արել այն վերծանելու։

Թվին Ռ հարիւր եօթանասնի,
Ամսեանն փետրվարի օր երկրորդի,
Սուրբ Սարգսին ի բասեկի,
Եւ յաւուրն ի հինգշաբթի։
Կենդանակերպ ու Ջրհոսն ասի,
Եւ ի Ջրհոսն անուանակոչի.
Ի թիւ ծննդեանս է սա որ ճառեցի,
Իմս Մխիթար և դրոմալի,
Եւ ծընանելն իմ սուրբ աւազանին,
Ի հինգշաբթի յետ ութօրէի։ (Զմմառ, II, էջ 218)

1721 թվականին սուրբ Սարգսի տոնը եղել է փետրվարի 4-ին, շաբաթ օրը, իսկ Առաջավորաց բարեկենդանի պահքի հինգշաբթի օրը, իսկապես, եղել է փետրվարի երկուսը։ Հիշատակարանում սակայն սխալ է տարվա կեն-

դանակերպը Ջրհոսը համարելը, որովհետև տվյալ տարում կենդանակերպը հանդիսացել է Խոյը։

Ի դեպ, «Ձեռագրաց ցուցակ» կազմողները սխալմամբ Մխիթար Ղափանցու ծննդյան թվականը համարել են ձեռագրի գրչության թվականը։ Գրչության թվականը շատ պարզ շարադրված է հիշատակարանի վերջին քառյակում.

Սայ է աղօթագիր խիստ պիտանի։
Թվին Ռ, հարիւր ինիսուն և վեցի,
Ամսեանն սեպտեմբեր օրն առաջի… (Նույն տեղում)

Հետևապես, Ջմմառի տվյալ ձեռագիրը գրված է ո՛չ թե 1721-ին, այլ՝ 1747 թվականին։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 107—108)։

* * *

Ն. Ակինյանը և Հ. Ոսկյանը «Ջմմառի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում հրատարակել են № 594 ձեռագրի հետևյալ չափածո հիշատակարանը.

Ջի էր թիւ Հայկա մեծին[19],
Ըսկիզբն Թուոյ մինչև վերջին,
Դու կրկնես ընդ խե տարին,
Իննեակ Թուով վերայ բարդին։ (Ջմմառ, II, էջ 204)

Ցուցակի հրատարակիչները փորձել են վերծանել տվյալ ծածկագիր թվականը, բայց՝ անհաջող։ Նրանք հիմք են վերցրել Ազարիա Ջուղայեցու թվականը՝ 1615, նրան գումարել խե տարի թվական արժեքի կրկնակին՝ 80, պահանջվող «իննեակը» և թվաբանական սխալ հաշիվ կատարելով ստացել 1694 թ.։ Հրատարակիչները այնքան էլ վստահ չեն եղել իրենց վերծանության վրա, ուստի վերծանած թվականի մոտ հարցական նշան են դրել։ Նրանք թույլ են տվել մի հակասություն ևս տարեթվի հարցում. հիմք ունենալով նույն ձեռագրում եղած մի այլ հիշատակարան, ձեռագրի նկարագրական հարակարգում գրչության թվականն են համարել 1748-ը։

Տվյալ քառյակում թվականը ծածկագրված է «Հայկա մեծի» բառերի մեջ, որը գումարգիր է և վերծանվում է. Հ(70)+ա(1)+յ(300)+կ(60)+ա(1)+մ(200)+ե(5)+ծ(50)+ի(20)+ն(400)=1107։ Սրան գումարում ենք 80 (խե տարի կրկնակը), ինը, հայկական թվականի տարբերությունը՝ 551, և ստանում 1747 (1107+80+9+551=1747)։

Այս վերծանությունն ստուգվում է տվյալ ձեռագրում եղած այլ հիշատակարանով, ուր ասված է. «Շարիմէնց Յարութենի որդի Քամենենց ծառայ Գրիգորս գրեցի թվին ՃԼԱ (131) արամ ԺԲ (12) Ըսպահան»։ Տվյալ թվականը Ազարիա Ջուղայեցու թվահաշվով է, ուստի 131-ին գումարելով 1616, ստանում ենք 1747, այսինքն այն թվականը, որը և գաղտնագրված է։ Ինչ վերաբերում է Արամ ամսի 12-ին, ապա այն զուգադրվում է դեկտեմբերի 27-ի հետ։

[19] Նկատի ունի Հայկական մեծ թվականը։

Այսպիսով, պարզվում է, որ Ջմմառի № 594 ձեռագիրը գրված է 1748 թվականին։

(ԲԵՀ, 1972, № 1, էջ 110—111)։

* * *

Ջմմառի մատենադարանի № 220 ձեռագրի գրչության թվականը գաղտնագրված է տոմարաթիվ չափածո հետևյալ հիշատակարանում.

Յամի փրկչին իսկ մեր ազնի,
Որ առ միմեանս շարահիւսի,
Վայելչապէս Ե շրջանի,
Աղոն հոբելեան, Ե ընդ նմին,
Նաև եռեակ սուն ներ նմին,
Է և Թուոյն երկից կուսին,
Սարսիմ աւել վասն միոյն,
Ի լրանալ լինիլ Թուոյն
Փառս տացուք միշտ անհնոյն։ (Ջմմառ, I, 529)

Երրորդ տողում մեծատառ գրված «Ե»-ն, իրականում «է» օժանդակ բայն է, որը կա՛մ գրչական սխալ է, կա՛մ տպագրական։

Հիշատակարանը հրատարակված է «Ջմմառի ձեռագրաց ցուցակի» առաջին հատորում, բայց չի վերծանված։

Ըստ այդ ծածկագիր-հիշատակարանի, ձեռագրի գրչության թվականի մեջ մտնում է ՇԼԲ շրջանը՝ 532, ադոնը՝ 10, տասը հոբելյանը, այսինքն 500 (10×50=500), նրանց գումարած հինգ («Ե ընդ նմին»), երեք («եռեակ սուն ընդ նմին»), երկու «կոյս» թիվ (երկու 7-ը հավասար կլինի 14-ի) և մեկ («սարսիմ աւել վասն միոյն»)։ Այս թվերն ի մի գումարելով ստանում ենք 1055 (532+500+3+5+14+1=1055), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1606։

Այսպիսով, վերծանությունից պարզվում է, որ Ջմմառի ձեռագիրը գրված է 1606 թվականին։

(Հրատ. ՀԳԳ, էջ 167)։

* * *

Նույն մատենադարանի № 485 ձեռագրում, որը իմաստասիրական նյութերի ժողովածու է, գրված Հովհաննես աբեղայի կողմից, կա ծածկագիր թվական պարունակող չափածո հետևյալ հիշատակարանը.

Երիս երրեակ եւ եզակի,
Այսքան հարիւր թվին հայի,
Նոյնքան եօթնիցն եօթն աւելի,
Սակաւ բանիս այս յարմարի,
Ի մուտ ամսին ապրիլի,
Որ Ղազարու շաբաթ կոչի,

Եւ շամշ ամսին կրկին վեցի,
Եղև գրաւ դոյն այս բանի։
Ո՛վ դու եղբայր իմ ցանկալի,
Պօղոս պըվէտ քաջ և արի,
Ընկալ սիրով անդրժելի,
Ի դանձ ըղձոյդ ըստ լո[ւ]մայի։ (Զմմառ, II, էջ 80)

Ծածկագրով այս հիշատակարանը հրատարակել են Զմմառի մատենադարանի «Ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում և վերծանել հետևյալ ձևով. երեքը բազմապատկել են երեքով և ստացել ինն, նրան գումարել են մեկ և ստացածը բազմապատկել հարյուրով, ստացել են հազար, ավելացրել են 77 ու հայկական թվականի տարբերությունը և ստացել 1628 ($1000+77+551=1628$), որը և համարել են ձեռագրի գրչության թվականը։

Այս վերծանությունը բացահայտ սխալ է։ Դրանում դժվար չէ համոզվել՝ նկատի ունենալով «Ղազարու շաբաթ» տոնի հիշատակությունը։ Այդ տոնը, ըստ հիշատակարանի, եղել է ապրիլի սկզբին («ի մուտ ամսին ապրիլ»), որը և ճշտությամբ համապատասխանում է Ազարիա Ջուղայեցու շամշ ամսի 12-ին։ Ս. Ղազարի տոնը, ըստ տոմարական անվիճելի հաշվումների, լինում է ծաղկազարդի նախորդ շաբաթ օրը, իսկ 1628 թվականին զատիկը եղել է ապրիլի 13-ին, Ղազարի տոնը՝ ապրիլի 5-ին, որը և չի համադրվում հրատարակիչների վերծանած թվականի հետ։

Վ. Հակոբյանը և Է. Պիվազյանը մեր «Հայ գիր և գրչություն» աշխատության առթիվ գրած գրախոսականում մատնացույց արեցին այդ նույն ծածկագրի մի այլ տարբերակ, որը հրատարակված է «Հանդէս ամսօրեայ» (1947, էջ 121) և «Սիոն» (1963, № 1, էջ 14) պարբերականներում, ուր ծածկագրի երկրորդ տողն ունի «Նոյնքան եօթնից հինգն աւելի»։ Այդ տարբերակը, դժբախտաբար, վրիպել է մեր ուշադրությունից։

Նոր տարբերակը մեզ հնարավորություն է տալիս վերանայել մեր նախկին վերծանությունը և համաձայնելով մեր ընդդիմախոսներին, առաջարկել հետևյալ վերծանությունը. $3\times3+1=10$ («Երիս երրեակ և եզակի»), $10\times100=1000$ («Այսքան հարիւր թիւն հայի»), $7\times10=70$ («Նոյնքան եօթնից»), նրան գումարած 5 («հինգն աւելի»)։ Ի մի բերելով այս թվերը, ունենում ենք 1626։ Այդ թվականին զատիկը եղել է ապրիլի 9-ին, ծաղկազարդը՝ ապրիլի 2-ին՝ կիրակի, իսկ Ղազարի հարության օրը ծաղկազարդից մեկ օր առաջ՝ շաբաթ օրը։

Այսպիսով, Զմմառի № 485 ձեռագիրը գրված կլինի ո՛չ թե 1628 թվականին, այլ՝ 1626։

(Հրատ. 1973, № 1, էջ 107—108)։

* * *

«Արեգական վախճան գունդը» 1064-ի և «կոծնոսը» մեկ հազարի թվական նշանակությամբ գործ է ածված Անկյուրիայի № 105 ձեռագրի տոմարաթիվ չափածո ծածկագրում։ Այնտեղ հինգ չափածո քառյակների մեջ ծածկագրված է 1654 թվականը։ Ծածկագիրը հրատարակված է Կյուլեսերյանի կազ-

մած Անկյուրիայի ձեռագրերի ցուցակում, բայց չի վերծանված։ Տոմարաթիվ այդ ծածկագիրը հետևյալն է.

ԿԸ (68) է ամք մարդոյ սահմանական,
Բարդեալ լիցի ընդ վեշտասան
Ընդըքտիոն որոշական,
Կալցի քանակ թիւ հայկազան։
Երեքտասան ընդ հազարաց,
Մակ հնգետասան վեցից տասանց,
Ամսովք այսքան ամանակաց,
Աւարտի թիւ Հայոց ազգաց։
Արեգական վախճան գնդի,
Եռապատկեալ ընդ տասնեկի,
Ընդ բոլորին մասնիկ առցի,
Եղանի թիւ հայկեան զարմի։
Ոլիմպիեաթ երկերիրեակ,
Վեց յոբելեան ընդ մու հընկեակ,
Եթէ առցին միահամակ,
Հայկեան լինի թըւոյ քանակ։
Շրջապատումն Կոծնոսի,
Վեցից վեցեակ և մակ նոյնի,
Յորմէ ի բաց առեալ հընկի,
Բաղկանայ թիւ արամազնի։ (Անկ., սյուն. 538)

Բնագրում կատարված են մի քանի ուղղումներ՝ հիմք ունենալով հաջորդ քառյակների չորս հաշվումները։ Առաջին տողում ԿԸ թվականի փոխարեն հրատարակված բնագրում «թէ» է, որն անիմաստ է։ Երկրորդ տողում «ընդ»-ի փոխարեն հրատարակված բնագրում «ըստ» է։ Երկրորդ քառյակի առաջին և երկրորդ տողերը բնագրում կարդացվում են. «Երեք տասան ըստ հազարաց,
Մակ հարիւրոց վեցից տասանց»։
Ծածկագիրը վերծանվում է հետևյալ կերպ.
Ա. մարդու տարիքը՝ 68, բազմապատկելով 16-ով, ստանում ենք 1088
($16\times68=1088$)։ Ստացած թվականին գումարում ենք մեկ ընդիքտիոն՝ 15,
ստանում ենք 1103, որին գումարելով հայկական թվականի տարբերությու-
նը, ստանում ենք 1654 ($1103+551=1654$)։
Բ. Տասներեքը գումարում ենք հազարին և ստանում 1013։ Ստացած
թվականին ավելացնում ենք «մակ հնգետասան», այսինքն՝ երկու հնգետա-
սան՝ 30, ստանում ենք 1043։ Սրան գումարում ենք 60 («վեցից տասանց»),
լինում է 1103։ Վերջինիս գումարելով հայկական մեծ թվականի տարբերու-
թյունը՝ 551, ստանում ենք 1654 թվականը ($1103+551=1654$)։
Գ. «Արեգական վախճան գունդը» ծածկագրողն ընդունել է 1064, տասնյակը եռապատկելով, ստանում ենք 30, «բոլորն» ընդունելով 4, իսկ «մասնիկը»՝ 5, և գումարելով իրար, ստանում ենք 1654 ($1103+551=1654$)։
Դ. Մեկ ոլիմպիադը բազմապատկելով երկու հարյուրով, ստանում ենք 800, նրան գումարելով վեց հոբելյան, այսինքն՝ 300($6\times50=300$), և մեկ

հնգյակ, ստանում ենք 1105, որից պահանջվում է հանել երկու («մակ»-ը՝ 2 է. այստեղ «միահամակ» ասելով նկատի ունի մեկ հատ երկու), ունենում ենք 1103, նրան էլ գումարելով 551, ստանում ենք 1654 (1103+551=1654)։

Ե. «Կոռնոս»-ին՝ 1000-ին, գումարելով 36 («վեցից վեցեակ») և նույնի կրկնակը՝ 72 («մակ նոյնի»), ունենում ենք 1108, որից հանելով հինգ («ի բաց առեալ հընկի»), կունենանք 1103, նրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1654 (1103+551=1654)։

Հինգ քառյակների մեջ գաղտնագրված թվականները, ինչպես տեսնում ենք, համապատասխանում են իրար. ծածկագրված է 1654 թվականը։ Ծածկագիրն ուշագրավ է նրանով, որ առաջին անգամ է մեզ հանդիպում «արեգական վախճան գունդը» 1064-ի և «կռոնոսը» մեկ հազարի նշանակությամբ։ Տարբեր հաշվումներով ծածկագրված նույն թվականը հնարավորություն է ընձեռում մեզ ծածկագրում նկատվող գրչական որոշ ուղղումներ կատարել։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 111—112)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրում գաղտնագրըված է նաև եբրայական մի թվական բավականաչափ բարդ հաշվումով։ Բերում ենք այն ամբողջությամբ.

Մասամբք քերթօղի նէնոս հարիւրի,
Իննսուն ընդիքսոս և իննեակ հաշվի,
Նաև թրիթակնաւ միով զուգակցի,
Արիստոտէլիւ ի մուիւ յոբելեան զուգի,
Սըմին ընդոծին առած Պորփիւրի,
Էյ իմաստակ այս թիւ եբրայականի,
Բամեալ ընդ սոյնց հաշիւ Ժ.ըն յօնսայի,
Էլ ոմպիաթք եռեակս գտաք հաւաստի,
Ցըայս վայր յինդոսէն թիւ մի պակասի,
Պակասն կատարտի անոսամբ Մինասի։
Հաշվակիցս արասցես մեծի շրջանի
Երկ փոքրերիկ շրջանիւ եկտի կրկնակի
Հաւատ, յոյս և սէր հաշիմ ընկրկի,
Եօթն ՌՇ.եակ ւ քառեակ մի,
ՃԿ թվիկն յետսն ընկրկի։ (թ. 356բ)

«Քերթողական մասերը» 8 են, իսկ նենոսը՝ 5. ութը բազմապատկած հինգով, այսպ՝ հարյուրով, կլինի 4000։

Երկրորդ տողի «իննեակ» բառը թվագումար ծածկագիր է, որը հավասար է 886-ի (ի(20)+ն(400)+ն(400)+ե(5)+ա(1)+կ(60)=886), դրան գումարելով իննսուն և մեկ ընդիքսիոն՝ 15, ստանում ենք 991 (886+90+ +15=991)։

Թրիթակը հազար է։

Արիստոտելը 10 է, երկու Արիստոտելը՝ 20, որը բազմապատկելով «յոբելեան թուով», կստանանք 1000։

«Պորփիւրը» 5 է, տասը «Պորփիւրը»՝ 50։

Յոնսան երեք է, տասը յոնսան՝ 30, որին ավելացնելով 8, ստանում ենք 38։

Գումարելով տրված բոլոր թվերը, ստանում ենք 7079 (4000+991+ +1000+1000+50+38=7079)։

Ոլիմպիադը 4 է, երեք ոլիմպիադը՝ 12։

«Ինդոսը» 8 է, մեկ միավոր պակաս վերցնելով, ունենում ենք 7։

«Մինաս» անունն այստեղ տառանիշերի քանակի համար է գործածված, այսինքն՝ հինգի։ Առջևի թվանշանների հետ միասին հավասար է 19-ի (12+ +7+5=24)։

Մեծ շրջանը 532 է։

Փոքր շրջանը 28 է, որ կրկնելու դեպքում կունենանք 56։

«Եկտին» երկուս է, նրա կրկնակին կլինի 4։

«Հաւատ, յոյս, սէրը» 12 է, նրա կրկնակին կլինի 24։ Գումարելով իրար վերջին թվերը, ստանում ենք 616 (532+56+4+24=616)։ Իրար գումարելով երեք խումբ թվականները, ստանում ենք 7719 (7079=24+616=7719)։ Ստացված այս թվից առաջարկվում է հանել 160 թվականը, մնում է 7559. ահա այս է պահանջվող եբրայական թվականը։

Եբրայական մի քանի թվականներ կան, տվյալ դեպքում օգտագործված է մեր թվականությունից 5736 տարի առաջ սկսվող տարեթիվը։ Եբրայական այդ թվականը ներկա թվականի վեր ածելու համար 7559-ից հանում ենք 5736 և ստանում 1823։

(Հրատ. ԲԵՀ, 1973, № 1, էջ 114—115)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1541 ձեռագրում գրի է առնված արեգակի խավարման մի դեպք, որը կարևոր է հայկական տոմարական հաշվումների համար.

Ի յութ հարիւր Հայոց թուական,
Ընդ որ և հինգ եւթն յաւելան,
Յունվարի մի պահք Յայտնութեան,
Լոյսն արևուն խաւարեցան։
Մեծն վարդապետն անուն Յոհան.
Որ եւ կախիկ անուն ծնընդեան,
Յետ վեց աւուրն խաւարման,
Փոխի առ տէրն իւր անձկական... (Եղմ., V, էջ 299)

Ըստ հիշատակարանի, արեգակի խավարումը տեղի է ունեցել ութ հարյուր թվականին, նրան գումարած հինգով յոթի բազմապատիկը (35)՝ ստանում ենք 835։ Չնայած Պողարյանը խավարման փաստի վրա ուշադրություն չի դարձրել, բայց վերծանումը ճիշտ է կատարել։

Հայկական մեծ թվականը ներկա թվականի վերածելու համար անհրաժեշտ է գումարել 551, ստանում ենք 1386։ Օպպելցերի հայտնի խավարում-

ների ցանկից երևում է, որ, իրոք, 1386 թվականի հունվարի 1-ին, ժամը տասից 14 րոպե անց տեղի է ունեցել խավարում։ Այդ տարում հայկական ամանորը՝ նավասարդի մեկը, եղել է դեկտեմբերի 15-ին։ Հայկական թվականը գտնելու համար պետք է լինում երբեմն գումարել 551 կամ 552։ (Խավարման այս անվիճելի տվյալով այն տեղի ունեցած լիներ դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում, այն դեպքում անհրաժեշտ կլիներ հայկական մեծ թվականին գումարել 552)։

Ի դեպ, այս խավարման մասին հիշատակություն կա նաև Մաշտոցի անվան մատենադարանի № 3613 ձեռագրում, որը հրատարակել է Վ. Հակոբյանը։ Այնտեղ ասված է. «Յամի տեառն ՌՅՁԶ (1386) յունվարի Ա (1), օրն երկուշաբթի, լուսնագիրն Ա(1), տանուտէրն Յուլն, արեգակ[ն] դարձեալ խաւարեցաւ»։ 1386 թվականին հունվարի մեկը, իրոք, եղել է երկուշաբթի, տարվա տանուտերը եղել է Յուլը, իսկ լուսնագիրը՝ մեկը։

Նախորդ հիշատակարանը արժեքավոր է նրանով, որ տեղեկություն է պարունակում հայ աչքի ընկնող մատենագիրներից մեկի՝ Կախիկ մականուն ունեցող Հովհաննեսի, մահվան մասին, որը տեղի է ունեցել արեգակի խավարումից վեց օր հետո, այսինքն՝ 1386 թվականի հունվարի 7-ին։

(Հրատ. ԲԵՀ, 1973, № 1, էջ 108)։

* * *

Վենետիկի մատենադարանի ձեռագիր Աստվածաշունչերից մեկի չափածո հիշատակարանում գրչության մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդված.

Աւարտ եղև Ա[ստուա]ծաշունչս այս սիրական
Հին և նոր կտակարանքն լիական.
Թուականիս Հայոց մեծաց և աբեթեան
ՌԿԸ յաւելի յարաբարդեան.
Ի յամսեան ի յապրելի ըստ հռոմեական
Որ վեշտասան եղև զատիկ մեր Հայկական,
Ի յերկիրս յԸռուզայ և Լեհաստան
Ի քաղաքս ա[ստուա]ծախնամ Լով կոչական...
Հայրապետիս մերոյ ազգիս Աբեթական,
Տէր Մելիքսէթ կաթողիկոսն Արևելեան։

Ծածկագիրը, հայկական ՌԿԸ (ներկայիս 1619) թվականի տակ, հրատարակել է Գ. Զարբհանալյանը։

Ծածկագրում նկատվում է գրչական սխալ. ՌԿԸ (1619) թվականին զատիկը եղել է ո՛չ թե ապրիլի 16-ին, ինչպես նշվում է հիշատակարանում, այլ մարտի 28-ին։ Ապրիլի 14-ին զատիկ է եղել հայկական ՌԾԸ թվականին, այսինքն՝ ներկայիս 1609 թվականին։ Մեր կարծիքով, բնագրում տեղի է ունեցել գրչական սխալ. ՌԾԸ-ն աղավաղվել է ՌԿԸ-ի։ Ծ-ի և Կ-ի աղավաղումն է, որը հայ գրչագրության մեջ հաճախ է պատահում։

* * *

Ե՞րբ է գրվել Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը։ Ըստ հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած տեսակետի, այն գրվել է 1299 թ.[20]։ Մեր ուսումնասիրությունից սակայն պարզվեց, որ քաղաքացիություն ստացած այդ թվականը սխալ է, որն առաջացել է քրիստոնեական թվականը ոչ ճիշտ հաշվելու հետևանքով։ Իրականում, Օրբելյանի Պատմությունը գրված է 1297 թ.։

Օրբելյանն իր Պատմության գրության ժամանակի մասին խոսել է գրքի հիշատակարանի մեջ, որը վերնագրված է. «Յիշատակարան մատենիս նորին Ստեփաննոսի»։ Գրության թվականի մասին այդ հիշատակարանում հետևյալն է ասված. «Արդ՝ յարմարեալ այս հանդէսք բանի շարագրեցաւ... ի թուաբերութեան անժամանակ բանին ՌՄՂԹ (1299), և ըստ հայումս՝ ի ԺԴ (14) յոբելենին և ԽԶ (46) համարին, ի ՃՁԶ (186) ոլիմպիադին և յերկրորդ ամին, ի յիսուն ընդիքտիոնին պակասեալ թուով, իսկ ըստ քանևութնեակ շրջանի արեգականն միոյ հինգհարիւրեկին յՄԺԴ (214) թուին»[21]։ (Հրատարակության մեջ թվականները բերված են ներկա թվանշաններով, իսկ մենք, հետևելով ձեռագրերին, այն դարձրինք հայկական տառանիշերով)։

Հիշատակարանում հայկական թվական է հիշված 14 հոբելյան գումարած 46։ Մեկ հոբելյանը 50 տարվա շրջան է, 14 հոբելյանը հավասար կլինի 700-ի, նրան գումարած 46 և 551՝ հայկական թվականի տարբերությունը, կունենանք 1297 $(50\times14+46+551=1297)$։

Օրբելյանի մոտ ոլիմպիադի թվահաշվով Պատմության գրելու տարեթիվն է 186 ոլիմպիադ և վրան ավելացրած երկու տարի։ Մեկ ոլիմպիադը հաշվվում է չորս տարի, 186 ոլիմպիադը հավասար կլինի 744-ի $(186\times4=744)$, որին գումարելով նշված երկու տարին և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1297 թ.։

Հիշատակարանում Պատմության գրության տարեթիվը հաշված է նաև ընդիքտիոնի։ Սակայն, հավանական է, ընդօրինակող գրիչների անփույթության հետևանքով, Օրբելյանի հիշատակարանում առաջացել է փոքրիկ մի սխալ, որը հնարավոր է լինում ուղղել մյուս թվականների հետ զուգադիր հաշվումների հիման վրա։ Օրբելյանի մոտ ասվում է, որ Պատմությունը գրվել է «յիսուն ընդիքտիոնի պակասեալ թուով», այսինքն՝ հիսուն ընդիքտիոն, նրանից հանած ինչ-որ մի թիվ, բայց կոնկրետ ի՞նչ թիվ, այս է որ բաց է մնացել։ Պարզվում է, որ այդ թիվը եղել է 4-ը։ Նախադաղափար օրինակում այդ նախադասությունը եղած պետք է լիներ. «Ծ ընդիքտիոնի և Դ պակասեալ թուով»։ Ընդիքտիոնը 15 տարի է, 50 ընդիքտիոնը հավասար կլինի 750 տարվա, նրանից հանելով 4-ը և գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք դարձյալ 1297 $(50\times15-4+551=1297)$։

Հիշատակարանում Պատմության գրության ժամանակը մատնացույց է արված նաև ներկա թվականով՝ ՌՄՂԹ, այսինքն՝ 1299։ Մ. Աբեղյանը վերց-

20 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 214։

21 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 507։

րել է միայն այս 1299 թ., շրջանցելով բերված տոմարական մյուս հաշվումները, ըստ երևույթին, ծանոթ չլինելով այն հանգամանքին, որ այստեղ հիշված «փրկչական» թվականը ոչ թե ներկայումս գործածվող թվականով է հաշված, այլ հայկական տոմարական հաշվով, որի դեպքում տրված թվից անհրաժեշտ է հանել երկու տարի։

Վերևում բերված հիշատակարանի բոլոր հաշվումները կատարելուց հետո ստանում ենք.

Հոբելյանի թվականով՝ $50\times14+46+551=1297$։
Ոլիմպիադի թվականով՝ $186\times4+2+551=1297$։
Ընդիքտիոնի թվականով՝ $50\times15-4+551=1297$։
«Փրկչական» թվականով՝ $1299-2=1297$։

Հիշատակարանի ՄԺԴ (214)-ն փոքր թվականն է, որին գումարելով 1093, ունենում ենք 1297։

Այսպիսով, պարզվում է, որ Օրբելյանի Պատմությունը գրված է ոչ թե 1299 թվականին, այլ՝ 1297-ին։

(Հրատ. ՊԲՀ, 1970, № 3, էջ 103—105)։

* * *

Տիրայր եպիսկոպոսը Օքսֆորդի մատենադարանի հայկական ձեռագրերի ցուցակում նկարագրել է № 2 ձեռագիրը, որը «Սաղմոսարան» է՝ գրված Սիմոն երեցի կողմից, Լվով քաղաքում, Դավիթ քահանայի պատվերով։ Հիշատակարանում ծածկագրված է գրչության թվականը. «Արդ՝ եղև գրաւ սուրբ գանձարանիս յամի շրջագայութեան արամազեանս տոհմի, Հայկազեան սեռի, աբեթական տումարի ի ԻԱ (21) յոբէլէնի և իններորդ յարաբարդի, օճոստոս ամսոյ Ի և Ե.երորդի, օրն շաբաթի, ի աշխարհն Իլախաց, ի քաղաքս Լվով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, փառնգաց ազգի թագաւորութեան Երրորդ Զիկմունդին» (Տիր. էջ 23)։

Վերծանել է Տիրայր եպիսկոպոսը ($21\times50+9+551=1610$)։
(Հրատ. ՀԶՀ, ԺԷ դ., I, էջ 388)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 8587 ձեռագրում, որը «Մանրուսմունք» է, ընդօրինակված Գեորգ գրչի կողմից, Հակոբ կրոնավորի պատվերով, գրչության թվականը հայտնվում է հետևյալ չափածո ծածկագիր հիշատակարանում.

Շնորհաւք աջոյն հաւրն անեղի...
Ի յանկ հանի զայս երկ բանի,
Որ մանրուսումն յորջորջի,
Ի հայկազնեա թուականի,
Ի վեշտասան յիսնից ամի,
Եւ ի նորին գոլ շրջանի
Ի քսաներորդ երկրորդ թուի,
Զեռամբ յոգնամեղի,
Որոյ անունս Գէորգ կոչի... (թ. 222բ—223ա)

Ծածկագիրը հիշատակարանի հետ հրատարակել է Խաչիկյանը «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» մեջ և վերծանել (Հիշ. ԺԴ դ., էջ 511)։

Տվյալ ծածկագրում ուշագրավ է շրջանի գործածությունը («Եւ ի նորին գոլ շրջանի»). այստեղ շրջանը գործ է ածված հայկական մեծ թվականի հագով, որի հիմքում իրոպես ընկած է Ալեքսանդրիայում կազմված ՇԼԲ պարբերաշրջանը։ Այդ մոտեցմամբ ծածկագիրը կվերծանվի. 16-ը բազմապատկելով հիսունով, ստանում ենք 800, նրան գումարելով 22 և հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1373 թվականը ($800+22+551=1373$)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1456 ձեռագիրը, որն ունի XVII—XVIII դարերի գրչություն, պարունակում է Արիստակես Խարբերդցու «Վասն ծառաստկին Յու[յ]նի...» խորագրով չափածո մի տաղը, ուր հիշվում է անցյալում տեղի ունեցած ծառազատկի մի քանի դեպք, որոնցից մեկը՝ սխալ։ Ծառազատկի սխալ հիշատակությունը հանդիպում է հետևյալ քառյակում.

Թէ ըստ Հայկազեան տոմարի,
Ութ հարիւր եռսուն եւ վեցի,
Ծըռատօն զատկաց Հոռոմի,
Ազգն յունաց խրթներեսի... (Եղմ., V, էջ 153)։

Արիստակես Խարբերդցու այս տաղը հրատարակված է Պողարյանի «Ձեռագրաց ցուցակում»՝ առանց վերծանության։ Տոմարագիտական ճիշտ հաշվումներից հայտնի է, որ հայկական մեծ թվականի 836-ին (=1387) ծռազատիկ չի եղել։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 4253 ձեռագրի գրչության թվականը գաղտնագրված է հետևյալ երկու տողի մեջ.

Եռաչափեալ ըստ շաբաթու թիւ յոբելեան,
Եղեալ ընդ նոյնս թիւ կատարեալ եօթնաոական։ (թ. 157բ)

Ըստ այս հիշատակագրության, անհրաժեշտ է վերցնել շաբաթվա յոթօրերը եռապատկված, այսինքն՝ 21-ը, դա բազմապատկել հոբելյանով (50-ով), որով կստանանք 1050 ($21\times50=1050$), դրան պետք է գումարել հիսուն («եղեալ ընդ նոյն թիւ կատարեալ և հանել յոթ («յոթնաոական»), կլինի 1093 ($1050+50-7=1093$), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1644 ($1093+551=1644$)։

(Հրատ. ՀԳԳ, 164, ԲԵՀ, 1967, № 1, էջ 209)։

16—884

* * *

Նույն ձեռագրում ծածկագրված է մի այլ թվական ևս, միայն մեկ տառով պակաս.

Ի թիւ Հայկեան ներեզերեալ բարդեալ շրջան
Երկ ընդիքտիոն, յորմէ երկեակ ի բաց առման։ (Նույն տեղում)

Այստեղ շրջան ասելով, ծածկագրողը նկատի ունի 532 պարբերաշրջանը, որը բարդելու, այսինքն՝ կրկնելու դեպքում, կստանանք 1064։ Այս թվին պետք է գումարել երկու «ընդիքտիոն». մի «ընդիքտիոն»-ը 15 է, երկու «ընդիքտիոն»-ը կլինի 30, որը գումարելով նախորդ թվին, կստանանք 1094։ Սրանից պետք է հանել 2-ը («երկեակ ի բաց առման»), կլինի՝ 1092, իսկ սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1643։

(Հրատ. ՀԳԳ, 164, ԲԵՀ, 1976, № 1, էջ 209)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5199 ձեռագրում, որը XIV դարի գրչություն ունի, գրի է առնված հետագայի չափածո մի հիշատակագրություն Մելքոն իշխանի մահվան տարեթվի մասին։ Այնտեղ ասված է.

Ի թւին ազգիս մեր աբեթական,
Միակ հազար երկու հարիւրեան,
Եօթն զարիաթ մի թիւ աւելեան,
Ի դեկտեմբերի ամսոյ երեքեան,
Եղև մեզի մեծ սուգ տրտմական,
Մահտեսի Մելքոն մեծայշուք իշխան,
Փոխեցաւ առ տէր աստուածն էական... (265բ)

«Ցուցակ ձեռագրաց»-ում գրչության տարեթիվը հարցականով նշված է 1882, որ ճիշտ չէ։

Հիշատակագրության մեջ պահանջվում է վերցնել մեկ հազար, երկու հարյուր և յոթ (1207), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, կստանանք 1758։ Ըստ երևույթին, ցուցակ կազմողներին շփոթության մեջ է ձգել «զարիաթ» պարսկերեն բառը, որը տվյալ դեպքում ո՛չ թե թվանշան է, այլ «մասնիկ» բառը, և տվյալ տողի մեջ ունի «եօթը մասնիկ ավելացրած» իմաստը։

* * *

Վիեննայի Մխիթարյանների № 55 ձեռագրում Մելքիսեդեկ անունով մեկը զարդանկարել է ձեռագիրը և թողել չափածո մի հիշատակագրություն, որի մեջ գրչության թվականի մասին հետևյալն է հայտնում.

Ով վեհագոյն եղբայրք բարի...
Լերուք եւ ինձ քաղցունք բարի,

Առնել յիշման զիս արժանի,
Զմեղսամակարթս յոյժ եղկելի,
ԶՄելքիսեթեկ վա[տ]թարս մեղօք ի լի,
Որ եմ ծաղկող այսմ տառի։
Նայ եւս էր թիւն տումարին
ՌՃ (ութհարիւր) հայկեան ազգին,
Տինայ է Ժ (տասն) յաւելուածին,
Այլ եւս եւթն շարամանին։ (Տաշ., էջ 259)

Տաշյանը վերծանել է 1368 թվականով. վերցրել է 800-ը, նրան գումարել է 10 և 7, ստացել 1368 (800+551+10+7=1368)։ Բայց եթե «տինայ» բառից հետո «է» տառը համարենք ոչ թե օժանդակ բայ, այլ թվական, այսինքն՝ կարդանք «եօնևտասան»՝ այդ դեպքում ձեռագիրը գրված կարելի է համարել 1375 թվականին։

* * *

«Ադոն»-ը 10-ի և «Սաղեմ քաղաքը»՝ դարձյալ 10-ի թվական արժեքով գործ են ածված Մաշտոցի անվան մատենադարանի մեզ ծանոթ № 9646 ձեռագրի ծածկագրերից մեկում.

Մակդրեմ ասա թիւ Հռոմին,
Ադոնք հարիւր ասա շարադրին,
Նէնոսք եկտի յոբելեանին,
Ադոնք երկեակ տասնիւք զուգին,
Սաղեմ քաղաքն յուրախալին,
Քահանայս եօթն ամեան հաշվին,
Անդրէն դառնալս յիմս ընտանին,
Հասակս եռեակ տասն և հնգին,
Ազնիւ մըտօք յայս կարգ հանին։ (Թ. 356ա)

«Ադոն»-ը ընդունելով 10 և բազմապատկելով հարյուրով, ստանում ենք մեկ հազար (10×100=1000)։ «Եկտի նէնոսը», այսինքն՝ երկու նոնոսը, բազմապատկելով հոբելյանով, լինում է 500 (2×5×50=500)։ «Ադոն»-ը՝ 10 է, «երկեակ» ադոնը 20, բազմապատկած 10-ով, լինում է երկու հարյուր։ «Սաղեմ քաղաքն» ընդունելով 10 և բազմապատկելով յոթով, ստանում ենք 70, ավելացնում ենք ծածկագրողի տարիների թիվը, որը եղել է 35 «եռեակ տասն և հինգ»։ Տրված թվականները իրար հետ գումարելով և նրանց վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1805 (1000+500+200+70+35=1805)։

* * *

№ 9646 ձեռագիրը պարունակում է արեգակի, լուսնի և նրանց բազմապատիկը կազմող տոմարական պարբերաշրջանների հիման վրա կազմված ստորև բերվող ծածկագիր թվականը.

Նայսըմ կցեալ մեծ շրջանին,
Արեգ ընդ լուսնին փոքր շրջանին,
ՅԱրիստոտէլիւ կրկնաւ խզին,
Ի Պորփիւրիւ յետս ընկրկին։ (թ. 356ա)

«Նայսըմ» բառում կցված են «նա, յս, ըմ» տառերի անունները՝ վերցված թվերի իմաստով։ Նրանց թվագումարը հավասար կլինի 708-ի՝ ն (400)+ +յ (300)+ը (8)=708։ Դրան անհրաժեշտ է գումարել «մեծ շրջանը»՝ 532, «արեգակի շրջանը»՝ 28 և «լուսինը»՝ 19։ Տրված թվերը գումարելով, ստանում ենք 1287 (708+532+28+19=1287)։ Ստացած թվից պահանջվում է հանել կրկնակի «Արիստոտէլ» և մեկ «Պորփիւր» (2×10+5=25)։ 1287-ից հանելով 25, կստանանք 1262։ Վերծանված թվականը հայկական տարեթվով է, ուստի նրան գումարելով 551, ստանում ենք 1813 թվականը (1262+551=1813)։

(Հրատ. ՀԳԳ, 172—173)։

* * *

Վիեննայի մատենադարանի № 229 ձեռագիրը, որը պարունակում է Վարդանի «Հաւաքմունք մեկնութեանց հին կտակարանի» աշխատությունը՝ ընդօրինակված Կարապետ գրչի կողմից Տիգրանակերտ քաղաքում, ունի գրչի չափածո ընդարձակ հիշատակարանը, որի սկզբնատառերից հոդվում է. «Փծուն եւ փանաք, սորուկ եւ անարգ ծառայէս անկարգ, քեզ ով տէր այս յարգ, անուամբ վարժապետ, կոչմամբ Կարապետ, գլխովին անպետ, ի կոչման անկէտ, որոյս օգնեսցես Տէր հզօր եւ հեզ՝ դասելով ընդ քեզ, զի զին քո եմ ես, տուր ինձ զքոյդ իմաստ, առնել զմեղս իմ ազդ, կենաց որ եմ սատ չել ի միտս իմ ատ։ Եւ զհազարեակն թիւ՝ երկերիւրն եթիւ եւ հինգ կուսաթիւ հաշուելով ի թիւ» (Տաշ., սյուն. 596)։

Հետագայում ձեռագրի պատվիրատուն, կամ գուցե մեկ ուրիշը, մատնացույց է արել հիշատակարանի այն տողերը, ուր գաղտնագրված է ձեռագրի գրչության թվականը. «...Ով տէր այս յարգ, անուամբ վարժապետ, կոչմամբ Կարապետ...,— գրել է նա,— Եւ զհազարեակն թիւ ՛ երկերիւրն եթիւ եւ հինգ կուսաթիւ հաշուելով ի թիւ», որը կրկնողություն է հիշատակարանի չափածո տողերի առաջին տառերի՝ առանց սակայն բաց անելու ծածկագրությունը և պարզելու գրչության թվականը։

Տաշյանը չի կարողացել ճիշտ վերծանել ծածկագիրը, հարցականով միայն գրչության թվականը համարել է 1756-ը և այն դրել ձեռագրի նկարագրության վերնագրի տակ՝ առանց, սակայն, asելու, թե ինչպես է ստացել 1756 թվականը. «Կերեւայ՝ 1756»,— կասկածանքով գրել է նա։

Ծածկագիրը վերծանվում է այսպես. վերցնում ենք մեկ հազարը («զհազարեակն թիւ»), նրան գումարում ենք երկու հարյուր յոթը («երկերիւրն եթիւ») և հինգ կուսաթիվը (կուսաթիվը, ինչպես ասել ենք, հավասար է յոթի, հինգ կուսաթիվը հավասար կլինի 35-ի)։ Տրված թվերը գումարելով իրար, ունենում ենք 1242 (1000+207+35=1242), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1793 թվականը (1242+551= =1793)։

Տաշյանը, ինչպես երևում է, առաջնորդվել է հետևյալ հաշվումով. նա «երկերիւր եթիւ»-ը վերծանել է «երկերիւր Ե(5) թիւ» ձևով, թվահաշվից դուրս թողնելով «հինգ կուսաթիվը» և ստացել 1756 (1000+200+5+551=1756)։

Այսպիսով, մեր վերծանությունից երևում է, որ Վիեննայի Մխիթարյանների № 229 ձեռագիրը գրված է ոչ թե 1756 թվականին, ինչպես կարծել է Տաշյանը, այլ՝ 1793-ին։

* * *

Ազգագրագետ Ե. Լալայանը «Վասպուրականի ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում № 575-ի տակ նկարագրել է Մինաս Բաբերդցու ընդօրինակած ձեռագիրը։ Գրիչը գրչության տարեթիվը հայտնել է ծածկագրով. «Կրկին հնգիցըն հարիւրից, երկեակ քառեակն քառասնից և քառեակ թուոյն...»։

Ծածկագիրը վերծանվում է այսպես. երկու հինգը, այսինքն՝ 10-ը բազմապատկած հարյուրով, ունենում ենք 1000, որին գումարում ենք երկու քառյակը, այսինքն՝ 8-ը, 40-ը, 4-ը և հայկական թվականի տարբերությունը ու ստանում ենք 1603 թ. [(2×5×100)+(2×4)+40+4+551=1603]։

(Հրատ. ՀԶՀ, ժէ դ., I, էջ 109)։

33. ԹՎԱԳՈՒՄԱՐ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ մատենագրության մեջ հանդիպում են ծածկագրված տարեթվեր, որոնք կազմված են մեկ կամ մի քանի տառանիշերի թվարժեքների գումարից։ Դրանց մենք թվագումար անունն ենք տալիս։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 324 ձեռագրում կա հետևյալ թվագումար ծածկագիրը.

Հաշիւ ուղիղ առ ի փրկչէն՝ որ է նոյն հեզ,
Արամեան սեռի թառիմ կամաւ զէտ ցօղ ի սէզ,
Կալ վանկադարձ իմայ բառս ամիսն է քեզ,
Է ի փայելս թարգմանցուցչին գթածին առ մեզ։

Այստեղ տարեթիվը գաղտնագրված է երկու տարբերակով՝ ներկա թվականով և հայկական մեծով։ Բացի այդ, ամսանունը տրված է վանկադարձ գաղտնագրով։ Ծածկագիրը իր «Ձեռագրաց ցուցակում» վերծանել է Պողարյանը (Պող., հ. III, էջ 194)։

Առաջինը ներկա թվականն է, որը գաղտնագրված է երրորդ տողի «նույն» և «հեզ» բառերի մեջ։ Դրանց թվական արժեքների գումարը կլինի 1781. ն (400)+ո(600)+յ(300)+ն(400)+հ(70)+ե(5)+զ(6)=1781։

Երկրորդը ծածկագրված է հայկական մեծ թվականով թառիմ բառի մեջ, որի թվագումարը հավասար է 1781-ի. թ(9)+ա(1)+ռ(1000)+ի(20)+մ(200) +551=1781։

Ամսանունը ծածկագրված է վանկադարձ՝ իմայ. վերծանվում է երկրորդ վանկից՝ մայ, նրան միացնում ենք առաջին վանկը՝ իս, և ստանում մայիս ամսվա անունը։

Այսպիսով, պարզվում է, որ Երուսաղեմի մատենադարանի № 324 ձեռագիրը գրված է 1781 թվականի մայիս ամսին։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1462 ձեռագրի գրիչը հետևյալ ծածկագրով է հայտնել գրչության թվականը.

Ազգիս Հայոց թվականին,
Կրկին քառեակ երկ հարիւրին,
ՀԲ (եօթանասուն երկու) ամին
Գրեցաւ գանձս աստուածային։ (Եղմ., V, 177)

Ձեռագրի այս հիշատակարանը հրատարակել է Ն. Պողարյանը և քառակուսի փակագծում գրչության թվականը վերծանել՝ 1623, առանց սակայն նշելու, թե ինչպես է ստացել այդ։

Հիշատակարանի երկրորդ տողը, առանց կետադրական միջամտության, կվերծանվի այսպես. երկու քառյակը՝ 8-ը, բազմապատկած երկու հարյուրակով, որ սխալ է։ Իրականում հիշատակարանում կետադրական փոքրիկ ուղղումից հետո կկարդացվի. «Կրկին քառեակ, երկ՝ հարիւրին», այսինքն՝ երկու չորսը և մեկ երկուսը բազմապատկած հարյուրով, որով կստացվի 2×4+2=10, որը բազմապատկելով հարյուրով, կլինի հազար, սրան գումարած ՀԲ (72) և հայկական թվականի տարբերությունը, կստանանք ներկա թվականով 1623-ը (1000+72+551=1623)։

* * *

Սարգիս Եվդոկեցի գրիչն իր ընդօրինակած ձեռագրի ժամանակը թվագրել է հետևյալ քառյակում.

Ի թվականիս Հայոց մեծի,
Շող բառս նշան քեզ յայտնեսցի.
Կենըն պատուով ի բաց դիցի,
Այրն ընդ նմին բարձեալ լիցի։ (ՄԱՄ, ձեռ. № 3567, թ. 18ա)

Այստեղ գրչության թվականը ծածկագրված է շող բառի տակ, որից հանձնարարվում է հանել «կենըն պատուով», այսինքն «կ» տառը իր թվական նշանակությամբ՝ 60։

Ծածկագիրը վերծանվում է՝ շ(500)+ո(600)+ղ(90)=1190-ի, որից պետք է հանել 60-ը («կենըն պատուով») և մեկը («այրն ընդ նմին»), կլինի 1129, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1680 (1129+551=1680)։

Պարզվում է, որ Սարգիս Եվդոկացու ձեռագիրը գրված է 1680 թվականին։ (Հրատ. ՀԳՊ, 233)։

* * *

Կյուլեսերյանի կազմած «Անկյուրիայի ձեռագրաց ցուցակի» № 106 ձեռագրի նկարագրության մեջ բերված է չափածո մի հիշատակարան, ուր ձեռագրի գրչության թվականը ծածկագրված է հետևյալ կերպ.

Մանգաղ սրեալ է հնձելոյ։
Լե՛ր աշակերտ ուսանելոյ։
Հնձեալ ցորէնն կա[լ]սելոյ։
Պապակեցա՛ տապ ծարաւոյ։
Ձայն ախորժակ է լսելոյ։
Պակասեցոյ գիմն ի թըւոյ։ (Անկ., սյուն. 549)

Կյուլեսերյանի «Ձեռագրաց ցուցակի» հրատարակիչները, տպագրված բնագրում բերելով այս ծածկագիրը, տողատակ տվել են հետևյալ ծանոթագրությունը. «Երջանկահիշատակ Տ. Բաբգեն կաթողիկոս ոտանավորին դիմաց կարմիր մելանով հաշիվ ըրած է այսպես. Մ(200)+Լ(30)+Հ(70)+Պ(800)+Ձ(80)=1180—3=1177+551=1728» (նույն տեղում)։

Զափածո այս հիշատակարանում, իրոք, գաղտնագրված է ձեռագրի գըրչության թվականը։ Այդ պարզ երևում է «Պակասեցոյ գիմն ի թըւոյ» տողից։ Սակայն ճիշտ չէ վերը բերված հինգ տողերի առաջին տառերի հայտնությունից։ Սակայն ճիշտ չէ վերը բերված հինգ տողերի առաջին տառերի հայտնությունից։ Ջամեջ փնտրել ծածկագրված թվականը, ինչպես վարվել է Կյուլեսերյանը։ Զանկափածո հիշատակարանը բաղկացած է ոչ թե հինգ, այլ՝ վեց տողից. ենլի է, որ հինգ տողի առաջին տառերը ծածկագիր թվականի մեջ մտցվեին, իսկ վեցերորդ տողի առաջին տառը բաց թողնվեր։ Իսկ եթե վեցերորդ տողի Պ (800) տառը ես հաշվի մեջ մտցվի, այն դեպքում թվականը կստացվի ոչ թե 1728, այլ 2528, որ բացահայտ սխալ է։

Մեր կարծիքով, այստեղ թվականը ծածկագրված է ձայնն բառի մեջ, որի վերջից սխալմամբ բաց է թողնված մեկ «ն»-ն։ Զափածո հիշատակարանում պարզ ակնարկվում է, որ ծարավը պապակեցնողը և լսելու ախորժելին «Ձայնն» է, ուստի այդ բառի տակ էլ (կրկնակի «ն»-երով «ձայնն»-ի մեջ) պետք է փնտրել ծածկագիր թվականը։

«Ձայնն» բառի թվագումարը՝ ձ(80)+ա(1)+յ(300)+ն(400)+ն(400)++551=1732, որից երեքը հանելով, կստանանք 1729։

Ձեռագրի մի այլ հիշատակարանում, չծածկագրված ձևով, գրչության թվականը նշված է 1727, ուրեմն՝ ծածկագիր հիշատակարանը գրված է երկու տարի հետո՝ 1729 թ.։

(Հրատ. ՀԳԳ, 170)։

* * *

Երեմիա Քյոմուրճյանը չորս տողից կազմած մի գրչախաղ ունի, ուր թվագումար ծածկագրով ութ անգամ գաղտնագրված է հայկական մեծ թվականը։ Քյոմուրճյանի այդ քառատողը հետևյալն է.

Է պահեալ իմ ռաբբի հալէ է դա աչ իմ,
Մեկնեա զինեալ, ի դա ճառէ ամպախաղք թիւ:

Է ծաղկանիշդ ռահեալ էի, էղեալն շաղ,
Մի է պահեալ, ի բանդ Նայեա, ահա առակ[22]։

Մեջբերված այս քառյակի բոլոր բառերն էլ թվագումար ծածկագրեր են, բացառությամբ մեր ընդգծած «թիւք» բառի։ Գաղտնագրված ծածկագրերը մեծ մասամբ վերծանվում են հայկական մեծ թվականով՝ 1133 (ներկայիս 1684) կամ 1134 (ներկայիս 1685)։

Առաջին ծածկագիրը՝ «է պաճեալ իմ», վերծանվում է այսպես. է(7) + պ(800) + ա(1) + հ(70) + ե(5) + ա(1) + լ(30) + ի(20) + մ(200) + 551 = 1685։

Երկրորդը՝ «ռաբբի ճալէ», վերծանվում է. ռ(1000) + ա(1) + բ(2) + բ(2) + ի(20) + հ(70) + ա(1) + լ(30) + է(7) + 551 = 1684։

Երրորդը՝ «է դա աչ իմ», վերծանվում է. է(7) + դ(4) + ա(1) + ա(1) + չ(900) + ի(20) + մ(200) + 551 = 1684։

Չորրորդը՝ «Մեկնեա զինեալ», վերծանվում է. մ(200) + ե(5) + կ(60) + ն(400) + ե(5) + ա(1) + զ(6) + ի(20) + ն(400) + ե(5) + ա(1) + լ(30) + 551 = 1684։

Հինգերորդը՝ «ի դա ճառէ», վերծանվում է. ի(20) + դ(4) + ա(1) + ճ(100) + ա(1) + ռ(1000) + է(7) + 551 = 1684։

Վեցերորդը՝ «ամպախաղ», վերծանվում է. ա(1) + մ(200) + պ(800) + ա(1) + խ(40) + ա(1) + ղ(90) + 551 = 1684։

Յոթերորդը՝ «է ծաղկանիշղ», վերծանվում է. է(7) + ծ(50) + ա(1) + ղ(90) + կ(60) + ա(1) + ն(400) + ի(20) + շ(500) + դ(4) + 551 = 1684։

Ութերորդը՝ «ռահեալ էի», վերծանվում է. ռ(1000) + ա(1) + հ(70) + ե(5) + ա(1) + լ(30) + է(7) + ի(20) + 551 = 1685։

Իններորդը՝ «էղեալն շաղ», վերծանվում է. է(7) + ղ(90) + ե(5) + ա(1) + լ(30) + ն(400) + շ(500) + ա(1) + ղ(90) + 551 = 1675 (Ինը կամ տասը թիվ պակաս սովորականից)։

Տասներորդը՝ «մի է պահեալ», վերծանվում է. մ(200) + ի(20) + է(7) + պ(80) + ա(1) + հ(70) + ե(5) + ա(1) + լ(30) + 551 = 1685։

Տասնմեկերորդը՝ «ի բանդ նայեա», վերծանվում է. ի(20) + բ(2) + ա(1) + ն(400) + դ(4) + ն(400) + ա(1) + յ(300) + ե(5) + ա(1) + 551 = 1685։

Տասներկուերորդը՝ «ահա առակ», վերծանվում է. ա(1) + հ(70) + ա(1) + ա(1) + ռ(1000) + ա(1) + կ(60) + 551 = 1685։

* * *

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը իր «Գովեստ Նահապետ կաթողիկոսի» ներբողական բանաստեղծության թվականը սրամիտ ծածկագրել է 16 բառախմբերից կազմված գումարթիր ծածկագրով։ Քյոմուրճյանի այդ բանաստեղծությունը հրատարակել է Ն. Ակինյանը։ Բերում ենք այդ ծածկագրի բնագիրը.

[22] «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի», Երուսաղէմ, 1939, էջ 575։

Ըղծկանիշդ հան մակաբանդ յանգեալ[ն] նիշ մի,
Է հոգեծանդ իչին միջի զամանդ խ[ը]նկի,
Խանդ[դ]ակաթ իմն կապեալ[դ] զթագ իմ գոնեա աճի,
Եւ ճառիլդ ճոխն մին յղկիալ է ժոյժ իմ ինչի[23]։

Ակինյանը տվյալ բնագրում կատարել է հետևյալ գրչական ուղղումները։

Առաջին տողի յանգկեալն բառի վերջից ավելացրել է ն։

Երկրորդ տողի խընկի բառի մեջ ավելացրել է ը։

Երրորդ տողի խանդ[դ]ակաթ բառի մեջ ավելացրել է մեկ դ։

Նույն տողի կապեալ[դ] բառի վերջում ավելացրել է դ։

Ճիշտ համարելով Ակինյանի այս ուղղումները, մեր կարծիքով, անհրաժեշտ է լրացուցիչ կատարել նաև հետևյալ լրացումները։

Առաջին տողի առաջին բառը պետք է ուղղել «Եղծհանիշդ»՝ ը-ն դարձնելով Ե, կ-ն ուղղելով ճ-ի։

Երրորդ տողի խանդ[դ]ակաթ բառի մեջ Ակինյանի ավելացրած դ տառը ճիշտ կլինի տեղափոխել բառի վերջը՝ խանդակաթդ։

Չորրորդ տողի յղկիալ բառը պետք է ուղղել եղձեալ։

Այս ուղղումներից հետո ծածկագիրը կվերծանվի այսպես.

1. Եղծհանիշդ—ե(5) + ղ(90) + ծ(50) + հ(70) + ա(1) + ն(400) + ի(20) + շ(500) + դ(4) = 1140։
2. հան մակաբանդ—հ(70) + ա(1) + ն(400) + մ(200) + ա(1) + կ(60) + ա(1) + բ(2) + ա(1) + ն(400) + դ(4) = 1140։
3. յանգեալն—յ(300) + ա(1) + ն(400) + գ(3) + ե(5) + ա(1) + լ(30) + ն(400) = 1140։
4. նիշ մի—ն(400) + ի(200) + շ(500) + մ(200) + ի(20) = 1140։
5. է հոգածանդ—է(7) + հ(70) + ո(600) + գ(3) + ա(1) + ծ(50) + ա(1) + ն(400) + դ(4) = 1140։
6. իչին—ի(20) + չ(700) + ի(20) + ն(400) = 1140։
7. միջի—մ(200) + ի(20) + չ(900) + ի(20) = 1140։
8. զամանդ խընկի—զ(6) + ա(1) + մ(200) + ա(1) + ն(400) + դ(4) + խ(40) + ը(8) + ն(400) + կ(60) + ի(20) = 1140։
9. խանդակաթդ իմն— խ(40) + ա(1) + ն(400) + դ(4) + ա(1) + կ(60) + ա(1) + թ(9) + դ(4) + ի(20) + մ(200) + ն(400) = 1140։
10. կապեալդ զթագ իմ—կ(60) + ա(1) + պ(800) + ե(5) + ա(1) + լ(30) + դ(4) + զ(6) + թ(9) + ա(1) + գ(3) + ի(20) + մ(200) = 1140։
11. ճառելդ—ճ(100) + ա(1) + ռ(1000) + ե(5) + լ(30) + դ(4) = 1140։
12. ճոխն—ճ(100) + ո(600) + խ(40) + ն(400) = 1140։
13. մին եղձեալ—մ(200) + ի(20) + ն(400) + յ(300) + ե(5) + ղ(90) + ձ(80) + ե(5) + ա(1) + լ(30) = 1140։
14. ժոյժ իմ—ժ(10) + ո(600) + յ(300) + ժ(10) + ի(20) + մ(200) = 1140։

[23] Ն. Ակինյան, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի կյանքը և գրական գործունեությունը, Վիեննա, 1933, էջ 166։

15. ինչի—ի(20) + ն(400) + չ(700) + ի(20) = 1140։

Բոլոր 15 բառախմբերի թվական արժեքները, ինչպես տեսնում ենք, տալիս են հայկական թվականով 1140, որին գումարելով 551, կունենանք 1691 թվականը։

* * *

Թվագումար ավելի պարզ ծածկագրություն մեզ հանդիպում է Մաշտոցի անվան մատենադարանի № 8636 ձեռագրում, ուր հիշատակագիր Գրիգոր Երևանցին գրչության թվականի մասին հետևյալն է հայտնում. «Ի թուիս Ն. Ն. Ճ. Ճ. Ծ. Ծ. Ժ. Ժ. Ե. Ե. Գ. Գ. գրեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ»։ (ՄԱՄ, ձեռ. № 8636, թ. 107բ)։

Վերծանվում է. Ն(400) + Ն(400) + Ճ(100) + Ճ(100) + Ծ(50) + + Ծ(50) + Ժ(10) + Ժ(10) + Ե(5) + Ե(5) + Գ(3) + Գ(3) + 551 = = 1687 թ.։ Ձեռագիրը գրված է 1687 թվականին։

(Հրատ. ՀԳՊ, 239)։

* * *

Կյուլեսերյանը Ղալաթիայի հայկական ձեռագրերի ցուցակում հրատարակել է մի հիշատակարան, ուր գրչության թվականը ծածկագրված է առաջին երկու քառյակների տողասկզբի տառերի (Ն, Գ, Ո, Ն, Ց, Մ, Զ, Ը) մեջ։ Կյուլեսերյանը դժվարացել է այն վերծանել։

Նայիմ թուոցս եղեւ ծրեալ,
Գրել գրքոյս աւարտ հասեալ,
Որ ենթ տողիցըս կա[յ] դասեալ,
Ներ երկ քառից տողից շարեալ,
Ցանձնէդ ի բաց մու մի մերժեա՛,
Մեկին մտօք մէն մի՛ քցեա,
Զերկէ մէնին յանձնդ պահեա՛,
Ըզմայր դասին ընդ մէջ կտրեա՛,
Զմիջակտորն միաւորեա՛,
Եւ ի յանձին քում ծրարեա՛,
Զմիւս հատորն անհետ արա՛,
Թիւ մատենիս անխոտոր գա[յ]։ (Ղալ., սյուն. 703)։

Առաջին երկու տան տողերի մատնացույց արված տառերի թվական արժեքը գումարելով, ստանում ենք 1917. Ն(400) + Գ(3) + Ո(600) + Ն(400)+ + Ց(300) + Մ(200) + Զ(6) + Ը(8) = 1917։ Սրան գումարում ենք 1 («մու մի մերժեա»), ստանում ենք 1918։ Տվյալ թվականը բաժանում ենք երկուսի՝ «միջակտոր» ենք անում, մի մասը հաշվից դուրս ենք անում («Զմիւս հատորն անհետ արա»), մնում է 959։ Սրան գումարում ենք 200 («զերկէ մէնին յանձնդ պահեա», այսինքն՝ երկուսից մեկի վրա «մեն» տառի թվարժեքը՝ 200-ը դիր, ստանում ենք 1159 (959+200=1159), որին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1710 թվականը (1159+ + 551 = 1710)։

Սխալ է նույն թվականի մեր կատարած նախորդ վերծանությունը, որը հրատարակված է ԲԵՀ 1967 թ. № 1-ում (էջ 215)։ Հիշատակարանում նշվում է Երուսաղեմի Գրիգոր պատրիարքի անունը, որը ըստ Մ. Օրմանյանի հաշվումների, Երուսաղեմի պատրիարք է եղել 1704—1715 թթ.։

(ԲԵՀ, 1967, № 1, էջ 215, ՀԳԳ, էջ 174—175)։

* * *

Ղալաթիայի մատենադարանի № 152 ձեռագրում ընդօրինակված է Աբրահամ Կրետացու մի բանաստեղծությունը։ Այդ մասին Կյուլեսերյանն իր ձեռագրերի ցուցակում գրել է. «Գրիչս՝ Աբրահամ Կրետացին երկար քերթված մը հորինած է Հոբի վրա (եր. 548—552)»։ Նկարագրության մեջ նա բերել է այդ բանաստեղծության առաջին քառյակը, ուր ծածկագրված է բանաստեղծության հորինման տարեթիվը.

Ի թուին Հայոց Յաբէթ զարմին,
Կրկին ՌՈԲՍԷ ընդ ալֆային,
Աւարտեցաւ գիծս տառին,
Քաջ համբերող նահատակին։ (Ղալ., սյուն. 965)

Ձեռագրի լուսանցքում ինչ-որ մեկը փորձել է վերծանել այս ծածկագիրը և գրել. «ՌԳ յոբելեան», այսինքն՝ 1701 թ., որ ճիշտ չէ։

ՌՈԲՍԷ-ն, մեր կարծիքով, գաղտնագրված է հունական տառնիշերի թվական արժեքով։ Դրա անվիճելի ապացույցը հունական «ալֆա» տառի անվան գործածությունն է։ Վերծանվում է հունական տառանիշերի թվական արժեքներով այսպես. Ռ (րհո) 100+Ո(օմեկոն) 70+բս (պսիլոն) 400+է (էտտա) 8=578։ Պահանջվում է այն կրկնել («Կրկին ՌՈԲՍԷ»), 578-ին գումարել 578, ստանում ենք 1156։ 1156-ին անհրաժեշտ է գումարել ալֆան՝ 1-ը, լինում է 1157, որի վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1708 թվականը։

Այսպիսով, պարզվում է, որ հայ աչքի ընկնող մատենագիր Աբրահամ Կրետացու բանաստեղծությունը գրված է եղել 1708 թվականին։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 207 ձեռագրի Պողոս գրիչը հայտնում է, որ Տիգրանակերտի հոգևոր առաջնորդ Իսահակ վարդապետն իրեն հանձնարարել է գրել «Մեկնութիւնների» մի ժողովածու և իր գրչության թվականը հայտնել հետևյալ երկտողի մեջ.

Եթէ կամիս զթիւն իմանալ այսըմ տարւոյ
Հաշուեա (ինչել) ի քոյ կարծեացդ կամ բ[ե]ր[ա]նոյ (էջ 586)։

Թվականը ծածկագրված է ինչել բառի մեջ։ Վերծանվում է. ի (20) + ն(400) + չ(700) + ե(5) + լ(30) = 1155։ Ստացած թվին ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1706 թվականը։

Ծածկագիրը վերծանել է Պողարյանը (Եղմ. I, էջ 586)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 145 ձեռագրում գրի է առնված Կարապետ երեցի չափածո ծավալուն մի հիշատակագրությունը, որի տողասկզբի տառերով հորդվում է իր անունը և գրչության տարեթիվը պարունակող թվագումարը՝ հետևյալ ծածկագրով.

Յանգ սպասելով տեառն գալստեան,
Եղբարքք և հարքք աղօթական,
Ի խաելով ի թիւն ճգնական,
Զուարթնոց երկնից գոլով նման... (էջ 415)

Տվյալ հիշատակագրությունը, ծածկագիր քառյակի հետ միասին, հրատարակել է Պողարյանը, բայց նրան չի հաջողվել պարզել ոտանավորի գրության ժամանակը, հավանական է, «զուարթնոց» բառի թվարժեքի հետ ծանոթ չլինելու պատճառով (Եղմ. I, էջ 415)։

Ծածկագրությունը բաղկացած է թվագումար «ճգնական» բառից՝ նրան գումարած մեկ «զուարթնոց»։ «Ճգնական» բառը հավասար է. Ճ (100) + + գ(3) + ն(400) + ա(1) + կ(60) + ա(1) + ն(400) = 965։ Նրան անհրաժեշտ է գումարել մեկ «զուարթնոց», որն ունի 6-ի թվական արժեք, որով լինում է 971, սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1522 թ. (971 + 551 = 1522)։

Պարզվում է, որ Երուսաղեմի № 145 ձեռագրում Կարապետ գրչի ծածկագիր հիշատակագրությունը գրված է 1522 թվականին, այսինքն՝ ձեռագիրը գրվելուց 164 տարի հետո։

(Հրատ. ՀԳԳ, 163)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 3965 ձեռագրում գրի է առված ընդարձակ ծածկագիր մի հիշատակարան (թ. 104բ), որը չի վերծանված։ Ձեռագիրը «Գաւազանագիրք» է՝ գրված Ներսես դպրապետի կողմից Լեհաստանի Կամենեց քաղաքում։ Մաշտոցի անվան մատենադարանի «Ցուցակ ձեռագրացում» մատնացույց են արված տարբեր տարիների հիշատակագրություններ՝ 1624, 1684—1702, 1860, ձեռագրում դրոշմված մի կնիքի վրա երևում է 1784 թվականը («Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, էջ 1120)։ Խնդրո առարկա հիշատակարանի մասին, դժբախտաբար, հիշատակություն չկա «Ցուցակ ձեռագրացում», և փորձեր չեն արվել այն վերծանելու։

Մի բան գուզեր ահա Հայմակ,
Ենթակացեալ իբրու ճաշակ։
Մասամբ հատեալ բայց է միակ,
Ցոյց բաղկացեալ զոյ մերեմակ։
Սաղապեա զքեզ թէ զինչ կամի,
Զի առ վախճան ահա ճեմի.
Մակադրեալ իբր զգալի,
Սայց յարեցմամբ որ զա[յ]ն լինի։

Միայնդ լիցիս խոհեմագոյն, զի ոչ ծածկի,
Զիարդ քանիք գոն ընդ ի սկզբանն ընդ իւր յանգի։
Մի՞թէ զծով չափել կարեն ազգ երկրածին,
Լինի՞ արդեօք և գիտութիւն հանգոյն նորին։
Զի կա՞յ ըստ նոյն և շիթ ցօղոյ թէ թուիցեն,
Թողի ուրեմն և զյաճախումն, զի ոչ բաւին։
Իմացականդ կացցի անշէջ,
Յոչ պարապիլ չընդունայն վէճ։
Ուստի նայեաց առ խորանիդ էջ,
Եւ գիտասցես զթիւ ազգիս մէջ:
Տարորոշեալ թուոյ առմամբ,
Յատկացելոյ տոհմիս կալմամբ։
Լիցիս արդիս եդեալ լրմամբ,
Վերջավանկիւդ որ զայն յանկմամբ։
Որոյ մասանց ոչ է սահման,
Գոլ մի տեսակ քանակական։
Եթէ դիցի ի չափ Հայկեան,
Մի՛ արասցես իբրու զկոխան:
Ամաց շրջան գոլ զանազան,
Է ըստ առմանց իւր ըսկզբան։
Կալցի՞ արդեօք առ մեզ որքան,
Համարեսցիս եղեալդ համայն։
Մի վարանիր աստանդական,
Մինչ որոնել զհայ թուական։
Այլ փաղառիւդ վախճանական,
Գտցես զնոյն հիբար զնայն:
Իբր ի կիտէ նշանական,
Հասեալ էր ինչ չափողական։
Ոչ ապաքէն գոլ թուական,
Յատուկ ըստ մեզ աղէ մնան։ (թ. 104բ)

Այս ծածկագրում հայկական մեծ թվականը ծածկագրված է վերջին երեք քառատողերի մեր կողմից ընդգծված բառերում. դրանք են՝ մէջ, զկոխան և զնայն: Երեք բառերն էլ վերծանվում են գումարգիր ծածկագրի բանալիով։

Մէջ-ը վերծանվում է. մ(200) + է(7) + ջ(900) + 551 = 1658։

Զկոխան բառը վերծանվում է. զ(6) + կ(60) + ո(600) + խ(40) + + ա(1) + ն(400) + 551 = 1658։

Զնայն բառը վերծանվում է. զ(6) + ն(400) + ա(1) + յ(300) + + ն(400) + 551 = 1658։

Եվ այսպես, պարզվում է, որ տվյալ հիշատակարանը գրված է 1658 թվականին։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 106—107)։

* * *

Ղալաթիայի № 262 ձեռագրի ծածկագիրը ձևով նմանություն ունի Մաշտոցի անվան մատենադարանի № 2311 ձեռագրի ծածկագրին, որը հրատարակել է Կյուլեսերյանը և վերծանել։ Ծածկագիրը հետևյալն է.

Գրեցաւ այս ռամգիրքըս
Ձեռամբ մեղօք մրափեալ տղմիս,
Պաղվանտ անուամբ ոչընչիս,
Արա ի թիւ ՉՆՈՃէ բառիս
Ինն տասիւ աւար(տ) լինիս
Ազգ արամեան թուականիս։ (Ղալ., էջ 1208)

Տարեթիվը գաղտնագրված է զՆՈՃէ բառի մեջ։ Վերծանվում է. Զ(6) + Ն(400) + Ո(600) + Ճ(100) + Է(7) = 1113, որին գումարելով 19-ը (ինն տասը), կլինի 1132։ Սրան էլ գումարելով հայկական մեծ թվականի տարբերությունը, ստանում ենք 1683։
Այսպիսով, պարզվում է, որ Պաղվանդ գրիչը Ռամգիրքը գրել է 1683 թվականին։

* * *

Ղալաթիայի մատենադարանի № 6 ձեռագրում Գրիգորիոս վարդապետը հիշատակագրություն է թողել Շահ-Աբասի բռնագաղթի մասին ծածկագրված թվականով. «Կրկին հնգից հարիւրոց, յոբելեան և քառեակ թուոց օգոստոսի ԻԲ (22) դրաց յիշատակ։ Եղև հալածումն քրիստոնէից, մանաւանդ վշտատես որդւոց եղկելի Հայոց, և եղև սաստիկ և ահագին կործանումն Հայոց...» (Ղալ, սյուն. 35)։
Վերծանված է Ղալաթիայի ձեռագրաց ցուցակում. (2×5×100=1000)+ + 54 + 551 = 1605։ Վերահրատարակությունը տե՛ս վերծանության հետ (Հիշ. ԺԷ դ., I, էջ 178)։

* * *

Ն. Ակինյանը Կիպրոսի Նիկոսիա քաղաքի «Ձեռագրաց ցուցակում» հրատարակել է մի պարսկահայ ճանապարհորդի ուղեգրություն, որի մեջ հեղինակը գաղտնագրով է հայտնել իր ճանապարհորդության տարեթիվը Պարսկաստանից։ Գաղտնագրում օգտագործված է «կենդանակերպ» բառը, որն ունի 12-ի թվական արժեք (նկատի է առել 12 կենդանակերպերը՝ խոյ, ցուլ, երկավոր, խեցգետին, առյուծ, կույս, կշիռ, կարիճ, աղեղնավոր, այծեղջյուր, ջրհոս, ձուկ)։

Ութսուն ընդ նմին շարազուգեալ...
Զորք յոբելեան ի նմին դասեալ,
Շաղկապ առեալ ընդ նմին կարգեալ,
Զայն Պորփիւրի ընդելուզեալ,
Տօմարական... ուրիք առեալ,
Կենդանակերպն ի նմին յեռեալ,

Եւ իմ առեալ եռապատկեալ,
Բայց ոչ եղեալ թիւ կատարեալ,
Մինչեւ հարիւր հնգետասան եդեալ,
Ապա լինի թուական եղեալ
Մտաւորաց դիւրահաս լեալ,
Զի յայսմ ամի իմոյ ելեալ»[25]։

Ակինյանը դժվարացել է ծածկագիրը վերծանել և նշել է, որ «Ձեռագիրս գրված ըլլալու է ԺԸ դարուն, 1719-էն ետքը, երբ կազմած է ի հավաքածույքը Աստվածատուր աբեղան (§ 7)։ Ըստ այսմ լուծելու է § 22-ի համարողական առեղծվածը։ (Խոսքը խնդրո առարկա ծածկագրի մասին է—Ա. Ա.)»[26]։
Ծածկագրի վերծանությունը հետևյալն է. վերցնում ենք 80-ը, նրան գումարում չորս հոբելյան՝ 200 (4×50=200), ավելացնում «ձայն»-ի տառերի թվական արժեքը՝ 781 (ձ(80) + ա(1) + յ(300) + ն(400) = 781) և 5 (մեկ պորփյուր), եռապատկյալ կենդանակերպերը՝ 36 (12×3=36), 115-ը («հարիւր հնգետասան») և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1768 (80+200+786+36+115+551=1768)։
Մեր այս վերծանությունը ճիշտ կարելի է համարել, եթե պարզվի, որ բնագրի սկզբից տողեր չեն պակասում, այդ կասկածն առաջանում է «Ութսուն ընդ նմին շարազուգեալ» տողից։ Եթե մեր կասկածը հաստատվի, այն դեպքում պետք է վերանայել «ձայն» բառին տրված մեկնությունը։

* * *

Ականավոր բժշկապետ Ամիրդովլաթն իր «Անգիտաց անպէտ»-ի մեջ գաղտնագրել է իր բժշկարանը գրել սկսելու և ավարտելու թվականները։ Բժշկարանի ներածության մեջ նա հայտնել է, որ ինքը սկսում է գրել «Շինէ» թվականին.

Գրենք զդեղերուն անուանքն, սկսանք ի յարուբենէ,
Որ է բժշկաց արուեստ և բառեր ի օգտութենէ,
Աւարտի սա հինգ լեզուաւ զՀայոց թուականն շինէ[27]։

«Շինէ»-ն վերծանվում է՝ շ(500) + ի(20) + ն(400) + է(7) = 927, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1478։ Հիշատակարանում նա հայտնում է, որ գիրքն ավարտել է «Լմնայ» թվականին.

Զորս տարի տիւ և գիշեր աշխատեցայ,
Ի բազում օրինակաց արարի սա...
Ես բժիշկ Ամիրդովլաթս, հայրս Եղիայ,

25 «Ցուցակ ձեռագրաց Նիկոսիայի», էջ 71—72։
26 Նույն տեղում, էջ 72։
27 Ամիրդովլաթի Ամասացւոյ Անգիտաց անպէտ, հրատ. Կ. Բասմաջյանի, Վիեննա, 1927, էջ 1։

Որ ծնեալ եմ ի քաղաքն Ամասիայ...
Հայոց Թուականին լմնայ[28]։

«Լմնայ» թվականը վերծանվում է՝ լ(30) + մ(200) + ն(400) + + ա(1) + յ(300) + 551 = 1482։

* * *

Անկյուրայի մատենադարանի № 38 ձեռագրում, որը գրված է 1607 թ. Սահակ սարկավագի կողմից, Կամենից քաղաքում, գրիչն իր անունը գաղտնագրել է գումարգիր ծածկագրով, հիշատակարանի հետևյալ հատվածում. «Արդ՝ գրեցաւ սուրբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անարժան, անծան և անծող գրչի ՌՌ,», ԼԵԼԵ,», ԼԼ, Ի և սուտ անուն սարկաւագի, որդի պարոն Լուքաշի» (էջ 637—638)։

Ծածկագիրը հրատարակված է «Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում» և վերծանված «Սահակ»-ի (Անկ., էջ 208)։ (Հրատ. ՀԶՀ, ժէ դ., I, էջ 274)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի ձեռագրում ընդօրինակված է Արիստակեսի տաղը, որը հոդվում է. «Արիստակէս տղայէ ասացեալ բանս այս վարդին վերայ ի Գրիգորէ»: Պողարյանը «Ձեռագրաց ցուցակի» հինգերորդ հատորում հրատարակել է այդ տաղի երկու քառյակը, ուր և ծածկագիր տրվում է տաղը գրելու թվականը.

Արդ ի մերձիլ եղանակին,
Անանց սահմանն որ ի նախկին,
Արարչադիր սուրբ հրամանին,
Արեգական գալ ի խոյին...
Է իմ եղբարք եղանակողք այսմ ծրրի,
Եմ ձեզ ծառայ անճին ոտիցդ և փոշի,
Է մեր թվականն որ ի Հայոցըս միջի
Ես վաղ մեռեալս հայցեմ ի ձէնջ ողորմի։ (Եղմ., V, էջ 156)։

Պողարյանն այս տաղի գրությունը համարել է 1691 թվականը։

Տաղի գրության ժամանակն, իրապես, գաղտնագրված է միջի բառում, որը վերծանվում է. մ(200) + ի(20) + չ(900) + ի(20) = 1140, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1691 թվականը (1140+551=1691)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 937 ձեռագիրը գրել է Գեորգ գրիչը՝ «ի վայելումն» ոսկերիչ Մովսեսի և թողել յոթ տողից բաղկացած չափածո մի հիշատակարան, որի վեց տողերի առաջին տառերից հոդվում է իր անունը՝ «Գէորգէ», իսկ տողերի մեջ՝ ծածկագրված թվականը.

[28] Նույնը, էջ 624։

Գոեճիկե, թիւ գրեսցի,
Է ճառելի եւ իմասցի,
Որ, ռոճազը, թիւ է Փրչին,
Բամ ուղղացն, բողոգին,
Գո, ռամիկ ազգինդ, հային,
Էն, բակ դղեակ, եւ խորեցի,
Բակ առեալ բակ, և կայթեցի։ (Եղմ., III, էջ 480)

Առաջին տողի մեջ տարեթիվը ծածկագրված է Գոեճիկե-ի մեջ, որը վերծանվում է. գ(3) + ո(1000) + ե(5) + ճ(70) + ի(20) + կ(60) + + ե(5) = 1153 + 551 = 1714։

Երկրորդ տողի մեջ՝ Է ճառելի: Վերծանվում է. է(7) + ճ(100) + ա(1) + + ռ(1000) + ե(5) + լ(30) + ի(20) = 1153 + 551 = 1714։

Երրորդ տողի մեջ՝ ռոճազը: Վերծանվում է. ռ(1000)+ո(600)+ճ(100)+ + ա(1) + զ(6) + է(7) = 1714։

Չորրորդ տողի մեջ՝ բողոգին: Վերծանվում է. բ(2) + ո(600) + + ղ(90) + ո(600) + գ(3) + ի(20) + ն(400) = 1715։

Հինգերորդ տողում, ամենայն հավանականությամբ, ծածկագրված է «ռամիկ» բառը, սակայն նրա թվագումար արժեքը չի համապատասխանում մյուս տողերի մեջ ծածկագրված թվականին։

Վեցերորդում ծածկագրված է «բակ դղեակ»: Վերծանվում է. բ(2) + + ա(1) + կ(60) + դ(4) + ղ(90) + ե(5) + ա(1) + կ(60) = 1163 + + 551 = 1714։

Յոթերորդում ծածկագրված է «Բակ առեալ բակ» բառերի մեջ. բ(2) + + ա(1) + կ(60) + ա(1) + ռ(1000) + ե(5) + ա(1) + լ(30) + + բ(2) + ա(1) + կ(60) = 1163 + 551 = 1714։

Այսպիսով, Գեորգ գրիչը ծածկագրել է 1714 թվականը։

* * *

Պողարյանը «Ձեռագրաց ցուցակում» հրատարակել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 58 ձեռագրի Եսայի քահանա Կեսարացու չափածո հիշատակարանը, ուր հեղինակը ծածկագրով է հայտնում գրչության տարեթիվը։ Վերծանել է Պողարյանը։

Զափեալ ամօք Ասքանազեան,
Ռայ ընդ մէնի համաթուման,
Ինի այբիւ աւարտական,
Տուք գողորմին յաւէտական։ (Եղմ., I, էջ 190)

Ծածկագրողն այստեղ օգտագործել է հայկական «ռայ», «մեն», «ինի» և «այբ» տառերի թվական արժեքները և նրանց հիման վրա կազմել ծածկագրված թվականը, Ռ(1000) + Մ(200) + Ի(20) + Ա(1) = 1221, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստացել է 1772 թվականը (1221+551=1772)։

17—884

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 84 ձեռագրի առաջին պահպանակի չորրորդ էջի վերջում ծածկագրված է գրչության թվականը.

Մի մեղադրել վասն աստուծոյ,
Եւ տէրդ լիցիս անփորձ կալոյ,
Մինչև լիցիս հարիւր տարոյ,
Լինիցիս տեառն յաջմէ կալոյ։
Հայկազան թվին լաշին վեցոյ,
Դեկտեմբեր ամսի քսանումն գոյ.
Թաբաշ ասեմ դեկտեմբեր ամսոյ
Եղև աւարտ կարճ ի կարճոյ։ (ՄԱՄ, ձեռ. № 84, առաջին պահպանակի վրա)։

Այստեղ թվականը ծածկագրված է քառյակի «լաշին վեցոյ» բառերի մեջ։ Բարդացման նպատակով «շաբաթ» բառը գրված է հակառակ ծայրից՝ «թաբաշ»։

Վերծանության համար վերցնում ենք «լաշին» բառի տառերի թվանշանների գումարը և վեցը. լ(30) + ա(1) + շ(700) + ի(20) + ն(400) + 6, ստանում ենք 1157, գումարում ենք 551, ունենում ենք 1708։

Ուրեմն՝ քառյակը գրված է 1708 թվականին։

(Հրատ. ՀԳԳ, 160, ԲԵՀ, 1967, № 1, էջ 205)։

* * *

Վարդան Ղրիմեցու պատվերով Վարդան գրիչն ընդօրինակել է Գեորգ վարդապետի «Մեկնութիւն Եսայեայ» աշխատությունը և գրչության թվականի մասին թողել հետևյալ չափածո հիշատակարանը.

Ստուգիւ ծըրեալ աւարտեցա,
Եսայիու մեկնիչ է սա,
Նըկըրտելով յոյժ ցանկացա,
Անթիւ փանձին որ ի սմա կա։
Դէտ Մարտիրոս յերկրէն Հոնա,
Բաբուն եւ յոյժ պըմետիկոս.
Ապայ դա տես սուղ ինչ իմա,
Վերոյ տողին թըւին սորա։ (Եղմ., II, էջ 392)

Տվյալ ծածկագիրը պարունակող ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանում և գրանցված է № 430-ի տակ։ Ձեռագրի հիշատակարանը, ծածկագրի հետ միասին, հրատարակել է Պողարյանը «Ձեռագրաց ցուցակի» երկրորդ հատորում և ձեռագրի ընդհանուր հարակարգում գրչության թվականն է համարել 1658-ը։

Թվականը գաղտնագրված է յոթերորդ տողի «ապայ դա» բառերի մեջ։ Ծածկագրի վերծանությունից երևում է, որ ձեռագիրն, իրոք, գրված է այդ թվականին. ա(1) + պ(800) + ա(1) + յ(300) + դ(4) + ա(1) = 1107։ Սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1658։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյան մատենադարանի № 1059 ձեռագրում գրի է առնված պատմիչ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի մի բանաստեղծությունը «Բազում սէր ի սկզբանէ...» սկսվածքով՝ նվիրված Գաղատիայի հոգևոր առաջնորդ՝ իր անվանակից Երեմիային։ Այդ բանաստեղծության վերջում հետևյալ գաղտնագրով է հայտնված բանաստեղծության գրվելու թվականը.

Եղև գրեցեալ Երեմիայի
Բարունոյ տեառն առաջնորդի,
Եկեղեցւոյդ Գաղատացւոց
Մաննօրէն քեւ յարգելոց
Ի բանդ նա[յ]եա թուական Հայկայ
Առ յելս յունվար ամսոյն Հռոմայ
Յանկել սիրոյդ զայս յարակայ
Ի վեր ձգտեաց քան զկարս ահա։ (Եղմ., IV, էջ 84)

Ծածկագրի բնագիրը հրատարակված է Պողարյանի «Ձեռագրաց ցուցակի» չորրորդ հատորում և վերծանված։

Տվյալ բանաստեղծության մեջ թվականը գաղտնագրված է հինգերորդ տողի «Ի բանդ նայեա» բառերի մեջ, որը թվական արժեքի վերածելիս կստանանք 1685 թվականը. ի(20) + բ(2) + ա(1) + ն(400) + դ(4) + ն(400) + + ա(1) + յ(300) + ե(5) + ա(1) = 1685։

Չելեպու տվյալ բանաստեղծությունը, ինչպես տեսնում ենք, գրված է 1685 թվականին։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2311 ձեռագրի Եղիա գրիչն ընդօրինակել է փիլիսոփայական բովանդակությամբ մի մատյան և գրչության տարեթիվը (թ. 175բ) հայտնել ծածկագիր հետևյալ քառյակի մեջ.

Տրամաբանութիւնս աւարտեցի
Եւ վատ ձեռամբս Եղիայ դպրի,
Ի թիվն ՌՌՃԼԵ, ամսոյն տրէի,
Սխալ գրոց եմ ամօթալի,
Ջձեր ոտից՝ հող և փոշի։

Այստեղ գրչության թվականը գաղտնագրված է ՌՌՃԼԵ բառի մեջ, որը վերծանվի՝ ն(400) + ռ(600) + ճ(100) + լ(30) + ե(5) = 1135։ Ստացածին գումարելով հայկական թվականի տարբերությունը, լինում է 1686։

Տրամաբանության ձեռագիրը, ուրեմն, Եղիա գրիչը գրել է 1686 թվականին։ Հայկական «տրե» ամիսը զուգորդվել է ներկայիս նոյեմբերի 9-ից դեկտեմբերի 8-ը ամսաթվերին։

(Հրատ. ՀԳԳ, 157, ՀԳՊ, 235, ԲԵՀ, 1967, № 1, էջ 205)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 737 ձեռագրում Մարտիրոս գրչի գրի առած «Հայ ժողովրդի համառոտ պատմություն» չափածո տարեգրությունը վերջանում է հետևյալ քառյակով.

Յինէն ընծայ այս քեզ եղբայր,
Մերոյ նախնեացըս վէպ և ճառ
Մարտիրոսէ յոգնաթըշուառ,
Շրջաբերեալ թիւս է ծիծառ: (թ. 199բ)

Տվյալ քառյակում գրչության թվականը գաղտնագրված է «ծիծառ» բառի տակ, որը գումարգիր ծածկագրություն է և վերծանվում է. ծ(50) + ի(20) + ծ(50) + ա(1) + ռ(1000) = 1121։ Նրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1672։

Այսպիսով, պարզվում է, որ Մարտիրոս գրչի նշված աշխատությունը գրված է 1672 թվականին։

* * *

Մեսրոպ գրիչը Մաշտոցի անվան № 545 ձեռագրում թողել է երկու ծածկագիր։ Առաջին ծածկագիրը հետևյալն է.

Ի քննութիւն սորա դու մուտ,
Ո՞վ ճոխաբան ներկուռ հմուտ,
Մատնեա ի ձեռս ծասկող լեզւոյդ,
Եթէ իցես ճարտար բրուտ,
Եզն այս անուն միայն յատուկ,
Կրկնապատկեա զքանիքն սորյգն։
Սիրեա եղբայր այս արուեստուկ,
Զի է զբօսան մտավարժոյդ։
Բամեա զբոլորըն խրատոյդ,
Յաւել ի դա եռ հարիւրուկ,
Ուստի գտցես Հայկեան թվուկ՝
Ունենալով պակաս քսան և հինգն
Պատրաստ սեղան քեզ սիրելւոյդ,
Ի ճառել ասի համայն յատուկ,
Էացուցչի սոյն այս տաղուկ,
Պատի անուն ի գլուխ գրոյսդ։ (թ. 174բ)

Այս բնագրում ծածկագրված առաջին բառը եզն է, որը վերծանվում է՝ ե(5) + զ(6) + ն(400) = 411։ Այս թիվն անհրաժեշտ է կրկնապատկել («կրկնապատկեա զքանիքն սորյգ»), կլինի 822։ Ստացածին պետք է գումարել «եռ հարիւրեակ», այսինքն՝ 300, կդառնա 1122, իսկ սրան էլ գումարենք «պակաս քսան և հինգ»-ը, կստանանք 1147։ Ուրեմն՝ ձեռագիրը գրված է հայկական 1147 թվականին, որին գումարելով 551, կստանանք 1698 թվականը։

Ցանկանալով օգնել վերծանության գործին, Մեսրոպ գրիչն առաջարկել է գումարգիր մի այլ ծածկագիր.

Մի բարկանար, իմ սիրելի,
Ըզդըժվարալուր բան թուականիս.
Պատրաստ սեղան քեզ սիրելւոյդ՝
ի ճառիզա (թ. 174ա)

Այստեղ թվականը «ի ճառիզա»-ն է, որը վերծանվում է այսպես. ի(20) + ճ(100) + ա(1) + ռ(1000) + ի(20) + զ(6) + ա(1) + 551 = 1698։ Ձեռագիրը գրված է 1698 թվականին։

(ՀԳՊ, 237, ՀԳԳ, 161, ԲԵՀ, 1967, № 1, էջ 206—207)։

Որ մեր այս վերծանությունը ճիշտ է, այդ ստուգվում է նույն հիշատակարանի ծածկագիր թվականի երկրորդ օրինակից, որը դարձյալ բերել է նույն ծածկագրողը։ Այնտեղ ասված է.

Ի յայս հանդէս դու յառաջեա՛.
Իմաստութեամբ քով ոգորեա՛,
Մարտիկ ընտիր զքեզ կազմեա.
Խրախուսմամբ զձիդ մտրակեա։
Երասանակն ուղիղ պնդեա.
Իբրև զքաջ զմաճ ըն[կ]ճեա,
Սաստիկ զանխի զնա ծեծեա.
Զանուն առեալ շարադասեա։
Բարունօրէն զա[յ]ն կրկնեա,
Վեց հարիւրի վերջայանդեա,
Երկու կըրկին և ընդ մուխ
Ընդ նոյն յարեալ միաւորեա.
Պահակ թվոյ մեծին Հայկայ։
Նա անպակաս իսկ բաղկանայ,
Է հավաստի ի ճառից իմա
Քեզ իմաստնոյդ վարդ հոտոն։ (թ. 174ա)։

Այստեղ ծածկագրված բառը «մահ»-ն է, որը համասար է 271-ի (մ(200) + ա(1) + հ(70) = 271)։ Այս թիվը պետք է կրկնապատկել («զայն կրկնեա»), կստանանք 542։ Ստացածին անհրաժեշտ է գումարել 600 («վեց հարիւրի վերջնայանդեա»), կլինի 1142։ Այս գումարին պետք է ավելացնել 5 («երկու կրկին և ընդ մուխ») և հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1698 (1142+5+551=1698)։ Իսկ վերջին «ի ճառից» ստուգման նպատակով բերված թվականը համասար է 1698-ի. ի(20)+ճ(100)+ + ա(1) + ռ(1000) + ի(20) + զ(6) + 551=1698։

(ՀԳՊ, 237, ՀԳՊ, 162, ԲԵՀ, 1967, № 1, էջ 207)։

* * *

Զմմառի մատենադարանի № 456 ձեռագրում Ուրախ անունով գրիչն իր թողած հիշատակարանում գրչության թվականը գաղտնագրել է գումարգիր

ծածկագրերով. «Աւարտեցաւ ի Թվականութեանն փրկչին ՃԱՌՈԺԷ, իսկ ըստ Հայոց Թվականին ԾԱՌԿԵԼԻԱ, որք հանդիպիք սմա, յիշեցէք զիս միով Հայր մերիւ և սխալանաց թողութիւն արարէք» (Զմմառ, II, էջ 55)։

Ծածկագրության առաջին թվականը ներկայումս գործածական թվականով է։ Այն վերծանվում է. Ճ(100) + Ա(1) + Ռ(1000) + Ո(600) + Ժ(10) + Է(7) = 1718 թ.։

Ծածկագրության երկրորդը՝ հայկական մեծ թվականով է։ Այն վերծանվում է. Ծ(50) + Ա(1) + Ռ(1000) + Կ(60) + Ե(5) + Լ(30) + Ի(20) + Ա(1) = 1167 թ., որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք դարձյալ 1718 թվականը. 1167+551=1718։

Ձեռագիրը նկարագրող հեղինակները նրա ավարտման տարեթիվն են համարել 1714-ը, իսկ իրականում, ինչպես տեսնում ենք, ձեռագրի գրչությունն ավարտվել է 1718-ին։

* * *

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 93 ձեռագրի հիշատակարանը պարունակում է ձեռագրի գրչության հետևյալ ծածկագիր թվականը.

Տամ մշտապես ի ծունրս իջեալ խոնա[ր]հական,
Որ հասուցեր ի վերջ գրոյս զիս անարժան։
Ուստի սէր իմ մինչ դու մերձիս ի յոյս հանդէս,
Բաժանելով յերկուս մասունս զբառդ հանդէս,
Ձկէսն հաշուեալ ընդ գալ բառին զթիւն յայտնես՝
Հայոց տոհմիս եւ երբ գծման գըրքոյս ի տես։ Ի ՌՄՀԵ թուին։
(Տաշ., էջ 362)

Հակոբոս Տաշյանը հրատարակել է այս հիշատակարանը և կարծել, թե տարեթիվը ծածկագրված է «հանդէս» բառի առաջին երեք տառերի և հաջորդ տողի «գալ» բառի մեջ. «Եթէ հան եւ գալ՝ գրչին ըսածին պէս՝ թուական համարինք (Հ, Ա, Ն, Գ, Ա, Լ),—գրել է նա,— կունենանք ՇԾ թվականը (1056)»։

Տաշյանը, սակայն, վստահ չի եղել իր կատարած վերծանությանը, ուստի անհրաժեշտ է համարել զգուշացնել ընթերցողին, որ իր վերծանությունը «դժվարաւ կհամարմարի թարգմանության ժամանակին» (Տաշ., էջ 362)։

Տված ծածկագրում թաքտնագրված թվականը, իրականում, գումարգիր է, որը կվերծանվի. հ(70) + ա(1) + ն(400) + դ(4) + է(7) + ս(2000) = = 2482։ Այս գումարը պետք է կիսել («բաժանելով յերկուս մասունս»), կստանանք 1241, որին անհրաժեշտ է գումարել բառի թվական արժեքը («ընդ գալ բառին զթիւն») և հայկական թվականի տարբերությունը, կլինի 1826 (1241 + գ(3) + ա(1) + լ(30) + 551 = 1826)։

Այսպիսով, Վիեննայի մատենադարանի № 93 ձեռագրի հիշատակարանը գրված է ոչ թե հայկական ՇԾ թվականին, այսինքն՝ 1056-ին, ինչպես կարծել է Տաշյանը, այլ շատ ավելի ուշ՝ Հայոց 1275-ին։ Ըստ որում, ճիշտ պետք

է համարել հիշատակարանի վերջին ՌՄՀԵ (1275) թվականը այն տարբերությամբ, որ վերջին միավոր Ե (5) թվանշանը պետք է ուղղել է (7)։

* * *

Քյոմուրճյանը Լեհաստանի Յան Սոբեսկի թագավորին ուղերձ է գրել, նրան համարելով «Գերեաց մատնելոց վշտակիր անձանց... քաւիչ 'ւ ազատիչ, փրկիչ, թագաւոր», «Բազմաց մխիթար 'ւ յոյս թագաւոր»՝ նշելով, որ «Բանիւք և թղթովք զոմանս սփոփեալ այժմ խնդամք նոքօք»[29]։ Ահա այս ուղերձի գրության թվականը գաղտնագրված է հետևյալ չափածո հատվածում.

Երգս ընծայական, բաքովդ յաղող,
Երջանիկ փառօք մըտաց լուսանող,
Ի յօժար հոգւոց աղերս քեզ աղդող,
Ի թիւս տեառն ածիլ ռէ շահ թագաւոր[30]։

Թվականն այստեղ գաղտնագրված է «ածիլ ռէ շահ» բառերի մեջ, որոնց տառերի թվագումարը հավասար կլինի ա(1) + ծ(50) + ի(20) + լ(30) + + ռ(1000) + է(7) + շ(500) + ա(1) + հ(70) = 1679 ներկա թվահաշվով։

Այսպիսով, պարզվում է, որ Քյոմուրճյանը լեհաց թագավորին նվիրած ուղերձը գրել է 1679 թվականին։

* * *

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 298 ձեռագիրը պարունակում է Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունը՝ ընդօրինակված Մանվել գրչի կողմից։ Գրչության թվականը հայտնված է հետևյալ առեղծվածագիր հիշատակարանով.

Զողկոյզն որթոյն հեղ ի հնձան,
Խաղող նորին առեալ կոխան,
Զմետասանն եռապատկեալ՝
Յողկոյզն արկեալ՝ թիւ շինես զայն,
Մեր տոմարին Թորգոմական,
Որ է երբն գրքոյս գրման։ (Տաշ., էջ 727)

Ծածկագիրը հրատարակել է Տաշյանն ու ընդգծել «զողկոյզն» և «զմետասանն եռապատկեալ յողկոյզն» բառերը, որոնց մեջ ցանկացել է տեսնել գաղտնագրված գրչության թվականը, բայց դժվարացել է վերծանել։

Թվագումար «զողկոյզ» բառը կվերծանվի. զ(6) + ո(600) + ղ(90) + + կ(60) + ո(600) + յ(300) + զ(6) = 1662, որին գումարելով 11×3= =33 («զմետասանն եռապատկեալ»), ստանում ենք 1695 թ. (1662+33= =1695)։ Ստացված տարեթիվը ներկայիս թվահաշվով է, ուստի հիշատակարանում «Թորգոմական» թվականը հիշելը բացահայտ թյուրիմացություն պետք է համարել։

(ՀԳԳ, 158)։

[29] Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, Ստամպօլոյ պատմութիւն, էջ 120։
[30] «Օրագրութիւն Երեմիա Քէօմիւրճեանի», էջ 536։

* * *

Ա. Եպ. Սյուրմեյանը «Եվրոպայի մասնավոր հավաքումների» ձեռագրաց ցուցակի առաջին հատորում հրատարակել է փարիզաբնակ Նուրհան Ֆրինկյանի սեփականությունը հանդիսացող մի տաղարան, որն ընդօրինակված է 1591 թ. Գասպար կրոնավորի կողմից Շենքուշ գյուղաքաղաքում Աստվածատուր եպիսկոպոսի պատվերով։ Հետագայում այդ ձեռագրի սեփականատեր է դարձել Դավիթ անունով մի երիտասարդ, որը և չափածո հիշատակագրություն է թողել՝ ծածկագրելով տարեթիվը։ Այն հետևյալն է.

Ո՞վ ընթերցող քաղցրաբարբառ,
Եւ նորոգօղք մտօք սրայծառ,
Թիւն Հայոց է յոյժ պատկառ,
Որ և ստորև դրի երկբառ։
Լաւ համարեա և ի միտ ա՛ռ,
Զներքոյ գըրեալս յետին գիր քառ,
Մուտ ի յայգիս ով գերափառ,
Կըրթեա միրով դու Ճ. ծառ:

Ծածկագիրը վերծանվում է. Ճ(100) + Ծ(50) + Ա(1) + Ռ(1000) = 1151, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1702 թվականը (1151 + 551 = 1702)։

Ծածկագիրը վերծանել է Ա. Եպ. Սյուրմեյանը (տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու», հ. Ա, Փարիզ, 1950, էջ 72)։

* * *

«Մու»-ն մեկի նշանակությամբ գործ է ածված Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 442 ձեռագրի «Հատակոտորք» ժողովածուի մեջ, ումն Գրիգորի նամակի վերջաբանում։ Այնտեղ ասվում է.

Թէ զերբըն գրոյս ասիցես՝ խնդրեմ,
Արդ յորում ամի գրեցան՝ ասեմ,
Ըզմուճն հաշիւ պինդ կալ զեա ըզվէմ,
Թուեա ընդ նմա, որ ասէ Լռեմ։ (Տաշ., էջ 911)

Թվագումար այս ծածկագիրը հրատարակել է Հ. Տաշյանը և վերծանել՝ «Մու»-ն հաշվելով մեկ, նրան գումարել է «ԼՌԵՄ» բառի տառերի թվական գումարը. 1 («ըզմուճն») + լ(30) + ռ(1000) + ե(5) + մ(200) և ստացել 1236, որի վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստացել է 1787 թվականը. 1236 + 551 = 1787։

* * *

Թվագումար մի ծածկագիր գրի է առնված Զմմառի № 462 ձեռագրի չափածո հիշատակարանում, որում Կարապետ գրիչը գաղտնագիր հայտնել է Ներսես Շնորհալու «Մեկնութիւն Ս. պատարագի» աշխատության ընդօրինակման տարեթիվը։

Փառք տերութեանն անորոշի,
Համագոյ երեքսրբենի...
Որ յարահեղ հոսման շնորհի,
Ետ ինձ հիքոյս մասն ինչ շիթի,
Աւարտ ածել զճառս խորհրդի...
Ի ձմերային ամանակի,
Եւ դժնդակ օդոյս ցրտի,
Զոր թիւս եկեալ էր ճայսմ ամի.
Քառեակ՝ կաճառ յանջատելի.
Գարնանային ամսոյ նախկի,
Կալուածն կայր հնգից երրի,
Ներ շաբաթու վեցերորդի,
Յաւուրս տօնի սրբոյ խաչի,
Քառասնորդաց մեծ պասեքի,
Զրաւեցաւ ճառս տէր Ներսիսի... (Զմմառ, II, 58)։

Ծածկագիրը հրատարակված է «Զմմառի ձեռագրաց ցուցակում», սխալ վերծանությամբ. կարծել են, թե գրչության թվականը գաղտնագրված է միայն «կաճառ» բառի մեջ, ուստի իրար գումարելով այդ բառի տառանիշերի թվական արժեքները, ստացել են 1713 (կ(60) + ա(1) + ճ(100) + ա(1) + ռ(1000) + 551 = 1713)։ Ուշադրությունից դուրս է մնացել ծածկագրողի պահանջը՝ «քառեակ»-ը «կաճառ»-ից անջատելու, այսինքն՝ հանելու մասին։ Իսկ եթե «կաճառ»-ի գումարից հանենք «քառեակի» գումարը, գրչության թվականը կդառնա ո՛չ թե 1713, այլ՝ 1709։

Որ ձեռագիրն, իրոք, գրվել է 1709 թվականին, երևում է հիշատակարանի հաջորդ տողերից, ուր հայտնվում է, որ ձեռագրի գրչությունն ավարտվել է գարնանային առաջին ամսի 15-ին («Գարնանային ամսոյ նախկի... հնգից երրի»)։ 1713 թվականին մեծ պահքի վեցերորդ շաբաթը եղել է մարտի 22-ից—28-ը, որը չի զուգադրվում ապրիլի 15-ի հետ, իսկ 1709 թվականին մեծ պահքի վեցերորդ շաբաթը եղել է մարտի 13-ից—19-ը, որը և համապատասխանում է ապրիլի 15-ին («Հնգից երրի»)։

(Հրատ. ԲԵՀ, 1972, № 1, էջ 115)։

* * *

Կարապետ կազմարարը ուխտ է գնացել Երուսաղեմ, այնտեղ կազմել է ներկայումս տեղի Ս. Հակոբյանց մատենադարանի № 265 ձեռագիրը և նրա մեջ թողել չափածո հիշատակագրությունը՝ ծածկագիր թվականով.

Մեք ի վերին յարենէ,
Ի գաւառէն Վայոց Ձորէ,
Ի բնիկ գեղջէ յԱյրինիցէ...
Ի թվին Հայոց ՄՈՄԷ
Խձ յաւելորդէ...։

Ծածկագիր թվականը վերծանված է. Մ(200) + Ո(600) + Մ(200) + + Է(7) + 551 = 1558 (Եղմ., II, էջ 63բ)։

Այս հիշատակագրությունից երևում է, որ կազմարարը Վայոց Ձորի Արենի գյուղից է։ Այդ գյուղն իր նախկին անունով այժմ էլ կա Եղեգնաձորի շրջանում։

* * *

Հովհաննես Կարնեցին գնացել է Երուսաղեմ և այդ կապակցությամբ գրել է իր երկու տաղը՝ «Ի վերայ Ս. Երուսաղէմայ» և «Ի վերայ Տիբերական ծովուն» ու երկու տաղի տարեթվերը գաղտնագրել փումարգիր ծածկագրությամբ։

Առաջինում ասված է.

Սիրով մեծաւ տարոստ աստի ծունր եւ համբոյր արդ ձօնեմ,
Շնորհաբաշխ քարանց հողոյն ըզդէմս իմ առ փարեմ,
(Առ մեծ) Թուոյս կարօտակիր Հէննէս զերգս յարմարեմ,
Դէպի քաղաքն ա[ստուա]ծակոխ առնէր տանէր հովն զիս, հովն զիս։

Տարեթիվը ծածկագրված է կլոր փակագծի մեջ առնված «Առ մեծ» բառերում։ Հրատարակել է Ն. Պողարյանը և վերծանել. ա(1) + ռ(1000) + + մ(200) + ե(5) + ծ(50) + 551 =1807 թ. (Եղմ., VI, էջ 223)։

Երկրորդում ասված է.

Տիբերիայ ծովն ի մէջ մեծ դաշտի
Տարածեալ ծփայ, կարի ցանկալի,
Ի գոյն սառնորակ՝ հանդէպ արեւի,
Որպէս ադամանդ՝ աչաց երեւի...
Ներ (ծառամբ) թւոյ ուխտաւորեցաք
Սրբութեանց տեղեացս երկրպագեցաք...

Տարեթիվը գաղտնագրված է կլոր փակագծի մեջ վերցրած «ծառամբ» բառի մեջ։ Վերծանել է Ն. Պողարյանը. ծ(50) + ա(1) + ռ(1000) + ա(1)+ + մ(200) + բ(2) + 551 = 1805 (Եղմ., VI, էջ 225)։

* * *

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը «Գովաբանութիւն տնօրինական տեղեաց յԵրուսաղէմի» բանաստեղծության վերջում գրչության թվականի մասին թողել է հետևյալ ծածկագիր քառյակը.

Էհպապ Քրիստոսի թուէք.
Եւ զաչ իմ ի Հայս յիշեցէք.
Ի բարեացդ խնդրի բարիքն
Միշտ զբարին յինէն մի խնայէք։

Ծածկագրված թվականն այստեղ երեք բառերի մեջ է՝ էճպապ (առաջին տողի առաջին բառը), զաչ իմ (երկրորդ տողի երկրորդ և չորրորդ բառերը) և յինէն (չորրորդ տողի երրորդ բառը)։ Առաջինը ներկա թվականով է, իսկ մյուս երկուսը՝ հայկականով։

Էճպապ բառը վերծանվում է. է(7) + հ(70) + պ(800) + ա(1) + + պ(800) = 1678։

Զաչ իմ վերծանվում է. զ(6) + ա(1) + չ(900) + ի(20) + մ(200)= = 1127 + 551 = 1678։

Յինէն բառը վերծանվում է. յ(300) + ի(20) + ն(400) + է(7) + + ն(400) = 1678։

* * *

Մանչեստրի մատենադարանի հայկական ժողովածուի մի ձեռագրում, որը շարակնոց է՝ ընդօրինակված 1616 թ., Հակոբ գրչի կողմից, գրի է առնըված մի տաղ, որի սկզբնատառերում գաղտնագրված է տաղերգուի անունը՝ «Նազարեթէ ասացեալ է»։ Այդ նույն տաղի վերջում գաղտնագրված է նաև գրչության տարեթիվը.

Ցանկամ գրոյն որ միացեալ,
Բանըն գրով մարմին եղեալ։
Եւ թուականէս յետի տոսի,
Թիւըն ծածկեալ գրով ամփոփ։
Այս թուականըն յետ գիրըն հուպ,
Եւ թուական եղէ Յակոբ (կարմիր թանաքով—Ա. Ա.)
Լոյս է բան գըրոյս հետեւր,
Այսու ճշմարտութեան հասիր։
Եւ սովաւ լինի բան և իր,
Անունս գլխագրէն ծանիր։

Թվագումար ծածկագրով գաղտնագրված է. «եղէ Յակոբ»-ը, որը վերծանել է Տիրայր եպիսկոպոսը ձեռագրերի ցուցակում, ե(5)+ղ(90)+է(7)+ + Յ(300) + ա(1) + կ(60) + ո(600) + բ(2) = 1065, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստացել 1616 թվականը (1065+ +551=1616)։

Այսպիսով, պարզվում է, որ տվյալ տաղի հեղինակը Նազարեթն է, որն իր ծածկագրած տարեթվի համար ստաղձ է ընտրել Հակոբ գրչի անունը։

* * *

Գրիգոր Վանեցին Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 2332 ձեռագրում թողել է չափածո մի հիշատակագրություն, որի մեջ գաղտնագրել է գրության թվականը։

Ծովամէջս գըրեցաւ յԱնապատ.
Լիմ կոչեցեալ մենաստանս անպաղտատ,
Վանական Գրիգորէս վըշտաշատ,
Նահանգէս էր Վանայ ծին նախատ։
Թուականն էր (մեծ բառ) հայկական,
Ջերմ ամսեան լատինաց մեկնական,
Ժամանակըն տօվ էր սաստկական.
Քիլայ հացն վաթսուն էր դայեկան։

Ծածկագիրը գաղտնագրված է փակագծի մեջ առնված «մեծ բառ»-ի մեջ, որ կվերծանվի. մ(200) + ե(5) + ծ(50) + բ(2) + ա(1) + ռ(1000) + + 551 = 1809։ Այն հրատարակել և վերծանել է Ն. Պողարյանը (Եղմ., VII, էջ 453)։

* * *

Զմմառի մատենադարանի № 98 ձեռագիրը, որը պարունակում է «Գիրք ձեռնադրութեան» բնագիրը, ընդօրինակված է Գալուստ գրչի կողմից 1775 թ. Զմմառի վանքում։ Գրչագիրն ունի երկու տնից բաղկացած գաղտնագիր, որոնցից առաջինում, ինչպես երևում է, ծածկագրված է ծածկագրողի ծննդյան թվականը, իսկ երկրորդում՝ ձեռնադրության։

Ծածկագիրը հետևյալն է.

Մատթէ, Մարկոս, Ղուկաս, Յոհան,
Քառից անուանց է թուական,
Եւ խառնեսցես Զ յոբելեան,
Չորեք Ժ.նիւ գայ լման...
Ի թուականիս մեր Հայկազան,
Հազար Ճ մին յոբելեան,
Եւ չորս խառնեայ լինի լման,
Ունի ընդ իւր ձեռնադրութեան։

Ձեռագրի նկարագրությունը և վերոբերյալ երկու քառյակները հրատարակված են Զմմառի մատենադարանի «Ձեռագրաց ցուցակում» և չեն վերծանված (Զմմ., I, էջ 204)։

Ծածկագրի քառյակներից առաջինում թվական արժեքով գաղտնագրված են չորս ավետարանիչների՝ Մաթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի անունների առաջին տառերը, որոնց գումարը հավասար է 790-ի. Մ(200) + + Մ(200) + Ղ(90) + Յ(300) = 790։

Այնուհետև պահանջվում է ստացած թվին գումարել վեց հոբելյան («Եւ խառնեսցես Զ յոբելեան») այսինքն՝ 300 (6×50=300), նախորդի հետ լինում է 1090։ Տարեթիվն ամբողջացնելու համար պահանջվում է ստացածին

գումարել նաև 40 («Չորեք Ժ. նիւ գայ լման»), լինում է 1130 (1090+40= = 1130)։ Սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1681 (1130+551=1681)։

Երկրորդ քառյակը սովորական պարզ հոբելյանով գաղտնագրված ծածկագիր է. տրված է մեկ հազար, մեկ հարյուր և մեկ հոբելյան՝ 50, դրանց ավելացրած չորս։ Գումարը լինում է 1154 (1000+100+50+4=1154), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1705 թվականը (1154+551=1705)։

Այսպիսով, պարզվում է, որ Զմմառի № 98 ձեռագրի ծածկագրողի ծննդյան թվականը 1681-ն է, իսկ ձեռնադրության թվականը՝ 1705-ը։

34. ԱՌԵՂԾՎԱԾԱԳԻՐ ԾԱԾԿԱԳՐԵՐ

Ծածկագրերի շարքում հաճախ հանդիպում են գաղտնագրված թվականներ, որոնք դժվարությամբ են ճանաչվում, այդպիսիները մենք անվանում ենք «առեղծվածագիր ծածկագրեր»:

Անկյուրիայի մատենադարանի № 72 ձեռագիրը բովանդակությամբ «Բառգիրք» է, տոմարի մեկնություն և բառարան։ Այն ընդօրինակել է Ներսես գրիչն էջմիածնում և ձեռագրի գրչության թվականը գաղտնագրել ստորև բերվող չափածո հիշատակարանում.

Գոյացուցիչ ձայն յօդաւոր բանականաց,
Բաժանեսցես զնոյն ի մասունս ըստ տարերաց,
Նախնիկ զնդէն թիւս վեցից բեր ի դիմաց,
Կալցես ի ձեռս զտառս նախկինս այլ հատորաց,
Եթէ իցես մարգեալ յարհեստս քերթողաց,
Այնու գտցես դու զթուական Հայոց մեծաց։ (Անկ., սյուն. 373)

Չափածո այս հիշատակարանի վերջում գրիչը բերել է թվանշանների հետևյալ խումբը՝ «ԱԺՃՌ»։

Բ. վ. Կյուլեսերյանը, որ հրատարակել է այս ծածկագիրը «Ղալաթիայի ձեռագրաց ցուցակում», տվյալ թվանշանները, իրավացիորեն, համարել է ձեռագրի գրչության թվականը և գումարելով նրանք իրար, ստացել է 1667 թվականը՝ թույլ տալով մեկ տարվա սխալ (նույն տեղում, էջ 374)։

Տվյալ ծածկագիրը ուշագրավ և ինքնատիպ է նրանով, որ հեղինակը հիմք է վերցրել միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվերի առաջին թվանշանները, որոնց հետ հոդվում են հաջորդող թվերը, այդ թվանշաններն անվանել է «յօդաւոր բանականաց» և նրանցով գաղտնագրել։

Ծածկագրի վերծանությունը հետևյալն է. Ա(1) + Ժ (10) + Ճ(100) + + Ռ(1000) = 1111։ Պահանջվում է «նախկին գնդէն», այսինքն՝ միավորներից, բերել վեցը, որով ստանում ենք 1117։ Սրան գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1668 թվականը (1117+551= = 1668)։

Որ ծածկագրողի գաղտնիքը ճիշտ է հասկացվել, այդ երևում է նրա մի այլ հիշատակարանից, ուր նա գրչության չծածկագրված թվական է մատնացույց արել հայկական ՌԺԷ թվականը (նույն տեղում, սյուն 370), որը ներկա թվահաշվով համասար է 1668-ի։

* * *

Երեմիա Քյոմուրճյանն իր «Ստամպօլոյ պատմութիւն» գրության տարեթիվը հայտնում է հիշատակարանի հետևյալ քառյակում.

Բաւ է գիտնոց իմաստնոց՝
Ջվերոյգրեալս որ թէ իմանան,
Հայ Թուականն դա զինչ է,
Երեմիաս յանգեալ զիւր ընթայն։

Թվականը գաղտնագրված է երրորդ տողում՝ «զինչ է» բառերում և ունի երկու իմաստ. մեկ կարելի է հասկանալ, թե հեղինակը ցանկանում է հարցնել, թե հայկական տարեթիվն ինչ թվականում է, իսկ մյուսը՝ թե հայկական թվականը գաղտնագրված է «զինչ է» բառերի թվական գումարի մեջ։ Իրականում երկրորդն է։

«Զինչ է» ծածկագիր թվականը վերծանվում է. զ(6) + ի(20) + ն(400)+ + չ(700) + է(7), որ համասար է 1133-ի։ Սրան գումարելով 551, ստանում ենք 1684։

Պարզվում է, որ Քյոմուրճյանն իր «Ստամպօլոյ պատմութիւնը» գրել է 1684 թվականին։

(Հրատ. ՀԳՊ, 233, ՀԳԳ, 169)։

* * *

Միանգամայն այլ կառուցվածքով է գաղտնագրված № 9646 ձեռագրի թ. 225բ ծածկագիրը.

Ջանա զթըվին սատի գիտեալ,
Տես թէ որպէս գահն բազմեալ,
Քառաթև պաղպաջուն կամեալ,
Անդ աճեցմամբ ի ներս միտեալ,
Յայնժամ փոցես զթիւ կատարեալ։

Այստեղ ծածկագրված են առաջին և հինգերորդ տողերի առաջին և վերջին տառանիշերը։ Վերցնում ենք առաջին տողի «ջանա» բառի առաջին տառը, նույն տողի «գիտեալ» բառի վերջի «լ»-ն, հինգերորդ տողի «Յայնժամ» բառի առաջին «յ»-ն, նույն տողի «կատարեալ» բառի վերջի «լ»-ն և այդ տառերի թվարժեքը գումարելով, ստանում 1260 [Ջ (900) + Լ(30) + + Յ(300) + Լ(30) = 1260]։ Նրան ավելացնելով 4 («քառաթև»-ը) և հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1715 (1260+4+551= = 1715)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 6540 ձեռագիրը բովանդակում է «Անտառ նորոգոյն մտածմանց...» բնագիրը և ունի այսպիսի մի ծածկագիր թվական.

Զամս կապման չար գազանին,
Թիւ ոչխարացն կալ կրկնակին,
Յոբելին մի ընդ անց հաշւին,
Վեշտասանիւ գուտ լրակին։ (թ. 2ա)

Չար գազանի կապման թվականն է համարվում 666-ը։ Ոչխարների թիվն ընդունված է սովոր մեկ հարյուր։ Հոբելյանը, ինչպես գիտենք՝ 50 է։ Առաջարկված է նաև ավելացնել 16։ Նշված բոլոր թվերը գումարելով, ստանում ենք 932 (666+200+50+16=932)։ Այս թվի վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1483 թվականը։

Ստացած մեր այս թվականը չի համապատասխանում տվյալ գրչագրի ժամանակին, որը 17-րդ դարից ավելի հին գրչություն չունի. արդյո՞ք մենք ենք մեր հաշվումների մեջ սխալվում, թե ձեռագրում ընդօրինակված այս ծածկագիր թվականը ավելի հին գրչագրից է։

(Հրատ. ԲԵՀ, 1967, № 1, էջ 214)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 5416 ձեռագրի գրիչ Պետրոսը 1747 թ. գրած հիշատակարանում իր անունը գաղտնագրել է հետևյալ բանաստեղծության մեջ.

Արդ՝ ես տրուպս ամենայնի,
Եւ քան զամէն մարդ աղտեղի,
Զընչին ծըրողս այսմեկ տառի,
Սորտեպ ծառայս ձերդ ծառայի,
Որ եմ հասեալ եռ տաս վեցի,
Եւ ոչ գործեալ մասն մի բարի
Ի ձէնջ հայցեմ մին ողորմի։ (թ. 17բ)

Պետրոս անունն այստեղ ծածկագրված է աջից ձախ «սորտեպ» ընթերցումով։

* * *

Ծածկագրության վանկագիր տեսակը հանդիպում է մեզ 14-րդ դարի ժամանակագիր Մխիթար Անեցու «Խրախճանականների» (զվարճալի թվաբանական խնդիրների) մեջ։

Այն կազմված է ուշագրավ սկզբունքով. ծածկագրվող բառի տառերը բաժանվում են իրարից, և նրանցից յուրաքանչյուրի հետևից կցվում է մեկ կամ երկու տառ. եթե տառը ձայնավոր է, կցվում է տ տառը, իսկ եթե բա-

զաձայն՝ ատ տառերը: Բերենք այդ ծածկագրությունից մի քանի օրինակ՝ վերցնելով ՄԱՄ-ի № 1770 ձեռագրից (թ. 158բ):

«Մարդ մի մեռաւ, երեք որդի ունէր ու երեսուն ոչխար՝ տասն երեքբեր, տասն՝ երկուսբեր ու տասն միոբեր: Հանց բաժանէ, որ յերեքբերէն ու երկուսբերէն և ի միոբերէն երեք որդոցն լինի և գառն ի մօրէն չբաժանի»:

Խնդրի լուծումը. «Ետ բատ կատ ոտ սատ՝ երեքբեր, վատ եա ցատ՝ երկուբեր, ետ բատ կատ ոտ սատ՝ միոբեր: Զատ ոտ բատ սատ՝ երեքբեր, ետ բատ կատ ոտ սատ՝ երկուբեր, չատ ոտ բատ սատ՝ միոբեր: Ետ բատ կատ ոտ սատ՝ երկուբեր, չատ ոտ բատ սատ՝ միոբեր. չատ ոտ բատ սատ՝ երեքբեր»:

Վերծանվում է. 2՝ եռեֆբեր, 6՝ երկուբեր, 2՝ միոբեր: 4՝ եռեֆբեր, 2՝ երկուբեր, 4՝ միոբեր: 2՝ երկուբեր, 4՝ միոբեր, 4՝ եռեֆբեր:

«Երեսուն մարդ ի բաղնիս գնացին. հային երեա երկու սպիտակ, փռանկն՝ մեկ սպիտակ, ասորին՝ թասումն: Երբ տեսան երեսուն մարդ երեսուն սպիտակ էին տվել»:

Խնդրի լուծումը. «Հատ ատ յատ նատն՝ ժԲ, փա ռատ նատ գատ նատն՝ Բ, ատ սատ ոտ րատ իտ նատն՝ ժԶ»:

Վերծանվում է. հայն՝ 12, փռանկը՝ 2, ասորին՝ 16:

«Մին մարդ մեռաւ, մէկ սնդուկ մնաց իրօք: Երեք որդի ունէր: Առաջին որդին տեսաւ զինչ կայր ի սնտուկն ու հանչանք մ այլ ինքն եդիր ի վերայ, երկու դեկան էառ զիւր բաժինն: Նոյնպէս արար և երկրորդն. նոյնպէս՝ և երրորդն, և այլ չի մնաց ինչ ի սնտուկն: Տես թէ քանի՞ կայր ի սնտուկն»:

Խնդրի լուծումը. «Տատ ատ սատ նատ ու կատ էտ սատ»:

Վերծանվում է «Տաս ու կէս»: (Խնդրի լուծումից երևում է, որ մի դեկանը հավասար է եղել վեց սպիտակի):

«Մարդ մի տղուն հարիւր սպիտակ երետ, թէ հարիւր հաւ գնէ: Նա գնեց ղազն հինգ սպիտակ, տանու հաւն մի սպիտակ, ճնճղուկն քսանն ի մի սպիտակ: Տես թէ քանի եղել է ղազն և հաւն և ճնճղուկն»:

Խնդրի լուծումը. «Ղատ ատ զատ նատն՝ ժԹ, հատ ատ վատ նատն՝ մի, ճատ նատ ճատ ղատ ոտ ւոտ կատ նատն՝ Զ»:

Վերծանվում է. «Ղազն՝ 19, հավն՝ մի, ճնճղուկն՝ 80»:

«Երամ մի հաւ կու գնային: Մի հաւ ի դեմ ելաւ, ասաց. «Բարի եկիք հարիւր հաւ»: Ասացին. «մեք չենք հարիւր հաւ. մեք ու մեր հանչանք մի այլ քան զմեզ, ու մեր կէսս ու կիսու կէսն ու դուք հարիւր եմք, տես քանի են եղել»:

Խնդրի լուծումը: «Ետ րատ սատ ոտ ւուտ նատ ու վատ եա ցատ»:

Վերծանվում է. «Երեսուն ու վեց»:

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1383 ձեռագիրը պարունակում է Պրոկղի «Շաղկապ աստուածաբանականք» աշխատության ընդօրինակությունը: Գրիչը, որի անունը հայտնի չէ, թողել է ձեռագրի գրչության ավարտման վերաբերյալ հետևյալ չափածո հիշատակարանը.

Զգըծիցըն ծայրից դրութեան ունողի,
Զեռնարկեալ իմ զայս թուղկըս կազմեցի,
Զի զոյց իւրաքանչիւրն երկերիւրեցի,
Եւ յոյց ըզթիւ մատանցս ի բաց ընկեցի: (Եղմ., V, էջ 32)

Ծածկագիր հիշատակարանը հրատարակել է Պողարյանը և վերծանել: «Զայս»-ը՝ վեց է, որը բազմապատկելով երկու հարյուրով, ստանում ենք 1200: Նրանից պահանջվում է հանել մատների թիվը («...ըզթիւ մատանցս ի բաց ընկեցի»): Մատների թիվը տաս է, որը հանելով 1200-ից, մնում է 1190: Սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1741 թվականը (1190+551=1741):

* * *

Պետրոս Աղամալյանը, որը հայ մատենագրության աչքի ընկնող դեմքերից մեկն է, գրել է «Մեկնութիւն Յոբայ» աշխատությունը և նրա գրչության թվականի մասին թողել ներքև բերված չափածո ծածկագիր հիշատակարանը.

Հայցեմ ի քէն մի տար զանձն իմ ի փորձութիւն.
Եւ թէ տացես՝ տուր ըստ Յովբայ զհամբերութիւն:
Տո՛ւր ինձ առ բանս քոյինաշունչս զանինչ և ջան,
Եւ զոր սկըսայց՝ հանգոյն Յովբայ ած ի վախճան:
Ի թիւ ազատութեան քսան ու չորս և կէս,
Տէր կատարեաց ձեռամբ տրպիս լուծմանս հանդէս:
Ի յունիսի սկզբան դիպեցաւ սորին վախճան: (Եղմ. I, էջ 566)

Հիշատակարանը հրատարակել է Պողարյանը, բայց չի վերծանել:

Այստեղ «ազատության թիվ» ասելով, ինչպես պարզվում է, Աղամալյանը նկատի է ունեցել հոբելյան պարբերաշրջանը՝ 50 տարին: Քսան և չորս ու կես հոբելյանը հավասար է 1225-ի (24×50=1200+25=1225), որին գումարելով 551, ստանում ենք 1776 թվականը:

Մեր այս հաշվումը ստուգվում է Աղամալյանի տվյալ աշխատության խորագրում գրված հետևյալ հիշատակությամբ. «Գիրք Մեկնութիւն Յովբայ, արարեալ տեառն Պետրոսի գերիմաստ արքեպիսկոպոսի Աղամալեան Նախիջևանցւոյ... Աւարտեալ յամի տեառն 1776 ի սկզբանն յունիսի»:

* * *

Պետրոս գրիչը Սիմեոն Ջուղայեցու «Քերականութեան մեկնութեան» ձեռագրի մեջ, որն այժմ Մաշտոցի անվան մատենադարանում է և գրանցված է 2349 թվահամարի տակ, թողել է գրչության տարեթվի մասին մի ծածկագիր, ուր օգտագործված են «հոփփիմեանք» և «դասք թագուհեաց» թվարժեք բառերը: «Հոփփիմեանք» ասելով ծածկագրողը նկատի է ունեցել Հռիփսիմեանց կույսերի թիվը, որը հաշվվում է 70 հոգի («էին աւելի քան կեօթանասուն»), իսկ թագուհիների թիվն ընդունված է համարել 60-ը («վաթսուն են թագուհիք»):

18—884

Թիւս այս շայիւ սկզբնաւորի,
Հինգ հարիւրեակ սա անուանի,
Եւ նոյն տառըս կրկնապատկի,
Հազար թիւն լըրման բերի:
Երկ յոբելեան առ այս լըծի,
Դասք Թագուհեացն ի ներս ածի,
Թիւք Հռիփսիմեանցն որքան մտածի,
Ընդ այսու Թուով շարաբարդի,
Յորմէ կոյս թիւն արտաքս ձըգի,
Յայնժամ թիւ մատենիս գըտցի:
Յարադըրող այսըմ բանի,
Պետրոս անուամբ աբեղայի:
Ըսկիզըն առեալ դեկտեմբերի
Աւարտ եղեալ ի մայիսի: (թ. 5ա)

Այստեղ ՇԼԲ-ն (532-ը) ծածկագրված է առանց կողքի երկու թվերի՝ 32-ի, վերցված է կլոր 500-ը, որի կրկնապատիկը, ինչպես պահանջում է և ծածկագրողը, կլինի մեկ հազար: Սրան պետք է գումարել երկու հոբելյան, այսինքն՝ 100 (2×50=100): Թագուհիների թիվը 60 է, իսկ Հռիփսիմյանցը՝ 70. տրված թվերը գումարելով ստանում ենք 1230 (1000+100+60÷70= = 1230): Սրանից պետք է հանել «կոյս թիւը», իսկ «կոյս թիւ» ասելով ծածկագրողը հասկացել է ոչ թե յոթը, այլ՝ 532 թվանշանի կողքի 32-ը, որը բաց էր թողել առջևում: 1230-ից հանելով 32, ստանում ենք 1198, սրան գումարում ենք հայկական թվականի տարբերությունը և ստանում 1749 (1198+551=1749): Ուրեմն՝ տվյալ ձեռագիրը գրվել է 1749 թվականին:

Թյուրիմացության արդյունք է Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի ցուցակում տվյալ ձեռագրի գրչության թվականը 1681-ը համարելը: Որ մեր վերծանությունը ճիշտ է, այդ երևում է նույն ձեռագրում գրված ծածկագիր մի այլ թվականից, ուր ասված է.

Վերոյգրեալ թիւ հազար զուտ,
Այլ և հարիւր իննանեակ և ութ,
Ըամեա ի մի տես ժողովոյդ՝
Դոյգքան Թուոմն է Հայկազնոյդ:

Ըստ այս հիշատակարանի, ձեռագիրը գրված է, ուրեմն, 1198-ին, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1749:
(Հրատ. ԲԵՀ, 1967, № 1, էջ 213, ՀԳԴ, էջ 173):

* * *

«Սրբերգենի» բառը 12-ի և «օծեալ անդամները»՝ 9-ի թվական արժեքով գաղտնագրված են № 9646 ձեռագրի հետևյալ ծածկագրի մեջ.

Հայկազնեան թվականին,
Սրբերգենիւ յոբելեանին,
Կրկին զնոսա յոգնաբանին,

Քանիերորդ օծեալ անդամին,
Յամէն ինն մին կոյս թիւ կցին,
Եզակ թվով յանկ ելանին: (թ. 225բ)

Ծածկագրողը «սրբերգենի» բառին տվել է 12 թվական արժեք՝ հիմք ունենալով շարականները, որոնց նա «սուրբ երգեր» է անվանում, իսկ շարականները 12 եղանակ ունեն: Հոբելյանը՝ 50-ը, բազմապատկելով 12-ով, ստանում ենք 600: Կրկնում ենք այն («Կրկին զնոսա յոգնաբանին»), ունենում ենք 1200: «Օծեալ անդամները», ըստ ավանդության, ինն է համարվում (ճակատը, սիրտը, թիկունքը, աչքը, ականջը, քիթը, երկու ձեռքերը և ոտքերը), որը բազմապատկելով 7-ով («Յամէն ինն կոյս թիւ կցին»), լինում է 63, որին ավելացնում ենք մեկ «եզակ» թիվ, իսկ եզակը՝ 1-ն է, դառնում է 64: 1200-ին գումարում ենք 64 և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1815 (1200+64+551=1815), որը և ծածկագրված տարեթիվն է:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրում «լողական» տերմինը 500-ի և «սեռակ»-ը՝ 3-ի թվական արժեքներով գործածված են հետևյալ ծածկագրության մեջ (այդ բառերի թվական արժեքները նշված են լուսանցքում).

Եթ[է] կամիս այլ կերպ թվել,
Զարթո ըզմիտդ առ ի խնդրել,
Նուրբամտութեամբ զմտաւ ածել,
Բառի միոյ օրինակել:
Զոր գտանես զմեռեալն աստի,
Զայն ըմբռնեա առանց փաստի,
Խնդրեա՛ ի նմանէ լեր միաստի,
Տացէ ի քեզ նա հաւաստի,
Ի նոյ[ն] հաշիւ արդ նվաստի,
Յարմար զոլով յոյժ սեռակի: (թ. 225բ)

Այստեղ գումարգրով գաղտնագրված է նաև մեռեալ բառը, որը հավասար է 1241-ի (մ(200) + ե(5) + ռ(1000) + ե(5) + ա(1) + լ(30) = = 1241): Սրան գումարում ենք իններորդ տողի առաջին Ի տառի թվական արժեքը՝ 20-ը («Ի նոյ[ն] հաշիւ») և «սեռակը», որն ընդունվում է 3: Տրված թվերը գումարելով իրար և ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1815 (1241+23+551=1815): Ծածկագիրն ուրեմն, կազմված է 1815 թվականին:

* * *

Մինաս դպիրը № 9646 ձեռագրում «լողական» տերմինը 500-ի թվական արժեքով գաղտնագրել է իր կազմած հետևյալ ծածկագրում.

Հաշիւ լողականաց, որք տէրամբ կալեալ,
Անծնական համարլով լիցի աճեցեալ,
Եւ հնկեակ յոբելեան և ե[օ]թ յաւելեալ,
Եւ մասունք քերթողաց համազուգակցեալ:

«Հողական»-ը ընդունելով 500 (ինչպես այդ նշված է տվյալ ձեռագրի լուսանցքում), այն կրկնապատկում ենք («Անձնական համարով լիցի աճե-ցեալ»), ունենում ենք հազար, նրան գումարում ենք 250՝ հինգ հոբելյան (50×5=250) և «եօթը», ստանում ենք 1257 (1000+250+7=1257)։ Սրան գումարում ենք հայկական թվականի տարբերությունը և գտնում ժամկա-գիրը կազմելու տարեթիվը՝ 1808 (1258+551=1808)։

* * *

Գրչության երեք տարբեր թվականներ գումարգիր ժամկագրով գաղտ-նագրված են մատենադարանի № 9646 ձեռագրի հետևյալ ժամկագրում.

Մերձիլ դարոյն աշխարհաշարժ,
Ի թվաբանիս առնանէ բարժ,
Գայ Նեռն պիղծ չարութեամբ վարժ,
Թիւն և նշանն է ոմն խաժ,
Ի Մառաշէ կամ կամ ի քաշէ,
Անուն յորջորջի շիլէ մաշ է... (թ. 364ա)։

Բերված հիշատակարանում առաջին տարեթիվը գաղտնագրված է «առ-նանէ» բառի մեջ, որը գումարգրով վերծանվում է. ա(1) + ռ(1000) + + ն(400) + ա(1) + ն(400) + է(7) = 1809։

Երկրորդ թվականը գումարգրով գաղտնագրված է «է ոմն խաժ» բառերի մեջ, որը վերծանվում է. է(7) + ո(600) + մ(200) + ն(400) + խ(40) + + ա(1) + ժ(10) = 1258։ Սրան գումարելով հայկական թվականի տարբե-րությունը, ստանում ենք 1809 թվականը։

Երրորդ թվականը գաղտնագրված է «շիլէ մաշ» բառերի մեջ, որը վեր-ծանվում է. շ(500) + ի(20) + լ(30) + է(7) + մ(200) + ա(1) + շ(500) = = 1265։ Ստացած թվին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1816 թվականը (1265+551=1809)։

* * *

Մեր մատենադարանի № 9646 ձեռագրում գաղտնագրված է ուշագրավ մի ժամկագիր՝ Անդրկովկասում գործող ռուսական զորաբանակի հրամանատար գեներալ Պասկևիչի Արևմտյան Հայաստանի Կարին քաղաքը վերցնելու տա-րեթվի մասին։ Այն հետևյալն է.

Զի՞նչ է որ ասէ Յակոբ գազան չար եկեր զորդին իմ։
Որոյ անուամբ թիւս այս մեր յանկ ելանի։
Հազիւ ծարիւ կացեալ, եօթն յոբելեանի.
Երկ յօնսայք յակնապիճ սոցունց կլանի.
Տաճկաց Բայազիտ գալն հաշիւն ըլնանի.
Յետս դառնան սևադէմք ի դժոխս կլանի.
Յերբ լուան զՊասկևիչէն զեյարեն առնանի։ (թ. 363ա)

Տվյալ ժամկագրում գաղտնագրված է «նախանձ» բառը (նկատի է ունեց-վել Հակոբի որդիների նախանձության հետևանքով իրենց եղբայր Հովսեփի վաճառքը), որի տառանիշերի թվական արժեքը հավասար կլինի 922-ի. (ն(400) + ա(1) + խ(40) + ա(1) + ն(400) + ձ(80) = 922)։ Ստացված թվին պետք է գումարել յոթ հոբելյան՝ 350 և երկու «յօնսա»՝ 6, կլինի 1278, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը՝ 551, կստանանք 1829 (1278+551=1829)։

Իրոք, 1829 թվականի հունիսի 18-ին ռուսական զորքերը, Պասկևիչի հրամանատարության տակ, գրավել են Կարին քաղաքը։

* * *

Մինաս գրիչն Արիստոտելի «Տաս ստորոգութեան» գլխագրերի առաջին տառերի թվական արժեքների հիման վրա գաղտնագրել է հետևյալը.

Թիւ արկանեմ յայսմ քարտէզ,
Արիստոտ[է]լիւ տասնեակ պարտէզ,
Քանակն ի սոյնց տես յարալէզ,
Արտալուզեա զմին ասպարէզ,
Ջճիւղն տառն յողջակէզ,
Թիւ աֆիսոն տարափն և սէզ,
Քառ երկու՚ւ երկեակ փարէնթազէզ,
Ի վերայ բարձեալ կիտեա՛ դէզ դէզ,
Անդ աճիցմունք բարկացեալ մեզ,
Մինաս երէց տես ի խազմեզն։ (ՄԱՄ, ձեռ., № 9646, թ. 363բ)

Վերցնում ենք Արիստոտելի «Ստորոգութեան» տասը գլուխների («տաս-նեակ պարտէզ»-ի) հետևյալ առաջին տառերի թվական արժեքները. «Գոյա-ցութիւն»՝ Գ(3), «Քանակ»՝ հաշվի չենք առնում, «Արտալուզեա»՝ Ա(1), «Ո-րակ»՝ Ո(600), «Առնել»՝ Ա(1), «Կրել»՝ Կ(60), «Ուր»՝ Ո(600), «Երբ»՝ Ե(5), «Կալ»՝ Կ(60) և «Ունել»՝ Ո(600)։ Տրված թվանշանները գումարելով իրար, ստանում ենք 1930 (3 + 1 + 600 + 1 + 60 + 600 + 5 + 60 + 600= = 1930)։ Դրանից հանում ենք մեկ ասպարեզ («Արտալուզեա զմին ասպա-րէզ»), որը ժամկագրողի հաշվով հավասար է 144-ի, ստանում ենք 1786։ Մնացած թվին գումարում ենք երեք «Ջճիւղն տառն» (խոսքը «Ա» տառի երեք ճյուղերի մասին է), 8 («Քառ երկու») և երկու «փարէնթազէզ». մեկ փարանթեզը 10 է, երկուսը կլինի 20։ Նշված թվանշանները գումարելով, ստանում ենք 1817 (1786+3+8+20=1817)։

* * *

«Կիտոս» բառը 10-ի թվական արժեքով գործ է ածված հետևյալ ժամկա-գրի մեջ.

Որ ենթ տասնին կոյսն թըվիկ ասացեալ.
Եռ յիսնաբար ընդ հարիւրի մ՚ շարակցեալ,

Ըստորոգութիւնքն թվով ընդ սոյնց յարեցեալ,
Տասնապատկէն ո՛չ ինչ յարտաքս ընկեցեալ,
Զեկտի երկեական ընդ այսմ թվոյս ի ճահ լեալ,
Ընդ սոյն ամի զթիւըն հայոց կիսօս կալ։ (363բ)

Վերցնում ենք առաջին տողի հիշված կույս թիվը՝ 7-ը, և բազմապատկում 150-ով («կոյսըն... վճնաբար ընդ հարիւրի»), ստանում ենք 1050 (7×150= = 1050)։ Սրան գումարում ենք 10-ը («Ըստորոգութիւնքն թվով ընդ սոյնց յարեցեալ»), ապա գումարում ենք 10-ի «տասնապատիկը». (10×10)=100, («Տասնապատկէն ոչ ինչ յարտաքս ելեալ») և երկու «եկտին»՝ չորսը։ Ստացված թվին ավելացնում ենք մեկ «կիսօս»՝ 100։ Տրված այս թվերը գումարելով, ստանում ենք 1264 (1050+100+4+10+100=1264), որին ավելացնելով 551, ստանում ենք 1815 (1264+551=1815) թվականը։

35. ԹՎԱԽԱՌՆ ԾԱԾԿԱԳՐԵՐ

«Զվարթնոց» բառը վեցի թվական արժեքով, «զգայությունը»՝ ինի, «պար»-ը՝ հինգի, օգտագործված են հետևյալ ծածկագրում.

Զմակ եռեակ թիւն արձակապէս ստ իմա՛,
Եւ զմիակն ստ երկերիւրիւ մակ արա՛,
Զուարթնոցն հաշիւն ըստ Պորփիւրին յարակցեա՛,
Զգայութիւնք եկտի ի պար սոցին շարակցեա՛,
Ո՛հ փրկչական երանութեանց պատահեայ։ (ՄԱՄ, ձեռ.
№ 9646., թ. 225բ)

«Մակ»-ը երկու է, եռյակ երկուսը կլինի վեց, որը բազմապատկելով երկու հարյուրով, ունենում ենք 1200 (2×3×200=1200)։ «Զվարթնոց»-ը ընդունելով վեց և բազմապատկելով «Պորփիւր»-ով, ստանում ենք 30։ «Զգայութիւնն» ընդունելով 10, երկու «զգայությունը» կլինի 20։ «Պար»-ն ընդունելով հինգ, իսկ «երանութիւնը»՝ 9 և տրված մյուս թվերի հետ գումարելով, ստանում ենք 1264 (1200+30+20+5+9=1264)։ Սրան գումարում ենք հայկական թվականի տարբերությունը և ստանում 1815 թ. (1264+551= = 1815)։

* * *

Հ. Աճառյանի հրատարակած մի ծածկագիր թվականին, որի մասին խոսք կլինի առջևում, նմանություն ունի ՄԱՄ-ի № 9646 ձեռագրի հետևյալ ծածկագիրը.

Թիւ արկանեմ ի քարտիզի,
Ութն մասանցն քերթողի,
Յօղն արտաքսեա՛ է.իւ թվի,
Արիստոտէլն ընդ Պորփիւրի,
Հնգեակ թվովք հաշիւ լիցի,
Երկեակ տասն[ի]ւ և մու երկակի,
Թիւն արամեան յանկ ելանի,
Քառ[ե]ակ տասնիւ և կոյս թիւ կարօտի,
Քանակութեամբ թղթոյ Պողոսի։ (թ. 363)

Վերցնում ենք քերականության ութ անունների («Ութն մասանցն քերթողի») առաջին տառերի թվական արժեքները և գումարում. անուն՝ ա(1) + բայ՝ բ(2) +ընդունելութիւն՝ ը(8) +դերանուն՝ դ(4) +նախդիր՝ ն(400)+մակբայ՝ մ(200) + շաղկապ՝ շ(500) + յոդ՝ յ(300) = 1415։ Նրանից առաջարկվում է հանել 307 («Յօղն արտաքսեա է.իւ թվի»), մնում է 1108։ Նրան գումարում ենք 75. (Արիստոտելը (10) գումարած «Պորփիւրին» (5), բազմապատկած հինգով. 10+5×5=75)։ ստանում ենք 1183։ Ստացած թվին գումարում ենք 22 (երկու տասնեակ և մեկ երկեակ) ու 47 (չորս տասնյակ և կույս թիվը՝ 7-ը) և Պողոսի թղթերի թիվը, որը հավասար է 14-ի։ Տրված թվերը գումարելով, ստանում ենք 1266 (1183+22+47+14=1266)։ Ստացած գումարի վրա ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, լինում է 1817 թվականը (1266+551=1817)։

* * *

Ազգագրագետ Լալայանը Վասպուրականի ձեռագրաց ցուցակում հրատարակել է Վանի Արարուց եկեղեցու № 16 ձեռագրի հիշատակարանները, որոնցից մեկը, գրված Կարապետ գրչի կողմից, չափածո է և պարունակում է գրչության ծածկագրված թվականը.

Ի թվականիս մերում՝ հազար,
Հընգեակ յոբել ձըգեա ի շար,
Ժէ և կոյս տառն առցես համար,
Թիւ ամացս լիցի կատարեալ։ (Լալ., սյուն. 337)։

Լալայանը հարցականով վերծանել է այս ծածկագիր թվականը՝ 1577։ Նա ծանոթ չի եղել «կույս» բառի թվական արժեքին։ Հիշատակարանը, ինչպես պարզվում է, գրված է 1577 թվականից բավականին ուշ։ Վերցնում ենք հազարը, նրան գումարում հինգ հոբելյան, այսինքն 250 (5×50=250), ստացած թվին ավելացնում ենք նաև համձնարարվող 17-ը և «կույս թիվը», այսինքն՝ 7-ը, ստանում ենք 1274 (1000+250+17+7=1274), որին գումարելով հայկական մեծ թվականի տարբերությունը, ստանում ենք 1825։

Որ մեր այս վերծանությունը ճիշտ է, երևում է տվյալ հիշատակագրի միջանկյալ մի այլ տեղեկությունից, ուր ակնարկվում է, որ այն նախագաղափար օրինակը, որից ընդօրինակվել է տվյալ ձեռագիրը, գրված էր 1421 թվականին՝ չորս հարյուր տարի առաջ. Նախագաղափար ձեռագրից չորս հարյուր տարի հետո ընդօրինակվող ձեռագիրը, բնական է, որ պետք է համապատասխանի 19-րդ դարի քսանական թվականներին։

* * *

Բեյրութի հայագետ բարեկամներից մեկը մեզ է ուղարկել ծածկագիր մի քառյակ և խնդրել վերծանել այն։ Սիրով կատարում ենք նրա խնդրանքը։

Ծածկագիրը հետևյալն է.

Եղև գրուն կազմութեան
Թուականիս մեր Հայկազեան.

Երկ շրջանիկ, երկ յոբելեան
Յաւելորդաւն երկ(ո)տասան։

«Երկ շրջանիկ» ասելով նկատի է ունեցել երկու ՇԼԲ-ն, որը հավասար կլինի 1064-ի, պահանջվում է տացված թվին գումարել երկու հոբելյան՝ 100 (2×50=100), որով կլինի 1164, իսկ վերջինիս վրա ավելացնելով «երկոտասանը» և հայկական թվականի տարբերությունը, կլինի 1727 (1164+ +12+551=1727)։

* * *

Ակադ. Ն. Մառը իր կազմած Սևանի ձեռագրերի ցուցակում հրատարակել է Սևանի հավաքածուի № 11 ձեռագրի գրչության թվականը պարունակող հետևյալ ծածկագիրը.

Ի Թուահաշութեան Թորգոմական,
Որ է նշան ժամանակեան,
Ոհան անունս կալ քեզ նշան
Եւ Բ տառս կա այլ մակադրական[33],

Այս ծածկագիրը փորձել է վերծանել Մառը։ Նրա կարծիքով ծածկագրված է «Ոհան» բառը և երկու այլ բառեր՝ «Բ տառս կա այլ մակադրական»-ը, հասկանալով երկու տառերի թվանշանների միացում։ Այս տառերը նա համարել է «ակ»-ն՝ վերցնելով «Թորգոմական», «ժամանակեան», «կալ» և «մակադրական» բառերից։ Վերծանությունն անհաջող է։

Այստեղ, իսկապես, ծածկագրված է «Ոհան» բառը, որի տառերի թվագումարը կլինի 1071. (Ո(600) + հ(70) + ա(1) + ն(400) = 1071)։ Եվ ստացված այս թվականին պետք է գումարել ոչ թե երկու ինչ-որ բառերի թվանշաններ, այլ ուղղակի երկուսը՝ բ-ն, իր թվական նշանակությամբ։ 1071-ին գումարելով երկուս, ստանում ենք 1073, իսկ սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1624 թ. (1073+551=1624)։

Այսպիսով, պարզվում է, որ Սևանի № 11 ձեռագիրը գրված է ոչ թե 1683-ին, ինչպես վերծանել է Մառը, այլ՝ 1624-ին։

* * *

«Արարատ» ամսագրի 1911 թ. էջ 846—847-ում տպագրված է Հակոբ Սգավոր մականունն ունեցող գրչի հիշատակարանը, որը նա գրել է «Աստուածաշունչ» ձեռագրի ընդօրինակման կապակցությամբ։ Գրչության տարեթիվը և ամսաթիվը այնտեղ հայտնված են հետևյալ ծածկագրությամբ. «Աւարտեցաւ Հին կտակարան[ս] ի ձեռն Թերավարժ և յոգնամեղ անպիտան ստսկանոմն Յակոբ Սգաւորին, Արթուն անուամբ կոչեցեալ... ըստ համարոյ յաբեթազին տոմարի ՃԻԶ (126) ինդոսի, երրորդ ինդիկտոնէ... միոյ նոնոսէ, յամսեանն հայոց քաղոցի, տգոնի մի, եբրայեցոց ամսոյն ադարի յառաջերորդի բեսէ-

[33] Ն. Մառ, Ցուցակ համառոտ ձեռագրաց վանուց Սևանայ, Մոսկվա, 1892, էջ 29

քիստոնի և միոյ ղիմպիաթի, հռոմցոց ամսոյն փետրվարի չորրորդ նահանջի, այլ աւելի միոյ նոնոսի, աւուրն շաբաթի»[34] («Արարատ», 1911 թ., էջ 846)։

Ծածկագրությունը վերահրատարակված է 17-րդ դարի հիշատակարանների մեջ և ճիշտ վերծանված. (126×8) + (3×15) + 551=1609։ («Հրատ. ՀՁՀ, ժէ դ., I, էջ 355)։ Չեն վերծանված ամսաթվերը։

Հռոմեական փետրվար ամսվա օրերը հաշված է. չորս նահանջ, մի նոնոս և մի շաբաթ։ Նահանջը՝ 4 է, չորս նահանջը կլինի 16, նոնոսը՝ 5 է, իսկ շաբաթը՝ 7. 16+5+7=28. ուրեմն՝ հաշված է փետրվարից 28 օր։

Եբրայական ամսաթվի օրերը հիշված են. «առաջներորդ», այսինքն՝ մեկ, երրորդ՝ այսինքն 3, մի բեսեքիստոն[34], այսինքն՝ 7 և մի ոլիմպիադ՝ այսինքն 4, իրար գումարելով տրված թվերը, լինում է 15 (1+3+7+4=15). ուրեմն՝ հաշված է ադարի 15-ը։

Հայկական քաղոց ամսվա օրերը հաշված է միայն մի տգոն, իսկ տգոնը 10 է։ Քանի որ քաղոց ամսի 10-ը՝ հայկական ամսաթիվը շարժական տոմարով է, ուստի այն ներկա ամսաթվին բերելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ տոմարական հաշվումը. քաղոց 10-ը=130 օրվա, նրանից հանելով 1609 թվականի հարական, որ եղել է 73-ը, մնում է 57 օր, որը տեղադրելով ներկա ամսաթվերի վրա, ունենում ենք փետրվարի 28-ը։

Հակոբ Սգավոր գրիչը, ինչպես երևում է, տոմարական արվեստի գիտակ անձնավորություն է եղել. 1609 թ. փետրվարի 28-ին, իրոք, եղել է ադար ամսի 25-ը, իսկ հայկական շարժական տոմարով՝ քաղոցի 10-ը։

* * *

Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Իշխանյանը տարիներ առաջ մեզ է հանձնել հնատիպ գրքերից երկու հիշատակարան՝ գաղտնագրված տոմարաթիվ ծածկագրերով, և խնդրել պարզել նրանց տպագրության ժամանակը։ Առաջին գրքի չափածո հիշատակարանում ասվում է.

Զամուլ կնոջն որդւոց՝ Թլփկն ըմբռնեալ.
Ընդ երկ[ո]տասն յոբելեանն՝ հարիւրի կապեալ.
Եւ վէշտասն ըզկոյան իւր Թողցէ մոռացեալ.
Եւ շուտ առ կատարիալն՝ տարիս քայլիցեալ։

Հիշատակագիրը պահանջում է վերցնել ամուլ կնոջ որդիների թիվը՝ «Զամուլ կնոջն որդւոց Թլփկն ըմբռնեալ», որը եղել է յոթը, նրան գումարել 12 «ընդ երկոտասն յոբելիանն», ունենում ենք 19, որը բազմապատկելով 50-ով և գումարելով 100, ունենում ենք 1050, հանում ենք 16՝ «վեշտասան» և 7՝ մեկ կոյս թիվ (23), մնում է 1027, նրան էլ գումարում ենք կատարյալ թիվը՝ 100 և հայկական թվականի տարբերությունը, լինում է 1678 (1027+551=1678)։

Երկրորդ գրքի հիշատակարանում ասվում է, որ գիրքը տպագրվել է.

[34] Բնագրում «յառաջերորդի բեսէքիստոնի» և «միոյ ղիմպիաթի» սխալ է վերծանված. պետք էր վերծանել «առաջ (երորդ), երրորդի, բեսէքիստոնի և միոյ ղիմպիաթի»։ Այդ է ապացուցում թվերի անսուտ լեզուն։

«Հազարերորդի, հարիւրերորդի, վեշտասաներորդի, կոյս թիւ երրորդի»։ Մեկ հազարին գումարում ենք հարյուր, ստացածի վրա ավելացնում 16, կույս թիւ՝ 7 և 3-ը (երրորդ), հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1674 (1000+100+16+7+3+551=1677)։

* * *

Նման մի ծածկագիր թվական պարունակող հիշատակարան պահել է Ղալաթիայի մատենադարանի № 18 ձեռագիրը։ Բերում ենք կրճատումով.

Զափ չափելեաց միջին վայրից ստորին կետի,
Որպէս ի հայս բաղձան եղեալ մէթ էդ պահի,
Շրջապատումն կոճոսի, վեցից վեցեակ և մակ նոյնի,
Յորմէ վերոյ ութեակ դիցի, թիւ արամեան բացայայտի,
Ի հայկազեան Պ.եակ, վեց յոբելեան ընդ երիւք վեցեակ,
Եթէ առցես համաքատակ հայկեանս վեցեակ թվոյ լինի քանակ,
Ըստ քանակի ուսուրց հաշւոյ Հայոց թվական,
Մու հարիւրեակ լուծ ընդ հազար ԺԸ.եան,
Ի կիսագունդ այս ստորին որք կայական,
Մու հազարեակ Բ յոբելենիւք երիւք վեցեակ,
Զայսքան հաշւեա իմաստական, քսան յոբելեան, տասնիւք տասան,
Ընդիքտիոնն համարական, երիւք լինի մեծ թվական...[35]։

Ծածկագրված առաջին գումարգիր թվականը՝ «մէթ էդ պահի»-ն, հավասար է 1118-ի. [մ(200) + է(7) + թ(9) + է(7) + դ(4) + պ(800) + ա(1) + հ(70) + ի(20) = 1118]։

Երկրորդ ծածկագրված թվականում առաջարկվում է վերցնել «կոճոսը», այսինքն՝ 1000-ը, նրան գումարել «վեցից վեցեակը»՝ 36-ը (6×6=36), վերջինի կրկնակը («մակ նոյնի»)՝ 72-ը, և մեկ ությակ, որով ստանում ենք 1116 թ. (1000+36+72+8=1116)։ Տվյալ թվականը երկուսով պակաս է, հետևապես, հռոմեական թվականով է։

Ծածկագրված երրորդ թվականն է «Պ.եակ»՝ 800։ Դրան գումարած վեց յոբելյան՝ 300, կլինի 1100 [800+(6×50)=1100]։ Ստացած թվին ավելացնում ենք «երեք վեցեակ» և ստանում 1118 ([1100+(3×6)=1118]։

Չորրորդ ծածկագրված թվականն է «մու հազարեակ»՝ 1000, վրան ավելացրած «Բ յոբելեան», այսինքն՝ 100, ստանում ենք 1100 [1000+(2×50)= 1100], ստացած թվին գումարում ենք «երիւք վեցեան»՝-ը 18, լինում է 1118 [1100+(3×6)=1118]։

Հինգերորդ ծածկագրված թվականն է «քսան յոբելեան». 20×50=1000։ Նրան գումարած «տասնիւք տասան», այսինքն՝ 100, լինում է 1100, որին ավելացնելով մի ընդիքտիոն և երեք՝ ստանում ենք 1118 (1100+15+3=1118)։

Չորս տեսակ տարբեր ծածկագրերով գաղտնագրված է հայկական 1118

[35] Տվյալ ծածկագիրը մենք վերցրել ենք Բ. Կյուլեսերյանի Ղալաթիայի ձեռագրերի ցուցակից, որը, դժբախտաբար, հրատարակված բնագրում բաց է թողնված։

թվականը, իսկ մեկով՝ 1116, 2 միավորով պակաս, որը ներկա թվականով կհամապատասխանի 1666—1667 թվականներին։
(Հրատ. ՀԳՊ, 238, ՀԳԳ, 159)։

* * *

Մյունխենի մատենադարանի հայկական մի ձեռագրի հիշատակարանում, որը հրատարակել է Զարբհանալյանը, գրչության ժամանակի մասին հետևյալն է ասվում.

Ի ժամանակս յետին եղեալ
Ի Լեւոնի արքայ ածեալ,
Ի յՌուբինեանց յառաջ եկեալ,
Ի հայրապետութեանն լինեալ,
Որ Կոստանդին Սխացի եղեալ,
Ի թուականիս մեր շուրջ առեալ
Հարիւր ութանց զերկուս այլ լեալ
Նա եւս եւթն այլ յաւելեալ
Միակս ի հետ կոյս թիւս լեալ[36]...

Թվականը վերծանվում է. ութ հարյուրին գումարում ենք երկու («Հարիւր ութանց զերկուսն այլ լեալ») և ստանում 802։ Դրան գումարում ենք յոթ («Նա ևս եւթն այլ յաւելեալ») և մեկ ու կույս թիվ («Միակս ի հետ կոյս թիւս լեալ») և ստանում 817, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1368 թ.։

Այդ թվականը համապատասխանում է Լևոն Ե-ի թագավորության տարիներին. նա փահակալել է 1372—1374 թվականներին։

* * *

Անկյուրիայի մատենադարանի ձեռագրական ժողովածուի № 165 գրչագրի մեջ հետագայի հիշատակագիրներից մեկը, առանց իր անունը տալու, թողել է հետևյալ ծածկագիրը.

Էին հանուրց փառք և պատիւ յաւիտեան,
Յայժմ և յաւէտ և անզրաւ յաւիտեան։
Արդ թիւն Հայոց ի յերկ տողիցս սկզբան,
Երկ բառքն յայտնեն թարց կոյս թուոց կիրառման։
(Անկ., սյուն. 832)

Ծածկագիրը հրատարակված է Անկյուրիայի ձեռագրերի ցուցակում։ Կյուլեսերյանը ճիշտ է կռահել, որ գրչության թվականը գաղտնագրված է առաջին երկու տողերի Էին և Յայժմ բառերի մեջ, որոնք և ընդգծել է,

[36] Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 267։

բայց ուշադրություն չի դարձրել չորրորդ տողի վերջին «Թարց կոյս Թուոց կիրառման» արտահայտության վրա։ Նա էին և յայժմ տառանիշերի թվական արժեքները գումարելով, ստացել է 1238, նրանից հանել է (7) և Ա (1) թվանշանները, հավանաբար վերցնելով առաջին և երկրորդ տողերի առաջին բառերի է և Ա տառերի թվարժեքները, որ ճիշտ չէ։

Մեր կարծիքով, ծածկագրողի «Թարց կոյս Թուոց կիրառման» արտահայտության մեջ «կոյս»-ը թվական արժեքի նպատակով չի օգտագործված, այլ ուղղակի ուզեցել է ասել, որ պիտի վերցնել «էին» և «յայժմ» բառերի թվական արժեքները՝ առանց կողքի տառերին դիպչելու։ Այդ մոտեցմամբ ծածկագիրը կվերծանվի. է (7) + ի(20) + ն(400) + յ(300) + ա(1) + յ(300)+ ժ(10)+ մ(200) = 1238, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1789 թվականը (1238+551=1789)։

Այսպիսով, պարզվում է, որ Անկյուրիայի № 165 ձեռագիրը գրված է եղել ոչ թե 1781 թվականին, ինչպես կարծել է Կյուլեսերյանը, այլ՝ 1789-ին։ (Հրատ. ՀԳԳ, 169)։

* * *

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 430 ձեռագիրը պարունակում է Գևորգ վարդապետի «Մեկնութիւն Եսայիայ» աշխատությունը, որն ընդօրինակված է Վարդան գրչի կողմից, Մարտիրոս Ղրիմեցու պատվերով։ Ձեռագրի ծածկագիր հիշատակարանում գաղտնագրված է ձեռագրի գրչության տարեթիվը։ Ծածկագիրը հետևյալն է.

Մերումս յատուկ շրջականի,
Ամանակաց որ յոլովի.
Բոպէից թիւ մի անգամի,
Տրրամատեալ յայլոց սեռի,
Ի մետասան հարիւրորդի,
Բուպ ընդ նմին եօթնեակ թըւի,
Ունակացաւ սա ի քարտի,
Սատացմամբ հիքոյս չուառալի... (Եղմ., II, էջ 392)։

Ձեռագրի նկարագրությունը, տվյալ ծածկագիր բնագրի հետ, հրատարակել է բանասեր Ն. Պողարյանը։ Նա վերծանել է ծածկագրում մատնացույց արված գրչության թվականը, բայց ծածկագրի վերծանության հաշվումները չի կատարել։

Տվյալ ծածկագիրը սովորական պարզ գաղտնագրերից է։ Առաջարկվում է 11-ը բազմապատկել հարյուրով («ի մետասան հարիւրորդի») և նրան գումարել յոթ («Բուպ ընդ նմին եօթնեակ թըւի»). 11×100=1100, նրան գումարած յոթ և հայկական թվականի տարբերությունը, կլինի 1658 (1100 + +7+551=1658)։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 430 ձեռագիրը, ինչպես երևում է ծածկագրի վերծանությունից, գրված է 1658 թվականին։

* * *

Ե՞րբ է գրել Հովհաննես Կարնեցին «Ի վերայ Ս. Երուսաղեմայ» տաղը։ Այդ մասին նա իր ծածկագիր հիշատակարանում հետևյալ տեղեկությունն է տալիս.

Սիրով մեծաւ տարեստ աստի ծունր եւ համբոյր արդ ձօնեմ,
Շնորհաբաշխ քարանց հողոյն ըզդէմըս իմ առ փարիմ,
(Առ մեծ) Թուոյս կարօտակիր Հէնձէս զերգս յարմարեմ,
Դէպի քաղաքն աստուածակոխ առնէր տանէր հովն զիս...

Ծածկագրությունը հրատարակել է Ն. Պողարյանը, բայց չի վերծանել (Եղմ., VI, էջ 223)։

Այստեղ թվականը ծածկագրված է երրորդ տողի Առ մեծ բառերի մեջ։ Այն վերծանվում է. ա(1) + ռ(1000) + մ(200) + ե(5) + ծ(50) = 1256, որին գումարելով հայկական մեծ թվականի տարբերությունը, կունենանք 1807 թ. (1256+551=1807)։

Այսպիսով, Հովհաննես Կարնեցին «Ի վերայ Ս. Երուսաղեմայ» տաղը գրել է 1807 թվականին։

* * *

Մի այլ ծածկագրում «Արիստոտէլ» և «Պորփիւր» թվահաշիվ անունների հետ միասին գործ են ածված գաղտնագրական բնույթի այլ հաշվումներ ևս։ Այդ ծածկագրությունը հետևյալն է.

Գրել սորա ի մերս թվի,
Յեկտի նէնոս, հարորդէ,
Արիստոտէլն ընդ Պորփիւրի,
Վէշեակ թուովք հաշիւ լիցի,
Յարմար գոլով երկ յոբելի,
Թիւն հայկական յանկ եկանի,
Անխօս գոլով միշտ յերգարկի,
Քառիցս եռեակ մու երկակի։ (ՄԱՄ, ձեռ. № 9646, թ. 225բ)

«Յեկտի» նշանակում է երկու, իսկ «նէնոսը», ինչպես նշված է ծածկագրողի կողմից ձեռագրի լուսանցքում, գործ է ածված 480-ի համար. երկու «նէնոսը» կլինի 960 (480+480=960), որին գումարելով մեկ հարյուր («հարորդի»), ստանում ենք 1060, «Արիստոտէլ»-ը՝ 10 է, «Պորփիւր»-ը՝ 5, որը բազմապատկելով վեցով («Արիստոտէլն ընդ Պորփիւրի, վէշեակ թուովք հաշիւ լիցի») կինում է 90(10+(5×6)=90)։ Երկու «յոբելեանը» հավասար է 100-ի։ Վերջին տողում արված պահանջի համաձայն, քառյակը բազմապատկելով եռյակով և նրան գումարելով երկու, ստանում ենք 14[3×4)+2=14]։ Գումարում ենք ստացած թվերը, կինում է 1264 (1060+90+100+14=1264)։ Սրան էլ գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1815 թվականը (1264+551=1815)։

(ՀԳԳ, 171, ԲԵՀ, 1967, № 1, էջ 212)։

* * *

Զաքարիա գրիչը, որը Մաշտոցի անվան մատենադարանի № 9646 ձեռագրում եղած ծածկագրերի մեծ մասի հեղինակն է, «Արիստոտէլ» անունը տասը թվանշանի արժեքով օգտագործել է հետևյալ ծածկագրում.

Տառք ձայնաւորք չորս լծոր[դ]աց,
Ուշիւ հաշուեա՛ վնոսա կրկնած,
ԶԱրիստոտէլն, յերկ Պորփիւր ած,
Զաքարիայն Պէտղիտ եկած։ (թ. 84բ)

Ծածկագրի էջի լուսանցքում հեղինակը «ձայնաւորք չորս լծորդ» տառեր է համարել ա, ե, ի, ո տառանիշերը, որոնց թվական արժեքները գումարելով, ստանում ենք 626 [ա(1) + ե(5) + ի(20) + ո(600) = 626], կրկնապատկում ենք այն՝ («հաշուեա վնոսա կրկնած») և ստանում 1252, ստացված թվին ավելացնում ենք մեկ «Արիստոտէլ»՝ 10 և երկու «Պորփիւր» (մեկ Պորփյուրը 5 է, երկուսը՝ 10), լինում է 1272 (1252+10+10=1272), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1823։

Այսպիսով, ծածկագրի վերծանությունից երևում է, որ Զաքարիան Բայազետ է եկել 1823 թվականին։

(Հրատ. ՀԳԳ, 172, ԲԵՀ, 1967, № 1, էջ 213)։

* * *

Պորփյուր անունը թվարժեք նշանակությամբ գործ է ածված սրամիտ կազմված № 9646 ձեռագրի հետևյալ ծածկագրում.

Զթիւն Արամեան թէ հարցանես՝ գիտեմ ոչ,
Մու յոբելեաննի բայց բառնալն գիտեմ ոչ,
Երկեակ Պորփիւր և մու քառեակ համարոջ,
Սնանին որպէս հորդան վայրի դալարոջ (թ. 225ա)։

Առաջարկվող ծածկագրում «ոչ»-ը գործ է ածվել ոչ թե ժխտական նշանակությամբ, այլ՝ թվանշանի։ Այն հավասար է 1300-ի [Ո(600) + Չ(700) = = 1300]։ Նրանից պետք է «բառնանք», այսինքն՝ հանենք, մեկ հոբելյան՝ 50, կմնա 1250, պահանջվում է ստացածին գումարել («համար առնենք») երկու «Պորփիւր» և մեկ քառյակ. «Պորփիւրը» 5 է, երկու Պորփյուրը՝ 10, նրան գումարած 4, կլինի 14։ Տրված թվերը գումարելով իրար և ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1815 թվականը (1250+14+ +551=1815)։

Ծածկագիրն, ուրեմն, գրված է 1815 թվականին։

(Հրատ. ՀԳԳ, 171, ԲԵՀ, 1967, № 1, էջ 212)։

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2190 ձեռագրի գրիչը հիշատակարանում (թ. 13ա) իր անունը հայտնում է հետևյալ ութտողանի ոտանավորում.

Այլ ես ստացօղ այս սուղ գըրի,
Որ վեց տառիք անուն կոչի՝
Գիմն առաջին և րէն վերջին,
Որ համարով վերաբերին.
Տասն հազար բոլորովին
Եւ վեց հարիւր քսան և վեցին,
Որք միտս ունին նա հաւանին,
Եւ որք չունին՝ նա շւարին։

Գրչի անունը Գրիգոր է. «Գ»-ն՝ անվան առաջին տառն է, իսկ «ր»-ն՝ վերջին, անունը բաղկացած է վեց տառից, որոնց թվական գումարը հավասար է 10626-ի. (Գ(3) + ր(5000) + ի(20) + գ(3) + ո(600) + ր(5000)= =10626)։

(Հրատ. ՀԳԳ, 177)։

* * *

Մինաս երեցի կազմած բավականին բարդ մի ծածկագրում (№ 9646 ձեռագրի մեջ) «Թիրթակը» բերվում է թվարժեք ծածկագիր հետևյալ տասը բառերի հետ միասին՝ «յօնսա», «բեննքիտկոն», «շեշ», «ընդիքտիոն», «սեռ», «յոբելեան», «Արիստոտէլ», «Պորփիւր», «Ադոն» և «զդալի».

Արամազեան Թուականին,
Իւթ սորա կէս Թըրիթակնին,
Եւ յիսն յօնսայք յոյժ յարմարին,
Տասն ի բեննքիտկոնք շարին,
Ի Ժ և վեշ ընդիկտիօնին,
Սեռ յոբելեան և Պորփիւր մին,
Ի Ժ և Ե ամք խզելին,
Արիստոտէլն ընդ Պորփիւրին,
Ցադոնք առ այս յարմար շարին,
Սոքիմբ զայ յաշխարհս յըզդալին,
Երկու ամօք պակաս ասին,
Երկ յօնսայիւ յանկ ելանին։ (թ. 256ա)։

Թիրթակը հազար է, կես Թիրթակը կլինի 500։ «Յօնսան» երեք է, 50 «յօնսան» կլինի 150։ «Բեննքիտկոնը» (բեսեքիստոնը)՝ 7 է, 10 «բեննքիտկոնը» կլինի 70։ «Ընդիքտիոնը»՝ 15 է, 16 «ընդիքտիոնը» հավասար կլինի 240-ի։ «Սեռը» երեք է, երեք «յոբելեանը»՝ 150, որին գումարելով մի «Պորփիւր», կստանանք 155։ «Խզելի», այսինքն՝ հանելի թիվը 15 է։ «Արիստոտէլը» գումարած «Պորփիւրին» և բազմապատկած «ադոն»-ով, կլինի 150։ Սրան անհրաժեշտ է գումարել «զդալին», որը 10 է և հանել 8 («զդալին»՝ երկու ամօք պակաս») և վերջում ստացած թվին գումարել երկու «յօնսայ». «յօնսան» երեք է, երկու «յօնսան» կլինի վեց։ Այսպիսով, դրական թվանշաններ ենք ունենում. 500+150+70+240+150+5+150+10=1275։ Հանելի թվերը կլինեն 15-ը

և 8-ը, որոնք 1275-ից հանելով, մնում է 1252։ Ստացած թվին գումարելով 551, ունենում ենք 1803 թվականը, ինչպես որ հաշված է տվյալ ծածկագրի էջի լուսանցքում։

* * *

Ասավածատուր գրիչը Մաշտոցի անվան մատենադարանի № 2190 ձեռագրում «Գրիգոր» անունը ծածկագրել է հետևյալ ձևով.

Ծաղիկ մի տեսի նա վարդագոյն էր,
Բայց տերևըն վեց՝ որ գոյնըզգոյն էր.
Տեսլեամբ գեղեցիկ որպէս Նունուֆէր,
Հոտով քաղցր և սուրբ, րոգրիդ նման էր։
Արդ՝ հաշիւն ասեմ որ և քաջ գիտես,
Խնդրողաց ըղձա ստուգիւ յայտնես.
Վասն այն որոնեցի՝ Ժ.Ն հազար ես,
Առեալ ոն, լինէն, զայիւն ինձ ասես։

«Ծաղիկ մի տեսի» ասելով գրիչը նկատի ունի ծածկագրող մարդու երիտասարդ լինելը, «բայց տերևըն վեց», այսինքն՝ անվան տառերը վեց են, «որ գոյնըզգոյն էր»՝ այսինքն անվան տառերը իրար նման չեն, «րոգրիգ» բառը Գրիգոր անվան շրջված ձևն է, որպես ծածկագիր։ Ինչ վերաբերում է երկրորդ քառյակին, ապա այստեղ հայտնված է ծածկագրված անվան թվական գումարը՝ «տասը հազար»՝ վրան ավելացրած «ոն, լին, ին, զային», այսինքն՝ 10,000+600+20+6=10626, որը և համապատասխանում է Գրիգոր անվան թվագումարին. Գ(3) + ր(5000) + ի(20) + գ(3) + ո(600) + ր(5000) = = 10626 (ՄԱՄ, ձեռ. № 2190, թ. 13ա)
(Հրատ. ՀԳՊ, 177, ՀԳԳ, 177)։

* * *

Վարագի երբեմնի ձեռագրական ժողովածուի մի ձեռագրի հիշատակագիր իր անունը գաղտնագրել է չորս տողի մեջ՝ առանց հայտնելու անվան տառերի թվական գումարը.

Որ դեռաբուս և անուանի,
Որ Զ(6) տառի անուն կոչի.
Մեն առաջին և յին յետին,
Եւ այլ համարով վիրբերին։
Որ Միրզայ ջան անուն ասի։ (Լալ., ցուց. 245)

Գաղտնագրված է Միրզայ անունը, որ բաղկացած է վեց տառից. Պահանջվող «մեն»-ը անվան առաջին տառն է, «յին»-ը՝ վերջին։ Տվյալ ձեռագիրն ունի 14-րդ դարի գրչություն, հետևապես ծածկագրող հեղինակը՝ Միրզան, այդ դարի անձնավորություն է։
(Հրատ. ՀԳԳ, 176)։

* * *

Հիշատակարաններում երբեմն պատահում են գրիչների կամ պատվիրատուների անունների ծածկագրումներ, որոնցում նշվում են անվան տառերի թիվը, տառերի թվական արժեքը և ծածկագրված անվան առաջին ու վերջին տառերը։ Նման ծածկագրերի վերծանության ժամանակ անհրաժեշտ է լինում ընտրել այնպիսի անուն, որի տառերի թիվը և առաջին ու վերջին մատնացույց արած տառերը համապատասխանեն ծածկագրի պահանջին և ապա՝ վերծանության ճշտությունը ստուգվի անվան տառանիշերի թվական գումարով։

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 371 ձեռագրի պատվիրատուն համձնարարել է գրչին ընդօրինակել Հակոբ Մծբնա հայրապետի «Ճառերը» և իր անունը գաղտնագրել է տվել չափածո վեցտողյակով.

Ըզյետնեալ ըստացօղ սորին,
Որ եօթն տառիւ բաղադրին,
Գեմն նախկին, նաեւ լիւնն վերջին,
Շարազգունեալ անուն կոչին,
Հինգ հազար թուով յորջորջին,
Բաղադրեալ ընդ վաթսուն և երեքին։ (Եղմ., II, էջ 289)

Ծածկագրված է այստեղ Գաբրիել անունը, որը բաղկացած է յոթ տառից, պահանջվող սկզբնատառը «գ»-ն է, վերջինը «լ»-ն և տառերի թվական գումարը հավասար է 5063-ի. գ(3) + ա(1) + բ(2) + ր(5000) + ի(20) + + է(7) + լ(30) = 5063)։ Վերծանությունն ստուգվում է պատվիրատուի ձեռագրում թողած կնիքի դրոշմից, որի վրա եղած կապգրությունը վերծանվում է. «Է. Քի ծռ. Գաբրիէլ վարդապետ. ՌՄԺԶ (1762)»։
(Հրատ. ՀԳԳ, 175—176, ՀԳՊ, 239)։

* * *

Հանդիպում են ծածկագրեր, որոնցում «հազիկը» գործածված է լինում հազարի, իսկ «հարիկը»՝ հարյուրի համար։ Նրանք օգտագործված են № 9646 ձեռագրի հետևյալ ծածկագրում.

Այն որ ասի Հայոց թվիկ, երկու բառիւ գտցի այսւիկ,
Թէ զո հազիկ 'ւ եկտի հարիկ, Արիստոտելն և Պորփիւրիկ,
Քառեակ թվով լիցի հաշվիկ և մու քառեակ հեշտ հեսապիկ։
(թ. 225բ)

«Հազիկը» հազարն է, իսկ «հարիկը»՝ հարյուրը, մեկ հազարին գումարում ենք երկու հարյուր («եկտի հարիկ»), լինում է 1200։ Ապա վերցնում ենք 10 (մի «Արիստոտել») և 5 (մեկ «Պորփիւր»), գումարում ենք իրար և բազմապատկում չորսով (15×4=60), ստանում ենք 60, հաշվում ենք նաև մի քառյակ։ Տրված թվերը գումարում ենք, ավելացնում հայկական թվականի տարբերությունն ու ստանում 1815 (1200+60+4+551=1815)։

* * *

«Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում» հրատարակված է № 249 թվահամարը կրող «Տոնացույցի» նկարագրությունը, որից երևում է, որ գրչագիրն ընդօրինակված է Սպահանի գրչության օջախում, Աստվածատուր գրչի կողմից, ոմն Հարությունի պատվերով։ Ձեռագրի գրչության թվականը տրված է հետևյալ ծածկագիր հիշատակարանում.

Արդ՝ ո՞վ եղբար իմ ցանկալի,
Որով նայիքդ ներ յայսմ բանի,
Որք եդեալ կան ի մի տփի,
Յունաց, Հայոց և Հռոմի...,
Տէր Յարութիւն Շօշ խաղափի,
Զոր Խսպահան արտաձայնի։
Զայս ըստացեալ լի փափագի,
Նա ի գըրել յինքն յիշելի։
Աստուածատուր խահանայի,
Քարտուղարի մեղսամատի...
Էր թիւ փրկ[չ]ին մեր Քրիստոսի,
Երկ ՇՕՇ մու բառ թիւ մի բարդի,
Օն ոչ հաշ[ո]ւի թիւ համարի,
Եռեակ Ճ.էիւ ի բաց դնելի։
Երուսաղէմ սուրբ քաղաքի,
Ի դրան Հայոց Սուրբ Յակոբի։ (Անկ., այուն. 1132)

Ծածկագիրը հրատարակված է Բ. Կյուլեսերյանի կազմած ցուցակում, սխալ վերծանությամբ. նա ձեռագրի գրչության տարեթիվն է համարել 1501 թվականը։

Ծածկագրված տարեթիվը քրիստոնեականն է, այսինքն՝ ներկայումս գործածվող թվականը։ Առաջարկվում է վերցնել ՇՕՇ բառի թվականի կրկնակի արժեքը, առանց «Օ»-ն հաշվելու («Օն ոչ հաշվի թիւ համարի»)։ Այն հավասար կլինի 2000-ի [Շ(500)+Շ(500)×2=2000]։ Նրանից պահանջվում է հանել 300 («Եռեակ Ճ.էիւ ի բաց դնելի»), ունենում ենք 1700 թվականը։ Հետևապես, տվյալ ձեռագիրը գրված է ոչ թե 1501 թվականին, երբ Սպահանում ո՛չ հայկական գաղթավայր կար, և ո՛չ էլ գրչության օջախ, այլ 1700 թվականին։

* * *

Անկյուրիայի № 15 ձեռագիրը պարունակում է Հակոբ Նալյանի «Քարոզգիրքը»։ Այն ընդօրինակել է Թադեոս սարկավագ Գաղատացին, որը հիշատակարանի վերջին մասում հայտնել է ձեռագրի գրչության տարեթիվը քրիստոնեական ներկա և հայկական մեծ թվականներով։ Բերում ենք հիշատակարանի այդ մասը.

Եօթնեակ հարիւր ընդ հազարի,
Իննեակ տասունքն ընդ նոյն հաշուի,
Ութնիւ թուով յաւելանի,

Ամք փրկչական նշանագրի։
Թիւ երրորդի կրկնապատկի,
(Մեռեալ) բառիւ շարագր[ւ]գի,
Ի նոյն ամի հայկեան թուի,
Գտցես գրեալ զտառս մատենի։
Իսկ ի յամսեան որ հանդիպի,
Թէ ի քանի՞ն եզրափակի.
Ի չորրորդ օր փետրվարի
Մատեան տառիս յանկ յաւարտի (Անկ., այուն. 90)։

Թադեոս գրչի հիշատակարանը հրատարակված է Կյուլեսերյանի կազմած ձեռագրերի ցուցակում, բայց չի վերծանված, թեև ձեռագրի նկարագրության մասում ճիշտ է նշված գրչության տարեթիվը։

Առաջին քառյակում ծածկագրված է հայկական ներկա թվականը, որի վերծանությունն առանձին դժվարություն չի ներկայացնում. վերցնում ենք հազար յոթ հարյուրը, նրան գումարում իննսունութ և ստանում 1798 թվականը։

Երկրորդ քառյակում գաղտնագրված է հայկական մեծ թվականը՝ «մեռեալ» բառով ծածկագրված։ Այն գումարգիր ծածկագիր է, ուստի գումարում ենք բառի տառերի թվական արժեքները. մ(200) + ե(5) + ռ(1000) + + ե(5) + ա(1) + լ(30) = 1241։ Ստացած թվին գումարում ենք երկու եռյակ՝ 6, և ստանում 1247, որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ունենում ենք 1798 (1247+551=1798), որը և համապատասխանում է ներկա թվականին։

Երրորդ քառյակում տրված է ձեռագրի գրչության ավարտման ամսաթիվը՝ փետրվար 14-ը։

Այսպիսով, պարզվում է, որ Անկյուրիայի № 15 ձեռագրի գրչությունն ավարտվել է 1798 թվականի փետրվարի 14-ին։

(Հրատ. ՀԳԳ, 168)։

* * *

Գրիգոր Կուզենցին 1432 թ. Ավետարան է ընդօրինակել և իր անունը գաղտնագրել հետևյալ չափածո հիշատակարանում (Եղմ., VI էջ 531).

Այլ եւ անիմաստ փծուն գրչին,
Որ վեց տառիւ անուն կոչին,
Գիմն առաջին, եւ ըրէն յետին,
Որ համարով վերաբերին,
Տասն հազար բոլորովն
Եւ վեց հարիւր քսան ու վեցին։

Վերծանվում է «Գրիգոր». «գ»-ն անվան առաջին տառն է, իսկ «ր»-ն՝ վերջին, անունը բաղկացած է վեց տառից, իսկ անվան տառերի թվական գումարը հավասար է 10626-ի. գ(3) + ր(5000) + ի(20) + գ(3) + + ո(600) + ր(6000) = 10626։

* * *

Մայր աթոռի ձեռագրական ժողովածուի № 39 ձեռագրում, որը XIV դարի գրչություն ունի, Ստեփանոս գրիչը հետևյալ ձևով է գաղտնագրել իր անունը («Էջմիածին», 1951, № 1—3, էջ 83).

Յիսուս որդի Աստուծոյ...
Ողորմեա անիմաստ մեղաւոր և փծուն գրչին,
Որ ութ տառիւ անուն գոչին,
Սէն առաջին և սէն յետին,
Որ համարով վերաբերին.
Տասն եւ եւթն հազար բոլորովին
Եւ չորս հարիւր եւ վեցին։

Վերծանվում է «Ստեփաննոս» (երկու «ն»-ով). սկզբի և վերջի տառերը «ս» են, և բառի տառանիշերի թվական գումարը հավասար է 17406-ի. Ս(2000) + տ(4000) + ե(5) + փ(8000) + ա(1) + ն(400) + ն(400) + ո(600) + ս(2000) = 17406։

* * *

Էջմիածնի մատենադարանի № 40 ձեռագրում Միքայել գրիչը Մինաս Թեոդուպոլսեցու պատվերով գրած ձեռագրի հիշատակարանում գրչությունն ավարտելու ժամանակի մասին հետևյալն է հաղորդում. «Դարձեալ յանդուցեալ աւարտեցաւ սուրբ աւետարանս, որ լիացեալ կատարի թիւ համարի հայկազեան տումարիս Ի և մի յոբելենիս և Ը թիւ այլ աւելիս...»։ Գրիչը ծանոթագրում է նաև «Ծ (50) թիւ միոյն յոբելեան համարիցիս...» (թ. 383բ)։

Հրատարակված է «Էջմիածին» ամսագրում և վերծանված $(21\times50+9+551=1609)$։ («Էջմիածին», 1951 թ., № 1—4, 84)։ (Վերահրատարակությունը տե՛ս Հիշ. ԺԷ դ., I, էջ 351)։

36. ԾԱՅՐԱՆՈՒՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծայրանուն (անվանակապ կամ ակրոստիկոս) ծածկագրությունը հանդիպում է չափածո մատենագրության մեջ՝ գանձարաններում, տաղարաններում և չափածո հիշատակարաններում։ Գաղտնագրվում են գլխավորապես հեղինակների անունները, իսկ երբեմն նաև նրանց անունները, ում նվիրվում է տվյալ ստեղծագործությունը։

Ծայրանուն ծածկագրության մեջ գաղտնագրության տարբեր ձևեր են գործածվում։ Հայտնի են հետևյալ ձևերով կազմված ծայրանուններ. ա) տողերի առաջին տառերը վերից վար և հակառակը, բ) կենտ տողերի առաջին տառերը վերից վար և հակառակը, գ) զույգ տողերի առաջին տառերը վերից վար և հակառակը, դ) երկու սյունակի տողերի առաջին տառերը իրար հոդելով և այլն։ Բերում ենք հայ մատենագրության մեջ եղած հարյուրավոր օրինակներից մի քանիսը։

Գլաձորի ուսուցչապետ Հովհան Որոտնեցին իր անունը գաղտնագրել է 1374 թ. գրած չափածո հիշատակարանում, ուր կենտ տողերի առաջին տառերից հոդվում է. «Յոհաննես վարդապետ յՈրոտնեցոյ է բանս երգեալ»։ Բերում ենք հիշատակարանի միայն առաջին մասը, ուր կարդացվում է «Յոհաննես» անունը։

Յաստուածական ի կամս լինիլ զիմս ծանուցիր տէր
Եւ զմիտումն ի մեղս ամբարշտիս գուշակեցիր տէր
Որով պաճարեղէն կենաց կցորդիցիր զիս տէր
Եւ ի քոյդ բազում բարեաց վարիալ հանիր զիս տէր
Հայեցար յիմ տառապանս զի եղջերաց կարօտացա տէր
Ամաւթաբար սովալըլուկ առ քեզ դարձա
Աւետեցիր մարգարէիւքն՝ թէ ուրախ լէր
Հիւծեալ կենացըդ քո բժիշկ հացըս կենացիր
Նըքողելոյս եւուր ռետին՝ իսկ զօրինաց բանք
Ըմպել զբաժակն որ է զղջման և է ինձ յար թագ
Եւուր դարձեալ պատուէր զքոյդ հրամանի
Տէր յիշիլ զքեզ առաւել՝ քան զշունչ որ կըլանի
Սովիմբ համարձակիմ երգել զսուղ բանս...[37]։

* * *

Հակոբ Կարնեցին Զմյուռնիայի առաջնորդ Աբրահամ վարդապետի համար 1782 թվականին ընդօրինակած «Մեկնութիւն երգոց երգոյն» բնագրի ընդօրինակման առթիվ գրած հիշատակարանում իր անունը գաղտնագրել է ակրոստիկոսով.

37 Որոտնեցու ինքնագիր տվյալ ձեռագիրը գտնվում էր Ատրպատականի առաջնորդ Ն. եպ. Մելիք-Թանգյանի մոտ, որը նվեր է ուղարկել Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսությանը։ Այն այժմ գտնվում է Էջմիածնի ձեռագրական հավաքածուի մեջ։

Ի մեկնութեան	Յայսմիկ տառի,
Աշխատ եղէ	Կամաւ մեծի.
Որ ըղձրեալ	Բանքս ի քարտի,
Արանց ոմանց	Յարգի ցուցցի:
Վարդապետաց	Արդ ցանկալի,
Րաբունեացըն	Դասուց խըմբի
Այսքան եթէ	Պիտան լինի,
Երբեմըն մեզ	Տան ողորմի,
Էնն իմ տացէ	Նոցա բարի, Ամէն: (Եղմ., IV, էջ 332)

Ակրոստիկոսը կազմված է հետևյալ սկզբունքով. վերցվում է առաջին սյունակի առաջին տողի առաջին տառը, այնուհետև՝ երկրորդ սյունակի առաջին տառը, նորից առաջին սյունակի երկրորդ տողի առաջին տառը, ապա՝ երկրորդ սյունակի երկրորդ տողի առաջին տառը և այդ հերթականությամբ շարունակվում մինչև վերջ: Ամբողջության մեջ վերծանվում է. «Ի Յակոբայ վարդապետէն»:

* * *

Երեմիա Քյոմուրճյանը մի բանաստեղծություն է նվիրել Հովհաննեսին, որի սկզբնատառերը երկուական տառերով վերից վար հոդում են «Երեմիա-յի», իսկ վերջնատառերով դարձյալ վերից վար՝ «Յովնաթան»: Բերում ենք Երեմիայի այդ բանաստեղծությունը.

Է՛ բանաւոր թռչուն 'ւ յարգոյ
Ելող ի մտաց մատանցս բերոյ
Րամկիս զբաղձանսըն դու ըլցո
Րոսեալ սլացիր եւ զբանս մատո
Երթեալդ ի բաց վըստահելով
Եղեալ բերան իմ խօսելով
Մի՛ պատկառիր նախ ընդ ողջոյնն
Մին համբոյր տալ ընդ գըրկելոյն
Իղձս իմ զհամայն նըմա յայտնեա
Ի քեզ յանձին 'ւ յաւանդ վարկա
Անոռայց լե՛ր փութալ ջիմս գութ
Անուն զեօղջն որ յայտնի Շոութ
Յիստորագաւդ անունն իւր կա
Յաւարտ բանիս եւս յահկանա
Ի յայդ ճեմեմ ասա զթուականն
Ի ձեռն այնմ որ իմ Յովնաթան[38],

Տվյալ բանաստեղծության գրելու թվականը գաղտնագրված է «իյայդ ճեմեմ» բառերի մեջ, որոնց տառերի թվագումարը հավասար է 1686-ի. [ի(20) + յ(300) + ա(1) + յ(300) + դ(4) + ճ(100) + ե(5) + մ(200) + + ե(5) + մ(020) = 1686]:

[38] «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի», էջ 571:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 2370 ձեռագրի չափածո հիշատակարանում միաժամանակ գործ է ածվել չորս տեսակի ակրոստիկոս: Բերում ենք այդ հիշատակարանը.

Յանկամ գոլով նիազ	մասամբքս մանրախիտ
Աներբ և յարակա	որակիդ բնաւի
Սահանք ոյգոյս բաղձայ	ներքողեալ ըղձիւ
Ապենիւազդ գայցես	ունայնիս խնդիր
Նքթեալ լաբուսգերբ	զմիզացեալիս հոգի
Ըսփոփեալ պալարեա	որ բնաւից ես գոյակ
Սալարեալս բալխարէն	Ներգեհեալս ի կենաց
Որոնեալ տացեսցես	տըրոհեալս յերամո
Ղաբանոսք ներհունի	մատըուակք ողո
Ի փծեղոյս՝ տուք երագ	առիթ կենաց ձիր
Աւթոց ոգոց ծրար	բախարար տառիդ
Պենտեգեծիւ ի ծարի	թըսաբերն առածի: (թ. 308բ)

Ակրոստիկոսը վերծանելու համար անհրաժեշտ է սկսել առաջին սյունակի տողերի սկզբնատառերից՝ բարձրանալով ներքևից վերև, շարունակել նույն սյունակի վերջացող տառերից՝ իջնելով վերևից ներքև, ապա անցնել հաջորդ սյունակի սկզբնատառերին՝ վերևից ներքև և շարունակել երկրորդ սյունակի վերջացող տառերով՝ վերից վար:

Ակրոստիկոսը վերծանվում է.

«Պաւղոսըն ասաց»—կարդացվում են առաջին սյունակի առաջին տառերը՝ ներքևից վեր վերցնելով, «զայս բանս ի գրի»—առաջին սյունակի վերջին տառերը՝ վերից վար, «մոնոզոն ումարբ»—երկրորդ սյունակի առաջին տա-ռերը՝ վերից վար, «Տիւրիկցո ողդի»—երկրորդ սյունակի վերջին տառերը՝ վերևից ներքև: Իրար միացված կվերծանվի. «Պաւղոսն ասաց զայս բանս ի գրի: Մոնոզոն ումարբ Տիւրիկցո որդի»:

Բերված տեքստի վերջին բառը՝ «առածի», գումարգիր ծածկագիր է, որ վերծանվում է ա(1) + ռ(1000) + ա(1) + ծ(50) + ի(20) + 551=1623 թ.:

(Հրատ. ՀԳՊ, 241—242):

* * *

Զաքարիա Սարկավագը փոքր-ինչ այլ ձևով իր անունը ակրոստիկոսով ծածկագրել է իր թողած չափածո հիշատակարանում: Կենտ տողերի առաջին տառերը վերցվում են վարից վեր, իսկ զույգ տողերի առաջին տառերը՝ վերից վար: Երկու դեպքում էլ կարդացվում է Զաքարիայ անունը: Բերում ենք այդ հիշատակարանը.

Վասն անուան իմոյ

Զոր թէ գիտես չիս ի՛նչ է լեալ,
Ջերխ տեսակս եմ հաստատեալ:

Այլև քառից տարերց յօդեալ,
    Այլ երկքառ տառին լուծեալ։
Իսկ երկրորդ զոյգ վանգիւ բարդեալ,
    Քառամբ զուգիւ տառամբ լուծեալ։
Բաղ գործիւ ի ծայր ելեալ,
    Անդրադարձմամբ յաւարտ ածեալ։
Այլև մի տառ Գ վանկ լեալ,
    Բամից տառից որոշեալ։
Քառամբ բառիւք արտաբանեալ,
    Ի մրցելեաց արտափայլեալ։
Աստ եռայքիւ աւարտ ածեալ,
    Այլ Ե տառ վերաբերեալ։
Զաքարէ եւ ինի լեալ,
    Յի աւելորդ շարադասեալ[39]։

[39] Զաքարեայ Սարկաւագի Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ Դ։



1. Նախաարշակունյան կոչվող ծածկագրության բանալին (Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության հավելվածից)։



2. Նախամեսրոպյան կոչվող ծածկագրության բանալին (Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության հավելվածից)։



3. Նախավրացական կոչվող ծածկագրության բանալին (Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության հավելվածից)։



4. Թալիսմանագիր կոչվող ծածկագրության առաջին բանալին (Մաշտոցի անվան մատենադարանի № 8716 ձեռագրից)։



5. Թալիսմանագիր կոչվող ծածկագրության երկրորդ բանալին (Մաշտոցի անվան մատենադարանի № 8716 ձեռագրից)։



6. Մյունխենի աղվանական ծածկագրության բանալին (հրատարակված է ակադ. Ա. Շանիձեի կողմից, ՀՍՍՀ ԳԱ-ի «Տեղեկագրի» 1960 թ. № 9-ում)։



7. Աղվանական կոչվող ծածկագրության առաջին բանալին (կազմված է ծածկագիր բնագրերի հիման վրա)։



8. Աղվանական կոչվող ծածկագրության երկրորդ բանալին (կազմված է ծածկագիր բնագրերի հիման վրա)։



9. Աղվանական ծածկագրության երկու բանալիներ (կազմված է Մաշտոցի անվան մատենադարանի № 8360 և № 771 ձեռագրերի բանալիների հիման վրա)։



10. Աղվանական կոչվող ծածկագրության Աճառյանի հրատարակած բանալու տարբերակը (Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության հավելվածից)։



11. Ներսիսյան կոչվող ծածկագրության բանալին («Արարատ» ամսագիր, 1888, էջ 44)։



12. Գծապատկեր կոչվող ծածկագրության բանալին (Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 69 ձեռագրից)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անթ.—Օգտվել ենք Կիլիկիո կաթողիկոսարանի մատենադարանում պահված ձեռագրերից։

Անկ.—Բաբգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957։

ԲԵՀ—«Բանբեր Երևանի համալսարանի»։

Եղմ. I—Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, կազմեց Ն. եպ. Պողարեան, Երուսաղէմ, 1966։

Եղմ. II—Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ, կազմեց Ն. եպ. Պողարեան, Երուսաղէմ, 1967։

Եղմ. III—Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Գ, կազմեց Ն. եպ. Պողարեան, Երուսաղէմ, 1968։

Եղմ. IV—Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Դ, կազմեց Ն. եպ. Պողարեան, Երուսաղէմ, 1969։

Եղմ. V—Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ե, կազմեց Ն. եպ. Պողարեան, Երուսաղէմ, 1971։

Եղմ. VI—Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ, կազմեց Ն. եպ. Պողարեան, Երուսաղէմ, 1972։

Զմմ. I—Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց Մ. վ. Քէշիշեան, Վիեննա, 1964։

Զմմ. II—Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ, «Անտոնեան հաւաքածոյ», կազմեցին Ն. Ակինեան և Հ. Ոսկեան, Վիեննա, 1971։

Լալ.—Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Ե. Լալաեան, պրակ Ա, Թիֆլիս, 1915։

Հալեպ.—Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, Երուսաղէմ, 1935։

ՀԳԳ—Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973։

ՀԳՊ—Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959։

Հիշ.—ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950։

Հիշ. I—ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955։

ՀՁՀ—17-րդ դ. I—Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, Հ. Ա., կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974։

Հիշ. II—ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958։

Հիշ. III—ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967։

Ղալ.—Բաբգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961։

ՆՋ I—Ս. Վ. Տէր-Աւետիսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Վիեննա, 1970։

ՆՋ II—Լ. Կ. Մինասյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչյան վանաց մատենադարանի, հ. Բ, Վիեննա, 1952։

ՄԱՄ—Մաշտոցի անվան մատենադարան։

Mac—Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908.

ՊՊԹ—Պետական պատմական թանգարան։

ՊԲՀ—«Պատմա-բանասիրական հանդես»։

Սարգ. I—Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 1, Վենետիկ, 1914։

Սարգ. II—Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. II, Վենետիկ, 1924։

Սարգ. III—Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. III, Վենետիկ, 1966։

Տաշ.—Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895։

Տիր.—*Տիրայր վարդապետ,* General catalogue of the armenian manuscripts in the Bodlian Library at Oxford (*գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանի արխիվում*)։

Con.—F. C. Conybeare, A. Catalogue of the armenian manuscripts in the British Museum, London, 1913.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբեղյան Մ.— 239
Աբով խոջա— 90
Աբրահամ Աստրախանցի— 168
Աբրահամ (գրիչ)— 43, 44, 67, 69, 104, 169
Աբրահամ Կրետացի— 251
Աբրահամյան Ա. Գ.— 8, 35, 180, 187, 301
Աբրահամ յուզբաշի— 7, 34, 35
Աբրահամ վարդապետ— 134, 293
Աբու Սայիդ— 134, 192
Ադամյան Ա—180
Ադոնց Ն.— 218, 224
Ազարիա Ջուղայեցի— 232, 234
Ալեքսան (գրիչ)— 135, 136
Ալեքսանոս (գրիչ)— 85, 89
Ախնազար բեկ— 172, 173
Ակինյան Ն.— 55, 97, 113, 121, 185, 229, 232, 248, 249, 254, 255, 301
Ակոբ— 91
Աղամալ—91
Աղամալյան Պետրոս— 273
Աղանյանց Գ.— 157
Ամիր—179
Ամիրաս—132
Ամիրդովլաթ (բժշկ.)—30, 33
Ամիրդովլաթ Ամասացի— 255
Ամիր Սարգիս— 87, 193
Ամրան—179
Անանիա Շիրակացի— 144, 224
Անդրե—197
Անդրեաս—222
Անդրեաս Եվդոկեցի— 76, 80
Անդրեաս Կապադովկացի—59
Անտոն (գրիչ)— 34, 126
Անտոն վարդապետ—168
Ապտալահ—134
Առաքել (գրիչ)—101, 150
Առաքել Դավրիժեցի—203
Աստվածատուր աբեղա—255
Աստվածատուր (գրիչ)—72, 73, 84, 196, 288, 290
Աստվածատուր Կեղեցի—85
Աստվածատուր Ղալաթեցի—123
Աստվածատուր քահանա—215, 216
Ավետիս (Ավիկ)—205
Ավետիս (գրիչ)—43, 195
Ավետիս քահանա— 40
Ավետիք Բաղիշեցի—111
Ավետիքով Մարտիրոս Կաֆայեցի— 92
Ավետիք Սալաձորեցի— 126
Ատոմ—18, 20, 94
Արգումանյան Սոլոմոն— 169
Արթուն (տե՛ս Հակոբ Սզավոր)
Արիստակես (գրիչ)— 25, 83
Արիստակես (տաղերգու)— 256
Արիստակես Խարբերդցի—241
Արիստոտել— 48
Աճառյան Հ.— 6, 21, 26, 38, 42, 77, 78, 109, 112, 115, 116, 184, 203, 204, 220, 278, 297, 300
Արշակյան Նահապետ— 7, 170
Արություն (գրիչ)— 115, 197

Բ

Բաբգեն կաթողիկոս (տե՛ս Կյուլեսերյան Բ.)
Բայրամ բեկ— 98
Բասմաջյան Կ— 255
Բարխուդարյան Ս. Գ.— 147, 180, 182, 183
Բարսեղ Վարդապետ— 19, 99
Բարսեղ տիրացու—168
Բարսեղ (Բասիլիոս) Աղբակեցի— 203, 206
Բերթումյան Պետրոս— 211, 214
Բորիե Եվ.— 113
Բրոսե Մ.— 5, 139
Բուսայիդ խան— 38
Բոնափարտ (տե՛ս Նապոլեոն Բոնապարտ)

Գ

Գաբրիել վարդապետ— 289
Գալամաթօ Ալեքսանդր— 134
Գալեմքարյան Գ.— 124

Գալտերևսկի Պ.— 171
Գալուստ— 42, 96, 156, 268
Գասպար—43, 216
Գարդհաուղեն— 23
Գեոջ—168
Գեորգ— 96, 102, 103, 164, 165, 240, 241, 256, 257, 258
Գեորգ Երզնկացի— 165
Գեորգ փաշա— 168
Գրիգոր— 15, 37, 40, 73, 92, 101, 106, 126, 147, 156, 171, 191, 192, 193, 232, 256, 264, 287, 288
Գրիգոր Աստվածաբան— 157
Գրիգոր Ավրանցի— 168
Գրիգոր Երևանցի— 250
Գրիգոր Լուսավորիչ— 16, 137, 138, 221
Գրիգոր պատրիարք— 251
Գրիգորիոս (երաժշտապետ)— 21, 22
Գրիգորիոս վարդապետ— 254
Գրիգորիս ռաբբի— 165, 166
Գրիգոր Կամախեցի—203
Գրիգոր Կարբեցի— 97, 98
Գրիգոր Կուզենցի— 291
Գրիգոր Ղափանցի— 226, 227
Գրիգոր Նարեկացի— 99
Գրիգոր Նյուսացի— 201
Գրիգոր Վանեցի— 268
Գրիգոր Վարագեցի— 44, 74, 110, 133
Գրիգոր Տաթևացի— 157, 161, 162, 165
Գրիգոր Տուտեորդի— 64
Գուշակյան Թ.— 25, 185
Գևորգ (գրիչ)— 38
Գևորգ վարդապետ— 284

Դ

Դանիել— 168
Դավիթ բեկ— 7, 172, 173
Դավիթ (գրիչ)— 26, 86, 87, 230
Դավիթ (մարգարե) — 229
Դավիթ (Հովհ. Սանդղկավանեցու հայրը)— 13
Դավիթ կաթողիկոս— 139, 167, 169
Դավիթ Սեբաստացի— 193
Դավիթ վարպետ— 180, 182
Դավիթ քահանա— 240
Դիոնիսիոս Թրակացի— 218

Ե

Եզնուպ— 194
Եաղլու— 197
Եզանյան Օ.— 161
Եզր— 12, 13, 146, 184
Եղիա— 124, 159, 255
Եղիազար— 20
Եղիազար Սեբաստացի— 30, 33, 34
Եղիա Էրզրումեցի—160
Եղիա Կարնեցի— 159, 160
Եղիշե— 40, 98, 209
Եղիշե Արցախեցի— 39
Եղիշե Արևելցի— 68, 118, 119
Եղիշե Խաչենցի— 84, 85, 119
Եսայի— 209, 258, 284
Եսայի (գրիչ)— 19, 20
Եսայի Կեսարացի— 115, 257
Եսայի Նչեցի— 57, 58, 59, 144, 187
Եվսեբիոս— 200, 201, 205
Եվրիպիդես— 145
Երեմիա— 65, 256
Երիցակ— 183
Եփրեմ— 56, 111, 169

Զ

Զատիկ— 100
Զարբհանալյան Գ.— 206, 238, 283
Զաքար (գրիչ)— 88, 90
Զաքար կազմող— 76
Զաքարիա— 286
Զաքարիա Ավանցի— 5, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 155, 156
Զաքարիա Ոշականցի— 104
Զաքարիա Սարկավագ— 295, 296
Զաքարիա Վանեցի (տե՛ս Զաքարիա Ավանցի)
Զաքեոս— 96
Զիկմունդ Երրորդ—192, 216, 240

Է

Էգիլշահ—102

Ը

Ըսկանտար— 226

Թ

Թադեոս Գաղատացի— 290, 291
Թարխան յուզբաշի— 172, 174
Թեոդորոս— 223
Թոմա— 37
Թովմա (գրիչ)— 97
Թովմա Մեծոփեցի— 226

Թորգոմյան Վ.— 34, 202
Թորոս երեց— 68, 69, 153
Թորոսյան Հովհ. սարկավագ— 61
Թոփչյան Հ.— 200, 201
Թումա— 97

Ի

Իգնատիոս— 81, 82, 264
Իշխանյան Ռ.— 281
Իսահակ— 251
Իսրայել— 37
Իվան Ահեղ— 228
Իվան Կարապետ— 7, 172, 175

Լ

Լալայան Ե.— 6, 42, 95, 98, 231, 245, 279, . 301
Լուկա— 174
Լուքաշ— 256
Լևաշով Ե.— 174
Լեոն 4-րդ — 191
Լեոն 5-րդ — 81, 82, 146, 283

Խ

Խանհամե—31
Խաչատուր (գրիչ)— 88, 101
Խաչատուր (գրիչ Ղուկասի հայրը) —106
Խաչատուր Երեց— 41, 106
Խաչատուր (խասպեկ, տաղերգու) 230
Խաչատուր (?)—109, 110
Խաչատուր Կաֆայեցի— 31, 32
Խաչեր— 115
Խաչիկյան Լ.— 6, 17, 26, 36, 37, 38, 41, 67, 75, 83, 88, 95, 96, 97, 99, 161, 186, 187, 207, 214, 241, 301, 302
Խապայան Ս.— 227
Խորեն Ստեփանե— 113
Խունդու— 39

Ծ

Ծաղիկ— 182, 183

Կ

Կալբալի բեկ— 173
Կախիկ (տե՛ս Հ. Որոտնեցի)
Կարապետ Ավանցի— 42, 137, 138
Կարապետ (գրիչ)— 28, 113, 169, 231, 244, 251, 265

Կարապետ (Նահապետ Արշակյանի սանահայրը)— 170
Կարապետ (տե՛ս Հովհաննես Մկրտիչ)
Կարապետ կազմող— 266
Կարապետ քահանա— 76
Կարապետ Բաղիշեցի— 228, 229
Կարապետ Դերջանցի— 109
Կարսկի Ե.— 11, 23
Կիրակոս (?)— 32, 75
Կիրակոս (գրիչ)— 42, 93
Կիրակոս (ծաղրանկարիչ) —98
Կիրակոս (գրիչ Նորատունկի հայրը)— 102
Կիրակոս Գանձակեցի— 203
Կիրակոսյան Արիստակես— 56
Կլկլ (էջմիածնի միաբան Հովհաննես եպիսկոպոսի մականունը) — 168
Կնորին — 169
Կոնիբեր Ֆ.— 8, 28, 207, 217, 302
Կոստանդ— 81
Կոստանդին (արքա)— 201
Կոստանդին Սիսցի— 283
Կովալենսկի Պ.— 169
Կյուլեսերյան Բ.—6, 22, 24, 43, 73, 87, 88, 89, 90, 91, 111, 122, 124, 193, 198, 204, 230, 234, 247, 250, 251, 254, 269, 282, 283, 284, 290, 291, 301, 302
Կյուրեղ (գրիչ)— 120
Կյուրեղ Աղեքսանդրացի— 75, 157

Հ

Հակոբ (գրիչ)— 89, 91, 198, 218, 229, 267
Հակոբ (գրիչ Գրիգորի որդին)— 193
Հակոբ (պատվիրատու)— 38, 240
Հակոբ (առաքյալ)— 192
Հակոբ (կազմող)— 192
Հակոբ Անավարզեցի— 191
Հակոբ Կարնեցի— 293
Հակոբ Ղրիմեցի— 165, 226
Հակոբ Մծբնա— 289
Հակոբյան Վ.— 6, 20, 31, 34, 200, 213, 219, 234, 238, 302
Հակոբոս— 36
Հակոբ Պոլսեցի— 168
Հակոբ Ջուղայեցի— 210
Հակոբ Սգավոր— 212, 215, 280, 284
Հակոբ Քռնեցի— 206, 207, 208
Հայկ— 222
Հայրապետ— 215
Հայրապետ Սեբաստացի— 119, 120
Հարություն (գրիչ)— 152, 290
Հերմես— 144

Հիսուսյան Միրայր— 115, 116
Հոբ—273
Հոմերոս— 229, 230
Հովակիմյան Ս.— 66, 67
Հովասափ (գրիչ Առաքելի հայրը)— 150
Հովասափ Սեբաստացի— 120, 121
Հովասափ Վանեցի— 122
Հովհան (ավետարանիչ)— 184
Հովհան Անթափցի— 192
Հովհաննիսյան Ա.— 302
Հովհան Որոտնեցի— 144, 161, 162, 165, 238, 293
Հովհաննես (գրիչ)— 8, 14, 21, 36, 59, 73, 74, 82, 83, 85, 102, 130, 138, 146, 156, 187, 232, 233
Հովհաննես (եպիսկոպ)— 168
Հովհաննես (Յան Սոբեսկի)— 263
Հովհաննես (պատվիրատու)— 98, 126
Հովհաննես (?)— 294
Հովհաննես Աղթամարցի— 39
Հովհաննես Դամասկացի— 204
Հովհաննես Դրասխանակերտցի— 263
Հովհաննես Իմաստասեր— 144
Հովհաննես Կարբեցի— 167, 169
Հովհաննես Կարնեցի— 266, 285
Հովհաննես Կոստանդնուպոլսեցի— 211, 230
Հովհաննես Մեղապարտ— 38
Հովհաննես Սանդղկավանեցի— 13, 186, 187
Հովհաննես Ստամբոլցի— 117
Հովհաննես Ուռհայեցի— 226
Հովսեփ— 77, 277
Հովսեփյան Գ.— 13, 184

Ղ

Ղազար (գրիչ)— 8, 199, 200
Ղազար (պատվիրատու)— 37
Ղազար (սուրբ)— 232, 234
Ղազար քահանա— 137
Ղազար Թոխաթեցի— 225
Ղազար Ջահկեցի— 208, 209
Ղաֆադարյան Կ. Գ.— 6, 9, 12, 77, 78, 184
Ղոշի— 168
Ղուամաթ— 169
Ղուկաս— 37, 77, 106
Ղուկաս Տեվեցի— 106, 107
Ղևոնդ Ալիշան— 21, 34, 64, 82, 192, 207

Ճ

Ճանիպեկ— 201

Մ

Մաթէոս— 166
Մաթուսաղա— 33
Մաթևոսյան Ա.— 13, 75, 186, 187
Մակլեր Ֆ.— 207, 230
Մահտեսի Մովսես— 87
Մանուել (Մանվել)— 19, 90, 94, 169, 263
Մանուկ Եվձիլարցի— 167, 184
Մաշտոց— 113
Մառ Ն. Յա.— 85, 109, 280
Մատթեոս— 22, 24, 30, 41, 184
Մատուշկին Սահրատ Սերգեև— 172, 174
Մարգար— 43, 87
Մարեամ— 13, 55
Մարկոս— 17, 37, 133, 208, 209, 268
Մարտիրոս (գրիչ)— 24, 29, 41, 93, 99, 138, 258, 260
Մարտիրոս (Կաֆայեցուն մտերիմ մեկը)—32
Մարտիրոս Ղրիմեցի— 284
Մարտիրոսյան Ն.— 69, 153
Մարտիրոս Շամբեցի— 102
Մարութե— 85, 102
Մելիք Թանգյան Ն.— 293
Մելիքսեդեկ— 242, 243
Մելիքսեթ— 238
Մելքիսեդեկ Սեբաստացի— 190
Մելքոն— 242
Մեսրոպ— 78, 104, 113, 222, 260, 261
Մեսրովպ— 166
Մինաս (գրիչ)— 93, 94, 203, 204, 210, 211, 217, 220, 225, 275, 277, 287
Մինաս (Բլուր գյուղի մելիքը)— 168
Մինաս (Աստուածատուր քահանայի հայրը)— 216
Մինաս (Զաքեոս գրչի եղբայրը)— 96
Մինաս (կազմող)— 27
Մինաս Բաբերդցի— 245
Մինաս Դերջանցի— 200
Մինաս Թեոդուպոլսեցի— 292
Մինաս Թոխաթեցի— 185
Մինասյան Լ. Գ.— 60, 72, 82, 130, 142, 196, 302
Միրզա— 288
Միրվեյս— 173, 174
Միքայել— 292
Մխիթար— 36, 84, 101, 201
Մխիթար Անեցի— 271
Մխիթար Էջմիածնեցի— 33
Մխիթար Ղափանցի— 231
Մկրտիչ (գրիչ)— 19, 103, 104, 197
Մկրտիչ վարդապետ— 76, 77
Մնացականյան Ա. Շ.— 126
Մողնի— 74
Մոմիկ— 190, 191
Մովսես— 16, 105, 106, 111, 113, 133, 154, 156, 188, 189
Մովսես Խորենացի— 113
Մրվաթ— 98
Մուրադյան Ա— 153
Մուրադյան Ն. Ա.— 188
Մուրադյան Պ.— 158
Մուրադյան Ս. Ա.— 188
Մուրատ— 121
Մուրատյան— 69
Մուրատ— 129

Յ

Յայլայ— 160
Յակոբ— 73, 120, 146, 209, 276, 277
Յակովբոս— 28, 29
Յեուբ— 103, 104
Յիսուս (տե՛ս Քրիստոս)
Յոլսէ— 21
Յոհան— 198, 268
Յոհաննէս— 170
Յովակիմ— 67
Յովանէս— 37, 75
Յովանես— 206
Յովասափ— 120
Յովհան— 22, 60, 64
Յովհաննես Մաղաքիէլի— 169
Յովհաննէս Մկրտիչ— 103, 104, 137, 208, 209
Յովհաննես— 17, 75, 83, 84
Յովնաթան— 294
Յովսէփ— 21, 95, 100, 101
Յովտէս— 84, 85
Յուսիկ— 144

Ն

Նալյան Հակոբ— 229, 230, 290
Նազար— 44, 110
Նազարեթ— 267
Նապոլեոն Բոնապարտ— 7, 170
Ներսես— 16, 90, 94, 169, 170, 220, 252, 265, 269
Ներսես Աշտարակեցի— 7, 167
Ներսես Լամբրոնացի— 18, 264
Ներսես Շնորհալի— 75, 265
Ներսես Տարսոնցի— 18, 20
Նիկոլայոս— 79
Նիկողայոս— 123
Նիկողոս— 32
Նորատունկ (Նորատունկ)— 17, 70, 99, 102

Շ

Շահ Աբաս— 254
Շահամրան— 176
Շահինյան Ա. Ն.— 6, 180
Շահնավազ— 172, 173
Շամտին— 168
Շանիձե Ա. Գ.— 113, 114, 124, 125, 126, 198
Շարիմենց Յարութեն— 232
Շիրմազանյան Գալուստ— 139

Ո

Ոհան— 90
Ոսկան—91
Ոսկանյան Հ. Հ.— 97, 159, 190
Ոսկյան Հ.— 6, 55, 232, 301
Որփեոս— 144, 145

Չ

Չիք-Կարապետ— 169

Պ

Պալյան Տրդատ— 61, 62, 63
Պաղվանդ— 254
Պապաք—14
Պապիկ— 126
Պասկևիչ Ի.— 276, 277
Պատկանյան Ք.— 203
Պետրոս (գրիչ)— 34, 69, 70, 102, 103, 121, 271, 273, 274
Պետրոս կաթողիկոս— 27
Պետրոս 1-ին— 175
Պետրոս Արագոնացի— 161, 162
Պետրոս Կուրանցի— 94
Պետրոս Հալեպցի— 117
Պետրոս Ֆրա— 91
Պետրոս Ջահկեցի— 89
Պիվազյան Է.— 219, 234
Պյոտր 1-ին— 7, 172
Պողարյան Ն.— 6, 27, 37, 75, 106, 109, 123, 145, 146, 186, 226, 227, 228, 237, 241, 245, 246, 251, 252, 256, 257, 258, 259, 266, 268, 273, 284, 285, 301
Պողոս (գրիչ)— 197, 251, 295
Պողոս յուզբաշի— 7, 35
Պողոս առաքյալ— 278, 279
Պողոս Տյուրիկեցի— 111
Պորփյուր— 48
Պրոկղ— 272

Պուղտան— 29, 30
Պօխանգովիչ— 125
Պօղոս պըվէտ— 234

Ջ

Ջանշին— 133

Ռ

Ռեթոս— 169
Ռըստակես— 22
Ռոթեոս— 167

Ս

Սահակ (գրիչ)— 194, 245, 256
Սահակ (ծաղկանկարիչ) — 44
Սահակ (պատվիրատու)— 91
Սահակ (կրոնավոր)— 191
Սահակ Վարագեցի— 133
Սաղաթել— 30
Սամէղ— 12, 13
Սամուել Անեցի— 147, 148
Սամուել Ռաբբի— 245
Սարգիս (գրիչ)— 34, 56, 57, 60, 61, 122, 132
Սարգիս (սուրբ)— 231
Սարգիս Եվդոկեցի— 246
Սարգիս խալիֆա— 44
Սարգիսյան Բ.— 6, 24, 27, 28, 65, 70, 188, 197, 302
Սարգիս Շնորհալի— 91
Սարխոշ— 44
Սեֆեդինյան Զաքարիա— 38
Սիմէոն ծերունի— 44
Սիմեոն (գրիչ)— 17, 20, 71, 78, 79, 99
Սիմեոն աբեղա— 41
Սիմեոն (Կաֆայեցու բարեկամներից)— 32
Սիմեոն Ջուղայեցի— 104, 273
Սիմոն— 240
Սմբատյանց Մ.— 208, 209
Սյուրմեյան Ա.— 6, 8, 33, 34, 41, 64, 199, 200
Սողոմոն— 18, 19
Ստեփանոս (գրիչ)— 13, 25, 29, 66, 73, 84, 156, 190, 193, 210, 292
Ստեփանոս քահանա— 13
Ստեփանոս վարդապետ— 201, 205,

Ստեփանոս (պատվիրատու)— 75
Ստեփանոս եպիսկոպոս—28
Ստեփանոս Նախավկա—197
Սրապիոն — 85
Սրվանձտյան Գ.— 82, 97, 153
Սուլտան Մալիք— 118
Սուքիաս— 81

Վ

Վահան— 40
Վասիլ— 24
Վարագ— 70
Վարդան (Կաֆայեցուն մտերիմ անձնավորություն)— 32
Վարդան կազմող— 25, 26
Վարդան (գրիչ)— 81, 82, 86, 110, 258, 284
Վարդան («Հավաքմունք մեկնութեանց հին կտակարանի» աշխատության հեղինակը)— 244
Վարդան Վարդապետ— 14
Վարդան Արևելցի— 18
Վարդան Կաֆայեցի— 221, 222
Վարդան Ղրիմեցի— 258
Վարդան Վարագեցի— 221
Վրթանես— 86, 221

Տ

Տաշյան Հ.— 6, 17, 29, 30, 192, 226, 243, 244, 245, 262, 263, 264, 302
Տեր-Աստվածատուր— 231
Տեր-Ավետիսյան Ս. Վ.— 6, 14, 184, 194, 302
Տեր Ավետիք— 106, 107
Տեր-Մկրտչյան Գ.— 6, 76, 77, 167
Տեր-Մովսիսյան Մ.— 14, 16, 75
Տիրայր— 19, 20, 79, 202, 240, 267, 302
Տիրացու— 15
Տոլստոյ Պ. Ա.— 172, 173, 174
Տոմաժիրսկի Գրիգոր— 122
Տոմաժիրսկի Նիկոլ— 213
Տոմաժիրսկի Խաչքո— 201
Տուտ— 64

ՈՒ

Ունան— 208
Ուրախ— 261

Փ

Փիլիպպոս Աղբակեցի— 32
Փիրղալեմյան— 36, 94

Ք

Քալբլաի— 172
Քառումիսյան Մելքոն— 117
Քարամյանց Ն.— 120, 124
Քէռոպ— 16
Քեշիշյան Մ.— 25, 40, 301
Քյումյուրճյան Ե. Չ.— 247, 248, 249, 259, 263, 266, 270, 294
Քյուրտյան Հ.— 14
Քոնեցի (տե՛ս Հակոբ Քոնեցի)
Քրիստոս— 12, 13, 14, 27, 28, 29, 30, 31, 33, 34, 38 41, 42, 45, 51, 66, 74, 81, 99, 120, 135, 136, 140, 144, 147, 148, 161, 164, 165, 177, 178, 179, 180, 182, 183, 188, 195, 221 267, 290, 292

Օ

Օզպէկ— 201
Օհան— 150
Օհանէս— 171
Օպպոլցեր— 44, 238
Օստերման Ա. Ի.— 7, 174
Օրբելյան Ստեփանոս— 146, 239, 240
Օրմանյան Մ.— 27, 82, 209, 210, 251

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ա

Ադոն— 211, 224, 225, 233, 243, 244, 287
Ազատության թվական— 273
Ակրոստիկոս տե՛ս ծայրանուն
Աղվանական ծածկագրություն— 112—131
Աղվանական ծածկագրության բանալիներ— 112, 114, 116—118, 299
Ամբ կապման չար գաղանին— 271
Ամբ մարդու— 235
Ամուլ թիվ— 230—231
Ամուլ կնոջ որդիք— 281
Անունների տառաթվանշան ծածկագրեր — 286—292
Անվան առաջին տառերից կազմված ծածկագիր— 268
Աջից ձախ գրվող ծածկագրեր— 74, 75, 271
Առեղծվածագիր ծածկագրություն— 269—273
Արաբաթվանշան ծածկագրություն— 131—136
Արաբաթվանշան ծածկագրերի բանալիներ— 131, 132
Արեգակի շրջան—28, 227, 228, 244
Արեգակի վախճան գունդ— 235
Արև— 199
Արիստոտել— 203, 204, 210, 211, 236, 244, 277—279, 285—287, 289
Արծվանիկի ծածկագրեր— 180—189
Ասպարեզ— 277

Բ

Բարդեալ շրջան— 220
Բացականդամ ծածկագրեր— 77—79
Բեսեքիատոն (Բենևքտիկոն)— 215 ,216, 218, 223, 227, 228, 280, 281, 287
Բոլոր— 236—237

Գ

Գավազանագիր— 74, 107—111
Գավազանագրի բանալիներ— 108, 109
Գերակատար թիվ— 219, 227—229
Գումարգիր— 15, 23—35, 53, 74, 82, 94, 95, 98—101, 105
Գումարգրի բանալիներ— 23, 185
Գրիգոր Ռաբբու ծածկագիրը— 165—166
Գրիգոր Տաթևացուն վերագրվող ծածկագիրը— 161—165

Դ

Դավթի քնար— 229—230
Դասք թագուհյաց— 273, 274
Եզ, եզակ— 191, 217, 218, 233, 275
Եկտի— 217, 220, 221, 224—227, 243, 278, 285, 289

Ե

Եղբայրագիր ծածկագրություն— 35—47, 74, 96, 97, 102, 110
Եղբայրագիր ծածկագրության բանալիներ— 35, 186
Եղիա Կարնեցու ծածկագիրը— 159—161
Եղիա Կարնեցու ծածկագրի բանալին—160
Երանություն— 278
Երկբանալի ծածկագրեր— 57—63

Զ

Զարդագիր ծածկագիր— 151—152
Զարդագիր ծածկագրի բանալին— 152
Զաքարիա Ավանցու ծածկագրերը— 136—143, 252, 278
Զգալի— 278
Զգայություն— 278
Զուգախառը ծածկագրեր— 53—55
Զվարթնոց— 252

Ը

Ընդիկտոն (ինդիքտիոն)— 190, 191, 193, 198, 213—215, 216, 220, 223—228, 235—236

Թ

Թալիսմանագիր ծածկագրության բանալիներ— 298
Թավալ մեծ— 225
Թավալ փոքր— 225
Թիվք թագուհյաց— 273
Թիվք ոլխարաց— 271
Թվագումար ծածկագրություն— 204—206, 210—212, 246—268, 271, 273, 275, 277, 280, 282—287, 290—292
Թրթակ (թրիթակ)— 110, 111, 212, 236, 287

Ի

Իմաստակ թիվ— 236—237
Իդոս (ինդոս)— 195, 198, 211, 213, 215—219, 223—227, 236—237, 280—281

Լ

Լենինգրադի ծածկագրեր— 157—159
Լենինգրադի ծածկագրերի բանալիները— 157—158
Լծակ— 215
Լուսնի շրջան— 227, 228, 244

Խ

Խառը ծածկագրեր— 103, 104

Ծ

Ծայրանուն ծածկագրեր— 292—296

Կ

Կաղանդ— 225
Կատարյալ թիվ— 119, 227, 228, 241, 281
Կետագիր ծածկագրություն— 13, 64, 65—71
Կետագիր ծածկագրության բանալիներ— 53, 63, 187
Կիվոս (կիւօս)— 211, 278
Կենդանակերպ— 254, 255
Կոտորակագիր ծածկագրեր— 153
Կույս թիվ— 195, 202—204, 211, 212, 225, 227, 228—233, 244, 245, 275, 278, 279, 281—283
Կրոնոս (կռօնոս) — 196, 215, 235, 236, 283

Հ

Հաշիվ լողակունաց— 275, 276
Հայաստա ռուսական— 172—174
Հաղիկ— 289
Համարական շարք— 105
Հավատ, հույս և սեր— 226, 227
Հարիկ— 289
Հնդկահայ (Սեյդաբադի) ծածկագիր— 55—57
Հնդկահայ ծածկագրի բանալին— 56
Հոբելյան (ոբէլեան)— 190—203, 208—210, 212, 213, 215—221, 223—226, 230, 231, 233, 236, 237, 239—241, 243, 264, 271, 274—277, 279—282
Հոդ (յոդ)— 278, 279
Հոնսա (յոնսայ)— 212, 220, 226, 227, 276, 277, 284
Հոմերոս— 229—230
Հունատառ ծածկագրեր— 12, 144—148
Հունաթվանշան ծածկագիր— 251
Հոփսիմյանք— 273, 274

Ճ

Ճիրանավոր ծածկագրություն— 155—156
Ճիրանավոր ծածկագրության բանալի— 155
Ճյուղագիր ծածկագիր— 149
Ճյուղագիր ծածկագրության բանալի— 149

Մ

Մակ— 196, 218, 235, 236, 278
Մասունք բերթողաց— 220, 221, 236, 275, 276, 278, 279
Մեծ շրջան— 226, 227, 229, 230, 236, 237, 244
Մշտաբուղխ աղբյուր— 227, 228

Ն

Նախաարշակունյան ծածկագրության բանալի— 297
Նախամեսրոպյան ծածկագրության բանալի— 297

Նախավրացական ծածկագրության բանալի— 297
Նախնիքի անուն— 221
Նենոս— 286
Ներսիսյան ծածկագրություն— 167—169
Ներսիսյան ծածկագրության բանալին— 300
Նոնոս— 198, 210, 211, 215, 216, 218, 224, 225, 236, 243, 280, 281
Նշխարատեսք ծածկագրեր— 153, 154
Նշխարատեսք ծածկագրության բանալին— 154

Շ

Շրջան (ՇԼԲ)— 193, 196, 197, 215, 217, 229—230, 233, 240, 242, 274, 280
Շրջագիր ծածկագրեր— 76—77
Շրջագիր ծածկագրի բանալի— 76
Շահամրանի ծածկագիրը— 176—179
Շահամրանի ծածկագրի բանալին— 178

Ո

Ոլիմպիադ (օլիմպիադ, ղիմպիադ)— 198, 212, 213, 215, 218, 226, 228, 235, 236, 239, 240, 280, 281

Ջ

Ջար գաղաններ— 271

Պ

Պար— 278
Պարագա— 203, 204
Պղատոն (Պլատոն)— 229, 230
Պորփյուր— 203, 204, 210, 212, 229, 230, 236, 237, 244, 254, 255, 276, 279, 285—287, 289

Ռ

Ռուսական ծածկագիր— 174—175

Ս

Սաղեմ քաղաք— 243
Սեռ, սեռակ— 285, 287
Սյունակետագիր ծածկագրություն— 79—98, 101, 106, 107, 111
Սյունակետագիր ծածկագրության բանալի— 80
Ստորոգություն— 278
Սրբագենի— 274, 275

Վ

Վախճան գունդ— 235
Վանկագիր ծածկագրություն— 272
Վեշք— 225

Տ

Տառանիշ ծածկագրություն— 48—52
Տառանիշ ծածկագրության բանալին— 50
Տառաթիվ ծածկագիր— 256
Տառակետագիր ծածկագիր— 53
Տառք ձայնավոր— 286
Տարիք մարդու— 235
Տգոն— 218, 223, 224, 280, 281
Տողագիծ ծածկագիր— 100

Փ

Փարէնթաղէգ— 277
Փոխարինագիր ծածկագրություն— 11—22, 52, 53, 74, 95—98, 100—102
Փոխարինագիր ծածկագրության բանալիներ— 11, 12, 184
Փոքր շրջան— 200, 224, 225, 244, 236, 237

Օ

Օծյալ անդամներ— 275
Օղակետագիր ծածկագրություն— 63—64, 71—74
Օղակետագիր ծածկագրության բանալի— 63
Օհանագիր ծածկագիր— 150—151
Օհանագիր ծածկագիր բանալին— 150

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ
Առաջաբան . . . 5
1. Փոխարինագիր ծածկագրություն . . . 11
2. Գումարգիր ծածկագրություն . . . 23
3. Եղբայրագիր ծածկագրություն . . . 35
4. Տառանիշ ծածկագրեր . . . 48
5. Երկրանալի ծածկագրություն . . . 57
6. Կետագիր ծածկագրություն . . . 63
7. Օղակետագիր ծածկագրություն . . . 71
8. Աջից ձախ և շրջագիր ծածկագրություն . . . 74
9. Բացակա անդամով ծածկագրեր . . . 77
10. Սյունակետագիր ծածկագրություն . . . 79
11. Մի քանի բանալիներով գաղտնագրված ծածկագրեր . . . 94
12. Տողագիծ ծածկագրեր . . . 106
13. Գավազանագիր ծածկագրություն . . . 107
14. «Աղվանական» կոչվող ծածկագրություն . . . 112
15. Արարաթվանշան ծածկագրություն . . . 131
16. Զաքարիա Ավանցու ծածկագրերը . . . 136
17. Հունատառ ծածկագրեր . . . 144
18. Ճյուղագիր ծածկագրություն . . . 149
19. Օհանագիր . . . 150
20. Զարդագիր ծածկագրություն . . . 151
21. Կոտորակագիր ծածկագրություն . . . 153
22. Նշխարատեսք ծածկագրություն . . . 153
23. Ծիրանավոր ծածկագրություն . . . 155
24. Լենինգրադի A—29 ձեռագրի ծածկագրերը . . . 157
25. Եղիա Կարնեցու ծածկագիրը . . . 159
26. Գրիգոր Տաթևացուն վերագրվող ծածկագիրը . . . 161
27. Գրիգորիս Ռաքքու ծածկագիրը . . . 165
28. Ներսիսյան ծածկագրություն . . . 167
29. Հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող ծածկագրեր . . . 172
30. Շահամրանի ծածկագիրը . . . 176
31. Արծվանիկի նորահայտ ծածկագիրը . . . 180
32. Տոմարաթիվ ծածկագրեր . . . 190
33. Թվագումար ծածկագրություն . . . 245
34. Առեղծվածագիր ծածկագրեր . . . 269
35. Թվախառն ծածկագրեր . . . 278
36. Սայրանուն ծածկագրեր . . . 293
Ծածկագրության բանալիներ . . . 297
Համառոտագրություններ . . . 301
Անձնանունների ցանկ . . . 303
Առարկայական ցանկ . . . 310

ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է ներկայացրել համալսարանի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնը

Խմբագիր՝ Է. Մ. Բաղդասարյան
Հրատ. խմբագիր՝ Լ. Լ. Աղայան
Նկարչական ձևավորումը՝ Լ. Սաղոյանի
Գեղ. խմբագիր՝ Ն. Ս. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Ֆ. Գ. Տոնոյան
Վերստ. սրբագրիչ՝ Հ. Ս. Հարությունյան

ՎՖ 08533 *Պատվեր 884* *Տպաքանակ 3000*

Հանձնված է արտադրության 20/VI 77 թ.։ Ստորագրված է տպագրության 7/IV 78 թ.։
Թուղթ $70 \times 100^1/_{16}$ հրատ. 16,77 մամ. տպ. 19.625 մամ. պայմ. 25,525 մամ.։
Գինը՝ 2 ռ. 20 կոպ.։

Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան 1։

Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փող. № 52։

ВФ 08533 Заказ 884 Тираж 3000

Сдано в производство 20/VI 77 г. Подписано к печати 7/IV 78 г. Бумага $70 \times 100^1/_{16}$.
Изд. 16,77 л. Печ. 19,625 л. Усл. 25,525 л. Цена 2 р. 20 коп.

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, 1.

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, 52.